

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՋՈՒՏՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՊԵՏՐՈՍՅԱՆՅ Տ.Մ.

Ըստ վիճագիր արձանագրությունների՝ 1206-1230-ական թվականներին Այրարատի կողմնակալության առաջին տիրակալ Վաչե Ա Վաչուտյանի տոհմաբանության արմատները պապից այն կողմ չեն անցնում: Տոհմաբանական արձանագրությունները փորագրված են Հաղբատի և Սանահինի եկեղեցիների պատերին: Ավելի ուշ շրջանում նրանց տրված Նիգ-Արագածոտնի տարածաշրջանի արձանագրություններում ծննդաբանական տեղեկությունները հիմնականում վերաբերում են հետագա սերունդներին:

Հաղբատի արձանագրություններից հայտնի է, որ Վաչեի հայրը Սարգիսն է, մայրը՝ Կատան, իսկ Սարգսի հայրը՝ Վաչուտը, որի անունով էլ այս տոհմն իրեն անվանել է Վաչուտյան:

Վաչուտյանների տոհմի առաջին ուսումնասիրողներից մեկը հայր Ղևոնդ Ալիշանն է: Նա, համադրելով ձեռքի տակ եղած արձանագրությունների և հիշատակարանների տվյալները, կազմել է Վաչուտյանների տոհմաձառը¹: Սակայն Ալիշանը տոհմաձառում պապ Վաչուտին տվել է նաև Վաչե անունը, Վաչուտի որդի Սարգսին կոչել է նաև Քուրդ և ներկայացրել է Սարգիս Քուրդ Ա անունով, նույնացրել է Քուրդ Ա-ի /ըստ Ալիշանի՝ Քուրդ Բ/ որդիներ Հասանին և Տայիրին, կրկնելով Զաքարիա սարկավագին՝ Քուրդ Բ Անբերդեցուն /ըստ նրա՝ Քուրդ Գ/ որդի է դրել Թայիկին: Ղ. Ալիշանը խախտել է Վաչուտյան մի քանի իշխանների տիրակալության տարեթվերը, չի նշել Քուրդ Ա-ի եղբոր՝ Վաչուտի որդիներին, Հասանից հետո իշխանությունը վերագրել է Քուրդ Բ-ին: Ահա Ղ. Ալիշանի կազմած տոհմաձառը.

Վաչե կամ Վաչուտ
Սարգիս Քուրդ Ա /յելս ԺԲ դարու/
Վաչե = կին՝ Մամախաթուն, յամս 1213-32

¹ Հ. Ղևոնդ Ալիշան, *Այրարատ քնաշխարհի Հայաստանեայց, Վեներիկ, 1890, էջ 253:*

**Վաչուտ 1235-67 Քուրդ Բ Մեծ = կին՝ Խորիշահ Մամիկոնեան
Դալիթ Վաչե վաղամեռ Տայիր-Հասան 1283=կին՝ Արուս
խաթուն դուստր Ուքանայ
1317 Քուրդ Գ Անբերդեցի = կին՝ Խոյան կամ Խուանդ խաթուն
Թէոդորոս Չրքին, Թայիկ**

Հետագա շրջանի ուսումնասիրողները, հենվելով հիմնականում Ղևոնդ Ալիշանի կազմած տոհմաճառի տվյալների վրա, կրկնել են նույն սխալները:

Իր հանդեպ Զաքարյան եղբայրների վստահությունը մեկնաբանելու նպատակով՝ Վաչե Ա-ն Հովհաննավանքի գավթի 1217 թ. շինարարական արձանագրությունում հայտնել է. «ՈԿԶ /1217/, ի ծագմանէ շնորհացն Ա/ստուծոյ, ի հիմնանալ եւ լուսաւորիլ եկեղեցեացս գաւառիս Արայրատու ի ձեռն երկուց եղբարց հարազատաց Զաքարիայի եւ Իւանէի, եւ արդարածնունդ գաւակաց սոցա Շահնշահի եւ Աւագի: Ես՝ Վաչե իշխանաց իշխան, որդի Սարգսի Վաչուտանց, սիրեցեալ ի սոցանէ մեծաւ պատուով, վ/ա/ս/ն/ հաւատարիմ ծառայութե/ան/ իմո կոչեցա ի գործ վերակացութե/ան/ գաւառիս»²:

Վաչե Ա-ն հականե-հանվանե հայտնել է, որ ինքն Այրարատի կողմնակալ-կուսակալ-փոխարքայի պաշտոնը և իշխանաց իշխանի կոչումը ստացել է Զաքարյանների բանակում հավատարիմ ծառայության համար: Նույն փաստի վերաբերյալ Զաքարիա Քանաքեռցին գրել է. «Բայց զի որպէս ասացաք գալուստ առաջնոյն Զաքարիայի ամենայն ծառայիք, ունէր եւ ծառայ մի եւս Սարգիս անուն՝ յազգէ Աժդահակայ՝ որ Վաչուտանց կոչէին: Այս Սարգիսս տեւեաց մինչեւ ցվերջին Զաքարիա, եւ ծնաւ նա որդի մի եւ անուանեցաւ Վաչե, որ սիրեցաւ ի Զաքարէ եւ եղեւ հաւատարիմ տան նորա: Եւ վասն միամիտ ծառայութեան իւրոյ կարգեաց զնա իշխանաց իշխան եւ ետ նմա մեծութիւն եւ իշխանութիւն ամենայն Արագածոտանն, Շիրակայ, Նգայ, Անբերդու եւ յամենայն եզերաց նորա՝ մինչեւ ցերասխաճոր»³:

Զաքարիա Քանաքեռցու շարադրյալ հատվածի «յազգէ Աժդահակայ» հաղորդմամբ էլ պատմագրության մեջ շրջանառության մեջ է դրվել Վաչուտյանների՝ մարական (քրդական) ծագման վերաբերյալ վարկածը: Հայ

² **Ղաֆադարյան Կ.**, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, Ե., 1948, էջ 82:

³ **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմություն, Կոնդակ սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի*, Ե., 2015, էջ 182-183:

ժողովրդի պատմությանն անձանոթ չէ հայ իշխանական տներին այլագրի ներկայացնելու փաստը: Դեռևս պատմահայր Մովսես Խորենացին հրեական ծագում էր վերագրում Բագրատունիներին, Գնթունիներին: Ուշ միջնադարում հայ պատմիչները (Կիրակոս Գանձակեցի, Վարդան պատմիչ) քրդական ծագում են վերագրել հայկական պետության վերականգնողներին՝ Զաքարյանների նախնիներին և նրանց ենթականերին, մասնավորապես՝ Վաչուտյաններին:

Մեր կարծիքով, Վաչուտյաններին քրդական ծագում վերագրելու Զաքարիա Քանաքեռցու կողմնը Վաչուտյան տոհմում Քուրդ անվան գոյությունն է, որ բավականաչափ տարածված էր միջնադարյան հայկական այլ անվանի տոհմերում ևս: Օրինակ, ոմն Քուրդ իշխան Սյունյաց (VIII դ.), Քուրդ Ամատունի, Քուրդիկ Մամիկոնյան (IX դ.), Քուրդ Արծրունի, իշխան Կայենի, Մահկանաբերդի (XIII դ.), մորեղբայր Զաքարե Բ և Իվանե Ա Զաքարյանների, Թիֆլիս քաղաքի ամիրապետ, Քուրդ Համազասպյան-Մամիկոնյան, Սմբատի որդի Քուրդ՝ Ուքանանց տոհմից (XII-XIII դդ.) և ուրիշներ⁴: Սխալ ու հակագիտական է Զաքարյաններին քրդական ծագում վերագրելը: Ցավոք, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, առանց լուրջ կոմանի, ուղիղ իմաստով ընդունելով Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը, գրել է. «Ասպարեզ գալով քրդական այս (Շեդդադյաններ, Էյուբյաններ-Պ.Տ.) իշխողներից փոքր-ինչ առաջ, Զաքարյանները ունեցան այն առանձնահատկությունը, որ ասիմիլիացիայի ենթարկվելով հայկական կամ վրացական միջավայրում՝ կորցրեցին իրենց էթնիկական նախապատկերը: Անհավանական չէ, որ քրդական ծագում ունեցած լինեն նաև Զաքարյանների հետ Հայաստան գաղթած և Ամբերդում ու Արագածոտնում նրանցից իշխանություն ստացած Վաչուտյանները»⁵:

Զաքարիա Սարկավագի գրառումը Վաչուտյանների մարական ծագման մասին հիմք է ընդունել նաև Հ. Շահբազյանը⁶:

Անհասկանալի է, որ Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի՝ Ամբերդի արձանագրությունում Արծրունի⁷, Իվանե Ա-ի՝ Հաղարծնի արձանագրությունում

⁴ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Ե., 1962, էջ 223 և հետո:

⁵ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմության, հ. Ա, Ե., 1957, էջ 153:

⁶ Շահպազեան Յ., Քիւրդո-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 51-52:

⁷ Տեր-Առնոյան Ա., Զաքարեի և Իվանեի արաբադատ արձանագրությունն Ամբերդում (Պատմա-քանասիրական հանդես, 1971, N 1, էջ 185-188):

Բագրատունի⁸ ներկայանալու փաստերը դրվում են մի կողմ, և նրանց համար կենսագրություն է հորինվում⁹: Պատմաբան Հակոբ Մանանդյանը Ջաքարիա Քանաքեռցու շարադրանքի աղթիվ գրել է. «Ջաքարիա Սարկավագի այս վկայությունը Վաչուտյանների ծագման մասին Աժդահակի կամ մարաց ցեղից, ինչպես և նրա վերոհիշյալ վկայությունը Ջաքարյանների գաղթի մասին Բաբելոնից, ըստ երևույթին, նրա սեփական ենթադրություններն են, որ կարոտ են ստուգման»¹⁰:

Ինչպես մատենագիտական, այնպես էլ ժամանակակից վիմագրական ոչ մի աղբյուր Վաչուտյանների մարական ծագման վերաբերյալ որևէ տեղեկություն չի պարունակում: Դեռևս ժամանակին Քուրդ անվան հիշատակությունից ընթերցողների մոտ շփոթություն չառաջացնելու նպատակով պատմիչ Կիրակոս Գանձակեցին Քուրդ Ա Վաչուտյանի մասին գրելիս՝ անվան հիշատակությունից անմիջապես հետո, շեշտել է նրա՝ «հայ ազգավ, կրօնիք քրիստոնեայ» լինելը¹¹, որպեսզի հենց իր ապրած ժամանակներում մարդու անունով նրան ազգային այլ պատկանելություն չվերագրվի¹²:

Վերջերս իր «Ջաքարիա Քանաքեռցու կյանքը և պատմագրական ժառանգությունը» թեկնածուական ատենախոսության մեջ թեմային անդրադարձել ու եղած կարծիքները քննարկել է նաև պատմաբան Արմեն Վիրաբյանը¹³ և եզրակացրել, որ «Իրականության մեջ... Վաչուտյանները հայկական ծագում ունեն»¹⁴:

⁸ Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջևանի շրջան, կազմեցին Ավագյան Ս., Ջանփոլադյան Հռ., Ե., 1977, էջ 22:

⁹ Մանրամասն տե՛ս **Շահնազարյան Ա.**, Վահրամյանների իշխանությունը, Ե., 1990, էջ 37 և հետո:

¹⁰ **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Գ, Ե., 1977, էջ 159:

¹¹ **Կիրակոս Գանձակեցի**, Պարմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 365:

¹² Վաչուտյանների մարական (քրդական) ծագման հակազիտական լինելու վերաբերյալ տե՛ս **Պետրոսյանց Տ.**, Վաչուտյան իշխանական տան տոհմաճառը (Բանբեր Երևանի համալսարանի, 1981, N 3, էջ 139-147), **նույնի՝** Վաչուտյաններ, Ե., 2001, էջ 27-28 և 63-րդ ծանոթագրությունը:

¹³ **Վիրաբյան Ա.**, Ջաքարիա Քանաքեռցու կյանքը և պատմագրական ժառանգությունը, թեկնածուական ատենախոսություն, Ե., 2012, էջ 28-29: Տե՛ս նաև **Ջաքարիա Քանաքեռցի**, նշվ. աշխ., էջ 14:

¹⁴ Նույն տեղում:

Զաքարիա Քանաքեոցու հիշատակած շարադրանքից քննարկելի է ևս մեկ փաստ: Նա գրել է, որ Վաչե Ա-ն ստացել է նաև Շիրակի նկատմամբ իշխանություն, որն այլուստ և այլ փաստերով չի հաստատվում:

Վաչե Ա-ի հոր՝ Սարգսի մասին հիշատակություններ պահպանվել են Սանահինի վանքում: XII դ. վերջերին կամ XIII դ. սկզբին թվագրված արձանագրությունը փորագրված է Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին դրսից. «Յանուն Ա/ստուծոյ/ գրեցաք զծառարդարին աւուր ժամն Սարգսի՝ Վաչուտին որդոյն, արդեամբ դստեր իւրո Վանենի»¹⁵: Այս տողերին հետևել է նվիրատուի՝ Սարգսի դուստր Վանենիի անեծքի բանաձևը, որ այժմ մաշված-քայքայված է: Այս արձանագրությունից պարզվում է, որ Վանենին հոր՝ Սարգսի հիշատակին ծառարդարի տոնին պատարագ է գնել:

Սուրբ Աստվածածին եկեղեցու մեծ գավթի կառուցումից հետո, գուցե ելնելով այն բանից, որ այն իրականացրել է հենց Սարգսի որդի Վաչե Ա-ն, եկեղեցու ծառայողները Վանենու արձանագրությունը վերափորագրել են Վաչեաշեն մեծ գավթի հյուսիսային նավի հյուսիսարևմտյան սյան կամարի վրա՝ ազատ շարադրությամբ. «Յանուն Ա/ստուծոյ/, ես՝ հայր Յովանէս եւ եղբարքս գրեցաք ծառարդարին ժամն Սարգսի Վաչուտին որդոյն զամէն եկեղեցիքս, արդեամբ/ք/ք դստերն իւրոյ Վանենէ: Ով խափանէ նզովս առցէ յԱ/ստուծոյ/»¹⁶: Հետևում է, որ Վանենու բնօրինակ արձանագրությունը գրվել է ավելի վաղ, քան 1211 թ.՝ գավթի կառուցումը, և միայն այդ թվականից հետո է փոխադրվել-փորագրվել նաև գավթում: Սա նաև հիմք է տալիս մտածելու, որ ինչպես Վաչե Ա-ն, այնպես էլ նրա քույրը, ծնողները բնակվել են Հյուսիսային Հայաստանում: Պատմաբան Հ. Եղիազարյանը գրել է, որ Սանահինի վանքի գավթում տապանաքարերի մեջ է նաև Սարգիս Վաչենակե նշանավոր իշխանի տապանաքարը¹⁷: Կարո Ղաֆադարյանը, հրատարակելով Սանահինի գավթում եղած տապանագրերը, Վաչենակե (կամ Վաչուտի որդի) տոհմանունով տապանաքար չի նշել¹⁸: Ղ. Ալիշանը կարծել է, որ Վաչույանների նախահայրը կարող է լինել Երնջակ գավառի Բանանեար-Ապարաներ կամ

¹⁵ Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 98:

¹⁶ Նույն տեղում, էջ 133:

¹⁷ Եղիազարյան Հ., Ավաղերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները, Ե., 1952, էջ 14:

¹⁸ Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը, էջ 141-144:

Ապարան մեծ գյուղաքաղաքի Ամենայն սրբոց եկեղեցում թաղված Վաչուտը՝ «ԹՎ/ին/ ՈԻԳ /1174/ Ես՝ Վաչուտ, ծառայ Քրիստոսի կամ ի տապանի եւ սպասեմ գալստեան Տեառն, աղաչեմ յիշել»¹⁹: Կարծում ենք՝ այստեղ, բացի անվան նույնությունից, ուրիշ կապ լինել չի կարող:

Սանահինի գավթի կառուցումն ավարտելուց հետո շինության ճակատային մասում, կանգնեցվել է գեղաքանդակ խաչքար, որի քիվին փորագրվել է. «Նշանդ Ա/ստուծոյ/ յաւգնեա Քրդի, Խորիշահի եւ զաւ/ա/կաց նոցա»: Խաչքարերի տեղադրությունը Վաչեաշեն գավթի մոտ, դրա վրա եղած արձանագրության մեջ հիշված անունները հիմք են տալիս պնդելու, որ այն պատկանում է Վաչուտյան տոհմի ներկայացուցիչ Վաչե Ա-ի որդի Քուրդ Ա-ին: Հավանաբար, խաչքարը կանգնեցվել է 1220 կամ դրան հաջորդող թվականին²⁰:

Վաչուտի որդի Սարգիսը Զաքարյան տան գործակալներից է եղել և նպաստել է որդու առաջընթացին Զաքարյանների զորաբանակում²¹: Եթե հոր գործունեության մասին ոչ մի հիշատակություն չկա, ապա Վաչե Ա-ի մասին մեզ հասած տեղեկությունները թույլ են տալիս կարծելու, որ Վաչե Ա-ն զորահրամանատար է եղել: Քուրդ Ա-ն հորն անվանել է մեծ իշխան²², այդպես է Վաչե Ա-ն կոչվել նաև Գրիգոր վարդապետի հիշատակարանում²³: Վաչե Ա-ի ծոռներն ավելի որոշակի են նշել պապի զինվորական լինելու հանգամանքը: Քուրդ Բ Անբերդեցու՝ Կարբիի հաղթականար-զանգակատան հարավային պատի վրա փորագրված արձանագրությունում (1338 թ.) բառացիորեն նշված է. «...Քուրդ Անբերդեցի...թոռն Անբերդեցի Վաչէ իշխանի, առն քաջի եւ պատերազմողի»²⁴: 1350 թ. Քուրդ Բ-ի որդի Թեոդոս Չրքինը Հովհաննավանքում արձանագրել է.

¹⁹ Հ. Ղևոնդ Ալիշան, Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, 370 էջ:

²⁰ Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը, էջ 176:

²¹ Պետրոսյանց Տ., Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, N 1, էջ 82-84), նույնի՝ Վաչուտյան իշխանական տան տոհմածառը (Բանբեր Երևանի համալսարանի, 1981, N 3, էջ 130-147): նույնի՝ Թեղենյաց վանքը իբրև մշակութային կենտրոն (Պարմա-բանասիրական հանդես, 1982, N 1, էջ 121-129): Տե՛ս նաև Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Ե., 1985, էջ 283 (Վաչե Ա), էջ 284 (Վաչուտյաններ):

²² Ապարանի Աստվածընկալ եկեղեցի (մեր հավաքածուից):

²³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Ե., 1984, էջ 82:

²⁴ Մեր հավաքածուից:

«Ես՝ Թէոյդոս, թոռն մեծ Քրդին, արի եւ քաջին Վ/ա/չէի»²⁵: Արի, քաջ, պատերազմող, մեծ իշխան արտահայտությունները պատվանուն կամ տիտղոսի հավելում չեն, որ տրվել են Վաչե Ա-ին, այլ նրա գործունեության վկան են ու հավաստումը:

Վաչե Ա-ի ծագումնաբանությունը պետք է կապել Հյուսիսային Հայաստանի հետ և նրա, ինչպես նաև տոհմի ավագագույն անդամների մեջ տեսնել Հյուսիսային Հայաստանի որևէ մանր իշխանական տան ներկայացուցչի: Թերևս հավանական է անվանի պատմաբան Հակոբ Մանանդյանի այն միտքը²⁶, որ Զաքարյանների կողմից Բագրատունյաց Հայաստանի ազատագրումից առաջ Շեդդադյանների տիրույթներում կային մեծ թվով մանր ազնվական տներ, որոնք որոշակի դեր էին խաղում Անիի կառավարման գործում, ինչպես նաև Շեդդադյանների զորքերի կազմում: Ահա հիմնականում սրանք անցնելով Վրաստան՝ մտան Զաքարյանների զորաբանակը և դրեցին Զաքարյան պետության հիմքը:

Վաչե Ա-ն ևս խիզախության և անձնագոհության շնորհիվ առաջ է քաշվել Զաքարյանների բանակում և դարձել նոր կազմավորված պետության ավատական խոշորագույն տներից մեկի հիմնադիրը: Որ Վաչեի նախնիները Հյուսիսային Հայաստանից են, լավագույնս հաստատում է և այն փաստը, որ Նիգ-Արագածոտնում իշխանավորելու տարիներին ևս Վաչե Ա-ն և իր կինը՝ Մամախաթունը, մշտապես կապված են եղել Հյուսիսային Հայաստանի, մասնավորապես Սանահինի և Հաղբատի հոգևոր ու մշակութային կենտրոնների հետ, այցելել, նվիրատվություններ են կատարել, հովանավորել նոր կառույցների շինարարությունը: Վաչե Ա-ի որդիներից Վաչուտ Բ-ի ժառանգները հիշվել են միայն Սանահինում, մյուս որդու՝ Քուրդ Ա-ի համար կին է ընտրվել Դսեղի Մամիկոնյան-Համազասպյան տոհմից, իսկ Քուրդ Ա-ի որդի Հասանի համար՝ Լոռիում ապրող Ուքանանց տոհմից: Հյուսիսային Հայաստանի հետ այսօրինակ կապվածությունն այլևս հանդես չեն բերել Քուրդ Ա-ի՝ Այրարատի կողմնակալություն-փոխարքայությունում ծնված ժառանգները:

1215-1220 թթ. ընթացքում Վաչե Ա-ի դրամագլխով կառուցվել է Մալարավանքի գավիթը²⁷, 1229 թ. Վաչե Ա-ն և Մամախաթունը կառուցել են Հռոմոսի եկեղեցու գրատուն-մատենադարանը, այդ նույն թվականին

²⁵ Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը, էջ 92:

²⁶ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 161-162:

²⁷ Դիվան, պր. VI, էջ 186:

Մամախաթուն իշխանուհին Անի քաղաքի Իշխանի ակ վայրի՝ իր սեփական (գանձագին) ձիթհանքը նվիրել է Սանահինի վանքին²⁸:

Սանահինի մեծ գավթի ներսում, Վաչե Ա-ի՝ 1211 թ. շինարարական արձանագրության տակ փորագրված է թոռան՝ Վաչուտի որդի՝ Վաչե Գ-ի նվիրատվական արձանագրությունը, որով Վաչե Գ-ն հայտնել է. «Ես՝ Վաչե, որդի Վաչուտին, ետու զիմ դրամագին Բադալի այգին ի Շէնգալիթ ի Սանահնի Ս/ուր/բ Ա/ստուա/ծածինս»: Տված նվերի դիմաց Վաչե Գ-ն պատարագ է ստացել եղբոր՝ Դավիթ Գ-ի անունով²⁹: Արձանագրության գրվելու ժամանակը որոշելու համար ունենք միայն մեկ կո վան, վանքի առաջնորդ Հովհաննեսի անունը: Քննարկվող ժամանակաշրջանում Սանահինում Հովհաննես անունով երկու առաջնորդներ են եղել: 1221 թ. սկսած՝ հիշատակվում է Զաքարե և Իվանե եղբայրների քեռորդի Հովհաննեսը՝ 14-րդը³⁰, 1241թ. հետո՝ ևս մեկ Հովհաննես՝ 17-րդը: Վաչուտ Բ-ի որդի Վաչե Գ-ի արձանագրությունը, հավանաբար, գրվել է երկրորդի՝ Սանահինի վանքի 17-րդ առաջնորդ Հովհաննեսի³¹ տարիներին՝ 1241 թ. հետո:

Վաչուտյանների ծագումնաբանական խնդրի առնչությամբ քննելի է ևս մեկ վարկած: Այն կապված է Մակարավանքի գավթի կառուցման հետ: Գավթի ներսում, հյուսիսային պատին, լուսամուտից աջ փորագրված է. «Ես՝ Վաչե Անբերթեցի իշխանաց իշխան, ետու վեց հարիւր դահեկան ի շինութեան գալթիս ձեռամբ Գրիգոր վարդապետին եւ յառաջնորդութեան հար Դավթի»³²: Արձանագրությունից հետևում է, որ Վաչե Ա-ն գավթի կառուցման համար տվել է վեց հարյուր դահեկան կամ մոտ 2,5 կիլոգրամ ոսկի, որը սովորական նվիրատվություն չէ, այլ գավթի կառուցման հիմնական գումարը:

Ինչո՞վ կարող է պայմանավորված լինել Վաչե Ա-ի գործունեությունը Մակարավանքում: Կառուցելով Սանահինի գավիթը՝ Վաչե Ա-ն շնորհակալություն է հայտնել միայն Զաքարե Բ-ին, քանի որ Սանահինը գտնվում էր նրա տիրույթներում: Իսկ ահա Իվանե Ա-ի մեծահոգությանն ի պատասխան՝ նա կառուցել է Մակարավանքի գավիթը:

²⁸ Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանյանց, Սանկր-Պետրերբուրգ, 1913, էջ 72:

²⁹ Նույն տեղում, էջ 136:

³⁰ Նույն տեղում, էջ 195:

³¹ Նույն տեղում:

³² Դիվան, պր. VI, էջ 186:

Վաչե Ա-ն կարող էր ծնունդով լինել այս կողմերից, տոհմական կապ ունենալ տեղական իշխանների հետ ու, մատուցած ծառայությունների համար ստանալով պաշտոն ու կոչում, իր հայրենիքում գավիթ կառուցեր: Մենք որոշակի կապ ենք տեսնում Մակարավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի ճակատակալ քարին փորագրված՝ Յոհանեսի արձանագրության մեջ հիշատակված անունների և հետագայում Վաչուտյան տոհմում գործածված անունների միջև: Յոհանեսը եկեղեցին շինել է ծնողների՝ Վասակի և Շուշանի, եղբայրների՝ Հասանի և Վաչեի հիշատակին³³: Սակայն վարկածը հաստատելու համար անհրաժեշտ են նոր տեղեկություններ:

Այստեղ հետաքրքրական է ևս մեկ հանգամանք. արձանագրության սկզբնամասից պարզվում է, որ Վաչե Ա-ն գավթի շինության գումարը տվել է «ձեռամբ Գրիգոր վարդապետին»: Այս Գրիգոր վարդապետի ինքնությունը պարզելու բավարար հիմքեր չկան: Ս. Ավագյանը կարծում է, որ այս Գրիգորը կարող է լինել Մակարավանքի կառուցման առթիվ 1205 թ. պատրաստված խաչքարի արձանագրության մեջ հիշատակված Գրիգորը³⁴. «...եւ յառաջնորդութեան ս/ուր/բ ուխտիս Յոհանիսի եւ վարդապետիս Գրիգորոյ»³⁵: Սակայն կարծում ենք, որ այստեղ հիշատակված Գրիգոր վարդապետը հայտնի հոգևորական ու գիտնական, Սանահինի, Հառիճի վանքերի վանահայր, Աբաս իշխանի որդի Գրիգոր վարդապետն է:

Հառիճի վանքում փորագրված՝ Վաչե Ա-ի նվիրատվական արձանագրությունում կարդում ենք. «Ի ՈՐ /1221/: Ես՝ Վաչե, որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն տուաք Բ այգի Սուրբ Աստուածածնիս ի Փարպի եւ ի Տաճատագեղ մեծ յուսով եւ միջնորդութեամբ Գրիգոր վարդապետի եւ սուրբ եղբարց հաստատեցին կաման Աստուծոյ»³⁶: Այս Գրիգոր վարդապետն առաջին անգամ հիշատակված է Սանահինի Վաչեաշեն գավթի հյուսիս-արևելյան կամարի թաղի վրա փորագրված 1211 թ. արձանագրությունում, որտեղ նշված է՝ «եւ Վարդան վարդապետն եւ հայր Գրիգոր»³⁷: 1214 թ. Գրիգոր վարդապետն աթոռակից է հիշվել Փիլիպոսին. «մե/ն/ք՝ առաջնորդ ս/ուր/բ ուխտիս Փիլիպոս հայր եւ Գրիգոր վարդա-

³³ Նույն տեղում, էջ 194:

³⁴ Նույն տեղում, էջ 187:

³⁵ Նույն տեղում, էջ 159:

³⁶ Ղաֆադարյան Կ., Սանահնի վանքը, էջ 129, նաև՝ 135, 174:

³⁷ Նույն տեղում, էջ 122, նաև 121:

պետ»³⁸: 1215 թ. Գրիգոր վարդապետը հանդես է եկել որպես Սանահինի վանքի միանձնյա առաջնորդ³⁹: Սանահինում Գրիգորի առաջնորդությունը 1221-1229 թթ. ընդհատվել է (այդ տարիներին նա եղել է Հառիճի վանքի առաջնորդը, որտեղ ևս Վաչե Ա-ն նրա միջնորդությամբ նվիրատվություն է կատարել Հառիճի վանքին) և շարունակվել 1229 թ. մինչև 1234 թ.: Այս թվականին է փորագրված վերջին թվակիր արձանագրությունը⁴⁰: Ըստ Կարո Ղաֆադարյանի, Գրիգոր վարդապետը մահացել է 1234-1240 թթ. միջև: Մակարավանքում առկա է այս Գրիգոր վարդապետի՝ 1237 թ. մի արձանագրություն, որը փորագրված է Վաչե Ա-ի շինարարական-նվիրատվական արձանագրության տակ. «Ես՝ Գրիգոր վարդապետ որդի Աբասա իշխանի, մեծ յուսով միաբանեցա Ա/ստուա/ծածնիս եւ ետու պատուական գրեանք եւ խաչ մասամբ»⁴¹:

Կարծում ենք՝ որոշակի կապ կա Վաչե Ա-ի և Գրիգոր վարդապետի միջև. նրանք երկուսն էլ սերում են Տաշիր-Ձորագետից կամ Կայան գավառից, հնարավոր է՝ ազգականներ են: Այսօրինակ եզրակացության հիմք տալիս են Սանահինում, Հառիճում, Մակարավանքում նրանց համատեղ գործելու վկայությունները: Տեղական իշխանական տոհմերի հետ Վաչե Ա-ի արյունակցական կապի հավանականությանը մղում է և այն հանգամանքը, որ Մակարավանքի եկեղեցու բեմառաջքի աստղաձև զարդանախշի մեջ քանդակվել է Վաչե Ա-ի՝ իրար վրա կանգնած և իրար սիրող էգ ու արու արծիվների պատկերով զինանշանը:

Վաչե Ա-ի կինն է Մամախաթուն իշխանուհին: Վերջինիս մոր՝ Վախախի անունն այլուր հիշատակված է, իսկ հոր անունը ճշտորեն հայտնի չէ: Ըստ Հռոմոսի գրատան շինարարական արձանագրության⁴² և Տեղերի եկեղեցու 1213 թ. մի կիսաեղծ արձանագրության⁴³, այն Ապուսեիր է, իսկ ըստ Թեղենյաց վանքի գավթի նվիրատվական արձանագրության՝ Հասան⁴⁴: Հնարավոր է, որ Մամախաթուն իշխանուհու հայրն ունեցել է երկու անուն:

³⁸ Նույն տեղում, էջ 116 /արձ. 33/, էջ 123 /արձ. 46/, էջ 128 /արձ. 49/, էջ 130 /արձ. 52/, էջ 134 /արձ. 58/, էջ 135 /արձ. 59/, էջ 161 /արձ. 127/:

³⁹ Նույն տեղում, էջ 161:

⁴⁰ Դիվան, պր. VI, էջ 188:

⁴¹ Վիմական տարեգիր, էջ 72:

⁴² Նույն տեղում:

⁴³ Կարապետյան Ս., Տեղերի վանքը (Վարձք, 2013, N 10, էջ 18):

⁴⁴ Հայրենել է պապմաքան, վիմագրագետ Գագիկ Սարգսյանը:

Տեղերի Սուրբ Աստվածածին եկեղեցու ներսում, հարավային պատի վրա, խորանի մուտքին կից փորագրված է. «ի նաւակատե/ա/ց ս/ուր/բ Տիրամարն մատուցանի պատարագ ամենայն խորանս Վախախին, մար Մամախաթունին՝ շինողին եկեղեցոյս»⁴⁵:

Վախախի և Հասանի մասին այլ հիշատակություն չունենք: Հնարավոր է՝ նույնն են Սանահինի Վաչեաշեն մեծ գավթի հյուսիսային նավի մյուս կամարի վրա 1221 թ. նվիրատվական արձանագրության հեղինակներ Հասանի և Վախախի հետ⁴⁶: Հասան և Վախախ ամուսինները Սանահինի վանքին մեկ օրավար հող են նվիրել հայրենի Ծաղեր գյուղի Շատարևանք հանդամասից: Այս նույնացումը թեական է. կատարում ենք՝ նկատի ունենալով, որ փորագրված է Վաչեաշեն գավթում, Վաչե Ա-ի քույր Վանենիի արձանագրության մոտ:

Վաչե Ա-ի որդիներն են Քուրդ Ա-ն և Վաչուտ Բ-ն⁴⁷: Քուրդ Ա-ն, սկսած 1220-ական թթ., գործակցել է Վաչե Ա-ի հետ և ամիրի պաշտոնով եղել է կողմնակալության-փոխարքայության երկրորդ դեմքը կամ հոր գահակիցը:

Այրարատյան կողմնակալ-փոխարքա Վաչե Ա-ն ինքնակալ էր, ուներ զորաբանակ, զինանշան⁴⁸, դրոշ, հրամանակատարներ ու ծառայականներ:

Վաչե Ա-ն մահացել և թաղվել է Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցում. «Եւ ինքն իշխանն Վաչէ վաղճանեալ դնի ի մէջ եկեղեցոյն՝ առաջի գրաբեմբին՝ ի դրան խորանին՝ հարաւակողմն, որոյ հանգիստ եւ արքայութիւն պարգեւեցի ի Քրիստոս»⁴⁹:

⁴⁵ Մեր հավաքածուից: Տե՛ս նաև Մուրադյան Մ., Վախախի խաչքարը (Բանբեր Երևանի համալսարանի, 1987, N 1, էջ 208-211):

⁴⁶ Ղաֆադարյան Կ., Սանահնի վանքը, էջ 133:

⁴⁷ Յովսէփեանց Գ., Խաղբակեանք, Բ հրատ., Լիբանան, Անթիլիաս, 1969, էջ 314:

⁴⁸ Տե՛ս Պետրոսյանց Տ., Հայկական իշխանական զինանշաններ, Ե., 2005, Վաչուտյանների զինանշանը, էջ 54-58:

⁴⁹ Զաքարիա Քանաքեղցի, Պարմութիւն, էջ 183-184:

ПРОИСХОЖДЕНИЕ ВАЧУТЯНОВ

ПЕТРОСЯНЦ Т.М.

Резюме

В начале XIII века династия Закарян превратила Айраратскую губернию в наместничество, передав его сыну одного из своих полководцев – Ваче А Вачутяну с присвоением ему титула князя князей. Патриархи Айраратского наместничества на протяжении почти трех десятилетий играли важную роль в армянской действительности в период правления Закарян, а также монгольского господства.

THE ORIGIN OF VACHOUTYANS

T. PETROSYANC

Abstract

At the beginning of the 13th century, the Zakaryans changed the liberated Ayrarat province into vicegerency, and passed it to one of their generals, the son of Sargis-Vache I Vachoutyan. The patriarchs of the Ayrarat vicegerency played an important role in the period of Zakaryan's rule as well as under the Mongol domination over a century.

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ԲՐՈՒՏՅԱՆ Մ.Ա.

Փոքր Ասիայի ամենահին վաճառաշահ քաղաքներից մեկը՝ Զմյուռնիան, մշտապես հայտնի է եղել նաև որպես տարածաշրջանի կարևորագույն հոգևոր կենտրոն: Այստեղ վաղ քրիստոնեական համայնք է ձևավորվել Հովհաննես առաքյալի կողմից, որն էլ 50-ական թթ. կառուցել է առաջին եկեղեցին՝ Ս. Կիրիակոսը: Չնայած նոր կրոնի հետևորդներին ի սկզբանե Զմյուռնիայում հալածանքների են ենթարկել, հրապարակավ տանջամահ արել քաղաքի ամֆիթատրոնում, այդուամենայնիվ, այն կարճ ժամանակամիջոցում կարողացել է խոր արմատներ գցել:

Քրիստոնյաների նկատմամբ հալածանքները սաստկացել են Մարկոս Ավրելիոսի օրոք՝ II դարում. դրանց զոհ է դարձել նաև Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ, Հովհաննեսի աշակերտներից Պոլիկարպոսը: Վերջինիս Զմյուռնիայում եպիսկոպոս էր նշանակել Հովհաննես առաքյալը: Պոլիկարպոսի գործունեության, կրած տանջանքների վերաբերյալ բազում պատմություններ են հյուսվել, նրան է նվիրվել Զմյուռնիայի ամենահին հունական եկեղեցին՝ Ս. Հովհաննեսի (Յանուս) տաճարը՝ կառուցված Պագոս լեռան ստորոտում¹:

XVI դ. Ս. Հովհաննեսը գրավել են թուրքերը և Սուլեյման Կանուննիի հրամանով այն վերածել մզկիթի, վերանորոգել, կարճ ժամանակ անց՝ լքել: Ճանապարհորդ Տավերնիեի վկայությամբ, XVII դ. այն արդեն ավերակ էր. «Ամֆիթատրոնի մոտ տեսանք եկեղեցու ավերակներ, որոնք բնակիչների վկայությամբ՝ պատկանում էին նախկին Հովհաննեսի տաճարին»²:

Հայտնի չէ, թե ինչու են եկեղեցին թուրքերն այդքան շուտ լքել, մինչդեռ հայտնի է, որ հույները հեշտությամբ չեն հրաժարվել իրենց համար մեծ կարևորություն ունեցող այս սրբավայրից և հետագայում ևս շարու-

¹ Պագոսի ստորոտում էին նաև հունական հնագույն մյուս եկեղեցիները՝ Ս. Պառակկին, Ս. Գեորգը, Ս. Լուսավորիչը (հունարեն՝ Այա Ֆոփինի- Բ.Մ.):

² *Les six voyages de Jean Baptiste Tavernier, Paris, 1713, p. 103.*

նակել են հաճախել այնտեղ: Այդ մասին են փաստում XIX դ. ռուս ճանապարհորդ, քաղաքական գործիչ՝ Աբրահամ Նորովի տեղեկությունները. «Ս. Հովհաննեսը եղել է մզկիթ, այնուհետև լքվել է: Մզկիթի ավերակների մոտ երևում էին Պոլիկարպոսի գերեզմանի հետքերը, որտեղ հույները յուրաքանչյուր տարվա փետրվարի 23-ին ուխտի են գալիս»³:

Զմյուռնիայի հունական եկեղեցիների մասին տեղեկությունները սուղ և կցկտուր են, հայկականի մասին՝ հակասական: Հունապատկան էին Ս. Դիմիտրիոսը՝ կառուցված 1830 թ., Ս. Գեորգիոսը, որի տարածքում XVIII դ. կառուցվել են Ս. Գեորգ վեհաշուք եկեղեցին, նաև Ս. Հովհաննեսը: Քաղաքի ամենահին հոգևոր կենտրոններից էր հունական Ս. Լուսավորիչ եկեղեցին, որի կառուցման ստույգ թվականը հայտնի չէ: Այն ենթարկվել է բազում ավերածությունների, այրվել է 1688, 1763 թթ. հրդեհներից: XVIII դ. պատրիարք Գրիգոր V-ի օրոք (1785-1797) կանգնեցվել է նոր, նույնանուն եկեղեցի: XIX դ. եկեղեցին ընդարձակվել է, համալրվել գավիթներով, գրադարանով, ձեռագրատնով, իսկ 1856 թ. կառուցվել է շքեղ գանգակատունը:

Ս. Լուսավորչի գեղեցկության, ճարտարապետական ինքնատիպության մասին են խոսում XVIII-XIX դդ. Զմյուռնիա այցելած գրեթե բոլոր ճանապարհորդներն ու ուսումնասիրողները, ինչպես, օրինակ, Ա. Նորովը և Բ. Սլարսը:

Եկեղեցին այսպես է նկարագրում զմյուռնահայ գաղթօջախի հետազոտող Հ. Քոսյանը. «Յունաց Այա Ֆոթինի եկեղեցին անուանի է, որուն աշտարակը կարծես թէ կը տիրե Զմիռնիոյ ամենաբարձր շենքերուն վրայ եւ կը տեսնուի ամէն կողմանէ, որուն գագաթին վրայ կանգնուած շողշողուն խաչին գոյնզգոյն բիւրեղաւոր ապակիներն արեւու ճառագայթներէն լուսաւորուելով, աջ ու ձախ սիրուն ցոլացումներ կը սփռեն եւ որուն գանգակին հնչիւնը մերձակայ գիւղերէն անգամ կը լսուի...»⁴:

Թուրքական տիրապետության շրջանում եկեղեցիների մի մասը, հատկապես լայնարձակներն ու վեհաշուքները, ծառայել են որպես մզկիթ, ինչպես, օրինակ, XIV դ. կառուցված և 1332 թ. որպես թեմական կենտրոն ծառայող Ս. Առաքելոցը, որը XVI դ.՝ 1592-1598 թթ., հիշատակվում է որպես մզկիթ՝ Հիսար Ջամի անվամբ: Ս. Առաքելոցի վերաբերյալ

³ **Норов А.** Путешествие к семи церквам, упоминаемым в Апокалипсисе, СПб., 1847, с. 196.

⁴ **Քոսեան Յ.**, Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, 1859, հ. I, էջ 46:

XIX դ. այսպիսի տեղեկություններ են պահպանվել. «Այս պարսպին մէջն էր Սուրբ Առաքելոց եկեղեցին, որը հիմայ անապատ մզկիթի մը փոխուած է, որուն քովն է երկրի տակով վիհի մը նման տեղ մը, որ երկայնութենէն վեց՝ և լայնութենէն հինգ սենեակ ունի»⁵:

Զմյուռնիայի հնագույն հունական եկեղեցիներից էր Հիսուս Քրիստոսի անվան եկողոցին (հունարեն՝ Կամելավկա): XIII դ. այստեղ հաճախ է այցելել Նիկեայի կայսրերից Հովհաննես III Դուկասը: Ըստ ավանդության, կայսրը եկեղեցու հրաշագործության շնորհիվ բուժվել է ծանր հիվանդությունից⁶: Հետագայում Կամելավկան դարձել է «Կեստենե բազար» թաղամասի մզկիթներից մեկը:

Բյուզանդական ժամանակաշրջանի եկեղեցիները մզկիթների վերածվեցին կամ ավերվեցին հիմնականում Սելիմ I-ի (1465-1520) օրոք: Նրա ֆերմաններով 1518 թ. մզկիթների վերածվեցին նաև Զմյուռնիայի եկեղեցիները, քանի որ նման հոյակապ և ընդարձակ կառույցները չպետք է ծառայեին «անհավատներին»: Թուրքերը առգրավեցին եկեղեցիների ունեցվածքն ու այրեցին Սուրբ գրքերը: Այս երևույթը շարունակվեց նաև հետագայում: XVII դ. պատմիչ Երեմիա Քյոմուրճյանը նկարագրում է կայսրության բոլոր բնակավայրերում եկեղեցիներ քանդելու, թալանելու, հրդեհելու դեպքերը. «Յայնժամ եւ սուգ առնոյր երկին եւ ողբայր երկիր վասն դիպուածոց մերում թշուառութանս, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտ ահագին եւ ամպ մթագին եւ արեւ ծածկեցաւ, եւ հողմ սաստկագին յոյժ յոյժ մինչեւ ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զաղաղակս իւրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն եւ փոշոյն որ բարձրանայր յերկրէ, եւ ծովն ալեօքն փրփրայր եւ բարձրանայր ընդ պարիսպն եւ անձրեւ գայր»⁷:

Նույն դարի գրիչ Կիրակոսը ևս նկարագրում է Զմյուռնիայի աղետալի վիճակը. «Ի քաղաքս և ի գիւղորոյս բռնութեամբ վարին այլազգիք՝ կողոպտելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, զկին և զտղայս քար-

⁵ Հայրենասէր, 15.X.1843:

⁶ 1204-1261 թթ. Զմյուռնիան ընկել է Նիկեայի կայսրության փրկապետության տակ: Ա. Ալպոյաճյանի կարծիքով, հայերը այս շրջանում են հաստատվել Նիկեայի կայսրության Զմյուռնիա քաղաքում (Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 155, էջ 527):

⁷ Օրագրութիւն Երեմիա չէլէպի Քէօմիւրճյանի, Երուսաղէմ, 1939, էջ 386:

շելով, յայտնի կողոպտելով և ոչ յումեքէ երկնչելով: Ի յայսպիսի յանդորրութեան միջոցի, որում եզերեալ ընդոտնեցան թշնամիք յեկեղեցոյ»⁸:

Թուրքական տիրապետությունը Ջմյուռնիայում հետագայում ևս իր բացասական հետևանքներն ունեցավ հունական և հայկական եկեղեցիների ճակատագրերի հարցում: Ֆերմանները սահմանափակումներ էին դնում ոչ միայն եկեղեցիներ կառուցելու, այլև դրանք նորոգելու ժամանակ: Միայն մահմեդականներից բաղկացած հանձնաժողովները հազվադեպ էին վերանորոգման թույլտվություն տալիս, ընդ որում, այդ վերանորոգումը կատարվում էր ավերված շինության նյութերով և նախկին չափով: Դրա մասին է վկայում Աբդուլ Համիդ I-ի՝ 1774 թ. հրովարտակը. «Նախապես ուր ուրեք եւ իցէ քաղաքի մոլլայն եւ այլք կարդացողք եւ տաճիկք մեծամեծք, գնացեալ աջօք իւրեանց տեսցեն եւ քայքայեցեալ աւերեալ տեղեացն վերահասու լիցին, երկայնութիւնն եւ լայնութիւնն այնր եկեղեցոյն ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի եւ ոչ պակաս...»⁹:

Մինչ այդ, Սելիմ I-օրոք, երբ մզկիթների կամ այլ կառույցների վերածվեցին եկեղեցիները, Ջմյուռնիայի հույներն ու հայերը ստիպված էին իրենց կրոնական արարողությունները կատարել փայտե տնակներում: Միայն հետագայում նրանք մեծ դժվարությամբ տաճարներ կառուցելու թույլտվություն ստացան: Ֆերմաններում մանրամասն խոսվում էր նորակառույց տաճարի չափի մասին և ամենափոքր իսկ շեղման դեպքում այն քանդում էին: Հաճախ սահմանվում էր նաև կառուցման ժամանակը, որը հիմնականում անհավանականորեն փոքր էր լինում: Օրինակ, հույների Ս. Լուսավորիչ եկեղեցու կառուցման համար սահմանվել էր ընդամենը 40 օր: Փայտաշեն եկեղեցիների կառուցումը շարունակվում է նաև հետագայում. փայտաշեն էին հույների Այա Եկատերինան՝ կառուցված 1857 թ., վերակառուցված՝ 1898 թ., Ս. Էվանգելիստրիան՝ կառուցված 1867 թ.:

XVII դ. Ջմյուռնիայի եկեղեցիներին արգելված էր զանգերի օգտագործումը, բացառությամբ հույների Այոն Օրոս եկեղեցու: Այս իրավունքի վերականգնման համար քրիստոնյա համայնքները երկարատև պայքարի մեջ մտան պետության հետ, որի շնորհիվ XVIII դ. եկեղեցիների մի մասը

⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ. (1641-1660), կազմ.՝ Վ. Հակոբյան, Ե., 1984, էջ 416:

⁹ Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1990, էջ 38:

ստացավ զանգերն օգտագործելու իրավունք, բացառությամբ նամագի ժամերի¹⁰:

Զանգեր օգտագործելը, փայտաշեն եկեղեցիներ կառուցելն ու այցելության թույլտվությունը պարզապես «բարեգթություն» էր քրիստոնյաների համար: Զմյուռնիային այս և այլ որոշակի «արտոնություններ» տալը պայմանավորված էր նրանով, որ կայսրության խոշոր քաղաքների նման գտնվելով օտար հյուպատոսների ուշադրության կենտրոնում՝ այն մեծ չափով չկրեց այն վնասները, որոնք ունեցել են համեմատաբար աչքից հեռու քաղաքները: Այս մասին վկայում է XIX դ. ռուս ականատես Պյոտր Չիխաչովը, որ տևական ժամանակ եղել է Օսմանյան կայսրությունում և ներկայացրել քրիստոնյաների իրավագուրկ վիճակը. «Բացառությամբ Կ. Պոլսի և ծովափնյա մյուս քաղաքների, որտեղ օտար հյուպատոսներ էին, քրիստոնյաները չկարողացան իրավունք ստանալ օգտագործելու եկեղեցու զանգերը»¹¹:

Պետության կամայականությամբ, ոչ մահմեդականների իրավունքների սահմանափակումները կոծկելու համար հրապարակվում էին ստահոդ օրենքներ, որոնք խաբուսիկ ու ձևական էին՝ միայն թղթի վրա թողնելով բնակչության նկատմամբ կայսրության «հավասարության» սկզբունքը: Այդպիսին էր XIX դ. սուլթան Աբդուլ Ազիզի (1861-1876) արձակած հրովարտակ, որ վերաբերում էր ոչ մահմեդականների տաճարների վերանորոգմանը. այնտեղ ասվում էր. «Օսմանյան կայսրությունում բնակվող և մահմեդական շարիաթի և սուլթանի արդարության հովանավորությունը վայելող բոլոր ռայաները ապրում են բարեկեցիկ կյանքով»¹²:

Պաշտոնական գրություններից դուրս այլ օրենքներ էին գործում. Օսմանյան կայսրության բոլոր բնակավայրերում, նաև Զմյուռնիայում, ոչ մահմեդականների իրավունքները, նրանց եկեղեցիների ճակատագրերը կախված էին այս կամ այն սուլթանի՝ կամայականորեն արձակած ֆեդմաններից, որոնցում եկեղեցիների թվաքանակը անտրամաբանորեն տատանվում էր: 1631 թ., Տավերնիեի վկայությամբ, Զմյուռնիայում թուրքերին էր պատկանում տասնհինգ մզկիթ, հրեաներն ունեին յոթ սինագոգ, հույները՝ երկու, հայերը՝ մեկ, լատինները՝ երեք եկեղեցի¹³: Գրեթե նույն տվյալներն է ներկայացնում 1723 թ. Զմյուռնիա այցելած Օ. Սաումե-

¹⁰ Βαλαβάνη Γω. *Μικρασιατικά, Αθήνα, 1891, σελ. 35.*

¹¹ Чихачев П. *Письма о Турции, М., 1960, с. 60.*

¹² Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 198:

¹³ *Les six voyages de Jean Baptiste Tavernier, P., 1713, p. 104.*

րին, ըստ որի, հույները կրկին ունեին երկու եկեղեցի, կաթոլիկները՝ չորս, թուրքերը՝ տասնհինգ մզկիթ¹⁴: Պատկերը փոխվում է XIX դ., ընդ որում՝ ոչ համաչափ: XIX դ. սկզբին, ըստ պատմաբան և փիլիսոփա Կոնստանտինոս Կումասի, քաղաքում կային վեց հունական եկեղեցիներ՝ Ս. Լուսավորիչը (Այա Ֆոտինին), Ս. Գևորգը, Ս. Դիմիտրին, Ս. Հովհաննեսը, Ս. Հովհաննես Մկրտիչը և Ս. Խառալամպոսը: Հայերին էր պատկանում մեկ եկեղեցի, հրեաներին՝ ինը սինագոգ, իսկ մզկիթների թիվը հասել էր քսաներկուսի¹⁵: Նշվածները Ս. Հովհաննեսը կառուցվել է XIX դ. սկզբին, նախորդ դարում գործող մի մատուռի վայրում, որն այրվել էր 1773 թ.: Կառուցման համար 1804 թ. սուլթանից մեծ դժվարությամբ թույլտվություն են ստացել հայտնի ֆանարիոտներ* Պանայոտակիս եղբայրները և Դիմիտրիս Մուրուզին:

Ենթադրաբար մզկիթները կամ եկեղեցիները պետք է ավելանային կամ պակասեին բնակչության թվաքանակի փոփոխությանը զուգընթաց: Եթե փորձենք Ձմյուռնիայի եկեղեցիների և մզկիթների անհամաչափ այս աճը կապել բնակչության թվաքանակի հետ, ապա կստանանք կրկին անորոշ պատկեր. 1657 թ. և 1820 թ. տվյալներով, Ձմյուռնիայում թուրքերը անփոփոխ՝ 60 հազար էին, հույները 1657 թ. 15 հազարից 1820 թ. դարձել էին 30 հազար, հայերը՝ 8 հազար էին մնացել: Այսինքն՝ թվաքանակի աճին համապատասխան պետք է որ ավելանար միայն հունական եկեղեցիների թիվը:

Ա. Նորովի վկայությամբ, XIX դ. Ձմյուռնիայում կային հունական 7 եկեղեցիներ՝ նշված վեցը և Ս. Իլիասի անվան նորակառույց եկեղեցին: Հունական եկեղեցիների թիվը համեմատաբար ավելացավ նույն դարի վերջին՝ 1891 թ. հասնելով տասներեքի, համաձայն ֆրանսիացի արևելագետ Վիտալ Քյունեթի հաղորդման: Ըստ նրա, հայերն ունեին երեք եկեղեցի¹⁶:

Հայերի՝ երեք եկեղեցի ունենալու հանգամանքը վիճահարույց է: Ձեռագիր հիշատակարաններում Ձմյուռնիայի եկեղեցիների մասին հիշա-

¹⁴ *Memories et aventures secrets et curieuses d'un voyage du Levant, Liege, 1782, p. 24.*

¹⁵ **Κούμα Κ.** Γεωργία εκτεθείθα μεν γαλλιστί υ ό Αδριανού Βάββη, Βιέννη, 1840, t. 5, s. b.

* **Ֆանատիոտ** բառը առաջացել է Կ. Պոլսի հունական ֆեներ թաղամասի անունից. ֆանարիոտները ներկայացնում էին էթնիկ հույն վերնախավը:

¹⁶ **Cuinet V.** *La Turquie d'Asie, P., 1894, p. 537.*

տակությունները սկսվում են XVIII դ., մինչդեռ մինչ օրս ընդունված տեսակետի համաձայն, հայերն այստեղ բնակվում էին XIII-XIV դդ. սկսած, նրանց թիվը անընդհատ աճում էր, և չէին կարող իրեն եկեղեցին չունենալ: Հայտնի է, որ հայերը մինչ Հայնոց տեղափոխվելը բնակվել են Քաղիքեֆալե թաղամասում՝ Պագոս լեռան ստորոտում, ունեցել են իրենց մատուռն ու գերեզմանոցը¹⁷: XVI դ. մի վկայության համաձայն, Զմյուռնիայում հայկական եկեղեցի կար, որի անունը, սակայն, չի հիշատակվում.. «Սարգիս Մելիտինացի վկայի մը արձանագրութիւնը կը պահուի Զմիւռնիոյ եկեղեցւոյն բակը, որուն մէջ ըստած է, թէ Սարգիս յատենի համարձակի, եւ մեծ հանդիսի նահատակի, բայց ուրիշ մանրամասնութիւններ գրուած չեն... Իսկ թուականը յամի հազար հայկեանս թուի, թերի է օրինակին մէջ եւ կրնայ 1550, 1561 եւ 1572 թուականներուն յարմարիլ անխտրաբար»¹⁸:

XVII դ. ձեռագրերից մեկում խոսվում է Զմյուռնիայի Ս. Բարդուղիմեոս եկեղեցու մասին. «Վկայութեամբ խօճայ Թումային և խօճայ Սարգսին, և խօճայ Մուրատին, և թարգի Մուրատին և խօճայ Ապրին. և ետ յիշատակ Իզմիր քաղաք, ի դուռն Ս. Բարդուղիմեոսի եկեղեցւոյն...»¹⁹: Նոյն ժամանակաշրջանի մի այլ ձեռագրում կարդում ենք. «Աստուած ողորմի ասացէք խոջայ Աւետիքին... և ետ զԱբ. Գիրքս... յիշատակ ի դուռն յԻզմիրայ Աբ. Ստեփաննոս Նախավկային»²⁰:

Նշանակում է՝ XVII դ. Զմյուռնիայում արդեն գոյություն ունեին Ս. Ստեփաննոսն ու Ս. Բարդուղիմեոսը, մինչդեռ, ըստ Տավերնիեի, հայերը նույն ժամանակաշրջանում ունեին մեկ եկեղեցի²¹: Հավանաբար, եկեղեցին նախապես կոչվել է Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի՝ կրելով բակում առկա երկու փոքրի տաճարների անունները: Եկեղեցին կառուցվել է XVI դ. վերջին, երբ հայերը նաև Ապանո թաղամասից ստիպված տեղափոխվեցին քաղաքի հարավային մասը՝ հիմնելով Հայնոցը: 1688 թ. եկեղեցին ավերվել է երկրաշարժից²²: 1689 թ. հայոց կաթողիկոս Եղիազարի և հոգևոր առաջնորդ Հովսեփ վարդապետի օրոք կատարվել է

¹⁷ <https://www.agos.com.tr/haber.php?seo=gvr-izmirin-ermenileri&haberid=3414>

¹⁸ **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 409:

¹⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ (1621-1640), կազմ.՝ Վ. Հակոբյան, Ե., 1978, էջ 314:

²⁰ Նոյն տեղում, էջ 187:

²¹ *Les six voyages de Jean Baptiste Tavernier*, p. 76.

²² Նույն թվականին ավերվել է հույների Ս. Լուսավորիչ եկեղեցին:

Եկեղեցու առաջին վերանորոգումը, իսկ երկրորդը՝ 1743 թ. Ղազար Կաթողիկոսի և Ալեքսանդր արքեպիսկոպոսի օրոք: Եկեղեցին 1845 թ. այրվել և 1853 թ. վերանորոգվել է առավել հոյակերտ տեսքով: Եկեղեցու պահպանված արձանագրության մեջ նշվում է. «...զկնի այրման յամին 1845, դարձեալ յանուն Սբ. Ստեփանոսի Նախավկային ի հիմանց նորոգ կառուցաւ...»²³:

Եկեղեցին ներկայանում է հայկական և հունական ճարտարապետական ոճերի համադրությամբ և համարվում է ամենագեղեցիկը ոչ միայն Զմյուռնիայի, այլև Պոլսի եկեղեցիների մեջ²⁴: Եկեղեցու՝ հոյակերտ կառույց լինելու մասին վկայում են նաև օտարները. XVIII անգլիացի ճանապարհորդ Ռիչարդ Չանդլերը, լինելով Զմյուռնիայում, նշում է. «Նախքան Զմյուռնիայի 1688 թ. մեծ հրդեհը, այնտեղ կային երկու հունական և մեկ հայկական եկեղեցիներ: Հայերինը մեծ էր և շատ գեղեցիկ»²⁵:

Ս. Ստեփանոսի ամենագեղեցիկ մասը Ավագ դուռն է՝ զարդարված հոյակերտ խոյակներով, սյուներով, Պողոս և Պետրոս առաքյալների ձուլածո արձաններով²⁶:

Եկեղեցու հասույթները տրամադրվում էին ազգային կառույցներին՝ դպրոցներին և Ս. Լուսավորչի հիվանդանոցին: Վերջինս հիմնադրվել է 1801 թ.:

Ավելի ուշ հիվանդանոցին նյութական աջակցություն է ցույց տվել նրա տարածքում 1842 թ. հիմնված Զմյուռնիայի երկրորդ՝ Ս. Լուսավորչի եկեղեցին, որի կառուցման վերաբերյալ Հ. Քոսյանը ներկայացնում է հետևյալ արձանագրությունը. «Կառուցաւ Եկեղեցիս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին արդեամբ համայն ժողովրդոցս ազգիս յառաջնորդութեան Տ. Մատթեոսի Արքեպիսկոպոսի 1842 թ.»²⁷: Եկեղեցին ու հիվանդանոցը

²³ **Քօսեան 3.**, նշվ. աշխ., էջ 56:

²⁴ Գավիթները եղել են մարմարյա, սյունազարդ: 10 մարմարյա սյուները զարդարել են նաև փաճարի ներքո: Եկեղեցուն հատկապես մեծ շուք է հաղորդել զանգակատան քառանկյունածև աշտարակը: Զանգակատան փակ խորունկ և լայն ջրհոր է եղել, որտեղից ջուրը հասնում էր մինչև ավագ խորանը: Այն որպես սուրբ ջուր են օգտագործել ոչ միայն հայերը, այլև հույներն ու թուրքերը (Թեոդիկ, Ամենուն փարեցոյց, Պոլիս, 1913, էջ 168):

²⁵ *Voyages pittoresques et romantiques dans l'ancienne France*, Paris, 1806, v. A., p. 145.

²⁶ **Քօսեան 3.**, նշվ. աշխ., էջ 51:

²⁷ Նույն տեղում, էջ 151: Հ. Դիմաքսյանը եկեղեցու կառուցման, հիվանդանոցի հիմնադրման փարեթիվ է համարում 1801-ը (**Դիմաքսյան Հ.**, Շիրք մանունք ի միջերկրականէ, Կ. Պոլիս, 1878, էջ 332):

նորոգվել են 1879 թ.' մեծահարուստ Հովհաննես և Հակոբ Սպարթալյանների միջոցներով: Թանգիմաթի առաջին տարիներին ընտրվում էին Ս. Ստեփանոս եկեղեցու տեսուչ, հիվանդանոցի հոգաբարձու և համայնքի կողմից՝ քաղաքային վարչության ներկայացուցիչը, որը որոշակի իրավասություններ ուներ համայնքի կյանքում: Դա տևեց մինչև 1861 թ., երբ այստեղ սկսեց գործադրվել Ազգային սահմանադրությունը:

Սուրբ Ստեփանոսի պարտեզում են գտնվել ազգային երեք կարևոր հաստատությունները՝ արևմտյան կողմում՝ կրկնահարկ առաջնորդարանը, հարավում՝ Մեսրոպյան վարժարանը: Եկեղեցին ապավեն է եղել Զմյուռնիայի հայության համար 1922 թ. աղետի ժամանակ, և նույն թվականին ավերվել է թուրքերի կողմից: 1922 թ. օգոստոսի 30-ին Գարահիսարից Զմյուռնիա են տեղափոխվել առաջին գաղթականները՝ հիմնականում կանայք, որոնց տեղավորել են Ս. Ստեփանոս եկեղեցու բակում²⁸: Աղետի ականատեսներից կեսարացի Տիգրանուհի Արթինյանն իր հուշերում գրում է. «...Օր մը բաւական հրացանաձգութենէ մը վերջ կը լսի Սուրբ Ստեփանոսի զանգակի դօղանջը հատ-հատ ու տխուր-տխուր, ու թաղմանական արարողութեան մը պէս կը տարածուի, թէ եկեղեցիէն օգնութեան կոչ մըն է օտար հիպատոսարաններուն եւ կաթողիկէ եկեղեցիներուն ուղղուած»²⁹:

Մեկ այլ ականատես՝ Ժորժ Յիմպուկեյիսը, պատմում է. «Ես տեսա, թե ինչպես Քեմալի զորքերը շարժվեցին դեպի Ս. Ստեփանոս, որտեղ 4000 հույներ և հայեր օգնում էին հույն զինվորներին: Թուրքերը այրեցին եեղեցին, հետո պայթեցրին այն»³⁰: Բժիշկ Կարապետ Խաչերյանի վկայությամբ, «Հալածանքն ուղղված է մասնավորապես հայերի դեմ՝ այն պատրվակով, թե իբր նրանք դիմադրություն են ցույց տվել Ս. Ստեփանոս եկեղեցում ու առաջնորդարանում ու թուրք զինվորների դեմ զենք գործադրել: Իրողությունն այն է, որ տեղացի և մասնավորապես գավառաբնակ հայերը ապաստանել են հայոց եկեղեցում, և երբ թուրքերը այն պաշարելուց հետո հայերին հրամայել են անձնատուր լինել, վերջիններս մերժել են և համաձայնվել հանձնվել միայն եվրոպացի զինվորներին»³¹:

Երբ թուրքերը թալանել են Հայնոցը, պաշարել Ս. Ստեփանոս եկեղեցին և առաջնորդարանը, հայերի մի մասը, ապաստանելով եկեղեցու

²⁸ Սաքայան Դ., *Զմյուռնիա 1922*, Ե., 2011, էջ 30:

²⁹ Karavasilis N. *The whispering voices of Smyrna, Pennsylvania*, 2010, p. 250.

³⁰ Նույն տեղում:

³¹ Սաքայան Դ., նշվ. աշխ., էջ 44:

բակում, կարողանում է անցնել ծովեզերք՝ եվրոպական նավերով կոտորածից փրկվելու հույսով, թեև նրանց և մյուս քրիստոնյաներին կոտորեցին նաև այստեղ: Օտար հյուպատոսները, ելնելով իրենց երկրների քաղաքական շահերից, էական ոչինչ չարեցին այն կանխելու նպատակով:

Ս. Ստեփանոսի բախտին արժանացավ նաև հույների Ս. Լուսավորիչը: Ականատես Դիմիտրա Միսիրլիադուի վկայությամբ, թուրքերն այս եկեղեցին դարձրել էին բանտ, օրեր շարունակ քաղցած պահել այստեղ բերված բնակիչներին, սպանել 18-45 տարեկան տղամարդկանց, եկեղեցին այրելու հրաման տվել: Կենդանի մնացածները փորձել են փախչել դեպի նավահանգիստը, սակայն չի հաջողվել. թուրքերը գրեթե ամբողջությամբ կոտորել են նրանց³²:

Հայկական մյուս մեծ եկեղեցին Ս. Կիրակոսն էր: Հայտնի էին նաև Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Հարությունը, Խաստո գյուղի Ս. Խաչը, Ս. Կարապետը (Քարաթաշ), Ս. Աստվածածինը (Քարշըքայա), Ս. Հոգեգալուստը (Գյոզթեփե) կամ Ս. Երրորդությունը (Էնոպի, այսօր՝ Գյոզթեփե), Ս. Թագվորը (Բայրաքլը): Այս եկեղեցիների մեծ մասն ավերված է, իսկ դրանց տեղերում էլ շենքեր են կառուցված:

Զմյուռնիայի աղետի ականատես Սոֆյա Բոյաջին պատմում է, որ Մեծ հրդեհից հետո Զմյուռնիայում մնացած հայության ստվար զանգվածն իր կրոնական արարողությունները կատարել է Այոս Վուկուլոս կոչված հունական եկեղեցում: Այդ ժամանակ հայերին էր պատկանում նաև Ս. Էտիեն եկեղեցին³³:

Կարելի է ենթադրել, որ Վուկուլսը հայերին է տրվել ժամանակավոր օգտագործման նպատակով: XIX դ. կառուցված այս եկեղեցին 1922 թ. ավերածություններից փրկված սակավաթիվ եկեղեցիներից էր, թեև ենթարկվել էր թալանի և հայտնվել անմխիթար վիճակում: Հետագայում այն վերականգնել է Իզմիրի քաղաքապետարանը՝ դարձնելով մշակույթի կենտրոն:

³² Karavasilis N., նշվ. աշխ., էջ 250:

³³ **Levantine Heritage**, *The story of community, testi 31*. Բացի դրանից՝ հայերը Զմյուռնիայում և շրջակայքի այլ վայրերում ունեցել են հեղուկալ եկեղեցիները՝ Մենեմենում՝ (Ս. Սարգիս), Քուշադասում՝ (Ս. Աստվածածին), Բերգամայում՝ (Ս. Աստվածածին), Կորդելիոյում՝ (Ս. Աստվածածին), Դենիզլիում՝ (Ս. Աստվածածին), Նազիլլիում՝ (Ս. Աստվածածին), Այդընում՝ (Ս. Կարապետ), Մանիսա-Վերին գեղում՝ (Ս. Լուսավորիչ, Ս. Սիոն), Քասթայում՝ (Ս. Աստվածածին), Քըրըք աղաչում (Ս. Աստվածածին):

Հունապատկան եկեղեցիներից Ս. Աննան, որի կառուցման թիվը հայտնի չէ, տխուր ճակատագրի է արժանացել: Գտնվելով Պագոս լեռան արևելյան լանջերին՝ 1922 թ. դեպքերի ժամանակ այն ծառայել է որպես զինամթերքի պահեստ, հետագայում ավերվել է: 1922 թ. թուրքերը զավթել են նաև հունապատկան Ս. Տրիֆոնաս եկեղեցին³⁴:

1922 թ. երբեմնի հրաշագեղ քաղաքը, իր ճարտարապետական կառույցներով, հոյակերտ եկեղեցիներով ուղղակի մոխրակույտի վերածվեց. աղետի հետևանքով այրվեց ավելի քան 24 եկեղեցի, ոմրակոծվեց Ս. Ստեփանոսը, հրկիզվեց Հայնոցը: Զմյուռնիան կորցրեց իր երբեմնի հմայքը. «գլավուր Իզմիրը» ամբողջությամբ դարձավ թուրքական Իզմիր:

АРМЯНСКИЕ И ГРЕЧЕСКИЕ ЦЕРКВИ СМИРНЫ

БРУТЯН М.А.

Резюме

Еще до I в. в Смирне было основано христианское сообщество. В этот период у подножья горы Пагос были найдены развалины церкви, датируемые XVI в. Начиная с XVI в. церкви Смирны были превращены турками в мечети. Подобная участь постигла церкви Св. Иоанна, Св. Аракелос и другие. В результате город Смирна потерял свое бывшее христианское обличье.

Турецкие власти стремились закрыть как армянские, так греческие церкви, всячески препятствуя их строительству и реконструкции (например, ц. Св. Стефана). Первое упоминание об армянских церквях относится к XVI в. В течение XVI-XIX вв. число церквей резко возросло, что не соответствовало росту численности населения, однако сказанное не касалось турецких мечетей. В 1922 г. большинство армянских и греческих церквей турками было разрушено.

³⁴ Սաքայան Դ., նշվ. աշխ., էջ 45:

ARMENIAN AND GREEK CHURCHES OF SMYRNA

M. BRUTYAN

Abstract

Even in the first century there existed a Christian community in Smyrna. Ruins of ancient churches dating to this period were found at the foot of the Mount Pagos. Since the 16th century the churches in Smyrna were attacked and invaded by the Turks, and some of them were made mosques, or started to be used for other purposes. Such churches as St. Hovhannes, St. Arakelots, the Church of Jesus Christ had such a sad fate. Other churches could have certain limited activities, such as the Greek Ayos Oros, or the Armenian St. Stepanos. The first records of Armenian churches date to the 16th century, when the Armenians moved to Haynots. Within the 16-19th centuries the number of Greek and Armenian churches was growing slowly, not corresponding to the number of population, which cannot be said of Turkish mosques. Turkish troops destroyed most of the Armenian and Greek churches. Among them St. Stepanos of the Armenians, St. Illuminator of the Greeks, St. Ann and others.

ПРОБЛЕМА СУЩНОСТИ И ФУНКЦИЙ ПОЛИТИЧЕСКОЙ ВОЛИ

НАВАСАРДЯН А.Г.

Идея воли присутствует уже в том определении власти, которое исходит из того, что власть одного субъекта над другими индивидами или группами есть возможность принуждения сделать то, что они не сделали бы без такого принуждения. Это подчинение объекта власти воле ее субъекта. Истоки данного определения власти мы находим в трудах Макса Вебера¹.

Однако словосочетание «политическая воля» очень часто используется без указания на то, что под этим понимают. Например, говорят: «Для решения данной проблемы правительство должно проявлять политическую волю». Но что такое «политическая воля» – не уточняется. Положение ухудшается еще и тем, что при чтении литературы по политологии и, в частности, о власти, не всегда можно получить ясное представление, какое научное понимание воли человека берется за основу рассуждений о «политической воле». Знают ли многие современные политологи, как решается проблема воли в современной психологии человека? Существует ли явление под названием «коллективная воля»? Вопросов много, и в политологических трудах, даже в серьезных, ответов на них найти весьма сложно². Для разрешения этой трудной ситуации существует один выход–обращение к тем психологическим трудам, в которых излагаются результаты исследования воли человека, его волевых качеств, силы воли, ее слабости и безволия и других аспектов этой сложной проблемы.

¹ Вебер М. Избранные произведения, М., 1990.

² Психологические представления о воле можно найти, например, в следующих трудах: Рубинштейн С.Л. Основы общей психологии, М., 1945 (2002); Общая психология. Под ред. А. В. Петровского, М., 1986; Новую концепцию воли предложил А. А. Налчаджян в монографии «Психика, сознание, самосознание», Е., 2011; Шейнов В.П. Психология лидерства, влияния и власти, Минск, 2008.

Согласно современной психологии, воля – это способность человека выдвигать перед собой крупные и труднодостижимые цели и, путем преодоления трудностей и преград, добиваться этих целей. В других словах понятие воли определяется как «...Сознательная саморегуляция субъектом своей деятельности и поведения...»³. Для чего осуществляется такая саморегуляция, которая требует от человека серьезных усилий и расхода больших количеств энергии? Основные цели саморегуляции следующие: а) выдвигание целей, принятие решений о том, к какой цели стремиться; б) преодоление тех трудностей, которые встречаются на пути, по которому человек идет к своей цели, т.е. в ходе целенаправленной деятельности.

В каких ситуациях жизни возникает необходимость в активности воли (волевых усилий и волевой саморегуляции поведения)? В философии и психологии установлено, что таких ситуаций много, но основными из них являются следующие:

1. когда человек занимается определенной деятельностью, но его личная мотивация слаба, возникает необходимость найти дополнительные стимулы и мотивы совершения как внешних двигательных актов, так и внутренних психических процессов. Поиск таких дополнительных стимулов – это одновременно как познавательный, так и волевой, а нередко также насыщенный эмоциями процесс. Для иллюстрации такого усиления мотивации поведения обычно приводят следующий пример: когда дворник работает неохотно, так как его работа однообразная, скучная и неинтеллектуальная, ему следует внушить (или сам он может себе самому внушить), что подметает не просто двор своего дома, а определенную часть территории своего государства, или, что еще сильнее как мотив, участок планеты Земля. Это создает мотивацию более высокого уровня. Произвольно можно приписать более важное значение также уже имеющимся у личности мотивам и целям подчеркиванием их еще большей значимости, а также тем результатам, которые ожидаются в силу совершаемой деятель-

³ *Краткий психологический словарь. Под общей редакцией А. В. Петровского и М. Г. Ярошевского, М., 1985, с. 48.*

ности. В целом, полезно с помощью волевых актов усилить личностное значение всей совершаемой деятельности или отдельных ее блоков;

2. когда предстоит осуществить выбор между двумя или большим числом мотивов или целей деятельности, т.е. когда в психике личности идет борьба мотивов;

3. при наличии серьезных внутренних и внешних препятствий на пути, ведущем к цели (усталость, активность других потребностей и желаний, создаваемые соперниками трудности, зависть и дискредитация и т.п.);

4. воля человека проявляется в особенности в двух формах (которые можно считать стратегиями поведения);

5. в виде побуждения себя к действиям и деятельности, для стремления к поставленной цели и преодоления трудностей;

6. для отказа от активности, торможения нежелательных действий, социальных поступков, если предвидится, что последствия таких поступков могут приносить вред как себе, так и другим значимым лицам и референтным социальным группам.

Как будет видно из дальнейшего изложения материала, эти две стратегии волевых действий, стратегии саморегуляции, исключительно важны для представителей целого ряда профессий, в числе которых одно из первых мест занимают дипломаты, а из них – послы государств, работающих в других странах, посланники, переговорщики и т.д.

Воля человека играет важную роль в целенаправленном исследовании собственных познавательных процессов: восприятия, памяти, мышления и воображения. Как известно, уже давно психологами было замечено и эмпирическими методами исследовано: а) произвольное восприятие внешнего мира и содержаний собственной психики (в этом деле основную роль играет интроспекция); б) произволь-

ное запоминание и произвольное воспоминание человеком сохраненного в памяти материала (припоминание); г) произвольное мышление как сознательное решение задач; процессы произвольного воображения и другие познавательные процессы, в которых могут одновременно или последовательно, в сложном переплетении, участвовать все названные познавательные функции. Исследование этих фундаментальных умственных процессов в составе целенаправленной деятельности и под контролем самосознания и воли – необходимая способность для успешной работы руководителей социальных групп и организаций, для педагогов, командиров воинских подразделений, авиаторов и др. И не в последнюю очередь – для дипломатов. Например, если человек во время беседы или переговоров не умеет сказать только то, что целесообразно сказать, и скрывать то, что собеседник или противник не должны знать, то он окажется профессионально непригодным для успешной работы в целом ряде областей человеческой деятельности;

Воля человека, таким образом, является основой самоконтроля личности. Самоконтроль – это сознательный процесс, который состоит из следующих аспектов: а) саморефлексии, т.е. размышлений о том, что уже сделано и что надо делать в настоящем, как сделано и т.д.; б) оценки собственных действий, поведения в целом, исходя из того, каковы мотивы и цели деятельности, в какой мере совершается именно то, что соответствует собственным мотивам и целям; не совершаются ли ненужные или вредные действия, не допускаются ли ошибки? в) те ли средства используются для достижения цели?

Развитая способность самоконтроля и принятие на основе его результатов новых и более адекватных решений – признаки того, что у человека имеются развитая воля и именно те личностные черты, которые получили название волевых черт характера.

Процесс самоконтроля имеет свои особенности в том случае, когда он осуществляется в условиях разных видов деятельности, в различных социальных ситуациях, в условиях конфликтов и т.п. Знание этих вопросов необходимо специалистам в различных профессиональных областях деятельности, тем, кому чаще многих других прихо-

дится действовать в таких ситуациях, в которых от человека требуется способность эффективного самоконтроля. Достаточно сказать, что такая важная способность, как самообладание основывается на успешном самоконтроле. Полезно знать, что самообладание – это способность осуществления успешной деятельности в таких ситуациях, в которых налицо способствующие дезорганизации деятельности факторы, такие, которые вызывают отрицательные эмоции. Когда человек вынужден эффективно работать в таких условиях, то он волевыми усилиями преодолевает внешнее давление, сохраняет организованность и логическую последовательность своих действий. Такая способность – один из признаков социальной и психологической зрелости человека. Высокий уровень зрелости необходим таким лицам, которые выполняют свои обязанности во враждебной среде, в условиях социальной дезорганизации, при высокой ответственности за порученное дело. Нетрудно догадаться, что именно такая зрелость необходима дипломатическим работникам, особенно тогда, когда они работают в зарубежных странах.

У каждой личности имеется целый ряд черт характера, которые связаны с волей и получили название «волевые черты характера». В их числе главными являются: решительность, упорство в преследовании целей, последовательность и стойкость, способность откладывать удовлетворение тех своих потребностей, которые создавали бы дополнительные трудности на пути, ведущем к цели; способность отказаться от не оправдавших себя, неэффективных способов достижения цели, если они приводили к неудаче и т.д.⁴

Теперь, исходя из того, что сказано выше о сущности и особенностях воли человека, рассмотрим вопрос о том, что следует понимать под выражением «политическая воля».

Самым распространенным представлением о политической воле руководителей, особенно первых лиц в иерархии власти и подчинения, нам представляется следующее: это способность первого руководителя последовательно реализовать поставленные перед собой цели в сфере политической власти и господства. Причем некоторые ав-

⁴ См.: Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե., 1997, գլ. 19:

торы пытаются выделить этапы формирования и реализации политической воли; а) этап аккумуляции общей (групповой) воли; б) этап выработки и оформления политических потребностей в виде целей последующих действий; в) воплощение этих целей в практической деятельности государственных органов.

В ходе деятельности как самого руководителя, так и тех учреждений, которым поручается реализация его целей, осуществляется корректировка целей в зависимости, с одной стороны, от изменений внешних условий, с другой – по желанию самого субъекта власти.

Эти представления конкретизируются для определенных областей политической деятельности и решения конкретных задач. Например, если руководитель учреждения, министерства или глава государства заявляют, что решили вести непримиримую борьбу против коррупции (это их цель), то их политическая воля будет выражаться в их реальной решимости, последовательности, смелости и принципиальности в борьбе против этого социального зла. Руководитель с сильной политической волей даже близкого родственника, даже родного сына должен отстранить от должности и предать суду, если обнаружил, что он коррупционер и позорит не только его, но и государство. Отношение облеченного властью руководителя к поведению членов своей семьи и близких родственников, друзей и т.п. – настоящее испытание для его воли и личности вообще, для его политической воли – в частности. Если он будет решительно и последовательно вести свою борьбу против коррупции, независимо от того, кто является коррупционером («невзирая на лица»), он приобретет еще более высокий авторитет, который, безусловно, усилит его власть, создавая возможность для решения еще более крупных проблем. О наличии у руководителя действительно сильной политической воли можно судить, главным образом, по результатам его деятельности, по его последовательности и решимости, а не по обещаниям, которые либо не выполняются либо выполняются половинчато.

Одним из существующих определений политики, которая наиболее приемлема для нас, является следующее: политика – это исполь-

зование власти⁵. Политическая деятельность – это деятельность, связанная с приобретением, использованием, потерей, получением и т.п. власти. Власть при этом, особенно в государственных учреждениях, принимает вид полномочий и прав. Когда применение власти оформляется в виде социальной роли, в ней возникают взаимосвязи между правами и обязанностями. В социальной психологии ролевые права и обязанности используются под названием ролевых ожиданий (экспектаций). (Здесь уместно отметить, что **теория ролей**, которая создана на стыке социологии и социальной психологии, пока что мало используется в политологии, что мы считаем большим упущением).

Приобретенная или полученная от вышестоящих должностных лиц, в виде определенных полномочий, власть человека (субъекта власти) может использоваться им по-разному, с различной степенью эффективности и целесообразности.

Политическая воля – это способность принимать политические решения, использовать власть для выдвижения и решения определенных политических же задач и проблем. Когда субъект власти принимает решение применить власть к каким-то людям и группам (объектам власти) и, после принятия решения об этом, пытается реально решить соответствующие политические задачи, мы можем сказать, что он начал выражать свою политическую волю. Такое понимание политической воли полностью соответствует принятому в современной психологии личности пониманию воли человека, приведенному нами в первой части настоящей статьи, где было дано определение воли как способности принимать решения, выдвигать цель или несколько целей и, преодолевая преграды и трудности, добиваться поставленных перед собой целей, что означает действовать успешно. Воля используется и проявляется в процессе целенаправленной деятельности человека.

⁵ См.: Хейвуд Дж. Политология, М., 2005; Политология. Под редакцией А.А. Радугина, М., 1996 и др.

Политическая воля выражается в различных обстоятельствах, чему в истории человечества есть много примеров. Но некоторые из них особенно впечатляют, поскольку имели важные последствия в жизни народов:

1. решение начать войну и стремиться к победе (решения, принятые Юлием Цезарем, Ал. Македонским; решения Наполеона Бонапарта или Гитлера напасть на Россию и Советский Союз и др.; решение В. И. Ленина начать революционное выступление против временного правительства и царя (решение об Октябрьской революции) и т.д. – это такие решения, которые являются выражением политической воли названных деятелей независимо от того, из каких идеологических соображений они исходили и к каким окончательным последствиям они привели в результате длительных волевых и интеллектуальных усилий;

2. политическая воля требуется от человека для выдвижения собственной кандидатуры на высокий выборный пост в организации или государстве (наиболее сильной воли и решительности требует, конечно, участие в президентских выборах в качестве кандидата на эту должность и последовательная борьба до победного конца); поражение в такой борьбе не означает отсутствие политической воли, а доказывает, что у противника, возможно, была более сильная воля, а также более обширные ресурсы и умелая команда последователей;

3. политическая воля необходима всем участникам политических процессов: членам партии, последователям лидера и даже рядовым избирателям, которые принимают решение голосовать в пользу одного из кандидатов, против других и т.п. Это тоже политические решения. Не может быть политического решения без участия в процессе принятия решения такого качества, как политическая воля человека;

4. политическая воля необходима человеку для того, чтобы начать политический бунт или революционное движение против существующих политических порядков и действующих руководителей страны.

Даже политическому предателю нужна сильная политическая воля, поскольку он своим решением и дальнейшими действиями подвергает себя смертельной опасности. Решения, принимаемые в условиях опасности для жизни и необходимости идти на риск, требуют воли, а если речь идет о рискованных политических решениях – сильной политической воли.

Политическая воля необходима для организации и проведения в стране, и даже в рамках одной фирмы или организации, социальных и политических реформ. Великие и успешно действовавшие реформаторы, безусловно, были людьми сильной и устойчивой политической воли. Особенно сильной воли требуют глубокие реформы в области религии, при отказе от предыдущего верования и переходе на новую религиозную идеологию и практику, на распространение новой веры. Известно, как много религиозных агитаторов погибало на этом пути. Это путь огромного риска и опасности для жизни, поскольку религиозные конфликты и борьба принимают порой крайне ожесточенный характер. Достаточно вспомнить историю возникновения и распространения христианства, экспансию ислама почти сразу же после его возникновения, религиозные войны в Европе и другие исторические события этого рода. Такая борьба, причем ожесточенная, идет и в наши дни, поэтому политическая деятельность чревата новыми дополнительными опасностями и тревогами.

Обобщив вышесказанное, можно утверждать следующее: любое политическое решение и процесс его реализации, которые связаны с риском и большой ответственностью, с риском неуспеха, поражения и наказания – это всегда такие виды социальных поступков, которые требуют от человека политической воли, т.е. решительности и способности целесообразно использовать власть, а если ее нет – получить или завоевать ее с помощью собственной целенаправленной активности. Развитая политическая воля человека оказывает многостороннее влияние на целый ряд других аспектов личности, становясь одной из ее центральных психологических образований. Политическая воля способствует развитию таких качеств личности, как терпеливость, толерантное отношение к взглядам и личностным характеристикам дру-

гих людей, к решительности в тех ситуациях, в которых возникает необходимость принимать важные и неотложные решения, умение терпеливо учиться и развивать свою личность и т.п. При подготовке профессиональных политиков, дипломатов и крупных руководителей на эти обстоятельства следует обращать пристальное внимание.

Мы надеемся, что изложенная здесь концепция соответствует действительности и со временем будет подкреплена новыми историческими фактами. Нет сомнения, что все положения этой концепции применимы также к деятельности дипломатов, особенно первых лиц стран, осуществляющих международную политику своей страны – глав государств, министров иностранных дел и послов. Принятие и реализация политических решений требует от деятелей сильной и развитой политической воли.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Ա.Գ.

Ամփոփում

Քաղաքագիտության ամենաուշագրավ երևույթներից է քաղաքական կամքը: Ելնելով դրա վերաբերյալ ժամանակակից գիտության, նախ և առաջ հոգեբանության բնագավառում ընդունված տեսակետից՝ կարելի է եզրակացնել, որ «քաղաքական կամք» կոչված երևույթը դեռևս անհրաժեշտ խորությամբ ուսումնասիրված չէ: Առաջադրվող տեսակետը նախորդների հետ մեկտեղ կազմում է քաղաքական կամքի նոր հայեցակարգ: Այս համադրույթը թույլ է տալիս ավելի իրատեսորեն բացատրել իշխանության սուբյեկտների քաղաքական որոշումների դրդապատճառներն ու մեխանիզմները: Քաղաքական ուժեղ կամքն անձի այն գծերից է, որն անհրաժեշտ է նաև դիվանագետին:

THE PROBLEM OF ESSENCE AND FUNCTIONS OF POLITICAL WILL

A. NAVASARDYAN

Abstract

This article concerns one of the important problems of contemporary politology; namely, that of political will of subjects of political power, its principal functions in political life of contemporary societies. Proceeding from modern psychological conception of human will, the author proposes his conception of political will and its functions in the process of problem solving, purposeful activity aimed to reach his political purposes. The author points out that these new ideas will be helpful for best understanding of the mechanisms of political decisions. Being a professional diplomat, the author is convinced that strong political will is also an important and essential trait of the personality of a perspective diplomat.

ԹՈՒՐԹԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ (1991-2016 ԹԹ.)

ԴԱՎԹՅԱՆ Է.Վ.

Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև 1990-ական թթ. երկրորդ կեսին էներգետիկայի, հետագայում՝ տրանսպորտի ոլորտում հաստատվեց եռակողմ համագործակցություն, ինչը հնարավորություն տվեց 2006-2007 թթ. ամբողջությամբ գործարկել տարածաշրջանային և արտատարածաշրջանային նշանակության այնպիսի նախագծեր, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը, նախաձեռնել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցումը: Այս ամենի համապատկերում կարևորվում է Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտրական հարաբերությունների և ուղղակի ներդրումների կատարման շարժընթացի, դրանց զարգացման խոչընդոտների, ինչպես նաև առևտրի ու փոխադարձ ներդրումների խթանման հարցում եռակողմ գործարար համաժողովների շրջանակում իրականացվող աշխատանքների ուսումնասիրությունը:

Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև փոխադարձ առևտրի և ներդրումների շարժընթացը: 1991-1994 թթ. Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում և Հարավային Օսիայում տեղի ունեցած պատերազմների, Վրաստանում և Ադրբեջանում ներքաղաքական անկայուն դրության ավարտից հետո վերջիններս՝ որպես նորանկախ հանրապետություններ, քայլեր ձեռնարկեցին ինչպես միմյանց, այնպես էլ Թուրքիայի և առհասարակ այլ պետությունների հետ առևտրի աշխուժացման և ներդրումների ներգրավման ուղղությամբ: 1994 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի և Թուրքիայի¹, 1996 թ. մարտի 8-ին Վրաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվեցին ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրեր: Առևտրական կապերի ամրապնդման


¹ *Azərbaycan Respublikası və Türkiyə Respublikası arasında investisiyaların qarşılıqlı təşviqi və qorunması haqqında Sazişin təsdiq edilməsi barədə Azərbaycan Respublikası Milli Məclisinin qərarı, Bakı şəhəri, 14 iyun 1994-cü il, № 820, <http://www.e-qanun.az/-framework/8910> (həyataatda 09.03.2017 թ.).*

տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն Ադրբեջանի և Վրաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի (1996 թ. մարտի 8) և կրկնակի հարկումը բացառելու և հարկերից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայի ստորագրումը²:

Այդ ոլորտում իրավապայմանագրային դաշտի ամրապնդման ուղղությամբ քայլեր ձեռնարկվեցին նաև հետագա տարիներին: 2004 թ. ապրիլի 13-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվեց առևտրատնտեսական երկարաժամկետ համագործակցության համաձայնագիր³, իսկ 2007 թ. նոյեմբերի 21-ին Վրաստանը և Թուրքիան ստորագրեցին ազատ առևտրի և կրկնակի հարկումը բացառելու և հարկերից խուսափելը կանխելու մասին համաձայնագրեր⁴:

Գծապատկեր 1

Վրաստանի առևտրաշրջանառությունը Ադրբեջանի և Թուրքիայի հետ
1995-2016 թթ. (ԱՄՆ դոլար)⁵



² Shiriye Z., Kakachia K. *Azerbaijan-Georgian Relations: The Foundations and Challenges of the Strategic Alliance* (SAM Review, Special Double Issue, Vol. 7-8, 2013, Baku, pp. 41, 63).

³ Azərbaycan Respublikası Hökuməti və Türkiyə Respublikası Hökuməti arasında uzunmüddətli iqtisadi və ticari əməkdaşlıq haqqında Sazişin təsdiq edilməsi barədə, Azərbaycan Respublikasının Qanunu, Bakı şəhəri, 29 iyun 2004-cü il, № 708-IIQ, <http://www.e-qanun.az/framework/6208> (hüquqətləşdirilmə tarixi 09.03.2017 p.).


⁴ **Shiriyev Z., Kakachia K.**, *ხედი. აქტი.*, ტ. 63; შეთანხმება საქართველოსა და თურქეთის რესპუბლიკას შორის შემოსავლებზე ორმაგი დაბეგვრის თავიდან აცილებისა და გადასახადების გადაუხდელობის აღკვეთის შესახებ, შედგენილია 2007 წლის 21 ნოემბერს ქ. თბილისში.

⁵ Գծապատկերներ 1, 2, 3, 7 և 8-ում բերվող վիճակագրությունը ներկայացված է Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալների հիման վրա:

Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի առևտուրը գրեթե միշտ աճի միտում է ունեցել և նկատելի անկում է ապրել միայն 2014-2016 թթ.՝ կրճատվելով շուրջ 1 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով (գծ. 1): Աճի ամենախոշոր տեմպերը գրանցվել են Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության տարիներին (2004-2013 թթ.), երբ Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի առևտուրը գրեթե տասնապատկվեց՝ մոտ 300 միլիոնից հասնելով գրեթե 3 միլիարդ ԱՄՆ դոլարի:

Գծապատկեր 2


Ադրբեջանի և Թուրքիայի տեսակարար կշիռը Վրաստանի արտաքին առևտրաշրջանառությունում 1995-2016 թթ. (տոկոսային արտահայտությամբ)



Ուշագրավ է, որ թեպետ Թուրքիայի և Ադրբեջանի հետ առևտուրը գրեթե մշտապես աճի միտում է դրսևորել, սակայն Վրաստանի արտաքին առևտրաշրջանառության համատեքստում այն զարգացման այլ շարժընթաց է ունեցել (գծ. 2): 1995-2016 թթ. Վրաստանի արտաքին առևտրում Թուրքիայի և Ադրբեջանի միացյալ տեսակարար կշիռը ամենամեծը եղել է 1995 թ. (29%), և այդ ցուցանիշին մոտ է եղել միայն 2009-2014 թթ.՝ 2015-2016 թթ. կրկին գրանցելով անկում:

Գծապատկեր 3


Վրաստանի առևտրաշրջանառությունը Թուրքիայի, Ադրբեջանի, Չինաստանի, Ռուսաստանի և Գերմանիայի հետ 1995-2016 թթ. (ԱՄՆ դոլար)



Թուրքիան և Ադրբեջանը 2008-2014 թթ. Վրաստանի՝ համապատասխանաբար առաջին և երկրորդ առևտրային գործընկերներն էին⁶, իսկ 2016 թ. Ռուսաստանը և Չինաստանը առևտրի ծավալներով գերազանցեցին Ադրբեջանին (գծ. 3):

Գծապատկեր 4


Ադրբեջանի առևտրաշրջանառությունը Վրաստանի և Թուրքիայի հետ 1995-2016 թթ. (հազար ԱՄՆ դոլար)⁷



Վրաստանի և Թուրքիայի հետ Ադրբեջանի առևտուրը առավել ակտիվ փուլ մտավ 2003-ից հետո՝ Իլիամ Ալիևի նախագահության տարիներին, ընդ որում՝ Թուրքիայի հետ առևտրի աճի տեմպերը զգալիորեն գերազանցեցին Վրաստանի հետ առևտրի աճի տեմպերը (գծ. 4):

Գծապատկեր 5

Վրաստանի և Թուրքիայի տեսակարար կշիռը Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունում 1995-2016 թթ. (տոկոսային արտահայտությամբ)



⁶ Ընդ որում՝ 2008-ից Թուրքիան, 2011-2014 թթ.՝ Ադրբեջանը Վրաստանի հետ առևտրի ծավալներով ակնհայտ առավելություն են ունեցել մյուս պետությունների նկատմամբ:


⁷ Գծապատկերներ 4-ում և 5-ում բերվող վիճակագրությունը ներկայացվում է Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

Ինչպես Վրաստանի, այնպես էլ Ադրբեջանի պարագայում մյուս երկու պետությունների հետ առևտուրը արտաքին առևտրաշրջանառության համատեքստում դիտարկելիս զարգացման այլ շարժընթաց է ունեցել (գծ. 5): Ուշագրավ է, որ 1995-2016 թթ. Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունում Թուրքիայի և Վրաստանի կշիռը գազաթնակետին է հասել 1998 թ. (27%), ինչից հետո այն հիմնականում անկում է ապրել:

Համեմատելով գծապատկեր 2-ի և 5-ի տվյալները՝ կարելի է նկատել, որ Վրաստանի համար Թուրքիան և Ադրբեջանը համեմատաբար ավելի կարևոր առևտրային գործընկերներ են, քան Ադրբեջանի համար՝ Վրաստանը և Թուրքիան: Եթե 1995-2016 թթ. Ադրբեջանի և Թուրքիայի ընդհանուր կշիռը Վրաստանի արտաքին առևտրաշրջանառությունում գրեթե երբեք չի իջել 20%-ի շեմից (իսկ 2008-2014 թթ.՝ նույնիսկ 25%-ի շեմից), Թուրքիայի և Վրաստանի հետ Ադրբեջանի առևտուրը միասին 1998-ից հետո չի գերազանցել վերջինիս արտաքին առևտրաշրջանառության 20%-ի, իսկ 2001-ից հետո (որոշ բացառություններով)՝ նույնիսկ 10%-ի շեմը: Տոկոսային հարաբերակցության առումով ամենահետաքրքրականը թերևս 2008 թվականն է, քանզի Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունը գրանցեց աննախադեպ աճ՝ հասնելով մոտ 55 միլիարդ ԱՄՆ դոլարի, ինչի հետևանքով Թուրքիայի և Վրաստանի գումարային կշիռը նվազեց ընդհուպ մինչև 4%:

Գծապատկեր 6

Վրաստանի և Ադրբեջանի տեսակարար կշիռը Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառությունում 1992-2016 թթ. (տոկոսային արտահայտությամբ)⁸




⁸ Գծապատկեր 6-ում բերվող վիճակագրությունը ներկայացվում է Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի տվյալների հիման վրա:

Հաշվի առնելով, որ Թուրքիայի տնտեսությունը անհամեմատ ավելի մեծ է Վրաստանի կամ Ադրբեջանի տնտեսությունից, վերջիններս էական դերակատարություն չունեն Թուրքիայի արտաքին առևտրում (գծ. 6): Թեպետ Վրաստանի և Ադրբեջանի միացյալ կշիռը ընդհանուր առմամբ աճի միտում է ունեցել, այն առավելագույնը կազմել է Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառության մոտ 1%-ը:

Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական փոխկապվածության հետազոտության տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել նաև փոխադարձ ուղղակի ներդրումների կատարման դինամիկան և դրանց ընդհանուր կշիռը յուրաքանչյուր պետությունում կատարված ներդրումների համատեքստում:


Գծապատկեր 7

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացված ներդրումները Վրաստանում 1997-2016 թթ. (ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 7-ում ներկայացվող վիճակագրությունից ելնելով՝ կարելի է փաստել, որ թուրք-ադրբեջանական ներդրումների շոշափելի աշխուժացում (ինչպես և առևտրի պարագայում) նկատվեց կրկին Մ. Սաակաշվիլիի նախագահության շրջանում: Նշված ժամանակահատվածում թուրք-ադրբեջանական ներդրումները ընդհանուր առմամբ ունեցել են աճի, իսկ 2013-ից հետո՝ կտրուկ աճի միտում: Այս առումով նշանակալից էր 2016 թվականը, երբ Վրաստանում Թուրքիայի և Ադրբեջանի ներդրումները միասին գերազանցեցին 850 միլիոն ԱՄՆ դոլարի շեմը:

Գծապատկեր 8

Թուրքիայի և Ադրբեջանի տեսակարար կշիռը Վրաստանում իրականացված ներդրումներում 1997-2016 թթ. (տոկոսային արտահայտությամբ)

Գծապատկեր 8-ում ներկայացված է թուրք-ադրբեջանական ներդրումների տեսակարար կշիռը Վրաստանում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների համեմատությամբ: Մինչև 2014 թ. կտրուկ աճը թուրք-ադրբեջանական ներդրումները հարաբերականորեն ավելի մեծ կշիռ են ունեցել 2000 թ., երբ միայն թուրքական ներդրումները կազմեցին այդ տարի Վրաստանում կատարված ներդրումների 22%-ը: Ուշագրավ է, որ չնայած 2004-2013 թթ. թուրք-ադրբեջանական ներդրումների աշխուժացմանը՝ դրանց ընդհանուր կշիռն այդպես էլ չգերազանցեց 2000 թ. ցուցանիշը և որոշ բացառություններով տատանվում էր 17-21%-ի սահմաններում: 2014-2016 թթ. կտրուկ աճի հետ մեկտեղ էականորեն փոխվեց նաև տոկոսային հարաբերակցության պատկերը. 2016 թ. միայն թուրքական և ադրբեջանական ներդրումները միասին կազմեցին Վրաստանում կատարված ներդրումների 52%-ը:

Աղյուսակ 1

Թուրքիայի և Վրաստանի կողմից իրականացված ներդրումները Ադրբեջանի տնտեսության ոչ նավթային սեկտորում 1995-2015 թթ. (միլիոն ԱՄՆ դոլար)⁹

Տարեթիվ	Թուրքիա	Վրաստան	Տարեթիվ	Թուրքիա	Վրաստան
1995-2002	470.4	0.8	2009	76.8	3.1


⁹ Աղյուսակ 1-ում և գծապատկեր 9-ում բերվող վիճակագրությունը ներկայացվում է Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարարության հրապարակած տվյալների հիման վրա: Ընդ որում՝ 2010-2015 թթ. վրացական ներդրումների մասին տվյալներ չեն հրապարակվել. <http://www.economy.gov.az/index.php?option=comcontent&view=article&id=4518:iq-yon-invest&catid=17:investisiyalar&lang=az> (հասանելի է առ 17.03.2017 թ.):

2003	17.1	0.05	2010	147.5	-
2004	80.1	0.3	2011	89.1	-
2005	96.2	0.8	2012	185.9	-
2006	136.6	0.6	2013	401.3	-
2007	109.2	0.4	2014	481.4	-
2008	60.8	0.2	2015	220.4	-

Ադրբեջանում կատարված ներդրումներն առանձնանում են նրանով, որ 1995-2015 թթ. դրանց մեծ մասը (86%-ը) բաժին է ընկել նավթային սեկտորին: Համեմատելով գծապատկեր 7-ում և աղյուսակ 1-ում բերվող տվյալները՝ կարելի է արձանագրել, որ ի տարբերություն Վրաստանում ադրբեջանական ներդրումների՝ վրացական ներդրումներն Ադրբեջանի տնտեսության ոչ նավթային սեկտորում աննշան են և 1995-2009 թթ. հանրագումարում կազմել են ընդամենը 6.5 միլիոն ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 9

Թուրքիայի և Վրաստանի տեսակարար կշիռը Ադրբեջանի տնտեսության ոչ նավթային սեկտորում իրականացված ներդրումներում 1995-2015 թթ. (տոկոսային արտահայտությամբ)



Ի տարբերություն Վրաստանի՝ թուրքական ներդրումները 1995-2015 թթ. անհամեմատ ավելի մեծ կշիռ են ունեցել Ադրբեջանի տնտեսության ոչ նավթային սեկտորում (գծ. 9): Եթե Վրաստանում թուրքական ներդրումները չեն գերազանցել 20%-ի շեմը (բացառությամբ 2000 թ.), Ադրբեջանում դրանք ավելի մեծ տեսակարար կշիռ են ունեցել՝ որոշ թվականներին տատանվելով 36.5-41.7%-ի սահմաններում, իսկ 2004 թ. հասնելով նույնիսկ 77%-ի:

Աղյուսակ 2


**Վրաստանի և Ադրբեջանի կողմից իրականացված ներդրումները Թուրքիայում
2005-2016 թթ. (միլիոն ԱՄՆ դոլար)¹⁰**

Տարեթիվ	Վրաստան	Ադրբեջան	Տարեթիվ	Վրաստան	Ադրբեջան
2005	0	2	2011	44	1266
2006	0	1	2012	0	338
2007	0	10	2013	0	803
2008	0	18	2014	0	884
2009	0	69	2015	0	839
2010	4	12	2016	0	652

Ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Թուրքիայում վրացական ներդրումները փոքր թիվ են կազմում և նույնիսկ չեն գերազանցում 50 միլիոն ԱՄՆ դոլարի շեմը (աղ. 2): Ինչ վերաբերում է ադրբեջանական ներդրումներին, կտրուկ աճի միտումներ նկատվեցին միայն 2011-2016 թթ.:

Գծապատկեր 10

**Վրաստանի և Ադրբեջանի տեսակարար կշիռը Թուրքիայում իրականացված
ներդրումներում 2005-2016 թթ. (տոկոսային արտահայտությամբ)**



Ինչպես արտաքին առևտրի, այնպես էլ ներդրումների պարագայում Վրաստանը և Ադրբեջանը էապես ավելի փոքր դեր ունեն Թուրքիայում (գծ. 10): Թեպետ Վրաստանում ադրբեջանական ներդրումները ծավալով զգալիորեն զիջում են Թուրքիայում կատարված ներդրումներին, վերջինիս տնտեսությունում կատարված ներդրումների համապատկերում

¹⁰ Աղյուսակ 2-ում և գծապատկեր 10-ում բերվող վիճակագրությունը ներկայացվում է Թուրքիայի Կենտրոնական բանկի հրապարակած տվյալների հիման վրա:

Ադրբեջանին տոկոսային հարաբերակցությամբ ավելի փոքր բաժին է պատկանում:

Վերոնշյալի հետ մեկտեղ կարևոր է անդրադառնալ նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ներդրումների և առևտրի զարգացման խոչընդոտներին, որոնց թվում առաջին հերթին կարելի է առանձնացնել Թուրքիայի և Ադրբեջանի միջև ազատ առևտրի համաձայնագրի բացակայությունը: Չնայած առևտրական և ներդրումային ակտիվ համագործակցությանը՝ Թուրքիային և Ադրբեջանին դեռևս չի հաջողվել համաձայնության գալ այս հարցում: Թուրքիայի էկոնոմիկայի նախկին նախարար Ջաֆեր Չաղլայանի խոսքերով, նման համաձայնագրի ստորագրումից հետո Թուրքիայի և Ադրբեջանի առևտուրը էականորեն կաճի՝ հասնելով մինչև 5 միլիարդ ԱՄՆ դոլարի¹¹:

Ազատ առևտրի համաձայնագրի հարցում որոշ խնդիրներ կան նաև թուրք-վրացական հարաբերություններում: Գործող պայմանագիրը որոշ սահմանափակումներ է պարունակում թուրքական շուկա վրացական արտահանման համար և չի տարածվում, օրինակ, ծառայությունների ոլորտի վրա¹²: 2016 թ. հուլիսի 19-ին Վրաստանի և Թուրքիայի վարչապետներ Գ. Կվիրիկաշվիլին և Բ. Յըլդըրըմն Անկարայում ստորագրած հայտարարությամբ համաձայնեցին վերանայել ազատ առևտրի համաձայնագիրը¹³:

Առևտրաշրջանառության էլ ավելի զարգացումը խոչընդոտում են մի քանի խնդիրներ ևս: 2000 թ. Համաշխարհային բանկը Կովկասում առև-

¹¹ **Nurmammadov E.** *Azerbaijan-Turkey relations through the prism of economic transactions: a view from Azerbaijan*, M. Ismayilov and N. A. Graham (eds.), *Turkish-Azerbaijani Relations: One nation- two states?*, New York, Routledge, 2016, p. 103.

¹² Մեր հարցազրույցը Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության՝ Եվրամիության և Եվրոպայի այլ երկրների հետ առևտրի զարգացման ծառայության պետ Իրինա Զափարիձեի, Հարևան երկրների և տարածաշրջանի այլ երկրների հետ առևտրի զարգացման ծառայության պետի պաշտոնակատար Նանա Շավիձեի, Արտաքին առևտրային քաղաքականության բաժնի պետի տեղակալ Մարիամ Գաբունիայի և Ներդրումային քաղաքականության և ներդրումների աջակցման բաժնի պետ Նինո Ցեցխլաձեի հետ, 17.XI.2016, Թբիլիսի:

¹³ *Ankara Statement on the Establishment of High Level Strategic Cooperation Council between the Republic of Turkey and Georgia, July 19, 2016, Ankara, p. 4, <http://www.mfa.gov.ge/getattachment/MainNav/ForeignPolicy/BilateralRe-lations/თურქეთის-რესპუბლიკა/Ankara-statement.pdf.aspx> (hუააანსესქ ჟ ან 10.03.2016 ზ.).*

տրի դյուրացման վերաբերյալ հետազոտության շնորհիվ եզրակացրեց, որ մի շարք այլ խնդիրների թվում տարածաշրջանում առևտրի ծավալների աճը խոչընդոտում է Բաքու-Փոթի ավտոճանապարհով բեռնափոխադրումների չափազանց ծախսատար և ժամանակատար լինելը¹⁴: Ադրբեջանի արտաքին առևտրի վրա մասամբ բացասաբար է ազդում նաև այն, որ վերջինս Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ չէ, ինչն ադրբեջանական արտահանումը ԱՀԿ անդամ-պետություններ (ինչպես, օրինակ, Վրաստան ու Թուրքիա) դարձնում է խոցելի և պակաս մրցունակ: Ուստի և պատահական չէ, որ արձանագրվել են Թուրքիայի կողմից ադրբեջանական ապրանքների ներմուծման համար ոչ սակագնային խոչընդոտների հարուցման դեպքեր¹⁵:

Առևտրական և ներդրումային համագործակցության ինստիտուցիոնալ չափումը: Փոխադարձ ներդրումների, առևտրի ծավալների մեծացման նպատակով Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը աստիճանաբար ստեղծեցին երկկողմ, ապա՝ եռակողմ համագործակցության ձևաչափեր:

Որպես այս ոլորտում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության ինստիտուցիոնալացման առաջին քայլ կարելի է համարել երեք պետությունների միջև երկկողմ մակարդակով գործարար համաժողովների նախաձեռնումը¹⁶: Նման հանդիպումների ժամանակ քննարկվել են ոչ միայն երկկողմ առևտրական հարաբերություններին և ներդրումներին առնչվող հարցերը, այլև տարածաշրջանային համագործակցության հեռանկարները: Այս առումով ուշագրավ է 2007 թ. նոյեմբերին թուրք-վրացական գործարար համաժողովի ժամանակ Մ. Սաակաշվիլիի հայտարարությունն այն մասին, որ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի նախագահները համակարծիք են երեք պետությունների միջև «մեծ տնտեսական միության» տեսլականի շուրջ¹⁷:

¹⁴ *Trade Facilitation in the Caucasus, Final Report, World Bank, 2000, pp. 4-5.*

¹⁵ **Nurmmammadov E.**, նշվ. աշխ., էջ 106-107:

¹⁶ *Թուրք-ադրբեջանական և վրաց-ադրբեջանական գործարար համաժողովների մասին տե՛ս В Баку прошел азербайджано-турецкий бизнес-форум, <https://regnum.ru/news/economy/361965.html> (հասանելի է առ 08.03.2017 թ.);* տոբիլոսմո յարտուլ-աշերբադձանուլո Յոննեց-ֆորումի ցամարտա, http://www.sgs.ge/index.php?action=nodes&node_id=115&pageon=3&lang=geo (հասանելի է առ 08.03.2017 թ.).

¹⁷ Տաթարտեղոս, տուրքետոսա զա աշերբադձանոս քրեշոդենտեղեմա Յաթո-տոբոլոսո-յարոսոս Րոնոնոշոնո մշենեղոնոնո զաճեղոնոնո զոքումենտե մոաճերեց իեղո, <http://tur>

Առևտրի և ներդրումների ոլորտում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը ինստիտուցիոնալ մակարդակով մեկնարկեց միայն 2012 թ. փետրվարի 16-ին, երբ Թբիլիսիում Վրաստանի ազգային ներդրումային գործակալության, Ադրբեջանում արտահանման և ներդրումների խրախուսման հիմնադրամի և Թուրքիայի պալատների ու բորսաների միության կողմից կազմակերպվեց Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առաջին եռակողմ գործարար համաժողովը, որին մասնակցեցին երեք պետությունների էկոնոմիկայի նախարարները և գործարար սեկտորի ներկայացուցիչները¹⁸:

Եռակողմ գործարար համաժողովների գաղափարը դրական արձագանք գտավ երեք պետությունների արտաքին գործերի նախարարների պարբերական հանդիպումների ժամանակ: 2012 թ. հունիսի 8-ին Տրապիզոնում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների կողմից ընդունված հռչակագրում ամրագրվեց, որ պետությունները կշարունակեն աշխատել եռակողմ տնտեսական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ՝ համաձայն նոր գործարար համաժողովների կողմից տրվելիք առաջարկների¹⁹: Բացի այդ՝ կողմերն առաջարկեցին ընդլայնել նմանատիպ հանդիպումների տիրույթը՝ անցկացնելով եռակողմ մասնագիտացված գործարար համաժողովներ էներգետիկայի, տրանսպորտի, տուրիզմի և այլ ոլորտներում, ինչի մասին համապատասխան դրույթ էր պարունակում 2016 թ. փետրվարի 19-ին Թբիլիսիում երեք երկրների արտգործնախարարների համատեղ հայտարարությունը²⁰:

key.mfa.gov.ge/index.php?lang_id=geo&sec_id=595&info_id=1414 (հասանելի է առ 08.07.2017թ.).

¹⁸ ქართველი, აზერბაიჯანელი და თურქი მეწარმეების მონაწილეობით თბილისში ზიზნეს-ფორუმი გაიმართა, http://www.sgp.ge/news.php?article_id=20120320103254315&page=08&lang=ge (հասանելի է առ 09.08.2017 թ.).

¹⁹ *Trabzon Declaration of the Ministers of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, Georgia and the Republic of Turkey, 08 June 2012, Trabzon, http://www.mfa.gov.tr/trabzon--declaration-of-the-ministers-of-foreign-affairs-of-the-republic-of-azerbaijan_-georgia-and-the-republic-of-turkey_-08-june-2012_-trabzon.en.mfa (հասանելի է առ 09.03.2017 թ.).*

²⁰ *Tbilisi Statement, the Fifth Trilateral Meeting of the Ministers of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, Georgia and the Republic of Turkey, Tbilisi, 19 February 2016, p. 3, <http://mfa.gov.ge/getattachment/051602b6-a5c9-4686-b919-46e2d035c2ab/Tbilisi-Statement.pdf.aspx> (հասանելի է առ 10.03.2017 թ.).*

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան գործարար համաժողովները կարելի է դիտարկել որպես հարթակ թե՛ երեք պետությունների միջև առևտրական հարաբերությունների օրակարգային խնդիրների քննարկման, թե՛ պետություն-մասնավոր սեկտոր երկխոսության, թե՛ գործարար կապերի հաստատման և ներդրումների ներգրավման համար: Օրինակ՝ 2012 թ. փետրվարին թբիլիսյան գործարար համաժողովի շրջանակում Վրաստանի արդյունաբերական խումբը թուրքական «Misman» ընկերության հետ ստորագրեց հուշագիր Գարդաբանիում ԶԷԿ-ի կառուցման վերաբերյալ²¹:

Նմանատիպ պարբերական հանդիպումների անցկացումը դրական արձագանք գտավ նաև մասնավոր ընկերությունների շրջանում: Ռուսթավի մետալուրգիական գործարանի տնօրեն Թոմաս Բլեյքի կարծիքով, գործարար համաժողովները ընկերությանը հնարավորություն կտան գործարար կապեր զարգացնել ադրբեջանցի և թուրք գործընկերների և ներդրողների հետ²²:

Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը թե՛ եռակողմ գործարար համաժողովների, թե՛ երկկողմ հանդիպումների ընթացքում քննարկում են նաև համագործակցության խորացման հնարավոր ուղիներն ու հեռանկարները: Օրինակ՝ Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարար Շահին Մուսաֆաևը 2013 թ. մայիսի 25-ին Գաբալայում տեղի ունեցած թուրք-վրաց-ադրբեջանական 3-րդ գործարար համաժողովի ժամանակ առաջարկեց ստեղծել համատեղ ներդրումային ֆոնդեր²³: Որպես երեք երկրների միջև համագործակցության սերտացման հաջորդ քայլ 2012 թ. մարտին Չ. Չաղայանը առաջարկեց թուրք, վրացի և ադրբեջանցի գործարարների մասնակցությամբ ստեղծել համատեղ ձեռնարկություններ²⁴: Ինչ վերաբերում է առևտրաշրջանառության ծավալների մեծացմանը,

²¹ Զաթո-տծիլոսի-գարսիս ռզինոջնա - խմո լլլլլլլլիս լլրտոլլրտոլիս խոմո-լլլ, <http://www.amerikishma.com/a/article139523798/538412.html> (հաաանելի է առ 10.03.2017 թ.).

²² Ձլլ „րլլտալլլիս ֆոլադոլլ“ ձորլլլլլլլրո խլլլրտլլլլլ-ալլլրալլլլլ-տլլրլլլլլիս ձոլլլլլ ֆոլլլլլլ, <http://www.rmp.ge/media-center/news/sps-rustavis-foladis-diregtori-saqartvelo-azerbaijan-turqetis-biznes-forumze/> (հաաանելի է առ 10.03.2017 թ.).

²³ Тесные экономические узы Азербайджана, Грузии и Турции, <http://www.zerkalo.az/2013/tesnyie-ekonomicheskie-uzyi-azerbaydzhana-gruzii-i-turtsii/> (հաաանելի է առ 10.03.2017 թ.).

²⁴ Minister: Georgian, Azerbaijani and Turkish businessmen should actively work together, <http://en.trend.az/business/economy/2006520.html> (հաաանելի է առ 10.03.2017 թ.).

2017 թ. փետրվարին 5-րդ եռակողմ գործարար համաժողովի ժամանակ Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Ֆաթիհ Մեթինը նշեց, որ երեք պետությունները մտադիր են միմյանց հետ առևտուրը հանրագումարում հասցնել 20 միլիարդ ԱՄՆ դոլարի²⁵:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտուրն ու ներդրումները, չնայած ծավալների աճին, բավականին անհամաչափ զարգացում են ունեցել: Երեք պետությունների միջև ներդրումային դաշտում առավել ակտիվ են եղել Թուրքիան և Ադրբեջանը, մինչդեռ վերջիններիս տնտեսությունում վրացական ներդրումները աննշան թիվ են կազմել: Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առևտրական հարաբերությունները առավել մեծ կարևորություն են ունեցել Վրաստանի, քան Ադրբեջանի կամ առավել ևս Թուրքիայի համար: Միևնույն ժամանակ, առևտրի ծավալների աճը չհանգեցրեց Վրաստանի կամ Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունում համապատասխանաբար մյուս երկու պետությունների կշռի մեծացմանը, ինչը խոսում է թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի արտաքին առևտրում զուգահեռաբար այլ պետությունների կշռի մեծացման մասին: Ստեղծելով եռակողմ գործարար համաժողովների ձևաչափը՝ Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը որոշ քայլեր ձեռնարկեցին առևտրի և ներդրումների ոլորտում համագործակցության ինստիտուցիոնալացման ուղղությամբ, ինչը հնարավորություն տվեց պարբերաբար քննարկել համագործակցության խնդիրներն ու հեռանկարները: Վերոնշյալով հանդերձ՝ առկա են նաև մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտրական հարաբերությունների էլ ավելի զարգացումը և փոխադարձ ներդրումների աճը:

²⁵ Turkey, Azerbaijan, Georgia eye next steps to deepen economic interaction, <http://www.azernews.az/business/109044.html> (հասանելի է առ 18.03.2017 թ.).

ТРЕХСТОРОННЕЕ СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ ТУРЦИЕЙ, ГРУЗИЕЙ И АЗЕРБАЙДЖАНОМ В СФЕРЕ ТОРГОВЛИ И ИНВЕСТИЦИЙ (1991-2016 ГГ.)

ДАВТЯН Э.В.

Резюме

В 1991-2016 гг. торговые отношения между Турцией, Грузией и Азербайджаном, несмотря на рост объема, развивались асимметрично. В инвестиционной сфере более активными государствами являлись Турция и Азербайджан, между тем грузинские инвестиции в этих двух странах были незначительными. Торговля между тремя государствами гораздо важнее для Грузии, нежели для Азербайджана и тем более для Турции. Одновременно рост объема торговли не привел к росту удельного веса во внешне-торговом обороте Грузии или Азербайджана, что свидетельствует о растущей роли других государств во внешней торговле Грузии и Азербайджана. Турция, Грузия и Азербайджан предприняли определенные шаги в плане институционализации торгового и инвестиционного сотрудничества, что явилось предпосылкой для регулярных обсуждений проблем и перспектив трехстороннего сотрудничества.

TRILATERAL TRADE AND INVESTMENT COOPERATION BETWEEN TURKEY, GEORGIA AND AZERBAIJAN (1991-2016)

E. DAVTYAN

Abstract

In 1991-2016, the mutual trade and FDIs between Turkey, Georgia and Azerbaijan, despite the growth in volumes, have developed asymmetrically. In terms of FDIs, Turkey and Azerbaijan have been the most active states, whereas Georgian investments in the economies of these states have been extremely modest. Turkey-Georgia-Azerbaijan trade relations are much more important for Georgia, rather than Azerbaijan, not to say Turkey. At the same

time the increase in trade volumes did not result in expanding the share of the other two states in the overall foreign trade turnover of Georgia and Azerbaijan which means that other countries play an increasingly greater role in Georgia's and Azerbaijan's foreign trade. Turkey, Georgia and Azerbaijan undertook some steps towards institutionalizing the trade and investment cooperation which enabled regular discussions over current issues and perspectives of the trilateral cooperation. Hence, there are plenty of problems that challenge the further development of trade relations and mutual investments between Turkey, Georgia and Azerbaijan.

ԿԻԼԻԿԻԱՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՀԱՐՑԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ն.Մ.

Հայոց պատմության ամենաողբերգական էջերից է 1909 թ. ապրիլին Կիլիկիայի հայ բնակչության կոտորածը: Օսմանյան կայսրության հայ բնակչությունը, որ սահմանադրական կարգերի հաստատման ջատագովն էր, դարձավ մարդկության դեմ ուղղված զազրելի երկույթներից մեկի՝ ցեղասպանության զոհը: Համիդյան ջարդերից հետո Կիլիկիայի կոտորածը Հայոց ցեղասպանության երկրորդ փուլն էր: Հաշված օրերի ընթացքում սրի քաշվեց 30.000 հայ:

Երիտթուրք ղեկավարներից Ջեմալ փաշան, որը հայոց Մեծ եղեռնի գլխավոր կազմակերպիչներից և իրագործողներից է, իր հուշերում գրում է. «Կառավարությունը, անգամ մայրաքաղաքում կորցնելով իր հեղինակությունը, հասկանալի է, չկարողացավ իր վերահսկողությունը հաստատել գավառներում»¹: Ջեմալ փաշան այս խոսքերով փորձել է արդարացնել «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը, գոնե հայերի համատարած ոչնչացումը բացատրելու իմաստով:

Ջեմալի կարծիքին են եղել նաև օսմանյան խորհրդարանի մի շարք հայազգի պատգամավորներ: Մասնավորապես, Վահան Փափագյանը Ադանայի ջարդերում մեղավոր է համարում սուլթանին և հետադիմական ուժերին: Իր հուշերում նա գրում է. «Մարտի 31-ի շերիաթական շարժման ղեկավարները, նույն օրն իսկ հեռագրած էին Ատանա ջարդը սկսելու: Ապրիլի 1-ին կը սկսի յարձակումը և կը կրկնուի 12-ին, այս անգամ նորեկ կանոնաւոր զինւորներու մասնակցութեամբ...»²: Այս կարծիքին էր նաև Վարդգեսը (Հովհաննես Սերենկույան), որը կատարվածի մեջ տեսնում էր Աբդուլ Համիդի ձեռագիրը³: Ջեմալի և հայ պատգամավորների այս խմբի կարծիքներում կա մի էական տարբերություն: Եթե Ջեմալը Կիլիկիայի հայերի ջարդի պատասխանատու համարում է միմիայն Աբդուլ Համիդին, ապա հայ պատգամա-

¹ Записки Джемаль-паша 1913-1919, Тифлис, 1923, с. 211.

² Փափագեան Վ., Իմ յուշերը, հ. Բ., Պեյրուք 1952, էջ 116:

³ Բիւզանդիոն, 20.IV.1909:

վորները կոտորածների երկրորդ փուլի մեղավոր համարում են երիտթուրքերին, քանի որ վերջիններիս ուղարկած կանոնավոր զորքերը շարունակել են հին վարչախմբի կազմակերպած սպանող: Հայազգի պատգամավորների կարծիքը հիմնավորվում է հենց օսմանյան խորհրդարանում Ադանայի կոտորածների հարցի քննարկման ընթացքում:

Ադանայի դեպքերը, բնականաբար, ի սկզբանե անհանգստացրել էին օսմանյան խորհրդարանի հայազգի ներկայացուցիչներին, որոնք մինչ այդ աչքի էին ընկել միայն զսպվածության զարմանալի վարքագծով:

Անհնար է ներկայացնել 1909 թ. ապրիլի Կիլիկիայի ջարդերը՝ առանց այդ նույն ժամանակ կայսրությունում տեղի ունեցած մեկ այլ կարևոր իրադարձության՝ պետական հեղաշրջման փորձի: Ըստ Փափագլանի՝ հեղաշրջումը նախապատրաստել էին դեռ 1908 թ. հոկտեմբերին, սակայն այն գործի դրվեց 1909 թ. մարտի 31-ին⁴:

Կ. Պոլսում տեղի ունեցած դեպքերի մեջ իթթիհատականները մեղադրում են սուլթան Աբդուլ Համիդին և իթթիհատի կրոնական ընդդիմադիր Շեյխ Վահիդթեի Մուհամեդին⁵: Սուլթանի մասնակցությունը հեղաշրջման մեջ երևում է Կ. Պոլսում գերմանական դիվանագիտական առաքելության զեկուցագրում, որտեղ նշվում է, որ ապստամբներն ունեցել են բավականաչափ կապիտալ, և զինվորները վարձատրվել են ոսկով⁶:

Հեղաշրջման առիթը Ստամբուլում մամուլի մասին նոր օրենքի դեմ կազմակերպված հանրահավաքում ոստիկանի համազգեստով մի անհայտ անձի կողմից «Աիրար» կուսակցության օրգան «Սերբեսթ» թերթի խմբագրի սպանությունն էր: 1909 թ. մարտի 31-ի լույս ապրիլի 1-ի գիշերը Ստամբուլի կայազորի զինվորները «Աիրար» կուսակցության անդամ, սպա Համդի Յաշարի գլխավորությամբ սկսեցին խռովություն և առավոտյան հավաքվելով խորհրդարանի շենքի մոտ՝ կազմակերպեցին հանրահավաք՝ ներկայացնելով իրենց պահանջները: Փողոցներում սկսվեց փոխիրաձգություն այն զորամասերի հետ, որոնք հավատարիմ էին մնացել երիտթուրքերին: Սկսվեց երիտթուրք ղեկավարների հաշվեհարդարը: Նրանցից շատերը ապաստան գտան Սալոնիկ քաղաքում, իսկ ոմանք էլ՝ հենց Ստամբուլում: Օրինակ՝ Թալեաթը ապաստան գտավ դաշնակցական Խաչատուր Մալումյանի (Ակնունի), իսկ Խալիլ բեյը՝ Գրիգոր Զոհրապի տանը⁷:

⁴ Տե՛ս Փափագլան Վ., նշվ. աշխ., էջ 103:

⁵ Zürcher E. *The Young Turks Legacy and Nation Building*, London, 2010, p. 81.

⁶ Նույն տեղում:

⁷ Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պայքարություն, Ե., 2011, էջ 614:

Շուտով խռովարարների կողմն անցան Ստամբուլի կայազորի գրեթե բոլոր հետևակային ու հեծելազորային ստորաբաժանումները: Նրանք գրավեցին կառավարական բոլոր շենքերը, ինչպես նաև խորհրդարանի շենքը:

Իթթիհատականներին հավատարիմ մնացած Ադրիանուպոլսի և Սալոնիկի բանակային կորպուսներից ստեղծվեց «Գործողության բանակը», որը Մահմուդ Շևքեթ փաշայի գլխավորությամբ շարժվեց Ստամբուլ՝ սահմանադրական կարգերը վերականգնելու համար⁸: Ապրիլի 9-ին «Գործողության բանակի» կողմն անցավ նաև ռազմական նավատորմը, որը շրջափակեց Ստամբուլը՝ ծովի կողմից: Երբ Մահմուդ Շևքեթ փաշայի զորքերը սկսեցին շրջապատել մայրաքաղաքը, խորհրդարանի զույգ պալատների պատգամավորները ժամանեցին Սան-Ստեֆանո, որտեղ ապրիլի 9-ին գումարվեց Ազգային ընդհանուր ժողով սուլթանի հարցը վճռելու համար: Ազգային ընդհանուր ժողովը նախագահում էր խորհրդարանի ատենապետ Սայիդ փաշան, որը խորհրդարանի անունից շնորհակալություն հայտնեց նավատորմին ցուցաբերած հայրենասիրության համար⁹: Ժողովի ընթացքում ստեղծվեց մի հանձնախումբ, որը պետք է կազմեր հայտարարություն՝ ուղղված Օսմանյան կայսրության բնակչությանը: Հանձնախմբի անդամ էր ընտրվել նաև Գրիգոր Զոհրապը:

Ընդունված հայտարարությունում ասված էր. «...Սահմանադրութիւնը լիովին ապահովելու և երկրին հանդարտութիւնը վերահաստատելու և սոյն դէպքին հեղինակները Շերիաթի և քաղաքային օրենքի համեմատ պատժելու համար, շարժուն բանակին կողմէ հրատարակուած յայտարարութիւնը վաւերացուած է Ազգային ժողովին կողմէ, որ այս Բանակին արարքն ու տրամադրութիւններն համաձայն կգտնէ Ազգին բաղձանքներուն, և կ'հրամայէ, որ ամեն ոք հնազանդի բանակի կարգադրութիւններուն, և ի դէմ դնողները պատասխանատու բռնուին և հարկ եղած պատիժը կրեն»¹⁰: Ստանալով պատգամավորների պալատի աջակցությունը՝ Մահմուդ Շևքեթ փաշան ապրիլի 10-ին սկսեց հարձակումը մայրաքաղաքի վրա: Չնայած երիտթուրքերի հակառակորդների համառ դիմադրությանը՝ «Գործողության բանակը» ապրիլի 13-ի դրությամբ գրավեց քաղաքը: Երբ բանակը մտավ քաղաք և մոտեցավ սուլթանական պալատին, Աբդուլ Համիդը ողջունեց նրանց և հրամայեց պալատական զորքին, որ դիմադրություն ցույց չտա¹¹:

⁸ Նույն տեղում, էջ 615:

⁹ Տե՛ս Բիզանդիոն, 10.IV.1909:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տե՛ս Zürcher E., նշվ. աշխ., էջ 81:

Թեև Աբդուլ Համիդը փորձում էր երիտթուրքերին համոզել, թե ինքը կապ չի ունեցել ապստամբության հետ, այնուամենայնիվ, երիտթուրքերը նրան գահընկեց արեցին և աքսորեցին Սալոնիկ¹²: Գահ բարձրացավ երիտթուրքերի դրածո Մեհմեդ V Ռեշադը (1909-1918 թթ.):

Կիլիկիայի ջարդերը սկիզբ առան Ադանայի շուկայում՝ 1909 թ. ապրիլի 1-ին, առավոտյան ժամը 10-ին¹³: Շուկա ներխուժեցին թուրքերի, քրդերի, չերքեզների ու կրետացի իսլամ գաղթականների զինված խմբեր: Ժամը 10-ին սկսվեց հրաձգությունը և տարածվեց մյուս թաղամասերով:

Թեև ջարդերը սկսվել էին ապրիլի 1-ին, սակայն նույնիսկ ապրիլի 3-ին, Կ. Պոլսի հայկական մամուլը գրում էր Ադանայում բռնկված «հրդեհի» մասին, ինչը, անկասկած, անգիտության հետևանք էր. «Այսօր մայրաքաղաքս հասած հեռագիրէ մը կտեսնենք թէ հրդեհ ծագեր է Ատանայի մէջ: Ուրիշ մանրամասնություններ չկան»¹⁴: Ջարդերի մասին «Բյուզանդիոնը» գրեց միայն հաջորդ օրը:

Ադանայի ջարդը ցնցել էր բոլոր հայերին, այդ թվում և Օսմանյան խորհրդարանի հայ և այլազգի մի շարք պատգամավորների: Ապրիլի 6-ին խորհրդարանում կարդացվեց Պետրոս Հալաբյանի, Վարդգեսի, Համբարձում Պոյաճյանի (Մեծն Մուրադ), դոկտոր Նազարեթ Տաղավարյանի, Ալի Մյունիֆ և Ալի Հիքմետ բեյերի ստորագրությամբ հարցապնդումը Ադանայի ջարդերի վերաբերյալ, որով պահանջվում էր հեռագրով հրաման տալ ջարդը դադարեցնելու և խաղաղություն հաստատելու մասին¹⁵:

Թեև կուսակալ Ջևադ բեյին հեռագիր ուղարկվեց, սակայն վերջինս անտեսեց այն, և ջարդերը շարունակվեցին: Ապրիլի 12-ին Օսմանյան խորհրդարանում կարդացվեց Կիլիկիայի Սահակ կաթողիկոսի հեռագիրը Սսից: Հեռագրում նշվում էր, որ հայերը պաշարված են մահմեդական խուժանի, ուղարկված զորքի կողմից և գտնվում են գնդակոծման տակ¹⁶: Կաթողիկոսը խնդրում էր վերջ դնել այդ վտանգավոր դրությանը: Կաթողիկոսի հեռագիրը կարդալուց հետո Համբարձում Պոյաճյանը, Վարդգեսը և Ալի Ջենան բեյը ներկայացնում են հետևյալ ծրագիրը. «Ներփակ կներկայացնենք Ատանայի ծանր վիճակին վրա ստացված հեռագիրները: Կառաջարկենք, որ հանուն ժողովին ծանուցուի վնասեալ վայրերն և ուրիշ տեղեր, թե տեղական

¹² Վարանդյան Մ., Հ. Յ. Դաշնակցության պարմութիին, Ե., 1992, էջ 433:

¹³ Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում, Ե., 2009, էջ 52:

¹⁴ Բիւզանդիոն, 3.IV.1909:

¹⁵ Նույն տեղում, 7.IV.1909:

¹⁶ Նույն տեղում, 13.IV.1909:

պաշտոնեայք և զորքը խստիվ պիտի պատժվեն, եթե այսպիսի դեպքեր կրկնվին»¹⁷: Սակայն նույնիսկ խորհրդարանի ուղարկած հեռագրից հետո էլ սկսվում են նոր ջարդեր, այս անգամ՝ Տաքսոնում:

Ապրիլի 16-ին պատրիարքական տեղապահ Հովհաննես սրբազանը հանդիպում է վարչապետ Ահմեդ Թեվֆիկ փաշային, և ամբողջ հայ ազգի անունից պահանջում՝ 1. քննիչ հանձնախումբ կազմել և ուղարկել Կիլիկիա հանցագործությունների պատասխանատուներին հայտնաբերելու և պատժելու համար, 2. կառավարությունն անմիջապես նյութական օգնություն հասցնի տուժածներին, 3. վերահսկել հափշտակված գույքերի վերադարձը¹⁸:

Կիլիկիայի ջարդերի վերաբերյալ բուռն քննարկումներ տեղի ունեցան Օսմանյան խորհրդարանում, ապրիլի 18-ին՝ 63-րդ նիստում: Նիստը նախագահում էր Թալեաթ բեյը¹⁹: Խորհրդարանի նախագահի անունից հարցում էր կատարվել Ադանայի կուսակալ Ջևադ բեյին տեղի ջարդերի վերաբերյալ: Կարդացվեց ապրիլի 13-ին կուսակալի կողմից ուղարկված պատասխան հեռագիրը: Կուսակալը գրում է, որ ապրիլի 1-ին հայերի և մահմեդականների միջև ծագած խռովությունը շարունակվել է 3 օր, որից հետո իր հսկողության տակ գտնվող զինվորական փոքրաթիվ ուժերով մեծ դժվարությամբ ապրիլի 12-ին կարողացել է հանդարտեցնել իրավիճակը²⁰: Շարունակելով հաղորդագրությունը՝ կուսակալը գրում է. «...Երեկ, սակայն, կես օրէն վերջը հայոց թաղին մեջ հրազենի պայթիւններ լսուիլ սկսուան և Իսլամք մեծ յուզման ու գրգռութեան մատնուելով կառավարական պաշտոնատուները վազեցին: Անմիջապէս զինուորական ոյժեր դրկելով պաշարման և հսկողութեան ներքև առնուեցան այն տեղերը, ուրկէ տեղեկութիւն առինք թէ դէպքին պատճառ եղան քանի մը հայ ֆէտայիներ...»²¹: Իրականում այնտեղ ոչ մի ֆիդայի էլ չկար, նրանք հայ երիտասարդներ էին, մոտ 100 հոգի, որոնք տեսնելով, որ իրենց և իրենց հարազատների միակ փրկությունը ջարդարարներին դիմադրելն է, դուրս էին եկել փողոց և կանգնելով ջարդարարներին դեմ առ դեմ՝ կրակ էին բացել դրանց վրա: Վերջիններս խուճապահար դիմել էին փա-

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, 17.IV.1909:

¹⁹ Նույն տեղում, 20.IV.1909:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

խուստի՝ բացականչելով. «Հայ ֆեդայիներն են գալիս»²²: Ի դեպ՝ այդ երիտասարդների մեծ մասն առաջին անգամ էր հրազեն վերցնում²³:

Կուսակալի այս կեղծ տեղեկատվությունը արժանանում է ինչպես հայ, այնպես էլ թուրք պատգամավորների բուռն քննադատությանը: Հաղորդագրությունը լսելուց հետո ելույթ է ունենում իթթիհատական պատգամավոր Արիֆ Իսմեթը. «Յիրավի ցաւ կ'պատճառեն Ատանայի ջարդերը, որոնց նկատմամբ լրագրաց մէջ տեղեկութիւններ կարդացինք: Կուսակալները վարժուած են բառերու հետ խաղալով արդարանալու աշխատիլ, ուստի այժմէն իսկ կ'յայտնեն, թե կուսակալ ճէվատ պէյի այս տեղեկութիւններն ալ ճշմարտութեան հակառակ են. Բառերու հետ կ'խաղայ: Հին վարչութեան մէջ իրենց ստացած վարժութեան համաձայն պատասխանատուութենէ զերծ մնալու համար կ'ըսէ թէ պիտի կրնար այս եղեռնագործութիւնն արգիլել, եթէ ժամանակին զօրք հասներ: Այս խոսքերով չենք կրնար համոզուիլ ու լռել, որովհետեւ մեր հայրենակիցները, մեր եղբայրները խողխողուեցան, ջարդուեցան...»²⁴:

Արիֆ Իսմեթի ելույթից անմիջապես հետո ամբիոն է բարձրանում Վարդգեսը և պարզապես մերկացնում Զևադ բեյի կեղծիքները. «Ճէվատ պէյի հեռագիրը սուտ է, իր պարունակութենէն իսկ յայտնի է: Զարդին վրայ ժողովուրդն եկեղեցիներն ու վարժարաններն ապաստանեցան և այնտեղ կ'մնային: Ինչպէս կարելի է, որ 5-6 օր յետոյ այս կոտորուած ժողովուրդին մէջ ֆետայիներ կ'ելլեն և զէնք կը պարպեն»²⁵: Վարդգեսի ելույթից հասկանալի է դառնում, որ նա քաջատեղյակ է Ադանայում տիրող կացությանը, և Զևադ բեյի ստերը պարզապես հունից հանում են նրան: Պատգամավորը Կիլիկիայի ջարդերի մեջ մեղադրում է սուլթան Աբդուլ Համիդին. «Յայտնի է, որ այս դէպքն ալ Կ. Պոլսոյ դէպքին հետ միեւնոյն ատեն ծագում առավ, ուրեմն միեւնոյն անիծեալ անձին գրգռումն են այս երկու դէպքերն ալ: Եթէ Սէլանիկի բանակը չհասներ, թերևս ուրիշ տեղեր ալ գրգռէր:...Գ. Ապտ-իւ-Համիտին ինչքն ու հարստութիւնը առնել և մէկ մասն Ատանայի դէպքին գրհերուն տալու է, որովհետեւ անոր մատը կայ այս դէպքերուն մեջ»²⁶: Վարդգեսի հայտարարությունից անմիջապես հետո նրա և Արիֆ Իսմեթի խոսքե-

²² Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 55:

²³ Նույն տեղում:

²⁴ Բիզանդիոն, 20.IV.1909:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

որը հաստատում է նաև պատգամավոր Ալի Ջենանին. «Այս խնդրոյն մէջ կուսակալն ալ մասնակցութիւն ունի, հեռագիրէն յայտնի է»²⁷:

Այնուհետև կարդացվեց Վարդգեսի, Տաղավարյանի, Պապիկյանի, Համբարձում Բոյաջյանի, Գեղամ Տեր-Կարապետյանի, Ալի Ջենանի, Արիֆ Իսմեթի և Վահան Փափագյանի ստորագրությամբ կազմված նախագիծը, որով առաջարկվում էր զինվորական դատարանի առաջ դատել Ադանայի կուսակալ Ջևադ բեյին և մյուս հանցագործ պաշտոնյաներին, որոնք թերացել էին իրենց ծառայողական պարտականությունների մեջ: Նախագիծն ստորագրողներն առաջարկում էին՝ 1. արտակարգ դրություն հայտարարել Հալեպի նահանգում, Անտիոքում, Ջեյթունում և աղետի ենթարկված մյուս վայրերում, 2. Կիլիկիա ռազմադաշտային դատարան ուղարկել ոչ թե Սալոնիկից, այլ Կ. Պոլսից, 3. հեռագրով հրահանգել ապաշրջափակելու Դեորթ-Յոլի պաշարումը, 4. առանց ժամանակ կորցնելու օգնության հասնել սովյալներին ու անապաստաններին²⁸:

Նախագիծն ընթերցելուն հաջորդում է Համբարձում Բոյաջյանի (Մուրադ) ելույթը, որտեղ պատգամավորը ծանր մեղադրանք է ներկայացնում ներքին գործերի նախարարի խորհրդականին. «Մինչև հիմա Հայերն իբր կրօնքի և ազգի թշնամի կնկատէինք, բայց հիմա ամեն ոք հասկցաւ թէ Հայերն ամենեւին յանցանք չունէին, ուստի կ'յուսամ թէ յայտնի եղաւ թէ սուտ կխօսին այս կուսակալները, որոնք հայերն իբրև գէշ կ'ցուցնէն: Ջարդը կատարող բռնակալներն օտարներուն ալ վնասած են և երբ անոնք բողոքեցին, խորհրդական Ատիլ պէյ հեռագրեց թէ օտար հպատակներուն չդպչին և չվնասեն»²⁹:

Մուրադի ներկայացրած մեղադրանքը հաստատում է նաև պատգամավոր դոկտոր Նազարեթ Տաղավարյանը. «Հեռագրուեցաւ որ Հայերուն վնասեցէք, բայց օտարահպատակներուն մի վնասեք»³⁰:

Տաղավարյանի ելույթից հետո կրկին խոսք է ունենում Վարդգեսը՝ ասելով. «Այս ցաւալի վիճակին ու դէպքերուն հեղինակները պէտք է պատժել: Այս դէպքերն անգամ մ'ալ կ'յայտնեն թէ Անատոլիոյ բարենորոգման կարօտ են, ուստի կ'առաջարկեմ ամէնէն առաջ Անատոլիոյ բարենորոգիչ յանձնաժողովին կանոնագիրը քննել»³¹:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 242:

²⁹ Բիւզանդիոն, 20.IV.1909:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

Տեսնելով, որ ջարդերի մեջ առանցքային նշանակություն ունեցող մարդիկ պետք է պատասխանատվության ենթարկվեն՝ Իսմայիլ Հազգը բեյը պաշտպանում է կուսակալին և խորհրդականին՝ հայտարարելով, որ առանց քննություն իրականացնելու չի կարելի պաշտոնյաներին դատել: Ստեղծված իրավիճակից դուրս գալու առավել գրագետ լուծում է գտնում Դոզմիթի էֆենդին՝ առաջարկելով կազմել ազգային ընդհանուր ժողով և բացառիկ որոշումներ կայացնել քվեարկությունով:

Թուրք պատգամավորների վարքագիծը ստիպում է Տաղավարյանին ծանրակշիռ մեղադրանքներ ներկայացնել. «Այս ջարդը կազմակերպելու համար երկու ամիս առաջ Պոլիսէն մարդիկ դրկուած են և մարտ 31-ին թէ այստեղ և թէ այնտեղ միաժամանակ տեղի ունեցան դէպքերը. դարձեալ մենք, խեղճ Հայերս ենք որ բազմաթիւ կորուստներ տուինք: Եւ երբ Հայերն են որ կ'ջարդուին, ինչպէ՛ս կ'ըլլայ որ մեր դիմումին հետեւանօք փոխանակ ժողովրդեան ապահովութեան հսկելու համար հրաման տալու, կ'հեռագրուի օտարահպատակները պաշտպանել: Վարչապետին ներկայութեանն այսպէս յայտարարեցին»³²: Տաղավարյանի այս ելույթը ստիպում է երիտթուրքերին մեղայական գալ և պաշտպանել պաշտոնյաներին: Նրան պատասխանում է խորհրդարանի նախագահը. «Չեմ յուսար որ խիղճի տէր պաշտոնեայ մը միայն օտարահպատակներուն պաշտպանութիւնն հրամայէ»³³: Ապա ամբիոն է բարձրանում «Իթթիհատ վե թերաքքը» կոմիտեի գլխավոր անդամներից Ռիզա Թեվֆիքը... «Մեծ վտանգ մը կ'սպառնայ մեզ: Բազմաթիւ և զանազան տարրերէ կազմուած ազգ մ'ենք և մանաւանդ Անատօլիի ժողովուրդն ալ տգէտ է. ներեցէք բացատրութեանս, մինչեւ հիմայ իբրեւ շուն ու կատու ապրեցանք...: Թէ Պոլսոյ և թէ այլ քաղաքներուն մէջ բազմաթիւ անգործ մարդիկ կան, պէտք է մտածել թէ ասոնք որչափ մեծ ոյժ մը կ'կազմեն: Բռնակալ մը կամ հարուստ կուսակցութիւն մը կրնայ հինգ դրուշով գնել անոնց խիղճը: Չինվորագրութեան օրենքն ալ շուտով գործադրել պէտք է: Ֆէտայի ըսելով իզուր չենք կրնար ամբաստանել Հայերը, այո՛, Հայերը ֆէտայի են, բայց Ազատութիւնը վերստանալու համար մեզ օգնող ֆէտայիներ են և մեր կողմէն այս տեսակ վարմունք մը տեսնելով հանդերձ, Հայերը կը մրցին դարձեալ ուրիշ ցեղերու հետ, որպէս զի մեզմէ չքաժնուին...»³⁴: Պատգամավորի խոսքերն արժանանում են խորհրդարանի ծափողջույններին,

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, 20.IV.1909:

³⁴ Նույն տեղում:

որից անմիջապես հետո ամբիոնին է մոտենում Գրիգոր Զոհրապը և շնորհակալություն հայտնելով դոկտոր Թեվֆիքին իր հնչեցրած խոսքերի համար՝ սկսում է իր ելույթը. «...Երեսփոխաններէ ոմանք ներքին գործոց նախարարութեան հեռագիրէն գանգատեցան, տեսայ այն հեռագիրը, Բռնակալութեան ոճով գրուած էր: Ոչ թէ Հայերը ջարդեցէք, այլ արդարութիւնը վերահաստատեցէք ըսուած է...: Կարելի եղածին չափ շուտ անդորրութիւնը վերահաստատել և օգնութիւն փութացնել հարկ է: Այս մասին Ժողովս ձեռնհաս է որոշում տալու: Իտալիոյ երկրաշարժէն վնասելոց հազարներով ոսկի դրկուելու համար Ժողովս հրաման ըրաւ: Աղէտը մեր Հայրենիքին մէջ տեղի կ'ունենայ հիմա, ուստի պէտք է որոշել որ 20 հազար ոսկի նպաստ դրկուի Ատանա: Պատերազմական վիճակ հրատարակուած է այնտեղ, բայց տեղոյն պաշտօնեաներով կազմուած պատերազմական ատեան մը ամենեւին օգուտ չունի: Նախ որոշում տանք գրելու համար ելմտական նախարարին, որ 20,000 ոսկի դրկէ Ատանա և յետոյ Կ'Պոլսեն դրկուելիք սպաներով պատերազմական Ատեան մը պէտք է կազմուի Ատանայի մէջ»³⁵:

Զոհրապի ելույթից հետո կազմվում է որոշման նախագիծ, ըստ որի՝ ա. կառավարությանը պարտադրվում էր Ադանայի և Հալեպի տուժածներին 20.000 ոսկի օգնություն ուղարկելու առաջարկ ներկայացնել խորհրդարան, բ. պէտք է պատժվեին բարձր և ցածր պաշտոններ զբաղեցնող անձինք, գ. խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ քանակությամբ զորք ուղարկել³⁶:

Խորհրդարանի նախագահի առաջարկով որոշվեց լսել ներքին գործերի նախարարի բացատրությունը, ապա որոշում կայացնել: Կարճ դադարից հետո խորհրդարան ներկայացան ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշան և նրա խորհրդական Ադիլ բեյը: Քանի որ Ադիլ բեյը ավելի տեղեկացված էր, ուստի նա էլ նախարարի փոխարեն փորձում է բացատրություններ տալ: Մինչ նրա ելույթը կարծես թե պատգամավորների մեծ մասը հակված է եղել փոփոխություններով հանդերձ ընդունելու ներկայացրած որոշման նախագիծը, սակայն խորհրդականը կարողանում է շեղել հարցի քննարկման ընթացքը: Նա կարդում է Ադանայից, Կոզանից Զերե-Բերեքեթից և ուրիշ տեղերից վալիների և մուֆասերիֆների ուղարկած հեռագրերն ու տեղեկագրերը, որոնք մեղադրում էին հայերին՝ «մահմեդականների վրա հարձա-

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

կումներ գործելու, ռումբեր նետելու և հրդեհումների մեջ»³⁷: Ադանայի դեպքերը «ցավալի», իսկ դրանք հրահրողներին «անիծապարտ» և «եպերելի» անվանելով՝ խորհրդականը սկսում է իր ելույթը ապրիլի 1-ին ստացված հեռագրով, որտեղ հաղորդվել էր, որ Ադանայում խռովություն և ավարառություն է սկսվել: Խորհրդականը հայտնում է, որ անմիջապես արձագանքել է այդ հեռագրին, պատասխան հեռագրով պահանջելով պահակախմբեր և հորդոր կարդացող հանձնախմբեր կազմել խաղաղությունը վերահաստատելու նպատակով: Ապա շեշտում է, թե զորք ուղարկելու համար տեղեկացրել է ռազմական նախարարությանը: Հաջորդ օրը՝ ապրիլի 2-ին, նախարարների խորհրդի նիստի ժամանակ ռազմական նախարար Էդիեմ փաշան տեղեկացնում է, որ տեղում բավական քանակությամբ զորք չկա, և երկու վաշտ պետք է ուղարկել: Ըստ խորհրդականի, քանի որ կուսակալը գրել էր, որ երկու վաշտը քիչ է, նա ստիպված է եղել Սելեֆքեյի գունդը ևս ուղարկել Ադանա, սակայն շոգենավի հապաղման պատճառով ուշացել է, և, հետևաբար, խռովությունը շարունակվել է: Փորձելով արդարացնել կուսակալին՝ Ադիլ բեյը նշում է, թե Ջևադ բեյը սկզբում դեպքերը սովորական երևույթ է համարել և միայն ոստիկանության նախարարությունից բավականաչափ ոստիկան է պահանջել: Ապա խորհրդականը փորձում է իրեն արդարացնել՝ ասելով, որ մինչ մահմեդականները և ոչ մահմեդականները ընդհարման մեջ են եղել, օտարահպատակները չեզոքություն են պահպանել, և, հետևաբար, բնական է, որ պետք է հրահանգ տրվեր օտարներին պաշտպանել քաղաքական խնդիրներից խուսափելու համար: Խորհրդականը նույնիսկ ցավ է հայտնում, որ իր նամակը սխալ է մեկնաբանվել խորհրդարանում: Ադիլ բեյի զեկույցից պարզ է դառնում, որ մեծ վեզիրին ուղղված հայերի դիմումը կարդալուց հետո վերջինս նշել է, որ Ադանայում հայերը սակավաթիվ են, և դժվար թե մեղավորը նրանք լինեն³⁸:

Խորհրդական Ադիլ բեյը միտումնավոր չի նշում, որ Ջեբել-Բերեքթթի սանջակի մութեսարիֆ Ասաֆ Էսադ բեյը Ադանա քաղաքում սկսված ջարդերի լուրն ստանալուն պես ամեն ինչ արել էր դրանք սանջակում տարածելու համար³⁹:

Իր ելույթն ավարտելիս խորհրդականը նշում է, թե տուժածների թիվը հայտնի չէ, և անհնար է իմանալ մինչև քննություն չկատարվի: Բացատրությամբ

³⁷ *Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 243:*

³⁸ *Տե՛ս Բիզանդիոն, 20.IV.1909:*

³⁹ *Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 243:*

յունը լսելուց հետո կրկին խոսք է վերցնում Գրիգոր Զոհրապը, և մեղադրելով խորհրդականին տուժածների թվի մասին տեղեկատվություն չունենալու մեջ՝ նշում է, որ Մերսինի ֆրանսիական հյուպատոսարանի թարգմանիչը իրեն հեռագրել է, որ Ադանայում 20-30 հազար մարդ է կոտորվել⁴⁰։ Շարունակելով՝ Զոհրապը նշում է, որ տուժել են նաև Հայոց եկեղեցին և վարժարանը։ Ապա պատգամավորը ցավ է հայտնում, որ թուրք պաշտոնյաներն անընդհատ կրկնում են, թե հայերը ամրացել են եկեղեցում, մինչդեռ իրականում հայերը ոչ թե ամրացել, այլ իրենց կյանքը փրկելու համար ապաստան են գտել այնտեղ։ Զոհրապի քննադատությունից չի վրիպում նաև կուսակալը։ Հիմնվելով ֆրանսիական «Կառավարել ապագան գուշակել կ'նշանակե» սկզբունքի վրա, Զոհրապը սուր քննադատության է ենթարկում Ջևադ բեյին՝ մասնավորապես մեջբերելով այն փաստը, որ կուսակալը ջարդերի սկզբում ոստիկանական ուժեր է պահանջել, ապա ջարդերի տարածվելուց հետո միայն՝ զինվորական ուժեր։ Պատգամավորը հասկացնում է բոլորին, որ կուսակալը պարտավոր էր կանխատեսել դեպքերի հնարավոր զարգացման ընթացքը և ավելի շուտ կանխել դրանք։ Ավարտելով իր ելույթը՝ Զոհրապը հայտարարում է, որ խաղաղություն հաստատելու հրաման տալով՝ անհնար է կառավարել, և պահանջում է ընդունել օրինագիծ։

Զոհրապի սուր քննադատություններից հետո խորհրդականը փորձում է արդարանալ՝ նշելով որ Զոհրապը իրեն անտեղի է մեղադրում, քանի որ ինքը խորհրդարանի պահանջով բացատրություն տվեց։ Սակայն թուրք պատգամավոր Նիսիմ Մազիլաիը նույնպես մեղադրում է խորհրդականին իր անգործության համար՝ նշելով. «Եթե ձեռք առնուած միջոցներ ըսելով միայն հեռագրել կ'հասկընաք, միշտ ցաւ պիտի յայտնուի»։

Տեսնելով, որ պատգամավորների մի մասը պարզապես չի ընդունում իր տված «բացատրությունները», Ադիլ բեյը դիմում է ամբողջ խորհրդարանին՝ անելով հուսահատ հայտարարություն. «Դէպքին ատեն նախարարական տազնապ կար, հայրենասիրութեամբս գործերը վարեցի։ Ինչու՞ համար այսչափ կ'քննադատուիմ, անշուշտ անձնական նպատակներ կան, կ'ցաւիմ»⁴¹։

Խորհրդականի այս հայտարարությունն արժանանում է խորհրդարանի ծափերին, ինչը խիստ հիասթափեցնում է հայ պատգամավորներից շատերին։ Վարդգեսը հետևյալ հայտարարությամբ է հանդես գալիս. «Ժողովին

⁴⁰ *Տե՛ս Քիզանդիոն, 20.IV.1909:*

⁴¹ *Նույն տեղում, 20.IV.1909:*

այս ծափերը զիս լռելու կդատապարտեն: (Աղմուկ:) Աղմուկ մի՛ հանէք, ձեր ծափերը քաջալերութիւն են: Հայերը իսլամ չեն, թո՛ղ ջարդուին, սատկին (բողոքի ձայներ): Ես խտրութիւն դնել չեմ ուզէր, դուք խտիր կ'դնէք և չէք ձգեր որ խօսիմ: Կ'պահանջեմ որ հանցաւորները պատժուին և անմիջապէս նպաստ դրկուի»⁴²:

Վարդգեսի ելոյթից հետո վիճաբանությունը փոքր-ինչ շիկացավ, ապա խորհրդարանն ընդունելով Զոհրապի առաջարկը՝ որոշեց.

1. 20.000 ոսկի օգնություն ուղարկել տուժածներին,
2. Կ. Պոլսից իսկույն ռազմական ատյան ուղարկել,
3. Պատժել բոլոր պատասխանատուներին⁴³:

Օսմանյան խորհրդարանում Կիլիկիայի հայերի ջարդին առանց քննարկումների, միայն հայտարարությունների մակարդակով անդրադարձ եղել է նաև ապրիլի 20-ի՝ 65-րդ և ապրիլի 28-ի 69-րդ նիստերում:

1909 թ. ապրիլի 30-ին հրավիրվում է Օսմանյան խորհրդարանի 71-րդ նիստը: Ընթերցվում են վարչապետ Հյուսեին Հիլմի փաշայի 3 պաշտոնագրերը, որոնցից երրորդում գրված էր, թե Ադանա ուղարկված ռազմական ատյանը, թեև ջարդերին մասնակցած անձանց նկատմամբ անհրաժեշտ քննությունը կատարում է, սակայն դեպքի սկզբնապատճառը քննելու և տուժածներին օգնություն բաշխելու համար ներքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում երկու պաշտոնյայի և երկու երեսփոխանի անդամակցությամբ չորս հոգանոց հանձնախումբ ուղարկել: Պաշտոնյաները լինելու էին Կոսովո նահանգի դատական քննիչ Հարություն էֆենդի Մոստիջանը և պետական խորհրդի անդամ Բեհա բեյը: Այս տեղեկագրին ծանոթանալուն պես ելոյթ է ունենում Նազարեթ Տաղավարյանը, որն առաջարկում է Ադանայի դեպքերի համար կատարել խորհրդարանական քննարկում, ինչը նպատակահարմար չգտավ թուրք պատգամավոր Հոճա Սելիմը: Վերջինս հայտարարում է, որ հանձնախումբ ուղարկելը ամենաճիշտ տարբերակն է: Ադանա հանձնաժողով ուղարկելուն ընդդիմանում է նաև Վեհպի էֆենդին, իսկ Սավֆեթ էֆենդին համաձայնում է: Հալեպի պատգամավոր Մուսաֆա էֆենդին առաջարկում է հանձնախմբին տալ վերահսկողական գործառույթներ և հանձնախմբի կազմում ընդգրկել հինգ պատգամավոր⁴⁴: Գրիգոր Զոհրապը նույնպես ելոյթ է ունենում և շեշտում, որ այս առաջարկը կառավարության կողմից է, և քանի որ խորհրդարանը

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում, 1.V.1909:

ոչ միայն օրենսդիր, այլև քաղաքական մարմին է, ուստի քննություն կատարելու իրավունք ունի: Ապա պատճառաբանելով հանձնախմբի անհրաժեշտությունը՝ Ջոիրապը մի հարցադրում է անում. «Երբ ժողովը հակակշիռ չկատարե, ուրեմն ինչպե՞ս պիտի կրնայ ճշդել կառավարության հաղորդած տեղեկությանց ստուգությունը»⁴⁵:

Ելույթ է ունենում նաև Վարդգեսը, որին զայրացնում է այն հանգամանքը, որ, երբ կայսրության բնակիչները միմյանց կոտորում են, պատգամավորները խորհրդարանում օրինական քայլեր անելու ձևերն են քննարկում: Մի քանի թուրք պատգամավորների ելույթներից հետո որոշում է կայացվում, որ կառավարական հանձնաժողովի հետ միասին խորհրդարանական հանձնաժողով էլ պետք է ուղարկվի: Ապա տեղի է ունենում գաղտնի քվեարկություն: Քվեարկությամբ հանձնաժողովի անդամներ են ընտրվում Հակոբ Պապիկյանը և Շեֆիզ բեյը (Գարասի)⁴⁶: Հավաքած ծայների քանակով Հակոբ Պապիկյանին զիջում էին Վարդգեսը, ապա Մուրադը (Համբարձում Բոյաջյան):

Ադանայի ջարդերի վերաբերյալ Օսմանյան խորհրդարանում մի պաշտոնագիր են կարդում մայիսի 10-ին: Այն ուղարկել էր վարչապետ Հիլմի փաշան: Պաշտոնագրի համաձայն, հանձնախմբի իր անդամությունից հրաժարվել էր Շեֆիզ բեյը, և անհրաժեշտ էր շտապ նոր ընտրություն կատարել՝ այն հաշվով, որ նոր ընտրված պատգամավորը նաև լիներ խառը հանձնախմբի նախագահ⁴⁷: Քվեարկությամբ ընտրվում է Յուսուֆ Քեմալ բեյը⁴⁸:

Մայիսի 11-ին խորհրդարանի նիստին ներկայանում է անձամբ վարչապետ Հիլմի փաշան և իր զեկուցման մեջ անդրադառնում է Ադանայի աղետի հետևանքների վերացման խնդրին: Մեծ վեճիորը նշում է, որ խորհրդարանի հաստատած 20000 ոսկի օգնությունը արդեն տեղ է հասել, որին գումարվել է ևս այդքան «զիրաաթ» գյուղատնտեսական բանկի կողմից՝ վերադարձնելու պայմանով: Նա շեշտում է նաև, որ Ադանայի կուսակալը և Ջեբել-Բերեքեթի մուֆասերիֆը պաշտոնանկ են եղել: Իսկ Մերսինի մուֆասերիֆը վարձատրվել է իր ենթակայության տակ գտնվող տարածքում աղետը կանխելու համար⁴⁹:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 250:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում, էջ 251:

Ադանայի դեպքերը քննող խորհրդարանական հանձնախմբի անդամներ Հակոբ Պապիկյանը և Յուսուֆ Քեմալը մայիսի 16-ին մյուս քննիչների հետ հասնում են Ադանա: Գործը հետաքննելուց հետո, երբ նրանք վերադառնում էին մայրաքաղաք, Իզմիրում «Իթթիհադ» և «Թասվիրի էֆքեար» թերթերի թղթակիցները հարցազրույց են վերցնում Պապիկյանից, և վերջինս նշում է, որ ոչ մի փաստ չի գտել սուլթան Աբդուլ Համիդի դեմ Ադանայի ջարդերի գործում⁵⁰: Ավելին՝ պատգամավորը նշում է, որ գործող կառավարությունն է Ադանայի կոտորածի պատճառ դարձել, իսկ տեղական իշխանությունը՝ հանցակից:

Հ. Պապիկյանը և Յուսուֆ Քեմալը զեկուցագրի հարցում հայտարարի չեն գալիս: Պապիկյանը իր տված հարցազրույցներում մերկացնում է ոճրի դրդապատճառները և հեղինակներին: Իսկ Յուսուֆ Քեմալը փորձել էր կոծկել իրականությունը և պաշտպանել իրական հանցագործներին: Եվ նրանցից յուրաքանչյուրը կազմում է իր զեկուցագիրը: Սակայն երկուսից և ոչ մեկի զեկուցագիրն էլ խորհրդարանում չի ընթերցվում: «Թասվիրի էֆքեար» թերթի 1909 թ. հունիսի 25-ի համարում լույս է տեսնում հատված Պապիկյանի հարցազրույցից:

Կիլիկիայի ջարդերին անդրադարձ է լինում խորհրդարանի հուլիսի 7-ի նիստում, որտեղ ընթերցվում է խորհրդարանի ֆինանսական հանձնաժողովի տեղեկագիրը Ադանայի կոտորածների մասին: Հանձնաժողովը հավանություն էր տվել քանդված ու այրված տների վերաշինության համար Ադանայի նահանգին 100.000 ոսկի տրամադրելու կառավարության առաջարկին: Հաջորդ օրը պատգամավոր Իսմայիլ Հազգը բեյը ներքին գործերի նախարարից պահանջում է բացատրություն տալ, թե ինչու՞ է ձերբակալվել «Իթթիհադ» («Չափավորություն») թերթի խմբագրապետը:

Հուլիսի 13-ի նիստում Իսմայիլ Հազգը բեյին պատասխանում են, որ խմբագիրը ձերբակալվել է ջարդին մասնակից լինելու մեղադրանքով: Պատգամավորին չի բավարարում պատասխանը, և մթնոլորտը շիկանում է: Հակոբ Պապիկյանը և Վարդգեսը զարմանք են հայտնում, որ պատգամավորին հուզում է այդ խմբագրի ճակատագիրը, մինչդեռ 21 հազար մարդ է սպանվել, և այդ մասին ոչ ոք չի խոսում⁵¹: Հազգըն պատասխանում է նրանց, որ այդքան մարդ սպանված լինելը Պապիկյանի երևակայության

⁵⁰ Նույն տեղում, էջ 297:

⁵¹ Նույն տեղում, էջ 305:

արդյունքն է, իսկ Թալեաթն ավելացնում է, թե ջարդերի մասին ստույգ տեղեկություն չկա, ինչը զայրացնում է Պապիկյանին:

Ինչպես ցույց են տալիս դեպքերի հետագա զարգացումները, Պապիկյանի հարցազրույցի հրապարակումը նոր իրավիճակ էր ստեղծել խորհրդարանում: Ամրապնդելով իրենց իշխանությունը՝ իթթիհատականներն այլևս չէին զգում հայերի աջակցության կարիքը խորհրդարանում և, հետևաբար, համառորեն պնդում էին Պապիկյանի հակառակ տեսակետը: Ավելին, երիտթուրքերի համար Պապիկյանը և նրա զեկուցագիրը դարձել էին իսկական գլխացավանք, ինչից նրանք ազատվեցին՝ Պապիկյանին և նրա զեկուցագիրը ֆիզիկապես ոչնչացնելով: 1909 թ. հուլիսի 20-ին Հակոբ Պապիկյանը «հանկարծամահ է լինում», իսկ նրա զեկուցագիրն անհետանում է: Մի քանի տարի անց հայերին հաջողվեց ձեռք բերել պատգամավորի զեկուցագրի սևագիրը, որն առաջին անգամ տպագրվեց 1913 թ. ապրիլի 25-ին, Փարիզում «Պրո Արմենիա» թերթի էջերում, ֆրանսերենով:

Ըստ զեկուցագրի՝

Ա. պատգամավորի գլխավոր եզրակացությունն այն էր, որ Ադանայի դեպքերի մեջ քրիստոնյաները որևէ մեղք չունեին: Իսկ սադրիչներն ու ջարդի հեղինակները եղել են տեղի թուրքերը:

Բ. Ջարդերի համար պատասխանատու է կենտրոնական կառավարությունը, իսկ տեղական իշխանությունը ուղղակի մեղսակից է:

Գ. Պատերազմական ատյանը, որ քննություն է կատարում Ադանայում, անաչառ չէ:

Դ. Հայերի և մյուս քրիստոնյաների կոտորածը իրականացվել է ամենագաղի մեթոդներով ու աներևակայելի դաժանությամբ⁵²:

Այն, որ պատերազմական ատյանը անաչառ չի գործել, երևում է ոչ միայն Պապիկյանի զեկուցագրից, այլև Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղած 1910 թ. հունվարի 13-ի նամակից, որտեղ մասնավորապես նշվում է. «...Մեծ եղաւ մեր զարմանքը՝ իբր Կիլիկիոյ զանազան վայրերէն մեզ ուղղուած գիրեր կը գրուեին ոչ միայն ոճրագործներու մեծաւ մասամբ անպատիժ թողուիլը, այլև նոյնիսկ աղետեալ հայերէն շատերու բանտարկուիլը...: Ատանայի մէջ կախաղան կհանուէին քանի մը թուրքերու հետ նաև եօթն հայեր»⁵³:

⁵² Նույն տեղում, էջ 301:

⁵³ Հայաստանի ազգային արխիվ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, ց. 5, գ. 14, թ. 1:

Կիլիկիայի ջարդերի մեջ իրենց դերն ունեցան մի քանի հանգամանքներ, որոնց մեջ կարևոր են հետևյալները՝

1. կայսրությունում և բուն Կիլիկիայում վարչական ղեկավարության հետադիմական հայացքները և հայատյացությունը,

2. Կիլիկիայի թուրք և քուրդ բնակչության հետամնացությունը և կրոնական մոլեռանդությունը,

3. երիտթուրք մի շարք ղեկավարների որդեգրած տմարդի քաղաքականությունը հայ ժողովրդի և խորհրդարանի՝ իրենց գործընկերների նկատմամբ:

Ինչպես տեսնում ենք, հայ պատգամավորներից շատերը հակված էին մտածելու, որ այդ ջարդերը կազմակերպված դավադրության արդյունք են, սակայն միաժամանակ գիտակցում էին, որ միակ ելքը սահմանադրության շրջանակում պայքարելն է իրենց իրավունքների համար: Հատկապես պետք էր հաշվի առնել այն հանգամանքը, որ սուլթանի հեղաշրջման փորձը ձախողելուց հետո երիտթուրքերի դիրքերն ավելի էին ամրապնդվել: Բացի այդ, երիտթուրքերը կիլիկիահայերի ջարդերի հետ անմիջական կապ են ունեցել: Դրա մասին են խոսում ոչ միայն կանոնավոր բանակի կողմից երկրորդ ջարդի կազմակերպումը, այլև իթթիհատականների մղած համառ պայքարը խորհրդարանում Պապիկյանի տեսակետի կողմնակիցների դեմ, և, վերջապես, նրանց իրականացրած «արդարադատությունը» Կիլիկիայում:

Այնուամենայնիվ, հայ պատգամավորներից մի քանիսի անզիջում պայքարը խորհրդարանում անարդյունք չմնաց: Ի վերջո, ոչ միայն հանձնախումբ կազմվեց գործերը քննելու համար և օգնություն ուղարկվեց Ադանայի աղետյալներին, այլև պատժվեցին որոշ պաշտոնյաներ, որոնք անմիջական կապ ունեին այդ ջարդերի կազմակերպման և իրականացման հետ: Իսկական բացահայտում էր Հակոբ Պապիկյանի ֆենոմենը: «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամը, կտրված լինելով իր ժողովրդից, բացահայտեց Ադանայի ջարդերի իրական պատկերը, կազմեց մի զեկուցագիր, որն իր կյանքի գինն արժեցավ:

ВОПРОС РЕЗНИ КИЛИКИЙСКИХ АРМЯН В ОСМАНСКОМ ПАРЛАМЕНТЕ

МАРТИРОСЯН Н.М.

Резюме

Одной из самых трагических страниц армянской истории является резня армянского населения Киликии в апреле 1909 года. 30000 армян были уничтожены в течение нескольких дней. Армянские депутаты полагали, что эти массовые убийства являются результатом организованного заговора. Однако в то же время они осознали, что единственным выходом из данной ситуации может быть лишь борьба за свои права в рамках конституции. Борьба армянских депутатов в парламенте увенчалась успехом. Был создан комитет по рассмотрению резни в Адане и организована помощь пострадавшим, а также были наказаны некоторые должностные лица, непосредственно участвовавшие в организации резни.

THE PROBLEM OF THE MASSACRES OF THE ARMENIANS OF CILICIA IN THE OTTOMAN PARLIAMENT

N. MARTIROSYAN

Abstract

The most tragic pages of Armenian history are the massacres of the Armenians in Cilicia in April 1909. 30,000 Armenians were massacred during a few days. Armenian deputies were inclined to think that the massacres were the result of an organized conspiracy, however, soon realized that their only way was struggle in the field of constitution. Armenian deputies' uncompromising struggle didn't go in vain in parliament. Not only a committee was formed for researching the cases of Adana and an aid was sent to victims, but also some officials were punished for being involved in organizing the massacres.

ԹՈՒՐԹ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՐ

ԱՐՇԱԿՅԱՆ Գ.Մ.

ԽՍՀՄ-ի փլուզումը և թուրք-ռուսական հարաբերությունների վերաձևավորումը: ԽՍՀՄ-ի փլուզումը և Հարավային Կովկասում ինքնիշխան պետությունների ի հայտ գալը հիմնարար կերպով փոխեցին Թուրքիայի արտաքին քաղաքականությունը: «Սառը պատերազմի» ժամանակաշրջանի կանոնների փոփոխության և Թուրքիայի համար աշխարհաքաղաքական նոր զարգացումների պայմաններում նրա արտաքին քաղաքականությունը ենթարկվեց կտրուկ շրջադարձի, վերանայվեց նրա տեղն ու դերը աշխարհում ընդհանրապես և տարածաշրջանում՝ մասնավորապես: Հարավային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն էր ներկայացնում Թուրքիայի համար: Ուստի Թուրքիան սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու այնտեղ:

Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության ակտիվացման պատճառներն էին ԽՍՀՄ-ի փլուզումը և նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների անկախացումը, ինչը Թուրքիայի ղեկավարությանը հիմք էր տալիս կարծելու, թե Ռուսաստանի հարավային սահմաններում գոյացել է քաղաքական վակուում: 1990-ականներին այդ վակուումը լցնելու համար ԱՄՆ-ի կողմից առաջ քաշվեց «թուրքական մոդելի» գաղափարը, որի միջոցով նա ցանկանում էր իր ամենավստահելի դաշնակիցներից մեկի՝ Թուրքիայի օգնությամբ ոչ միայն վերացնել իրանական սպառնալիքը հետխորհրդային տարածաշրջանում, այլև օգտագործել Թուրքիան՝ հասնելու իր գլխավոր նպատակներից մեկին՝ հնարավորինս թուլացնելու Ռուսաստանի ազդեցությունը նորաստեղծ ԱՊՀ տարածաշրջանում¹:

¹ **Kramer H.** *Will Central Asia Become Turkey's Sphere of Influence? Perceptions (Journal of International Affairs, March-May, 1996, pp. 2-6).*

Ինչպես նշում է թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանն ու Թուրքիան հայտնվեցին որակապես նոր աշխարհաքաղաքական իրադրության մեջ, որի հիմնական գծերը հետևյալն էին.

1. առաջին անգամ հարյուրամյակների ընթացքում (եթե հաշվի չառնենք 1918-1920 թթ.) նրանք այլևս չունեին ցամաքային սահման՝ որպես միջանկյալ գոտի ունենալով Հարավային Կովկասը,

2. տասնամյակների ընթացքում առաջին անգամ այլևս չէին պատկանում պատերազմող կամ հակամարտող ռազմաքաղաքական դաշինքների,

3. Ռուսաստանը, սրընթաց կորցնելով ռազմատնտեսական ներուժը, գաղափարական առանցքը և քաղաքական կամքը, ի վիճակի չէր իր աշխարհաքաղաքական ազդեցության ոլորտում պահել նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող տարածաշրջանները, այդ թվում նաև Հարավային Կովկասն ու Կենտրոնական Ասիան²:

Այսպիսով, սկզբնական փուլում ելնելով պանթյուրքիզմի գաղափարաքաղաքական հիմնադրույթներից՝ Թուրքիան պանթյուրքիստական իր նպատակները քողարկում էր նախկին ԽՍՀՄ-ի մահմեդական հանրապետություններում «թուրքական մոդելի» տարածման անհրաժեշտությամբ:

Մինչդեռ իրականում Ռուսաստանի արտաքին քաղաքականության նոր դոկտրինում առանձնահատուկ կերպով ընդգծվում էր Կովկասի և Կենտրոնական Ասիայի նշանակությունը Ռուսաստանի համար, և վերջինը պետք է ավելի ակտիվ դեր խաղար վերոհիշյալ տարածաշրջանների անվտանգության հարցում և տնտեսական հարաբերություններում³: Մասնավորապես, 1994 թ. փետրվարին Ռուսաստանի ԱԳ նախարար Ա. Կոզիրևը նշեց. «Մենք չենք կարող հեռանալ հարավկովկասյան տարածաշրջանից այսքան հեշտությամբ: Մենք պատմական և աշխարհաքաղաքական շահեր ունենք այստեղ»⁴: Այսպիսով, ակնհայտ դարձավ, որ Հարավային Կովկասը դառնալու էր թուրք-ռուսական աշխարհաքաղաքական մրցակցության թատերաբեմ:

² **Սաֆրաստյան Ռ.**, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադար (21-րդ դար, 2005, N 4, էջ 35):

³ **Allison R.** *Military Forces in the Soviet Successor States*, Adelphi Paper 280 (London, for the International Institute for Strategic Studies, 1993, p. 40).

⁴ **Brzezinski Z. and Sullivan P.** *Russia and Commonwealth of Independent States: Documents, Data, and Analysis*, New York, 1997, pp. 145-146.

1990-ական թթ. առաջին կեսին թուրք-ռուսական հարաբերություններն ունեին խիստ անկայուն բնույթ, ինչը պայմանավորված էր նրանց միջև աշխարհառազմավարական սուր հակամարտությամբ: Թուրքիան օգտագործում էր իր տրամադրության տակ գտնվող բոլոր հնարավորությունները (բացի ուղղակի ռազմական միջամտությունից՝ սկսած տնտեսականից, վերջացրած քարոզչությամբ)՝ ոչ միայն Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում, այլ նաև Հյուսիսային Կովկասում, առաջին հերթին՝ Չեչնիայում, ինչպես նաև Ռուսաստանի թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված այլ տարածքներում իր ազդեցությունը տարածելու համար: Փորձելով հակազդել Թուրքիայի աճող ներգրավվածությանը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ու նրան ստիպել սահմանափակել ակտիվությունն այդ տարածաշրջաններում՝ Ռուսաստանը սկսեց բացահայտորեն խաղարկել «քրդական քարտը»⁵:

ԽՍՀՄ-ի փլուզմամբ խախտվեց գոյություն ունեցող հաշվեկշիռը ռուս-թուրքական հարաբերություններում, որի հետևանքով այդ հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ, և անհրաժեշտություն առաջացավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև նոր իրավապայմանագրային հարաբերություններ հիմնել: Այդ ուղղությամբ երկու երկրներն էլ սկսեցին քայլեր ձեռնարկել: 1992 թ. հունվարի 20-22-ին տեղի ունեցավ Թուրքիայի ԱԳ նախարար Հ. Չեթինի այցը Մոսկվա, որին հաջորդեց փետրվար ամսին Ռուսաստանի ԱԳ նախարար Ա. Կոզիրևի այցը Անկարա: Այս հանդիպումների շնորհիվ հող պատրաստվեց ռուս-թուրքական հիմնարար պայմանագրի ստորագրման համար, որը տեղի ունեցավ 1992 թ. մայիսի 25-26-ին Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի՝ Մոսկվա պաշտոնական այցի ժամանակ: Այս այցի շրջանակում ստորագրվեց «Թուրքիայի Հանրապետության և ՌԴ-ի միջև հարաբերությունների սկզբունքներին առնչվող պայմանագիրը»⁶: Այս պայմանագիրը երկու երկրների միջև հարաբերությունների

⁵ Ավելի մանրամասն տե՛ս **Olson R.** *Turkish and Russian Foreign Policies, 1991-1997: The Kurdish and Chechnya Questions (Journal Of Muslim Minority Affairs, Vol. 18, Issue 2, October 1998, p. 214).*

⁶ **Gajendra S.** *Russian bear calls on gray wolf, Asia Times Online, 31.08.2004, http://www.atimes.com/atimes/Central_Asia/FH28Ag01.html*

իրավական հիմքը դարձավ, որտեղ նաև պատրաստակամություն էր ցուցաբերվում բարելավել այդ հարաբերությունները⁷:

1993 թ. փետրվարի 28-ին Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը հայտարարեց, թե եկել է ժամանակը, երբ միջազգային կազմակերպությունները, ներառյալ ՄԱԿ-ը, պետք է Ռուսաստանին տրամադրեն նախկին ԽՍՀՄ-ի տարածքում խաղաղություն և կայունություն երաշխավորողի արտակարգ լիազորություններ⁸: Իր հերթին, 1993 թ. Ռուսաստանի ԱԳ նախարար Ա. Կոզիրևը հայտարարեց, որ Հարավային Կովկասը Ռուսաստանի համար հատուկ հետաքրքրությունների, հատուկ պատասխանատվության տարածաշրջան է⁹: Թուրք-ռուսական հարաբերությունների բարելավմանն էր ուղղված 1993 թ. մարտի 1-ին Հ. Չեթինի պաշտոնական այցը Մոսկվա և հատկապես 1993 թ. սեպտեմբերի 8-9-ին Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերի պաշտոնական այցը Մոսկվա, որի ժամանակ ստեղծվեցին համատեղ կոմիտեներ և աշխատանքային խմբեր հեռահաղորդակցության, արդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների փոխանակման բնագավառներում¹⁰:

Հարկ է նշել, որ 1990-ական թվականների երկրորդ կեսից երկու երկրների միջև հարաբերություններում գերակայող էին կայունացման միտումները: Դրանց սկիզբը կարելի է համարել 1995 թ. ստորագրված անվտանգության մասին համաձայնագիրը, որը նախատեսում էր կազմակերպված հանցագործությունների և ահաբեկչության դեմ պայքարում երկու երկրների միջև համագործակցության հաստատում¹¹: Իր հակառուսական ուղղվածությունը պահպանելով հանդերձ՝ թուրքական տարածաշրջանային քաղաքականության ռազմավարությունը կորցրեց նախորդ տարիների ագրեսիվությունը: Թուրքիայի ղեկավարության համար ակնհայտ դարձավ պանթյուրքիստական գաղափարների վրա հիմնված

⁷ **Cafersoy N.** *Türkiye-Rusya Federasyonu Avrasya Stratejik Diyalog Toplantisi (Avrasya Stratejik Araştırmalar Merkezi, Ankara, 2003, s. 75).*

⁸ **Վաալ դե Թ.**, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը՝ խաղաղության և պայքարազմի միջով, Ե., 2007, էջ 326, **Brzezinski Z. and Sullivan P.**, նշվ. աշխ., էջ 145; **Tuncer I.** *The Security Policies of the Russian Federation: The "Near Abroad" and Turkey (Turkish Studies, vol. 1, № 2, Autumn 2000, p. 104).*

⁹ **Ekedahl M.C. and Goodman A.M.** *The Wars of Eduard Shevardnadze, Pennsylvania: The Pennsylvania State University Press, 1997, p. 258.*

¹⁰ **Gajendra S.**, նշվ. աշխ.:

¹¹ **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 38:

քաղաքականության անարդյունավետությունը: Բացի այդ, չունենալով անհրաժեշտ տնտեսական ներուժ և չդիմանալով այլ արտաքին ուժերի հետ մրցակցությանը՝ Թուրքիան ստիպված էր հրաժարվել իր հավակնոտ ծրագրերից Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Ինչ խոսք, դա հանգեցրեց Ռուսաստանի հետ մրցակցության մեղմացմանը և նախադրյալների ստեղծեց թուրք-ռուսական հարաբերությունների հետագա զարգացման համար: Թուրք-ռուսական հարաբերությունների առանձնահատկությունն այն էր, որ այդ հարաբերությունները զարգանում էին, մի կողմից, աշխարհաքաղաքական մրցակցության, մյուս կողմից, տնտեսական աննախադեպ համագործակցության պայմաններում: Առավել ակտիվ էին զարգանում երկկողմ առևտրային հարաբերությունները: Իսկ մրցակցության հիմնական պատճառը աշխարհաքաղաքական շահերն էին, կար նաև տնտեսական այնպիսի շարժառիթ, ինչպիսին է էներգետիկ գործոնը¹²:

Չնայած տնտեսական աշխույժ համագործակցությանը՝ քաղաքական հարաբերություններում առկա լարվածությունը հանգեցրեց երկու երկրների միջև անվստահության մթնոլորտի ձևավորմանը: Հենց քաղաքական հարաբերությունների անկայուն բնույթի հետևանքով էլ, 1990-ական թվականներին ի հայտ եկան մի շարք քաղաքական լուրջ հակասություններ, որոնք լարվածության մեջ էին պահում երկկողմ հարաբերությունները: Կովկասյան տարածաշրջանում թուրք-ռուսական մրցակցության թատերաբեմում հիմնականում հայ-ադրբեջանական և վրաց-աբխազական հակամարտություններն էին, 1990-ականներին ռուսական ռազմակայանների հիմնումը Վրաստանում և ՀՀ-ում, որը Թուրքիայի կողմից դիտվում էր իբրև Եվրոպայում սովորական գինված ուժերի մասին պայմանագրի խախտում, չեչենական և քրդական գործոններն էին, ինչպես նաև կասպիական նավթի արտահանման ուղիների շուրջ թուրք-ռուսական մրցապայքարը: Երկու երկրների միջև առկա լուրջ հակասությունների մասին է վկայում այն փաստը, որ 1999 թ. Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիրի՝

¹² Larrabee F.S., Lesser L.O. *Turkish foreign policy in the age of uncertainty*, Santa Monica, CA: RAND Corporation, 2003, p 112.

Մոսկվա կատարած այցի ժամանակ Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը հրաժարվեց հանդիպել նրա հետ¹³:

Հարկ է նշել, որ չնայած քաղաքական լուրջ տարաձայնություններին, երկկողմ տնտեսական հարաբերությունները շարունակում էին արագ տեմպերով զարգանալ, և այդ հանգամանքը յուրահատուկ խթանիչի դեր էր խաղում՝ երկու երկրների միջև առկա քաղաքական հակամարտությունները հարթելու համար: 1997 թ. սկսած՝ ռուս-թուրքական տնտեսական հարաբերությունների խորացումը նոր թափ առավ, որի անմիջական վկայությունն էր նույն թվականի դեկտեմբերին Ռուսաստանի վարչապետ Վ. Չեռնոմիրդինի այցը Թուրքիա: Օրակարգի կարևոր կետերից էր երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման հեռանկարների քննարկումը: Հենց այս այցից հետո էր, որ պաշտոնական Թուրքիան ու Ռուսաստանը երկկողմ հարաբերությունները սկսեցին բնութագրել որպես «ռազմավարական գործընկերություն»¹⁴: Այցի ընթացքում ստորագրվեց համաձայնագիր՝ համատեղ էներգետիկ ծրագիր իրականացնելու վերաբերյալ, որը կրում էր «Երկնագույն հոսք» (Blue Strem) անվանումը: Այս ծրագիրը նախատեսում էր Սև ծովի հատակով ռուսական գազը մղել դեպի Թուրքիա: «Երկնագույն հոսք» նախագիծը առաջիկա մի քանի տարիների ընթացքում դարձավ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական խթանիչը:

1999 թ. նոյեմբերին Բ. Էջևիրթի այցը Մոսկվա առանցքային նշանակություն ունեցավ թուրք-ռուսական մերձեցման համար: Թուրքիան փոխեց իր դիրքորոշումը չեչնական հարցում՝ այն դիտարկելով որպես Ռուսաստանի ներքին խնդիր, իսկ ռուսական կողմը, իր հերթին, խոստացավ հետայսու չաջակցել քրդական շարժմանը: Այս այցելությունը ճանապարհ հարթեց գալիք տասնամյակում հարաբերությունների բարելավման ու զարգացման համար¹⁵:

2001 թ. սեպտեմբերի 11-ին Միացյալ Նահանգների վրա կատարված ահաբեկչական հարձակումից հետո համաշխարհային հանրությունը կենտ-

¹³ **Gafarli O.** *Russian Foreign Policy in Light of Changing Balances in the Middle East* (Turkish Policy Quarterly, Vol. 10, Number 4, p. 147).

¹⁴ **Aras B.** *Türkiye ve Rusya Federasyonu: Çok boyutlu ortaklık*, - SETA Analiz, Sayı: 10, Ağustos 2009, s. 5; **Kohen S.** "Bir 'Stratejik Ortaklık' Daha", *Milliyet*, 17 Aralık 1997.

¹⁵ **Магтиеv А.** *Встреча Эджевита в целом прошла успешно. Независимая газета.* 6 ноября, 1999 г., http://www.ng.ru/world/1999-11-06/6_meeting.html

րոնացավ ահաբեկչության դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտության վրա: Ահաբեկչությունը իր ազդեցությունն ունեցավ նաև թուրք-ռուսական հարաբերությունների վրա, ինչի առիթով, 2001 թ. նոյեմբերի 16-ին Թուրքիայի և Ռուսաստանի արտգործնախարարներ Իսմայիլ Ջեմը և Իգոր Իվանովը Նյու Յորքում ստորագրեցին փաստաթուղթ, որը Եվրասիայում համագործակցության կարգավորման համար անհրաժեշտ գործողությունների պլան էր: Այն ընդգծում էր կառուցողական գործընկերության ուժեղացման անհրաժեշտությունը¹⁶:

Ըստ էության, աշխարհաքաղաքական նոր իրողությունները Եվրասիայում Թուրքիային և Ռուսաստանին ստիպեցին գտնելու համագործակցության և գործընկերության նոր հորիզոններ՝ մասնավորապես համատեղ պայքարելու միջազգային ահաբեկչության դեմ¹⁷: Դրանով Եվրասիական երկու հզոր տերություններն արձագանքեցին ԱՄՆ-ի՝ դեռևս սաղմնային տեսքով արտահայտված՝ իսլամական ահաբեկչության դեմ պայքարի պատճառաբանությամբ, Եվրասիական տարածաշրջանում ազդեցության ոլորտներն ընդլայնելու նկրտումներին: Դրանք հարավկովկասյան տարածաշրջանում իրականություն դարձան 2002 թ. գարնան ամիսներին, երբ Վրաստան եկան ամերիկյան ռազմական խորհրդատուներ: Ռուսաստանի հակազդեցությունը դրան խիստ բացասական էր և աղմկալից: Թուրքիայի դիրքորոշումը նույնպես բացասական էր, սակայն ոչ այնքան հստակ արտահայտված, որքան Ռուսաստանինը¹⁸:

Ակնհայտ է, որ ամերիկացիները նախընտրեցին չօգտվել թուրքերի աջակցությունից և որոշեցին ապահովել իրենց անմիջական ռազմական ներկայությունը՝ թեպետև խորհրդանշական ձևով: Այսպիսով՝ հարավկովկասյան տարածաշրջանում սկիզբ դրվեց ԱՄՆ-ի նոր ռազմավարությանը, որի նպատակն է արագացված տեմպերով իր օգտին փոխել վերջին տարիներին հաստատված ուժերի հաշվեկշիռը: Վրաստանի «վարդերի հեղափոխությունը» հաստատեց այդ բնութագիրը:

¹⁶ **Զարգարյան Ա.**, Ռուս-թուրքական հարաբերությունները և Հարավային Կովկասի երկրները (1997-2008 թթ.), <http://www.slideshare.net/wwwartak/artak-zargaryan-turkish-russian-relations-and-the-south-caucasus>.

¹⁷ **Moustakis F. & Ackerman Ella**, September 11: A Dynamic for Russo-Turkish Cooperation or Conflict? (Central Asian Survey, Vol. 21, Issue 4, 2002, p. 431).

¹⁸ **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 40:

Այսպիսով, Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ Ռուսաստանը սկսեց հայտնվել ավելի շատ գործընկերոջ, քան մրցակցի դերում: Ավելին, թուրք քաղաքական գործիչները սկսեցին շեշտադրում անել Ռուսաստանի հետ քաղաքական ու տնտեսական համագործակցության հետագա խորացման վրա: Թուրքիայի քաղաքական վերնախավը հենց Ռուսաստանի մեջ էր տեսնում այն հավանական գործընկերոջը, որի շնորհիվ կարելի էր ապահովել կայունություն ու խաղաղություն եվրասիական ողջ տարածաշրջանում: Իր ելույթներից մեկում վարչապետ Ռ. Էրդողանը Ռուսաստանը բնութագրեց որպես «կարևոր գործընկեր՝ առևտրի, կապիտալ ներդրումների, տուրիզմի և էներգետիկ անվտանգության զարգացման տեսանկյունից»¹⁹:

Թուրք-ռուսական առևտրատնտեսական և ռազմատեխնիկական հարաբերությունը՝ որպես ռազմավարական հարաբերությունների ձևավորման գրավական: Թեև Հարավային Կովկասում թուրք-ռուսական հարաբերություններում տարածայնությունները և մրցակցությունը մի շարք հիմնահարցերի շուրջ լուրջ բնույթ էին կրում, այնուամենայնիվ, կային մի շարք ոլորտներ, որտեղ Թուրքիան և Ռուսաստանը բավական սերտորեն համագործակցում էին: Թուրք-ռուսական հարաբերությունները աննախադեպ զարգացում էին ստացել հատկապես առևտրատնտեսական ոլորտում, ինչպես նաև լուրջ նախադրյալներ էին ստեղծվել թուրք-ռուսական ռազմական համագործակցության և ահաբեկչության դեմ պայքարում երկկողմ հարաբերությունների էական զարգացման համար:

Առևտրատնտեսական հարաբերությունների բուռն զարգացումը, որն արձանագրվել էր դեռևս նախորդ տարիներին, 1990-ական թվականների երկրորդ կեսից սկսեց վերածվել աշխարհառազմավարական գործոնի և այս հարթությունում կայունացնող դեր կատարել: Ի հայտ եկան մի շարք նոր երևույթներ, ինչպիսիք էին միլիարդների հասնող «ճամպրուկային առևտուրը» և թուրքական հսկայական ներդրումները Ռուսաստանի մի շարք՝ մասնավորապես շինարարական, բանկային, առևտրի, սննդի և այլ ոլորտներում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի համար խիստ էական էր տնտեսական սերտ կապերի հաստատումը Ռուսաստանի հետ, քանզի ռուսական շուկան մեծ կարևորություն էր ներկայացնում թուրքական կազմակերպությունների համար ինչպես ներդրումներ կատարելու, այնպես էլ

¹⁹ Akgün M. *Rusya'nın Önemi, Referans, 1 Eylül 2008.*

թուրքական ապրանքների ու ծառայությունների մատուցման գործում: Ուստի պատահական չէ, որ եթե, ըստ պաշտոնական տվյալների, 1992 թ. Թուրքիայի արտահանումը Ռուսաստան կազմել էր 441.9 մլն դոլար, ապա 1995 թ. թուրքական արտահանման թիվը հասել էր 1,238 մլրդ դոլարի²⁰:

Հատկանշական է, որ մինչև 1998 թ. Ռուսաստանի տնտեսական ճգնաժամը թուրք-ռուսական ապրանքաշրջանառության տեմպերը աճել էին: Այդ մասին են խոսում պաշտոնական տվյալները, համաձայն որոնց, 1995 թ. երկու երկրների միջև պաշտոնական ապրանքաշրջանառությունը կազմել էր 3.3 մլրդ դոլար, ապա 2000 թ. այն 4.5 մլրդ դոլար էր²¹: Անհրաժեշտ է հիշատակել, որ 1990-ական թվականների սկզբից թուրքական մի շարք կազմակերպություններ ակտիվորեն ներգրավվեցին ռուսական շուկայում և մատուցում էին մի շարք ծառայություններ: Այսպես, մինչև 1998 թ. ռուսական տնտեսական ճգնաժամը թուրքական ավելի քան 145 կազմակերպություն ՌԴ-ում իրականացրել է 712 նախագիծ՝ մոտ 12,8 մլրդ դոլար արժողությամբ, ինչը վկայում է թուրքական կազմակերպությունների ակտիվ գործունեության մասին²²: Հավելենք, որ եթե սկզբնական շրջանում ներդրումները կատարվում էին հիմնականում շինարարական ոլորտում, ապա 1990-ական թվականների կեսերից դրանց հոսքն ուղղվեց նաև այլ՝ մասնավորապես բանկային, տուրիզմի, տեքստիլի, գարեջրի արտադրության և այլ ոլորտներ: Այսպես, ըստ թուրքական աղբյուրների, 2001 թ. տվյալներով, Մոսկվայի բանկային համակարգում «Յափի Կրեդի» բանկը թուրքական ամենահաջողակ կազմակերպություններից էր, որոնք իրենց ծառայությունների 70%-ը մատուցում էին ռուսական կազմակերպություններին: Ռուսաստանում մեծ հաջողությամբ գործում էր նաև թուրքական «Էֆես Փիլսեն» ընկերությունը, որը տնօրինում էր Մոսկվայի գարեջրի շուկայի 2%-ը²³:

²⁰ **Kaya K.** *Turkish Policy Over Central Asia, ICTS (Italian Center for Turkish Studies) (Occasional Papers Series, № 01, 2008, p. 15).*

²¹ **Babali T.** *Turkey at the Energy Crossroads: Turkey, Present and Past (Middle East Quarterly, Vol. 16, Number 2, Spring 2009, p. 27); Հարությունյան Ս., Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների շուրջ (Հանրապետական, 2009, N 6 (70), էջ 12):*

²² **Şen Cihangir G.** *"Türkiye-Rusya Federasyonu Ekonomik ve Ticari İlişkileri", Association of Russian-Turkish Businessmen (RTIB), <http://www.rtbnet.com/contents.php?cid=19>*

²³ *Turkish Daily News, 18.07.2001.*

Թուրք-ռուսական տնտեսական հարաբերությունների ամենամեծ և ամենադինամիկ զարգացող ոլորտներից էր «ճամպուրկային առևտուրը» (Թուրքիա հանգստանալու մեկնող ռուս տուրիստները հայրենիք վերադառնալիս իրենց հետ ճամպուրկներով բերում էին բազմաթիվ ապրանքներ): 1990-ականներին «ճամպուրկային առևտուրը» ինտենսիվորեն սկսեց զարգանալ: Մասնավորապես, բազմաթիվ ռուս տուրիստներ կարճ ժամանակով չարտերային թռիչքներով մեկնում էին Ստամբուլ, գնում էին թուրքական ապրանքներ, այնուհետև դրանք վերավաճառում էին ռուսական շուկայում: Մի շարք հետազոտողների տվյալներով, 1990-ական թվականներին Թուրքիայի և Ռուսաստանի միջև «ճամպուրկային առևտրի» ծավալները հասել են 2-3 մլրդ դոլարի²⁴: 1990-ական թվականների սկզբից Թուրքիան ռուս տուրիստների ամենանախընտրելի վայրերից էր: 2002 թ. տուրիզմի բնագավառում Ռուսաստանից ստացած Թուրքիայի եկամուտը կազմել է 700 մլն դոլար՝ ընդունելով մոտ 300 հազար ռուս տուրիստների. դրա շնորհիվ 2002 թ. Ռուսաստանը դարձավ Գերմանիայից և Մեծ Բրիտանիայից հետո երրորդ երկիրը Թուրքիա ուղարկած իր տուրիստների թվաքանակով²⁵:

1990-ական թվականների երկրորդ կեսից աննախադեպ աճ էր արձանագրվել նաև երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին էր ռուսական գազի առաքումը Թուրքիա: Այս առումով հսկայական նշանակություն ունեցավ վերոնշյալ «Երկնագույն հոսք» բազմամիլիարդանոց գործարքը: Գազատարի կառուցումը Սև ծովի հատակով կապահովեր ռուսական գազի անմիջական առաքումը Թուրքիա:

Թե՛ Ռուսաստանը և թե՛ Թուրքիան բավական լուրջ քաղաքական և տնտեսական շահեր էին հետապնդում «Երկնագույն հոսք» գազամուղի կառուցմամբ: Մոսկվայի քաղաքական և տնտեսական գլխավոր նպատակն էր էներգետիկ կախվածության մեջ պահել ոչ միայն Թուրքիային, այլ նաև ողջ հարավ-արևելյան Եվրոպային: Քանի որ Ռուսաստանը չէր կարող մրցակցել ԱՄՆ-ի հետ, որպես անվտանգություն ապահովող ուժ և տարա-

²⁴ Хилл Ф., Таспинар О. *Россия и Турция на Кавказе: сближение ради сохранения статус-кво?*, М., 2006, с. 7.

²⁵ Gürtuna A. *Turkish-Russian Relations in the Post Soviet Era: From Conflict to Cooperation*, Thesis of Master in International Relations submitted to The Graduate School of Social Sciences, Middle East Technical University, January 2006, p. 85.

ծաշրջանային գերտերություն, նա նախատեսում էր «Երկնագույն հոսքի» միջոցով դառնալ հիմնական էներգետիկ մատակարարը թե՛ հարավարևելյան Եվրոպայի և թե՛ ողջ Եվրամիության համար²⁶։ Բացի այդ, Ռուսաստանի համար այս նախագծի քաղաքական նպատակներից էր կանխել մրցակից երկրների ջանքերը՝ օգտագործելու Թուրքիայի տարածքը Միջին Արևելքից և Կասպիական տարածաշրջանից գազը Եվրոպա հասցնելու համար։

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա վերջինը, 1990-ականներից սկսած, հսկայական ջանքեր էր գործադրում՝ տարածաշրջանային կենտրոններից մեկը դառնալու համար։ Թուրքիայի կառավարությունը միշտ էլ շահագրգռված է Եվրոպա, մասնավորապես Հունաստան, Բուլղարիա, Իտալիա և Բալկաններ բնական գազն իր տարածքով արտահանելու գործում։ Ըստ էության, «Երկնագույն հոսքի» կառուցումը բխում էր Ռուսաստանի և Թուրքիայի ռազմավարական շահերից։ Ռուսաստանը Թուրքիային կապող 1213 կմ երկարությամբ գազամուղն իր բնույթով եզակի է, քանզի աշխարհի ամենամեծ ստորջրյա գազամուղն է, որով տարեկան փոխադրվելու է շուրջ 16 մլրդ խորանարդ մետր գազ²⁷։ Հավելենք, որ այն ռուսական բնական գազն անմիջականորեն Սև ծովի հատակով մատակարարում է Թուրքիա՝ խուսափելով երրորդ երկրների հետ առնչվելուց։ Այն նաև նոր՝ լրացուցիչ գազամուղ է, ի հավելումն արդեն տարիներ ի վեր գոյություն ունեցողի, որն անցնում է Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի և Բուլղարիայի վրայով։ Այս նախագծի իրագործման պարագայում Թուրքիայի կախվածությունը ռուսական գազից անհամեմատ մեծանալու է։ «Երկնագույն հոսք» նախագծի ամբողջ ծավալով իրականացումից հետո Թուրքիան դառնում էր Գերմանիայից հետո ռուսական գազը ներկրող երկրորդ ամենամեծ երկիրը²⁸։

«Երկնագույն հոսք» գազամուղի կառուցման վերաբերյալ Ռուսաստանի և Թուրքիայի միջև միջպետական պայմանագիրը ստորագրվեց

²⁶ *Economic Brief: The Blue Stream Gas Pipeline, Power and Interest News Report (PINR)*, 22.11.2005, www.pinr.com/report.php?ac=view_report&report_id=403&language_id=1

²⁷ *Project: Blue Stream Natural Gas Pipeline*, www.rigzone.com/data/projects/project_detail.asp?project_id=86

²⁸ Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Ե., 2009, էջ 138։

1997 թ. դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի վարչապետ Վ. Չեռնոմիրոդինի՝ Թուրքիա կատարած այցի շրջանակում: Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Մ. Յըլմազը հայտարարեց, որ Թուրքիան ցանկանում է քննարկել ցանկացած հարց և նախընտրում է համագործակցել, քան թե մրցել իր մեծ հարևանի հետ: Իր հերթին, Վ. Չեռնոմիրոդինն ընդգծեց, որ եթե Թուրքիան սեղմի Ռուսաստանի մեկնած ձեռքը, ապա իրենք տնտեսական ոլորտում XX դարում կդառնան ռազմավարական գործընկերներ: «Մենք ի վիճակի կլինենք միասին ավելի շատ բան անել երրորդ երկրներում և աջակցել տարածաշրջանի կայունությանը և խաղաղությանը»²⁹:

Ըստ ձեռք բերված պայմանավորվածության, «Գազպրոմ» ընկերությունը թուրքական «Բոթաշ» ընկերության հետ կնքել էր կոմերցիոն պայմանագիր, ըստ որի, «Գազպրոմը» պարտավորվում էր 25 տարվա ընթացքում մատակարարել 365 մլրդ խորանարդ մետր գազ: Գազամուղի ընդհանուր արժեքը կազմում է 3.2 մլրդ դոլար՝ ներառյալ ծովային հատվածի կառուցման համար նախատեսված 1.7 մլրդ դոլարը³⁰:

Ընդգծենք, որ «Երկնագույն հոսք» նախագիծը լուրջ քննադատության և դժգոհության արժանացավ ԱՄՆ-ի կողմից, որը դեմ լինելով այդ նախագծի իրականացմանը՝ մեծ ջանքեր էր գործադրում՝ խափանելու գործարքը: Սակայն նաև փաստենք, որ Թուրքիան, չնայած ԱՄՆ-ի հզոր ճնշմանը, այնուամենայնիվ, բարեհաջող ավարտի հասցրեց ռուս-թուրքական բանակցությունները՝ համաձայնելով իրականացնել Թուրքիայի համար հսկայական նշանակություն ունեցող այս նախագիծը: Այն քննադատվեց նաև Թուրքիայի որոշ շրջանակների կողմից, որոնք դա դիտում էին որպես մրցակից տրանսկասպիական գազամուղին, որով նախատեսվում էր թուրքմենական գազը հասցնել Թուրքիա: Այս նախագիծը հստակ ուրվագծեց թուրքական պետական կառույցների և կոալիցիոն կառավարության ներսում առկա տարածայնությունները Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ:

²⁹ **Sezer B.D.** *Turkish-Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition (Perceptions: Journal of International Affairs, Vol. VI, March – May 2001, p. 10).*

³⁰ **Oku A.** *Blue Stream Victory of Putin Over the USA, 20.11.2005, www.axisglobe.com/article.asp?article=489*

Կոալիցիոն կառավարության ներսում «Երկնագույն հոսքի» վերաբերյալ տարաձայնություններն ավելի ակնառու դարձան Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիրթի՝ 1999 թ. նոյեմբերին Մոսկվա այցելության ժամանակ: Կոալիցիոն կառավարության մաս կազմող Ազգային շարժում կուսակցությունը ներկայացնող որոշ նախարարներ հայտարարեցին, որ ժողովրդավարական ձախ կուսակցության և Մայր հայրենիք կուսակցությունը ներկայացնող նախարարների մասնակցությամբ Մոսկվայում ռուս դիվանագետների հետ հանդիպման ժամանակ իրենք հրավիրված չեն եղել, որի գլխավոր պատճառն այն էր, որ վերոհիշյալ կուսակցությունները չէին ցանկացել ռուսական կողմին տեղյակ պահել նախագծի վերաբերյալ ԱՇԿ-ի մտահոգությունների մասին³¹: Իր հերթին, թուրքական «Բոթաշ» ընկերության նախագահ Խ. Ուզուն հայտարարել էր, որ կառուցվող գազամուղը «սպառնում է Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերին և սպառնալիք է ողջ թյուրքական աշխարհի համար»³²: Այս համատեքստում անհրաժեշտ է հիշատակել, որ չնայած որոշակի հակազդեցության առկայությանը, այնուամենայնիվ, գազամուղի աշխատանքները լայն թափով սկսեցին ընթանալ: 1999 թ. փետրվարին «Գազարոմ» ընկերության և իտալական «Ենի» ընկերության միջև ստորագրվեց «Փոխըմբռնման հուշագիր», ըստ որի, վերոհիշյալ ընկերությունները փոխադարձ ջանքերով իրականացնելու էին «Երկնագույն հոսք» նախագիծը³³: 2002 թ. ամռանը ավարտվեց գազամուղի ծովային հատվածի շինարարությունը, իսկ 2005 թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ բացման պաշտոնական արարողությունը, որին մասնակցեցին Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը, Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիրթի և Իտալիայի վարչապետ Ս. Բեռլուսկոնին³⁴:

³¹ Արշակյան Գ., *Երկնագույն հոսք» գործարքը որպես ռուս-թուրքական մերձեցման նախադրյալ* [Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), հ. IV, Ե., 2007, էջ 25]:

³² Старченков Г.И. *Нефть и газ в экономике и политике Турции (XIX-начало XXI вв.)*, М., 2003, с. 153-154.

³³ www.gazprom.com/eng/articles/article8895.shtml

³⁴ Meixler L. *Pipeline Opens Connecting Turkey, Russia*, *The Washington Post* 17.11.2005, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2005/11/17/AR2005111700624.html>; *Russian President Vladimir Putin, Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan and Italian Prime Minister Silvio Berlusconi participated in the official opening of the Blue Stream Gas Pipeline*, 17.11.2005, <http://en.kremlin.ru/events/president/news/34478>;

Անդրադառնալով թուրք-ռուսական ռազմական հարաբերություններին և ահաբեկչության դեմ համատեղ պայքարի շրջանակում երկկողմ համագործակցությանը՝ անհրաժեշտ է նշել, որ ռազմատեխնիկական ոլորտում թուրք-ռուսական համագործակցության զարգացումը խթանեցին 1992 թ. Մոսկվայում և Ստամբուլում նախագահներ Բ. Ելցինի և Թ. Օզալի միջև կայացած հանդիպումները, որոնց ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Թուրքիա էին առաքվելու 300 մլն ԱՄՆ դոլարի ռուսական զենք և ռազմական տեխնիկա³⁵: 1993 թ. մայիսին ստորագրված «Ռազմատեխնիկական ոլորտում համագործակցության համաձայնագրի» շրջանակում Թուրքիան նախատեսում էր ձեռք բերել նոր տեխնոլոգիաներ ռազմական արդյունաբերության մի շարք ոլորտներում՝ վերազինելու և արդիականացնելու ռազմածովային և ցամաքային ուժերի տեխնիկան և զինատեսակները³⁶:

1994 թ. ապրիլի 20-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց միջկառավարական համաձայնագիր, որը ռազմատեխնիկական և ռազմական արդյունաբերության տարբեր ոլորտներում երկկողմ համագործակցության հիմք դարձավ և մատնանշեց դրա հիմնական ուղենիշները³⁷: Այս համաձայնագրի ամենակարևոր բաղադրիչներից մեկն այն էր, որ դրանով Թուրքիան դարձավ ՆԱՏՕ-ի անդամ առաջին երկիրը, որն սկսեց գնել ռուսական զենքեր: 1990-ականների կեսերից Թուրքիան Ռուսաստանից հաճախակի գնում էր տարատեսակ զինատեսակներ և ռազմական սարքավորումներ՝ ներառյալ ռազմական ուղղաթիռներ, զրահապատ մեքենաներ, տանկեր և ավտոմատ հրացաններ, որոնք գործածում էր ինչպես երկրի

Հարությունյան Ս., *Թուրքիա. էներգետիկ միջազգային հանգույց դառնալու հեռանկարը* (Գորբուս. էներգետիկ և տրանսպորտային անվտանգություն, 2009, N 1, էջ 48):

³⁵ **Фатих О.** *Турецко-российские военно-технические отношения: история и эволюция. Рабочий доклад*, Нижний Новгород: ИСИ ННГУ им. Н.И. Лобачевского, март 2004, с. 13.

³⁶ **Куртов А.** *Турция и тюркоязычные государства Центральной Азии: любовь по расчету? (Россия и Турция на пороге XXI века: на пути в Европу или в Евразию? Московский центр Карнеги (Научные доклады, вып. 14, М., 1997, с. 27).*

³⁷ **Gürtuna A.** *Turkish-Russian Relations in the Post Soviet Era: From Conflict to Cooperation, Thesis of Master in International Relations submitted to The Graduate School of Social Sciences, Middle East Technical University, January 2006, p. 60.*

հարավ-արևելքում, այնպես էլ Հյուսիսային Իրաքում Քրդական բանվորական կուսակցության զինյալների դեմ պայքարում³⁸:

1996 թ. փետրվարին Ռուսաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների նախարար և Ռուսաստանի ռազմատեխնիկական քաղաքականությունը համակարգող խորհրդի նախագահի առաջին տեղակալ Օլեգ Դավիդովը, անդրադառնալով ռուս-թուրքական ռազմական համագործակցությանը, նշել էր, որ եթե 1993 թ. ռուսական զենքի արտահանումը Թուրքիա կազմել է 25.7 մլն դոլար, ապա 1996 թ. սկզբին այն արդեն 121 մլն դոլար էր: Բացի այդ, Դավիդովը հույս էր հայտնել, որ վաճառքների ծավալը մինչև 1996 թ. վերջը կկազմի 300 մլն դոլար³⁹:

1997 թ. դեկտեմբերի 14-17-ին Ռուսաստանի վարչապետ Վ. Չեռնոմիրդինի այցը Թուրքիա և 1998 թ. մայիսի 18-21-ին Թուրքիայի գլխավոր շտաբի նախկին պետ Հաքքի Քարադայի այցելությունը Ռուսաստան մեծապես նպաստեցին թուրք-ռուսական ռազմական հարաբերությունների ամրապնդմանը և անվտանգության ոլորտում ավելի սերտ հարաբերության հաստատմանը: Երկու այցելությունների հիմնական նպատակն էր ընդլայնել համագործակցությունը քաղաքական և ռազմաստրատեգիական ոլորտներում: Թուրքիայում հատկապես մեծ արձագանք ստացավ Վ. Չեռնոմիրդինի այցը, քանզի դա Ռուսաստանի առաջին վարչապետի այցն էր ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Ըստ Չեռնոմիրդինի, «Թուրքիան և Ռուսաստանը տարածաշրջանում պետք է հանդես գան ոչ թե որպես մրցակիցներ, այլ որպես գործընկերներ»⁴⁰:

1999 թ. նոյեմբերի 4-6-ին Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիրի այցը Ռուսաստան մի նոր խթան դարձավ անվտանգության ոլորտում թուրք-ռուսական համագործակցության համար: Նշենք, որ այդ այցը համընկավ ռուս-չեչենական երկրորդ պատերազմի սկսվելու հետ: Ռուսաստանի վարչապետ Վ. Պուտինի հետ հանդիպումից հետո մամուլի ասուլիսի ժամանակ Թուրքիայի վարչապետը, ընդգծելով թուրք-ռուսական հարաբերությունների կարևորությունը, չեչենական հիմնահարցը որակել էր որ-

³⁸ Winrow M.G. *Turkey and the Newly Independent States...*, p. 4.

³⁹ *Russia anticipates increased arms exports to Turkey. Monitor (The Jamestown Foundation, Vol. 2, Issue 32, February 14, 1996).*

⁴⁰ *Radikal, 17.12.1997.*

պես «Ռուսաստանի ներքին խնդիր» և կարևորել «Ռուսաստանի տա-րածքային ամբողջականությունը»⁴¹:

Ռուս-թուրքական ռազմաքաղաքական հարաբերությունների ամրա-պնդման շրջանակում կարևորվեց հատկապես 2000 թ. հոկտեմբերի 23-25-ին Ռուսաստանի վարչապետ Մ. Կապյանովի պաշտոնական այցը Թուրքիա: Էջևիթի հետ հանդիպումից հետո Կապյանովը հայտարարեց. «Մենք համաձայնություն ենք ձեռք բերել ավելի սերտացնել համագոր-ծակցությունը հատկապես ռազմական և անվտանգության ոլորտներում: Մեր հանդիպման ամենակարևոր արդյունքն այն է, որ մենք ոչ թե մրցա-կից ենք, այլ գործընկերներ»: Իսկ Թուրքիայի վարչապետը նշել էր. «Մենք ցանկանում ենք մրցակցության փոխարեն համագործակցել Ռու-սաստանի հետ»⁴²:

Հավելենք, որ Թուրքիայի պաշտպանության նախարար Ս. Չաքմա-քօղլուի հետ հանդիպման ժամանակ Կապյանովը նշել էր, որ ռուսական կողմը ցանկանում է թուրքական ռազմական շուկայում ավելացնել ռուսա-կան մասնաբաժնի ծավալը՝ ընդգծելով Թուրքիայի զինված ուժերի կող-մից հայտարարված և հայտարարվելիք տենդերների կարևորությունը Ռուսաստանի համար: Նշենք, որ վերջինս ցանկանում էր Թուրքիային վաճառել ռուս-իսրայելական KA-50 ռազմական ուղղաթիռները⁴³:

Կապյանովի հետ հանդիպումից հետո Չաքմաքօղլուն հայտնել էր Ռազմատեխնիկական համագործակցության հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու մասին և նշել էր, որ «այս հանձնաժողովը ի հայտ կբերի, կիզորացնի երկու երկրների ռազմական-պաշտպանական արդյունաբերության հնարավորություններն ու ներ-ուժը»: Բացի այդ, նա հայտարարել էր, թե ռազմական արդյունաբերութ-յան խնդիրը քաղաքական չէ, այլ ֆինանսական և տեխնիկական, և որ ռուսական արտադրանքը շահելու մեծ հավանականություն կունենա գա-լիք տենդերներում: Ըստ թուրքերի, մոտակա 25 տարվա ընթացքում

⁴¹ **Sezer B.D.** *Turkish-Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition. Perceptions* (Journal of International Affairs, Vol. VI, March– May 2001, p. 9).

⁴² **Fraser S.** *PM Eyes \$150Bln Turkish Arms Spree*, *The Moscow Times Online*, 24.10.2000.

⁴³ *Интерфакс*, 25.10.2000, *FBIS-SOV*, 26.10.2000.

իրականացվելիք արդիականացման շրջանակներում նրանք նախատեսում էին 150 մլրդ դոլար ծախսել⁴⁴:

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները իրենց ազդեցությունն ունեցան թուրք-ռուսական հարաբերությունների վրա: Վերոհիշյալ իրադարձություններից հետո թե՛ Թուրքիան և թե՛ Ռուսաստանը միացան ԱՄՆ-ի գլխավորած հակաահաբեկչական կոալիցիային, թեև որոշ թուրք փորձագետներ մտահոգություն հայտնեցին, որ Ռուսաստանը կարող էր օգտվել ընձեռնված հնարավորությունից՝ ուժեղացնելու իր դիրքերը կովկասյան տարածաշրջանում: Մյուս կողմից էլ Ռուսաստանը հարկադրված էր համակերպվել Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի գործողություններին, որոնք, շատ հետազոտողների կարծիքով, նաև նպատակ էին հետապնդում թուլացնել ռուսական ազդեցությունը այդ տարածաշրջանում, ինչը, անկասկած, ձեռնադր էր Թուրքիային: Ահա այս համատեքստում էլ 2001 թ. նոյեմբերին 16-ին Թուրքիայի և Ռուսաստանի ԱԳ նախարարներ Ի. Ջեմը և Ի. Իվանովը ստորագրեցին «Թուրքիայի և Ռուսաստանի միջև գործողությունների պլանը Եվրասիայում», ըստ որի, նրանք Եվրասիայում համագործակցելու էին ահաբեկչության դեմ պայքարում և ընդլայնելու էին տնտեսական համագործակցությունը⁴⁵:

Այսպիսով՝ 1. 1990-ականների սկզբին Ռուսաստանը հնարավորություն ստացավ ոչ միայն պահպանել իր ռազմական ներկայությունը Վրաստանում և ռուսական ուժերը Աբխազիայում ԱՊՀ խաղաղապահ ուժերի անվան տակ, այլև ամրապնդել իր դիրքերը Հայաստանում: Վրաստանում և Հայաստանում ռազմակայանների ստեղծմամբ Ռուսաստանը կարողացավ ոչ միայն մեծացնել իր ազդեցությունը Վրաստանում, այլ նաև կասեցնել Թուրքիայի ակտիվ քաղաքական, նաև ռազմական ներթափանցումը Վրաստան: 2. Չնայած պատմական դարավոր մրցակցությանը և հետխորհրդային առաջին տարիներին նկատվող թուրք-ռուսական մեծ լարվածությանը, միջազգային և տարածաշրջանային փոփոխությունները 1990-ականների երկրորդ կեսին հանգեցրեցին Թուրքիայի և Ռուսաստանի միջև մի շարք ոլորտներում (հատկապես տնտեսական) սերտ հարաբերությունների հաստատմանը: Այս գործում շատ կարևոր դերակատարու-

⁴⁴ *The Wall Street Journal Europe*, 20.11.2000.

⁴⁵ **Urazova E.** *Russia and Turkey's Eurasian integration processes. Insight Turkey*, Vol. 4, № 2 (April-June 2002), p. 88.

թյուն են ունեցել թուրք և ռուս գործարարներն ու խոշոր կազմակերպությունները, որոնք մուտք գործելով ռուսական և թուրքական շուկաներ՝ ակտիվ քայլեր ձեռնարկեցին ազդելու Թուրքիայի և Ռուսաստանի արտաքին հարաբերությունների վրա: 3. Թուրքիան և Ռուսաստանը, մի կողմից, մրցակիցներ էին Եվրասիայի նոր ձևավորվող աշխարհաքաղաքական պլատֆորմի վրա, մյուս կողմից, տնտեսական ոլորտում նրանց համագործակցությունը արագ զարգանում էր: Այնպես որ նրանց հարաբերությունները ձևավորվում էին համագործակցության ու մրցակցության համադրությամբ: 4. Թուրք-ռուսական տնտեսական հարաբերությունների զարգացման գործում հսկայական նշանակություն ունեցավ «Երկնագույն հոսք» գազատարը, որի շահագործումը լուրջ նախադրյալներ ստեղծեց երկկողմ հարաբերություններն էլ ավելի սերտացնելու համար: 5. Զարգանում էր նաև թուրք-ռուսական համագործակցությունը ռազմաքաղաքական և անվտանգության ոլորտում. դրան մեծապես նպաստեցին աշխարհաքաղաքական փոփոխությունները տարածաշրջանում 2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո:

РОССИЙСКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРВОЕ ПОСТСОВЕТСКОЕ ДЕСЯТИЛЕТИЕ И ЮЖНЫЙ КАВКАЗ

АРШАКЯН Г.М.

Резюме

В международных двусторонних связях отношения между Россией и Турцией характеризуются резкими колебаниями, самыми необычными проявлениями и очередностью сотрудничества и конкуренции.

В начале 1990-х гг., когда Россия столкнулась с многочисленными проблемами, обусловленными процессом постсоветской внутриполитической трансформации, официальная Анкара решила воспользоваться создавшейся на Южном Кавказе и в Центральной Азии – в результате развала СССР – благоприятной ситуацией и превратить эти регионы в зоны своего влияния. Однако вскоре Турция осознала, что в силу разных причин эти планы не могут быть реализованы, и попыталась иными

путями обеспечить себе новый статус в регионе. В то же время, начиная со второй половины 1990-х гг., сотрудничество между двумя странами вышло на новый уровень, особенно в торгово-экономической сфере, что явилось предпосылкой для российско-турецкого военного сотрудничества и существенного развития двусторонних отношений в борьбе с терроризмом.

TURKISH-RUSSIAN RELATIONS IN THE POST-SOVIET FIRST DECADE AND THE SOUTH CAUCASUS

G. ARSHAKYAN

Abstract

International bilateral relations between Russia and Turkey are characterized by sharp ups and downs, by the most unusual combination of comparisons and sequences.

In the early 1990s, when Russia had faced many challenges caused by Post-Soviet internal political transformation, official Ankara said that favorable situation was formed in the South Caucasus and Central Asia to supplement the external influx caused by the USSR collapse and turn those regions into its dominant influence zones. However, Turkey quickly became convinced that, for various reasons, this purpose was unrealistic and tried to provide a new quality role in the region by another way. At the same time, the relations between the two countries in the second half of the 1990s gained unprecedented growth especially in the trade and economic spheres, as well as serious prerequisites were created for the substantial development of bilateral relations in the fight against terrorism and the Turkish-Russian military partnership.

ՓԱՄՐԱԿ ԳԱՎԱՌԸ 1728 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՈՒՄ

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Գ.Ա.

Փամբակ գավառի 1728 թ. օսմանյան հարկամատյանը կարևոր սկզբնաղբյուր է տարածաշրջանի ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար: Վրացի հետազոտողներ Սերգի Զիքիայի և Նոդար Շենգելիայի վերծանած և թարգմանած՝ 1728 թ. Թիֆլիսի վիլայեթի օսմանյան հանգամանալից երկհատոր աշխարհագիր-ցուցակները¹, ի թիվս Հայաստանի Հանրապետության հյուսիսային այլ երկրամասերի (Աշոցք, Տաշիր), ներառում են նաև Փամբակ գավառի աշխարհագիրը: Հարկ է փաստել, որ վրացերեն թարգմանությանը հաջորդում է օսմաներեն բնագիր տեքստի պատճենը²: Այն թույլ է տալիս հարկ եղած դեպքում վրացերեն թարգմանության հետ համադրության շնորհիվ՝ հավաստիանալ հարկացուցակի վերծանության ճշգրտության մեջ և երբեմն կատարել համապատասխան սրբագրումներ:

Փամբակ գավառի հարկացուցակը, որը զետեղված է գրքի երկրորդ հատորում³, հնարավորություն է տալիս պարզելու գավառի բնակեցվածությունը, բնակավայրերի քանակը, որոշարկելու հարկատուների թիվը, ազգաբնակչության էթնիկ կազմը, գյուղերից գանձվող հարկերը և այլն:

Փամբակի օսմանյան աշխարհագիրն աչքի է ընկնում հետևյալ հերթականությամբ: Հարկամատյանում նախ նշվում է գյուղի անունը, որից հետո շարադրվում են գյուղացիների անուն-հայրանունները, հարկատուների թիվը (որոշ դեպքերում՝ նաև տների քանակը), ըստ անհրաժեշտության՝ «այլադավան»⁴ և մահմեդական բնակչության թիվը, այնուհետև՝

¹ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილევით გამოსაცემად მოამზადეს სერგი ჯიქიაშვილმა და ნოდარ შენგელიამ. თბილისი: ჰოროსი, 2009-2010.

² *Նույն տեղում*, հ., 1, էջ 564-829, հ. 2, էջ 464-724:

³ *Նույն տեղում*, հ., 2, էջ 664-680:

⁴ «Այլադավան» եզրույթը օսմաներենում ենթադրում է ոչ մահմեդական բնակչություն: Դարելով գյուղացիների անվանացանկից՝ «այլադավան» բնակչությունը հայազգի էր:

հարկատեսակների դրամական արժեքները և վերջինիս ընդհանուր գումարը:

Փամբակ գավառը, որն այդ ժամանակահատվածում պատկանել է Թիֆլիսի լիվային, ունեցել է 89 գյուղ, որոնցից 36-ում գյուղացի չկար: Բնակչության թվով գավառի ամենամեծ գյուղը Քարաքիլիսեն էր, որն ուներ 47 հարկատու և 26 տուն⁵: Ինչ վերաբերում է դատարկված գյուղերին, ապա չկան ստույգ վկայություններ, սակայն, հավանաբար, ռազմական գործողությունների հետևանքով բնակչությունը լքել է այդ բնակավայրերը:

Օսմանցի իշխանավորները հարկատուների թիվը նշելիս երբեմն թույլ են տվել որոշ անճշտություններ: Օրինակ՝ ըստ հայաբնակ Գյոք Օդա գյուղի հարկատուների ցանկի, նրանց թիվը կազմում է 25 մարդ, սակայն հանրագումարով տրված է 29, որն էլ հարկերի հաշվումի համատեքստում վերջնական արդյունքն էր: Անկախ նրանից, թե բնակչության թվի աճը միտումնավոր էր, թե անփութության հետևանք, ստացվում է, որ նշյալ գյուղի բնակիչները ստիպված են եղել ավելի շատ վճարել: Այնուամենայնիվ, հանդիպում ենք նաև հակառակ գործընթացի: Հալավար գյուղում (բնակչությունը՝ մահմեդական) թեպետ գյուղացիների անվանացանկում թվարկվում է 24 անձնանուն, սակայն ընդհանուր հաշվարկում նշվում է 23: Հանրագումարով մեկ հարկատու պակաս է արձանագրվել նաև մահմեդաբնակ Գյոք Բողուշ գյուղում:

Ուշագրավ է այն իրողությունը, որ Փամբակ գավառի աշխարհագրում Հակոբբլու և Վարդանան գյուղերը, թեև տեղ են գտել այդ գավառի հարկացուցակի սկզբներում, այնուամենայնիվ, այդ բնակավայրերի դիմացի գրության համաձայն, պատկանել են Տաշիր գավառին: Հարկ է նկատի ունենալ, որ Փամբակին պատկանող բնակավայրերի վերը նշված քանակն անփոփոխ է անկախ այդ իրողությունից: Հարկացուցակի ուսումնասիրությունը խիստ կարևոր է նաև ժողովրդագրական տեսանկյունից: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ Փամբակ գավառում հայ բնակչության հետ մեկտեղ ապրել են նաև մեծ թվով մահմեդականներ: Ընդ որում՝ քրիստոնյա և մահմեդական բնակչությունը, չհաշված որոշ դեպքերի, բնակվել է առանձին գյուղերում:

⁵ Բնակչության թվով գավառի 2-րդ գյուղը Ջանդարն էր (36 հարկատու, բնակչությունը՝ մահմեդական), երրորդը՝ Քյուլաջան (34 հարկատու, բնակչությունը՝ մահմեդական), չորրորդը՝ Հաջիքարան (30 հարկատու, բնակչությունը՝ քրիստոնյա), իսկ մյուս գյուղերի հարկատուների թիվը. որոշ բացառություններով հանդերձ, էապես քիչ էր:

1728 թ. դրությամբ Փամբակի 53 բնակելի բնակավայրերից 34-ում բնակվել են գերազանցապես մահմեդականներ: Խառը հարկատուների թվով աչքի են ընկել միայն Նուրսալու (10 քրիստոնյա, 2 մահմեդական), Վերին Չեքմեմալ (5 քրիստոնյա, 3 մահմեդական) և Օրթաբաշ գյուղերը: Վերջին գյուղի մահմեդական և քրիստոնյա հարկատուների հարաբերակցության ճշգրտումը հարուցում է որոշ դժվարություններ: Բանն այն է, որ, ի տարբերություն առաջին և երկրորդ գյուղերի, չկա որևէ գրություն, որի շնորհիվ պարզ կդառնա «այլադավանների» և մահմեդականների առանձին թիվը, ուստի պետք է փորձել կողմնորոշվել անձնանուններից. որոնք են՝ Շահնազար՝ որդի Ասլամազի, Սարուխան՝ նրա որդին,.....⁶ որդի Մարդիրոսի, Նուր՝ որդի Քուլիի, Վելի՝ որդի Քուլիի, Աղլալի՝ նրա որդին, Վելին՝ նրա որդին: Սակայն, տվյալ օրինակում հաշվի առնելով այն փորձը, որ արձանագրված Քուլի, Վելի անունները կարող էին լինել ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական բնակչության անձնանուն, ճիշտ է բավարարվել միայն առաջին երեք անձանց անուններով, որոնց հայ լինելը որևէ կասկած չի հարուցում: Այսպիսով, Օրթաբաշ գյուղում պայմանականորեն բնակվում էր 3 հայազգի և 4 մահմեդական ընտանիք: Այնուամենայնիվ, կարող է հարց ծագել առ այն, որ եթե անվանացանկից հետո արձանագրված չէ մահմեդականների և «այլադավանների» ընդհանուր թիվը, ավելին՝ նշյալ գյուղի 7 հարկատուները տեսականորեն կարող էին լինել նաև հայազգի, ապա ինչպե՞ս պարզվեց, որ տվյալ գյուղի բնակչությունը միատարր չի եղել: Պատասխանն այն է, որ նման հարցում ոչ միայն Օրթաբաշ գյուղում, այլև Փամբակ գավառի ամբողջ աշխարհագրում կարելի է առաջնորդվել գլխավորապես ամեն գյուղից գանձվող որոշ հարկադրույքներով, որոնք ճշգրիտ ցույց են տալիս բնակչության էթնիկ կազմի պատկերը: Օրինակ՝ իսփենջի հարկը սահմանվել է միայն չափահաս քրիստոնյա տղամարդկանցից, իսկ չիֆթի կամ բեննաքի հարկը գանձվել է մահմեդականներից⁷: Փամբակ գավառի հարկամատյանի օրինաչափություններից մեկն այն է, որ եթե գյուղը ամբողջապես բաղկացած է եղել միայն քրիստոնյաներից, ապա հարկատուների ընդհանուր քանակը նշելուց հետո սահուն անցում է կատարվում իսփենջին և դրան հաջորդող մյուս հարկատեսակներին: Նույն սկզբունքն է

⁶ Անունն անհասկանալի է:

⁷ İnalçik H. *Osmanlılar'da Raiyyet Rüsumu, Türk Tarih Kurumu, Belleten, Cilt: XXIII, Sayı: 92, 1959, s. 575-610.*

գործել նաև մահմեդական բնակավայրերի դեպքում, երբ որևէ «տարանջատման» գրության չհանդիպելով, իսփենջիի փոխարեն չիֆթ կամ բեննաքի հարկից կարող ենք եզրակացնել, որ բնակչությունը մահմեդական է:

Ինչ վերաբերում է քրիստոնյաների և մահմեդականների միևնույն բնակավայրում ապրելուն, ապա բնակիչներից համապատասխանաբար գանձվել է և՛ իսփենջի, և՛ չիֆթ կամ բեննաքի հարկ, որը կարելի է հանդիպել ինչպես Նուրսալու և Վերին Չեքմեմալ գյուղերի, այնպես էլ խնդրո առարկա Օրթաբաշ գյուղի պարագայում:

Դավանանքի տեսանկյունից կարևոր է նաև գավառին պատկանող Սալմանլու գյուղը: Աշխարհագրի համաձայն՝ գյուղում արձանագրված է թվով 9 հարկատուի անուն՝ (Սերդար՝ որդի Թաթանի, Ասլամազ՝ նրա եղբայրը, Սահաք՝ որդի Քուլիխանի, Վելիխան՝ նրա եղբայրը, Օհան՝ որդի Խաչիքի, Ալի-Ռեզա՝ որդի Ռոսթոմի,...՝ որդի Սարքսի, Բույդուր՝ որդի Սահաքի, Մելիք՝ որդի Բեդրոսի): Թեպետ նշված հարկատուներից ութը հայ են, սակայն հաշվի առնելով հարկացանկում իսփենջի բացակայությունը և այլ հարկերի հետ մեկտեղ միայն չիֆթի և բեննաքիի առկայությունը, ամենայն հավանականությամբ, խոսքը վերաբերում է մահմեդականությանը ընդունած հայերին:

Ինչ վերաբերում է հարկացուցակում գրանցված բացառապես հայազգի բնակչությանը, ապա նրանց մի մասը ներկայացնում էր գավառի ամենամեծ գյուղը՝ Քարաքիլիսեն: Ընդհանուր առմամբ, հայ քրիստոնյաներով բնակեցված գյուղերն աչքի են ընկել հոծ բնակչությամբ, որը որոշ հավասարակշռություն է ապահովել մահմեդականների նկատմամբ: Այնուամենայնիվ, Փամբակ գավառի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ էին:

Հաջորդ կարևոր հատվածը վերաբերում է Փամբակ գավառից գանձվող հարկերին: Աշխարհագրից պարզ է դառնում, որ օսմանյան իշխանությունների սահմանած հարկերի մի մասը գանձվել է յուրաքանչյուր գյուղից, իսկ մնացածները՝ հիմնականում ըստ տվյալ գյուղի ժողովրդագրական պատկերի և տնտեսական հնարավորությունների: Ամեն գյուղում, ցորենից, գարուց, աշորայից, կորեկի բերքից տրվող հարկերից գատ, տուրքեր էին սահմանված նաև դաշտապահության և հողի թա-

փուլի⁸, հարսնության, բադիավայի⁹, հանցանքի և ոճիրի, բացակայող և կորած ապրանքների, ընդհանուրի և խասսի¹⁰ բեյթ-ուլ մալի¹¹ դիմաց գանձվող հարկերից: Ոչ մշտական բնույթ ունեին իսփենջի, ամուրիների, ոչխարների, յուղի, փեթակի, խոտի, խոզերի, չիֆթ և բեննաքի և ջրաղացների դիմաց գանձվող հարկերը:

Օսմանյան իշխանությունները որոշ հարկադրույքների դիմաց հստակ սահմանել էին նրանց դրամական չափը: Այսպես օրինակ՝ իսփենջի դիմաց յուրաքանչյուր հարկատուից գանձվել է 120 աքչե¹²: Յորենի և գարու մեկ քիլեն¹³ գնահատվում էր համապատասխանաբար՝ 20 և 15 աքչե: 15 աքչե էր սահմանված նաև աշորայից և կորեկից գանձվող բնամթերքի յուրաքանչյուր քիլեի դիմաց: Այլ հարկատեսակների դրամական արժեքը տատանվում էր:

Օսմանցիների սահմանած հարկաչափերը կարող էին տարբերվել ըստ աշխարհագրության, որը հնարավորություն է տալիս համապատասխան նյութերի առկայության դեպքում համեմատելու միմյանց հետ: Օրինակ՝ 1728 թ. Վաղարշապատ գյուղում անցկացված աշխարհագրի համաձայն¹⁴ ցորենի, գարու համար նախատեսված հարկաչափերը գերազանցում էին Փամբակ գավառի հարկադրույքներին՝ մեկ քիլեի արժեքը կազմելով համապատասխանաբար 30 և 20 աքչե: Սակայն նույնը չի կարելի ասել իսփենջիի մասին. Վաղարշապատում յուրաքանչյուր քրիստոնյայից

⁸ Հողային տուրք, որը գյուղացին հողաբաժին ստանալիս վճարում էր ֆեոդալին (կամ պեյրությանը): Այդ հարկը վճարվում էր այն դեպքում, երբ հողաբաժին ստացող գյուղացին տվյալ հողաբաժին նախկին զբաղեցնողի անմիջական ժառանգորդը չէր:

⁹ Եկամտի լրացուցիչ աղբյուրների հետադարձ լիցենզիա՝ օսմանցի կառավարիչները տուգանում էին գյուղացիներին: Բադիական գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անունն է:

¹⁰ Խոսքը մասնավոր սեփականության մասին է:

¹¹ Բառացի նշանակում է գանձապահ, ավելի լայն իմաստով՝ անժառանգ հանգուցյալների կալվածքներն ու ինչքերը կառավարող և պահպանող վարչություն, գանձարան:

¹² Արծաթե դրամի միավոր: Օսմաներեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը հավասար էր 3.06 գրամի:

¹³ Ընդդեմի (ցորեն, գարի և այլն) չափման միավոր, որը տարբեր է եղել ըստ ժամանակաշրջանների:

¹⁴ Փափագյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները (Բանբեր Մարտենադարանի, N 5, Ե., 1960, էջ 431-461), Միրզաբեկյան Գ., Վաղարշապատի 1728 թ. օսմանյան հարկացուցակը (Բանբեր Մարտենադարանի, N 23, Ե., 2016, էջ 170-193):

գանձվում էր 25 աքչե, որն էականորեն ավելի ցածր էր, քան Փամբակ գավառում:

Ուշագրավ է, որ իսփենջի դիմաց գանձվող հարկաչափը 120 աքչե է եղել նաև Գանձակում 1727 թ., իսկ Մորեա կղզում 1716 թ. օսմանցիները սահմանել են 25 աքչե¹⁵: Սակայն հրեաներից պահանջած իսփենջի չափը գերազանցում էր անգամ 120-ը՝ կազմելով 125 աքչե¹⁶:

Գյուղացիներից գանձվող հարկերի համատեքստում կարևոր է արձանագրել, որ օսմանյան աշխարհագրում հաճախ են հանդիպում, երբ որոշ գյուղերից գանձվող հարկերը թվարկվում են կողք կողքի, և այնուհետև նշվում է հարկաչափի ընդհանուր գումարը: Խնդիրն այն է, որ դա հնարավորություն չի տալիս պարզելու, թե ամեն հարկատեսակից որքան աքչե էր պահանջվել: Գուցե դա բացատրվում է նրանով, որ գյուղը, չունենալով պատշաճ տնտեսություն, իշխանությունները հարկերից գանձվող ընդհանուր գումարը ստիպված են եղել ներկայացնել միջինացված ձևով:

Մեկ կարևոր հանգամանք ևս կապված է Փամբակի դատարկված բնակավայրերին: Ուշագրավ է, որ գյուղերը հարկատուներից զուրկ լինելու փաստի արձանագրումից հետո, այնուամենայնիվ, սահմանված են որոշ հարկաչափեր: Կարելի է ենթադրել, որ դա ցույց էր տալիս օսմանյան իշխանությունների կողմից տվյալ բնակավայրի տնտեսության վճարողունակության գնահատումը, այն պարագայում, երբ գյուղացիները կվերադառնային և նորից կապրեին այնտեղ: Դատելով հիմնականում այդ հարկաչափերի ոչ բարձր լինելուց՝ չի բացառվում, որ այդ բնակավայրերը բավականաչափ ավերվել են:

1728 թ. Փամբակ գավառի հարկամատյանում Հայդար Բեյ (13 հարկատու, 6 տուն, բնակչությունը՝ հայեր) և Շուլավեր (4 հարկատու, բնակչությունը՝ մահմեդական) գյուղերի հարկաբաժիններին հաջորդում են դրանց մասին համառոտ տեղեկություններ, որոնք արձանագրվել են 1728 թ. փետրվարի 1-ին: Հարկ է նշել, որ որևէ նման գրություն գավառի մյուս գյուղերի մասին չկա: Ըստ այդ տեղեկությունների, Հայդար Բեք և Շուլավեր գյուղերի միջև ժայռ է եղել և աղբյուր հոսել, ավելին՝ այն վերջինիս վերին կողմով Հեյդար Բեք գյուղն էր հոսում: Սահմանագծի ջնջվածության հետևանքով գյուղերը հին ձևով են առանձնացվել: Հաղորդվում

¹⁵ İnalçik H., նշվ. աշխ., էջ 607:

¹⁶ Նույն տեղում, Janev V. *The Jews in Macedonia XV-XVII (century)*, Skopje, 2011, p. 219.

է, որ Հայդար Բեքի գյուղացիները տնտեսության համար աշխատունակ են եղել, իսկ այդ գյուղի հարկատուները գանձել են նաև Շուլավերի հարկերը:

Այսպիսով, Փամբակ գավառի աշխարհագիրը, ինչպես նշվեց, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գավառի էթնիկ պատկերի վերաբերյալ: Այն հնարավորություն է տալիս վեր հանելու գավառի սոցիալ-տնտեսական պատկերը՝ բնակեցվածությունը՝ ըստ գյուղերի, մատնացույց անել օսմանյան աշխարհագրի անցկացմանն առնչվող ևս մի շարք կարևոր այլ օրինաչափություններ և, վերջապես, տեղեկանալ գյուղերից գանձվող հարկաչափերին: 1728 թ. վավերագրի օսմաներեն բնագրի ուսումնասիրությունը կնպաստի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության ավելի լայն հետազոտությունների իրականացմանը:

ПРОВИНЦИЯ ПАМБАК В ОСМАНСКОМ НАЛОГОВОМ РЕЕСТРЕ 1728 Г.

МИРЗАБЕКЯН Г.А.

Резюме

Налоговый реестр провинции Памбак является важнейшим источником по исследованию демографических и социально-политических вопросов региона. Перепись области предоставляет данные об этническом составе, числе сел, взимаемых налогах и т.д. В 1728 г. в Памбаке насчитывалось 89 сел, 36 из которых не были заселены. Самым крупным по численности населения было с. Каракилисе, где жили только армяне. Однако большинство населения провинции Памбак составляли мусульмане. Жители сел Памбака платили османским властям разные виды налогов, часть которых взималась со всех сел.

THE PAMBAK PROVINCE IN THE 1728 OTTOMAN TAX REGISTER

G. MIRZABEKYAN

Abstract

The tax register of Pambak province is a very important source from the aspect of demography and socio-economic issues of the province. The tax register of the province gives a large opportunity to research the ethnic composition, the quantity of villages, taxes, etc. In 1728 the tax register of Pambak contains a list of 89 villages including 36 uninhabited ones. The most populated village was Karakilise where only Armenians lived. However, the majority of population in the Pambak province were Muslims. The population of the villages of Pambak province paid different taxes to the Ottoman authorities and a part of them was collected from every settlements.

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ն.Ա.

Խորհրդային Միության գոյության մոտ 70 տարիներին համադաշնության սկզբունքով գործող պետության առանցքային բաղադրիչներ հանդիսացող բոլոր հանրապետություններում իշխանությունը պատկանում էր Կոմունիստական կուսակցությանը՝ նրան պատվելով առանցքային դերակատարությամբ: Այդ փաստի իրավական ամրագրումը հանդիպում է 1977 թ. ԽՍՀՄ ԳԽ 7-րդ արտահերթ նստաշրջանում ընդունված Սահմանադրության մեջ, մասնավորապես՝ 6-րդ հոդվածով. «Սովետական հասարակության առաջնորդող և ուղղորդող ուժը և նրա քաղաքական համակարգի միջուկը բոլոր պետական և հանրային կառույցներից Սովետական Միության Կոմունիստական կուսակցությունն է: ԽՄԿԿ-ն գոյություն ունի ժողովուրդների համար և ծառայում է ժողովրդին: Կոմունիստական կուսակցությունը, զինված մարքսիզմ-լենինիզմով, վճռում է հասարակության զարգացման ընդհանուր առաջնահերթությունները ու ԽՍՀՄ-ի արտաքին և ներքին քաղաքականության կուրսը, տնօրինում սովետական մարդկանց հզոր կառուցողական աշխատանքը և կոմունիզմի հաղթանակին միտված նրանց պայքարին հաղորդում է կազմակերպված, համակարգային ու տեսականորեն հիմնավորված բնույթ: Կուսակցական բոլոր կազմակերպությունները պետք է գործեն ԽՍՀՄ Սահմանադրության շրջանակներում»¹: Չգանահարելով այլ կուսակցությունների գոյության իրավունքը՝ նման իրավակարգում փաստացիորեն երաշխավորվում էր Կոմունիստական կուսակցության ամբողջատիրական գերակայությունը:

Հատկանշական է, որ երբ Հայաստանը հայտարարվեց սոցիալիստական խորհրդային հանրապետություն, ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչության և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրով նախատեսվում էր, որ մինչև Հայաստանի

¹ *Constitution (Fundamental Law) of the Union of Soviet Socialist Republics, Adopted at the Seventh (Special) Session of the Supreme Soviet of the USSR, Ninth Convocation, 7 October 1977.*

խորհուրդների համագումարի հրավիրումը գործադիր իշխանության լծակներ ստացող և ժամանակավոր կարգավիճակով օժտված Ռազմահեղափոխական կոմիտեի կազմի մեջ պիտի մտնեին կոմունիստական կուսակցության 5 անդամ և 2 ծախ դաշնակցական: Սակայն խորհրդայնացումից անմիջապես հետո ակնհայտ դարձավ, որ բազմակուսակցական համակարգի մասին խոսք լինել չէր կարող: Ըստ այդմ՝ գաղտնի և փաստացիորեն կարճ ժամանակ գոյություն պահպանած, քաղաքական լրջագույն հակակշիռ չհանդիսացած խմբակների առկայությունը չհաշված՝ ՀԽՍՀ-ում քաղաքական գործունեության բացառիկ իրավունքը պատկանել է Կոմունիստական կուսակցությանը: Եվ պատահական չէ, որ հանրապետություններում քաղաքական իրական ազդեցությունը վայելում էին ոչ թե օրենսդիր իշխանությունն իրացնելու իրավասությամբ օժտված Գերագույն խորհրդի կամ գործադիր կառավարման մարմին հանդիսացող Նախարարների խորհրդի ղեկավարները, այլ ԿԿ կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարը: Այլ կերպ՝ հանրապետությունների քաղաքական կյանքը, դրանից բխող նաև մյուս բնագավառները, ղեկավարում էր Կենտկոմի առաջին քարտուղարը՝ կուսակցապետության դասական բանաձևով:

Հայաստանյան փորձությունը. 1960-ականներից ի վեր ՀԽՍՀ-ում ևս լայն տարածում ստացավ այլախոհական շարժումը, որի իրական դրսևորումը 1967 թ. Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումն էր: Այն համախմբեց Հայաստանի անկախության գաղափարն իրականություն դարձնելու ջատագով մի խումբ քաղաքացիների²: Նրանցից շատերը հետագայում ներգրավվեցին Հայաստանի անկախ Հանրապետության քաղաքական կյանքին և ակտիվ գործունեություն ծավալեցին³: Արձանագրելի է, որ 1985 թ. ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի առաջ քաշած «վերակառուցման» քաղաքականությունն էր, որ անմիջական ազդակ հաղորդեց նոր քաղաքական հայացքների ինստիտուցիոնալ հղացքին: Այսպես, 1989 թ. դեկտեմբերին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում հանրապետությունում ծավալվող ժողովրդական շարժման ղեկավարությունն իրացնող «Ղարաբաղ» կոմիտեի անունից ԳԽ պատգամավոր Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ ելույթով՝

² Մանրամասն տեմպս Հարությունյան Վ., *Այլախոհությունը խորհրդային Հայաստանում*, Ե., 2014:

³ Այդ շարքում հիշարժան են Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Ազատ Արշակյանը, Անդրանիկ Մարգարյանը և այլք:

ընդգծելով երկրում ժողովրդավարության հաստատման կենսական անհրաժեշտությունը: Ավելին՝ առաջարկ էր արվում, որ Հայաստանը դառնա Խորհրդային Միության առաջին հանրապետությունը, որտեղ պետք է վերացվեր կոմունիստական կուսակցության մենիշխանությունը՝ հաստատելով բազմակուսակցական համակարգ⁴: Փաստելի է, որ 1989 թ. նոյեմբերին Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) ստեղծմամբ, նույն թվականին Սահմանադրական իրավունք միության (ՍԻՄ), դեռ 1987-ից Ազգային ինքնորոշում միավորման (ԱԻՄ) և քաղաքական բնույթի այլ կազմակերպությունների ձևավորմամբ ՀԽՍՀ-ում բազմակուսակցական համակարգն արդեն իսկ գործնականում հաստատված էր: Թվում էր՝ հնարավոր կլիներ Իսրայելի օրինակով հասնել նրան, որ քաղաքական և տնտեսական զարգացումների հասարակական ընկալումները անքակտելիորեն առնչվեին կուսակցությունների հետ: Իսրայելում կուսակցությունները ամենակայացած և ուժեղ սոցիալական ինստիտուտներն են, որոնք փակուղային իրավիճակներում տնօրինում են ճգնաժամից դուրս գալու ելքերին⁵:

Հանրապետության բնույթի կտրուկ վերափոխման առանցքում անկարելի է թերագնահատել ընդունված մի շարք օրենքների նշանակությունը, որոնց շարքում է նաև բազմակուսակցական համակարգի ներդրումը նախատեսող օրենքը⁶: Բազմակուսակցական համակարգի արմատավորման գործընթացի հիմնարար մեկնարկը շեփորահարվեց Գերագույն խորհրդի 1990 թ. ընտրություններով: Առաջին անգամ երկրում ծավալվեց իրական քաղաքական պայքար, որի անմիջական հետևանքը դարձավ Կոմունիստական կուսակցության դիրքերի շեշտակի անկումը: Թերևս իրավիճակի նման զարգացման վրա նվազ նշանակություն չունեցավ Կոմկուսի պատգամավորական թեկնածուների շարքում կուսակցական նոմենկլատուրայի ներկայացուցիչներին տրված նախապատվությունը⁷: Փաստացիորեն, խորհրդարանական ընտրություններն անցան երկ-

⁴ **Տեր-Պետրոսյան Լ.**, *Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ)*, Ե., 2006, էջ 43-45:

⁵ **Sherman A.** *Israeli socialism and multy-party system, the world today*, vol. 17, no. 5 (may, 1961), pp. 217-226, 218.

⁶ **Լիպարիտյան ժ.**, *Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միությունների անկախությունից ի վեր, թարգմ.* Հ. Հարությունյան, «Արմավ» ԺԻՊԱԿ, Ե., 1999, էջ 18:

⁷ **Մինասյան Է.**, *Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն*, Ե., 2013, էջ 104:

կուսակցական կամ ավելի ստույգ՝ երկու հակադիր արժեքներ դավանող խմբավորումների պայքարի տրամաբանությամբ, որից հետո արդեն խորհրդարանը դարձավ ավելի բազմազան, երբ առաջացան 4-5 խմբակցություններ ու քաղաքական հոսանքներ: 1990 թ. մայիսի ընտրությունների արդյունքներով Հայոց համազգային շարժման կազմած կոալիցիայի ներկայացուցիչների թիվը խիստ տպավորիչ էր՝ ի հաշիվ Կոմունիստական կուսակցությանը հարող պատգամավորների թվի: Նորընտիր խորհրդարանը (206 պատգամավոր) իր աշխատանքներն սկսեց 1990 թ. հուլիսի 20-ին⁸: Տասն օր անց՝ 1990 թ. օգոստոսի 2-3-ին կայացած ԳԽ նախագահի ընտրություններում հանրապետության քաղաքական խմբավորումների միջև գոյություն ունեցող հարաբերակցության փոփոխությունն այլևս կայացած փաստ էր:

Պատմական և, հիրավի, ճակատագրական որակմանն արժանի ԳԽ նախագահի 1990 թ. ընտրությունն ընթացավ չորս փուլով: Կոմկուսն առաջադրել էր 1990 թ. ապրիլի 6-ին Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում Սուրեն Հարությունյանին փոխարինած Վլադիմիր Մովսիսյանի թեկնածությունը, իսկ ՀՀԾ-ն այդ պատասխանատու պաշտոնում առաջարկում էր «Նարաբաղ» կոմիտեի անդամ, ՀՀԾ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Պատգամավորներից ոմանք առաջարկում էին գրանցել նաև ԿԿ ԿԿ նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի թեկնածությունը, սակայն նրա հետ կապ հաստատելու անհնարինության պատճառով հանձնաժողովը հարկադրված ձեռնպահ մնաց նրան գրանցելուց: Բացի վերոնշյալ գործիչներից, որպես ՀԽՍՀ ԳԽ նախագահի թեկնածուներ՝ քննարկվում էին նաև Վ. Մանուկյանի, Ռ. Ղազարյանի, Պ. Հայրիկյանի, Հ. Սիմոնյանի, Թ. Դիլանյանի անունները⁹: ԳԽ նախագահի ընտրությունների առաջին երեք փուլերից հետո միայն մնացին երկու թեկնածուներ, երբ ԱԽՄ առաջնորդ Պ. Հայրիկյանը վերջինը դուրս մնաց երրորդ փուլում¹⁰: Սուր և լարված պայքարի հանգրվանին հասան միայն ՀՀԾ-ն ներկայացնող Տեր-Պետրոսյանը և Կոմկուսի թեկնածու Մովսիսյանը: Օգոստոսի 3-ին՝ չորրորդ փուլում, միայն հստակություն մտավ: Կոմկուսին հարող մի շարք պատգամավորներ՝ Վիգեն Խաչատրյանի գլխավորությամբ, համաժողովրդական շարժման

⁸ ՀՀ Գերագույն խորհուրդ, 1990-1995, Ե., 1995, էջ 115:

⁹ ԳԼԽ սույն նիստի արձանագրությունն ամբողջությամբ հասանելի է՝ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱՎԱ), ֆ. 207, ց. 62, գ. 13:

¹⁰ Նույն տեղում:

թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին աջակցելու հանդգնություն ցուցաբերեցին¹¹: Նման դիրքորոշում որդեգրեցին նաև անկախական գաղափարների դավանող պատգամավորները՝ Ազատ Արշակյանի ղեկավարությամբ, որը հանդես եկավ «չեզոք անկախականների խոսքով» և կոչ արեց քվեարկել Տեր-Պետրոսյանի օգտին¹²: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության համաձայն՝ չորրորդ փուլում վերջապես ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի օգտին կողմ էր քվեարկել 140 պատգամավոր, իսկ Վ. Մովսիսյանին՝ 76-ը:¹³ ԳԽ նախագահ ընտրվելով՝ Լ. Տեր-Պետրոսյանը հրաժարվեց ՀՀ վարչության նախագահի պաշտոնից, ինչպես նաև կուսակցության վարչության անդամությունից՝ դրանք համարելով քաղաքական տեսակետից անհամատեղելի: Սակայն Տեր-Պետրոսյանը պահպանեց ՀՀ գաղափարակրի ու կուսակցության շարքային անդամի կարգավիճակը¹⁴:

ԳԽ նախագահի ընտրության վրա էական ազդեցություն ունեցավ անկախության հիմնախնդրի շուրջ թեկնածուների և նրանց ներկայացրած քաղաքական ուժերի կեցվածքը: Կոմկուսի առաջին քարտուղար Վ. Մովսիսյանն ընտրության չորրորդ փուլից առաջ ելույթ ունենալիս և պատգամավորների հարցերին պատասխանելիս Հայաստանի քաղաքական ապագան տեսնում էր դեռևս չկործանված ԽՍՀՄ-ի կազմում: Կոմկուսի թեկնածուն համաձայն էր, որ Հայաստանն ունենար իր Սահմանադրությունը, ընդունվեր ինքնիշխանության (սուվերենության) մասին հռչակագիր: Մովսիսյանն առաջ էր քաշում նաև Հայ դատի՝ պետական պահանջատիրության առանցքային ուղեգիծը դարձնելու քաղաքականությունը: Նա կարևորում էր նաև Հայաստանի օրենքների գերազանցելիության ու անբեկանելիության իրավազորությունը Խորհրդային Միության օրենքների նկատմամբ: Կոմկուսի թեկնածուն օրինաչափ էր համարում անցումը բազմակուսակցական համակարգին՝ իր հարազատ կուսակցությանը վերապահելով ինքնուրույն գործող կազմակերպության կարգավիճակ. «Մենք հրաժարվում ենք քաղաքական գաղափարական

¹¹ Լիպարիտյան Ժ., նշվ. աշխ., էջ 47:

¹² Բոլոր ելույթները տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 52:

¹³ ԳԽ նախագահի ընտրության արդյունքների առթիվ կազմված թիվ 4 արձանագրությունն ու առնչվող մյուս տեղեկատվությունը համապարփակորեն հասանելի են՝ ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 66:

¹⁴ Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 139:

մենաշնորհից», - հայտարարեց Վլադիմիր Մովսիսյանը¹⁵: Բայց և այնպես, նա կողմնակից էր ԽՍՀՄ-ի կազմում ինքնիշխան պետություն ունենալուն¹⁶: Եվ հենց դա էլ կարծես դարձավ նրա ծախսողման առանցքային պատճառներից մեկը:

ՀՀ վարչության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ԳԽ նախագահի ընտրության վերջին փուլից առաջ հանդես գալով ելույթով և պատգամավորներին հուզող հարցերին պատասխանելով, առանց տատանվելու պաշտպանում էր Հայաստանի՝ ինքնիշխան և անկախ պետություն դառնալու գաղափարը: Ըստ նրա՝ Հայաստանը պետք է արմատապես վերանայեր Խորհրդային Միության առջև ստանձնած պարտավորությունները և ձեռնամուխ լիներ սեփական անվտանգության մարմինների ձևավորմանը: ՀՀ առաջնորդը թեպետ դեմ էր միութենական պայմանագրին, սակայն քաղաքական աննպաստ պայմաններում ընդունելով փոխզիջման հնարավորությունը՝ Հայաստանի միացման համար պարտադիր նշանակություն էր հաղորդում երկու նախապայմանի. 1) մասնակցություն այդ պայմանագրին բացառապես միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակով, 2) հանրապետության տարածքում միութենական Սահմանադրության և օրենքների կիրառության բացառում: Տեր-Պետրոսյանն ընդգծում էր խոսքի ազատության ու լիակատար ժողովրդավարության անհրաժեշտությունը¹⁷: Ըստ նրա՝ ԳԽ նախագահի պաշտոնում իր գործունեությունը միտված էր լինելու նոր՝ ազգային Սահմանադրության ընդունման ու օրենքների գերակայության, գործադիր, օրենսդիր և դատական մարմինների տարանջատման, հասարակական կյանքի ապակենտրոնացման, բազմակուսակցական համակարգի հաստատման և այլ միջոցառումների իրագործմանը: ՀՀ-ի թեկնածուն համոզված էր, որ Կոմունիստական կուսակցությունն անկարող է Հայաստանն առաջնորդել դեպի անկախություն՝ ի հեճուկս երկուսուկես տարի գործող համաժողովրդական շարժման¹⁸:

Այսպիսով, 1990 թ. օգոստոսի 3-ին անհնար եղավ ՀՀ ԳԽ նախագահ դարձնել իրավականորեն միակը համարվող, իշխող կուսակցության ներկայացուցչին: Համառ ու լարված պայքարի ընթացքում անկախության պահանջով հանդես եկող քաղաքական ուժերին հաջողվեց իրենց կողմը

¹⁵ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 52:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 103-112:

¹⁸ Նույն տեղում, էջ 109:

թեքել հաջողության նժարը և հաղթանակ տանել: Արձանագրելի է, որ թեև 1990 թ. մայիսի 20-ի խորհրդարանական ընտրություններում որևէ կուսակցության չէր հաջողվել բացարձակ մեծամասնություն վերցնել, սակայն ԳԽ նախագահի ընտրության վճռորոշ պահին ժողովրդավարական ուժերի շնորհիվ հնարավոր դարձավ կաթվածահար անել Կոմկուսի միահեծան մեքենան:

Բազմակուսակցական համակարգի փաստացի հաստատմանը, անշուշտ, պետք է հաջորդեր դրա իրավական ամրագրումը: Հաշվի առնելով Հայաստանի յուրօրինակ դրությունը, երբ իշխանության էին եկել անկախության կողմնակիցները, մինչդեռ հանրապետությունը շարունակում էր մնալ ԽՍՀՄ-ի կազմում, իրավական այդ ամրագրումը պիտի կատարվեր միայն բազմակուսակցական համակարգի փաստացի հաստատումից հետո: Այդօրինակ պայմաններում լիովին օրինաչափ էր, որ միակուսակցական համակարգին ընդդիմացող պատգամավորները, որոնք ներկայացնում էին տարբեր կուսակցություններ և հետևում տարամետ գաղափարախոսությունների, լծվեին բազմակուսակցական համակարգի սահմանման իրավական ասպեկտների որոշման պատասխանատու գործին: Այդպիսի ծանր աշխատանքի արդյունքն էլ դարձավ 1991 թ. փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը¹⁹: Օրենքը հասարակական-քաղաքական կազմակերպության գրանցման համար սահմանում էր պետտուրք՝ 5 հազար ռուբլու չափով, որը գանձելու էր արդարադատության նախարարությունը դրական որոշումն ընդունելուց հետո: Նշյալ օրենքի որևիցե տարրի խախտում թույլ տված կազմակերպությունը չէր գրանցվելու մինչև խախտման վերացումը: Օրենքի ընդունման մասին ՀՀ ԳԽ-ի որոշումն ուժի մեջ էր մտնում հրապարակման պահից՝ 1991 թ. ապրիլի 2-ից²⁰:

Բաղկացած լինելով սոսկ 8 հոդվածից՝ օրենքը համապարփակորեն սահմանում էր հանրապետությունում գործունեություն ծավալող հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության շրջանակը: Նախ և առաջ հստակեցվում էր, որ հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամավորության սկզբունքով միաբանված, ընտրական տարիքի հասած ՀՀ քաղաքացիների՝ ծրագիր ու կանոնադրություն

¹⁹ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995), էջ 115-118:

²⁰ Հայաստանի Հանրապետություն (03.04.1991):

ունեցող միավորումն էր: Պետական իշխանության մարմինների ձևավորմանն ու գործունեությանը մասնակցելու իրավասությունը պատկանում էր միայն այդպիսի միավորումներին: Օրենքում հատուկ շեշտված էր, որ ՀՀ արդարադատության ու ներքին գործերի նախարարությունների, պետական անվտանգության կոմիտեի, դատախազության, պետական արբիտրաժի, դատական մարմինների, մաքսային ծառայությունների աշխատակիցները, ինչպես նաև բանակում ծառայող քաղաքացիները չէին կարող ծառայության ու աշխատանքի ընթացքում լինել որևէ հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ:

Հայաստանյան պայմաններում նախադեպը չունեցող այս օրենքը հստակորեն արգելում էր հասարակական-քաղաքական կազմակերպությանը ղեկավարվել Հայաստանի տարածքից դուրս գործող կազմակերպությունների ու պետական մարմինների կողմից: Նույն եղանակով հասարակական-քաղաքական կազմակերպությունները չէին կարող ֆինանսավորվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող աղբյուրներից: Անթույլատրելի էր նաև ՀՀ պետական մարմիններում, հիմնարկ-ձեռնարկություններում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում կազմակերպական կառույցների հիմնադրումը: Հասարակական-քաղաքական կազմակերպությունն իրավունք չունեւր ՀՀ իշխանության պետական և քաղաքական կարգի բռնի փոփոխություն կամ քաղաքացիների ու կազմակերպությունների դեմ ուղղված բռնի գործողություններ ձեռնարկելու, ինչպես նաև հանդես գալու նմանատիպ կոչերով՝ համագործակցելով բռնություն կիրառող կազմակերպությունների հետ: Նույնկերպ արգելվում էր ազգային, ռասայական, կրոնական ու սոցիալական խմբերի միջև թշնամանքի հրահրման յուրաքանչյուր փորձ:

Վերոնշյալ օրենքի 5-րդ հոդվածով՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունը պիտի պատասխանատվություն կրեր, եթե «անօրինական գործողություններով նյութական կամ բարոյական վնաս էր հասցրել Հայաստանի Հանրապետությանը, ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին, քաղաքացիներին կամ թույլ տվել ՀՀ օրենսդրության այլ խախտումներ»: Այս կապակցությամբ 7-րդ հոդվածը պարզաբանում էր հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեության կասեցման ու արգելման գործընթացը: Հայսմ՝ ՀՀ օրենսդրության խախտման պարագայում ՀՀ գլխավոր դատախազը կամ արդարադատության նախարարությունը հայցադիմում էր ներկայացնելու ՀՀ գե-

րագույն դատարան, որին էլ իրավասություն էր տրված կասեցնելու կամ արգելելու հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը: Կասեցման մասին որոշման կայացման դեպքում հասարակական-քաղաքական կազմակերպության ղեկավար մարմինները պիտի տեղեկացվեին գրավոր կարգով՝ պարզաբանում ստանալով օրենքի՝ թույլ տրված խախտման մասին և ծանուցում դրանց շտկման ժամկետների մասին: Երբ հասարակական-քաղաքական կազմակերպությունը վերացնում էր իր կողմից օրենքի խախտումը, այդժամ տեղեկացնում էր ՀՀ արդարադատության նախարարությանը: Վերջինս ՀՀ գերագույն դատարանի սահմանած ժամկետից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պետք է նրան տար ազատ գործունեության թույլտվություն: Ուշագրավ է, որ հասարակական-քաղաքական կազմակերպությունը կարող էր արգելված մնալ միայն 6 ամիս, սակայն օրենքի խախտումը չշտկելու դեպքում նրա գործունեության կասեցման ժամկետը սահմանվում էր մեկ տարի, իսկ նույն գործելաոճի կրկնության պարագայում կազմակերպությունը կարող էր արգելվել վերոնշյալ կարգով: Ի դեպ, հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեության օրինականությանը հետևելու պարտականությունը դրված էր արդարադատության նախարարության վրա:

Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքն ընդունվեց ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ճնշող մեծամասնության աջակցությամբ. 148 կողմ, 11 ձեռնպահ, 1 դեմ²¹: Ակնհայտ է, որ բազմակուսակցական համակարգի ներդրման անհրաժեշտությունը վաղուց էր հասունացած: Օրենքի ընդունումից անմիջապես հետո մեկնարկեց փաստացի գործող քաղաքական կուսակցությունների իրավական գրանցման գործընթացը: Միայն 1991 թ. ընթացքում ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել ու քաղաքական գործունեությանն են ձեռնամուխ եղել շուրջ 22 քաղաքական կազմակերպություն²²: Դրանց թվում էին ՀՀԾ, ԱԻՄ, ՀՀԿ, ՀՔԴՄ, ՀՅԴ, ՀԴԿ, ՀՌԱԿ և այլք, որոնք այլ կուսակցությունների հետ պիտի բազմեին երկրի քաղաքական ներկայակնակի տարբեր աստիճանների վրա և միմյանց միջև ծավալված գործակցության ու հակադրությունների միջոցով նպաստեին քաղաքական կյանքի զարգացմանը:

²¹ Հայաստանի Հանրապետություն (03.04.1991):

²² Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ե., 2009, էջ 62:

Բազմակուսակցական համակարգի հաստատման տրամաբանական շարունակությունը պիտի լիներ Կոմկուսի տիրապետած արտոնությունների աստիճանական վերացումը: Այս համատեքստում է հարկավոր ընկալել 1991 թ. ապրիլի 17-ին ՀՀ ԳԽ որոշումը «Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայաստանի նախկին երիտասարդական լենինյան միության ունեցվածքը ազգայնացնելու մասին»։ «Նկատի ունենալով, որ պետական իշխանության կառուցվածքների հետ Կոմկուսի սերտաճումը և Կոմկուսին ղեկավար դերի ինքնաշնորհումը օգտագործվել է կուսակցության ձեռքում հսկայական նյութական միջոցների կուտակման համար և հաշվի առնելով, որ Կոմկուսի ունեցվածքը ստեղծվել է հանրապետության քաղաքացիների մի քանի սերունդների, պետական միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է ազգայնացնել Հայաստանի կոմունիստական կուսակցության և նրա փաստացի մասը կազմող նախկին Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության (ներկայումս՝ Հայաստանի երիտասարդական միություն) ամբողջ ունեցվածքը, համարել այն պետական սեփականություն և դրա տնօրինման իրավունքը հանձնել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին»²³: ՀՀ ԳԽ 1991 թ. օգոստոսի 23-ի և 24-ի որոշումներով (համապատասխանաբար՝ ԽՄԿԿ Կենտկոմի հայկական հրատարակչության և Հայաստանի կոմունիստական կուսակցության զբաղեցրած շենքի ազգայնացման մասին) ամբողջացավ բազմակուսակցական համակարգի իրավական հաստատման շրջափուլը²⁴:

Փաստացիորեն գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների քաղաքական հաստատութենականացմանը նպաստեց ՀՀ Գերագույն խորհրդում պատգամավորական խմբակցությունների վերաձևումը: Ընդգծելի է, որ պատգամավորական խմբակցություններում ընդգրկված պատգամավորների քանակը ԳԽ 1990-95 թթ. գործունեության շրջանում հաճախ էր ենթարկվում վայրիվերումների՝ կապված կուսակցությունից կուսակցություն պատգամավորների տեղաշարժերի հետ²⁵: Օրինակ՝ 1992 թ. Փետրվարի դրությամբ ՀՀԾ կուսակցության խմբակցությունը բաղկացած էր 52 պատգամավորից, որոնց թիվը հետո հասավ

²³ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 8 (998) 30.04.1991, էջ 6-7:

²⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 116, գ. 321, թ. 1:

²⁵ Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 261:

61-ի: ՀՅԴ կուսակցության խմբակցությունը 1992 թ. մարտին ընդգրկում էր 12, իսկ հետո՝ 18 պատգամավոր: ՀԿԿ խմբակցությունը 1993 թ. մարտին ուներ 21 ներկայացուցիչ, ՀՌԱԿ-ը՝ 16: Հիշարժան է, որ Գերագույն խորհրդում ներկայացված էին նաև ՀԱԺԿ (11), ԱԺՄ (8), ԱԻՄ (2), ՀՀԿ (1), ՍԻՄ (1), ՍԴՀԿ (1), ՀՔԺՄ (1), ԺԱԿ (1), Առաքելություն (2) կուսակցությունները²⁶:

Բնականաբար, կուսակցությունների պաշտոնական գրանցումը գործընթացի միայն մեկ առանցքն էր, իսկ դրանց փաստացի գոյությունն ու միջկուսակցական հարաբերությունների ակտիվացումը, իրական և գաղափարական պայքարի ծավալումն ու զարգացումը լիովին նոր իրականության ծնունդ պիտի լինեին: Ուստի չի կարելի պնդել, թե արդարադատության նախարարության գրանցամատյանում հայտնված բոլոր կուսակցություններն ակտիվ քաղաքական պայքարի կամ առնվազն փոխգործակցության մեջ են եղել: Ինչպես բազմակուսակցական համակարգը նտրած աշխարհի ժողովրդավարական բազմաթիվ այլ երկրներում, Հայաստանում նույնպես քաղաքական պայքարն ընթանում էր բազում կուսակցություններից լոկ մի քանիսի միջև: Դրա հետ մեկտեղ՝ բազմակուսակցական համակարգի իրավական հաստատման տրամաբանական հանգուցակետը դարձավ խոշոր կուսակցությունների տրոհումն ու նորերի ձևավորումը: Տրոհումներից խուսափել չկարողացավ որևէ ազդեցիկ կազմակերպություն՝ ՀՀԾ, ԱԻՄ, ՀԿԿ, ԱԺՄ և այլն: Երրորդ Հանրապետության գոյության քառորդ դարի ընթացքում այդպես էլ չստացվեց գաղափարական կուռ շարքերով, ամուր քաղաքական կազմակերպություն ստեղծել, որ կարողանար խուսանավել լուրջ պառակտումներից: Այդ հանգամանքը, անշուշտ, ապացուցում է բազմակուսակցական համակարգի հաստատումն ու գոյությունը՝ ի ցույց դնելով նաև կուսակցական համակարգի չկայացածության տխուր իրականությունը:

Բազմակուսակցական համակարգին անցման մասին ՀՀ ԳԽ որոշումից հետո ընդամենը օրեր բավական եղան դրա առարկայական դրսևորմանն ականատես լինելու համար: Խոսքը մասնավորապես վերաբերում է ԱԻՄ-ի գործունեությանը, որը նույնիսկ հասցրեց վերածվելու քաղաքական սուր խնդրի և 1991 թ. մարտի 19-ին՝ ԳԽ քննարկումների առարկայի: Անկախության հասնելու ճանապարհի ընտրության առթիվ իր անհամաձայնությամբ պայմանավորված՝ ԱԻՄ-ը Երևանում 1991թ.

²⁶ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 78:

մարտին հանրահավաքներ և ցույցեր էր կազմակերպել, որոնք աչքի էին ընկել հասարակական կարգի խախտման ցցուն արարքներով: Այդ առթիվ Գերագույն խորհրդում նույնիսկ համապատասխան հաղորդմամբ հանդես եկավ ներքին գործերի նախարար Աշոտ Մանուչարյանը՝ ներկայացնելով ԱԻՄ-ի կողմից օրենքի խախտման մի շարք դրվագներ: ԳԽ-ում կայացած քննարկումները, բարեբախտաբար, չհանգեցրին ԱԻՄ-ի գործունեության արգելմանը, ինչպես պահանջում էին որոշ պատգմավորներ: ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկությամբ՝ 132 «կողմ» ձայներով ԳԽ-ն որոշում կայացրեց բավարարվել ԱԻՄ-ին ուղղված նախազգուշացմամբ՝ իր գործունեության ընթացքում այդուհետ խուսափելու հասարակական կարգի խախտմանը միտված նույնօրինակ գործողություններից և կոչերից: ԳԽ-ն նաև առաջարկեց Նախարարների խորհրդին ԱԻՄ-ի նման պահվածքի կրկնության պարագայում քննարկել կազմակերպության կասեցման հարցը²⁷: Բազմակուսակցական համակարգը, կարելի է ասել, իր առաջին քննությունը հաջողությամբ հանձնեց: Անկախության պես կարևորագույն հարցի շուրջ ԱԻՄ-ի ձեռնարկած քայլերը փաստորեն հանգեցրել էին նկատելի ներհասարակական լարվածության, սակայն ԳԽ-ի քաղաքական դերակատարներն իրենց հերթին զսպվածություն ցուցաբերեցին՝ խորացման միտումներ ունեցող ճգնաժամի հաղթահարման հարցում: Թեև ԱԻՄ-ը փաստորեն դուրս էր եկել քաղաքական պայքարի շրջանակից (օր.՝ ԳԽ որոշումներն արհամարհելու, գորակոչին չենթարկվելու և այլ կոչեր հնչեցնելով), սակայն նրան «կարգի հրավիրելու» ԳԽ-ի մոտեցումը պահպանեց իր սթափությունը՝ սահմանափակվելով ընդամենը նախազգուշական որոշման ընդունմամբ: Ժողովրդավարության հաստատման և բազմակուսակցական համակարգը կայացնելու առաջին քայլերը կարծես հաջողությամբ էին պսակվում:

Այսպիսով, 1991 թ. փետրվարի 26-ին ընդունելով «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքը»՝ ՀՀ ԳԽ-ն Հայաստանում հաստատեց բազմակուսակցական համակարգ: Բազմակուսակցական համակարգի հաստատման պայմաններում հանրապետության քաղաքական ուժերը ձեռնամուխ եղան անկախության հիմնախնդրի քննությանն ու դրան դրական ընթացք տալու գործողություններին: Միահամուռ համաձայն լինելով անկախությանը՝ քաղաքական տարբեր կուսակցությունների միջև անհամաձայնություններ էին առաջանում գերազան-

²⁷ Մանրամասն տե՛ս ՀԱՍ, ֆ. 207, ց. 62, գ. 97:

ցապես անկախության հռչակման մեթոդների և ժամկետների հարցում: Պատմության ընթացքը ցույց տվեց, որ Հայաստանի անկախության հանրաքվեի անցկացումը տեղի ունեցավ ճիշտ պահին՝ զերծ պահելով երկիրը ներքին կամ արտաքին ցնցումներից: Հավելենք, որ անկախության հռչակումից հետո քաղաքական կուսակցությունների միջև պայքարը հասավ մեկ այլ հանգրվանի՝ ներառելով նաև երկրի մայր օրենքի՝ Սահմանադրության ընդունման խրթին ու, կարելի է ասել, ճակատագրական նշանակության գործին: Ըստ էության, բազմակուսակցական համակարգի փաստացի արարումը, ապա իրավական կարգավիճակով օժտելը ստեղծեցին խաղի համապատասխան կանոններ, որոնց պարտավոր էին ենթարկվել բոլոր քաղաքական կուսակցությունները: Թեև 1990-95 թթ. Գերագույն խորհուրդը չձևավորվեց, իսկ 1990 թ. մայիսի 20-ի ընտրությունները չկազմակերպվեցին ուղղակիորեն բազմակուսակցականության սկզբունքներով, բնույթով հենց այդպիսին էին և գուցե ավելի քաղաքական, քան հանրապետության հաջորդ խորհրդարանները:

Օրինաչափ և սուբյեկտիվ բազմաժանր գործոններով պայմանավորված՝ այդ նույն համակարգին չհաջողվեց երաշխավորել միջկուսակցական ներդաշնակ, համերաշխ հարաբերություններ: Բազմակուսակցականության պատմությունը դրսևորվել է իր ոչ միանշանակությամբ, որ հարկ է բաժանել երկու փուլի՝ 1990-94 թթ. և դրանից հետո²⁸: Առաջին փուլում միջկուսակցական պայքարը համեմատաբար ընդունված կանոնների համատեքստում էր, իսկ արդեն 1994-ին ՀՅԴ-ի կասեցումից հետո կարելի է գնահատել որպես ժողովրդավարության ճգնաժամ²⁹: Այլ կերպ ասած, միջկուսակցական հարաբերությունների լարվածությունն առանձին դեպքերում հնարավոր չեղավ հաղթահարելու առանց արմատական լուծումների, ինչն էլ իր բացասական դրոշմը թողեց կուսակցությունների միջև փոխվստահության կարծր համակարգ հաստատելու վրա: Բացասական գործոնների վերհանման տեսանկյունից հիշարժան է, որ հայաստանցիների մեծ մասը այդպես էլ չհաղթահարեց ինչ-որ առումով ենթագիտակցական անվստահությունը քաղաքական կուսակցությունների նկատմամբ, որ գալիս էր Կոմկուսի փորձառությունից³⁰: Դրանով թերևս կարելի է բացատրել թե՛ կուսակցությունների հապճեպ թուլացումը, թե՛

²⁸ Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 265:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Լիպարիտյան Ժ., նշվ. աշխ., էջ 34:

դրանց հակառակ՝ առաջնորդ անհատականությունների դերակատարության բացարձակացումը հասարակության մեջ: Հետագա իրադարձությունները, մասնավորապես 1995-96 թթ. և 1998-99 թթ. ընտրաշրջանները ցույց տվեցին, որ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր կուսակցություններն առճակատումների հետևանքով փոխադարձաբար տկարացրին միմյանց՝ խոտանելով քաղաքական առողջ համակարգի կազմակերպումը: Հետևաբար, բազմակուսակցական համակարգի ձևավորման ուշացմանը էապես խանգարեց ԼՂ հակամարտությունը, մասնավորապես Ադրբեյջանի հետ պատերազմը³¹:

Այսպիսով, բազմակուսակցական համակարգն արդարացրեց իր պատմական նշանակությունը՝ առաջին հերթին կուսակցությունների քանակական աճի դրսևորմամբ: Բավական է ասել, որ 1991-98 թթ. Հայաստանում կուսակցությունների թիվը հասնում էր 64-ի³²: Եթե 1990 թ. ընտրություններում պայքարը երկուսի միջև էր, ապա ՀՀ 1-ին գումարման ԱԺ-ի 1995 թ. ընտրություններին մասնակցում էին արդեն 13 կուսակցություն և քաղաքական միավորումներ: Ավելին՝ 1999 թ. ընտրությունների ժամանակ դրանց մասնակցող քաղաքական ուժերի թիվը հասավ 21-ի³³: Հարկավ, կուսակցությունների քանակը չի կարող ցուցիչ լինել համակարգի որակական հատկանիշի հարցում: Սակայն հաշվի առնելով հանգամանքը, որ միակուսակցական կարծի համակարգը տասնամյակների ծնունդ էր, այն էլ գերազանցապես բիրտ մեթոդներով, ապա, կարելի է ասել, բազմակուսակցական համակարգը պատմության քառուղիներում դեռ ամրապնդվելու դժվարին խնդրի առաջ էր կանգնած, որ պիտի մերթերերար, մերթ ամրանար: Դժբախտաբար, հանրապետության աստիճանական վերափոխումները ձախողվեցին սոցիալական հարթակը «անկախ կուսակցությունների ֆեդերացիայի» վերածելու գործում, ինչպես, օրինակ, հաջողվեց Իսրայելին³⁴:

Ինչևէ, Հայաստանը 1991 թ. կատարեց իր ընտրությունը և հենց դրա համատեքստում է հարկավոր ընկալել իրերի զարգացման տրամաբանությունը: Խիստ հատկանշական է, որ «Հասարակական-քաղաքա-

³¹ Թորոպյան Ս., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Ե., 2006, էջ 150:

³² Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 47:

³³ Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999. Մարդկային զարգացման 5 տարին Հայաստանում, Ե., 1999, էջ 66:

³⁴ Sherman A., նշվ. աշխ., էջ 218:

կան կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի գերագույն պատմական հատկանիշը դարձավ այն, որ որևէ կուսակցություն առավելություն չէր ստանում: Հարաբերվելով միևնույն դաշտում, ունենալով նույն իրավասություններն ու պարտականությունները՝ կուսակցությունները զգալիորեն անկաշկանդ գործելու աննախադեպ հնարավորություն էին ստանում: Խորհրդային կարգերի տապալումից հետո նման վերափոխումը հարկ է դիտարկել պատմականության համատեքստում՝ թափանցելով և՛ նշյալ շրջափուլի հասարակական կյանքի առանձնահատկությունների ոլորտը, և՛ դրանից առաջ տիրող իրականության ակունքները: Արձանագրելի է, որ քաղաքական կազմակերպությունների գործունեությունը համակարգող օրենքն իր բուն էությանմբ առաջնահերթորեն ամբողջատիրության դեմ էր: Այս առումով՝ թե՛ վերոնշյալ համակարգի հաստատումը, թե՛ դրա մատուցած արդյունքները անվիճելիորեն հարկ է դիտարկել որպես դրական երևույթ՝ բացասական տարաբնույթ իրողություններով հանդերձ:

ФОРМИРОВАНИЕ МНОГОПАРТИЙНОЙ СИСТЕМЫ В АРМЕНИИ

ОВСЕПЯН Н.А.

Резюме

На основе принятого Верховным Советом Армении 26-го февраля 1991 г. "Закона об общественно-политических организациях" в Армении была утверждена многопартийная система. Закон, определяющий деятельность общественно-политических организаций, имел огромную историческую значимость, поскольку ни одна из партий не получала дополнительных привилегий, и соответственно, принятый закон был направлен против тоталитарного режима.

THE FORMATION OF MULTI-PARTY SYSTEM IN ARMENIA

N. HOVSEPYAN

Abstract

Multi-party system was established in Armenia based on the “Law on Social-Political Organizations” adopted by the Supreme Soviet in 26 February 1991. The Law was supposed to regulate the activity of social-political organizations of Armenia. It had a unique historical significance because none of political parties gained any additional privileges. Respectively, the Law was firmly directed against totalitarianism.

ՆԱԴՈՒԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԱԶԻԶՅԱՆ Խ.Ռ.

Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքը որոշիչ դեր խաղաց նոր ժամանակաշրջանի Եվրոպայի և արաբա-օսմանյան աշխարհի փոխհարաբերություններում: Եվրոպական տերությունների միջև հենց այս ռազմարշավով հիմք դրվեց Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածքների բացահայտ գաղութացման համար մղվող հակամարտությանը: Մի կողմից, երիտասարդ գեներալի թիկունքում էր իտալական հաջողված արշավանքը, ինչպես նաև ֆրանսիական հեղափոխական բանակի՝ Եվրոպայում կռվելու փորձը, մյուս կողմից՝ Եգիպտոսը Եվրոպացիների համար ընդհանուր առմամբ անձանոթ երկիր էր: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ հարց է առաջանում, թե ինչու ռազմարշավի համար նա ընտրեց հենց Եգիպտոսը:

Ֆրանսիան դեռևս բուրժուական հեղափոխությունից շատ առաջ ճըգտում էր գրավել Եգիպտոսը, իսկ հեղափոխությունից հետո ֆրանսիական բուրժուազիան արտաքին քաղաքական օրակարգում դրեց եգիպտական հարցը: Ֆրանսիան մշտապես կարևորել է Միջերկրական ծովի արևելյան վերջնամասում գտնվող այդ երկրի ռազմավարական դիրքը: Եգիպտոսը գրավելու դեպքում Ֆրանսիան, որն արդեն իսկ իշխում էր Ապենինյան թերակղզում, հնարավորություն կստանար վերահսկողություն հաստատել Միջերկրականի ողջ տարածքում՝ մշտապես լարվածության մեջ պահելով իր վաղեմի հակառակորդ Անգլիային¹:

Նման առավելություն ձեռք բերելու հնարավորությունը բաց չթողնելու համար 1797 թ. հոկտեմբերի 26-ին և 27-ին Դիրեկտորիան Բոնապարտին

¹ Կարապետյան Ռ., *Արաբական երկրների նոր և նորագույն պայմանություն, Ե., 2003, էջ 15:*

հանձնարարեց լուծել արտաքին քաղաքական երկու խոշոր խնդիրներ, որոնք դրված էին օրակարգում.

- Անգլիայի դեմ պատերազմով էր պայմանավորված նրա նշանակումը՝ որպես այդ բանակի գլխավոր հրամանատար,
- Ռեյնի հարցի վերջնական կարգավորումը, որի համար նա Ռաշտադում նշանակվեց լիազոր ներկայացուցիչ:

Նապոլեոնը ժամանեց Ռաշտադ նոյեմբերի 26-ին, իսկ դեկտեմբերի 1-ին ավստրիական ներկայացուցիչների հետ ստորագրեց գաղտնի համաձայնագիր Սուրբ կայսրության զորքերի՝ Մայնցից, իսկ ֆրանսիական զորքերի՝ վենետիկյան տարածքներից դուրս բերելու պայմանների մասին: Դեկտեմբերի 5-ին գեներալը վերադարձավ Փարիզ և սկսեց պատրաստվել Անգլիայի դեմ պատերազմին: Անհրաժեշտ էր բանակը տեղափոխել դեպի Բրիտանական կղզիներ և ծովային ուժեր կենտրոնացնել՝ Լա-Մանշը հաղթահարելու համար: Փետրվարի 8-20-ին, զննելով ծովափը, Բոնապարտը համոզվեց, որ ֆրանսիական նավատորմը անմխիթար վիճակում է, և կասկածելով ֆրանսիացիների հաջողությանը՝ չցանկացավ վտանգել իր հեղինակությունը: Դիրեկտորիային զեկույց ներկայացնելով՝ նա դեմ արտահայտվեց զորքը Անգլիա իջեցնելուն՝ առաջարկելով հակառակորդին պարտության մատնել Հաննովերում կամ Եգիպտոսում: Հաննովերի վրա հարձակվելը նպատակահարմար չէր. դրանով ֆրանսիացիները մինչև Ռաշտադի կոնգրեսի ավարտը կարող էին կրկին ռազմական գործողություններ հրահրել Գերմանիայում: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այն պատկանում էր Օսմանյան կայսրությանը, որն այդ ժամանակ Անգլիայի դաշնակիցը չէր և Ֆրանսիայի հետ պատերազմական վիճակում չէր գտնվում²: Ընտրությունն ընկավ Եգիպտոսի վրա, և դա պայմանավորված էր հետևյալ գործոններով.

1. Եգիպտոսն ուներ աշխարհագրական բարենպաստ դիրք. այն գտնվում էր կարևոր ռազմաքաղաքական խաչմերուկում, որին տիրանալու դեպքում կարելի էր նվաճել կամ վերահսկողություն սահմանել արաբական մյուս երկրների՝ Սիրիայի, Արաբիայի Պաղեստինի, Իրաքի, Հյուսիսային Աֆրիկայի վրա, կտրել Արևելքի հետ Անգլիային կապող հաղորդակցության ուղիները, Միջերկրական ծովը դարձնել ֆրանսիական ծով, այնուհետև ներխուժել Հնդկաստան և այն ազատել Անգլիայի տիրապետությունից: Ըստ ֆրան-

² Дюфрес Р. Наполеон, М., 2003, с. 36.

սիան կառավարող Դիրեկտորիայի հաշվարկների՝ վերջինը մահացու հարված կլիներ Անգլիայի համար:

2. Հեղափոխական Ֆրանսիան, թեև հռչակեց ազատության և հավասարության լուզունգները, այդուհանդերձ, նույնպես հետամուտ էր գաղութային քաղաքականության: Ասիայում և Աֆրիկայում նոր գաղութներ ձեռք բերելը նրանք երբեք աչքաթող չէին անում, հատկապես այն բանից հետո, երբ Ֆրանսիան կորցրեց Ամերիկայում իր գաղութների մեծ մասը և ցանկանում էր դրանք փոխհատուցել նոր գաղութներով:

3. Կարևոր էր նաև անձնական գործոնը. Դիրեկտորիայի անդամներին խիստ անհանգստացնում էր գեներալ Բոնապարտի՝ օրեցօր աճող հեղինակությունը Ֆրանսիայում: Դիրեկտորիայի անդամները մտավախություն ունեին, որ վճռական գործողությունների ընդունակ գեներալը կարող է գայթակղվել, պետական հեղաշրջում կատարել և վերցնել իշխանությունը: Բոնապարտի այդ հնարավոր քայլը կանխելու նպատակով Դիրեկտորիան հավանություն տվեց Ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսը գեներալ Բոնապարտի հրամանատարությամբ Եգիպտոս ուղարկելու ծրագրին: Պետք չէ բացառել այն ենթադրությունը, որ Դիրեկտորիան ավելի քան համոզված էր, որ Բոնապարտը հաջողության չէր հասնելու: Իսկ այդ դեպքում դա հարմար առիթ կարող էր ծառայել նրան մեղադրելու, վարկաբեկելու և ասպարեզից հեռացնելու համար: Ահա այսպիսին էին նրանց հաշվարկները³:

1798 թ. մարտի 5-ին Բոնապարտը նշանակվեց գլխավոր հրամանատար և Դիրեկտորիայից հրաման ստացավ սկսել արշավանքը դեպի Եգիպտոս: Նավատորմը կազմված էր մոտ 350 մեծ ու փոքր նավերից և բեռնանավերից⁴: Այն պետք է տեղափոխեր 30 հազար մարդ, 1200 ձի, 171 հրանոթ, ինչպես նաև գիտական նպատակներով ուղևորվող անձանց⁵: Ֆրանսիայի լավագույն գեներալները՝ Կլեբերը, Բերտիեն, Դեգեն, Լաննը, Մյուրատը, Բեսիերը, Բոնապարտի ամենամտերիմ գործակիցները՝ ժյունոն, Մարմոնը, Դյուրոկը, Սուվոդսկին, Լավալետը, Բուրիենը կազմում էին հրամանատարի «արևելյան բանակի» հիմնաքարը⁶:

1798 թ. մայիսի 19-ին Ֆրանսիական զորքերը դուրս եկան Տուլոնից և ուղևորվեցին դեպի Մալթա: Ֆրանսիական նավատորմը հունիսի 9-ին հա-

³ Հովհաննիսյան Ն., *Արաբական երկրների պատմություն, հ. 2, Օսմանյան տիրապետության շրջան (1516-1918 թթ.)*, Ե., 2004, էջ 113-114:

⁴ Тарле Е. Наполеон, М., 1957, с. 60.

⁵ Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 37:

⁶ Манфред А. Наполеон Бонапарт, М., 1971, с. 207.

սավ Մալթա և առանց դիմադրության գրավեց այն, իսկ հունիսի 19-ին արդեն շարունակում էր իր ճանապարհը դեպի Եգիպտոս⁷։ Բոնապարտն իր բանակով հունիսի 30-ին հասավ Եգիպտոսի ափերին և խարիսխ գցեց Ալեքսանդրիա քաղաքից ոչ հեռու։ Ալեքսանդրիա հասնելուն պես նա տեղեկացավ, որ իր գալուց 48 ժամ առաջ Ալեքսանդրիային է մոտեցել անգլիական նավատորմը և հարցրել Բոնապարտի մասին (որի մասին, իհարկե, Ալեքսանդրիայում զաղափար անգամ չունեին)։ Պարզվեց, որ անգլիական նավատորմի հրամանատար ծովակալ Նելսոնը, տեղեկանալով, որ ֆրանսիացիները գրավել են Մալթան, մեծ արագությամբ սլացել է Եգիպտոս, որ ծովում ոչնչացնի նրանց նավատորմը՝ չթողնելով ափ դուրս գալ։ Սակայն դա նրան չհաջողվեց իր իսկ շտապողականության և բրիտանական նավատորմի արագընթացության պատճառով։ Սկզբում ճիշտ հասկանալով, որ Բոնապարտը Մալթայից գնացել է դեպի Եգիպտոս՝ Նելսոնը մոլորության մեջ ընկավ, երբ Ալեքսանդրիայում նրան ասացին, որ Բոնապարտի մասին տեղեկություն չունեն։ Այդ ժամանակ Նելսոնը ուղևորվեց դեպի Կոստանդնուպոլիս՝ մտածելով, որ այնտեղ կարող է հանդիպել ֆրանսիացիներին։ Այսպիսով, Նելսոնի սխալները և պատահականությունները էապես օգնեցին ֆրանսիական ռազմարշավին։ Նելսոնը ամեն լուր կարող էր վերադառնալ, ուստի ֆրանսիացիները մեծ արագությամբ ափ իջան. հուլիսի 2-ի գիշերը ժամը 2-ին զորքերը արդեն ցամաքի վրա էին⁸։ Թուրքական կայսրը, որը հարձակման ենթարկվեց առանց պատերազմի հայտարարության, ջախջախվեց, և 3 հազար ֆրանսիացիներ Կլեբերի հրամանատարությամբ գրավեցին Ալեքսանդրիան։ Բոնապարտը, մնացած զորքի գլուխ անցած, շարժվեց դեպի Կահիրե, իսկ նավատորմը բարձրացավ Նեղոսով դեպի վեր։ Հուլիսի 21-ին Կահիրեից ոչ հեռու՝ Գիզայում, որտեղ գտնվում են Քեոփսի և եգիպտական այլ փարավոնների բուրգերը, մամլուքների հեծելազորը, Մուրադ և Իբրահիմ բեյերի գլխավորությամբ, հարձակվեց ֆրանսիական բանակի վրա, սակայն նրա հարձակումները կասեցվեցին ֆրանսիացիների կողմից⁹։ Մամլուքների զորքը հիմնովին ջախջախվեց՝ տալով 10 հազար զոհ, սակայն Մուրադ բեյին հաջողվեց փախչել կովի դաշտից։ Ինչ վերաբերում է ֆրանսիացիներին, ապա վերջինների վնասները էական չէին. նրանք տվեցին 29 զոհ և 260 վիրավոր։ Այս հաղթանակը խիստ ոգևոր-

⁷ Cole J. *Napoleon's Egypt, Invading the Middle East*, New York, 2007, p. 8-11.

⁸ Бешанов В. *Шестьдесят сражений Наполеона*, Минск, 2000, с. 74-77.

⁹ Манфред А., նշվ. աշխ., էջ 214:

րեց ֆրանսիացիներին և հեշտացրեց Կահիրեի գրավումը: Հուլիսի 24-ին նրանք մտան Կահիրե, սակայն Բոնապարտը երկար չվայելեց իր հաղթանակը¹⁰: 1798 թ. օգոստոսի 1-ին անգլիական նավատորմը, ծովակալ Նելսոնի գլխավորությամբ, հարձակվեց Աբուկիրի ծովախորշում խարսխված ծովակալ Բրյուսեի ֆրանսիական նավատորմի վրա, և, չնայած այն բանին, որ ֆրանսիացիները թնդանոթների առավելություն ունեին, Նելսոնը իր ձեռքը վերցրեց նախաձեռնությունը և մարտի ելքը լուծեց իր օգտին: Օգոստոսի 2-ի առավոտյան ֆրանսիական նավատորմը դադարեց գոյություն ունենալուց, իսկ ծովակալ Բրյուսեն սպանվեց մարտում¹¹:

Աբուկիրում կրած պարտությունը ծանր հետևանքներ ունեցավ Բոնապարտի առաքելության վրա: Խզվեց ծովային կապը Ֆրանսիայի հետ, որի պատճառով նրա զորքերը այլևս չէին կարող համալրում ստանալ: Անգլիացիների կողմից ֆրանսիական նավատորմի ոչնչացումից հետո Բոնապարտն այլևս չէր կարող մտածել Հնդկաստանին տիրանալու և Անգլիային ծնկի բերելու մասին: Նա այժմ ավելի շատ պետք է մտածեր իր և իրեն վստահված ֆրանսիական զորքերի փրկության մասին: Ֆրանսիացիների դրությունը բարդանում էր նաև այն պատճառով, որ Եգիպտոսը, փաստորեն, նրանց համար վերածվեց թշնամական միջավայրի: Եգիպտացիները նրանց չընկալեցին որպես ազատարարների, որոնք եկել էին իրենց ազատագրելու մամուլներից և օսմանյան սուլթանի տիրապետությունից, այլ նրանց դիտում էին որպես օտար նվաճողներ: Եգիպտացիների հակաֆրանսիական զգացմունքների առաջացման մեջ իր դերն ունեցավ Բոնապարտի երկակի քաղաքականությունը: Նա, հակառակ իր խոստումների, եգիպտացիների հետ վարվում էր շատ դաժան կերպով. երբ նրա զորքերը մտան Կահիրե, սկսեցին կողոպտել քաղաքի բնակչությանը, հրկիզել նրանց տները և շատերին մահապատժի ենթարկել: Բանակի կարիքները բավարարելու համար Բոնապարտի հրամանով գյուղացիներից բռնագրավվեցին հացահատիկը և անասնակերը: Բնականաբար, նման քաղաքականությունը ֆրանսիացիների դեմ պետք է լարեր երկրի գյուղական և քաղաքային բնակչությանը: Բոնազավթումը տեղական բնակչության համար անհանդուրժելի էր, և դրությունը ավելի սրվեց, երբ սուլթան Սելիմ Երրորդը ֆրանսիացիների դեմ սրբազան պատերազմի կոչ արեց: 1798 թ. սեպտեմբերից սկսած՝ ապստամբություններն ավելի հաճախակի դարձան, որոնց էլ

¹⁰ **McLynn F.** *Napoleon. A Biography*, New York, 2002, p. 179.

¹¹ **Бешанов В.**, նշվ. աշխ., էջ 84:

հետևում էին արյունալի պատիժները: 1798 թ. հոկտեմբերին ապստամբություն սկսվեց նաև Կահիրեում: Ապստամբական շարժման կենտրոն դարձավ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր մզկիթներից մեկը՝ ալ-Ազհարը, որտեղ հավաքվեց մոտ 15 հազար կահիրեցի: Ալ-Ազհարի անցնելը ապստամբների կողմը մեծ նշանակություն ունեցավ: Կահիրեին օգնության եկան գյուղացիները՝ մոտ 5000 ֆելլահներ, ինչպես նաև քոչվոր բեդվինները հարևան լիբիական անապատից: Բռնապարտը հրամայեց հրետակոծել ալ-Ազհար մզկիթը և նրանում կենտրոնացված մոտ 15 հազար հասարակ, հավատացյալ մուսուլմանների: Այդ ռմբակոծության զոհը դարձան հազարավոր մարդիկ, իսկ մզկիթից դուրս փախչողներին սրախողխող էին անում ֆրանսիացի զինվորները: Այսպիսով, ֆրանսիացիների կողմից ապստամբության ճնշումը վերածվեց իսկական սպանդի: Նրանք նույն կերպ վարվեցին նաև ապստամբներին օգնության եկած ֆելլահների և բեդվինների հետ, իսկ նրանց 6 ղեկավարները գլխատվեցին: Այսպիսի ողբերգական ավարտ ունեցավ եգիպտացիների հակաֆրանսիական ապստամբությունը¹²:

Ռազմական տեսանկյունից եգիպտական արշավանքը ձախողվեց: Եգիպտոսում Բռնապարտը փորձեց իր կողմը գրավել բնակչության վերնախավին և դրա համար զբաղվեց իշխանության մարմինների և վարչակարգի կազմավորմամբ, ինչպես նաև օրենքների հրապարակումով: Բայց քանի որ նա չհրաժարվեց երկրի շահագործումից, այդ քաղաքականությունը տապալվեց: Գիտակցելով, որ հնարավորություն չունի անմիջականորեն ղեկավարել երկիրը՝ Նապոլեոնը յուրաքանչյուր քաղաքում անվանի մարդկանցից ստեղծեց «դիվաններ»: Վերջինները գործում էին ֆրանսիական կոմիսարների հսկողության տակ, որոնց վրա դրված էին ղեկավարելու, մատակարարելու և կարգը պահպանելու պարտականությունները: Դրա հետ մեկտեղ նա պահպանեց տեղական դատավարության և հարկահավաքության համակարգը¹³:

Անգլիան Եգիպտոսի վրա հարձակվելու նախագիծ մշակեց թուրքական 2 բանակներով, որոնցից մեկը տեղակայվեց Նեղոսի դելտայից արևմուտք, իսկ երկրորդը շարժվեց Սիրիայից: Բռնապարտը շարժվեց դեպի Սիրիա՝ նպատակ ունենալով նախ հարված հասցնել թուրքական բանակին: Հասկանալով, որ Ֆրանսիայից որևէ օգնություն չի ստանա, և հնդկա-

¹² Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 119-122:

¹³ Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 39:

կան ուղղությունը այլևս իրատեսական չէ՝ Բոնապարտը միակ ելքը համարեց Եգիպտոսից դեպի հյուսիս շարժվելով՝ Սիրիա և այնուհետև Փոքր Ասիա ներխուժելը: 1799 թ. փետրվարի 10-ին էքսպեդիցիոն կորպուսը լքեց Կահիրեն: Անցումը անապատի միջով և ժանտախտը ջախջախիչ հարված հասցրեցին Նապոլեոնի բանակին: Այդուհանդերձ, փետրվարի 21-ին ֆրանսիացիները գրավեցին Էլ-Արիշը, փետրվարի 25-ին հանձնվեց նաև Գազան, որտեղ ֆրանսիացիները գերի վերցրեցին 2000 մարդու¹⁴: Անցնելով Սուեզի պարանոցը՝ Նապոլեոնը շարժվեց դեպի Յաֆա և 1799 թ. մարտի 4-ին պաշարեց այն: Բոնապարտը հրամայեց Յաֆայի բնակչությանը հայտարարել, որ, եթե քաղաքը գրոհով առնվի, բոլոր բնակիչները կկոտորվեն, սակայն Յաֆան անձնատուր չեղավ: Մարտի 6-ին տեղի ունեցավ գրոհը, և զինվորները, Բոնապարտի խոստման համաձայն, ներխուժելով քաղաք, սկսեցին անխնա կոտորել բոլորին. երկու հազար թուրք զինվորներ և բազմաթիվ քաղաքացիներ սպանվեցին¹⁵: Յաֆայից հետո ֆրանսիացիները գրավեցին նաև Հայֆան: Սակայն թե՛ երկարատև պաշարումը, թե՛ հարձակումը Բոնապարտին թույլ չտվեցին գրավել Ալլա ամրոցը (ինչպես ֆրանսիացիներն են ասում՝ Սեն-ժան դ'Ալլըր), որի պաշտպանությունը ղեկավարում էր ֆրանսիացի փախստական Լե Պիկար դե Ֆելիպպոն, որը ժամանակին ուսանել էր Նապոլեոնի հետ Բրիեննում: Երբ անգլիական նավատորմի հրամանատար Սիրենս Սմիթը ծովում գրավեց Բոնապարտի հրանոթային փոխադրամիջոցը, իսկ իր սեփական հրանոթներով ուժեղացրեց ամրոցը, Բոնապարտը հասկացավ, որ Ալլը սիրիական արշավանքի վերջն է այնպես, ինչպես Աբուկիրեն՝ եգիպտականինը: Այսպիսով, Ալլի պաշարումը տևեց 2 ամիս և ավարտվեց անհաջողությամբ, որից հետո ֆրանսիացիները սկսեցին նահանջը դեպի Եգիպտոս արդեն հյուժված բանակով¹⁶:

Պաշտոնական տվյալներով, սիրիական արշավանքի ժամանակ ֆրանսիացիների կորուստները կազմեցին 1200 սպանված, 1800 վիրավոր, 600 մարդ էլ մահացավ ժանտախտից: Ըստ բժիշկ Ալեն Ժերարի, մահացածների ընդհանուր թիվը 4945 էր¹⁷: 1799 թ. հունիսի 14-ին Նապոլեոնի բանակը վերադարձավ Կահիրե: Բոնապարտը դեռ չէր հանգստացել, երբ լուր եկավ, թե Աբուկիրի մոտ թուրքական բանակ է ափ իջել, որն ուղարկված է Եգիպտոսն ազատագրելու ֆրանսիական զորքերից: Բոնապարտն անմիջապես

¹⁴ **McLynn F.**, նշվ. աշխ., էջ 189:

¹⁵ **Abbott J.** *The Life of Napoleon Bonaparte*, London, 1900, p. 99-101.

¹⁶ **Мережковский Д.** *Данте. Наполеон*, М., 2000, с. 386.

¹⁷ **Бешанов В.**, նշվ. աշխ., էջ 99:

իր բանակով դուրս եկավ Կահիրեից և ուղևորվեց հյուսիս՝ դեպի Նեղոսի դելտան¹⁸: Հուլիսի 25-ին նա հարձակվեց թուրքական բանակի վրա և ջախջախեց թուրքական նավատորմը. գրեթե 15 հազար թուրք կոտորվեցին այդ հարձակման ընթացքում¹⁹: Այս մարտում ևս Նապոլեոնը հրամայում է գերի չվերցնել, այլ բոլորին կոտորել: Ահա այդ ժամանակ տեղի ունեցավ անսպասելին: Բռնապարտը, որ երկար ժամանակ կտրված էր Եվրոպայից, «պատահաբար» իր ձեռքն ընկած մի լրագրից ցնցող նորություններ իմացավ: Նա տեղեկացավ, որ Եգիպտոսը նվաճելու ժամանակ Ավստրիան, Անգլիան, Ռուսաստանը և Նեապոլի թագավորությունը վերսկսել են պատերազմը Ֆրանսիայի դեմ, իսկ Սուվորովը երևացել է Իտալիայում, ջարդել է ֆրանսիացիներին, ոչնչացրել Այսրալայան Հանրապետությունը, շարժվել դեպի Ալպյան լեռներ և սպառնում է ներխուժել Ֆրանսիա: Այդ ամենի հետևանքով բուն Ֆրանսիայում խառնակություն էր տիրում, իսկ Դիրեկտորիան ատելի էր դարձել ժողովրդի համար: Այս ամենն իմանալով՝ Նապոլեոնը որոշում ընդունեց բանակի հրամանատարությունը հանձնել գեներալ Կլեբերին, հրամայեց շտապ կարգով և խիստ գաղտնի 4 նավ պատրաստել, դրանց վրա տեղավորելով իր կողմից ընտրված մոտ 500 մարդու՝ նրանց հետ 1799 թ. օգոստոսի 22-ին մեկնեց Ֆրանսիա²⁰: Հինգ ամիս անց՝ 1800 թ. հունվարի 21-ին, Էլ-Արիշում Կլեբերը ստիպված էր ստորագրել հաշտության համաձայնագիր, որը նախատեսում էր ֆրանսիական զորքերի տարահանումը: Սակայն նրա հակառակորդներին դա արդեն չէր բավարարում: Անգլիական կառավարությունը հրաժարվեց հաստատել համաձայնագիրը և պահանջեց, որ ֆրանսիական բանակը անվերապահորեն անձնատուր լինի և հանձնի բոլոր զենքերը: Կլեբերը, հայտնվելով անելանելի դրության մեջ, հարձակվեց հակառակորդի վրա և 1800 թ. մարտի 20-ին Հելիոպոլի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց թուրքերին և դուրս շարտեց Եգիպտոսից: Այդուամենայնիվ, դա չբարելավեց ֆրանսիացիների դրությունը²¹: Այդ ժամանակ Կահիրեում տեղի ունեցավ երկրորդ ապստամբությունը: Սկզբնական շրջանում հաջողությունն ուղեկցում էր ապստամբներին, որոնք ոչնչացրին Կահիրեում ֆրանսիական կայազորը, սակայն այս անգամ ևս ֆրանսիական զորքերին հաջողվեց շրջապատել Կահիրեն և մեկ ամսվա պաշարումից հետո դաժանորեն ճնշել ապստամբու-

¹⁸ Geer W. *Napoleon the First, An Intimate Biography*, New York, 1921, p. 103-104.

¹⁹ Тененбаум Б. *Великий Наполеон. Моя любовница-власть*, М., 2011, с. 62.

²⁰ Тарле Е., նշվ. աշխ., էջ 69:

²¹ Бешанов В., նշվ. աշխ., էջ 106:

թյունը: Այսպիսով, Կահիրեի երկրորդ ապստամբությունը, ինչպես և առաջինը, թեև շատ թանկ նստեց եգիպտացիների վրա, այնուամենայնիվ, ցույց տվեց, որ ֆրանսիացիները որևէ հենարան չունեն եգիպտոսում մնալու, առավել ևս այն իրենց տիրապետության տակ պահելու համար²²:

1801 թ. սկզբից եգիպտոսում ֆրանսիական կորպուսի դրությունը դառնում է օրհասական: Եգիպտոս է մտնում անգլիական 20 հազարանոց կորպուսը, որը նախ շրջապատում է Կահիրեն, ապա՝ Ալեքսանդրիան: Ֆրանսիացիները հունիսին հանձնում են Կահիրեն, իսկ օգոստոսին՝ Ալեքսանդրիան: 1801 թ. սեպտեմբերին այն, ինչ մնացել էր ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսից, անգլիացիների թույլտվությամբ հեռանում է եգիպտոսից և վերադառնում Ֆրանսիա: Նույն թվականի հոկտեմբերի 9-ին հաշտության պայմանագիր ստորագրվեց Ֆրանսիայի և Թուրքիայի միջև, որով Ֆրանսիան կորցրեց եգիպտոսը, իսկ Օսմանյան կայսրությունը վերականգնեց իր տիրապետությունը եգիպտոսի վրա:

Այսպիսով, ֆրանսիական Դիրեկտորիան պարտություն կրեց իր հետապնդած բոլոր երեք հիմնախնդիրներում: Ֆրանսիան չկարողացավ հաստատվել եգիպտոսում և այն օգտագործել որպես կամուրջ Հնդկաստան դուրս գալու համար: Չիրականացան նաև նոր գաղութներ նվաճելու և Բոնապարտի հեղինակագրկվելու ու քաղաքական ասպարեզից նրա հեռանալու՝ Դիրեկտորիայի սպասելիքները: Նապոլեոնի եգիպտական արշավանքը ձախողվեց, բայց դա չհանգեցրեց նրա քաղաքական կարիերայի կործանմանը: Ընդհակառակը, Բոնապարտը կարողացավ վերադառնալ Ֆրանսիա, ցրեց Դիրեկտորիան, դարձավ Ֆրանսիայի առաջին կոնսուլը՝ դրանով իսկ հող նախապատրաստելով մի քանի տարի անց Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Առաջին հռչակվելու²³:

Նապոլեոնի արշավանքի ամենակարևոր արդյունքը եղավ այն, որ շուրջ 3 տարվա ֆրանսիական իշխանության ընթացքում եգիպտոսը ձեռք բերեց ազգային-ազատագրական շարժման առաջին փորձառությունը, իսկ ֆրանսիացիների համար միակ օգուտն այդ արշավանքից եղավ այն, որ բանակում գտնվող տարբեր մասնագիտությունների տեր անձինք կատարեցին հետազոտություններ մաթեմատիկայի, աստղագիտության, հիդրոլոգիայի, բժշկության, պատմության, արվեստի, իրավունքի, լեզվաբանության բնագավառներում: Արշավանքի ընթացքում նրանք կարողացան մանրա-

²² Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 123-124:

²³ Նույն տեղում, էջ 124-125:

մասն ուսումնասիրել Եգիպտոսը և դրա շնորհիվ ժառանգություն թողնել 20 հատորանոց՝ «Եգիպտոսի նկարագրությունը» (“Description de l’ Egypte”) արժեքավոր աշխատությունը, որտեղ առկա են տարբեր տեղեկություններ Եգիպտոսի ջրամատակարարման, գյուղատնտեսության, արհեստների, ավանդույթների, մշակութային հուշարձանների, ժողովրդական երաժշտության, սոցիալական հարաբերությունների և այլնի մասին²⁴։ Զորքին ուղեկցող գիտնականների գործունեությունը դյուրացնելու համար Բոնապարտը 1798 թ. օգոստոսի 22-ին հրամայեց ստեղծել Ֆրանսիական ակադեմիայի մասնաճյուղ՝ «Եգիպտոսի ինստիտուտ», որի առաքելությունն էր «նպաստել Եգիպտոսի առաջընթացին և լուսավորության տարածմանը», ինչպես նաև ուսումնասիրել երկրի ռեսուրսները և պատմությունը։ Ֆրանսերենով հրատարակվեց երկու լրագիր՝ «Եգիպտոսի սուրհանդակը» և «Եգիպտոսի տասնօրյակը»։ Հնարավորություն ստեղծվեց խոսելու Եգիպտոսի վերելքի մասին, որն ազատվել էր տնտեսական, հասարակական և նույնիսկ կրոնական սահմանափակումներից, որոնք առաջացել էին մամլուքների բռնապետության ժամանակ²⁵։ Եթե առաքելության առաջին մասը տապալվեց, ապա երկրորդը սկիզբ դրեց եգիպտագիտությանը։ Առաջնորդվելով Դիրեկտորիայի գաղափարներով՝ Բոնապարտը հրամայեց միջոցներ ձեռնարկել Նեղոսով նավարկությունը բարելավելու համար և վերականգնել Նեղոսը և Կարմիր ծովը իրար կապող հին ուղիները, ինչպես նաև ներկայացնել ճանապարհների շինարարության նախագծեր։ Բացի այդ, նրա կարգադրությամբ ուսումնասիրվեցին Նեղոսի ջրերի մաքրման հնարավորությունները և արևադարձային մշակաբույսերի կլիմայավարժեցումը։ Հաշվի առնելով զինվորներին համաճարակներից պաշտպանելու անհրաժեշտությունը՝ միջոցներ ձեռնարկվեցին տեղական բնակչության առողջության պահպանման համար²⁶։ Բժշկության ոլորտում աշխատանք սկսած Լարրեյը և Դեժենտը Ալեքսանդրիայում, Ռոզետտայում, Դամիեթում ու Կահիրեում բացեցին հիվանդանոցներ և սկսեցին զբաղվել զանազան հիվանդությունների ուսումնասիրությամբ²⁷։ Բոնապարտը մեծ համակրանքով և ուշադրությամբ էր վերաբերվում իր գիտնական ուղեկիցներին, որոնց նա իր հետ վերցրել էր մասնակցելու ռազմարշավին։ Մամլուքների հետ տեղի ունենալիք մի

²⁴ Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 21։

²⁵ Тюлар Ж. Наполеон, или миф о «спасителе», М., 2009, с. 78.

²⁶ Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 39-40։

²⁷ Чандлер Д. Военные кампании Наполеона. Триумф и трагедия завоевателя, М., 2000, с. 152.

ճակատամարտից առաջ նա հրամայել է. «Էշերին և գիտնականներին՝ մեջտեղ»։ Ըստ Ե. Տարլեի, դա նշանակում էր ճակատամարտի ընթացքում պաշտպանել արշավախմբի համար կենսական նշանակություն ունեցող բեռնակիր կենդանիներին և գիտության ներկայացուցիչներին, ինչով ակնհայտորեն ցույց էր տալիս գիտության առանձնակի նշանակությունը իր համար²⁸։

Ամփոփելով նշենք, որ Նապոլեոն Բոնապարտի արշավանքը շատ կարեւոր էր ֆրանսիացիների համար. ունենալով համեմատաբար թույլ նավատորմ, ինչը հնարավորություն չէր տալիս ուղղակիորեն պայքարել Անգլիայի դեմ, ֆրանսիացիներն իրենց համար առաջնային նպատակ սահմանեցին Եգիպտոսը դարձնել իրենց գաղութը՝ մշտապես լարվածության մեջ պահելով հակառակորդ Անգլիային և Միջերկրական ծովը դարձնել ֆրանսիական։ Թեև ֆրանսիացիները Եգիպտոսում ունեցան էական ռազմական հաջողություններ և անցան իշխանության գլուխ, սակայն այդ ճանապարհին թույլ տված քաղաքական կոպիտ սխալները հնարավորություն չընձեռեցին այդ իշխանությունը ամրապնդել և հարատև դարձնել ֆրանսիական տիրապետությունը Եգիպտոսում։ Բոնապարտի՝ տեղացի բնակչության նկատմամբ կիրառած կոպիտ քաղաքականությունը չէր կարող իր հետևանքները չունենալ. չնայած երկրի կարևոր ոլորտներում իր իրականացրած բարեփոխումներին, նա բնակչության կողմից չճանաչվեց որպես ազատարար, այլ ընկալվեց որպես հերթական բռնազավթիչ։ Մինչդեռ ճիշտ մշակված քաղաքականությունը ոչ միայն ավելի կհեշտացներ եգիպտական տարածքների գրավումը, այլ նաև անգլիացիների դեմ հետագա պայքարում Բոնապարտին թույլ կտար իր կողքին ունենալ եգիպտացիների աջակցությունը։ Քաղաքական այս սխալը իր տրամաբանական հետևանքն ունեցավ ֆրանսիական ռազմարշավի համար. 1801 թ. Ֆրանսիայի և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը և 1802 թ. կնքված անգլո-ֆրանսիական՝ Ամիենյան հաշտությունը վերջնականապես խափանեցին Բոնապարտի եգիպտական նկրտումները։ Համաձայն վերոնշյալ համաձայնագրերի՝ Եգիպտոսը կրկին անցավ թուրքական սուլթանի սուվերենության տակ, ինչով վերջ դրվեց նաև Նապոլեոն Բոնապարտի եգիպտական ռազմարշավին։

²⁸ Тарле Е., *նշվ. աշխ.*, էջ 64։

МОТИВАЦИЯ И ПОСЛЕДСТВИЯ ЕГИПЕТСКОЙ ЭКСПЕДИЦИИ НАПОЛЕОНА БОНАПАРТА

АЗИЗЯН Х.Р.

Резюме

Французская Директория преследовала цель завоевать Египет, что обеспечило бы военно-экономическое превосходство в отношении Англии и могло решить вопрос Рейна. Выступая в роли освободителя, французская военная экспедиция на самом деле преследовала экспансионистские цели. В результате Наполеон Бонапарт вынужден был бороться не только против англичан, но и против египетских националистов. Победа английской дипломатии завершилась подписанием в 1801 и 1802 годах соглашения о заключении перемирия между Францией и Турцией, а также Францией и Англией, и таким образом Египет вновь оказался под суверенитетом турецкого султана.

THE MOTIVATION AND CONSEQUENCES OF THE EGYPTIAN EXPEDITION OF NAPOLEON BONAPARTE

KH. AZIZYAN

Abstract

The French Directory pursued the goal of conquering Egypt, which would provide military and economic superiority over England and could solve the Rhine problem. Acting as a liberator, the French military expedition actually pursued expansionist goals. As a result, Napoleon Bonaparte was forced to fight not only against the British, but against the Egyptian nationalists too. The victory of British diplomacy has ended by signing an agreement on conclusion of truce in 1801 and 1802 between France and Turkey, as well as France and England, and thus Egypt has become again under the sovereignty of the Turkish sultan.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՎԵՏՅԱՆ Ա.Ս.

Խոշոր քաղաքների հիմնական խնդիրը սահմանափակ ռեսուրսների արդյունավետ կառավարումն է, համայնքի բնակչությանը որակյալ հանրային ծառայություններ մատուցելու ոչ միայն իրավունքի, այլև կարողության իրացման ապահովումը: Այս առումով կարևորում ենք քաղաքներին օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը համարժեք ֆինանսական միջոցների կայուն և ճկուն բազայի ապահովումը, սեփական ֆինանսական միջոցների ձևավորման և ինքնուրույն ֆինանսական քաղաքականության իրականացման հնարավորությունների ընձեռումը: Այսպիսով՝ վերը նշված նպատակին հասնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե ֆինանսական կառավարման որ մակարդակում է քաղաքը, որն էլ կհանդիսանա ելակետ հետագա քայլերն իրականացնելու համար: Խնդիր է առաջանում գնահատելու քաղաքի ֆինանսական կառավարման մակարդակը:

Քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բոլոր քաղաքները տեղական ինքնակառավարման միավորներ են, հետևաբար վերլուծություններն իրականացնելիս հիմնվել ենք հենց տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական կառավարման տեսամեթոդաբանական հիմնադրույթների վրա:

Տեղական ինքնակառավարման համակարգում ֆինանսական կառավարման արդյունավետության ապահովման խնդիրը թե՛ երկրների կառավարությունների, թե՛ միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում է: Մշակվում և իրենց կիրառությունն են ստանում մի շարք մեթոդաբանություններ, որոնցից մի քանիսին մանրամասնորեն կանդրադառնանք: Ընդ որում՝ որոշ մեթոդաբանությունների հիմքում ֆի-

նանսական կառավարումն ընկալվում է իր նեղ իմաստով, այսինքն՝ որպես բյուջետավարման, հաշվապահական հաշվառման, բյուջեի իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացների ամբողջություն, որն իր վրա է կրում տեղական ինքնակառավարման մարմինների կայացրած քաղաքական և տնտեսական որոշումների, ընտրած ռազմավարության ուղղակի ազդեցությունը, իսկ որոշների հիմքում՝ լայն առումով, որպես համայնքի բնակչության պահանջմունքները բավարարելու նպատակով հանրային ծառայությունների պատշաճ զամբյուղի ձևավորում ու դրանց մատուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում:

Միջազգային վարկանիշային կազմակերպությունների՝ տեղական ինքնակառավարման միավորներին հանրային ֆինանսների ոլորտում վարկանիշի շնորհումը ինքնին ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆինանսական կառավարման արդյունավետության գնահատում:

2016 թ. դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Ֆիտչ միջազգային կազմակերպության շնորհած վարկանիշը Երևանին՝ երկարաժամկետ և կարճաժամկետ վարկունակության վերաբերյալ¹: Կազմակերպության մեթոդաբանությունը քաղաքի ֆինանսական կառավարումը դիտարկում է լայն առումով՝ գնահատականի վրա ազդող գործոններից կարևորելով ինստիտուցիոնալ միջավայրը: Այն վերլուծելիս Ֆիտչը դիտարկում է սահմանադրական և ազգային կարգավորումը, վերին մակարդակների վերահսկողության և ազդեցության լծակների հնարավորությունները, ֆինանսական համահարթեցման մեխանիզմները, ինչպես նաև թափանցիկության ապահովման ցանկությունն ու կարողությունը²:

Ֆիտչը առանձնացնում է ինստիտուցիոնալ միջավայրի գնահատման մի քանի գործոն, որոնցից առաջինը եկամուտների և ծախսերի կառուցվածքն է: Այն ներառում է՝

1. **Հարկեր:** Որքան բազմազան և դիվերսիֆիկացված է հարկային բազան, այնքան մեծ է համայնքի գործելու ճկունությունը: Ֆիտչը բացասական է դիտարկում եկամուտներում մեկ կամ երկու հարկատեսակների

¹ <https://www.fitchratings.com/site/pr/1015770>

² Базовая методология. Присвоение рейтингов местным и региональным органам власти за пределами США. Fitch Ratings, 18.04.16, с. 3-10.

առկայությունը, որոնք նաև կարող են էական կախվածություն ունենալ տնտեսական ակտիվությունից (օրինակ շահութահարկը կամ ԱԱՀ-ն):

Գնահատման այս մոտեցումը թեև հիմնված է տնտեսական գործընթացների տրամաբանության վրա, այնուամենայնիվ, դրա բացարձակ կիրառությունը կարող է խնդրահարույց լինել: Մասնավորապես, Երևան համայնքին ամրագրված են երկու հարկատեսակներ՝ գույքահարկը և հողի հարկը: Ստացվում է, որ այս հանգամանքը գնահատականի վրա բացասաբար է ազդում: Սակայն, միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ երկու հարկատեսակներն էլ կանխատեսելի են, և դրանց հարկման բազան հարաբերականորեն կայուն է: Օրինակ, փոխադրամիջոցների գույքահարկի հավաքման հիմքում դրված են այնպիսի լծակներ, որոնք ապահովում են հարկի հավաքման թե՛ կանխատեսելիություն, թե՛ հուսալիություն:

2. Հարկերի դրույքաչափերում և հարկման բազայում փոփոխություն կատարելու լիազորություն: ՀՀ օրենսդրությամբ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ տարեկան բյուջեն հաստատելուց առաջ սահմանում է տեղական տուրքերի դրույքաչափերը օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սակայն հարկերի դրույքաչափերի փոփոխություն կարող է իրականացվել միայն կենտրոնական կառավարման մարմինների միջոցով՝ օրենքի փոփոխությամբ:

Ֆիտչը կարևորում է պաշտոնական դրամաշնորհների տրամադրման կառուցակարգերը՝ համարելով, որ թե՛ համահարթեցման նպատակով փոխանցվող ֆինանսական ռեսուրսները և թե՛ նպատակային հատկացումները պետք է հիմնված լինեն հիմնավոր, նախապես մշակված մեթոդաբանությունների հիման վրա: Այս հանգամանքն իրականում շատ կարևոր բացթողում էր Համաշխարհային բանկի մշակած՝ տեղական ինքնակառավարման մարմինների ապակենտրոնացման մակարդակը որոշող մեթոդաբանության մեջ (դրան կանդրադառնանք ստորև), որտեղ ցուցանիշները չեն բացահայտում պաշտոնական դրամաշնորհների նպատակայնությունը, ինչպես նաև՝ արդյո՞ք դրամաշնորհները հատկացվել են մշակված չափանիշների հիման վրա, թե՛ լիազոր անձանց հայեցողությամբ:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված է բանաձև, որի միջոցով հաշվարկվում է համայնքներին յուրաքանչյուր տարի հատկացվող ֆինանսական համահարթեցման դուտացիաների չափը: 1998 թվականին ընդունված օրենքը թեև հստակ է

պարզ հաշվարկներ իրականացնելու համար, սակայն տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հետ մեկտեղ փոփոխությունների չի ենթարկվել: Ստացվում է, որ որակապես արդեն այլ համայնքներին ֆինանսական համահարթեցման դոտացիաներ տրամադրվում են դեռևս նոր ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող երկրի օրենսդրությամբ: Այս հանգամանքով է պայմանավորված ֆինանսական համահարթեցման մասին նոր օրենքի ընդունումը, որը, սակայն, ամբողջ ծավալով ուժի մեջ է մտնելու 2019 թվականի հունվարի մեկից: Մինչ 2019 թվականը համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաներ կտրամադրվեն 2016 թվականին տրամադրված դոտացիաների չափով³: Նոր ընդունված օրենքի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն չի տարածվելու Երևանի վրա: Ընդ որում՝ օրենքում սահմանված բանաձևերում Երևանը ելակետ է. օրինակ, տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի հաշվարկման տվյալ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից:

Ֆինանսական համահարթեցման այսպիսի մեխանիզմի առկայությունն է նաև պատճառ երկրի տնտեսության և քաղաքի եկամուտների աճի տեմպերի միջև ուղղակի կապի խզման: Նման դոտացիաները, որոնք սովորաբար քաղաքի եկամուտների 30-35%-ն են, չեն արտահայտում տնտեսության աճի դինամիկան, և առաջանում է հետաքրքիր պարադոքս. երկիրը մի քանի տարի շարունակ գրանցում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում, սակայն հատկացվող դոտացիաները կայուն աճում են:

3. Հաջորդ կարևոր գործոնը **համայնքի լիազորությունների շրջանակն** է, և թե ինչպես է այն փոփոխվում ժամանակի ընթացքում: Ընդ որում, Ֆիտչը կարևորում է առողջապահության և կրթության ոլորտում կառավարման մարմինների լիազորություններն ու դրանց իրականացման համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունները:

Այն պարտավորությունները, որոնք երկրի ՀՆԱ-ի աճից ավելի արագ տեմպեր ունեն, պետք է ունենան նաև համապատասխան դինամիկայով աճող ֆինանսական աղբյուրներ: Համաշխարհային բանկը, որը, հիմնվելով Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հրապարակվող տվյալների բազայի վրա, նույնպես մշակել է տեղական ինքնա-

³ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 18, 2016թ., www.artis.am

կառավարման մարմինների ֆինանսական և քաղաքական ապակենտրոնացման չափման 16 հիմնական ցուցանիշներ, առանձնացնում է առողջապահության և կրթության վրա կատարվող ծախսերը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության կարևոր ցուցիչներ: Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարրական և հիմնական կրթության, առողջապահության ոլորտներում լիազորություններն առավել արդյունավետ են իրականացվում ապակենտրոնացված կառավարման մարմինները⁴: Ավելին՝ Միջազգային արժույթի հիմնադրամի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուղղաձիգ ֆինանսական անհավասարակշռության /vertical fiscal imbalance/ առկայության դեպքում, երբ առողջապահության ոլորտի լիազորություններն ամրագրվում են տեղական ինքնակառավարման մարմիններին, փաստացի ֆինանսավորվելով պետական դրամաշնորհների հաշվին, հանգեցնում են այդ ոլորտում ծախսերի անհիմն մեծացման⁵:

Կապիտալ ծախսերի մեծ տեսակարար կշիռը Ֆիտսչի կողմից դիտարկվում է որպես դրական ցուցանիշ համայնքի վարկունակության համար, այնուամենայնիվ, սահմանում է, թե կապիտալ ծախսերը ո՞ր ոլորտներում են իրականացվում, քանի որ պարտավորություններն ստանձնելուց հետո դժվար է դրանք կրճատել. օրինակ, քաղաքային նշանակության ճանապարհաշինության կամ մետրոյի ցանցի ընդլայնման պարագայում: Երևանում իրականացվում են մի շարք նման ծրագրեր, սակայն առանձնահատկություններից մեկն այն է, որ այս ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որպես պետության պատվիրակած լիազորություններ, և բոլոր պարտավորություններն իր վրա է կրում ՀՀ կառավարությունը: Ընդ որում՝ Երևան համայնքի բյուջեում այս ծրագրերի իրականացման ծախսերը չեն ամրագրվում որպես կապիտալ ծախսեր:

Ֆինանսական կառավարումը նեղ առումով դիտարկվում է Համաշխարհային բանկի՝ տեղական ինքնակառավարման միավորների ապակենտրոնացման մակարդակի չափման մեթոդաբանության մեջ: Այս դեպքում կիրառվում են 4 խումբ ցուցանիշներ, որոնք են՝

⁴ Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009-2010 թթ.) ՀՖՄ, Տեղական ինքնակառավարման և հանրային ծառայության բարեփոխման նախաձեռնություն, էջ 37:

⁵ Subnational Health spending and Soft Budget constraints in OECD Countries, IMF working Paper, 2010, p. 19.

1. Տեղական եկամուտներ
 - տեղական եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամուտներում.
 - տեղական հարկային եկամուտների տեսակարար կշիռը համախառն հարկային եկամուտներում.
 - տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հավաքված գույքահարկի տեսակարար կշիռը համախառն հավաքված գույքահարկում.
2. Տեղական ծախսեր
 - տեղական ծախսերի տեսակարար կշիռը համախառն ծախսերում.
 - աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը համախառն ծախսերում.
3. Տեղական գործառական ծախսերի չափումներ
 - առողջապահական տեղական ծախսերի տեսակարար կշիռը առողջապահական համախառն ծախսերում.
 - կրթության վրա տեղական ծախսերի տեսակարար կշիռը կրթության վրա իրականացված համախառն ծախսերում.
4. Ֆինանսական թերակատարում
 - սեփական եկամուտներով ֆինանսավորվող տեղական ծախսեր.
 - սեփական հարկային եկամուտներով ֆինանսավորվող տեղական ծախսեր.
 - պետական դրամաշնորհների տեսակարար կշիռը տեղական եկամուտներում⁶:

Այս ցուցանիշների հիմնական նպատակը տարբեր օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցվածքներ ունեցող երկրների մասին այնպիսի տեղեկատվություն մշակելն է, որը հնարավորություն կտա համեմատություններ, վերլուծություններ և հսկողություն իրականացնելու այդ երկրների միջև⁷: Մեր աշխատանքի հիմնական խնդիրներից մեկը ՀՀ խոշոր համայնքների ֆինանսական հիմնահարցերի վերհանումն է: Այդ նպատակով Համաշխարհային բանկի մշակած ցուցանիշները կիրառելիս կփորձենք «տեղայնացնել» տեղական ինքնակառավարման միավորների համար: «Տեղայնացման» անհրաժեշտությունն այն է, որ տեղական ինքնակառավարման միավորի մակարդակում իրականացվող ծախսերը, հավաքած եկամուտները, ինչպես նաև դրանց կառուցվածքը տարբերվում

⁶ *Intergovernmental relations and subnational finance, The World Bank, Thematic group, 2012, p. 1-9.*

⁷ *Decentralization and Sub-national regional Economics Summery Note, The World Bank, Thematic Group, 2004.*

են պետական մակարդակով իրականացվող ծախսերից և հավաքվող եկամուտներից:

Այսպիսով՝ աղյուսակ 1-ում ներկայացված են Համաշխարհային բանկի՝ երկրների համար մշակված ցուցանիշներն ու դրանց հիման վրա մեր առաջարկած՝ ապակենտրոնացման չափման և վերլուծության համար մշակված ցուցանիշները:

Աղյուսակ 1. Ֆինանսական ապակենտրոնացման մակարդակի չափման ցուցանիշներ

Համաշխարհային բանկի մշակած ցուցանիշներ	Առաջարկվող ցուցանիշներ Ֆինանսական ապակենտրոնացման մակարդակը վերլուծելու համար
Տեղական եկամուտներ	
➤ Տեղական եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամուտներում ➤ Տեղական հարկային եկամուտների տեսակարար կշիռը համախառն հարկային եկամուտներում ➤ Տեղական ինքնակառավարման մարմինների հավաքած գույքահարկի տեսակարար կշիռը համախառն գույքահարկի մեջ	➤ Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդամենը եկամուտներում ➤ Հավաքված գույքահարկի⁸ տեսակարար կշիռը սեփական եկամուտներում ➤ Այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռները ընդամենը եկամուտներում
Տեղական ծախսեր	
➤ Տեղական ծախսերի տեսակարար կշիռը համախառն ծախսերում ➤ Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը համախառն ծախսերում	➤ Աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը ընդամենը ծախսերում ➤ Պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի տեսակարար կշիռը ընդամենը ծախսերում

⁸ Գույքահարկն առանձնացվում է որպես հարկային եկամուտներում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող հարկատեսակ:

Տեղական գործառնական ծախսերի չափում	
➤ Առողջապահական տեղական ծախսերի տեսակարար կշիռը առողջապահական համախառն ծախսերում	➤ Առողջապահական ծախսերի տեսակարար կշիռը ընդամենը ծախսերում (հաշվի առնելով ֆինանսավորման աղբյուրները)
➤ Կրթության վրա տեղական ծախսերի տեսակարար կշիռը կրթության վրա իրականացված համախառն ծախսերում	➤ Կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը ընդամենը ծախսերում (հաշվի առնելով ֆինանսավորման աղբյուրները)
Ֆինանսական թերակատարում	
➤ Սեփական եկամուտներով ֆինանսավորվող տեղական ծախսեր	➤ Սեփական եկամուտներով ֆինանսավորվող տեղական ծախսեր
➤ Սեփական հարկային եկամուտներով ֆինանսավորվող տեղական ծախսեր	➤ Սեփական հարկային եկամուտներով ֆինանսավորվող ծախսեր
➤ Պետական դրամաշնորհների տեսակարար կշիռը տեղական եկամուտներում	➤ Պետական դրամաշնորհների տեսակարար կշիռը ընդամենը եկամուտներում:

Թեև Համաշխարհային բանկի մշակած ցուցանիշները հիմք են մի շարք վերլուծաբանների աշխատություններում ուսումնասիրություններ կատարելու համար և լրացնում են Բ.Ֆիլիպսի և Գ.Մ. Ուոլլերի⁹ առաջարկած ցուցանիշները, այնուամենայնիվ, դրանք ունեն մի քանի բացթողում, որոնց անդրադարձանք Ֆիտչի մեթոդաբանության քննարկման ժամանակ: Բացթողումներից կարելի է առանձնացնել նաև՝

- Ցուցանիշները տարանջատում են ծախսերն ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման, սակայն չեն սահմանում տեղական ծախսերի անկախության մակարդակը: Պետության կողմից «տեղերում» իրականացվող ծախսերը կամ պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացվող ծախսերը դիտարկվում են որպես տեղական ծախսեր: Ծախսերի այս առանձնացման անտեսումը ֆինանսական

⁹ Առավել մանրամասն տե՛ս Woller G.M., Phillips K. Fiscal decentralization and ldc economic growth: an empirical investigation, Journal of Development Studies, vol. 34, 1998, p. 139-148.

ապակենտրոնացումը հաշվարկելիս խնդիրներ է առաջացնում հատկապես զարգացող երկրների համար, որտեղ տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրված են մի շարք պատվիրակված լիազորություններ, որոնք էլ ենթակա են պետության կողմից պարտադիր ֆինանսավորման:

- ՀԲ-ն չի սահմանում նաև հարկային, ոչ հարկային եկամուտները, պաշտոնական տրանսֆերտներն ու այլ դրամաշնորհներ: Հետևաբար, բացակայում է տեղեկատվությունը, թե եկամուտները մասհանվող հարկերի, կցորդ հարկերի /Piggybacked tax/, սեփական աղբյուրներից եկամուտների ինչ համամասնություններով են հավաքվել:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ՀԲ-ի մշակած ցուցանիշներով ֆինանսական ապակենտրոնացման, հետևաբար նաև ֆինանսական կառավարման արդյունավետության մակարդակը կարող է գերազնահատվել: Ֆինանսական ապակենտրոնացման մակարդակի գերազնահատման վառ օրինակ է բերում Ռ. Էբելը իր աշխատությունում՝ Լիտվայի համար հաշվարկված ՀԲ ցուցանիշները համադրելով հարկային եկամուտների, դրամաշնորհների դասակարգման հիման վրա կատարված հաշվարկների հետ: Եթե առաջին դեպքում Լիտվայի տեղական եկամուտները բոլոր եկամուտների 23%-ն էին, ապա երկրորդ մեթոդով հաշվարկը ցույց է տալիս, որ տեղական եկամուտների 91%-ը ձևավորվում է մասհանվող հարկերից, որոնց թե՛ հարկման պայմանները, թե՛ դրույքաչափերը և թե՛ հարկային վարչարարությունն իրականացվում են պետության կողմից: Եվ պարզվում է, որ Լիտվայի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկելի է հարկային եկամուտների ընդամենը 5%-ը¹⁰:

Անդրադառնանք 2013 թվականին Համաշխարհային բանկի կողմից Երևան քաղաքի հանրային ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության կատարողականի ուսումնասիրության մեթոդաբանությանը, որն առավել ընդգրկուն է: Այս մեթոդաբանությունն առանձնանում է վեց հիմնական չափորոշիչներով, որոնք դիտարկում են ֆինանսական կառավարումը թե՛ նեղ և թե՛ լայն առումներով: Դրանք են՝

1. Բյուջեի հուսալիություն. սկզբնական հաստատված բյուջեն պետք է լինի ՏԻՄ օրենսդիր մարմնի հաստատած ընդհանուր բյուջեն:

¹⁰ Ebel R., Yilmaz S. *On the measurement of fiscal decentralization*, Urban Institute, 2002, p. 10.

2. Քաղաքականության վրա հիմնված բյուջետավարում. պետական բյուջետային քաղաքականությունը պետք է մեկնաբանվի տեղական ինքնակառավարման որոշակի մակարդակի համատեքստում:

3. Բյուջեի կատարման ընթացքում կանխատեսելիություն և վերահսկողություն. տեղական ինքնակառավարման բյուջեն պետք է կատարվի կանոնավոր և կանխատեսելի ձևով, և կառավարումը կատարելագործելու նպատակով պետք է սահմանվեն զսպումներ և հակակշիռներ:

Քաղաքի բյուջեի կատարման կանոնավորության և կանխատեսելիության մակարդակը բացահայտելու համար կարևորում ենք նաև գնումների գործընթացի ուսումնասիրությունն ու բացթողումների բացահայտումը, քանի որ ի վերջո բյուջեի արդյունավետության հիմքում գնումների կազմակերպման արդյունքում կնքված պայմանագրերում արտացոլված իրավունքներն ու պարտականություններն են:

4. Հաշվապահական հաշվառում, գրանցումների վարում և հաշվետվությունների ներկայացում:

5. Արտաքին աուդիտ և վերստուգում. ՏԻՄ օղակում ֆինանսների վերստուգման համար պետք է սահմանվի բարձրորակ արտաքին աուդիտ¹¹:


Վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանելու ֆինանսական կառավարման բարեփոխումների առաջնահերթությունները և հաջորդականությունը: Համայնքներում ֆինանսական միջոցների աղբյուրների և դրանց օգտագործման ուղղությունների արդյունավետության վերլուծությունն իրականացնելու հաջողված եղանակներից մեկն էլ հիմնված է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը գնահատող մատրիցի վրա: Պետերսոնի և Վալդեսի ներկայացրած ռազմավարությունը, որը կիրառվել է Ֆիլիպիններում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կապիտալ ներդրումների իրականացման այլընտրանքներից ընտրություն կատարելու համար, դիտարկում է երկ-չափանի մատրից, որի կառուցման համար որպես չափանիշ ընտրվել են տեղական ինքնակառավարման մարմինների հարստությունն ու տվյալ ծրագրի միջոցով եկամուտների հավաքման ներուժը¹²: Այսպես, մատրիցը բաղկացած է չորս քառորդակներից, որոնք բնութագրվում են տեղական

¹¹ Երևան քաղաք. Հանրային ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության կադրառողականի ուսումնասիրություն. Համաշխարհային բանկ, 10.2013 թ., էջ 20:

¹² Local Public Financial Management, Anwar Shah, The World Bank, 2007, p. 118-119.

ինքնակառավարման մարմինների կարողությունների և իրականացվող ծրագրերի նպատակների տարբեր ցուցանիշներով (գծապատկեր 1): Առավել փոքր և աղքատ համայնքների համար, քանի որ դրանք իրականացնում են առավելապես սոցիալական, եկամուտ չենթադրող ծրագրեր, առավել գերադասելի են դրամաշնորհները: Համայնքները, որոնք հարուստ են, ունեն արդեն իսկ կայացած ենթակառուցվածքներ, առավել մեծ ծրագրեր իրականացնելու համար նախընտրելի է մտնել արժեթղթերի շուկա:

Գծապատկեր 1. Տեղական ինքնակառավարման ֆինանսավորման կարողությունների մատրից¹³



Այս մատրիցի տրամաբանությունը կիրառելի կարող է լինել նաև այլ տեղական ինքնակառավարման միավորների համար. այնուամենայնիվ, հարուստ և աղքատ համայնքների միջև տարանջատման հստակ սկզբունք հեղինակները չեն առաջարկում: Հայաստանի Հանրապետությունում նույնպես համայնքները հարուստ կամ աղքատ սահմանելու ընդունված չափորոշիչներ չկան: Հարց է առաջանում՝ Գյումրին կամ Հրազդանը աղքատ, թե՞ հարուստ համայնքներ են: Առավել հստակություն մտցնելու համար փորձել ենք որոշակի փոփոխությունների միջոցով մատրիցի հիմքում այնպիսի ցուցանիշներ ընդգրկել, որոնք կլինեն քանակապես չափելի, և հարուստ ու աղքատ եզրերի ընտրության պարագայում սուբյեկտիվ դիտարկումների հնարավորությունը կհասցվի նվա-

¹³ Subnational capital markets in developing countries. From theory to practice, Mila Freire and John Petersen, 2004, p. 54.

զագույնի: Հարուստ և աղքատ համայնքների տարանջատման հիմքում անհրաժեշտ է դիտարկել, թե որքանով է համայնքը կարողանում սեփական միջոցների հաշվին ծածկել սեփական ծախսերը: Այսինքն՝ որպես մատրիցի կառուցման չափանիշ մեր հետազոտություններում կհաշվարկենք համայնքների սեփական եկամուտների և ծախսերի հարաբերակցության ցուցանիշը:

Ի հավելումն Պետերսոնի և Վալդեսի մշակած մատրիցի՝ ձևափոխված մատրիցի այն քառորդակներում, որոնք բնութագրում են հարկային եկամուտների մեծ ծավալ ունեցող համայնքներին, որպես ծրագրերի ֆինանսավորման միջոց մենք առանձնացնում ենք նաև սեփական եկամուտները, քանի որ համայնքները, որոնք ձգտում են ֆինանսական ապակենտրոնացման՝ իրականացնելով եկամուտներ ստանալու նպատակ հետապնդող ծրագրեր, բնական է, պետք է ապահովված լինեն սեփական ֆինանսական հիմքերով (գծապատկեր 2): Համայնքները մատրիցի վրա տեղակայելու համար նախ անհրաժեշտ է հաշվարկել սեփական եկամուտներով ծրագրերի ֆինանսավորման կարողության ցուցանիշը: Բոլոր համայնքների համար այս ցուցանիշն ստանալուց հետո դրանք պետք է արտահայտել միջին ցուցանիշի նկատմամբ: Ստանալով համայնքների հարաբերական հարստության ցուցանիշը և սահմանելով նախատեսվող ծրագրերի իրականացման նպատակն ու եկամուտ ստեղծելու ներուժը՝ հնարավոր կլինի որոշում կայացնել ծրագրի ֆինանսավորման առավել արդյունավետ ֆինանսական աղբյուրի վերաբերյալ: Փաստորեն, տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի բյուջեն մշակելիս, ելնելով իրենց կանխատեսած ծախսերի բնույթից, ձևավորում են եկամուտների արդյունավետ կազմ և կառուցվածք:

Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման կառավարումը ֆինանսական գործառույթի հիմքերից մեկն է, և կարևոր է, որ այն հիմնված լինի համայնքի զարգացման միտումների գիտական կանխատեսման վրա:

Հղում կատարելով ԲԽԽ մատրիցին, որի հիմքում ապրանքի կենսապարբերաշրջանի մոդելն է՝ մատրիցը կազմող ցուցանիշների համադրությունը և ըստ դրա՝ համայնքների տեղակայումը 4 քառորդակներից որևէ մեկում, հնարավորություն է տալիս սահմանելու նաև համայնքների տնտեսական դինամիկան և ուղղվածությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծման սկզբից մինչև դրանց զարգացման

այժմյան մակարդակին հասնելը կարելի է առանձնացնել երեք հիմնական փուլեր.

1. Ենթակառուցվածքներով ապահովման փուլ - այս փուլում են փոքր հնարավորություններով այն տեղական ինքնակառավարման միավորները, որտեղ հիմնական հանրային ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ դեռևս ամբողջովին առկա չեն: Տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցված լիազորություններն իրականացնելու համար բացակայում են համապատասխան ենթակառուցվածքները:


2. Արդյունավետության ապահովման փուլ - զարգացման այս փուլում գտնվող համայնքներն արդեն իսկ ունեն հիմնական ենթակառուցվածքներ, և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական խնդիրը վերափոխվում է ենթակառուցվածքների արդյունավետ կառավարման ապահովման:

3. Ֆինանսական նոր գործիքակազմի ապահովման փուլ - զարգացման այս փուլում գտնվող համայնքները սեփական եկամուտներով կարողանում են ապահովել հանրային ծառայությունների արդյունավետ մատուցում և համայնքի բնակիչների հարմարավետության և առավել բարեկեցիկ միջավայր ապահովելու համար ունեն հնարավորություն ներգրավելու հավելյալ ֆինանսական ռեսուրսներ արժեթղթերի շուկայից:

Համայնքները, որոնք տեղակայված են 3-րդ քառորդում, այսինքն՝ ունեն սեփական եկամուտներ և ծախսեր հարաբերակցության ցածր մակարդակ, իրականացնում են ծրագրեր, որոնք ուղղված են համայնքի բնակիչներին ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, զարգացման առաջին փուլում են: 2-րդ և 4-րդ քառորդներում տեղակայված համայնքները արդյունավետության ապահովման փուլում են. այս համայնքները բյուջեն մշակելիս, սահմանափակ աճի ռազմավարության վրա հիմնվելով, պետք է ծախսերն ընդլայնեն նախորդ տարվա չափերով: 1-ին քառորդում տեղակայված համայնքները արդեն իսկ պատրաստ են մուտք գործելու արժեթղթերի շուկա, զարգացնելու ներդրումային միջավայրը խոշոր կապիտալ ներդրումների համար, հետևաբար բյուջեն պլանավորելիս համայնքն ընդլայնում է համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունները և նախորդ ժամանակաշրջանի համեմատ ապահովում թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի աճի բարձր տեմպ:

Այսպես՝ յուրաքանչյուր համայնք տեղակայվում է մատրիցի որոշակի քառորդում, ըստ որի տեղական ինքնակառավարման մարմինները պատկերացում են կազմում հանրային ծառայություններ մատուցելու համար ֆինանսական միջոցներ ներգրավելու առավել արդյունավետ եղանակի մասին, միևնույն ժամանակ, ելնելով համայնքի զարգացվածության համապատասխան մակարդակից, մշակում են ֆինանսական ռազմավարություն:

Գծապատկեր 2. Համայնքների ֆինանսական կարողությունների և ռազմավարության մատրից



МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ФИНАНСОВОГО МЕНЕДЖМЕНТА В ОБЩИНАХ РА

АВЕТЯН А.С.

Резюме

Основываясь на матрице, разработанной в Филиппинах с целью принятия решений финансирования капитальных инвестиций, мы попытались найти пути реализации этой матрицы и в общинах Армении. Ис-

ходя из характеристик системы местного самоуправления в Армении, в качестве основы матрицы были взяты количественные индикаторы, а также было внесено предложение о расширении видов финансовых ресурсов. Сочетание индикаторов в модифицированной матрице дает возможность определить этапы развития общин и разработать соответствующую стратегию.

METHODOLOGICAL ISSUES OF FINANCIAL MANAGEMENT IN COMMUNITIES OF RA

A. AVETYAN

Abstract

Methodology is important for achieving financial management efficiency in communities. The article discusses methodologies implementation benefits and issues developed by Fitch rating company and World Bank.

Based on the matrix that was first developed in Philippines to understand the local government choices in financing capital investments, we have attempted to find links of its implementation in Armenian communities. Taking into account the specialties of Armenian local self government system, we took quantitative indicators and enlarged the composition of financial resources. Indicators combination of already modified matrix gives opportunity to determine development stages of communities and develop relevant strategy.

ՀԱՆՐԱՅԻՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ՍԱՐԳՍՅԱՆ Հ.Ա.

ՀՀ տեղական ինքնակառավարման հետագա զարգացման, հզորացման և ժողովրդավարացման համար անհրաժեշտ բարեփոխումներն այս ոլորտում իրականացվում են համակարգային մոտեցումների բացակայության պայմաններում, ինչը կասկածի տակ է դնում պետական քաղաքականության արդյունավետությունը: Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը պահանջում է կառավարման տեխնոլոգիաների ընդգրկումն համակարգի առկայություն, որը հնարավորություն կտա գնահատելու հեռանկարային ուղղությունները, ինչպես նաև հավասարակշռելու գերակայությունները և զարգացման տեմպերը՝ գոյություն ունեցող ռեսուրսներով: Համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի իրականացումը աջակցության լավագույն տարբերակն է սահմանափակ բյուջեի պայմաններում և կարող է ֆինանսական, ենթակառուցվածքային և ծառայությունների մատուցման ոլորտի հրատապ խնդիրների լուծման արդյունավետ միջոց դառնալ:

Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին հինգ տարիներին պահպանվում էր տեղական ինքնակառավարման խորհրդային մոդելը¹: Ներկայիս համակարգի հիմքերը ստեղծվել են դեռևս 21 տարի առաջ, երբ ընդունվեցին ՀՀ Սահմանադրությունը (1995 թ.) և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (1996 թ.): Դրանցով իշխանության ապակենտրոնացման սկիզբը դրվեց. տեղի ունեցավ իշխանության կենտրոնական մարմինների որոշակի գործառույթների և լիազորությունների փոխանցում տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ),

¹ 1987 թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով՝ Խորհրդային Հայաստանի տարածքը բաժանված էր 37 գյուղական և 10 քաղաքային շրջանների, 22 հանրապետական, 5 շրջանային ենթակայության քաղաքների, 31 քաղաքատիպ ավանների և 479 գյուղական սովետների (այդ մասին տե՛ս Հայկական Սովետական Հանրապետության, հ. 13, Ե., 1987, էջ 19):

որի նպատակն էր բնակչության ներգրավումն այդ գործառույթների իրականացմանը: ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը տարիների ընթացքում գրանցել է որոշակի ձեռքբերումներ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Ժամանակի մարտահրավերներն առաջադրում են նոր պահանջներ համակարգի հետագա զարգացման, հզորացման և ժողովրդավարացման առումներով:

Հանրապետությունում գործում է 915 համայնք՝ 49 քաղաքային և 866 գյուղական²: Մեծ թիվ են կազմում մասնատված և մարդկային, ֆինանսական ու այլ սահմանափակ ռեսուրսներով համայնքները: Այդպիսի համայնքներում դժվար է կարևոր նշանակություն ունեցող հանրային խնդիրներ լուծել: 2011 թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից³: Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար համայնքների խոշորացումը սկզբունքային խնդիր է, քանզի այդ պարագայում հարկ կլինի վերանայել ամբողջ վարչատարածքային բաժանման տրամաբանությունը, կառուցվածքը և բովանդակությունը (2016 թ. իրականացվել է խոշորացման 18 ծրագիր՝ ներառելով 140 համայնք. գործընթացը շարունակվելու է առաջիկա երկու տարիներին): Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակում կիրականացվեն ներդրումային ծրագրեր խոշորացվող համայնքներում՝ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (8.6 մլն ԱՄՆ դոլար) և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալու-

² Տե՛ս Հայաստանի համայնքների միության պաշտոնական կայքէջ՝ <http://www.caa.am/map.html>

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման նախագիծ, Ե., 2017 թ.՝ <https://www.e-draft.am/projects/193/justification>.

թյան (2,4 մլն ԱՄՆ դոլար) ֆինանսավորմամբ⁴: Համայնքների զարգացման այսօրվա իրավիճակը գնահատելիս հանգում ենք այն եզրակացության, որ տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ հասարակական պատկերացումներն ու ընկալումներն առավելապես դրական են, իսկ դրանցից սպասումներն ավելի մեծ են, քան այն իրողությունը, որն ունենք: Ցավոք, այդ սպասումները և դրանք բավարարելու իրական հնարավորություններն այսօր չեն համապատասխանում իրար: Դա պայմանավորված է նյութատեխնիկական, ֆինանսական և այլ կարգի ռեսուրսների խիստ սահմանափակ լինելու հանգամանքով: Տեղական ինքնակառավարման համակարգն ի սկզբանե ձևավորվել է առանց համապատասխան հայեցակարգի և ապակենտրոնացման ռազմավարության: ՏԻՄ-ի պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման՝ օրենսդրորեն հաստատված կարգի բացակայությունը լուրջ խոչընդոտ է այդ նպատակն իրագործելու, ֆինանսական անհրաժեշտ միջոցների նվազագույն ծավալները որոշելու և դրանց նկատմամբ ներքին ու արտաքին պատշաճ վերահսկողություն սահմանելու համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հստակ և միօրինակ չեն ձևակերպում պարտադիր լիազորությունները, ինչը տարաբնույթ կամայականությունների տեղիք է տալիս:

Համայնքների բյուջեների ձևավորման հրապարակայնության ապահովման օրենսդրական պահանջը գործնականում լիարժեքորեն չի կատարվում: Ըստ համայնքային ֆինանսների կառավարման ապակենտրոնացված վերահսկողական համակարգի՝ ներքին աուդիտորական ինստիտուտի գործառույթները պատշաճ կերպով չեն իրականացվում. շատ համայնքներում չեն մշակվում աուդիտի պլաններ, չեն կազմվում բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություններ՝ ներկայացնելու համայնքի ավագանու քննարկմանը: Ներքին աուդիտ իրականացնող համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունները և հմտությունները խիստ անբավարար են, նրանք անկախ չեն և հիմնականում գործում են իրենց վերադասի անմիջական ցուցումներով, աուդիտի իրականացումը

⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիր, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Ե., 2017:

լավագույն դեպքում սահմանափակվում է ֆինանսական համապատասխանության աուդիտով⁵:

Ըստ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության զեկույցի՝ ՀՀ քաղաքացիները մեծ մասամբ տեղյակ չեն իրենց համայնքների ֆինանսական խնդիրներից. հարցվածների 91%-ը չգիտե իր համայնքի բյուջեի ծավալը, ճնշող մեծամասնությունը (78%) չի պատկերացնում՝ արդյոք իր համայնքը պարտքեր ունի, թե՞ ոչ, 73%-ը տեղյակ չէ, թե ՏԻՄ-ը ուր է ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից և տույժ-տուգանքներից գոյացած եկամուտները: Համայնքի պարտքերի մասին պատկերացում ունեցող քաղաքացիների 66.5%-ի տեղեկատվության աղբյուրը շրջապատն է, 16.8%-ինը՝ տեղական հեռուստատեսությունը, 14.8%-ինը՝ ՏԻՄ-ը⁶:

Համայնքի ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետու լինելու ապահովման առումով կարևորվում է ռազմավարական արդյունավետ պլանավորումը: Հայաստանի բոլոր համայնքներն ունեն զարգացման հնգամյա ծրագիր, որը հիմնականում չի արտացոլում իրական վիճակը: Ավելին՝ համայնքների զարգացման ծրագրերը համապատասխանեցված չեն ինչպես պետական ռազմավարական, այնպես էլ մարզի զարգացման ծրագրերին: Հարկ է նշված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը մոտենալ մեծ պատասխանատվությամբ և պրոֆեսիոնալիզմով: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը, ի դեմս Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, քայլեր է ձեռնարկում առավել իրատեսական, համայնքի զարգացմանը նպաստող միջոցառումներ և գործարարությանն աջակցող ծրագրեր մշակելու համար⁷:

Այսօր աստիճանաբար ամրապնդվում է այն տեսակետը, որ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման համար անհրաժեշտ է արդիական, ավելի արդյունավետ մեթոդների կիրառում: Սակայն

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետազազարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ, Ե., 2012:

⁶ Տե՛ս Բարեփոխումների երկար ճանապարհին. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության զեկույց, 2016, էջ 5-7:

⁷ Տե՛ս Դավիթ Լոքլանի ելույթը ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի լիագումար նիստում, 21.10.2016, Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման և կառավարման նախարարության կայքէջ. <http://www.mtad.am/hy/speeches-interviews/tem/2016/10/21/mtad22/>

այս ոլորտում բարեփոխումներն իրականացվում են համակարգային մոտեցումների բացակայության պայմաններում, ինչը կասկածի տակ է դնում պետական քաղաքականության արդյունավետությունը: Զարգացման նոր համակարգի ձևավորումը ենթադրում է բոլոր շահագրգիռ կողմերի (հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնք, երկիր) շահերի դիտարկում: Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը պահանջում է կառավարման տեխնոլոգիաների ընդգրկումն համակարգի առկայություն, որը հնարավորություն կտա գնահատելու հեռանկարային ուղղությունները, ինչպես նաև հավասարակշռելու գերակայությունները և զարգացման տեմպերը գոյություն ունեցող ռեսուրսներով:

Ռազմավարական պլանավորման էությունը համայնքի սեփական ռեսուրսների, ինչպես նաև ներքին ու արտաքին գործոնների հիման վրա ապագայի տեսլականի կառուցումն է և դրան հասնելու քայլերի ու միջոցառումների առաջադրումը⁸: Բնակչության բարեկեցության աճը և կյանքի որակի բարելավումը համայնքում սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական հիմնական առաջնահերթություններից են ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում: Նշանակալի դերակատարություն ունի նաև համայնքի մրցունակության մակարդակը, քանի որ դա թույլ է տալիս ճիշտ գնահատել տնտեսական առաջընթացի շարժիչ ուժը, ինչպես նաև արտացոլում է ժամանակակից պայմաններին համապատասխանող որակով և արժեքով պարտականությունների կատարման կարողությունը: Առաջին հերթին, դա արտահայտվում է հանրային և մասնավոր գործընկերությամբ (ՀՄԳ) իրականացվող ծրագրերում: ՀՄԳ նախագիծը «փոխկապված միջոցառումների համակարգ է՝ նպատակաուղղված սահմանված ժամանակահատվածում, նախատեսված բյուջեով և պահանջվող որակով առաջադրված նպատակի իրագործմանը»⁹: ՀՄԳ զարգացման ծրագրերի իրականացումը համայնքներին աջակցելու լավագույն տարբերակն է սահմանափակ բյուջեի պայմաններում: Սակայն այստեղ

⁸ *Ст'и Елькин В.А., Хорохонов Д.Ю. Совершенствование региональной системы анализа социально-экономического развития муниципальных образований (Известия, ИГЭА, № 1(75), 2011):*

⁹ *Кузьмин Е.А. Реализация проектов государственно-частного партнерства в муниципальных образованиях (Интернет-журнал "Региональная экономика и управление", 2010, № 4, 240.-№ рег. статьи 0077//Режим доступа к журналу: <http://region.mcnip.ru>).*

ևս կան լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ: Վերջին տարիներին տեղական ինքնակառավարման մարմինները նշված նախագծերի իրագործումն ապահովող սկզբունքներ են կիրառում: Համայնքներում հանրային և մասնավոր նախագծերի մի շարք դրույթների ուսումնասիրության շնորհիվ կարելի է եզրակացնել, որ տեղական ինքնակառավարման մարմինները կիրառում են գործընկերությանը վերաբերող պետական օրենքներ և նախագծերի նախապատրաստման ու կառավարման իրավական նորմեր՝ գնահատելով դրանց ֆինանսատնտեսական արդյունավետությունը, սահմանելով վերահսկողության համապատասխան կարգ:

Համայնքների գործընկերային նախագծերն իրագործում է գործադիր մարմինը՝ սկզբից մինչև համաձայնագրի ավարտը՝ առանց ներկայացուցչական մարմնի և հասարակության մասնակցության: Փաստորեն, նման պայմաններում գործընկերությունը կարող է միայն որպես համայնքային գույքի և բյուջետային միջոցների օգտագործման օրինական միջոց ծառայել մասնավոր շահերի իրացման համար:

Իրականացված նախագծի արդյունքը դրա արդյունավետության գնահատման ամենակարևոր գործոնն է: Որպես կանոն, դա գնահատվում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական տեսանկյուններից: Տնտեսական արդյունքն արտահայտվում է խնայողությունների և լրացուցիչ եկամուտների ձևով, որը համալրում է համայնքային բյուջեն: Սոցիալական արդյունքը դրսևորվում է կյանքի որակի բարելավման հանդեպ բնակչության շահագրգռվածության մեծացմամբ, որը պայմանավորված է լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների շնորհիվ բնակչության եկամուտների աճով, նոր աշխատատեղերի ստեղծմամբ և, առհասարակ, մշակույթի զարգացմամբ¹⁰: Բնապահպանական արդյունքը թույլ է տալիս գնահատել և համեմատել ՀՄԳ նախագծերի տնտեսական գործունեության հետևանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

ՀՄԳ մոդելի նախագծի անհրաժեշտության մեջ վստահ լինելու համար տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ուսումնասիրեն՝ արդյոք տվյալ մոդելի տարբերակը լավագույնն է ռեսուրսների օգտագործման առումով: Նախագծի գնահատումը կատարվում է չորս հիմնական չափանիշներով.

¹⁰ St'u Никитенко С.М. Методология управления процессом формирования высокотехнологичных секторов инновационной экономики на мезоуровне. Автореф. дис. доктор экон. наук, Новосибирск, 2011:

1. **Նախագծի նպատակահարմարությունն ու դրա տնտեսական հիմնավորումը** (Feasibility study). հարկ է պարզել նախագծի իրականացման անհրաժեշտությունը՝ անկախ այն բանից՝ կկիրառվի՞ ՀՄԳ, թե՞ սովորական բյուջետային ֆինանսավորում: Ըստ այս չափանիշի՝ հաստատվում է, որ նախագիծը շատ կարևոր է տնտեսական առաջնահերթությունների, համայնքի զարգացման, ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման առումով:

2. **Նախագծի շուկայական կենսունակությունը** (Commercial viability). ճշգրտվում է՝ նախագիծը կարո՞ղ է ներգրավել ներդրողների և պարտատերերի, որոնք ներդրված ռեսուրսների հուսալի և կայուն արդյունքի վերադարձի հույս կունենան:

3. **ՀՄԳ նախագծի «գին-որակ» գնահատումը** (Value for money). պետք է վստահ լինել, որ ընտրված նախագիծը առավել արդյունավետ է ակնկալվող արդյունքի առումով, քան հնարավոր այլ նախագծեր:

4. **Ֆիսկալ պատասխանատվությունը** (Fiscal responsibility). ենթադրվում է, որ նախագծից ստացված ընդհանուր եկամուտը կբավարարի ենթակառուցվածքի ստեղծմանը: Տվյալ չափանիշը ներառում է բյուջետային ծախսերի և ռիսկերի, բյուջետային խնայողություններով նախագծի իրականացման վերաբերյալ հաշվարկը¹¹:

Համայնքներում ՀՄԳ նախագծերի իրականացման հիմնական խընդիրներից մեկը պետական կառույցների կողմից դրանց հստակ նախապատրաստումն է: Ինչպես ներդրողի, այնպես էլ պետության համար ՀՄԳ ծրագրերում ոչ միայն նախագծերի պատշաճ նախապատրաստման ապահովումն է որպես ռիսկերի նվազեցման միջոց, այլ նաև պետական և տարածաշրջանային առաջնահերթությունների համադրումը: ՀՄԳ ծրագրերը պետք է ներառվեն պետական պլանավորման ընդհանուր գործընթացում, որպեսզի համակարգված և ոչ թե տարերայնորեն իրագործվեն: Կարևոր է նաև, որ համայնքի ղեկավարությունը մասնավոր ներդրողների ընտրություն կատարի բաց մրցույթի միջոցով, քանի որ համայնքային մակարդակում հաճախ չի ապահովվում մրցույթի բավարար թափանցիկություն:

ՀՄԳ նախագծի ընտրության դեպքում պետական մարմինների հիմնական խնդիրը «գին - որակ» չափանիշով առաջնորդվելն է, այսինքն՝

¹¹ *Տե՛ս* **Анюшев Ю.** Муниципально-частное партнерство как фактор развития предпринимательской деятельности. Автореф. дис. канд. экон. наук, М., 2012:

իրականացված ծախսերի և նախագծից ակնկալվող արդյունքի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատումը: Նախատեսվում է անհամեմատ ցածր գնով հանրությանը տրամադրել որակյալ ապրանքներ և ծառայություններ: Դրա հիմնական ցուցանիշներն են.

- ՀՄԳ ճիշտ նախագծումը, ինչը հնարավոր կդարձնի դրա լավագույն մեխանիզմների կիրառումը,

- ՀՄԳ ծրագրի ընտրությունը մրցունակ միջավայրում՝ լավագույն տարբերակի իրագործման ակնկալիքով:

Համայնքի ֆինանսական անկախության աստիճանը բարձրացնելու և բյուջեների մուտքերի կայունությունն ու բազմազանությունն ապահովելու նպատակով կարևոր են համայնքային սեփականություն հանդիսացող գույքի (շենք, շինություն, հող) գույքագրման, պետական գրանցման աշխատանքների կազմակերպումը, կառավարման միասնական համակարգերի մշակումն ու ներդրումը: Այս առումով, համայնքներում բյուջեների պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետ գործունեության համար ընդգծվում են ֆինանսական համահարթեցման նոր սկզբունքների ամրագրումը, պետական լրահատկացումների ու ֆինանսական օժանդակության, նպատակային հատկացումների տրամադրման օրենսդրական կարգավորումը, դրանց հայտերը և ծրագրերը կազմելու չափորոշիչների սահմանումը, որոշումների կայացման հրապարակայնության, թափանցիկության ապահովումը:

Այս բոլոր խնդիրներն ակնհայտ են դարձնում ֆինանսական շուկաների հասանելիությունը տեղական ինքնակառավարման մարմինների համար օրենսդրորեն կարգավորելու անհրաժեշտությունը, այն է՝ օրենքով նախատեսված վարկերի, փոխառությունների, արժեթղթերի և այլ գործիքների կիրառմամբ ՀՄԳ ծրագրերին մասնակցելու հնարավորությունը: Տեղական ինքնակառավարմանն առնչվող ֆինանսական խնդիրները կարիք ունեն հստակեցման ու կանոնակարգման: Պետությունը տարեցտարի ավելացնում է պետական բյուջեից համայնքային բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող լրահատկացումների ծավալը: 2017 թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ներկայացրել է տեղական տուրքերի կանոնակարգման օրենքի նոր նախագիծ, որը հետևողական աշխատանք է պահանջում համայնքներում ինչպես սեփական եկամուտների հավաքագրման, այնպես էլ ավելացման, ծախսերն արդյունավետ ու թիրախային դարձնելու ուղղությամբ:

Համայնքներում ՀՄԳ արդյունավետ նախագծերի իրականացման համար հանրային կողմը պետք է կիրառի կառավարման նոր մեխանիզմներ՝ հմտություններ, գիտելիքներ և սկզբունքներ: Իսկ դրանք կարող է տրամադրել հաղթանակների և պարտությունների փորձ ձեռք բերած մասնավոր կողմը: Ներկա պայմաններում մասնավոր ներդրողների ներգրավվածությունը ՀՄԳ նախագծերում խիստ սահմանափակ է: Դա պայմանավորված է Հայաստանում ՀՄԳ օրենքի բացակայությամբ, ոլորտում փորձառու մասնագետների սակավությամբ, նախագծերի վերաբերյալ հանրային և գործարար կողմերի տեղեկացվածության ցածր մակարդակով, իրականացվող մրցույթների ոչ բավարար թափանցիկությամբ: Մինչդեռ ՀՄԳ նախագծերը կարող են համայնքներում ֆինանսական, ենթակառուցվածքային և ծառայությունների մատուցման ոլորտի հրատապ խնդիրների լուծման արդյունավետ միջոց դառնալ, ինչն այսօր ֆինանսական և մասնագիտական սուղ միջոցներով փորձում են իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:

МЕХАНИЗМЫ РЕАЛИЗАЦИИ ПРОЕКТОВ ОБЩЕСТВЕННО-ЧАСТНОГО ПАРТНЕРСТВА В МУНИЦИПАЛЬНЫХ СТРУКТУРАХ

САРГСЯН А.А.

Резюме

Реформы в сфере местного самоуправления осуществляются без системных подходов, что подрывает эффективность государственной политики в этой области. Социально-экономическое развитие муниципальных образований требует комплексной системы управления, которая позволит оценить перспективные направления, а также приоритеты и темпы развития существующих ресурсов. Реализация проектов муниципально-частного партнерства является наилучшим способом решения финансовых, инфраструктурных и сервисных вопросов муниципальных образований в условиях ограниченного бюджета.

MECHANISMS OF IMPLEMENTATION OF PUBLIC-PRIVATE PARTNERSHIP PROJECTS IN MUNICIPAL STRUCTURES

H. SARGSYAN

Abstract

Current challenges have put forward new requirements for further development, strengthening and democratization of local self-government system in the Republic of Armenia. However, reforms in this area are implemented without systemic approaches, which undermine the effectiveness of state policy in this area. The socio-economic development of municipalities requires an integrated management system that will allow us to assess the prospects, as well as the priorities and development rates of existing resources. The realization of municipal-private partnership projects is the best way to solve financial, infrastructure and service issues of municipalities with a limited budget.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Ա.Վ.

Երկրի տնտեսության և հանրային կյանքի զարգացումը սոցիալ-տնտեսական և քաղաքական մարտահրավերներին արձագանքելու և լուծումներ փնտրելու շարունակական գործընթաց է, որի հաջողությամբ են պայմանավորված պետության և հասարակության առաջընթացը և դրա քանակական ու որակական հատկանիշներն ու ցուցանիշները: Այդ մարտահրավերներից պետք է ընտրել առավել կարևորները և առանցքայինները, քանզի ցանկացած իշխանության ռեսուրսների սահմանափակության պատճառով դրանց բոլորին և միաժամանակ արձագանքելը և լուծում տալը ոչ միայն իրատեսական չէ, այլև գործնականում անհնար է: Ուստի անհրաժեշտ է առանձնացնել այն գերակա խնդիրները, որոնք պետք է դառնան վարվող տնտեսական քաղաքականության բաղկացուցիչները¹:

Ներկայումս ՀՀ-ում հանրային հնչեղություն ունեցող այդպիսի գերակա ուղղություններն են՝ գործարարի հանրային կերպարի ձևավորումը և արմատավորումը², տնտեսության վրա ազգային առանձնահատկությունների ազդեցության հաշվի առնելը³ և հանրապետության փոքր ու միջին քաղաքներում փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացումը⁴:

¹ Загадки экономического роста: движущие силы и кризисы – сравнительный анализ, М., 2015, с. 19-23, 63-145.

² Բիզնեսի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները ՀՀ-ում, Ե., 2015, էջ 7-31:

³ Հովսեփյան Վ., Եղիազարյան Մ., Ազգային տնտեսություն (ուսումնական ձեռնարկ), Ե., 2014, էջ 6-21:

⁴ Предпринимательство. Учебник под ред. Лапуста М. Г., М., 2009, с. 5-27.

1. Գործարարի հանրային կերպարի ձևավորումը և արմատավորումը (հայ գործարարի բարոյական կոդեքսի և գործարար վարքի կանոնների ընդունումը)

Ձեռնարկատիրական գործունեության և տնտեսության զարգացման համար անհրաժեշտ արդար, հավասար մրցակցային պայմանների ձևավորման ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկվող քայլերը դեռևս արդյունավետ չեն և չեն տալիս ցանկալի արդյունք, ի թիվս այլոց, նաև հետևյալ պատճառներով՝

- հայ գործարարների և անհատ ձեռնարկատերերի ճնշող մեծամասնությունը չունի արդար և հավասար մրցակցային պայմանների ապահովման ու պահպանման կարևորության գիտակցությունը, և նրանցից շատերը ձգտում են իրենց մրցունակությունը բարձրացնել ստվերային գործունեությամբ՝ խուսափելով արդար մրցակցությունից,

- հասարակության, ավելի ստույգ՝ ժողովրդի լայն խավերի մեջ դեռևս չեն ձևավորվել գործարարի և անհատ ձեռնարկատիրոջ նկարագրի ու գործունեության չափանիշների վերաբերյալ իրական շուկայական տնտեսությանը համապատասխանող պահանջներ,

- նույնիսկ հակաօրինական գործունեությամբ զբաղվող որևէ անձ կարող է իրեն գործարար համարել, ներկայանալ և հասարակության ու հանրային իշխանության մարմինների որոշ ներկայացուցիչների կողմից ընդունվել որպես անհատ ձեռնարկատեր,

- տնտեսության գրեթե ոչ մի ճյուղում չկան ինքնակարգավորվող կազմակերպություններ, որոնք կսահմանեն որոշակի պահանջներ իրենց անդամների գործունեության նկատմամբ և կհետևեն դրանց իրականացմանը: Առկա ասոցիացիաներն ու միությունները հիմնականում զբաղվում են միայն իրենց խմբակային, առավելապես կազմակերպիչների կամ մի քանի խոշոր անդամների շահերի ներկայացմամբ ու պաշտպանությամբ:

Վերը նշված բացասական երևույթները նվազեցնելու, ձեռնարկատիրական գործունեության համար հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու, հասարակական պահանջի ձևավորման և ձեռնարկատերերի ու գործարարների կողմից դրան համահունչ շարժում ապահովելու նպատակով առաջարկում ենք՝

- տնտեսական գործունեության առանձին ոլորտներում ստեղծել «մեկ անդամ՝ մեկ ծայն» սկզբունքով գործող ճյուղային և մասնագիտական ինքնակարգավորվող կազմակերպություններ, որոնք, իրենց

անդամների միասնական օրինական շահերը ներկայացնելուց ու պաշտպանելուց բացի, առաջին հերթին, պետք է սահմանեն անդամակցության սկզբունքներ և ներքին միասնական չափանիշներ իրենց անդամների գործունեության վերաբերյալ, վերահսկեն դրանց պահպանումը, իրենց անդամների համար ապահովեն հավասար մրցակցային պայմաններ, երաշխավորեն նրանց հաճախորդների օրինական շահերի պահպանումը և այլն,

- մշակել և ինքնակարգավորվող կազմակերպությունների միջոցով առանձին ճյուղերում ու ոլորտներում ընդունել արդար մրցակցության և միասնական պրակտիկայի կանոններ, ինչպես նաև տվյալ ոլորտում գործարարի ու մասնագետի բարոյական կոդեքսն ու պրոֆեսիոնալ վարքի կանոնները,

- ստեղծել ինքնակարգավորվող կազմակերպությունների ինքնակարգավորվող միություն, որի հիմնական խնդիրը պետք է լինի հայ գործարարների և անհատ ձեռնարկատերերի համար ընդհանրացված արդար մրցակցության և միասնական պրակտիկայի կանոնների, ինչպես նաև հայ գործարարի բարոյական կոդեքսի ու պրոֆեսիոնալ վարքի կանոնների ընդունումն ու դրանց արմատավորումը,

- ապահովել վերը նշված խնդիրների լուծման ուղղությամբ հասարակական հստակ պահանջի և սկզբունքային դիրքորոշման ձևավորումը՝ զանգվածային լրատվության միջոցների, հասարակական քաղաքական կազմակերպությունների և հանրային իշխանության բոլոր մարմինների համաձայնեցված և նպատակաուղղված գործողությունների միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության վրա ազգային առանձնահատկությունների ազդեցության հաշվի առնելը

Երկրի տնտեսության պետական կարգավորման և առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպման համար հանրահայտ շուկայական սկզբունքների ու կառուցակարգերի մեխանիկական կրկնօրինակումը հղի է անկանխատեսելի հետևանքներով՝ առանց տնտեսության զարգացման երկարաժամկետ (առնվազն 10 տարի) ծրագրի ճշգրտման և ազգային առանձնահատկությունների հաշվառման:

Պակաս վտանգավոր չեն նաև բազմաթիվ երկրներում արդյունավետորեն կիրառված և երկարամյա դրական փորձաքննություն անցած հանրահայտ շուկայական սկզբունքային հիմնադրույթների խեղաթյու-

րումներն ու դրանց կիրառումից փաստացի խուսափելը՝ ազգային առանձնահատկությունների բացարձակացման և անհարկի շահարկումների պատճառով:

Ըստ էության, վերը նշված իրավիճակն է տիրում Հայաստանում: Մենք կարծես թե որդեգրել ենք շուկայական տնտեսական համակարգը: Սակայն չենք ճշգրտել դրա առանձնահատկություններն ու լիարժեք ուրվագծերը: Չունենք երկրի տնտեսության զարգացման երկարաժամկետ (առնվազն 10 տարի) ծրագիր, չենք ընդունել շուկայական տնտեսության կայացման համար անխուսափելի բազմաթիվ օրենքներ և սկզբունքներ: Ընդունված օրենքներից ու կիրառվող շուկայական կառուցակարգերից շատերն անհաջող նմանակումներ են:

Այս ամենը տարիներ շարունակ տեղի է ունենում ազգային առանձնահատկությունների լրիվ անտեսմամբ կամ բացարձակացմամբ, հաճախ տեղի-անտեղի հիշատակելով ու անհարկի շահարկելով՝ ըստ էության, առանց ուսումնասիրելու, բնորոշելու, դասակարգելու և հիմնավորված կերպով հաշվի առնելու այդ առանձնահատկությունները:

Փաստորեն, հայ ժողովրդի ազգային բազմաթիվ առանձնահատկություններ, երկրի տնտեսության զարգացման և ժողովրդի բարեկեցության բարձրացման նպատակով, բնավ չեն օգտագործվում որպես խթանիչ գործոններ: Մյուս կողմից, երկրի տնտեսության հանրային կառավարման ներկայիս համակարգն ու կառուցակարգերը, ինչպես նաև առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպման սկզբունքները չեն կարող վերացնել տնտեսության զարգացման վրա ազգային բնավորության որոշ գծերի բացասական ազդեցությունը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք իրականացնել երկրի տնտեսության հանրային կառավարման և առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության վրա ազգային առանձնահատկությունների ազդեցության և դրա հնարավորությունների համեմատական ուսումնասիրություն: Այս հարցում հատկապես կարևոր են՝

- տնտեսության զարգացման շուկայական սկզբունքներ որդեգրած մի շարք հատկանշական երկրների փորձի ամփոփումն ու արդյունքների համեմատական դասակարգումը՝ ըստ տվյալ երկրների ժո-

ղովորդների ազգային առանձնահատկությունների ու դրանց վճռորոշ ազդեցության,

- վերոհիշյալ երկրներում տնտեսության հանրային կառավարման և տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպման մեխանիզմներում ազգային առանձնահատկությունների՝ որպես խթանիչ գործոնների հաշվառման ու դրանց դրական ազդեցության ապահովման վերլուծությունը,

- Հայաստանի տնտեսության պետական կառավարման և առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպման արդյունավետության վրա ազգային առանձնահատկությունների՝ որպես խթանիչ գործոնների փաստացի ազդեցության համեմատական վերլուծությունը,

- շուկայական տնտեսության հանրային կառավարման սկզբունքների և առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպման կառուցակարգերի (մասնավորապես, կորպորատիվ սկզբունքների) տեղայնացման վերաբերյալ հիմնավորված առաջարկություններ ներկայացնելը, որոնք պետք է հնարավորինս հաշվի առնեն ազգային առանձնահատկությունները և ապահովեն դրանց խթանիչ գործոնի առավելագույն օգտագործումն ու բացասական ազդեցության չեզոքացումը:

Ուսումնասիրության արդյունքները պետք է իշխանության համապատասխան մարմինների կողմից առավելագույնս կիրառվեն երկրի որդեգրած՝ տնտեսության շուկայական համակարգի առանձնահատկություններն ու ուրվագծերը ճշգրտելու, երկրի տնտեսության զարգացման երկարաժամկետ (10 տարվա) ծրագիր մշակելու, համապատասխան օրենսդրական դաշտը ձևավորելու, տնտեսության հանրային կառավարման և տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպման սկզբունքների տեղայնացման ու օպտիմալացման համար՝ նվազագույնի հասցնելով ազգային առանձնահատկությունների հետագա անտեսումը կամ «հայկական մենթալիտետի» անհարկի շահարկումները:

3. Հանրապետության փոքր ու միջին քաղաքներում և քաղաքատիպ ավաններում ՓՄՁ-ների զարգացումը

Փոքր ու միջին քաղաքներում և քաղաքատիպ ավաններում գործարարության և ՓՄՁ-ների զարգացման համար սկզբունքային նշանակություն ունեն դրանցում իշխանությունների կողմից ՓՄՁ-ներին

աջակցելու ուղղությամբ որդեգրված ռազմավարությունը, ինչպես նաև տնտեսության զարգացման երկարաժամկետ ծրագրերի առկայությունը⁵: Վերջիններիս իրականացման արդյունավետությունն իր հերթին մեծապես կախված է գործարարությանն աջակցելու ռազմավարության ու ծրագրերի հիմնավորվածությունից, դրանց իրագործման մարտավարությունից և իրականացման հետևողականությունից⁶:

Նշենք, որ Հայաստանի գրեթե ոչ մի քաղաք չունի քաղաքային տնտեսության զարգացման հայեցակարգ, երկարաժամկետ (առնվազն 10 տարվա) ծրագրեր և գործարարության աջակցության ռազմավարություն: Տեղական իշխանություններն ու գործարար շրջաններն իրենցից կախված ներքին հիմնախնդիրները վերլուծելու և հետևողական լուծումներ տալու փոխարեն հիմնականում զբաղված են ընթացիկ քաշքշուկներով, ձեռնարկատիրական գործունեությունը վնասող մասնակի ու սուբյեկտիվ միջամտությամբ, ինչպես նաև տվյալ մակարդակներում լուծումներ չունեցող ընդհանուր հիմնախնդիրները մատնացույց անելով և կենտրոնական իշխանությունների կողմից դրանք վերացնելուն սպասելով:

Ինչ խոսք, առանձին քաղաքների իշխանություններն ու գործարար շրջանները պետք է հստակ պատկերացնեն երկրի ընդհանուր տնտեսական իրավիճակը և նպաստեն դրա բարելավմանը: Այդուհանդերձ, նրանք իրենց ներքին ողջ ռեսուրսները, հնարավորություններն ու ինքնակառավարման լծակները առաջին հերթին պետք է կենտրոնացնեն իրենց քաղաքում կամ քաղաքատիպ ավանում տնտեսության համեմատաբար առաջանցիկ զարգացման համար առավել նպաստավոր պայմանների ապահովման ուղղությամբ:

Իրավիճակի պատկերը և դրա կտրուկ բարելավման հրամայական անհրաժեշտությունն առավել ցայտուն կլինեն, եթե փաստենք, որ փոքր և միջին քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում գործարար ակտիվության բարելավման ու տնտեսության զարգացման ճանապարհին առկա հիմնախնդիրներն անհամեմատ ավելի բարդ և սուր են քան մայրաքաղաքում: Վերը նշվածի հիմնական պատճառներից մեկն այն է, որ այդ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում առկա են լրա-

⁵ Ռազմավարություն ՓՄՁ զարգացման 2016-2018 թվականների, Ե., 2015, հոկտեմբեր:

⁶ Ծրագիր 2016 թվականի ՓՄՁ պետական աջակցության, Ե., 2015:

ցուցիչ և տեղային բնույթի մի շարք հիմնախնդիրներ: Դրանցից շատերն ընդհանուր են գրեթե բոլոր տարածքներում, և դրանց հնարավոր լավագույն լուծումները ևս, ըստ էության, ունեն ընդհանուր շատ կողմեր:

Այս ամենից բացի, առանձին քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում տնտեսության զարգացման հարցում բացակայում են մոդելային ծրագրերի կիրառման կարևորության գիտակցումը, ջանքերի ու հնարավորությունների միավորումը և այլն: Մյուս կողմից, դրանց մեծ մասը չունի ֆինանսական, տեխնիկական և մասնագիտական անհրաժեշտ միջոցներ՝ գործարարության զարգացման ռազմավարության, տնտեսության տարածքային զարգացման հայեցակարգերի, ռազմավարական ծրագրերի և դրանց իրագործման մարտավարության մշակման, համապատասխան կառույցների ձևավորման ու կադրերի պատրաստման համար:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք հանրապետությունում գոյություն ունեցող ընդհանուր պայմանների շրջանակում ապահովել փոքր և միջին քաղաքների ու քաղաքատիպ ավանների տնտեսության, մասնավորապես ՓՄՁ-ների՝ համեմատաբար առաջանցիկ տեմպերով զարգացումը:

Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել այդ քաղաքներում գործարարության աշխուժացման և փոքր ու միջին բիզնեսի զարգացման համար համեմատական բարենպաստ պայմանների ձևավորման ու աջակցության մոդելային ռազմավարություն և երկարաժամկետ մոդելային ծրագրեր, որոնց հիմքում պետք է ընկած լինեն նախնական ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և տեղական իշխանությունների իրավասության սահմաններում լուծելի խնդիրները, դրանց հաղթահարման ընդհանուր մոտեցումները, առաջարկները, լուծումներն ու սկզբունքները:

Այդ ռազմավարությունն ու ծրագրերը պետք է ուղղված լինեն փոքր ու միջին քաղաքների և քաղաքատիպ ավանների համեմատական առավելությունների զարգացմանն ու արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև թույլ կողմերի վերացմանն ու դրանց ազդեցության նվազեցմանը: Մոդելային ռազմավարության ու ծրագրերի մշակումից հետո դրանք պետք է տեղայնացնել առանձին շահագրգիռ քաղաքների համար և հետևողականորեն իրականացնել՝ միաժամանակ ապա-

հովելով այդ քաղաքների ջանքերի, հնարավորությունների ու փորձի միավորումը ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում:

Առաջարկվող ծրագրի իրականացումն ու ՓՄՁ-ների զարգացման բնագավառում առանձին շահագրգիռ փոքր ու միջին քաղաքների և քաղաքատիպ ավանների ջանքերի միավորումը, վերը նշվածից բացի, միաժամանակ լրացուցիչ հնարավորություններ կտան՝

- զգալիորեն տնտեսել նույն խնդիրների ինքնուրույն լուծման դեպքում անհրաժեշտ ֆինանսական, ժամանակային, մասնագիտական ու տեխնիկական միջոցները,

- նվազագույնի հասցնել հայեցակարգերի և ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացման մարտավարության մշակման, գործնական իրագործման ու վերահսկողության սխալները,

- օժանդակել փոքր ու միջին քաղաքների և քաղաքատիպ ավանների տնտեսական ինտեգրման գործընթացներին,

- ապահովել պետական իշխանության կենտրոնական մարմիններում փոքր ու միջին քաղաքների և քաղաքատիպ ավանների տնտեսության զարգացման վերաբերյալ միասնական քաղաքականության ձևավորումը և այլն:

Այսպիսով, ներկայումս ՀՀ-ում հանրային կառավարման հնչեղություն ունեցող գերակա ուղղություններն են՝ գործարարի հանրային կերպարի ձևավորումը և արմատավորումը, տնտեսության վրա ազգային առանձնահատկությունների ազդեցության հաշվի առնելը և հանրապետության փոքր ու միջին քաղաքներում ՓՄՁ-ների զարգացումը: Դրանցից յուրաքանչյուրի բարելավման համար ներկայացվող համալիր միջոցառումները և համապատասխան քայլերը թույլ են տալիս նշված ուղղությունների համար նշմարել տնտեսական քաղաքականության տարրեր:

ПРИОРИТЕТНЫЕ НАПРАВЛЕНИЯ И МЕРОПРИЯТИЯ ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ХАЧАТУРЯН А.В.

Резюме

На сегодняшний день в Армении приоритетными направлениями общественного управления являются: формирование и укоренение общественного имиджа предпринимателя; учет влияния национальных особенностей на экономику; развитие малого и среднего бизнеса в малых и средних городах республики.

В целях совершенствования каждого из этих направлений представлены комплексные меры, призванные определить элементы экономической политики для указанных направлений.

PRIORITY DIRECTIONS AND EVENTS OF SOCIAL MANAGEMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

A. KHACHATURYAN

Abstract

According to the author, currently the priority directions of public administration in Armenia are; the formation and strengthening of the public image of the businessman, the impact of national peculiarities on the economy and the development of SMEs in small and medium-sized cities of the RA.

For improvement of each of them complex measures and corresponding steps were introduced with the aim to identify elements of economic policy for the mentioned directions.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆԸ» ՎԱՋԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

ԱՊՐԵՍՅԱՆ Ա.Գ.

Համաշխարհային գրականության մեջ կան բանաստեղծությունների այնպիսի թարգմանություններ, որոնք առաջին իսկ տողից մեզ համակում են իրենց տրամադրությամբ, հուզականությամբ. դրանց թարգմանիչները խորապես զգացել և վերապրել են ստեղծագործությունների էությունը և ձգտել ստեղծելու կատարյալ թարգմանություն: Այդպիսին է նաև լեզվաբան, գրաբարագետ, գրող և թարգմանիչ Վազգեն Գևորգյանի՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի աշխարհաբար թարգմանությունը: Նա «Մատեանը» թարգմանել է որպես բանաստեղծություն, իսկ Նարեկացուն անվանել է «միջնադարյան այն արվեստագետ մեծ բանաստեղծը, որ պոեզիան դուրս բերեց եկեղեցու անձուկներից և նրան տվեց կյանք ու ինքնության արտոնագիր»¹:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի ամբողջական թարգմանությունը Վ. Գևորգյանը լույս է ընծայել 1979-ին, Երևանում: Մինչ այդ նա հրատարակել էր «Ծաղկաքաղը» (1970), որն ընդգրկում էր «Մատեանի» մի քանի գլխի թարգմանությունը: Այս հատվածների մեծ մասը թարգմանիչը վերամշակել է և նոր միայն դրանք զետեղել «Մատեանի»՝ 1979-ի հրատարակության մեջ: Ինչպես ինքն է նշում, այդ մշակումները հիմնականում կատարվել են բնագրից առերևույթ «հեռանալու» ճանապարհով՝ ցանկանալով այդ կերպ պահպանել թարգմանության բանաստեղծական հնչեղությունը և հեղինակի մտքերը, ասելիքը առավել

¹ Գրիգոր Նարեկացի, *Մաղյան ողբերգության, Տաղեր, թարգմ.*՝ Վ. Գևորգյանի, Ե., 1979, էջ 653: Այսուհետև այս թարգմանությունից արված մեջբերումներին կից կնշվի էջը:

ճշգրտված, որոշակի ու հստակ շարադրանքով հասցնել ժամանակակից ընթերցողին²:

Համեմատենք մի քանի հատված թարգմանության նախնական և վերջնական տարբերակներից.

Այնքան ավելի պիտ արժանանամ
Աննվազելի քո ողորմության³:
Կյանքս այս աշխարհում նման է
սաստիկ **ալեծուսի** ծովի,
Ուր կոհակների անդուլ, անընդմեջ
դիմախուժումով
Տարութերվում է, ցնցվում է հոգիս...

Իր **եռալեկոծ** դիմահարությամբ
Իսկույն **վրդովեց** հանդարտությունը
(1970, ԻԴ, 57):
Ոչ թե **հույս ունի** ապրել **լույսի մեջ**⁴
ապրողների հետ,
Այլ մեռյալների հետ՝ **զգայական**
կյանքով՝ խավարում (1970, Լ, 68):

Այնքան ավելի կարժանանամ քո
անհատ գթության (Թ, 55):
Կյանքս այս աշխարհում նման է
սաստիկ **մրրկածուսի** ծովի,
Ուր բազմակոհակ ու ալեխոռով
Հորձանքների խուլ, անդուլ,
անընդմեջ **ընդդիմախուժմամբ**⁵
Տարութերվում է, ցնցվում է հոգիս...
Երեքայան իր դիմահարությամբ
հառնեց-խռովեց անդորրն
հիմնովին (144):
Ոչ թե, **հավակնոտ, ակնկալում է՝**
Ապրողների հետ՝ **լուսաբնակ կյանք,**
Այլ **խավարակյաց զգայական շունչ՝**
մեռյալների հետ (184):

Ակնհայտ է, որ թարգմանության վերջնական տարբերակում թարգմանիչը հեղինակի մտքերին տվել է նոր ձևակերպումներ, բառերը փոխարինել առավել ազդեցիկ հոմանիշներով, հավելել նախդիրներով, բառակապակցություններն արտահայտել բառով՝ այդ կերպ փորձելով ավելի մոտ գտնվել Նարեկացու խոսքի իրական իմաստին:

Թարգմանության ժամանակ պետք է ի նկատի ունենալ որևէ երկին բնորոշ առանձնահատկությունները: Այս հանգամանքը կարևորվում է հատկապես Նարեկացու ստեղծագործությունը թարգմանելիս: Ահա մի քանի բնութագրական գծեր, որոնք հատուկ են Մատենանին.

Ա. Այն ունի հարուստ բառաշխարհ: Բանաստեղծական արվեստի առաջին բաղադրիչը բառն է՝ իմաստի և ոճի կրողը: «Մատենանում» Նարե-

² Տե՛ս նույն տեղում:

³ Գրիգոր Նարեկացի, Մաղյան ողբերգության, Ծաղկաքաղ, թարգմ.՝ Վ. Գևորգյանի, Ե., 1970, գլ. Թ, էջ 37-38: Այսուհետև այս հրապարակությունից արված մեջբերումներին կից կնշենք հրապ. թիվը, գլուխը և էջը:

կացին ստեղծել է ինչպես բազմաթիվ նորակազմ բառեր, այնպես էլ՝ մակ-դիրներ, փոխաբերություններ:

1. Ինչպես բոլոր բանաստեղծական գործերում, այնպես էլ «Մատեանում», բառը, ի տարբերություն իր բառարանային բուն իմաստի, ստացել է այլ իմաստ և տարողություն: Նարեկացին հաճախ է դիմել փոխանունության. «Ե՛ս **ամենայնն**, եւ յի՛ս **ամենեցունն**»⁴:

Թարգմանիչները փոխանունները վերածել են լրացման և, իբրև լրացյալ՝ ավելացրել են նոր՝ **մեղք** և **հանցանք** բառերը⁵, ինչպես այս օրինակներում. «Այդ **բոլոր յանցանքները** ես եմ, ու **ամէնուն յանցանքները** իմ մէջս են»⁶: «Ես եմ ամէնն ալ, եւ **ամենուն յանցանքները** իմ մէջ կը գտնուին»⁷: «Ես եմ այդ բոլորը, և բոլորի **հանցանքներն** իմ մեջ են»⁸:

Մինչդեռ Գևորգյանը, հավատարիմ մնալով բնագրին, թարգմանել է. «Ե՛ս եմ **համայնը**, և ամենքինն է **պարփակված** իմ մեջ» (442):

2. «Մատեանում» կան բառեր, որոնք միայն Նարեկացին է օգտագործել, որոշ բառեր էլ բացակայում են բառարաններում, առկայության դեպքում էլ անբացատրելի են, անծանոթ, անհայտ կամ ճիշտ չեն մեկնաբանված:

Նարեկացին գրել է. «Սովեցելոյս **ասպակասպաս**, կաղկանձողական՝ ամենաթշուառ վտանգաւորիս /Ապրու՛ստ կերակրոյ փշրանաց հացի / Ի բազմազեղդ քո սեղանոյ մասնաւորեցես» (ԼԵ, 394-395):

«Ասպակասպաս» բառը⁹ մեկնություններում և բառարաններում տարբեր կերպ է բացատրված: Թարգմանիչն ուսումնասիրել է այդպիսի բա-

⁴ **Գրիգոր Նարեկացի**, *Մարտան ողբերգութեան, աշխարհասիրոյթամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի*, Ե., 1985, գլ. ՀԲ, էջ 535: Այսուհետև՝ **Գրիգոր Նարեկացի**, *Մարտան ողբերգութեան* (գիտ. հրատ.), գլուխը և էջը:

⁵ **Գրիգոր Նարեկացի**, *Մարտան ողբերգութեան. Տաղեր, թարգմ.*Վ. Գևորգյանի, էջ 603:

⁶ Նարեկ. *Աղօթամարտան Ս. Գրիգոր Նարեկացւոյ, թարգմ.* Թ. Գուշակյանի, Գահիրէ, 1926, էջ 239: Այսուհետև՝ Գուշակյան, էջը:

⁷ **Ս. Գրիգոր Նարեկացի**, Նարեկ. *Ողբերգութիւն, գրաբար բնագրի հանդիպադրոյթամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին Եպս. Տրապիզոնի, Պուլէոսս Այրէս, 1948, էջ 185*:

⁸ **Գրիգոր Նարեկացի**, *Մարտան ողբերգութեան, թարգմ.*Մ. Խերանյանի, Ե., 1960, էջ 314: Այսուհետև՝ Խերանյան, էջը:

⁹ Տարընթերցված՝ «ասպականասպաս»: Միջնադարյան լուծմունքը բացատրում է. «Լափն է, զոր տան շանն» (Մաշտոցի անվան Մարտենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. N 5650, թ. 377բ): Մեկնիչը **սպաս** բաղադրիչը ընդունում է որպես գոյական՝ լակ, ապուր նշանակությամբ: Հ. Նալյանը բարդության առաջին բաղադրիչը համարում է

ները, բացահայտել, պարզել հեղինակի մտքերը, որոշել, թե որն է ավելի մոտ Նարեկացու մտքին, և նոր միայն ընթերցողին հանձնել դրանց աշխարհաբար ձևակերպումները. «Որպես սովատանջ ամենաթշվառ կադկանձող մի շան՝ /Քո ամենազեղ ու ճոխ սեղանի /Հացի փշրանքից բաժին հա՛ն և ինձ» (222):

3. «Մատենանում» հանդիպում են գրաբարյան լեզվամտածողությանը հատուկ բառեր, կապակցություններ, մտքեր, շարահյուսական ձևեր, որոնք անհասկանալի էին ինչպես միջնադարյան, այնպես էլ ժամանակակից ընթերցողին: Նարեկացուն հասկանալու համար ստեղծվել են «Մատենանի» մեկնությունները, որոնք բացատրել են նրա այս կամ այն բառը, միտքը, նախադասությունը: Թարգմանիչները հաճախ դիմել են մեկնիչներին՝ Նարեկացուն ավելի ճիշտ հասկանալու և թարգմանելու համար:

Նարեկացին գրել է. «Մի՛ **զհովիտ հանճարոյս** ստուերական պահեր» (ՀԸ, 563): Գաբրիել Ավետիքյանը «Մատենանի» իր մեկնության մեջ «զհովիտ հանճարոյս»-ը բացատրել է՝ «զյիշատակարան մտացս մի՛ թողցես ի խաւարի, որով անծանօթ մնացեալ իմոց մեղաց՝ ի հանդերձեալսն հրատարակեսցի ինձ»¹⁰: Ըստ մեկնիչի՝ «**հանճարի հովիտ**» ասելով՝ Նարեկացին ի նկատի է ունեցել «**միտք**» իմաստը: Այդպես է թարգմանել նաև Գևորգյանը՝ «Ձեռքից բաց մի՛ թող սանձերը **մտքիս**» (471):

Բ. «Մատենանին» բնորոշ են հոմանշային կուտակումները՝ ինչպես բառերի, այնպես էլ կապակցությունների և նախադասությունների:

ասպակա բառը և բացաբրում է. «ասպակա, այսինքն շան լակն, և կամ փշրանքն սեղանոյ, զոր խնդրեաց քանանուհին, զինքն ի շուն օրինակելով» (Նալեան 3., Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 296): **Ասպականի բառը** Ավետիքյանը ստուգաբանում է պարսկերեն **ասպ-ձի** բառից և բացաբրում է. «նշանակէ ձիաւոր որսորդ, իսկ **ասպականասպաս** նշանակէ սպասաւոր կամ ծառայող որսորդի. որպէս է շունն որսական» (Աւետիքեան Գ., Նարեկ աղօթից, համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, Վենետիկ, 1827, էջ 95, ծնթ. 17): Ըստ Նոր Հայկազյան բառարանի՝ **ասպականասպաս** նշանակում է՝ «որ կայ ի սպասու ասպականոյ, այսինքն որսորդի. որսորդ շուն. բարակ որսական» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Ե., 1979, էջ 315): Ըստ Աճառյանի՝ **ասպականասպաս** նշանակում է «կերակրի մնացորդներին սպասող» և կազմված է ոչ թե **ասպականի**՝ «որսորդ կամ շուն», այլ **ասպակ**՝ «կերակրի մնացորդ բառից» (Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 271), չնե՛ս Գրիգոր Նարեկացի, Մարեան ողբերգութեան (գիպ. հրապ.), էջ 1044, ծնթ. 19:

¹⁰ Աւետիքեան Գ., նշվ. աշխ., էջ 414:

Անտանելի /, անմերձենալի /, անըմբռնելի /, անիմանալի,
 Անճառելի /, անտեսանելի /, անզննելի /, անշաշափելի,
 Անորոնելի /, անսկիզբ /, անժամանակ (Գ, 254):

Թարգմանիչները երբեմն վերարտադրել են նախադասության բովանդակությունը, երբեմն ավելացրել են տվյալ բառին իմաստով մոտ կամ նման բառ, երբեմն ստեղծել են բարդ բառեր կամ պարզապես կրճատել են հոմանշային շարքը՝ թողնելով մեկ կամ երկու հոմանիշ, որը թուլացրել է Նարեկացու մտքի ուժգնությունը:

«...Ո՛չ սկզբնաւորութիւն ունիս ու ո՛չ ալ վերջաւորութիւն, կարելի չէ ո՛չ ըմբռնել, ո՛չ հասկնալ, ո՛չ տեսնել, ո՛չ զննել, ո՛չ շօշափել ու ո՛չ ալ մօտենալ քեզ»¹¹:

Գևորգյանը կամ պահպանել է հոմանշային ողջ շարքը, կամ համալրել է այն նոր հոմանիշով, քանի որ նույնությամբ թարգմանելով՝ չէր արտահայտում հեղինակի ասելիքի ուժը.

Անպարփակելի /, անմերձենալի,
 Անըմբռնելի /, անիմանալի /, անճառ, անպատում,
 Անտեսանելի / ու անզննելի,
 Անշոշափելի /, անորոնելի
 Անսկիզբ-անվերջ /ու անժամանակ (Գևորգյան, 18):

Գ. «Մատենան» ունի առանձնահատուկ տաղաչափություն: «Հայկական տաղաչափության հիմնական ձևերն իրենց ենթատեսակներով լայնորեն կիրառվել են VII-XI դարերում»¹², և «այստեղ, անվերապահորեն, մեծագույն ավանդը պատկանում է Գրիգոր Նարեկացուն»¹³:

1. «Մատենանի» կառուցվածքի վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծիք են. նրանք Նարեկացու «ամբողջ աղօթական «Մատենան» մերթ չափածո են համարել՝ անտեսելով արձակ գրված հատվածները»¹⁴, մերթ գտել են, որ «Մատենանի» «քնարական հատվածների մեծ մասը հորինված է ազատ ոտանավորով, ուր կան նաև արձակ կտորներ»¹⁵: Նա-

¹¹ Աշխարհաբար Նարեկ, թարգմ.՝ Մ. Գոչունյանի, Կ. Պոլիս, 1902, էջ 15: Այսուհետև՝ Գոչունյան, էջը:

¹² Տե՛ս նաև Աբեղյան Մ., Երկեր, հ. Ե, Ե., 1971, էջ 332:

¹³ Ղազինյան Ա., Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 228:

¹⁴ Բահաթրյան Ա., Հին հայոց տաղաչափական արվեստը, Ե., 1984, էջ 105:

¹⁵ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 323-324:

րեկացին իր երկը համարել է չափածո ստեղծագործություն. «Եւ զի՞նչ է ինձ սակաւ եւ նուազագոյնս յաւել / Սահմանս կսկծելիս չափաբերականս, / Մինչ անցեալ է ըստ քանակութեան եւ վրիպեալ ըստ բժշկութեան» (Ե, 265):

Թարգմանիչները «Մատենանը» թարգմանել են և՛ արձակ [Մ. Գոչունյան, Թ. Գուշակյան, Գ. Խաչատուրյան (1926)], և՛ չափածո [Գ. Խաչատուրյան (1948), Մ. Խերանյան]: Գևորգյանը «Մատենան» ամբողջությամբ չափածո է թարգմանել:

2. Հայկական բանաստեղծության ամենատարածված չափը հնգավանկ անդամներով (5+5) ոտանավորն է: «Մատենանում» նույնպես գերակշռում է հնգավանկ անդամներով ազատ ոտանավորը, թեև, իհարկե, Նարեկացին օգտագործել է նաև այլ չափեր: Այսպես է սկսվում նույնիսկ «Մատենանի» յուրաքանչյուր Խոսքի խորագիրը՝ «Ի խորոց սրտից + խօսք ընդ Աստուծոյ»¹⁶: Գևորգյանը նույնպես, «Մատենանի» չափը համարելով հայերենին բնորոշ հնգավանկ յամբ-անապեստոն¹⁷, հիմնականում երկանդամ ու եռանդամ տողերով, այդպես է թարգմանել.

Արեգակն արդար /, ճառագայթ արհնեալ,

Լուսոյ կերպարանք /, փափագ անձկութեան (ՂԵ, 639):

Արեգակ արդար /, օրհնյա՛լ ճառագայթ,

Լուսի կերպարանք /, փափագ անձկալի (Գևորգյան, ՂԳ, 550):

Սակայն, ինչպես նկատել է թարգմանիչը, «բանաստեղծը միշտ չէ, որ հետևել է այս չափին, իսկ հետևելիս էլ՝ սակավ չեն նրա թույլ տված խախտումները: Բայց այդ խախտումներից նրա երկի բանաստեղծականությունը չի տուժել, քանի որ նա այդ կատարել է ստեղծագործական հախուռն տարերքի մեջ»¹⁸: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ Նարեկացին խախտել է բանաստեղծական չափը, թարգմանիչը պահպանել է այն՝

ա) մի դեպքում հոմանիշ ավելացնելով.

Ահաւոր, հզար /, բարերար / եւ ամենաստեղծ,

¹⁶ Ս. Գրիգոր Նարեկացի, Նարեկ. Ողբերգութիւն, գրաբար բնագրի հանդիպադրությամբ աշխարհաբարի վերածեց՝ Գարեգին եպս. Տրապիզոնի, էջ ԻԳ:

¹⁷ Յամբ-անապեստոսյան ոտանավորները 5-վանկանի անդամներով զարգացող ոտանավորներն են, որոնց հիմքը միայն հավասար անդամներն ու կայուն հարվածներն են (յոթն'ս Զրբաշյան Է., Պոեզիկայի հարցեր, Ե., 1976, էջ 266):

¹⁸ Գրիգոր Նարեկացի, Մաղյան ողբերգության. Տաղեր, թարգմ.՝ Վ. Գևորգյանի, էջ 634-635:

Կենդանի, գովեալ /, ամենակատար (ԽԲ, 412):
 Ահավոր, հզոր /, բարերար, **գթած** / և ամենաստեղծ,
 Կենդանի, գովալ /, ամենակատար (Գևորգյան, 247):
 Յորժամ, որ այժմս / բանապաճոյճ,
 Խրոխտաճայն /, սիգացող /, բարձրապարանոց (ՀԳ, 538):
 Զի ես, որ այժմ / այսպես պերճախոս,
 Խրոխտաճայն եմ /, սիգաքայլ, **հպարտ** /, բարձրապարանոց (Գևորգյան, 446):
 Բ) մեկ այլ դեպքում հոմանիշ կրճատելով.
 Աստուած ողորմած /, բազմագութ, հզար /, **ահաւոր**,
 Մարդասէր, արիւնեալ /, կենդանի, անճառ (ՀԶ, 555):
 Աստված ողորմած /, բազմագութ, հզոր,
 Անճառ, կենարար /, օրինյալ, մարդասեր (Գևորգյան, 458):

Տաղաչափության հետ կապված դժվարությունների հաղթահարումը թարգմանչից ավելի շատ ժամանակ է պահանջել, քան բնագիրը աշխարհաբարի վերածելը: Այստեղ է, որ թարգմանիչը հանդես է եկել որպես բառաստեղծ և ոճաբան, քանի որ՝

ա) «Մատենի» որևէ բառ հաճախ հնարավոր չէ փոխարինել չափին համապատասխանող մեկ այլ բառով. Նարեկացին կամ սպառել է տվյալ հոմանշային շարքը, կամ դիմել է նորաստեղծների: Այս դեպքում թարգմանիչը գտել է բնագրի հոմանշային շարքին և՛ նրբիմաստով, և՛ բանաստեղծական չափով համապատասխանող հոմանիշը.

Արձան անզգայ /, պատկեր անբարբառ /, գոյութիւն անշունչ,
Ողորմելի տեսիլ /, **աշխարելի** կերպարան,
 Ողբալի **արիւնակ** /, **եղկելի** դէմք,
 Արտասուելի **նմանութիւն** /, լռեցեալ լեզու,
Ցամաքեալ խոտ /, թաթափեալ ծաղիկ,
Ծորեալ գեղ /, **շիջեալ դամբար**,
Դատարկ կոկորդ /, խոպանացեալ սիրտ,
Աղիւնեալ ազդարան /, **սպառեալ** աղբիւր (ՀԳ, 538):
 Անզգա արձան /, անբարբառ պատկեր,
 Անշունչ գոյություն /, **խղճալի** տեսիլ,
Եղկելի կերպար /, ողբալի **տիպար**,
Ողորմելի դէմք /, արտասվելի **տեսք** /, համրացած լեզու,
Խորշակահար խոտ /, թոթափված ծաղիկ,
Այլակերպված գեղ /, **մարած** մի **կանթեղ**,

Սնամեջ կոկորդ /, խոպանացած սիրտ,
Գոց զգայարան /, **ցամաքած** աղբյուր (Գևորգյան, 447):

բ) Աշխարհաբարի քերականական ձևերն իրենց վանկաքանակով տարբերվում են գրաբարից (**բանական-բանականաց-բանականների, արտասուք-արտասուաց-արտասուքների**).

Գումարք միանձանց/ բոյք **բանականաց** /ընտրելոց (ԼԱ, 370):
 Գումարտակները / մենակյացների,
Բանականների / բույլերն ընտրագույն (Գևորգյան, 193):
 Վտակս **արտասուաց** / արբուցանողաց (ԿԴ, 501):
Արտասուքների / վարար վտակներ (Գևորգյան, 387):

3. Հանգի գործածությանը հայ գրականության մեջ առաջին անգամ հանդիպում ենք «Մատենանում»: «Մատենանը» գրված է անհանգ ոտանավորով, սակայն Նարեկացին տեղ-տեղ դիմել է ամենաբազմազան հանգերի կիրառության¹⁹ (ի, ցայ, եալ, աւ, եաց, իս, թինս, ոյս): «Ի» հանգի մասին հեղինակը նշել է «Մատենի» ԻԶ գլխում՝ «Ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, /Որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն»²⁰: Ահա մի հատված այդ գլխից.

Բազմահատուած էութին բնութեանս, ներհակք միմեանց
 ի պատերազմի,
 Երկչոտութեամբ կարծեաց վարանեալ, ամենայնիւ կայ ի վտանգի,
 Հարազատաց դաւաճանութին անհաշտելի ի կոտորածի (346):

Նույնիսկ այն թարգմանիչները, որոնք «Մատենան» ամբողջությամբ արձակ են թարգմանել, այս գլուխը՝ «ի ծայնավորի», ներկայացրել են բնագրի նման.

Բնութեանս տարբեր մասերը մղուած են իրարու դէմ պատերազմի.
 Երկչոտ կասկածներով շուարած, ենթարկուած է գոյութիւնս՝ վտանգի,
 Հոգիս և մարմինս թէև հարազատ իրարու, սակայն անհաշտ թշնամի,
 Զիրար դաւաճանելով մատնեցին դառն կոտորածի (Գոչունյան, 127):

¹⁹ Ղազինյան Ա., նշվ. աշխ., էջ 229:

²⁰ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան (գիպ. հրապ.), էջ 344:

Սակայն Գևորգյանը, որ «Մատենան» ամբողջությամբ չափաժող է թարգմանել, հրաժարվել է այդ ձևից.

Իմ իսկ էության մասերն համորեն, մեկնելու ներհակ,
Պատերազմում են անվերջ իրար դեմ.
Երկչոտությամբ ու տազնապով վարան՝
Վտանգի մեջ է այնտեղ ամեն ինչ.
Թեև հարազատ, բայց անհաշտելի ոսոխների պես
Դավաճանաբար ջարդում են իրար (155-156):

Որոշ դեպքերում էլ նա հավատարիմ է մնացել հեղինակի հանգավորմանը.

Թէ փառա՞ցդ վայելչութեան, յորմէ գրկեցայ,
Թէ կենա՞ցդ անմահականաց, յորմէ հերքեցայ (ԻԴ, 335):
Փառքիդ վայելքի՞ն, որից գրկվեցի,
Թե՞ անմահ կյանքիդ, որից վանվեցի (Գևորգյան, 138):
Ո՞վ որ զագրացաւ եւ ոչ ամաշեաց,
Ո՞վ որ զարշեցաւ եւ ոչ պատկառեաց (ԻԹ, 361):
Ո՞վ ապականվեց՝ ու չպատկառեց,
Գարշելի դարձավ՝ ու ամոթ չզգաց (Գևորգյան, 178):

4. «Մատենան ողբերգութեան» երկի ոճին բնորոշ է երաժշտականությունը:

Նարեկացուց է սկիզբ առել նաև հանգիստությունը և փոխանցվել մեր հետագա բանաստեղծներին: Կրկնելով միևնույն հնչյունը՝ բանաստեղծը ընթերցողի համար տեսանելի է դարձրել ոչ միայն բնության կենդանի պատկերը, այլև խոսքին հաղորդել է երաժշտականություն²¹: Թարգմանիչն արտահայտել է «Մատենանի» նաև այդ առանձնահատկությունը՝ ժամանակակից ընթերցողին փոխանցելով Նարեկացու հանճարի մեծությունը.

²¹ Տե՛ս Բան ՀԱ, ԿԸ, ԶԴ:

ա) Երբ Նարեկացին ստեղծել է շղթայահար հանգիստություններ՝ միևնույն տողի կամ կից տողերի մեջ նույն կամ նման հնչյունների (վ, ո, ի, ս, պ, ն) կրկնությամբ²².

Վերասցի՛ն վարմին վերարկութ,
Տոչորեսցի՛ն որոմանցն բոյսք,
Նզովեսցի՛ն բռնատրին
չարաբանութիւնք,
Կտրեսցի՛ լար խաբէութեան
ի մահ որսողին,
Պարսեսցի՛ն պատրողին
բանսարկութիւնք,
Պակասեսցի՛ն զէնք զրպարտողին
(Ղ, 604):

Վերանա վարմի ամեն ծածկ ու քող,
Որոմնաբույսերն այրվեն տապահար,
Բռնացողների դավերն ստանան
անեծք ու նզովք,
Ծվատվի ցանցը խաբեբայական
ի մահ որսողի,
Պարսվի պատրողի ամեն բարուրանք.
Զրպարտիչների զենքերը հատնեն
(Գևորգյան, 535):

բ) Երբ հանգիստությունն ուժեղացել է նաև հարևան բառերի առանձին, նույն կամ նման հնչյունների հերթագայությամբ.

Մեղա՛յ գերունակ գոգոյդ գրգանաց,
անբաւ մեղա՛յ,
Մեղա՛յ աննուազ լուսոյդ վայելման,
նենգողս մեղա՛յ (ԻԷ, 348-349):

Մեղա՛ գերագույն գոգիդ գրգալիր,
Անսահման մեղա՛.
Մեղա՛ աննվազ լույսիդ վայելման,
Նենգողս մեղա՛ (Գևորգյան, 158):

Գ. Նարեկացին արտահայտչական միջոցների կիրառման վարպետ է: Դրանցից են՝

ա) Կրկնությունը, հատկապես «մի՛» արգելական հրամայականի հարակրկնությունը: Հաճախ Նարեկացին նախադասությունները սկսել է միևնույն բառով և ավարտել քերականական ձևին հատուկ վերջավորությամբ.

Մի՛ գաւշեր զմորմոքեալս,
Մի՛ կուրացուցաներ զխաւարեալս,
Մի՛ զարհուրեցուցաներ զապշեալս,
Մի՛ խորովեր զխառշատեալս (ԺԷ, 307):

²² Ղազինյան Ա., նշվ. աշխ., էջ 236:

Նախորդ թարգմանիչները հավատարիմ են մնացել բնագրի ձևին, Գևորգյանը խախտել է այն՝ իր թարգմանությունն ազատելով միօրինակությունից և միապաղաղությունից²³.

Մի՛ հոշոտիր մորմոքյալիս, **մի՛** կուրացնիր խավարածիս,
Մի՛ զարհուրեցնիր ապշահարիս, **մի՛** խորովիր խարշատվածիս
 (Խեղանյան, 66):

Էլ **մի՛** բզկտիր, մորմոքված եմ ես,
 Մթնածիս նորից **մի՛** կուրացրու,
Մի՛ ահաբեկիր սարսափահարիս
 Եվ խարշատվածիս էլ **մի՛** խորովիր (Գևորգյան, 96):

բ) «Թէ»-երի, «Եթէ»-ների ոճական կիրառությունը՝ շարահյուսական հնարավոր բոլոր զուգորդություններով.

Որ **եթէ** փախնումք ի քէն՝ դու զկնի ընթանաս,
Եթէ տկարանամք՝ զաւրացուցանես,
Եթէ վրիպիմք՝ շափղ դիւրութեան ուղղես,
Եթէ պատկառեմք՝ քաջալերես (ԾԱ, 447):
Եթե փախչելու լինենք քեզանից, կհետևես մեզ.
 Կգորացնես, **եթե** թուլանանք.
Եթե խոտորվենք, կհանես դարձյալ հարթ ճանապարհի.
Եթե ամաչենք, կքաջալերես (Գևորգյան, 302):

գ) Ենթակայի զեղչումը՝ խոսքին արագություն հաղորդելու համար.

Եթէ պասքելոյս արբուցանիցես՝	Թե ետ ընկածիս կանչել՝
աղբիւր ես,	հոգատար,
Եթէ զծածկեալսն երեւեցուցես՝	Եթե հաստատել սասանյալիս՝
լոյս ես (ՀԶ, 556):	վեմ (Գևորգյան, 460):

Այսպիսով, հանճարեղ Նարեկացու «Մատենի» ողջ գեղեցկությունը հնարավոր չէ փոխանցել, թարգմանել, ներկայացնել ժամանակակից հա-

²³ **Գրիգոր Նարեկացի**, *Մատյան ողբերգության*. Տաղեր, թարգմ.՝ Վ. Գևորգյանի, էջ 642-644:

յերենով: Եվ Վազգեն Գևորգյանը, բանաստեղծության թարգմանությունը չհամարելով միայն բառի, մտքի, տաղաչափության կույր պատճենում, պահպանել է բնագրի ոգին, միջավայրը, ոճական և գեղարվեստական առանձնահատկությունները: Թարգմանության գրեթե բոլոր հատվածներում երևում է բանաստեղծ-թարգմանչի ստեղծագործական մոտեցումը. նա երբեմն բաց է թողել բնագրի առանձին բառեր, երբեմն ավելացրել, փոխել՝ միշտ հավատարիմ մնալով Նարեկացուն: Թարգմանիչը Նարեկացուն ներկայացրել է այնպես, ինչպես ինքն է զգացել, ներկայացրել է «իր Նարեկացուն»՝ այդ կերպ ընթերցողին հասցնելով նարեկացիական խոսքի ուժն ու գեղեցկությունը:

Կարծում ենք՝ իր այս առանձնահատկության շնորհիվ է, որ Վազգեն Գևորգյանի թարգմանությունը առանձնանում է «Մատենանի» աշխարհաբար մյուս թարգմանություններից:

"КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ" ГРИГОРА НАРЕКАЦИ В ПЕРЕВОДЕ ВАЗГЕНА ГЕВОРКЯНА

АПРЕСЯН А.Г.

Резюме

Вазген Геворкян мастерски передал особенности языка, синтаксиса, образного строя и ритмики произведения Григора Нарекаци. Переводчик пытался донести до читателя силу и красоту слога автора "Книги скорбных песнопений".

Будучи поэтом, Вазген Геворкян в своих переводах проявлял творческий подход, но при этом оставался верен духу гениального творения Нарекаци.

VAZGEN GEVORGYAN'S TRANSLATION OF GRIGOR NAREKATSI'S "THE BOOK OF LAMENTATIONS"

A. APRESYAN

Abstract

Vazgen Gevorgyan in his translation saved the features of language, syntax, image building and rhythm of the "Book of Lamentations". In this way the translator intends to show readers the strength and beauty of Narekatsi's speech. There is a creative approach of the poet and translator Gevorgyan almost in all parts of translation. Sometimes he omits certain original words or changes their places, but always remains faithful to the spirit and meaning of Narekatsi's the "Book of Lamentations".

ՀՈԴԱԿԱՊԸ ԲԱՌԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ա.Մ.

Հայտնի է, որ հայերենում, ինչպես մի շարք այլ լեզուներում, հոդակապը (connecting vowel, соединительный гласный) ունի ծայնավորական դրսևորում: Այս դերով հայերենում հանդես են գալիս **ա**, մասամբ նաև **ե** ծայնավորը¹, իսկ, օրինակ, ռուսերենում՝ **о** ծայնավորը (роман-о-германский, дом-о-строй):

Հոդակապ է կոչվում այն ծայնավոր հնչյունը, որը հիմնական ձևայիններն իրար կամ երկրորդական բառակազմական ձևայինների հետ է միավորում՝ կազմելով նոր բառ: Հայերենի հիմնական հոդակապը **ա**-ն է, քիչ բառերում հանդես է գալիս **ե**-ն: Օրինակ՝ դաս+ա+մատյան, գրչ+ա+տուփ, այց+ե+տոմս, ծաղկ+ե+փունջ, հաշվ+ե+կշիռ և այլն: Կան դեպքեր, երբ **ա** հոդակապը և բարդության նախորդ բաղադրիչի **ի** ծայնավորը միասին հնչյունափոխվում են **ե**-ի: Օրինակ՝ ոսկեզօծ (ոսկի+ա+զօծ), բարեհաճ (բարի+ա+հաճ), բարեկամ (բարի+ա+կամ) և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ հոդակապի հարցը բավարար պատասխան չի ստացել. հոդակապի արժեքը բառի կառուցվածքում այնքան էլ հստակ չէ: Այս հարցին առնչվող գրեթե բոլոր լեզվաբանները առավել կամ պակաս չափով անդրադառնում են սրան, սակայն տեսակետները խիստ տարբեր են: Հայ լեզվաբանության մեջ հոդակապը ավանդաբար համարվել է երկրորդական բառակազմական ձևային՝ հաշվի առնելով դրա լեզվական դերը, սակայն նորագույն լեզվաբանության մեջ այդ տեսակետն ընդունված չէ:

Այս հարցի շուրջ տարակարծություններ առկա են նաև ռուս լեզվաբանների տեսակետներում: Հոդակապը բարդ բառերի միավորիչ տարր դիտելով հանդերձ՝ ոմանք այն համարում են բառակազմական ձևային², իսկ ոմանք էլ գտնում են, որ այն իմաստազուրկ միավորիչ տարր է, քանի որ իրեն բնորոշ իմաստ չունի³:

¹ Փոխառյալ արմատներից **ո** հոդակապով բառեր կազմելը սխալ է և բնորոշ է ռուսերենին (սխալ են էլեկտրոկայան, ռոմանոգերմանական ձևերը, ճիշտ են՝ էլեկտրակայան, ռոմանագերմանական և այլն):

² Տե՛ս **Потиха З.** Современное русское словообразование, М., 1970, с. 47.

³ Տե՛ս **Немченко В.** Современный русский язык. Словообразование, М., 1984, с. 36.

Մ. Աբեղյանը հողակապը՝ որպես բարդություն կազմելու մի հող, որպես կապ է դիտում, որ միացնում է բարդության երկու մասերը և առաջ բերում մի նոր բառ, բայց ձևույթ չի համարում⁴:

Է. Աղայանը մանրակրկիտ քննում է ձևույթները և հողակապը անվանում է գործառական (ֆունկցիոնալ) ձևույթ⁵, իսկ իր մեկ այլ աշխատության մեջ՝ ներույթ⁶:

Գ. Զահուկյանը գրում է. «Բացի բուն ձևույթներից, հիմքի կառուցվածքում կարող են լինել այնպիսի գծային տարրեր, որոնք, զուրկ լինելով բուն իմաստից, արժեքավորվում են լեզվական գործածության մեջ և սովորաբար հանդես են գալիս որպես ձևույթի կազմիչներ. այդպիսիք են, օրինակ, լծորդ ձայնավորները, հողակապը, որոշ հիմքակազմ տարրեր. կոչենք սրանք **ձևատարրեր** կամ **ձևակազմիչներ**»⁷:

Ս. Աբրահամյանը ևս ձևույթները դասակարգելիս չի անդրադառնում հողակապին⁸, սակայն բառի ձևույթային վերլուծության ժամանակ առանձնացնում այն և հղում է տալիս. «Հողակապը նշում ենք ոչ թե որպես ձևույթ, այլ որպես բառակազմության բաղադրիչների միացման միջոց»⁹:

Ա. Սուքիասյանը գրում է. «Հողակապը նույնպես քերականական (ձևակազմական) ձևույթ է: Հանդես գալով բառի մեջ՝ կապակցում է նրա բաղադրիչները: Հայերենում բաղադրությունների մեջ հանդես է գալիս **ա** հողակապը: Օրինակ՝ լուսամուտ, տնատեր, հողատեր և այլն»¹⁰:

Խ. Բաղիկյանը ևս բառահարաբերական ձևույթ է համարում հողակապը, որը տարբեր բառերից նոր բառ է կազմում (ծառաբուն, գրագետ, մարդասեր)¹¹:

⁴ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 190-191:

⁵ Տե՛ս Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 215-218, 262:

⁶ Տե՛ս Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 78-79:

⁷ Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 27:

⁸ Տե՛ս Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 76:

⁹ Նույն տեղում, էջ 71:

¹⁰ Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982, էջ 282:

¹¹ Տե՛ս Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Ե., 2010, էջ 10:

Հ. Պետրոսյանը հոդակապը բնորոշում է որպես բառակազմական կաղապարներում հանդես եկող բաղադրիչ տարր (ծնույթ)։ «Հայերենում հնագույն շրջանից սկսած՝ հիմք (բուն) ձևավորող, բնակազմիչ ա տարրը վերաարժեքավորվել է իբրև բաղադրող միավոր՝ ներույթ և իրար է կապել բաղադրության բաղադրիչներ։ Լինելով իմաստից զուրկ միավոր՝ այն հաճախ գիտակցվում է սերող հիմքի հետ»¹²։

Մ. Ասատրյանը նշում է, որ հոդակապը իմաստազուրկ ձևույթ է, որ սուկ քերականական կապի դեր է կատարում¹³։

Լ. Եզեկյանը, մեջբերելով Մ. Աբեղյանի տեսակետը, համաձայնում է նրա հետ՝ գրելով, որ հոդակապը իրոք իմաստազուրկ միավոր է, որն օժտված է հիմնական ձևույթներն իրար կամ երկրորդական բառակազմական ձևույթների հետ միավորելու հատկությամբ¹⁴։

Լ. Խաչատրյանը հոդակապը համարում է ներույթ։ «Ժամանակակից լեզվաբանության մեջ ձևաբանական որոշ նվազագույն տարրեր խմբավորվում են ներույթ (инфикс) կամ միջամասնիկ (интерфикс) անվանումների տակ (հոդակապը, հոլովիչը, խոնարհիչը, հիմքակազմիչ ածանցները)¹⁵։

Ռ. Սաքապետոյանը նշում է, որ հայ լեզվաբանության մեջ հոդակապը ավանդաբար համարվել է երկրորդական բառակազմական ձևույթ, որը նորագույն լեզվաբանության մեջ ընդունված չէ, քանի որ ձևույթը իմաստակիր միավոր է, իսկ հոդակապը զուրկ է իմաստից¹⁶։

Ալ. Մարգարյանը գտնում է, որ հոդակապը, իմաստազուրկ լինելով հանդերձ, յուրահատուկ բառակազմական ձևույթ է¹⁷, որով և համալրվում և ամբողջականանում է բառերի ձևային կազմը¹⁸։ Իր ավելի վաղ

¹² Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 410։

¹³ Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու։ Ձևաբանություն, Ե., 2002, էջ 18-19։

¹⁴ Տե՛ս Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե., 2007, էջ 181-182։

¹⁵ Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 150։

¹⁶ Սաքապետոյան Ռ., Հոդակապը արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 1, էջ 47։

¹⁷ Ալ. Մարգարյանը իր աշխատության մեջ (Հայերենի բաղիյուսական բարդությունները, Ե., 1986) բառակազմական ձևույթ է համարում նաև ու շաղկապը, որը որոշ բարդություններում իր դերով նման է հոդակապի դերին (էջ 308)։

¹⁸ Տե՛ս Մարգարյան Ալ., Հայոց լեզվի քերականություն. Ձևաբանություն, Ե., 2004, էջ 22։

գրված աշխատության մեջ նա հողակապը համարում էր ձևայթամհավորիչ, բառակազմիչ միավոր¹⁹:

Հ. Զաքարյանի, Յու. Ավետիսյանի «Բառագիտություն» ուսումնական ձեռնարկում նշվում է. «Բառակազմությանը մասնակցում են նաև որևէ իմաստ չարտահայտող մասնիկներ: Դրանք ունենում են ընդամենը հիմքակազմիչ դեր: Դրանք են հողակապը, ծայնակապը և այլ հավելատարրեր, ընդ որում՝ դրանց առկայությունը չի փոխում բառի տեսակն ըստ կազմության: Հողակապը արմատների կամ ածանցի ու արմատի միջև հայտնվող **ա** ծայնավորն է»²⁰:

Մ. Միրումյանի հեղինակած ուսումնական ձեռնարկում հողակապը բնութագրվում է որպես իմաստազուրկ ձևայթամհավորիչ լեզվական միավոր, որն իրար է կապում երկու և ավելի ձևայթներ և կազմում է նոր բառեր²¹:

Հանրակրթական ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագրքում նշվում է, որ համադրական բարդությունների բաղադրիչները կարող են կապակցվել և՛ հողակապով, և՛ առանց դրա²², իսկ 11-րդ դասարանի դասագրքերում ձևայթները դասակարգելիս հողակապի մասին առհասարակ չի խոսվում²³:

Ինչպես տեսանք, լեզվաբանների տեսակետները խիստ տարբեր են, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ հողակապը որպես՝

- երկրորդական բառաքերականական ձևայթ,
- ներույթ կամ հիմքակազմիչ, ձևայթամհավորիչ, բառակազմիչ,
- երկրորդական բառակազմական ձևայթ:

Հողակապը երկրորդական բառաքերականական ձևայթ համարող լեզվաբանները նշում են, որ հանդես գալով բառի մեջ՝ այն կապակցում է նրա բաղադրիչները կամ էլ տարբեր բառերից նոր բառ է կազմում: Կարծում ենք՝ այստեղ հակասություն կա: Նշում են, որ այն մասնակցում է նոր բառերի կազմությանը, սակայն համարում են բառաքերականական:

¹⁹ Տե՛ս Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Ե., 1990, էջ 20:

²⁰ Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Բառագիտություն, Ե., 2007, էջ 61:

²¹ Տե՛ս Միրումյան Մ., Հայոց լեզու. տեսական և գործնական դասընթաց: Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, Ե., 2012, էջ 79:

²² Տե՛ս Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքալետոյան Ռ., Հայոց լեզու. Դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-րդ դասարանի համար, Ե., 2009, էջ 116:

²³ Տե՛ս Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքալետոյան Ռ., Հայոց լեզու. Դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար, Ե., 2010, էջ 44:

Հոդակապը չի կարող լինել երկրորդական բառաձևակազմական²⁴ (բառահարաբերական, բառաքերականական) ձևային կամ թեքային, քանի որ.

1. Կազմում է նոր բառ, ոչ թե բառաձև, միշտ հանդես է գալիս հիմնական ձևայինները կամ հիմնական ու երկրորդական բառակազմական ձևայինները միավորելու, կապակցելու դերով, այսինքն՝ բառակազմական գործառնությունով՝ համապատասխան օրինաչափություններով, ոչ թե բառաթեքական:

2. Ոչ մի կերպ չի կարող մասնակցել բառաձևերի կազմությանը: Հոդակապը, ավելանալով հիմնական ձևայիններին կամ բառահիմքերին, ցույց չի տալիս այդ բառ(եր)ի քերականական տարբեր հարաբերությունները մեկ այլ բառի հետ:

3. Բառահարաբերական ձևայինները որևէ փոփոխության չեն ենթարկվում, մինչդեռ թե՛ բառակազմական ձևայինները, թե՛ հոդակապը հնչյունափոխվում են և բառի կազմում կարող են հանդես գալ և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ ձևերով²⁵: Հմմտ. ուղեգորգ>ուղի-ա-գորգ, բարեսիրտ>բարի-ա-սիրտ, շոգեքար>շոգի-ա-քար, գունագեղ, լավատես և այլն:

4. Բառահարաբերական ձևայինները, ի տարբերություն բառակազմականների, միշտ հաջորդում են հիմնական ձևայիններին²⁶, այսինքն՝ լինում են վերջադաս²⁷: Ս. Աբրահամյանը նշում է. «Ըստ դիրքի քերականական ձևայինները հաջորդում են բառակազմական ձևայիններին, և դա բնական է, քանի որ բառակազմական ձևայինը բառի բաղկացուցիչ մաս է, իսկ քերականական ձևայինը՝ ոչ»²⁸: Հայտնի է, որ հոդակապը չի կարող հանդես գալ վերջադաս դիրքում, այն միշտ գտնվում է կապակցվող բաղադրիչների միջև:

Հոդակապը ներույթ համարող լեզվաբանները նշում են, որ այն իմաստից զուրկ միավոր է, հիմքակազմիչ, ինչպես հոլովիչը, խոնարհիչը, հիմքակազմիչ ածանցները, ծայնակապը:

²⁴ Այս եզրույթը մերն է:

²⁵ Տե՛ս Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), էջ 18:

²⁶ Նույն տեղում, էջ 17-18:

²⁷ Բացառություն են բայական կ, պիտի, չ, մի մասնիկները, որոնք նախադաս են:

²⁸ Տե՛ս Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 76:

Երբեմն միևնույն բաղադրիչներով կազմված բարդությունների՝ հոդակապով և անհոդակապ տարբերակներում իմաստային որևէ տարբերություն չի առաջանում, օրինակ՝ նենգամիտ, նենգմիտ, լրջմիտ, լրջամիտ, սալքար, սալաքար, տնվոր, տնավոր, գործվոր, գործավոր: Պատմական զարգացման ընթացքում, սակայն, հանդիպում են հոդակապով և անհոդակապ, խիստ տարբեր իմաստներ արտահայտող բառազույգեր, որոնք, ըստ էության, տարբեր բառեր են: Օրինակ՝ արջորս (արջ որսացող) և արջաորս (արջի որս), ձկնորս (ձուկ որսացող) և ձկնաորս (ձկան որս), հրծիգ (կրակ թափող) և հրածիգ (հրացանով լավ կրակող մարդ), ջրծաղիկ (հիվանդություն) և ջրածաղիկ (ծաղկի տեսակ), հացթուփ (հաց թխող մարդ) և հացաթուփ (հաց թխելու գործընթացը), քարհատ (քար հատող մարդ) և քարահատ (քար հատող մեքենա), բանվոր (բանող մարդ, մշակ) և բանավոր (բերանացի), հրահրել (գրգռել, բորբոքել) և հրիրել (այս ու այն կողմ հրել), ջրբաժան (գետերի ավազանները երկու մասի բաժանող սահմանագիծ) և ջրաբաժան (ջուր բաժանող մարդ), ամենընտիր (ամեն ինչ ընտրող) և ամենաընտիր (ամենից ընտիր), փոխնորդ (փոխնիփոխ հագնելու սպիտակեղեն) և փոխանորդ (տեղակալ, փոխարինող) և այլն²⁹:

Չնայած որ հոդակապը կարող է առաջացնել իմաստային տարբերակումներ, դա ոչ թե ապացուցում է հոդակապի իմաստակիր լինելը, այլ պայմանավորված է բառերի ձևի տարբերությամբ: Պարզ է, որ հոդակապն ինքնին որևէ կոնկրետ իմաստ չի արտահայտում, սակայն բերված օրինակներում իմաստատարբերակիչ դերով է հանդես գալիս³⁰: Կարծում ենք՝ հոդակապը ներույթ կարելի է համարել որոշ վերապահումով:

Հոդակապը երկրորդական բառակազմական ձևույթ համարող լեզվաբանների հետ մենք համամիտ ենք: Մեր կարծիքով, բառի ձևային լինելը կառուցվածքում հոդակապը՝ իբրև առանձին բաղադրիչ, իր կարևոր տեղն ու դերն ունի և, անշուշտ, ձևային նշանակությամբ է գործած-

²⁹ «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ Մ. Արեղյանը մանրամասն խոսում է ա ձայնավորի բառաբնի ձայնավոր լինելու մասին, նշում է, որ V դարում արդեն բառերի ուղղականը կորցնում է բնի ձայնավորը, և վերջինս վերածվում է բարդություն կազմելու մի հոդի, կապի: Նույն տեղում անդրադառնում է նաև հոդակապով և անհոդակապ բարդություններին՝ նշելով առանձնահատկությունները (էջ 190-194):

³⁰ Տե՛ս Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), էջ 21-22, Սաքապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 47:

վում՝ ամբողջացնելով բառերի ձևության լայն կազմը: Բաղադրյալ բառերը ձևային ոչ թե պատահական, տարերային միավորումներ են, այլ իմաստային ու տրամաբանական կուռ համակարգ են կազմում, որի մեջ յուրաքանչյուր ձևային իր որոշակի տեղն ու դերն ունի, առանց որի տվյալ բարդությունը չի կարող գոյություն ունենալ: Բառակազմական վերլուծության ժամանակ, որի նպատակն է պարզել, թե բառի մեջ ձևային ինչպես են կապակցվում իրար հետ, որ ձևային իրն է հաջորդում և այլն, առանձնացնում ենք բառակազմական միավորները: Այս պարագայում հոդակապը բառի բաղկացուցիչ մասերը, հոդերը միավորողն է, այսինքն՝ հոդակապ եզրույթն այստեղ տեղին է: Միևնույն բառի ձևային վերլուծության ժամանակ, որի նպատակն է պարզել բառի ձևային կառուցվածքը, մեր կարծիքով, հոդակապն իմաստագուրկ բառակազմական ձևային է, քանի որ ունի բառակազմական, բաղադրական արժեք, ինչպես բայական սուկաձանցները³¹, սակայն երբեմն կարող է հանդես գալ նաև իմաստատարբերակիչ դերով:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ հոդակապը իմաստագուրկ երկրորդական բառակազմական ձևային է³², որը սակավադեպ կարող է հանդես գալ նաև իմաստատարբերակիչ դերով:

³¹ Ս. Աբրահամյանը գրում է. «Բառակազմական երկրորդական ձևայինները ածանցներն են, որոնցով կազմվում են բառեր: ...Որոշ ածանցներ սուկ բաղադրական արժեք ունեն. տվյալ արմատով բառը գոյություն ունի միայն ածանցի առկայությամբ. ինչպես՝ մտնել, մոտենալ, փախչել» (Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 76):

³² Ժամանակին է. Աղայանը խուսափում էր այս ձևակերպումը տալուց: Նա նշում է, որ լեզվում կան իմաստագուրկ այնպիսի միավորներ, որոնք հսկայական դեր են կատարում և մեծ գործածություն ունեն բառակազմության և ձևակազմության համակարգում: Այդ միավորները ավանդական քերականության մեջ ունեն իրենց հատուկ անվանումները՝ **հոդակապ, հոլովիչ, խոնարհիչ, բուն** և այլն (Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 78): Այնուհետև շարունակում է՝ եթե դրանք համարենք ձևային՝ հաշվի առնելով դրանց գործառնությունը, ապա կխախտվի ձևային սահմանումի ճշգրտությունը (ձև և իմաստ): Լեզվաբանը նշում է, որ հենց ինքը իր մի այլ աշխատության մեջ հոդակապը կոչել է **ֆունկցիոնալ ձևային**: Չնայած դրան՝ հարմար է գտնում հոդակապը անվանել **ներույթ**՝ սահմանելով այսպես. «Ներույթներ են այն հնչույթները, որոնք հանդես են գալիս երկու ինքնուրույն իմաստակիր միավորների միջև՝ նրանց միացումների ժամանակ» (նույն տեղում, էջ 79): Նա նաև նշում է, որ տրված սահմանումն ունի առավելություն. ազատում է ձևային սահմանումը հակասությունից և իմաստագուրկ ձևային կանխադրելու անհրաժեշտությունից (նույն տեղում):

СОЕДИНИТЕЛЬНАЯ ГЛАСНАЯ В СТРУКТУРЕ СЛОВА

МХИТАРЯН А.М.

Резюме

В армянском языке в роли соединительной гласной выступает гласная **ա**, частично – гласная **ե**. Ряд лингвистов соединительную гласную рассматривают в качестве грамматической (формообразующей) морфемы, другие же считают ее словообразующей морфемой или инфиксом. На наш взгляд, соединительная гласная – это вторичная словообразующая морфема, которая в ряде случаев может играть смысловозначительную роль.

CONNECTING VOWEL IN THE STRUCTURE OF WORD

A. MKHITARYAN

Abstract

In Armenian language the vowel **a** appears as a connecting vowel. Partly also the vowel **e** can play the same role. Some linguists consider it a secondary grammatical (forming) morpheme or an infix. In our opinion, the connecting vowel is secondary word forming morpheme devoid of meaning, and sometimes can exhibit meaningful role.

SEMANTIC AND PRAGMATIC COMPETENCES IN ENGLISH LINGUISTICS

R. KHOSTIKYAN

Among the principal linguistic terms and concepts we can set apart semantics and pragmatics which are of special interest because they refer to the study of meaning communicated through language.

Problems of meaning are among the most significant ones that people experience with each other in communication. These problems arise because of two things:

1. many words have a range of possible meanings;
2. contextual situations influence on how to give interpretations to word strings. We are well aware of how much factors of intonation, stress, and context can affect or change the interpretation of an utterance. The same word in different contexts acquires different meanings.

a) He didn't mean to hurt you.

b) Her life lost all meaning.

c) The red flag means it's dangerous to swim.

In each of them a different sense is conveyed. In a) **mean** has the sense of intend, in b) of **value**, and in c) of **is a signal that**. Such a slippery term as part of a linguistic vocabulary is understandably filled with difficulties. For instance, in order to understand c), we must know something about signs and how they work, or that objects can represent things and even concepts, such as **danger**.

The study of signs is called semiotics. Although some linguists give special attention to it, because they see meaning as an abundance of human capacity to make one thing stand for another, like words for concepts in addition to sign-making ability, however, people also need encyclopedic knowledge, that is, the knowledge about the world to interpret string of words. Suppose we come across the sentence:

"The house is made up of grass".

We realize we are in some imaginary world because in the real world the house cannot be made of grass. If we look up the word **house** in a dictionary,

it won't tell us what the object is made of. It is something we acquire as part of our general knowledge.

Therefore, the point that arises from the work of many linguists is that language underspecifies meaning. According to Nelson Francis, the famous American linguist,¹ "words do not have meaning, people have meanings for words".

That is a radical approach but it helps to explain the common sense that words are not fully adequate to express what we mean. For the students of semantics and pragmatics the first task is to limit the area of what is linguistic opposed to which is a "cognitive" sphere. This is not an easy question to answer and many books are an indication of these difficulties.

The simplest approach to linguistic meaning is that all we need to interpret linguistic expressions is to know the definitions of the meanings of the words. Therefore, we can assume that by combining words together into phrases and sentences the definitions can also be combined and in this way we are able to arrive at the overall meaning of the utterance. Several problems may generally arise with this **definitions theory**.

One, and most obvious, is that we need a certain amount of **encyclopedic knowledge**, as well as linguistic knowledge. For instance, to understand the sentence "Microsoft was one of the first software firms to write programs for foreign markets" you should first know the meanings of "Microsoft, software, programs, foreign markets", that is, you need to have general knowledge of the world.

The next problem deals with the **circularity** of definitions. That means that any definition of a word is expressed in words that are dependent on other words for their definitions, and so on, ad infinitum (endlessly). The question is, as Saeed says,² "can we ever step outside language in order to describe it, or are we forever involved in circular definitions?" Suppose we want to understand the term "marketing mix". As was already stated, definition of the term **marketing mix** depends on the definition of its components, that is, product, price, place and promotion. Next, we also need to understand the term "to market", because "marketing mix" is defined as a combination of

¹ Kučera H., Francis N. *Computational Analysis of Present-Day American English*, Brown University Press, 1967, p. 119.

² Saeed J. *Semantics*, 2nd edition, Oxford, 2003, p. 6.

different elements, called Four P's used to market a product or a service. Thus, we can say that definition depends on its component words to be interpreted for other definitions.

The third difficulty is that no attention is given to the significance of situational context in determination of meaning. If someone says "Is Zara a Brand?," and if said to a friend watching Zara products, it could be a request to switch to other brands, an expression of mistrust to this brand or even a dislike. The words themselves are not sufficient to determine meaning. We need access to **extra-linguistic information** about the participants and the precise context of an utterance to arrive at a correct interpretation. In some instances, it is a body language, the gestures, facial expressions, i.e. the **para-linguistic features**, which provide the clue to what is meant.

Because of the dependence of linguistic meaning on other types of meaning, linguists see two broad approaches to this area. The first is concerned with **sentence meaning** and is in the sphere of semantics, while the second is concerned with **utterance meaning** and belongs to the field of pragmatics. The difference is illustrated by two usages of the word "mean". The thing is that if we don't understand what someone has said, we logically say either:

What does it mean? or

What do you mean?

In the first instance, our request is for information that is independent of the speakers, whereas in the second it is for information directly dependent on the speaker's intention. These are potentially two types of meaning. The first emphasizes the objective statement of the meaning, the second is more subjective in its interpretation. Let's see another example:

What is the meaning of the word brand? and

How do you understand the word brand?

The first sentence reflects the real statement of the word **brand**, the second has quite a subjective implication. The addressee is asked to give his own understanding of "brand".

To understand the difference it is important to grasp the relationship between sentences and utterances. An utterance is a concrete use of a linguistic expression in a context. The context includes information about the speaker of the utterance, the addressee, the location, the time, i.e., it conveys its content or literal meaning. The utterance also conveys additional contextual meanings.

Sentences, on the other hand, are abstract grammatical elements underlying utterances and can be specified as an arrangement of words in a syntactic order. The teacher asks the class: “Is Andy absent?”. It’s a neutral objective statement of the fact, while if “Andy” is under stress and we see the change of the mimics on the teacher’s face, then an additional and subjective meaning is conveyed, such as **again** Andy is absent, **again** he broke his promise and many other situational implications.

Imagine two people saying “Washington is the capital of America”, where we have two utterances but only one sentence. Two utterances introduce a string of words or a combination of words expressing certain meaning. As a sentence, it is a combination of grammatical elements, such as subject, predicate, etc. In this case we can say that part of the meaning of this word string relates to its sentence value (words in a certain order), e.g. Is your boy at college? and part to its utterance value (intonation, situational context etc.) e. g. Is he at Swiss college? (surprise, or a sense of incredibility). In practice, it is not easy to illustrate the difference between the two levels of meaning, and there is an ongoing debate between semanticists and pragmatists as to where to draw the line of separation.

Nonetheless, it is a useful distinction to work with and one that is productive in linguistic criticism.

Semantics is concerned with meaning as a product in the linguistic system, and as such, is part of our grammatical competence... It focuses on meaning out of context, or **decontextualized meaning** and is opposed to pragmatics which focuses on **contextualised meaning**.

Let’s consider an example by Jeoffrey Finch³. In the declaration “I love you” we can give it a certain meaning based simply on what we know of the grammar of the language. We know that **I** specifies the speaker, **you** the person being addressed, and that **love** is a verb indicating a range of feeling, stronger than like, but weaker than adore. But for a full interpretation we should consider who is talking to whom, and the situation in which the utterance takes place. These all will affect on how the sentence is understood.

Looking at the semantic side of language it operates at two levels or ranks: word level and sentence level. At the word level semanticists study relationships between words in the language. This constitutes their sense, the

³ Finch G. *How to study Linguistics*, Basingstoke: Palgrave Macmillan, 1997.

meaning that a word has by virtue of its place in the linguistic system. A number of items deal with aspects of “sense” such as synonymy, antonymy, polysemy, homonymy. A key idea here is taken from the linguist Saussure⁴, that words are signs. Their relationship to the world is symbolic, rather than being labels for things they are labels for concepts. The essence of this is that any word or sign derives its meaning not from the world, but it exists within a network, or semantic field, of related signs.

The study of “sense” was the interest within semantics of *componential theory*. Componential analysts break down or “decompose” the sense of the word into its atomic components. For instance, “man” consists of the components: human+adult+male, “woman” consists of human+adult+female. Using atomic components, semanticists construct grids that relate words in terms of presence or absence of a particular component. Componential analysis is a principal element of semantic approaches, but it has been subject to much criticism. The thing is that it works better for some items than for others. Auxiliary words, such as “and, to, that, so, for” are not suitable for such analysis.

Moreover, components such as “human, adult, male” can themselves be broken down into smaller components, and so endlessly, to the point at which it becomes difficult to distinguish them in any meaningful way. At the sentence level semantics is concerned with the true value of linguistic expressions, with how we establish the real correspondence of statements or commands and their internal consistency as linguistic expressions. For instance, *Scientists think there can be life on the moon, because water was found there*.

Semanticists frequently distinguish between analytic and synthetic truth. A synthetic true statement is the one that reflects an accurate reality. If we read “dogs mew”, the sentence is synthetically false because it does not correspond to the reality. On the other hand, an analytically true statement is true when it follows from the meaning relations of the words in a sentence, never mind what is the situation in the world. saying, “dogs are animals” is analytically true because the sense of dogs does not exclude that of animals, but cats are dogs is false because the sense of cats excludes that of dogs.

⁴ **Saussure, F. de.** *Course in General Linguistics*, ed. C. Bally and A. Sechehay, New York-Toronto-London, 1992.

Both analytic and synthetic kinds of truth are important because at some point they will connect each other, since an interpretation of the sense of “dog” will eventually include the information “does not mew”. It is on the basis of both types of knowledge that we are able to construct meaningful sentences of English. At the sentence level, semantic theory reflects the speaker’s knowledge, presented in the following examples:

1. That *a* and *b* are synonymous
 - a) My sister is a spinster.
 - b) My sister is not married.
2. That *a* below entails *b*
 - a) The firing killed the soldier.
 - b) The soldier is dead.
3. That *a* contradicts *b*
 - a) I live in Manchester.
 - b) I have never been to Manchester.
4. That *a* presupposes *b*
 - a) The Prime Minister visited Dublin.
 - b) There is a Prime Minister.
5. That *a* and *b* are tautologies
 - a) Money is money.
 - b) When you are sick you are sick.

To represent the truth value of these sentences linguists turn to the tools of logic and logical semantics using largely *propositional logic*. A proposition is more abstract than a sentence. It is a logical expression, not a linguistic one; it describes a proposed state of affairs in the world that may be true or false. If we go to a sample sentence *Washington is the capital of America*, we can see that it is possible to produce several different sentences, yet preserve the underlying proposition. *The capital of America is Washington, it is Washington that is the capital of America, the teacher said that Washington is the capital of America.*

Semanticists use the symbols of *formal logic* to analyze sentences. They are particularly interested in the logical connectives of the language, words such as *and, if, or, so, then, not*. They are the logical hinges that link propositions together. In a statement *John is happy and Mary is sad* we see that two propositions are linked by the logical connective *and*.

Logical semanticists are thought of as correspondence theorists because they are interested in the way how language corresponds to a correct description of the world as it is. e. g. *Butter is made of milk*.

There is a fundamentally different approach termed **cognitive semantics**, that sees no separation between linguistic knowledge and general thinking or cognition. Cognitive linguists tend to adopt a functional view of a language opposed to more formal accounts favoured by Chomsky⁵ and similar linguists. Semanticists of this school pay special attention to *metaphor*, *figurative use of language*⁶, in other words, metaphor is characterized as a process in which one semantic field of reference is transferred to another. So, in the sentence, *The shipploughed the water*, the language of farming is transferred to the activity of sailing, or *his hands are itching to break the relationships*, itching arises from the awareness of how our body parts are functioning. The same is true with an example *His spirits rose up*, where up is connected with things that are pleasant and good. Many scholars of this school agree that metaphor is an essential element in the categorization of the world and our thinking processes.

Pragmatics is a relatively new area of linguistics, and as such it suffers from the lack of coherent level of theory. Instead, there is a large cluster of approaches with contextual constraints on meaning. It owes much to the shortcomings of formal logic. As was already mentioned logical semantics gives much importance to logical connectives. But pragmatics argue that those connectives often work so that formal logic is unable to cope with. For example, statements *John is happy* and *John is not happy* are mutually exclusive. However, in natural language, if we deny, that John is happy does not necessarily mean that he is unhappy. We recognize possible states that exist between these two.

Similarly, in formal logic the quantifier *some* does not exclude the possibility of *all*.

Some students passed the exam does not conflict with *All students pass the exam*. Nevertheless, if you asked a friend how many students passed the exam and the answer was *some*, you would logically conclude that not everyone passed. These examples propose the idea that language has its own natural

⁵ Chomsky N. *Aspects of the Theory of Syntax* (Cambridge), 1965.

⁶ Finch J. *Key Concepts in Language and Linguistics*, New York, 2005, p. 142.

logic, in addition to formal kind proposed by semanticists. Natural logic allows certain things to be implied under obvious statements. These are named implicatures. The study of implicatures makes the cornerstone of most pragmatic approaches.

Equally important in the development of pragmatics is the rise of *speech act theory*. Traditionally, people distinguished between “doing” and “saying”, that is between taking action and simply talking about it. But this separation is false in many ways. If we look from another angle, it is possible to see all utterances as kinds of action. The kinds of acts vary from direct ones to most slippery indirect speech acts. These acts are performed under cover of another act, e.g. giving a command by asking a question, *Can you come here, please?* In these cases we rely on para-linguistic features such as intonation and stress, as well as extra-linguistic information from the context, to provide a full interpretation.

Pragmatics is a relatively recent area with a great diversity of approaches but one opinion is common for all; Pragmatics is communicative in nature rather than grammatical. Its focus is on what is not obviously stated and on how we interpret utterances in situational contexts.

To summarize the work, we can say that natural language is used to communicate information through linguistic expressions. These expressions have not only grammatical forms but content. Syntax and morphology deal with forms of linguistic expressions. From an illustration of the sentence from Chomsky⁷ *Colorless green ideas sleep furiously* we see that it is grammatically correct but meaningless.

Semantics is the study of content, the meaning expressed by elements of the language and its combinations.

Pragmatics is the study of the meaning in a context, which can convey additional meanings and other extra-linguistic factors. The distinction between semantics and pragmatics is often viewed as literal versus non-literal meaning, or as a distinction between linguistic competence and performance of the utterance.

⁷ Chomsky N. *Knowledge of Language: its Nature, Origin and Use*, New York, 1985.

ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԼԵՃՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԽՈՍՏԻԿՅԱՆ Ռ.Վ.

Ամփոփում

Լեզվաբանության երկու կարևոր ուղղությունները՝ իմաստաբանությունը և գործաբանությունը, առնչվում են նախադասության կամ ասույթի նշանակությանը և դրանց մեկնաբանությանը: Նշանակության խնդիրը կարևորագույններից մեկն է, և այն մեկնաբանելու համար ոչ միայն լեզվաբանական, այլև արտալեզվաբանական և վերլեզվաբանական գիտելիքի անհրաժեշտություն է պահանջվում: Կարելի է եզրակացնել, որ իմաստաբանությունը նշանակությունն ուսումնասիրում է լեզվաբանական մակարդակով, մինչդեռ գործաբանությունը այն քննում է իրավիճակային համատեքստից ելնելով, հաշվի առնելով արտալեզվաբանական և վերլեզվաբանական առանձնահատկությունները:

СЕМАНТИЧЕСКИЕ И ПРАГМАТИЧЕСКИЕ ВОЗМОЖНОСТИ В ЛИНГВИСТИКЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

ХОСТИКЯН Р.В.

Резюме

Семантика и прагматика—два основополагающих направления лингвистики, относящихся к значению предложения или высказывания и к его интерпретации. Проблемы, связанные с интерпретацией значения, являются одними из самых сложных и требующих как лингвистических знаний, так и знание экстралингвистических и паралингвистических реалий. Можно заключить, что семантика изучает значение посредством лингвистических форм и элементов (синтаксис, морфология), а прагматика изучает значение в контексте ситуации, с учетом экстра—и паралингвистических особенностей.

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԻՍՊԱՆԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Հ.Գ., ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Զ.Ռ.

Հրաշապատում հեքիաթների պատկերավոր արտահայտչամիջոցների շարքում իր ուրույն տեղն է գրավում պատկերավոր համեմատությունը, որը բանահյուսական ստեղծագործություններում հանդիպող ամենատարածված հնարներից է: Լինելով լեզվի պատկերավորման միջոցների նախնական և պարզագույն ձևը՝ համեմատությունը միաժամանակ նրանց բոլորի հիմքն է և լայնորեն կիրառվում է գեղարվեստական խոսքում¹: Հայտնվելով բանահյուսական ստեղծագործության կազմում և ամբողջովին ենթարկվելով նրա բովանդակության պահանջներին՝ համեմատությունը ձեռք է բերում գեղագիտական մեծ կարևորություն, հարստանում է լրացուցիչ հարանշանականություններով և իմաստային նրբերանգներով՝ առաջ բերելով բազմաթիվ զուգորդումներ:

Համեմատությունը, որպես ոճական հնար, հատուկ է բոլոր բանահյուսական ժանրերին, սակայն նրա տեսակարար կշիռը, կազմը և գործառույթները դրանցից յուրաքանչյուրում միատեսակ չէ, այսինքն՝ ոճական առումով համեմատությունները միանշանակ չեն:

Պատկերավոր համեմատությունը հեքիաթի գերիշխող ոճական հնարներից է: Եթե փոխաբերությունը հեքիաթներում հաճախ հանդիպող երևույթ չէ, ապա համեմատությունները, ընդհակառակը, շատ գործածական են: Հեքիաթի տեքստում համեմատության գերակշռումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. նախ և առաջ՝ հեքիաթի անանունությամբ և կոլեկտիվ հեղինակությամբ: Հեքիաթի լեզուն աչքի է ընկնում պարզությամբ, իսկ համեմատությունն իր պարզագույն կառուցվածքով հեշտորեն հարմարվում է հեքիաթային միջավայրին՝ առավել դյուրին դարձնելով վերջինիս ընկալումը: Մեկ այլ կարևոր պատճառ էլ

¹ Զահուկյան Գ.Բ., Խլղաթյան Ֆ.Հ., *Հայոց լեզվի ոճաբանություն*, Ե., 2007, էջ 213:

հեքիաթի բանավոր պատում լինելն է: Այն փոխանցվում է բանավոր և վստահված է հեքիաթասացի հիշողությանը, այդ իսկ պատճառով էլ, ի տարբերություն փոխաբերությունների, համեմատություններն իրենց պարզ կառուցվածքի շնորհիվ առավել դյուրին են մտապահվում: Այս խնդրին հանգամանալից անդրադարձել է Ա. Ջիվանյանը, որի կարծիքով, հեքիաթում, որպես վաղնջագույն տեքստ, հստակ տարբերակված չեն համեմատություններն ու փոխաբերությունները, չնայած մինչ օրս, ինչպես հայտնի է, շատ տեսաբաններ առաջարկում են այդ հնարները սահմանազատելու տարբեր չափանիշներ: Սակայն չնույնացնելու դեպքում էլ համեմատության գերակշռումը բացատրվում է հեքիաթի ժանրային առանձնահատկություններով: Ա. Ջիվանյանը նաև նշում է, որ փոխաբերությունները տարածված չեն հեքիաթներում, քանի որ պարունակում են մի շարք երևակայական և անհնարին տարրեր, մինչդեռ համեմատություններն առավել վառ նկարագրում են այն, ինչն արդեն հայտնի է²:

Մեր հոդվածի նպատակն է քննել համընդհանուրի և առանձինի դրսևորումները իսպանական հրաշապատում հեքիաթներում հանդիպող համեմատություններում՝ հեքիաթի տեքստը ներկայացնելով որպես համընդհանուրի և առանձինի՝ այն է՝ ազգայինի հակադրամիասնություն:

Յուրաքանչյուր հեքիաթային ստեղծագործություն յուրօրինակ է և անկրկնելի, և համեմատությունների պատկերավոր բնույթի բացահայտման նպատակով հարկ է հաշվի առնել տվյալ ժողովրդի պատկերավոր մտածողության առանձնահատկությունները: Այս իմաստով համեմատությունը, ինչպես և մյուս արտահայտչամիջոցները, հաճախ հեքիաթասացի վերաբերմունքի, անմիջական տպավորության արդյունք են՝ կապված տվյալ իրավիճակի, հանգամանքների, ինչպես նաև նրա հոգեվիճակի և տրամադրության հետ: Այսպես, իսպանական հրաշապատում հեքիաթներում զանազան գծերով օժտված կերպարների նկատմամբ հեղինակի վերաբերմունքն արտահայտվում է համապատասխան մի շարք համեմատությունների միջոցով: Տվյալ հեքիաթներում հանդես եկող համեմատությունների քննությունը ցույց է տալիս, որ ամենամեծ խումբը հեքիաթային հերոսի գեղեցկությունը նկարագրող համեմատություններն են, որոնք քանակապես գերազանցում են մյուսներին:

² **Ջիվանյան Ա.**, «Երկնքից ընկավ երեք խնձոր». հրաշապատում հեքիաթը որպես արքիպրոքսոպ, Ե., 2008, էջ 72-75:

Հեքիաթներում համեմատությունը հաճախ դրսևորվում է առաջին իսկ տողերում, երբ տրվում է հերոսների նկարագրությունը: Նման համեմատություններն աչքի են ընկնում իմաստային երանգների նրբությամբ, բազմազան զուգորդումներով, հսկայական արտահայտիչ ներուժով, որն էլ, ի սկզբանե, նպաստում է անկրկնելի հեքիաթային պատկերների ստեղծմանը: Օրինակ՝

Esta era una madre que tenía dos hijas que eran **tan altas como chopos** (María como un ajo, p. 452)³.

Había vez y vez una hormiguita tan primorosa, **tan concertada, tan hacendosa, que era un encanto** (La hormiguita, p. 1)⁴.

Որպես հեքիաթային հերոսի գեղեցկության համեմատության եզր՝ իսպանական հրաշապատում հեքիաթներից շատերում կիրառվում են **աստղ** և **արև** բառերը: Հերոսը գեղեցիկ է ու պայծառ, ինչպես համեմատության առարկան՝ աստղը կամ արևը: Համեմատության հիմքում ակնհայտ է **լույս** իմաստի առկայությունը, որի պաշտամունքը մարդկության ամենավաղնջական հավատալիքներից է, որը դրսևորվում է տարբեր ժողովուրդների առասպելաբանության ու դիցաբանության մեջ: Ուստի, որպես կանոն, **լույս** բառի հետ կատարվող համեմատությունները շատ գործածական են ամենատարբեր մշակույթներում, և հատկապես հեքիաթի ժանրում դրանք համընդհանուր են: Քննենք մի քանի օրինակ իսպանական հեքիաթներից.

Y estando el rey en la guerra dio a luz su mujer dos niños preciosos que **parecían dos estrellas** (La niña sin brazos, p. 352).

Y se puso en la carta que gorviera porque su mujé había dao niño mu guapito, mu guapito, que **parecían dos estrellas** (La cueva del dragón, p. 401).

La niña tuvo dos niñitos **más hermosos que el sol** (El cisquero y el demonio, p. 354).

Համանման համեմատությունների օրինակներ առկա են նաև այլ ժողովուրդների հեքիաթներում:

Եթե իսպանական հրաշապատում հեքիաթներից բերված հատվածները քննենք հայկական ժողովրդական հեքիաթների հետ զուգադրու-

³ **Espinosa A.M.** *Cuentos populares recogidos de la tradición oral de España*. Madrid, 2009. Այսուհետև իսպաներեն բոլոր օրինակների հղումները կտրվեն բնագրում՝ նշելով հեքիաթը և էջը:

⁴ http://www.bibliotecaspublicas.es/donbenito/imagenes/Fernan_Caballero__Cuentos_de_encantamiento.

թյամբ, ապա դժվար չէ նկատել առկա որոշ լեզվամշակութային տարրերի ընդհանրությունը հայկական հեքիաթների հետ: Այսպես, հայկական հրաշապատում հեքիաթներում ևս գեղեցկությունը հաճախ համեմատվում է լույսի հետ: Այս առումով «Գառնիկ Աղպեր» հեքիաթում **ակն ու արեգակ** բառերի հիմքում հանդես է գալիս լույսի իմաստ պարունակող համեմատություն. «Գառը որ աղաք են անում տանեն՝ էն սիաթը աղջիկը ծառիցը իրան վեր ա գցում: Տեսնում են **ի՞նչ մի նաշխուն ակն ու արեգակ, հուրի մալաք աղջիկ**. Էնքա՛մ սիրուն, Էնքա՛մ սիրուն, որ չուտես չխմես, հենց նրա գյուլ ջամալին թամաշ անես» (Գառնիկ Աղպեր)⁵:

Հաջորդ օրինակը վերցված է «Ամենագեղեցիկ հարսնացուն» պորտուգալական ժողովրդական հեքիաթից. «...պալատի պատերը հարուստ գորգերով պատվեցին, աթոռների բեկորները վերածվեցին ոսկեգոծ գահի, բայց ամենազարմանալին այն էր, որ **կապիկ կինը դարձավ այնքան գեղեցիկ, որ անգամ արևը կարող էր նախանձել նրան**» (Хранители сказок, Самая красивая невеста, <http://hobbitaniya.ru/portuguese/portuguese24.php>):

Գրիմմ եղբայրների «Գորտ թագավորը կամ Հայնրիխ Երկաթը» հեքիաթում աղջկա գեղեցկությունը մրցակցում է արևի հետ. «Նրա աղջիկները բոլորը գեղեցկուհիներ են լինում, բայց ամենափոքրը բոլորից սիրուն է լինում, Էնքան սիրուն, որ **նույնիսկ աշխարհում շատ բան տեսած արևը նրա երեսին նայելիս զարմանքից քար է կտրում**» (Գորտ թագավորը կամ Հայնրիխ Երկաթը)⁶:

Արևելյան հեքիաթներում նույնպես հանդիպում են նման օրինակներ, մասնավորապես, «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուի մեջ զետեղված «Սևափայտե ձիու հեքիաթը» սկսվում է թագավորի երեխաների հետևյալ նկարագրությամբ. «Պատմում են, որ հին ժամանակներում մի մեծ, բարձրագահ թագավոր կար, և **նա երեք աղջիկ ուներ, լիալուսնի ու ծաղկուն պարտեզի նման, ու մի տղա՝ իսկը լուսին**» (Սևափայտե ձիու հեքիաթը)⁷:

Իսպանական հեքիաթներում երբեմն հերոսի գեղեցկությունը համեմատվում է վարդի հետ՝ որպես գեղեցկության վառ խորհրդանիշ: Օրինակ՝

⁵ Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական հեքիաթներ, Ե., 1950, էջ 112:

⁶ Գրիմմ եղբայրներ, Հեքիաթներ, թարգմ.՝ Հ. Թումանյանի, Ե., 1998, էջ 3:

⁷ Հազար ու մեկ գիշեր, Ընտիր հեքիաթներ, ռուսերենից թարգմ.՝ Էդ. Աղայանի, Վ. Տալանի, Ե., 1990, էջ 329:

Y la madre escribió a su hijo que su mujer había dao a luz **dos niños como dos rosas** (La niña sin brazos, p. 350).

Նման համեմատություններ հանդիպում են նաև այլ մշակույթների հեքիաթներում: Այսպես, Գրիմն եղբայրների «Լուսերեսն ու Վարդերեսը» հեքիաթը սկսվում է հետևյալ նկարագրությամբ. «Տնակի առջև մի պարտեզ է ունենում, պարտեզի մեջ՝ երկու վարդի թուփ, մինը՝ սպիտակ վարդի, մյուսը՝ կարմիր: **Էն վարդի թփերի նման էլ երկու փոքրիկ աղջիկ է ունենում.** մեկի անունը՝ Լուսերես, մյուսինը՝ Վարդերես» (Լուսերեսն ու Վարդերեսը)⁸:

Նշյալ հեքիաթներում գեղեցկություն նկարագրող համեմատությունները բաղաձայնության շնորհիվ ձեռք են բերում որոշակի դիմիկ հնչեղություն, որի պատճառով նախընտրելի են դառնում հեքիաթասացների համար (niños **preciosos** que **parecían más hermosos** que el sol): Նման համեմատությունների արտահայտչականությունն առավել ընդգծվում է նվազական-փաղաքշական վերջածանցների միջոցով, որը իսպանական հեքիաթների կարևոր առանձնահատկություններից է: Օրինակ՝

Y Juana se puso entonces el traje encarnao y estaba **más guapito que nunca** (Los tres trajes, p. 365).

Y ese mismo día tuvo un hijo der tamaño de una abuja, **tan pequeñito que casi no se podía vé** (Periquillo, p. 452).

Իսպանական հեքիաթներում հատկապես տարածված են -ito (pequeñito-փոքրիկ, guapito-գեղեցիկ) նվազական-փաղաքշական վերջածանցով հանդես եկող ածականները, որոնք հիմնականում կրում են հուզական նրբերանգ:

Իսպանական հեքիաթներին բնորոշ է նաև գեղեցկությունը համեմատել արքայադստեր հետ, որը սովորաբար հեքիաթներում շատ գեղեցիկ է: Առհասարակ տարբեր ազգերի հրաշապատում հեքիաթներում արքայադուստրը հանդես է գալիս իբրև գեղեցկության, բարության, խելքի, ուժի, բարոյական բարձր սկզբունքների մարմնացում՝ դրանով իսկ բացահայտելով ժողովրդի պատկերացումները իդեալական կնոջ վերաբերյալ: Օրինակ՝

Estaba tan hermosa que **parecía una princesa** (La zamarra, p. 362).

⁸ Գրիմն եղբայրներ, նշվ. աշխ., էջ 23:

Y se vistió con su traje de estrellas y brillantes y estaba **tan hermosa que no había en el mundo princesa más hermosa que ella** (La zamarra, p. 363).

Գեղեցկություն նկարագրող համեմատությունները հաճախ լինում են ծավալուն՝ աչքի ընկնելով ընդարձակ վառ նկարագրությամբ, որոնց միջոցով հիմնականում ներկայացվում է հերոսների արտաքին նկարագիրը: Օրինակ՝

Apenas hubo dicho estas palabras, cuando vieron que bajaba por la chimenea **una mujer hermosísima, era tan pequeña, que su altura no llegaba a media vara, traía como una Reina**, una corona de oro en la cabeza (Los deseos, p. 2).

Y así fue que Dios les concedió un hijo y nació **tan pequeño como un cañamón; le llamaron Periquillo, y, como no creció ni una cuarta más, con Periquillo se quedó** (Periquillo, p. 1).

En medio de la planta estaba sentada una niña **tan hermosa como diminuta. Por su tamaño, igual que el de una almendra, su madre la llamó Almendrita**. Ningún nombre habría podido describirla mejor. **Tan pequeña que su padre la paseaba asomada al bolsillo de la chaqueta, una cáscara de nuez le servía de cuna y se bañaba en un dedal** (Almendrita, p. 1).

Վերը բերված օրինակներում համեմատությունը զուգակցվում է ինքնատիպ նվազաստյով՝ ստեղծելով հեքիաթային անզուգական պատկեր («այնքան փոքր էր, որ նրա հասակը կես վարայի (երկարության չափ) չէր հասնում», «քանի որ կանեփի պես փոքր էր, նրան կոչեցին Պերիքիլյո», «քանի որ երեխան նուշի չափ էր, մայրը նրան կոչեց Նուշիկ, այնքան փոքրամարմին էր, որ հայրը նրան զբոսանքի տանելիս իր բաճկոնի գրպանն էր դնում, ընկույզի կեղևը որպես օրորոց էր ծառայում և լոգանք էր ընդունում մատնոցի մեջ»): Նման օրինակները շատ են իսպանական հեքիաթներում: Նման համեմատության օրինակ հանդիպում է նաև Հանս Քրիստիան Անդերսենի «Մատնաչափիկը» հեքիաթում. «Նրա մեջտեղը՝ փոքրիկ կանաչ վարսանդի վրա, **նստած էր մի շա՛տ պստիկ աղջիկ, այնքան, որ հագիվ մի մատնաչափ հասակ ուներ: Դրա համար էլ նրա անունը դրին Մատնաչափիկ**» (Մատնաչափիկը)⁹:

Ուշագրավ է, որ իսպանական հրաշապատում հեքիաթներում գունանվանական համեմատությունները սակավաթիվ են: Մինչդեռ այլ մշակույթների հեքիաթներում դրանք զգալի թիվ են կազմում և սովորաբար

⁹ Անդերսեն Հ.Ք., Մատնաչափիկը, ռուսերեն թարգմ.՝ Հ. Հարությունյանի, Ե., 1971, էջ 2:

գույց են տալիս գեղեցկության բարձր աստիճան: Նշենք, որ գունանվանական համեմատությունները հեքիաթներում հիմնականում կազմվում են երեք գույների միջոցով՝ սպիտակ, ինչպես..., կարմիր, ինչպես.... և սև, ինչպես....: Օրինակ՝

Pero al llegar se ve en el espejo y ve que está **tan negra como siempre** (La negra y la paloma, p. 382).

Sus ojos se pusieron **rojos y brillantes como dos rubies** (Los caballeros del pez, p. 6) Una mujer vio entrar en su corral una hermosa gallina negra, la que a poco puso un huevo que parecía de pava, y **más blanco que la cal** (La gallina duende, p. 1).

Գունանվանական համեմատությունները տարածված են նաև այլ ժողովուրդների հեքիաթներում: Օրինակ՝ ռուսական ժողովրդական «Ձյունանուշիկը» հեքիաթում աղջկա սպիտակությունը համեմատվում է ձյան հետ.

«И такая она добрая, послушная и ко всем приветливая. А собою **она-беленькая, как снег**; глазки что незабудочки, светло-русая коса до пояса, одного румянцу нет вовсе, словно живой кровинки не было в теле...» (Хранители сказок, Снегурочка, <http://hobbitaniya.ru/rusnarod/rusnarod134.php>).

Հեքիաթներում գերիշխող երեք գույներով կազմված գունանվանական համեմատություններով հատկապես աչքի է ընկնում Գրիմ եղբայրների «Ձյունանուշը» հեքիաթը. «Նա աչքը գցում է ձյանը, նայում, մեկ էլ հանկարծ ասեղը մատը ծակում է, ու երեք կաթիլ արյուն է ընկնում ձյան վրա: Կարմիր գույնը ձյան վրա էնքան գեղեցիկ է լինում, որ թագուհին ականա մտածում է. «Ա՛խ, երանի մի երեխա ունենայի, **ձյան պես ճերմակ մաշկով, արյան պես կարմիր թշիկներով ու շրջանակի փայտի պես սև մազերով**» (Ձյունանուշը)¹⁰:

Իսպանական հեքիաթներում հաճախ հանդիպում են սիրո զգացմունք արտահայտող յուրահատուկ համեմատություններ, որոնցից շատերն ունեն դրական, իսկ որոշները՝ բացասական հարանշանակություն.

Y ella le respondió que le quería **como a sí misma** (Como la vianda quiere a la sal, p. 361).

Y la mayor dijo que le quería **como a su vida**, y la segunda dijo que le quería **más que a su vida**, y la menor le dijo que le quería **como a un buen cagar** (La zamarra, p. 362).

Me quería **como a un buen cagar** (La zamarra, p. 364).

¹⁰ Գրիմ եղբայրներ, նշվ. աշխ., էջ 213:

Le respondió que le quería **como a las niñas de sus ojos** (Como la vianda quiere a la sal, p. 361).

Le dijo que le quería **como la vianda quiere a la sal** (Como la vianda quiere a la sal, p. 361).

Ուշագրավ է նախավերջին համեմատությունը, որտեղ հերոսն ասում է, թե հորն իր աչքերի բիբերի պես է սիրում: Նշենք, որ “querer como a las niñas de sus ojos” (աչքերի բիբերի պես սիրել) արտահայտությունն իսպաներենի դարձվածային ֆոնդում արձանագրված դարձվածք է, որը նշանակում է սիրել և գնահատել ինչ-որ մեկին: Դեռևս Հին կտակարանում բազմիցս օգտագործված նշյալ արտահայտությանը հաճախ կարելի է հանդիպել իսպանական հրաշապատում հեքիաթների հատկապես այն դրվագներում, երբ հերոսները ցանկանում են արտահայտել իրենց մեծ սերը: Պակաս հետաքրքիր չէ վերջին համեմատությունը, որն ունի չափազանցական երանգ, որտեղ աղջկա սերը համեմատվում է ուտելիքի և աղի հետ՝ շեշտը դնելով դրանց անքակտելի միասնության վրա: Այդ բառակապակցության շնորհիվ համեմատությունը դառնում է ոչ միանշանակ, քանի որ իր մեջ չի կրում որևէ գնահատական՝ դրական կամ բացասական նրբերանգներով: Նման համեմատությունը կարող է ճիշտ ընկալվել միայն կոնկրետ համատեքստում, քանի որ այլ դեպքում այն կկորցնի իր գեղագիտական ազդեցությունը: Ըստ Ս. Գասպարյանի՝ բառը, կիրառվելով անսպասելի համատեքստերում, ընդլայնում է իր իմաստային հնարավորությունները՝ միաժամանակ ստանալով մի քանի նշանակություն ու երանգ և ձեռք է բերում լրացուցիչ խորություն¹¹: Սիրո և աղի համեմատության օրինակներ հանդիպում են նաև այլ ժողովուրդների հեքիաթներում: Այսպես, Գրիմ եղբայրների «Սագարած աղջիկը» հեքիաթում թագավորի կրտսեր աղջիկն իր սերը հոր նկատմամբ արտահայտում է հետևյալ կերպ. «Ամենալավ կերակուրն էլ ինձ համար համ չունի առանց աղի. **ես քեզ սիրում եմ աղի չափ**» (Սագարած աղջիկը)¹²:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ համեմատություններում օգտագործվող գոեհկաբանություններին, ապա դրանք, մեր կարծիքով, իսպանական հրաշապատում հեքիաթներին բնորոշ առանձնահատկություններից են:

Հեքիաթների ոճահնարային միջավայրն աչքի է ընկնում իր հագեցվածությամբ, որտեղ ոճական հնարներից յուրաքանչյուրը փոխկապակց-

¹¹ Гаспарян С. Лингвопоэтика образного сравнения, Е., 2008, с. 42.

¹² Գրիմ եղբայրներ, նշվ. աշխ., էջ 42:

ված է մյուսների հետ կառուցվածքային, ոճական և իմաստային առնչություններով: Հեքիաթային համեմատությունների գերակշռող մեծամասնությունը հիմնված է չափազանցության վրա: Չափազանցական համեմատություններն իսպանական հրաշապատում հեքիաթներում մեծ թիվ են կազմում՝ առավելապես օգտագործվելով հերոսների և նրանց շրջապատող միջավայրի արտասովորությունը, գեղեցկությունը կամ տգեղությունը պատկերելու համար: Օրինակ՝

Hizo el caballero todo como se lo había prescrito la vieja, la que, efectivamente resucitó, y más fea que antes, porque sus narices, que no cupieron en el caldero, se quedaron muertas y tan blancas, que **parecían un colmillo de elefante** (Los caballeros del pez, p. 14).

Una tarde el rey cogió de la fuente una rosa bellísima, **cuyos pétalos parecían de terciopelo**, y se la llevó a la reina (El príncipe Tomás, p. 1).

Cuando se vio el pajarito en el estómago del Rey, que **parecía una cueva más oscura que media noche** (El pícaro pajarillo, p. 3).

El pobre vino en ello, y la madre de la niña le dio tantísimo de comer y de beber, que se infló, de manera que, después de cenar, **se quedó más dormido que un difunto** (El zurrón que cantaba, p. 3).

Առաջին օրինակում ծեր կնոջ քիթը համեմատվում է փղի ժանիքի հետ՝ դրանով իսկ ընդգծելով նրա տգեղությունը: Երկրորդում վարդի թերթիկների գեղեցկությունը համեմատվում է թավշի հետ: Հաջորդ օրինակում թագավորի ստամոքսը համեմատվում է կեսգիշերից ավելի մութ քարանձավի հետ: Վերջին օրինակում էլ խոր քուն մտնելը ներկայացվում է «հանգուցյալից ավելի խորը քնեց» արտահայտությամբ: Ինչպես տեսնում ենք, բերված օրինակները հիմնված են չափազանցության վրա՝ ստեղծելով հեքիաթին բնորոշ գունեղ պատկերներ:

Չափազանցական համեմատությունները լայն տարածում ունեն նաև հայկական ժողովրդական հեքիաթներում: Այսպես, «Ջան Փոլատ» հեքիաթում հետևյալ կերպ է ներկայացվում աղջկա գեղեցկությունը. «Գլուխը որ չի բարձրացնում մտիկ տալի՝ ի՛նչ ա տենում. **մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես՝ հենց նրա գլուկ ջամալին թամաշ անես. մի խոսքով արեգակի կտոր, մի հրեշտակ, մի մարալ, մի ցեյրան, մի հուրի մալաքի մեկը, որ արևին ասում ա՝ դու մեր մտի, ես դուս եմ գալի էնքա՛մ մի սիրունիկ զադ էր: Նրան որ չի տեսնում՝ ջանը մահվան դող ա ընկնում,**

սրտոթում, լիզուն կապնվում, էլ չի կարում խոսա՝ հենց խելքամաղ ա ըլնում, մնում» (Ջան Փոլատ)¹³:

Նշենք, որ հեքիաթներում տգեղության բնութագիրը նույնքան ներդաշնակ է հեքիաթի պոետիկային, որքան գեղեցկությանը: Նման հակադիր նկարագրությունների դեպքում որևէ կերպարի տգեղությունը ծառայում է իբրև միջոց առավել ընդգծելու հերոսի գեղեցկությունը: Իսպանական հրաշապատում հեքիաթներում որպես տգեղության չափանիշ հաճախ հանդիպում են *diablo* (սատանա), *perro* (շուն), *monstruo* (հրեշ), *mengue* (դև) բառերը, որոնք նույնպես հանդես են գալիս որպես չափազանցված պատկերներ: Օրինակ՝

«Y el diablo cogió la carta y puso otra donde decía que la niña había dao a luz dos niños **como dos diablos**» (La niña sin brazos, p. 350).

«Y el diablo cogió la carta y puso otra donde decía que la niña había dao a luz **dos perros**» (La niña sin brazos, p. 352).

«Pero el diablo cogió la carta y puso otras onde le decían al rey que su mujer **había parido dos monstruos**» (La niña sin brazos, p. 353).

«Abriose entonces el rastrillo, y asomose la punta de una larga nariz, que sentaba sus reales entre los hundidos ojos y la hundida boca de **una vieja más fea que el mengue**» (Los caballeros del pez, p. 9).

Իսպանական հեքիաթներում հանդիպում են նաև բազմաթիվ երգիծական բնույթի համեմատություններ, որոնք նույնպես հիմնված են չափազանցության վրա: Օրինակ՝

«Y llegaron a una casa y pasaron unas tapias y llegaron ante el pozo, y la Luna se reflejaba en el agua y **parecía un queso**» (El lobo que cree que la Luna es queso, p. 1).

Վերոհիշյալ օրինակում լուսինը պանրին նմանեցնող համեմատությունը բխում է հին առասպելաբանությունից, ըստ որի՝ լուսինը ստեղծված է պանրից: Դա, ըստ երևույթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ լուսնի վրա երևացող խառնարանները նմանվում են որոշ տեսակի պանիրների վրա գոյություն ունեցող անցքերին: Բացի այդ, պանիրը սովորաբար լինում է լուսին հիշեցնող կլոր գլուխներով՝ ունենալով նրան բնորոշ գունային երանգներ: Ինչպես տեսնում ենք, ներկայացված բոլոր պատկերները երգիծական բնույթ ունեն:

Համեմատությունները շարժունություն են հաղորդում գործողությանը, որը հեքիաթի կարևորագույն հատկանիշներից է: Իսպանական հրաշա-

¹³ Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 73:

պատում հեքիաթներում գործողության արագությունը սովորաբար համեմատվում է քամու հետ և հաճախ կարելի է հանդիպել “como el viento” (քամու նման) արտահայտությանը, որն առավելապես կիրառվում է “correr” (վազել) բայի զուգակցությամբ: Նշենք, որ իսպաներենում “como el viento” համեմատությունը դիտարկվում է որպես դարձվածային միավոր: Այս պատկերն ունի համընդհանուր բնույթ և կարելի է հանդիպել նաև այլ լեզուներում: Օրինակ՝

«Pero como no había tiempo de perder se montaron en seguida y salieron **corriendo como el viento**» (Blanca Flor, la hija del diablo, p. 390).

«Y lo montó y salió el pez **nadando como el viento**» (Los cuarenta y un ladrones, p. 448).

«Y los perros echaron a **correr como el viento**» (Dos almas en pena, p. 449).

«Y se puso a soplar **tan fuerte como el viento**» (Los tres cerditos y el lobo, p. 2).

«Me subí en una tortuga que **corría más que el viento**» (Cuento de embustes, p. 3).

Հատկապես ուշագրավ է վերջին օրինակը, որն ակնհայտորեն հիմնված է չափազանցության վրա՝ ներկայացնելով հեքիաթին բնորոշ անիրական պատկեր, ըստ որի՝ կրիան քամուց ավելի արագ է վազում: Քամու հետ համեմատության օրինակներ հանդիպում են նաև այլ ժողովուրդների հեքիաթներում: Այսպես, ռուսական “Жар-Птица и Василиса Царевна” հեքիաթում հանդիպում ենք Бежал он из дворца быстрее ветра համեմատությանը (Хранители сказок, Жар-Птица и Василиса Царевна, <http://hobbitaniya.ru/martinov/martinov2.php>):

Հեքիաթներում համեմատությունների միջոցով առավել ցայտուն և արտահայտիչ ներկայացվում է նաև հերոսների հուզական վիճակը: Օրինակ՝

«La ilusión pronto se apagó **como una vela**» (El rey durmiente, p. 3).

«Y entonces el ermitaño sintió la soledad **como un peso horrible**, y volvió a llorar con gran amargura» (Los ladrones arrepentidos, p. 1).

«Soñaba con la corona de latón **como jamás ningún príncipe ambicioso había soñado el emblema del poder imperial**» (La corona de lata, p. 1).

Բերված օրինակներում պատրանքի մարումը համեմատվում է հանգչող մոմի հետ, միայնության զգացումը՝ սարսափելի բեռի և թիթեղյա թագի

մասին երազող արքայազնը համեմատվում է կայսերական իշխանության հավակնող արքայազնի հետ:

Իսպանական հրաշապատում հեքիաթներում համեմատությունները, ի տարբերություն մակդիրների, հազվադեպ են վերնագրերում: Նման սակավ օրինակներից է “*María como un ajo*” (Սխտորի նման Մարիան)¹⁴ հեքիաթի վերնագիրը:

Այսպիսով՝ խնդրո առարկա հեքիաթներում համեմատություններն օժտված են վառ պատկերավորությամբ, խոր հուզականությամբ ու արտահայտչականությամբ և ունեն ճանաչողական և գեղագիտական մեծ արժեք: Դրանք մեծ դեր ունեն նաև իբրև տեքստակազմիչ միջոց՝ հանդես գալով ոչ միայն որպես ռճական հնար, այլև կարևոր սյուժետային տարր: Բազմազան և ներդաշնակ է համեմատությունների համատեղ գործածությունը հեքիաթի այլ պոետիկական հնարների հետ:

Իսպանական հրաշապատում հեքիաթների փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ գեղեցկություն արտահայտող համեմատությունները քանակապես գերակշռում են՝ կրելով համընդհանուր բնույթ: Անշուշտ, որքան էլ տարբեր ժողովուրդների մշակույթներում գեղագիտական ընկալումները, գեղեցկության գնահատման չափանիշները տարբեր են, այնուամենայնիվ, ժողովրդական պոետիկային հաջողվել է գտնել գեղեցկության արտահայտման համընդհանուր միջոց, որն էլ իրականացվում է համեմատության պարզ պատկերի միջոցով: Սովորաբար հեքիաթի բովանդակությունը համընդհանուր է և համամարդկային, մինչդեռ նրա արտահայտչաձևերը՝ ազգային, որտեղ միահյուսվում են ժողովրդախոսակցական լեզվին հատուկ տարբեր հնարներ:

¹⁴ **Espinosa A.M.** *Cuentos populares recogidos de la tradición oral de España, Madrid, 2009.*

ОТРАЖЕНИЕ ВСЕОБЩЕГО И НАЦИОНАЛЬНОГО В ИСПАНСКИХ ВОЛШЕБНЫХ СКАЗКАХ

БАГДАСАРЯН А.Г., АЗИЗБЕКЯН З.Р.

Резюме

Сказки любого народа отличаются своеобразием формы и содержания, но при этом они имеют некую тематическую общность и связаны с древними ритуалами, легендами, религиозными представлениями и, в целом, с архетипами человеческого сознания. Сказку можно рассматривать как единство противоположностей всеобщего и национального, которое проявляется также в ее средствах выражения, в частности, в художественном сравнении. Сказанное относится также к испанским волшебным сказкам, которые содержат богатый материал для межлингвистического сравнительного анализа.

THE EXPRESSIONS OF THE UNIVERSAL AND THE NATIONAL IN SPANISH FAIRY TALES

H. BAGHDASARYAN, Z. AZIZBEKYAN

Abstract

Fairy tales of every nation are distinguished by the peculiarity of their form and content, but at the same time they show a great deal of thematic commonalities and are connected to ancient rituals, myths, religious perceptions, and to archetypes of human thinking in general. A fairy tale can be regarded as a juxtaposition and union of the universal and the national, which is also manifested in its forms of expressions, particularly in literary simile. The present article studies the expressions of the universal and the national in the considerable amount of similes encountered in Spanish fairy tales, national from the viewpoint of intercultural comparative analysis.

Ե. ՉԱՐԵՆՑԻ ԿԵՐՊԱՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ԲԱՆԿՈՐՈՂԸ ԵՎ ՄԱՄՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա.Գ.

Կոստան Զարյանի և Նրա ստեղծագործությունների նկատմամբ խորհրդային տարիներին դրսևորված վերաբերմունքի կաղապարը պահպանվում է մինչև այժմ, չնայած տասնամյակներ են անցել, և սերունդներ են փոխվել: Մասնավորապես, այս կարծրատիպը վերաբերում է Կոստան Զարյանի՝ Չարենցի նկատմամբ ունեցած վերաբերմունքին:

«Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպում Զարյանը կերտել է խորհրդային գրողի կերպարը, որի համար նախատիպ է եղել Եղիշե Չարենցը: Հերոսի ու Նրա նախատիպի և՛ արտաքին, և՛ կենսագրական նմանությունները չափազանց շատ են: Այդ մասին հանգամանորեն խոսում է Ա. Ավագյանը իր գրքում¹: Նա կարծում է, որ Զարչարյանի կերպարում Զարյանը խտացրել է «խորհրդային ընկերավարության մտայնությունը»²:

Նախ պարզենք, թե ինչու է հեղինակը իր հերոսին «Զարչարյան» անվանել: Կ. Զարյանի վերլուծաբաններից Վ. Մատթեոսյանը առաջարկում է այդ հարցում հիմք ընդունել «չարչի» բառի արմատը. «Անունը միաժամանակ չար բառի կրկնաւորումն է եւ չարչարել բայի արմատը: Բայց մենք մեզի թոյլ կուտանք ենթադրել, որ չարչ հնչյունախումբը կապուած է թրքերէն չարչի («փերեզակ») բառին հետ: Զարեանի համընդհանուր արհամարհանքը գործարարներու եւ առեւտրականներու նկատմամբ կրնայ տարածուիլ ուրիշ տեսակ «վաճառականի» վրայ. անոնք որ գիտենք կը վաճառեն, զիրենք բարոյապէս կը նուաստացնեն իշխանութենէն որեւէ շնորհք ստանալու համար»³:

Պրոլետբանաստեղծի մասին պատմելիս Զարյանը երկու անգամ օգտագործում է «չարչարվել» բայը. «Նա իբրեւ ուղղամիտ մարքսեան եւ համայնավար՝ պարտք էր համարում նայել ամէն բանի վրայ քննադատական աչքերով: Իսկ եկ տես որ... չարչարում էր»⁴, «Զարչարեանն էլ

¹ **Ավագյան Ա.**, *Կոստան Զարյան. Կյանքը և գործը*, Ե., 1998:

² *Նույն տեղում*, էջ 223:

³ **Մատթեոսեան Վ.**, *Կոստան Զարեանի շուրջ, Անթիլիաս*, 1998, էջ 374:

⁴ **Զարեան Կ.**, *Բանկոռպը եւ մամուլի ոսկորները, Անթիլիաս*, 1987, էջ 543:

գիտէր, որ ուրիշները իր կեանքի ամէն մանրամասնութիւնը լրտեսում են եւ ասածներին չեն հաւատում՝ ստում էր եւ չարչարում»⁵: Կերպարի հետագա վերլուծությունից պարզ է դառնում, որ հեղինակը իր հերոսին ընկալել է որպէս տառապող, ողբերգական կերպար. այդ պատճառով էլ հակված ենք կարծելու, որ ազգանվան հիմքում «չարչարվել» բայն է:

Ինչո՞ւ է գրողը իր ստեղծագործության հերոս դարձրել Չարենցին:

Գրելով բուլճարիկների և նրանց գաղափարախոսության մասին՝ Կ. Չարյանը չէր կարող չկերտել բուլճարիկ մտավորականի կերպար, որի համար «հարմար» նախատիպ էր Չարենցը: Ճիշտ է՝ ամբողջ վեպի ընթացքում ընթերցողն անընդհատ կարդում է քննադատական, վերլուծական, ծաղրական, նույնիսկ դրական խոսքեր բուլճարիկյան կառավարության ու նոր կարգերի վերաբերյալ, նաև ողբերգական պատմություններ տարբեր մարդկանց մասին, որոնք հայտնվել էին գաղափարախոսական մամլիչի տակ, և լիարժեք պատկերացում է կազմում դարասկզբի նոր Հայաստանի մասին, այնուամենայնիվ, Չարչարյանի կերպարով պատկերն ու ասելիքը ամբողջանում են:

Երբ Չարենցի կենսագրությանը ծանոթ ընթերցողը գլխի է ընկնում (իսկ դա շատ շուտ է տեղի ունենում), թե խոսքն ում մասին է, ցավ է ապրում սիրելի բանաստեղծի՝ նման նկարագիրը կարդալիս: Չշտապենք հիասթափվել Կ. Չարյանից: Տեսնենք, թե ինչպիսին է բուլճարիկ մտավորականը՝ ըստ Չարյանի. «Չարչարեանը ներկայացնում էր սովետական ընկերութեան նոր եւ միջին այն տիպը, որը մարմնացնում է անցողական եւ մութ մի շրջանի մտայնութիւնը»⁶: Չարչարյանի համար աշխարհի կարգն ու ձևը սկսվում և ավարտվում էին «մարքսիստական մոտեցմամբ» և ըստ կուսակցական գծի: Փարիզի շքեղությամբ հմայված՝ վախենում էր իր հիացմունքն արտահայտել բուրժուական քաղաքի մասին. «Ինչ որ զուարճալի էր՝ դա իր զգուշութիւնն էր արտայայտութիւնների մէջ: Շղթայուած մարդու հոգեբանութիւնը: Զսպում էր իր հիացումը, պահում իր զարմանքը»⁷: Վ. Մատթեոսյանը գրում է. «Չարեանի տաղանդը յաջողած է որսալ Չարչարեանի երկուութիւնը. այն տիպարն է, որ պէտք է ուղղափառ համայնավարի դիրք ճշդէ, սակայն միշտ չի յաջողիր անշեղորէն հետեւիլ կուսակցական ուղեգծին եւ ներքին պայքար մը ունի չորսետրեւոյու համար խախուտ վիճակը»⁸: Չարյանի հետ ընթերցողն էլ զգում է բանաստեղծի ողբերգությունը. վերջինս հայտնագործում է, որ կապիտալիստական երկիրը հարուստ է ու գեղեցիկ, այստեղ կարելի է ազատ խոսել ու

⁵ Նույն տեղում, էջ 611:

⁶ Նույն տեղում, էջ 537:

⁷ **Չարեան Կ.**, նշվ. աշխ., էջ 543:

⁸ **Մատթեոսեան Վ.**, նշվ. աշխ., էջ 245:

չվախենալ: Հեղինակը ցույց է տվել հոգեկան այն ամլությունը, որին Խորհրդային Հայաստանում դատապարտված էին տաղանդները:

Եթե չկենտրոնանանք բանաստեղծի արտաքինի նկարագրության վրա և չշտապենք եզրակացություններ անել Չարենցի նկատմամբ Ջարյանի վերաբերմունքի մասին, կտեսնենք գրողի պատկերած իրական Չարենցին և նրա իրական վերաբերմունքը բանաստեղծի նկատմամբ. «Չնայած արտաքին իր ձևերի բոլոր այլանդակութուններին, իր անձի արտառոց եւ ծաղրանկարական կողմերին, նրա մէջ մի ինչ-որ ամբողջական գիծ կար, որ հրապուրիչ էր եւ նոյնիսկ մեծղի: Հայ շինականի ոչխարի հոտը եւ հայ երկրի հակասական բնոյթը: Լերան կատարին անցնող դղրդալից մրրիկը եւ լերան ստորոտի մոտ բուսնող թթենու շուքի տակ պառկած բանաստեղծական զգայնութիւնը: Կոպիտ հողը եւ յանկարծակի բուսած մանիշակների կարպետը»⁹: Սա Չարենցի դիպուկ բնութագիրն է՝ արված այնքան բանաստեղծորեն: Այո՛, Չարենցը անփույթ է վարվելա-կերպի առումով, մարդկանց հետ հարաբերություններում, իր արտաքինի նկատմամբ: Ջարյանի համար ընդունելի չէ հասարակության ընտրյալի այսպիսի կերպարը, բայց գրողը ցույց է տալիս, որ իր նկարագրած հասարակությունից այլ բան սպասել հնարավոր չէ: Կրկնենք՝ Չարենցի կերպարի առումով կարևորը արտաքինը չէ. հիշենք, որ Ջարյանը իր բոլոր ստեղծագործություններում ընդգծում է մարդու ներքին հարստությունն ու ամբողջականությունը: Չարենցի մեջ նա տեսնում է հայ անհատին և կերպարի այն ամբողջականությունը, որն օրինակելի էր համարում. «Վերջ ի վերջոյ իրական հայը: Նա, որ իր մարմնի ամէն մի մասով, իր հոգու բոլոր թելերով կապուած է երկրին, եւ որի համար արտաքին աշխարհը գոյութիւն ունի այնքան, ինչքան նա կարող է համեմատութեան ենթարկել իր սեփական երկրի հետ: Նա նայում է աշխարհին հայի աչքերով: **Նա իր աչքերը չի փոխում** (ընդգծումը մերն է-Հ.Ա.): Ու Հայաստանը **է** (ընդգծումը հեղինակինն է), որովհետեւ նա կայ»¹⁰: Չարենցի գնահատականներից ամենագեղեցիկը, ճշմարիտը: Արտաքին տգեղության տակ՝ հոգեկան գեղեցկություն, փոքր մարմնի մեջ՝ այնքա՛ն հզորություն, որը կարողացել է տեսնել ու առանց մտավախության գնահատել ու բարձրաձայնել Ջարյանը այն ժամանակ, երբ Չարենցին հալածում ու ստորացնում էին, երբ բանաստեղծի իրական գնահատականը դեռ չէր տրվել: «Ու այդ՝ չնայած իր մտային քառսին, իր վատ մարսած ընկերային եւ քաղաքական վարդապետութեան, իր միջազգային իտէալին, իր բոլշեիզմին: Նրա ամբողջ անձի համար այդ ներելի է եւ նոյնիսկ օգտակար, որովհետեւ նա երբեք չի փոխուի, իր բնոյթին չի դաւաճանի: Նա

⁹ **Չարեն Կ.**, նշվ. աշխ., էջ 544:

¹⁰ Նույն տեղում, էջ 544:

կայ եւ կը մնայ՝ ինչ որ կայ: **Նա ինքը Հայաստանն է եւ իբրեւ այդ՝ տեւական, անմահ** (ընդգծումը մերն է-Հ.Ա.)»։ Մինչդեռ Ա. Ավագյանը գրում է. «Չարենց երևույթի մասին Ջարյանը միակը չէր, որ վրիպում էր։ Նրան ոչ միշտ էին ճիշտ գնահատում նաև հայ մտքի ուրիշ մեծերը»¹¹։

Չարենցին այսօրվա աչքերով տեսնելն ու գնահատելը հեշտ է, և դրա համար հերոսություն չի պահանջվում։ Հերոսությունը Ջարյանին է, որ քսանականների վերջին, երբ գրվում էր այս գիրքը, կարողացել է արհամարհել Չարենցի շուրջ կուտակված ամպերը, նսեմացնող կարծիքները և գրել իրական Չարենցի մասին, գնահատել այնպես, որ կարդալիս միայն հիացմունք ես ապրում։ «Ես նախանձում եմ նրան» նախադասությունը բավական է Ջարյանի իրական վերաբերմունքը Չարենցի նկատմամբ ըմբռնելու համար։ Ընթերցողը կհասկանա Ջարյանի ցավը. Ջարչարյանի նման տաղանդները, հայտնվելով գաղափարախոսական մամլիչի տակ, վատնում էին իրենց տրված աստվածայինը։

Բնական է, որ Չարենցը, վերադառնալով հայրենիք, չի կարողանում ստեղծագործել։ Արտասահմանում տեսնելով հանգիստ, գեղեցիկ ու հարուստ կյանքը՝ նա մտորում է այն քարոզչության մասին, որը միակ ճշմարտությունն էր համարել և ընդունել էր անվերապահորեն։ Նա հոգեկան խառնաշփոթի մեջ էր, և այն հաղթահարելու համար ժամանակ էր պահանջվում։

«1923-ին Չարենց պրոլետարական մշակոյթ ստեղծելու բոլոր վերագրումները մերժած է «Ի՞նչ պէտք է լինի արդի հայ բանաստեղծությունը» յոդուածով, որ արդիականութեան պահանջի հերթական արտայայտութիւնն էր։ Իսկ Եւրոպայէն վերադարձին իր ընտրութիւնը կատարած է. ներքին յեղաշրջումը։ 1925-ին հաստատած է վերանայումի անհրաժեշտութիւնը Բաքուի «Վիշկա» ամսագրի խմբագրութեան գրած նամակով»¹²։ Բանաստեղծը ճիշտ է ներկայացնում 1925 թ. հետո իր հետ կատարված փոփոխությունը. «...կարծում էինք՝ աշխարհը կարող ենք նվաճել պլակատներով և ողորմելի ագիտկաններով, որոնք շատ-շատ կարող են ունենալ ընթացիկ ռեկլամի նշանակություն, և կարծում էինք, որ դա է այն հիմնական արվեստը, որ հարկավոր է պրոլետարիատին»¹³։

Այն սխալ պատկերացումը, թե Կոստան Ջարյանը իր կերտած կերպարի միջոցով ծաղրել կամ ստորացրել է մեր ժամանակի մեծագույն պոետներից մեկին՝ Չարենցին, ունի երկու պատճառ. **նախ**՝ Ջարյանի նկատմամբ թշնամական վերաբերմունքը, որից էլ՝ նրա գրականությունը չընդունելը և անգամ հասկանալ չփորձելը, **երկրորդ**՝ Ջարչարյանի ար-

¹¹ Նույն տեղում, էջ 224։

¹² Մատթեոսեան Վ., նշվ. աշխ., էջ 242։

¹³ Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1967, էջ 425-426։

տաքինի նկարագրությամբ բավարարվելը, ինչպես նաև տողատակերում թաքնված գլխավոր իմաստը կարդալու ցանկություն չունենալը:

ОБРАЗ Е. ЧАРЕНЦА В РОМАНЕ КОСТАНА ЗАРЯНА "РАБКООП И КОСТИ МАМОНТА"

ОГАНЕСЯН А.Г.

Резюме

Костан Зарян в своем романе "Рабкооп и кости мамонта" создал образ большевика-интеллекта, прототипом которого стал Егише Чаренц. В литературоведении бытует ошибочное мнение, согласно которому изображенный К. Заряном образ Чарчаряна высмеивает и унижает великого писателя нашего времени. Однако К. Зарян искренне восхищался талантом Егише Чаренца.

THE IMAGE OF E. CHARENTS IN KOSTAN ZARYAN'S NOVEL "BANCOOP AND THE BONES OF THE MAMMOTH"

A. HOVHANNISYAN

Abstract

In his novel "Bancoop and the Bones of the Mammoth" Kostan Zaryan created a prototype of a bolshevik intellectual image of Yeghishe Charents. There is a widespread false belief that Zaryan used the image of Charcharyan to humiliate one of the greatest writers of our time. Yet, the careful reader can understand the sincere admiration that Zaryan showed towards talented Charents.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՏԱՐՐԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՉՄԱՆՅԱՆ Ս.Հ.

Կաթողիկոսական խոյրը, արտախուրականները, գավազանն իր դաստառակով, կոնքեռը, մատանին և հողաթափերը, որպես Հայ առաքելական եկեղեցու հոգևոր արքայի նվիրապետական կարգի ցուցիչներ, օժտված են հզոր խորհրդաբանական իմաստներով: Մաշտոցներում նշվում է. երբ որ «արկանեն զսպիտակ Հայրապետական Քօղն ոսկեթելի զլուխս Նորա, եւ կապեն զԿոնքեռն զգօտեան յաջող կողմն», և ապա «տան ի ձեռն զԳավազանն Հայրապետական զանուանեալն «Լուսաւորչի»: Եւ յետ այնորիկ կոչի Կաթողիկոս Ամենայն Հայոց»¹:

Խոյրը՝ բարձրադիր, ոսկեպաճույճ, թագ-գլխանոցն է, որ Հայ եկեղեցում կրում են միայն եպիսկոպոսները և կաթողիկոսները եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ միայն: Այն կազմված է երկու հարթ մասից, որոնք վերևում արտաքուստ անջատվում են իրարից, կոնաձև են և սրածայր զագաթներին կրում են փոքրիկ խաչեր²: Խոյր՝ նշանակում է թագ, միթր³, վարսակալ, արտախուրակ, շարփուշ⁴:

¹ 1876 թվականին, Գևորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով էջմիածնում հրապարակված Մաշտոցում: **Բերբերյան արք. Ա.**, *Ինչպես են Հայ առաքելական եկեղեցում ընտրում և օծում եպիսկոպոս և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, էջ 94*:

² **Ղազարյան Մ.**, *Սուրբ Էջմիածին, 1984, Խոյր, XVIII դար*:

³ Mitra-հունարեն բառ է, նշանակում է կոնաձև գլխարկ կամ կլոր գդակ, որ կոչվել են pilos և petasos, հույները օգտագործել են քրիստոնեության ընդունումից առաջ և ծագումով փոյուզիական են: Հեթազայում դրանք անցել են հռոմեացիներին phrygium կամ frigium, երբեմն էլ՝ tiara անվանմամբ: Միթրա նաև նշանակել է ազգության գլխարկ կամ՝ “cap of liberty”: Հռոմում I-II դարերում բարձր պաշտոն ունեցող քրմերը հապուկ արարողությունների ժամանակ կրում էին ոսկեիյուս այս գլխանոցները: Քրիստոնեության ընդունումից հետո առաջին անգամ վուշե միթրան VIII դարում օգտագործել է Կոնստանտինոս պապը: Հեթազայում, բազմաթիվ ձևերի փոխակերպ-

Ակնհայտ է խոյրի ձկնային կողը: Բաբելոնյան պատմիչ Բերոսոսը նկարագրում է, որ սկզբնական ժամանակներում, երբ երկիրը բնակեցված էր նախնական մարդկանցով, ծովից դուրս եկավ մի ձկնակերպ հրեշ՝ Օաննես անունով: Ձկան գլխի և մարմնի ծածկույթի տակ նա ուներ մարդկային գլուխ և մարմին: Ձկնատիպ աստծու միջագետքյան անվանումն է Հայա-Էնկի⁵: Պատմիչը վկայում է նաև, որ Օաննեսը մարդկանց ծանոթացրել է գրերին, սովորեցրել է գիտություն և տարբեր արվեստներ, ճարտարապետություն, օրենք, երկրաչափություն, նաև մարդկանց ծանոթացրել է սերմերին և պտուղներին: Հետազոտողները հավաստում են, որ Enki (Ea) կոչվող «կես-ծուկ, կես-մարդ» աստվածությունը ևս տիեզերական կարգ ու կանոնի հաստատողն էր և աստվածային օրենքների պահապանը⁶:

Ձուկ-աստծո պաշտամունքը առկա է նաև հայկական մշակույթում⁷, վկայված է ձկան պատկերով «վիշապ» անվանումով հսկա քարե արձաններով, որոնք թերևս նվիրված են եղել Ձուկ-աստծուն⁸: «Վիշապները» դրվել են ջրի ակունքների կամ ջրանցքների մոտ⁹: Պտտահողմը հայերի

վելով, այն սրացավ ներկա տեսքը, Norris H. *Church Vestments: Their Origins & Development*, 1950, New York, 2002, p. 95-97:

⁴ Շարփուշ բառի հիմքը շարն է, որ նշանակում է շղարշ, քող, վարշամակ, Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, էջ 500 և 504:

⁵ Sitchin Z. *The Cosmic Code, Book VI of the Earth Chronicles*, New York, 2007, p. 293-294.

⁶ Davis C.K. *Don't Know Much about Mythology*, New York, 2005, p. 146, 158.

⁷ Վասպուրականի Դոն, դոն, դոն արի, դոն ախպեր պարը, ըստ Ս. Լիսիցյանի՝ նշանակել է **Ձուկ, ձուկ, ձուկ արի, ձուկ ախպեր**: Պարի պլանը նման է բաց կամ փակ բերանով ձկան: Ժ. Խաչատրյանը գտնում է, որ այս պարկերը հիշեցնում է «եկեղեցական բարձրաստիճան ծառայողների գլխարկների ձևը» (Խաչատրյան Ժ.Խ., Ծիսական պարը հայոց հավատալիքների համալսարանում, Ե., 2014, էջ 139-140):

⁸ Ըստ հների՝ ամեն 2000 տարին մեկ, արեգակնային համակարգը թևակոխում էր նոր «Տիեզերական ամիս», համապատասխան կենդանակերպի նշանով: Մոտավորապես մ.թ.ա. 2000 թվականին սկսվեց «Խոյի ամիսը», իսկ մ.թ.ա. 145 թ.՝ «Ձկների ամիսը»: Յուրաքանչյուր տիեզերական ամսվա ընթացքում գլխավոր աստվածները կրել են այդ ամսվա կենդանակերպի նշանը: Օրինակ՝ Խալդին պատկերվում էր ցուլի կոտորչներով: Հեթանաբար, զարմանալի չէ, որ դրանից հետո Հիսուսի խորհրդանիշը դարձավ ձուկը: Նրա անունը ծագում է Joshua ben Nun անունից (Հին Կրակարան, Ելից), որ թարգմանվում է «Հիսուս Ձուկ Աստծո որդի» (Freke T. & Gandy P. *The Jesus Mysterries*, New York, 1999, p. 75-76, 199):

⁹ Март Н.Я., Смирнов Я.И. *Византы*, Л., 1931.

մոտ «Վիշապ կամ Ձկնամբ անուններն է կրել»¹⁰: Հետագայում ձկան խորհրդաբանությունը վերագրվեց նաև Քրիստոսին¹¹:

Անհնար է անտեսել Էնկի աստծո «ձկան գլուխ» գլխանոցի և Ծոփքի հայկական թագավորներից Քսերքսեսի դրամի վրա ներկայացված թագավորական թագ-գլխանոցի նմանությունը: Քսերքսեսի գլխարկը հիշեցնում է ձկան կիսաբաց բերան¹², և այս գլխանոց-թագի խորհրդաբանությունը հավանաբար հնարավոր չէ այլ կերպ մեկնաբանել, քան որպես ասորեստանյան Ձուկ-աստծո գլխանոցի արձագանք, որն անժխտելի ցուցիչն էր իր էության, կոչման և առաքելության: Եթե շարունակելով դիտարկենք Տիգրան Մեծի կամ Արտավազդի թագերի կառուցվածքը¹³, ապա Քսերքսեսի թագը կդառնա կապող օղակ Ձուկ-աստծո և հայ թագավորների թագերի միջև:

Վ. Հացունին Քսերքսեսի գլխանոցն անվանում է եզակի իր ձևի մեջ, նշելով, որ նման թագը հայկական արմատներ պիտի ունենար: Նա այս թագը նմանեցնում է եպիսկոպոսական խույրին, հաստատելով, որ հայոց հեթանոս թագավորները քրմեր էին նաև¹⁴: Հացունին հավաստում է, որ Տիգրանի թագը կրոնական խորհրդանիշ պետք է ունենար: Հետևաբար, ինչպես Տիգրան II-ի և իր հետնորդների ճառագայթածն «հայկական» կոչված թագերը, այնպես էլ կաթողիկոսական խույրը պետք է որ նույն ծագումն ունենային:

XII դարի առաջին կեսին գրված՝ Հաղպատի ավետարանի խորանապատկերի լուսանցքում պատկերված Շերանիկը կրում է կաթողիկոսա-

¹⁰ Ջրերի հեղ առնչվող պոպուստոմը Ս. Գրքում նաև Թաթառ է անվանվել: Վիշապ-Ձկնամբը ձկնակերպ պարկերացնելը պարճառաբանվել է ջրերի վրա իջնելիս կամ բարձրանալիս ձկնակերպ գալարվելով (Բդոյան Վ., Հայ ազգագրություն. Համառոտ ուրվագիծ, Ե., 1974, էջ 203):

¹¹ Հունարեն «ձուկ» (ichthus) բառի հինգ հիմնական տարբեր քրիստոնյաների կողմից որդեգրվել են որպես գաղափարագիր, որը նշանակում էր Iesu Christos, **Chevalier J. and A. Gheerbrant. The Penguin Dictionary of Symbols, 1996, USA. Translated from French by John Buckanan-Brown, 1994, p. 385.**

¹² **Պատրիկ Ա.,** Հայկական տարագ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 1983, էջ 29, պարկեր 3:

¹³ Նույն տեղում, էջ 29, պարկ. 4 և 5:

¹⁴ **Հացունի Վ.,** Պատմություն հին հայ տարագին, Վենետիկ – Ս. Ղազար, 1924, էջ 50-51:

կան խույրին հար և նման շքեղ գլխանոց¹⁵: Ա. Պատրիկը Շերանիկի հագուկապը, իր շքեղ գլխանոցի հետ, համարում է վրացական մշակութային ազդեցություն՝ պատճառաբանելով, որ Շերանիկի գլխանոցը նման է Հառիճի եկեղեցու արևելյան պատին պատկերված Զաքարե սպասալարի գլխանոցին¹⁶: Ա. Պատրիկը գտնում է, որ այս պատկերում Զաքարե սպասալարի գլխանոց-թագը թագակապով և իր կառուցվածքով համանման է Քսերքսեսի թագին: Շերանիկի թագը, համեմատած Զաքարեի թագին, քիչ ավելի բարձր է և խաչազարդ, որ հավանաբար կրոնական ենթատեքստ և խորհրդաբանություն ունի: Հետևաբար, այս երկու թագերն իրենց հերթին կապող օղակ են Քսերքսեսի թագի և եպիսկոպոս-կաթողիկոսի խույրի միջև¹⁷:

Ուրեմն, Տիգրան Մեծի ճառագայթածն թագն ուներին իջնող ապարոշ-արտախուրակով և թագակապով, որոշակի ձևափոխումներով, պահպանվել է այժմյան կաթողիկոսի հանդերձանքի համալիրում, որպես հանդերձի ամենակարևոր, տարբերակիչ մաս: Նոր կրոնի խորհրդաբանական միջավայրում խույրը՝ ձկան խորհրդաբանությամբ, փոխարինել է ճառագայթածն ոսկե թագին: Ապարոշը թագից անջատվել և վերափոխվել է վակասի, իսկ թագակապին փոխարինել են արտախուրակները: Հայոց լեզվում բոլորն էլ ունեցել են թագի և խույրի նշանակություն:

Արտախուրակները երկու նեղ ժապավենաձև, աստառով ամրացված, շքեղորեն զարդարուն կտորի շերտեր են: Դրանք կցված են եպիսկոպոսի և կաթողիկոսի վակասի թիկունքի երկու հակադիր կողմերում և քիչ լայնանալով՝ կախվում են թիկունքն ի վար, թեև ըստ ավանդության, թագ-խույրի մասն են կազմել¹⁸ և կախվել են նրա հետևի մասում: Պահպանված արտախուրակների ծանրակշիռ մեծամասնությունը ներքևի ծայրերում զարդարված է ծոպափնջերով:

¹⁵ Դուռնովո Լ., Դրամբյան Ռ., Հայկական մանրանկարչություն, Մարենադարան և Հայկական պետական պարկերասրահ, Ե., 1967, նկ. 18: Այս նկարում պարկերված խորանը Հաղպատի ավերարանից է, ծաղկող՝ Մարգարե, ՄՄ, 121:

¹⁶ Նույն տեղում, էջ 122:

¹⁷ 1211 թ. Հաղպատի ավերարանում (Մարգարե ծաղկող, ՄՄ, ձեռ. 6288, 8 ք), խորանազարդի լուսանցքում, Գևորգյան Ա., Հայկական մանրանկարչություն, Դիմանկար, Ե., 1982, նկ. 9:

¹⁸ Օրմանյան Մ., Ծիսական բառարան (արևմտահայերենից փոխ. կապարել են Ի. Ավերիսյանը, Ռ. Նազարյանը), Ե., 1991, էջ 87: Հռոմի Պապի արտախուրակները մինչև այժմ էլ կախվում են նրա խույրից:

Արտախույրը, ըստ Ալիշանի, ունի կիսաթագ կամ ապարոշ իմաստները¹⁹: Ա. Մնացականյանի կարծիքով՝ արտախուրակ կամ արտախույր բառերը նույնիմաստ են և նշանակում են թագ, գմբեթ կամ գմբեթագարդ: Ըստ նրա՝ երկուսն էլ հնում կապված են եղել Կենաց ծառի և պտղաբերության իմաստի հետ և հետևաբար նմանեցվել են նրանց²⁰: Ոչ պաշտոնական միջավայրում արտախույրը փոխարինում էր թագին²¹:

Կարծես պարզ է դառնում, թե ինչու մինչև XII դարը հոգևոր արքայի արտախուրակները կախվում էին խույրից²²: Հետագայում՝ վակասի որդեգրումից հետո, անհարմարության պատճառով, արտախուրակներն անջատվեցին խույրից և ամրացվեցին վակասին: Օրմանյանը նկատում է, որ երբեմն ժամարար եպիսկոպոսները պատարագի ընթացքում, խույրը հանած ժամանակ, նախընտրում են արտախուրակները թողնել իրենց տեղում՝ որպես եպիսկոպոսական աստիճանի ցուցիչ, և ավելացնում է, որ այդ «բոլորովին հակառակ է ծիսական կիրառությանը, որովհետև արտախուրակները առանց խույրի չեն կարող գոյություն ունենալ»²³: Հետևաբար արտախուրակները հեթանոս թագավորների կրած արքայական ապարոշին և թագակապին փոխարինող գլխազարդի անբաժանելի մասերն են և իրենց կարևորությամբ ու խորհրդաբանությամբ համարժեք են:

Գոտիները, հատկապես ոսկուց և արծաթից պատրաստվածները, շատ մշակույթներում, այդ թվում՝ հայկական մշակույթում, դեռ վաղնջական ժամանակներից բազմազան խորհրդաբանական իմաստներ ու ծիսական նշանակություն ունեին: Այն կամար է²⁴, առնվազն 5 սմ լայնությամբ

¹⁹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Ե., 1969, էջ 243:

²⁰ **Մնացականյան Ա.**, Հայկական զարդարվեստ. Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը, Ե., 1955, էջ 436:

²¹ Ոստիկան Յուսուֆը Սմբատ արքային ընծայելու համար «թագ է պատրաստում՝ տպագարդելով հյուսած մարգարտաշարով», որի նմանը Սմբատ արքան կամ հայոց արքաները կրում էին X դարում (**Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ.՝ Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 201):

²² XIII դարի կիլիկյան մանրանկարչության դպրոցին պատկանող (Հավաքածու 4243. 1263-1266 թ., էջ 15) պատկերում ծնկած եպիսկոպոս Հովհաննեսի արտախուրակները ամրացված են խույրին և կախված են նրա թիկունքն ի վար (*Матенадаран, Амянская рукописная книга VI-XIV веков, т. I, М., 1991, с. 169*).

²³ **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 52-53:

²⁴ Աղերսվում է նաև ծիածան իմաստի հետ: Այն նշանակում է քամար՝ զարդարուն գորի (**Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. երրորդ, Ե., 1944,

յամբ, որ հետևից բերվում և փորուրարի վրայից ճարմանդով ամրացվում է առջևում²⁵: Իշխանություն չունեցող հոգևորականը գոտի կապելու իրավունք չունի²⁶: Գոտին կաթողիկոսին շնորհվում է իշխանության իր բարձրագույն պաշտոնին նշանակվելիս: Տրված իրավունքների հետ մեկտեղ այն կաթողիկոսից ակնկալում է նվիրվածություն, ուժ, առաքինություն, արժանիք²⁷:

Հայկական էպոսի առաջին հսկան՝ Սանասարը, արժանի եղավ իր գոտին կապելու միայն այն ժամանակ, երբ «աստծու շնորհքը առավ», երբ որ «Ըզզրեհի քամար կապեց,- քամար մեջքով էր»²⁸: Գոտու ճարմանդը նույն խորհրդաբանությունն ունի: Քանի որ ճարմանդը շփվելով մաշում է գոտին և դրանով վերադառնում է իր սկզբնական վիճակին: Այն ձեռք է բերում ցիկլային ուժ-կարողություն, խորհրդանշում է հավերժական վերադարձ: Այս պատճառով էլ ճարմանդն ընդհանուր առմամբ խորհրդանշում է ճակատագիր²⁹:

Կոնքեռը՝ ոչ շատ մեծ, քառակուսի, ընտիր կտորներից պատրաստված, բարձրարվեստ ասեղնագործությամբ և երեք անկյունային ծոպերով զարդարուն կտոր է և կախվում է կաթողիկոսի գոտուց՝ ձախ ազդրի վրա: Հայոց եկեղեցում այն կաթողիկոսի մենաշնորհն է և կաթողիկոսական գավազանի հետ՝ նրա հոգևոր աստիճանի ցուցիչ³⁰:

Վ. Հացունին հաստատում է, որ XIV դարում, ըստ Կաթողիկոսօրհնեքի, կոնքեռը ձեռքին էին բռնում և այն կոչել էին «ձեռնուրար»³¹: Հեղինակը շարունակում է, որ այն առաջին անգամ երևացել է Վենետիկի

էջ 374): **Ա. Սուքիասյանը** գուրին մեկնաբանում է որպես գմբեթ, երկինք, երկնակամար, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 300:

²⁵ **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 69-70:

²⁶ Սարկավագները և նրանցից ներքև գտնվող բոլոր պաշտոնյաները գուրելույծ են (**Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 69-70):

²⁷ **Cooper C.J.** *An Illustrated Encyclopaedia of Traditional Symbols*, London, 1978, reprinted 2013, p. 20.

²⁸ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Ե., 1981, էջ 40:

²⁹ **Chevalier J. & Gheerbrant A.**, նշվ. աշխ., էջ 129:

³⁰ **Օրմանյան Մ.**, 1991, էջ 93-94: Սակայն որոշ ուշ շրջանի մանրանկարչական օրինակներում կոնքեռը կախված է գուրու աջ կողմում (**Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 408):

³¹ **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 398:

կաթողիկեի մկրտարանի գմբեթին պատկերված հայրապետների վրա, և հավանաբար այնտեղից էլ անցել է հայ կաթողիկոսներին³²:

Հայ պատմիչների կողմից կոնքեռին բազմազան խորհրդաբանական նշանակություններ են վերագրվել, ինչպես «հովուական մախաղ...ի նշան ղենջակին Յիսուսի... զտախտակն դատաստանաց» և այլն³³: Այս ծայրագույն պատիվը չէին կարող հենց այնպես որդեգրել հայոց հայրապետները: Մյուս կողմից էլ վկայություններ չկան հունաց կողմից այն Հայոց եկեղեցուն ուղարկված լինելու մասին: Կամ ինչպե՞ս, որտեղի՞ց այն հայտնվեց Վենետիկի հայրապետների հանդերձի համալիրում կամ ի՞նչ խորհրդաբանությամբ:

Ըստ հինդուիզմի և բուդդիստական ավանդույթների՝ մանդալան, որ նույնպես քառակուսի է, նշանակում է «շրջան» և աշխարհի հոգևոր արտահայտությունն ու խորհրդանիշն է: Մանդալան նաև խտացնում, որոշակիացնում և ներկայացնում է սուրբ տարածք, խորան և տաճար³⁴: Հնդկական կրոնաժխտական ավանդույթներում կոնքեռը նաև նշանակում է «սեղան կամ տաճար», ենթադրում է աստծո ներկայությունը համայն տիեզերքի կենտրոնում՝ այն Բրահմայի կամ Բուդդայի տեղն է՝ ամբողջականություն խորհրդաբանությամբ³⁵: Ի տարբերություն դինամիկ շրջանագիծ-կլորի՝ քառակուսին ստատիկ է, ռացիոնալ և խորհրդանշում է երկիրը, կարգը, արդարությունը: Ըստ հին փիլիսոփայությունների, այն խորհրդանշում է նաև աշխարհի չորս կողմերը, չորս եղանակները, չորս տարրերը, և վերջին հաշվով չորսը աստվածայինը խորհրդանշող թիվն է: Քրիստոնեական խորհրդաբանության մեջ քառակուսին խորհրդանշում է քառաթև խաչը, դրախտից դուրս եկող չորս գետերը, ավետարանները, ավետարանիչներին, գլխավոր հրեշտակապետներին և այլն: Ըստ էության, այս կարևորագույն խորհրդանիշ զարդը բոլորովին էլ պատահական չէ, որ քառակուսի ձև ունի:

Եթե կոնքեռի քառակուսի ձևը դիտարկենք նրա երկրաչափական խորհրդաբանության տեսանկյունից, ապա այն անշարժ կենտրոնով քա-

³² Հավանաբար, հարկ է նշել, որ XVII դարում վանականները, որպես գլխի հարդարանք, բացի կնգուղից, կրում էին նաև քառակուսի ձև ունեցող գլխարկ, որ հենց այդպես էլ կոչվում էր՝ «քառակուսի» (**Առաքել Դավրիժեցի**, *Պատմութիւն, թարգմ.*՝ Վ. Առաքելյանի, Ե., 1988, էջ 204):

³³ Նույն տեղում, էջ 384:

³⁴ **Chevalier J. and Gheerbrant A.**, p. 632.

³⁵ Նույն տեղում, էջ 632-633:

ռաթև խաչ է: Քառակուսու դինամիկան արտահայտվում է խաչով, որի կենտրոնից, թևերի ուղղությամբ այն շարժվում է դեպի տիեզերքի չորս կողմերը: Քառակուսին, որ տիեզերքի խորհրդանիշն է՝ «Աստվածային Կատարելության» իմաստով, իր անշարժ կենտրոնում ենթադրում է Հիսուսին³⁶:

Մ.թ.ա. I դարում Կոնստանդինյան հարստության արքաներն իրենց գոտու աջ կողմից՝ աջ ազդրի վրա կախվող, հինգ առյուծազարդ մեդալիոններով զարդարված ուղղաձիգ, ծառանման զարդեր էին կրում, որ անպայմանորեն խորհրդանշում էր կրողների բացառիկ կոչումն ու պատիվը: Կնշանակի դրանից դարեր առաջ դեռ, եթե ոչ ավելի վաղ, նման ավանդույթ գոյություն է ունեցել հայոց արքայական հանդերձանքի համալիրում: Քանի որ Երվանդունյաց և հետագայում նաև Արտաշեսյան հարստության արքաները նաև քրմեր էին, կնշանակի գոտու աջ կողմից կախվող տիտղոսակիր կարևոր նշան-պատիվ խորհրդանշող տարր կրելու ավանդույթը վաղեմություն ունի և առաջացել է հարյուրամյակներ առաջ³⁷:

Օձազարդ գավազանը կաթողիկոսի մյուս կարևոր տարբերակիչ և խորհրդաբանական տարրն է: Գավազանները պատրաստվել են փայտից, մետաղից, ոսկորից կամ ապակուց, զարդարվել են թանկարժեք քարերով և կրողի հասակից բարձր են³⁸: Գավազանները եղել են խաչագուլիս³⁹ կամ կորագուլիս և հնում կոչվել են «կնիք» և «ամփիո»: Սրանք տարբերվել են հասարակ գավազաններից և կոչվել «մաքրության ցույց»՝ «հիշատակ չարչարանաց»⁴⁰:

³⁶ Կոնստանդինյան ժամանակների խորհրդաբանությունը կարելի է նաև անվանել քրիստոնեական մանդալա, որպես աշխարհի սրբազան քարտեզ՝ երկրի խորհրդաբանությամբ, որ պարզվում է իր առանցքի շուրջը, և որի խորհրդաբանությունը Քրիստոսն է: **Andreopoulos A.** *Metamorphosis: The Transfiguration in Byzantine theology and iconography*, New York, 2005, p. 240.

³⁷ **Դեմոյան Հ.**, Հայկական ազգային խորհրդանշաններ, զինանշաններ, դրոշներ, պարզևներ, Ե., 2012, էջ 40-42:

³⁸ Ժողովրդական բանահյուսության մեջ գավազանին տրվում են ամենաբարձր բնորոշումներ, ինչպես օրինակ՝ Արարողի ձեռքով պատրաստված, ոսկե և արծաթե, սերովբեների սնուցած, Սողոմոնի տաճար և այլն (**Մնացականյան Ա.**, նշվ. աշխ., էջ 440):

³⁹ Խաչագուլիս գավազաններ V դարում կրում էին նաև լաբրանական և հունական եկեղեցու առաջնորդները, **Norris H.**, նշվ. աշխ., p. 138:

⁴⁰ Գավազանի «ամփիո» անվանումը գալիս է եբրայերենից, և հղումը Սրեփանոս Սյունեցուց է, VIII դար (**Հաղունի Վ.**, նշվ. աշխ., էջ 384):

Կաթողիկոսական գավազանը տրվում է ձեռնադրության ժամանակ, հատուկ օրհնությամբ և աղոթքով: Այս լրապիտույքը քրիստոնեական եկեղեցում մեկնաբանվում է որպես Լուսավորչի գավազան, որն ունի «հովուի ցուպի ձև և կլոր գլխով» է: Կաթողիկոսը վեհարանից դուրս գալիս, սովորաբար, իր ձեռքին ունենում է իր Հայրապետական Ասա-Ցուպը⁴¹:

Եպիսկոպոսական կլորագլուխ գավազանը՝ չորս օձերով շրջափակված, «կրկին անգամ շրջվելով իր մեջ»⁴², նշանակում է ամբողջ, բացարձակ, կատարյալ, աստվածային իշխանություն⁴³: Այժմ կաթողիկոսական կրկնապիտույտ գավազանը կլորագլուխ է՝ գլուխը դեպի ներս ուղղված չորս կամ վեց օձերով, ծիսական առիթների կամ ձեռնադրությունների ժամանակ զարդարվում է նաև դաստառակով:

Ըստ միջագետքյան որոշ աղբյուրների՝ հեթանոս աստվածները իրենց և մարդկանց միջև, որպես միջնորդներ, կարգեցին թագավորներ: Թագավորները պետք է ապահովեին ժողովրդի պաշտամունքը աստվածների հանդեպ և միևնույն ժամանակ նրանք պետք է դառնային աստվածային ուսմունքը և օրենքները երկիր տեղափոխող միջոց: Ըստ որոշ աքքադական գրությունների՝ թագավորներին ընտրում էին աստվածները, և նրանց թագավորական գլխավոր խորհրդանիշ հանդերձի տարրը՝ թագը, գավազան-մականը կամ հովվական գավազանը, որն արդարության և ճշմարտության խորհրդանիշն էր, տարվում էր երկինք և դրվում գլխավոր աստված Անուի առջև⁴⁴: Այս պատճառով էլ հավանաբար և հատկապես օձագլուխ գավազանները կոչվել են «axis mundi», տիեզերական առանցք կամ կապ երկրի և երկնքի միջև, որով որոշակի լրաբեր աստվածներ կարող էին «ճամփորդել» երկրի և երկնքի միջև⁴⁵:

Օձը քրիստոնեական խորհրդաբանության մեջ ունի բացասական խորհրդանիշ՝ այն դրախտի չարաբաստիկ օձն է, սակայն զարդարում է

⁴¹ Ասա գավազանը պարզ գավազան է, որ կրում են հանդիսավոր կամ պաշտոնական արարողությունների ժամանակ և ոչ ծիսական նպատակներով (**Հոգևոր պրիսմակ**, հրապարակություն Հյուսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի, ԺԴ տարի, 2011, թիւ 1, էջ 18):

⁴² Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 64:

⁴³ **Գրիգորյան Խ., Գրիգորյան Զ., Անգլերեն-հայերեն արդի բառարան**, Ե., 2010, էջ 15 և 30:

⁴⁴ **Sitchin Z.** *The 12th Planet, Book I of the Earth Chronicles*, New York, 2016, p. 415.

⁴⁵ Երկու օձերով պարուրված գավազանը, որ հայոց եկեղեցում կրում են վարդապետները, խորհրդանշում է տիեզերական հակադրություն չարի և բարու կամ այլ հակադիր ուժերի միջև (**Cooper J.C.**, նշվ. աշխ., p. 28-29).

հոգևոր հովվապետի գավազանը⁴⁶: Հին Միջագետքում և Եգիպտոսում «խորագետ օձը» տիեզերական «գաղտնիքների գիտակ», «աստվածային օձ» էնկին էր: Նրան նվիրված տաճարներն անվանվում էին «Օձի տուն-մեհյան-տաճար»: Հին Եգիպտոսում էնկիի խորհրդանշանը աստված-օձն էր, իսկ նրա անվան հիերոգլիֆը և խորհրդապատկերը՝ «PTAH», ժառանգականության կրկնապարույրն էր՝ համարվում էր կյանքի ու մահվան գաղտնիքների բանալին: Այն զարդարում էր աստվածորդի փարավոնի ճակատը և հանդես գալիս որպես հոգու ենթագիտակցական ամենատես աչք⁴⁷:

Հին Շումերում էնկիի անունը նշանակում էր նաև «Ծառի տեր», որը աստվածային գաղտնի, ճշգրիտ գիտելիք-գիտությունների՝ հատկապես բժշկության պահապանն ու գիտակն էր և ստեղծել էր մարդուն: Մահվան ու վերածննդի գաղտնիքները նա սովորեցրել էր միայն իր որդուն, որի խորհրդաբանական պատկերը միջագետքյան արվեստում ժառանգականության կրկնապարույր՝ իրար փաթաթված երկու օձերն էին⁴⁸: Մի շարք այլ հին մշակույթներում օձը ներկայացնում է կյանքը արարող և պահպանող «հին աստծուն», որին «գահ-ընկեց արեցին» նորամուտ կրոնները⁴⁹: Տիեզերական օձը տիրում էր նաև վերերկրային կամ երկնային ջրերին, դրանով էլ երբեմն անցնում էր կայծակ-ամպրոպի այծ-աստծո տիրույթը և հանդես էր գալիս կոտորելով⁵⁰:

Տիեզերական օձը նաև սեռական փոխհարաբերությամբ ինքնասաղմնավորող էություն էր, որ շրջանաձև ցիկլային արտահայտություններով շարունակաբար փոխում է կյանքը մահվան կամ հակառակը: Ինքն

⁴⁶ Հայոց եկեղեցում, բացի գավազաններից, օձազարդ է նաև Էջմիածնում պահվող XVII դարին պատկանող արծվագորգը. արծվի պարկերից վեր, ճակատային պարվավոր տեղում պարկերված օձն իր մարմնի գալարներով ներկայացնում է ութանման, անսահմանի խորհուրդը հանդիսացող խորհրդանիշ, Սբ. Էջմիածին, 1984:

⁴⁷ **Ronnberg A., Martin K.** *The Book of Symbols*, 2010, Taschen, p. 194.

⁴⁸ **Sitchin Z.** 2007, նշվ. աշխ., p. 55, 94, 101.

⁴⁹ Օձը համաշխարհային օվկիանոսի հետ առնչության իմաստով իր խորհրդաբանությամբ աղերսվում է նաև ձկան հետ **[Ստեփանյան Ա., Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային և նշանային համակարգ), Ե., 2004, էջ 82]**:

⁵⁰ Հին հայկական պարկերացումներում օձ-վիշապը նույնպես եղջյուրներով է, որի վրա ագուցված քար կա, և երբ էպոսի հերոս Սանասարը իր անդրծովյան մենամարտում հաղթում է վիշապին, խլելով թանկագին քարը, վիշապը պարսկվում է և ջուր է հեղում (նույն տեղում, էջ 82):

իր պոչը խաճող օձը ինքն իր կենտրոնի շուրջը շարունակապես պտտվող նախնական օձն է՝ շրջանագիծը⁵¹:

Հայաստանում բազմաթիվ են օձի անունը կրող վայրերը, ինչպես օրինակ՝ Օձտեղ, Օձաբերդ, Օձ գետ, Օձուն, Օձին, Վիշապաղաք: Հայոց հեթանոսական գլխավոր աստված Վահագնի տիտղոսանունը Վիշապաղաք էր, և կամ Տիգրանը մարերի թագավորի տեսիլքում հայտնվել էր վիշապին հեծած: Ըստ Ալիշանի՝ վիշապ նշանակում է «մեծամեծ օձ» և վիշապի վերջնամասնիկ - ապը «ջրի նշանակ է»: Հավանաբար այս պատճառով էր, որ հին հայերի դրոշը վիշապապատկեր էր⁵²: Այս դիցը նաև աղերսվում էր պտտահողմի հետ և կրում էր Վիշապ-Ձկնամբ-Թաթառ անվանումը⁵³:

Բիայնական դիցաբանական կառույցում Հալոյի աստծո խորհրդապատկերը եռաժանի է՝ որ շումերերեն նշանակում է «Մեծ», «լուսավորել» կամ «արարիչ», խեթերեն՝ «տեր» և այլն: Միջնադարյան հայերենում այս պատկերագիրը, փոքր-ինչ փոխվելով, նմանվում է օձագլուխ գավազանի և նշանակում է «Սկիզբն»⁵⁴:

Ցավոք, ապացույցներ չունենք, թե գերագույն աստվածություն Խալդին իրականում ինչպիսի գավազան է կրել⁵⁵, սակայն դատելով նրան վերագրվող պատկերագրից և պատկերագրի իմաստներից՝ այն պետք է որ նման լիներ քրիստոնեական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների գավազաններին:

⁵¹ Հունաստանում, Փոքր Ասիայում կամ այլուր մի շարք գետեր անվանվում էին օձի կամ վիշապի հետ առնչվող անուններով (**Chevalier J. and Gheerbrant A.**, նշվ. աշխ., p. 846-856):

⁵² **Ղ. Ալիշանը** համոզված է, որ կենդանիների պաշտամունքը տարբեր մշակույթներում հիմնված էր այդ կենդանիների «անփոփոխ բնության» կատարած «գործի», ուժի, նրանց հարուցած վախի և այլ պարզունակ լոկ ֆիզիկական արդիւնքների վրա (Հայոց հին հավաքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 80-82):

⁵³ Օձի պաշտամունքը ժողովրդի մեջ պահպանվել ու հասել է մինչև միջնադար և դրանից հետո՝ որպես պողաբերության խորհրդանշան նաև: Այդ է պատճառը, որ հղի կանայք կրում էին օձապատկեր զարդ-պահպանակներ կամ հոտույթներ (**Բդոյան Վ.**, նշվ. աշխ., էջ 203, 210):

⁵⁴ Նույն տեղում, էջ 69: **Մովսիսյան Ա.**, Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը (Ձեկուցումների թեզեր, Ե., 2000, էջ 33-35):

⁵⁵ Տիր դիցը Արամազդի դպիրն ու ճեպընթաց սուրհանդակն էր: Նա թևավոր էր, գլխին կրում էր սաղավարտ, իսկ ձեռքին ուներ վիշապագլուխ գավազան (նույն տեղում, էջ 230):

Ծիսական գավազանը, բացի օծի խորհրդաբանությունից, հանդես է գալիս նաև որպես Կենաց ծառ: Միջնադարյան մանրանկարչության մեջ առկա են «ծաղկած» գավազանների պատկերներ, որոնք ներկայացվում են վարսանդապտղային զարդերով, հատիկազարդ պսակներով⁵⁶:

Ժամանակակից կաթողիկոսի կյուրագլուխ գավազանը, իր ոսկեգույն ուսերով և օծերի գլուխներով զարդարված, պարփակում և ամբողջացնում է Կենաց ծառի և օձ աստծո խորհրդաբանությունները: Պետք է հիշել, որ դրախտի հայտնի էպիզոդում ծառն ու օձը հանդես են գալիս միասնաբար: Եթե պարզեցնելու լինենք գավազանագլխի կառուցվածքը՝ կստացվի օծի կամ «վիշապի» խորհրդաբանությամբ՝ վեցական հիմքով շրջանագիծ-Կենաց ծառ, որտեղ շրջանագիծ, սֆերա-գունդը «վիշապի» խորհրդանիշն է⁵⁷: Կաթողիկոսական գավազանը վերևից ամրացվող, արծվազարդ ոսկեթել ասեղնագործությամբ շքեղ դաստառակ ունի, որը հատուկ է միայն կաթողիկոսին⁵⁸: Արտաշեսյան հարստության քուրմ-արքաների թագերի վրա պատկերված արծիվների նման այս արծվապատկերը չափազանց կարևոր արևային⁵⁹ խորհրդաբանություն ունի:

⁵⁶ Հայ միջնադարյան մանրանկարչության մեջ բազմաթիվ են Կենաց ծառ գավազանները (**Մնացականյան Ա.**, նշվ. աշխ., էջ 438-439):


⁵⁷ Հայկական խաչքարերի պարագայում խաչը հենվում է կլորի կամ գնդի վրա: Հեթանոս հռոմեացի կայսրերի գայիսոնները, որպես երկրի վրա նրանց ունեցած իշխանության խորհրդանիշ, նույնպես զարդարվում էին գնդով: Քրիստոնյա կայսրերը գունդը պսակեցին խաչով (**Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 41):

⁵⁸ **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 65:

⁵⁹ Արծվապատկերի բնօրինակում, Արտաշեսյան արքաների թագերին տեղադրված զուգ արծիվների նման, հակառակ իրենց բնական կառուցվածքին, շրջված նայում են ութանկյուն աստղին կամ արևին: Ութանկյուն աստղը քրիստոնեության շրջանում փոխարինվեց Հիսուսի խորհրդանիշը հանդիսացող խաչ-արևով: Այժմյան երկգլուխ արծիվների մարմնի կենտրոնում առկա է խաչը: Այսինքն՝ այս արծվապատկերը նույնն է, չի փոխվել: Նրա խորհրդաբանական գործառույթը նույնպես նույնն է: Իրենց անբնական շարժումով արծիվները շեշտում են «կենտրոնական կամ առանցքային սրբազան առարկայի կարևորությունը»: Այս պատկերը հայտնի է նաև խաչքարերի վրա, որտեղ հեղափոխում թռչունները փոխարինվեցին դեկորատիվ տերևներով, նույն ծառով կամ խաղողի որթով, որտեղ խաչը որթի հետ «հանդես է գալիս որպես ողջ տիեզերքը կազմակերպող Կենաց ծառ» (**Պետրոսյան Հ.**, խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., 2008, էջ 40-41, 44, 62):



Նկ. 1. Խույր, 1653 թ.,
Կեսարիա, Հայ եկեղեցու
գանձերը, 1997, նկ. 55




Նկ. 2. Արտախուրակներ,
XVIII դար, Կոստանդնու-
պոլիս, Հայ եկեղեցու
գանձերը, 1997, նկ. 69



Նկ. 3. Գոտի, XIX դար, Արծկե,
Էջմիածին, Գանձատուն



Նկ. 4. Կոնքեռ, 1713 թ.,
Հայ եկեղեցու գանձերը,
1997, նկ. 61



Նկ. 5. Գավազան,
XVIII դար, Վան, Հայ
եկեղեցու գանձերը,
1997, նկ. 40



Նկ. 6. Հողաթափեր, Splendor
& Pageantry, R. Marchese,
fig. 105, p. 161

Հայոց եկեղեցում բարձրաստիճան հոգևորականների հողաթափերը պատրաստվում են կաշվից, թավշից կամ ատլասից, երեսները զարդարվում են ոսկե և արծաթե թելերով, ուլունքներով և թանկարժեք քարերով արված ծաղկային մոտիվներով, իսկ ներբանները ասեղնագործած են օձի և կարիճի⁶⁰ պատկերներով⁶¹, համաձայն սաղմոսերգուի այն խոսքի, թե՛ «ի վերայ իժից եւ քարբից գնասցես դու...» (Սաղ. Ղ. 13)⁶²: Արգանելիք-կոշիկը զարդարելու ավանդույթը հայ մշակույթում շատ հին է⁶³, ունեցել

⁶⁰ Marchese T.R., Marlene R. Breu. *Splendor and Pageantry, Textile Treasures from the Armenian Orthodox Churches of Istanbul, Turkey*, 2010, p. 160-161.

⁶¹ Օձի և կարիճի պատկերները Բասենում ասեղնագործվում էին երեխաների գլխարկների կամ հագուստների վրա որպես օձի խայթոցի դեմ պահպանակ, Ստեփանյան Ա., նշվ. աշխ., էջ 83:

⁶² Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 95-96:

⁶³ Նույն տեղում, էջ 119:

է ծիսական և խորհրդաբանական գործառույթներ: Այսպես, կաթողիկոսի կարմիր մաշիկ-հողաթափերը⁶⁴ օժտված են իշխանության խորհրդաբանությամբ:

Ամփոփելով պետք է նշել, որ կաթողիկոսի հանդերձանքն իր ամբողջականությամբ ապահովում է կաթողիկոսի համալրված սրբազան կարգավիճակը Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգում: Վերոհիշյալ քննարկված տարբերակիչ տարրերը, սակայն, խորհրդանշում են նրա ամբողջական հոգևոր և սոցիալական վիճակը: Օժված այս տարրերը ձեռնադրությամբ են շնորհվում և խորհրդանշում են Աստծո շնորհած քահանայական իշխանության:

ОСНОВНЫЕ ОТЛИЧИТЕЛЬНЫЕ ЭЛЕМЕНТЫ ОДЕЯНИЯ КАТОЛИКОСА И ИХ СИМВОЛИКА

ХАЧМАНЯН С.Г.

Резюме

Атрибутами одеяния католикоса армянской церкви являются: митра (тиара), декоративные ленты, посох, перстень и тапочки как показатели иерархического положения духовного владыки. Все названные элементы одежды имеют определенную символику.

Митра (тиара) – высокая, вышитая золотыми нитями корона – головной убор католикоса с символикой рыбы, которая в старину приписывалась божеству «полурыба, получеловек». Символикой посоха католикоса является круглая змеиная головка. Перстень католикоса равносителен посоху и символизирует круглый замкнутый круг, а также целостность и постоянство. Символика пояса указывает на то, что он облечен властью. К поясу прикрепляют набедренник (палицу), который является привилегированным элементом в одеянии католикоса, символизирующим «круг». Помимо этого, набедренник – это духовное выражение мира в значении алтаря и храма. Лицевую сторону тапочек католикоса украшают золотыми и серебряными нитями, бусами с цветочным орнаментом; на подошве

⁶⁴ Հայոց արքաները նախարարներին թույլ էին տալիս կրել կարմիր կոշիկ, սակայն միայն մեկ ուրբին, որովհետև զուգ կարմիր կոշիկների պատրվը վերապահված էր միայն արքաներին, **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 119:

вышиты изображения змеи и скорпиона, что символизирует духовную победу Иисуса над злыми силами.

MAJOR SPECIFIC ELEMENTS OF THE CATHOLICOS'S VESTMENTS AND THEIR SYMBOLOGY

S. KHACHMANYAN

Abstract

The mitre, fanons, staff, cincture, epigonation, ring, and slippers are the major components in the vestment complex of the Catholicos in the Armenian Church. These components are indicators of Catholicos's hierarchical position and hold powerful symbolic meanings. The mitre is a high golden crown-headress with a fish symbol, that in antiquity was attributed to the Mesopotamian half-fish half-man god. Fanons, usually hang from the amice and present the long passed echo of the royal diadems. Snake symbol found its expression in the structure of Catholicos's circular, snake headed staff. The ring, with its connotation, is equal to the staff. It means the divine, closed circle which symbolizes wholeness and permanence. The cincture means arch or rainbow. It attributes the Catholicos with honor and power. With given rights and privileges, it also expects devotion, power, virtue, and merit from him. The square shaped epigonation hangs from the cincture and is only worn by the Catholicos only. With its shape, it relates with the divine circle, therefore, presents world's spiritual expression and becomes a symbol of it. Slippers are embroidered with gold and silver thread and decorated with beaded floral motifs. Inside the slippers there are embroidered images of a snake and scorpion. During the holy liturgy, the Catholicos stands on them, which symbolizes Jesus's spiritual victory against evil powers.

ԴԻՄԱՆԿԱՐԸ Լ. ԲԱԺԲԵՌԻԿ-ՄԵԼԻՔՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ս.Ա.

Հայ գեղանկարչուհի Լավինիա Բաժբերուկ-Մելիքյանը (1922-2005)՝ տաղանդաշատ արվեստագետ, «թիֆլիսյան դպրոցի» ականավոր ներկայացուցիչ Ալեքսանդր Բաժբերուկ-Մելիքյանի դուստրն իր 60 տարվա ստեղծագործական կյանքի ընթացքում կատարել է բնանկարներ, նատյուրմորտներ, սակայն առավել ուշագրավ են նկարչուհու վրձնած դիմանկարները: Անգնահատելի է նրա վաստակը դիմանկարի ժանրում:

Որոշ արվեստագետներ իրենց դիմանկարներում ուշադրություն են դարձնում միայն մարդու արտաքին նմանությանը՝ մոռանալով ներքինն արտահայտել, ոմանք էլ ստեղծում են ընդհանրացված կերպար, չեն կարևորում արտաքինը: Սակայն Վերածննդի հռչակավոր նկարիչ Լ. դա Վինչին նշել է. «Լավ նկարիչը պետք է նկարի երկու կարևոր բան՝ մարդուն և նրա հոգին: Առաջինը հեշտ է, երկրորդը դժվար այնպես, ինչպես նկարում մարմնի բոլոր անդամների ժեստերը, շարժումները ներկայացնելը: Եթե կտավում ժեստերի և հոգեկան վիճակի միջև լինի ճիշտ հաստատված հարաբերակցություն, ապա նկարը կլինի հասկանալի այնպես, ասես խոսելիս լինի»¹:

Այսպիսով, դիմանկարի կարևոր խնդիրն է ոչ միայն բնորդի անհատական կերպարային նմանության, այլև ներաշխարհի, բնավորության բացահայտումը: Հենց այսպիսին են Լ. Բաժբերուկ-Մելիքյանի դիմանկարները: Նա կարևորում է թե՛ կերպարների արտաքին նմանությունը, թե՛ մարդկային հատկությունները, թե՛ բնավորության ճշմարտացիությունը: Լավինիայի դիմանկարները ռեալիստական են: Նկարչուհին, պարտադիր պայման համարելով նմանությունը, նշել է. «Եթե նման չէ, նշանակում է, չեմ սիրել բնորդին»²: Եվ այսպես, Լավինիայի դիմանկարները բնորոշվում են պատկերվողին հատուկ արտաքին հատկանիշների պահ-

¹ Տե՛ս **Андроникова М.** *Портрет. От наскальных рисунков до звукового фильма*, М., 1980, с. 60.

² Տե՛ս **Խաչատրյան Շ.**, *Նկարչուհու հերոսը ժամանակն է* (Գրական թերթ, 10.04.1964):

պանմամբ և միևնույն ժամանակ նրան հաջողվել է թափանցել բնորդի ներաշխարհին ու կերպարը ենթարկել հոգեբանական վերլուծության: Անմիջականությամբ, պարզությամբ, անկեղծությամբ են աչքի ընկնում նրա վրձնած դիմանկարների կերպարները: Այդ հոգեբանական դիմանկարներում իդեալականացման մի նշույլ անգամ չկա:

Նկարչուհին իր դիմանկարներում ուշադրություն է դարձնում դեմքերի, ձեռքերի կատարմանը, զգեստներին, որոնք ևս նպաստում են կերպարի նկարագրմանը: Տաք գույներով հագեցած Լավինիայի դիմանկարներում կա ներքին շարժունություն: Մ. Սարյանի նման Լավինիան էլ է երբեմն իր դիմանկարներում փորձում պատկերված անձանց ինքնությունը բացահայտել ատրիբուտների միջոցով:

Զարմանալի խոսուն են նրա դիմանկարները՝ շիտակ ու անկեղծ, մտերմիկ ու անմիջական, հագեցած՝ յուրաքանչյուր անհատականությանը բնորոշ հուզական ու խոհական ազդեցությամբ³:

Լավինիայի կանացի դիմանկարներին բնորոշ են նրբությունը, պլաստիկությունը, տղամարդկանց դիմանկարներին էլ՝ խստությունը, առնականությունը, նաև ինքնախորասուզվածությունը: Ինչպես իրավացիորեն նկատել է Շ. Խաչատրյանը. «Լավինիայի հերոսները կամ ուրախ են, կամ տխուր, բայց բնավ երբեք քարացած, անարյուն»⁴:

Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի դիմանկարները կարելի է բաժանել չորս խմբի՝ ա) արվեստագետ-ընկերների դիմանկարներ, բ) հարազատների դիմանկարներ, գ) ինքնադիմանկարներ, դ) հողի աշխատավոր մարդկանց՝ գյուղացիների դիմանկարներ:

Արվեստագետը մտերիմ է եղել ժամանակի հայկական և ռուսական կերպարվեստի կարկառուն ներկայացուցիչների հետ, ստեղծել նրանց դիմանկարները: Կատարողական վարպետությամբ են աչքի ընկնում հարազատ մշակույթի նվիրյալներին պատկերող դիմանկարները: Այդ աշխատանքներում նկարչուհին մանրակրկիտ, վարպետորեն մոդելավորել է արվեստագետների դեմքերը, հոգեբանական շեշտադրությամբ օժտել կերպարները: Հատկանշական են Մինաս Ավետիսյանին պատկերող երկու դիմանկարները, որոնցից առաջինն ստեղծվել է 1965-ին, իսկ երկրորդը՝ 1968-ին: Մինասի 1965-ի դիմանկարը Ալ. Կամենսկին հենա-

³ Տե՛ս Ստամբուլյան Ա., *Լավինիա Բաժբեուկ-Մելիքյան. Դիմանկար, Քրիստոնյա Հայաստան, Վաղարշապատ, 2002, 2 մայիսի, էջ 6*:

⁴ **Խաչատրյան Շ.**, *Անկեղծ սիրո աշխարհ (Սովետական Հայաստան, 1963, N 8, էջ 19)*:

կետ է համարում Լավինիայի ստեղծագործական կենսագրության համար. ըստ նրա՝ մեծ հաջողությունների սկիզբն ազդարարեց հենց այս դիմանկարը⁵: Նշենք, որ սկսած 1960-ականներից, նրա գործերում տեսնում ենք անհատական, անկրկնելի ձեռագրի առկայությունը: Այդ շրջանում է, որ Լավինիայի արվեստում զգալի բեկում է կատարվում. սկսվում է նկարչուհու ստեղծագործության փոթորն շրջանը, որը շարունակվում է մինչև իր կյանքի վերջը: Մինասին պատկերող նշյալ դիմանկարում արվեստագետը պարփակված է սեփական ներաշխարհում. պատկերված է դեմքի խոհուն, ներամփոփ արտահայտությամբ, իրեն բնորոշ կեցվածքով՝ գլուխը ձեռքին կոթնած⁶: Լավինիան, վերարտադրելով Մինասի հոգեվիճակը, կենդանություն է հաղորդել դիմանկարին:

1968-ի դիմանկարում Մինասը ներկայացված է դիմահայաց նստած՝ դեմքի տխուր արտահայտությամբ: Կտավից դիտողին է նայում դրամատիկ մի կերպար: Աչքերը խոսում են Մինասի՝ ուժեղ կամքի տեր անձնավորության մասին: Դիմանկարն ուշագրավ է կերպարի արտահայտչականությամբ: Մինասին պատկերող այս աշխատանքում աչքերը, հայացքը կարծես պատմում են նկարչի ողջ կյանքի մասին:



Նկ. 1 Մինաս Ավետիսյանի դիմանկարը, 1965 Նկ. 2 Մինաս Ավետիսյանի դիմանկարը, 1968

Արվեստագետ ընկերներին պատկերող լավագույն գործերից է նաև քանդակագործ Արա Շիրազի դիմանկարը (1970), որտեղ նկարչուհին արտահայտել է քանդակագործի՝ տվյալ պահի տրամադրությունը: Կտավում


⁵ Տե՛ս Կամենսկի Ա., *Հայաստանի նկարչական գերդաստանները (Սովետական արվեստ, 1977, N 6, էջ 30)*:

⁶ Մինասն իր դիմանկարներում իրեն պատկերում է այս նույն կեցվածքով:

որպես ֆոն են ծառայում Ա. Շիրազի կերտած քանդակները, որոնք կենդանություն են հաղորդում դիմանկարին Դրանք հիշեցնում են նկարչուհու նատյուրմորտներում հանդիպող արձանիկները:



Նկ. 3 Արա Շիրազի դիմանկարը, 1970



Նկ. 4 Մ. Սարյանի դիմանկարը, 1972

Անկրկնելի ստեղծագործություն է Մ. Սարյանին պատկերող դիմանկարը (1972)⁷: Այն իրապաշտական դիմանկարի լավագույն օրինակ է: Վարպետի խելացի, խոհուն, կենտրոնացված, սևեռուն հայացքը ոչ թե ուշադիր դիտողին է նայում, այլ հառած է հեռուն: Խլացված տոնայնությամբ լուծված այս դիմանկարում գորգի եզրային զարդանախշերի կրկնողության միջոցով ստեղծված է ռիթմ: Շատ վարպետորեն են ներկայացված ձեռքերը:

Իր արվեստով Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանին մոտ կանգնած նկարիչ Ռոբերտ Էլիբեկյանի դիմանկարը (1979) ևս Լավինիայի աշխատանքն է: Նկարի ֆոնը զարդարում են կանաչի նազանքով օժտված երկու գեղեցկուհիների պատկերները, իսկ արվեստագետը ներկայացված է իր իսկ ստեղծած այդ նկարները պատկերող հետնախորքի ներքո: Կանաչի ֆիգուրների միջոցով ավելի է ընդգծվում դիմանկարում առկա քնարականությունը:

⁷ Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի դուստրը՝ Մարիամը, որը հիշում է մոր ստեղծած բոլոր նկարների պատմությունը, մեզ հետ զրույցում պատմեց, որ Սարյանի դիմանկարի կատարման ողջ ընթացքում վարպետը հազիվ էր կարողանում արթուն, սթափ վիճակում նստել, քանի որ նա այդ ժամանակ արդեն կյանքի մայրամուտն ապրող ծերունի էր (17 նոյեմբերի, 2011 թ.):

Խմբի դիմանկարների շարքում առանձնանում են քանդակագործ Շախովսկոյի (1958), Ռ. Ջարյանի (1963), բանաստեղծ Ռ. Դավոյանի (1964), նկարչուհի Նանա Գյուլիքևսյանի (1972), ջութակահարուհի Սեդա Ադալյանի (1975) դիմանկարները: Տպավորիչ են հատկապես վերջին երկուսը. այս արվեստագետ կանանց ձեռքերի ժեստերը, նրբությամբ վրձնած մատները, արհեստավարժորեն նկարված գլուխներն անմիջապես գրավում են դիտողի ուշադրությունը:

Իր հարազատներին՝ հորը, եղբորը, քրոջը, ամուսնուն, դստերը, թոռնուհիներին պատկերող դիմանկարներում Լավինիան արտահայտել է նրանց հանդեպ տածած իր ողջ սերը: Նկարչուհին նրանց կերպարներին մոտեցել է նույնքան խստապահանջորեն, որքան իր ինքնանկարներում: Նա անընդհատ փնտրել է արտահայտչամիջոցներ՝ հարազատների դիմանկարային կերպարներն արտահայտիչ դարձնելու համար: Այստեղ նկարչուհին ազատ է, անկաշկանդ, ներկայացնում է իր սիրելիներին տարբեր դիրքերում՝ խորանալով նրանց էության մեջ:

Այս դիմանկարների շարքում իր բացառիկ տեղն ու նշանակությունն ունի Լավինիայի հոր՝ նկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի դիմանկարը (1960): Նկարիչը ներկայացված է արվեստանոցում նստած: Նա հորը կերպարանավորել է կենտրոնացված պահին: Այնպիսի տպավորություն է, թե նա հազիվ ընդամենը մի քանի վայրկյանով է նստել: Թեթևակիորեն թեքված ֆիգուրի աչքերում՝ շրթունքներում, նկատվում է պոռթկում: Նկարչուհին կարողացել է հասնել պատկերվածի բնավորության արտահայտմանը: «Կենդանի, երիտասարդ աչքերը դեմքին տալիս են կորովի արտահայտություն, և միայն ալեհեր մազերն ու մի քանի շեշտված խորշոմներն են ընդգծում այդ մարդու ծեր տարիքը»⁸: Այսպիսով, Լավինիան դիմանկարում ստեղծում է հակադրություն՝ հոր ալեհեր մազերի ու խորշոմների և դեռ երիտասարդ աչքերի միջև: Հետնախորքը զարդարում են նկարչի ստեղծած կտավները, որոնք ասես ներկայանում են որպես նրա մուսան ու զավակները:

Լավինիայի քրոջ՝ Զուլեյկայի դիմանկարներում («Զուլեյկայի դիմանկարը» (1971), «Զուլեյկան կարմիր զգեստով» (1971), «Զուլեյկան գրքով» (1982), «Զուլեյկա և Անահիտ» (1987) և այլն) իշխում է կանացիությունը, քնքշությունը: Համեմատելով Զուլեյկայի դիմանկարները ինքնանկարնե-

⁸ Իգիթյան Հ., Մեծագույն բերկրանք է՝ պարկերել մարդկանց (Երեկոյան Երևան, 12.08.1964):

րի հետ՝ նշենք, որ քրոջը պատկերող աշխատանքները քնարական են, օժտված են նրբագույն կանացիությամբ՝ ի տարբերություն Լավինիայի առնական ու խստադեմ ինքնանկարների: Տպավորիչ է հատկապես «Զուլեյկա և Անահիտ» (1987) աշխատանքը: Կիսապառկած՝ ազատ, անկաշկանդ կեցվածքով քույրը կերպարանավորված է ծաղիկներով և նախշերով պատված կապույտ խորքի ներքո, աչքերը խոնարհված: Նրա առջև պատկերված Անահիտ դիցուհու գլխաքանդակը դիմանկարն օժտում է գեղեցկությամբ, կանացիությամբ: Այստեղ կնոջ պառկած դիրքը, գլուխն ու ձեռքը, ծաղիկներով զարդարված ֆոնը աղերսում են աշխատանքը Մատիսի դիմանկարներից մեկին, ուր ևս ներտարածքում պառկած կին է ներկայացված: Այս երկու դիմանկարներում էլ գերիշխող են տաք գույները:



Նկ. 5 Ա. Բաժբեուկ-Մելիքյանի դիմանկարը, 1960 Նկ. 6 «Զուլեյկա և Անահիտ», 1987

Եղբոր՝ Վազգեն Բաժբեուկ-Մելիքյանի դիմանկարում (1975) սեղանի վրա դարսված գրքերի առջև նստած նկարչի կերպարին Լավինիան հուզական ու խոհական արտահայտություն է հաղորդել: Եղբայրը ներկայացված է մտքերի մեջ խորասուզված: Նրա աչքերը դիտողին պատմում են խելացի ու բարի անձնավորության մասին: Դրանցում կա տխրություն, իսկ դեմքին դրոշմված է թախիծ:

Այս շարքի հաջողված գործերից է նաև «Մարիամ և Քրիստ» (1979) զուգադիմանկարը: Հաստ, երկար ու համարձակ վրձնահարվածներով արված այս աշխատանքում Լ. Բաժբեուկ-Մելիքյանն արտահայտել է իր դստեր ու նրա ամուսնու՝ միմյանց հանդեպ տաժած սերն ու կապվածությունը, անկեղծ զգացմունքները:


Լավինիայի հարազատների դիմանկարները կատարված են բարձր վարպետությամբ, նրանք պատկերված են այնպիսին, ինչպիսին իրականում կան:

Բացառիկ են Լ. Բաժբեուկ-Մելիքյանի ինքնադիմանկարները՝ ներկայացված տարբեր իրավիճակներում: Երիտասարդ հասակից մինչև խոր ծերություն նա ինքնադիմանկարներ է կատարել: Այս առումով նրան կարելի է համեմատել Ռեմբրանդտի կամ Սարյանի հետ: Առաջին ինքնանկարն ստեղծել է 1943-ին՝ 21 տարեկանում: Ինքնանկարներում նա վերարտադրել է իր տրամադրությունները, արտահայտել սեփական զգացմունքները: Այստեղ չկա իդեալականացում: Գրեթե ամենուր նկարչուհին իրեն կերպարանավորում է նույն՝ խստադեմ հայացքով: Կերպարային առումով որոշակի նմանություն կարելի է գտնել Լավինիայի և հայտնի գեղանկարչուհի Ֆրիդա Կալոյի ինքնանկարներում: Նմանությունը նկատվում է հայացքներում: Երկուսն էլ իրենց պատկերում են թավ հոնքերով:

Ինքնադիմանկարներում Լավինիան իրեն ներկայացնում է եռանդուն, ոգեշնչված: Աչքերը լի են ստեղծագործական ներշնչմամբ: Օրինակ բերենք 1978-ի ինքնանկարը, որը պատկերում է նկարչուհուն՝ վրձինը ձեռքին, խստադեմ, առնական, եռանդուն, ամբողջովին նվիրված արվեստին: Սև հագուստին հակադրվում է վառ գույնով արված խորքը: Այն միաժամանակ ներդաշնակում է դիմանկարում ներկայացված Լավինիայի՝ նույնքան վառ անհատականությանը:



Նկ. 7. Ինքնադիմանկար, 1978



Նկ. 8. Ինքնադիմանկար խճանկարի ֆոնին, 1982

Տպավորիչ է «Ինքնադիմանկար խճանկարի ֆոնին» ինքնանկարը (1982): Նուրբ գունային անցումներով արված այս աշխատանքին զգացմունքային թափ են հաղորդում հետնախորքում պատկերված՝ լուսապսակներով պատված երկու սրբերի պատկերները: Հիմք ընդունելով Լ. Բաժբեուկ-Մելիքյանի արվեստանոցում գտնվող «Հովակիմ և Աննա» աշխատանքը (2003), որտեղ ներկայացված են նույն սրբերը, «Ինքնադիմանկար խճանկարի ֆոնին» աշխատանքի երկրորդ պլանում ևս ներկայացված են Տիրամոր ծնողները: Փաստորեն, այս ինքնանկարի հետնախորքն օգտագործելով, նկարչուհին տարիներ անց կատարել է «Հովակիմ և Աննա» աշխատանքը: Այս դիմանկարում դրսևորվում է նկարչուհու կապը ազգային ավանդույթների հետ, և սրբերի պատկերում կարելի է զգալ միջնադարին բնորոշ շունչ:

Ուշագրավ են նաև «Ինքնանկար Ն. Ժիլինսկայայի հետ» աշխատանքը (1965), 1976-ի, 1989-ի, 1994-ի, 1995-ի ինքնանկարները, 2000-ի «Ինքնանկար վրձիններով» աշխատանքը: Սրանցում առկա է Լավինիայի մյուս ինքնադիմանկարներին բնորոշ ոգեշնչվածությունը:

1960-ականներին հայ գեղանկարչության մեջ կարևոր դեր է ունենում ժողովրդական արվեստը, որից հաճախ ներշնչված՝ Մ. Աբեղյանի, Մ. Ասլամազյանի, Հ. Սիրավյանի, Ն. Գյուլիքևիայանի, Լ. Բաժբեուկ-Մելիքյանի ստեղծագործություններում գյուղական կենցաղը դառնում է սիրելի թեմա⁹: Նրանք ներթափանցում են առօրյա կյանք, վերաիմաստավորում այն: Լավինիան դասվում է հայ կերպարվեստի այն ներկայացուցիչների շարքին, որոնք այդքան կարևորել են հասարակ գյուղացու կերպարն արվեստում: Լավինիան իր կյանքի ընթացքում միշտ կապված է եղել հայկական գյուղի հետ: Հողի աշխատավորների՝ նրա վրձնած դիմանկարները հիացնում են անմիջականությամբ: Դրանք պատմում են այդ գյուղի մարդկանց, նրանց նիստուկացի մասին: Նկարչուհին նշել է. «Իմ սիրելի թեմաներից մեկը գյուղն է: Ես սիրում եմ հայ գյուղի խստաբեր, գեղեցիկ բնանկարը, առանձնապես սիրում եմ գյուղի մարդկանց իրենց պարզությամբ, կենսահաստատ ուժով, անմիջականությամբ, պլաստիկ գեղեցկությամբ, արևահար ու հողմահար դեմքով: Չի կարելի անտարբեր լինել այդպիսի մարդկանց նկատմամբ, և մեծագույն բերկրանք է նրանց պատկերելը»¹⁰:

⁹ Տե՛ս **Степанян Н.** *Искусство Армении, М., 1989, с. 255.*

¹⁰ Տե՛ս **Իգիթյան Հ.**, *նշվ. աշխ., էջ 3:*

Տպավորիչ են հատկապես Լավինիայի՝ գյուղացի կանանց պատկերող դիմանկարները. յուրաքանչյուր կերպար ամփոփում է իմաստուն, փորձառու, բարի, հոգատար, եռանդուն, աշխատասեր, հարազատին նվիրված, հոգեկան մաքրությամբ աչքի ընկնող հայ գեղջկուհու: Նա ընդգծել է հողի աշխատավորի պարզությունն ու սրտաբացությունը: Այդ կանայք որքան բնական են, նույնքան էլ գեղեցիկ են: «Նրանք առանց դիմափոշու են, առանց շրթների, անսեթևեթ, պարզ, բնական, բնության պես գեղեցիկ»¹¹: Օրինակ, «Լուսազյուղցի աղջկա դիմանկարը» կտավում (1972) ներկայանում է առանց սեթևեթանքի, բնական գեղեցկությամբ փայլող գյուղացի աղջիկը: Հեզությունը, պարզությունն ու պարկեշտությունն են բնութագրում նրան: Լ. Բաժբեուկ-Մելիքյանը, կերպարն օժտելով գեղջկուհուն բնորոշ անկեղծությամբ, նրան ներկայացրել է դեմքի գեղջկական անմեղ ու միամիտ արտահայտությամբ. աղջկա հեռուն հառած աչքերում կա երազկոտ արտահայտություն: Այդ աչքերը շատ բան են պատմում քնքուշ ու բարի այս գեղջկուհու մասին: Այս խմբի աշխատանքների մեջ առանձնանում է նաև խմբակային դիմանկարի մի հիանալի օրինակ՝ «Քուչակ գյուղի ծեր կանայք» ստեղծագործությունը (1960)¹²: Ներկայացված են երեք գեղջկուհիներ: Կեցվածքների պարզությունն ու բնականությունն ընդգծում են այն, որ Լավինիան ամենևին իր առջև նպատակ չի դրել գեղեցկացնել իրականությունը: Դիմանկարում չկա իդեալականացման ձգտում: Նկարչուհին ներկայացրել է այս տարեց հարևանուհիներից յուրաքանչյուրի բնավորությունը, անհատականացրել կերպարները: Սակայն նրանցից յուրաքանչյուրն իր մեջ ամփոփում է հայ տնարար, ազնիվ ու աշխատասեր գեղջկուհու հավաքական կերպարը: Ռ. Հովհաննիսյանը հետևյալ կերպ է բնութագրում այս դիմանկարում ներկայացված կանանց. «Մայրական ու կանացի խորհուրդ ունեն նրանք իրենց պղտորված, ջրակալած աչքերում, տարիների վաստակ՝ դեմքի կնճիռներում ու միամտորեն ծնկներին դրած բրոնզագույն ձեռքերում»¹³:

¹¹ Մատինյան Զ., *Կյանքի հավաքամբը* (Հայրենիքի ծայն, 22.10.1969):

¹² Լավինիայի դուստրը՝ Մարիամը, պատմում է, որ այս կտավն ստեղծելիս մայրն այնքան էր ոգեշնչված տարեց գեղջկուհիների կերպարներով ու այնպես էր ցանկանում վերջիններիս արագ տպավորել կտավի վրա, որ մի կերպ, կոնֆետով «կաշառելով», համոզում էր նրանց հանգիստ նստել, քանի որ նրանք շտապում էին՝ ավարտելու կիսաթողած տնային աշխատանքները (17.11.2011):

¹³ Հովհաննիսյան Ռ., Ե՛վ անհատականությունները, և՛ մղումները (Սովետական արվեստ, 1962, N 10, էջ 27):

Եթե համեմատենք Լավինիայի ծեր կանանց կերպարները, օրինակ, Մարիամ Ասլամազյանի՝ տարեց կանանց պատկերող աշխատանքների հետ, ապա կտեսնենք, որ, ի տարբերություն Լավինիայի, երկրորդի կերտած կերպարներում առկա է թախիծ, վիշտ: «Լուրեր ռազմաճակատից» (1943), «Հիվանդ բաջին» (1943), «Տատիկի դիմանկար» (1943)՝ ծեր հայուհիներին պատկերող այդ գործերում Մ. Ասլամազյանը նպատակ ուներ այս կանանց կերպարների միջոցով ցույց տալու 1940-ականների համաժողովրդական վիշտը և ծանր կյանքի կնիքը՝ դրոշմված նրանց տառապալից դեմքերին: Մինչդեռ Լավինիայի վերոհիշյալ, ինչպես նաև տարեց գեղջկուհիներին պատկերող այլ ստեղծագործություններ իրենց մեջ ամփոփում են ժամանակի խաղաղ ու ծաղկուն կյանքը, լավատեսական տրամադրությունները:



Նկ. 9 «Քույակ գյուղի ծեր կանայք», 1960

Այս խմբից են նաև «Հնաբերդ գյուղի սովխոզի բանվորները» խմբակային դիմանկարը (1959)¹⁴, «Տատը թոռան հետ» ստեղծագործությունը (1968), «Հայրապետ և Արևիատ Խաչատրյաններ», «Ծաղիկ Թումանյան», «Նորավանցի Ուստա Սեդրակն իր թոռան հետ» (նշվածները 1960-ականներին են ստեղծվել), կիրովականցի Բավական Մկրտչյանի դիմանկարը (1977) և այլն:

¹⁴ «Հնաբերդ գյուղի սովխոզի բանվորները» խմբակային դիմանկարը, որը պատկերում է չորս աշխատավոր երիտասարդների, իր հորինվածքային պարզությամբ մոտ է «Քույակ գյուղի տարեց կանայք» դիմանկարին:

Այսպիսով, Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի դիմանկարների գլխավոր արժանիքը մարդուն պարզ և անպաճույճ ներկայացնելն է և կերպարը հոգեբանական վերլուծության ենթարկելը:

ПОРТРЕТНАЯ ЖИВОПИСЬ ЛАВИНИИ БАЖБЕУК-МЕЛИКЯН

МАНУЧАРЯН С.А.

Резюме

Лавиния Бажбеук-Меликян внесла большой вклад в развитие армянской портретной живописи. Портреты художницы делятся на четыре группы: портреты друзей-художников, портреты родственников, автопортреты, портреты крестьян.

Для портретов художницы характерно не только изображение внешних черт натурщика, но и выражение его душевного состояния, внутреннего мира. В психологических портретах Л. Бажбеук-Меликян нет идеализации: они выразительны и искренни.

PORTRAITS IN LAVINIA BAZHBEUK-MELIKYAN'S ART

S. MANUCHARYAN

Abstract

Armenian paintress Lavinia Bazhbeuk-Melikyan has a great contribution in the field of Armenian portraiture. Lavinia's portraits are divided into four groups: a) portraits of artists, b) relatives' portraits, c) self-portraits, d) peasants' portraits. Both the preservation of the sitter's external qualities and expression of his/her state of mind are typical for artist's portraits. Thus Lavinia makes psychological analysis, represents sitters' emotions, and reveals their inner world and character. There is no idealization in these psychological portraits. All her portraits are expressive; clarity, sincerity and directness are peculiar to them.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԽՆԿԻԿՅԱՆ Օ.Ս.

Ուրարտուի տրոհման և անկման շրջանը, որը միաժամանակ Երվանդյան արքայատոհմի պատմության թատերաբեմ իջնելու, միասնական պետություն ստեղծելու և այն ամրապնդելու ճանապարհին շրջադարձային նշանակություն ունեցավ, ստվերոտ կողմեր է պարունակում: Նոր իրավիճակների ձևավորման մեջ, համաձայն առավել շրջանառվող տեսակետի, որոշիչ դերը պատկանել է կիմերա-սկյութական-մարական գործոններին ու տեղական ցեղերին: Հետազոտողների կարծիքով, դա կարող էր տեղի ունեցած լինել նախքան մարա-լիդիական պատերազմը (590/91–28.V.585 թթ.): Ենթադրվում է, որ մարական զորքը չէր կարող արևմուտք շարժվել՝ թիկունքում թողնելով անկախ ուրարտական տերությունը. Ի.Մ. Դյակոնովի կարծիքով, Ուրարտուն կարող էր Մարաստանին ենթարկված լինել դեռևս 609–605 թթ.¹: Արտահայտվել է և մեկ այլ տեսակետ, համաձայն որի, Արարատյան դաշտում ամրացած ուրարտական թագավորությունը կարող էր կործանված լինել VI դ. 20-ական թվականներին. Տուշպայից արշավող և իր կազմում սկյութական զորաջոկատ ունեցող ոչ մարական հզոր մի տերութ-

¹ **Дьяконов И.М.** Последние годы Урартского государства по ассирио-вавилонским источникам [Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 1951, № 2, с. 30–39]. Թեյշեբաինի առումը տեղադրելով 593–590 թթ. միջև ընկած շրջանում՝ հեղինակը դժվարանում է բաժանել Բարնեպի և Ուաթսոնի կարծիքը այդ ժամանակը VII դ. վերջ տանելու վերաբերյալ: Արևմուտքում ընդունում են, որ **Մարաստանը** կործանել է Ուրարտուն 640–619 թթ., իսկ 609–608 թթ. Ուրարտուն ոչ թե պետություն էր, այլ՝ աշխարհագրական տարածք. տե՛ս **Дьяконов И.М.** История Мидии, М., 1956, с. 318, նաև՝ **Գրիգորյան Ս.**, Գրիգոր Ղափանցյանը ուրարտագետ [Պարմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2012, N 2, էջ 188], Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 336–337:

յան բանակի կողմից²: Ասվածից հետևում է, որ Տուշպան թողնելուց հետո³ Ուրարտուի վերջին գահակալները իշխել են Արարատյան դաշտի մի մասն ընդգրկող փոքր թագավորությունում մինչև 525/21 թ.: Կարծիքներից ո՞րն է առավել հիմնավորվածն ու ընդունելին: Փորձենք հարցին մոտենալ Արարատյան դաշտի հուշարձանների հետազոտությունների արդյունքները հիմք ընդունելով, դրանք համադրելով պատմական իրադարձությունների և այլ աղբյուրների տվյալների հետ:

Էրեբունի – Արգիշտի I-ի կողմից 782 թ. հիմնադրված այս բնակավայրում արքան բնակեցրել է Խաթե և Ծուպանի երկրներից 783 թ. գերեվարված բնակչության (29284 մարդ) մի մասին (6600 զինվոր), որը համարվել է Սարգուր II-ի կողմից 751/750 թթ. մերձասորեստանյան, մերձուրմյան, Բաբելոն և հարակից տարածքներ կատարած արշավներից գերեվարված բնակիչներով: Դրա հետևանքով Ազա երկրում (հիմնականում Հոկտեմբերյանի շրջանը՝ ներառյալ Երևանի տարածքը⁴) ձևավորվել է խայտաբղետ կազմ ունեցող բնակչություն, որը բնակեցրել է նաև Արին-բերդի հյուսիսակողմի արևելյան և արևմտյան մասերի բարձունքները⁵: Բնական է, որ նորեկ խմբերի մշակույթները պետք է իրենց արտացոլումը գտնեին տեղում, և այս տեսակետից Էրեբունիում կատարված պեղումների շերտագրական պատկերը մեծ կարևորություն է ներկայացնում:

Միջնաբերդի գագաթամասում և հյուսիսակողմում կատարված հետախուզական բնույթի պեղումների ընթացքում բացված 4 մ հզորություն ունեցող մշակութային շերտի ստորին հորիզոնում հայտնաբերվել են տեղական

² **Հմայակյան Ս.Գ.**, *Թեյշեբաինի արշավող բանակի երթուղին («Էրեբունի-Երևան»*, գիտական նստաշրջանի հիմնադրույթներ, Ե., 1998, էջ 10-12): Հեղինակը Ռուսա IV-ի գահակալության 525-521 թթ. ժամանակը ստացել է հիմք ընդունելով Կարմիր-բլուրից հայտնաբերված աղյուսակների տվյալները՝ վերջին արքաներից յուրաքանչյուրին հարկացնելով 20-ական տարի:

³ Հավանաբար, Տուշպան թողնելու տարեթիվ է դիտվում 547-ը, որը վկայված է «Նաբոնափդի» ժամանակագրության մեջ [տե՛ս **Հմայակյան Ս.Գ., Գրեկյան Ե.Հ.**, Վանը հնադարում (ՊԲՀ, 2010, N 3, էջ 3-19)]: **Ե. Գրեկյանը** իր մեկ այլ աշխատության մեջ (Վանի թագավորության անկման խնդրի շուրջ, «Հայկազունիներ», Ե., 2013, էջ 64-77) հանգում է այն կարծիքին, որ՝ «...տերության կործանման գործում պետք է որ կարևոր դեր ունենային «էթիոնցիները», թերևս իրենց՝ սկյութների հետ միասին»: Հմմտ.՝ **Плютовский Б.Б.** Ванское царство, М., 1954, с. 116.

⁴ **Арутюнян Н.В.** Новые урартские надписи, Е., 1966, с. 96-97.

⁵ **Лосева И.М.** Раскопки цитадели урартского города Ирпуни (Краткие сообщения Института истории материальной культуры, 1955, вып. 58, с. 46-52).

մշակույթին պատկանող երկաթեղարյան խեցանոթների մեծաքանակ բեկորներ: Այս շերտի վրա տարածվում է 220 սմ հզորությամբ երկու փուլ ներկայացնող ուրարտականը: Առաջինի մեջ են մտնում պարսպից դուրս գտնվող աստիճանահարթակների վրա կառուցված կացարանները, որոնք պատկանում էին Էրեբունիի միջնաբերդի կառուցման սկզբնական շրջանում պարիսպներից դուրս բնակվող բնակիչներին, որոնք և պատրաստել են 25-30 մ լայնությամբ աստիճանահարթակ բնակարանների կառուցման համար: Շերտում բացված 10x4 մ չափերի կառույցը պատկանել է ներկարարի կամ նկարչի. այստեղ գտնվել է կավե դրոշմակնիք (ոչ ուրարտական)՝ մարդակերպ աստվածության պատկերով: Այս շերտը ծածկված է ռազմական ընդհարման հետևանքով առաջացած հրդեհից և ավերածությունից գոյացած մոխրով ու ածխով: Պեղող հնագետի՝ Ֆ. Տեր-Մարտիրոսովի կարծիքով, այդ ավերածությունները և երկրորդ պարսպապատի կառուցումը եղել են Սարդուր II-ի օրոք տեղ գտած ուրարտական զինուժի և տեղի բնակչության միջև եղած ընդհարումների ժամանակ:

Ամրոցի II փուլը սկսվել է բլրալանջին երկրորդ պարսպի կառուցումից հետո, որի վկայությունը գունազարդ խեցանոթների բեկորներն են. դրանց շագանակագույն մակերեսը զարդարված է կարմիր ներկով ստացված գոտիներով: Նմանները իրենց զուգահեռներն ունեն Կապադովկիայում, և հավանական է, որ կապված են Սարդուր II-ի արշավանքների հետ: Այդ խեցեղենի հետ գտնված բաց կանաչավուն մակերես ունեցողները բնորոշ են նոր ասորեստանյան ժամանակաշրջանին: Այդ նյութերը Էրեբունիում կարող էին հայտնվել Սարդուր II-ի՝ Մանա, Բաբիլու, Ուրմե և արևմուտք (Կոլխիդա և Մելիտենե) ուղղությամբ կատարած արշավներից հետո (մոտավորապես 764-735 թթ. միջև ընկած շրջանում): Նորույթ են նաև շագանակագույն ու սպիտակ մակերեսով բեկորները, որոնք բնորոշ են փոքրասիական արտադրանքին:

Հաջորդ՝ առավելագույնը 1 մ հզորություն ունեցող III շերտը նույնպես երկու ենթաշերտից է կազմված: Դրանցից ստորինը (պարզության համար նշենք IIIա-Խ.Օ.) վառ շագանակագույն երանգ ունի: Այն բացվել է 80 սմ բարձրությամբ պահպանված պաշտպանական պատից 4 մ հեռավորության վրա: Այդ պատի տակ ձգվում է մոխրով և ածխով հագեցած ուրարտական շերտը, որն անմիջապես տարածվում է հրդեհից կարմրած նշված կավաշերտի վրա: Հայտնաբերված նյութերը՝ հիմնականում կարմիր մակերեսով

խեցանոթների բեկորներ, բնորոշ են ուրարտական ձևերին՝ դրանցից տարբերվելով ոչ թե անգորբապատ, այլ՝ կարմիր ներկած գույնով: Հատկանշական են նաև շրթին արված, ավելի մուգ երանգ ունեցող, ներկած գոտիները, որոնք բնորոշ չեն ուրարտականին: Շերտում շատ են հայտնաբերվել շագանակագույն մակերեսով փիալաներ և կտրված զարդով, սև մակերես ունեցող բեկորներ: Հետևելով նախորդ հետազոտողներին՝ պեղող հնագետը այս շերտը վերագրում է աքեմենյան շրջանին՝ միաժամանակ նշելով, որ այստեղ գտնվել է կարիճի պոչով մարդակերպ աստվածության պատկեր կրող դրոշմակնիք և երկաթից պատրաստված պոչուկավոր ու խողովակաձև կոթառին ցցոն ունեցող բրոնզյա երկթև նետասլաք: Հաշվի առնելով հայտնաբերված նյութերի տեսականին ու դրանց առանձնահատկությունները՝ հետազոտողը նշում է, թե ուրարտական վերջին շրջանը ամբողջությամբ հետազոտված չէ: Ինչ վերաբերում է վերին ենթաշերտին (IIIբ-Խ.Օ.), ապա այդտեղ գտնվել են աքեմենյան և հելլենիստական շրջանի խոշոր կառույցներ, մարմարե արձանի մաս և այլն⁶:

Էրեբունիի շերտագրական փոստրակի վերջին՝ III շերտի մանրամասներին անդրադառնալը թույլ է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մասին, որի հնարավորությունը սկզբնական շրջանում կատարված և ավարտին չհասցված պեղումները չէին տալիս: Դրանց ընթացքում բացվել էին աքեմենյան շրջանին վերագրվող սյունասրահը (կառույց № 1), դրան միացող փոքր սենյակը (կառույց № 3) և կենտրոնում աշտարակաձև կառույց ունեցող (№ 4) փոքր բակը, որի հարավակողմյան պատի մոտ նեղ միջանցք կա: Սյունասրահում բացված է և կավակերտ նստարան, որը հարավակողմում 3 մ երկարություն ունեցող, աստիճանաձև զոհարանին է միանում. այդ մանրամասները ցույց են տալիս կառույցի ծիսական բնույթը: Այդ մասին է փաստում նաև նստարանի տակ պատրաստված, հորից դեպի կառույցի կենտրոնը ձգվող 5,8 մ երկարություն ունեցող «առվակը»: Կառույցում շատ են գտնվել կարմիր գույնի, ինչպես և դեղնավուն կավից, բայց վարդագույն անգործով ծածկված խեցանոթների բեկորներ: Շատ են նաև կտրված զարդերով, գորշ մակերես ունեցողները: Հայտնաբերվել են նաև ծածկի մասեր: Առանձին կարևորություն է ներկայացնում սյունասրահի հարավարևելյան անկյունում հայտնաբերված սանձի

⁶ Тер-Мартirosов Ф. Раскопки на северном склоне крепости Эребуни [Հին Հայաստանի մշակույթը (այսուհետև՝ ՀՀՄ), հ. XIII, Ե., 2005, էջ 147-153]:

մասը, որն իրանական ծագում ունի. չի բացառվում մարական ցեղին պատկանելը (ըստ Բ. Պիոտրովսկու և Ա. Իեսսենի), ինչը և հեղինակի կարծիքով, խոսում է ամրոցի վերջին շրջանում այլ էթնիկ խմբերի առկայության մասին: Ամրոցի հյուսիսային մասում վերաշինված պատ է բացվել, որի մոտ գտնվող սենյակից հայտնաբերվել են կոկաձ ու կոպիտ խեցանոթների բեկորներ, մոխիր, ածուխ, այրված ոսկորներ, ծածկի մասեր, իսկ մուտքի արտաքին կողմում պահպանվել են ժամանակավոր կառույցների հետքեր. այդպիսիք եղել են և սյունասրահի հյուսիսային պատի արտաքին կողմում: Այդ կառույցները թշնամու սպառնալիքի ժամանակ են ստեղծվել: Հայտնաբերված խեցանոթների բեկորները երեք խումբ են ներկայացնում. ա – կարմիր, կոկաձ ուրարտական, բ – մուգ գորշավուն մակերեսին հատվածազարդեր ունեցողներ և գ – օժանդակ գույն, հաստ պատերով ու վարդագույն մակերես ունեցողներ: Գերակշռող մեծամասնությունը փիալաներ են, կարմիր, կիսագնդաձև քրեղաններ ու փռված իրանով թասեր, ափսեներ. մեկն ունի եգիպտական նոր թագավորության շրջանի տեսակ հիշեցնող, հետ դարձված գլխով, բադակտուց ձևի բռնակ: Էրեբունիից Թեյշեբաինի տարված իրերը ցույց են տալիս, որ VII դ. Էրեբունին սկսել է անկում ապրել, բայց կյանքը շարունակվել է VI-V դդ.⁷:

Ակնհայտ էր, որ ժամանակագրության ու մշակութային ժառանգականության և ընդհանրապես Ուրարտուի պատմության վերջին շրջանին առնչվող հարցերի հստակեցման համար առաջնային նշանակություն էին ստանում սյունասրահի, Խալդիի տաճարի և շրջակայքի պեղումները, որոնք և կատարվեցին 2008-2010 թթ.: Ելնելով պեղումների արդյունքներից՝ հետազոտողները հանգեցին այն եզրակացության, որ Արգիշտի I-ի հիմնադրած տաճարը գործունեությունը դադարեցրել է VII դ. II քառորդում, բայց կյանքը միջնաբերդում չի դադարել: Ենթադրվեց, որ Թեյշեբաինի կործանումից հետո Էրեբունին կրկին հայտնվել է ուրարտական իշխանությունների ուշադրության կենտրոնում, և կառուցվել է 30 սյունանոց «ուշ ուրարտական» անվանված սյունազարդ դահլիճը, որի որոշ առանձնահատկություններ բնորոշ են մարական ճարտարապետությանը: Դա, հեղինակների կարծիքով, VII դ. վերջերին Ուրարտուի վրա արտաքին ազդեցությունների մասին

⁷ Лосева И.М. Новые археологические исследования отряда ГМИИ им. А.С. Пушкина на холме Арин-берд [Советская археология (այսօրեպիս՝ СА), 1958, № 2, с. 180-195].

կարող է վկայել, բայց հիմքեր չկան պնդելու, թե մարերը գրավել են Արաքսից հյուսիս գտնվող տարածքները, իսկ սյունասրահում հետադարձական շրջանի հետքեր չեն դիտվում⁸:

Այս կարծիքը, երբ համադրվում է պատմական իրավիճակի հետ, հարցականներ է առաջացնում, որոնց պատասխանը կարող էին տալ տաճարի և սյունասրահի շրջակայքում շարունակվելիք պեղումները, որոնք և կատարվեցին ֆրանս-հայկական արշավախմբի կողմից: Ակնհայտ դարձավ, որ VII դ. կես–VI դ. սկիզբն ընդգրկող կարճ ժամանակահատվածում, որը համընկնում է ուրարտական դարաշրջանի վերջին փուլերին և հաջորդ դարաշրջանի սկզբին, պեղված տարածքում կարևոր շինարարական աշխատանքներ են իրագործվել: դրանք փոխել են նախկին կառույցների նշանակությունը: Առաջին հերթին, ուշադրություն է գրավում Խալդիի տաճարի մուտքի փակումը աղյուսե զանգվածեղ պատով: Նույնը դիտվում է և տաճարի արևելակողմում ձգվող միջանցքում (պեղամաս D), ինչպես և հարավակողմի համանման շինությունում (A1-A3 բաժիններ), որտեղ նույնպես աղյուսաշեն կառույցներ կան, իսկ A1 բաժնում խորշ է բացվում: Այդ վաղ շրջանի կառույցներից (նախքան նոր շինաշխատանքները) հայտնաբերված խեցեղենը (IIa-IIb փուլեր) հիմնականում ներկայացված է ուրարտական մուգ կարմիր, անգորպապատ արտադրանքով (փիլաներ, սափորներ, սկահակ-գավաթներ և այլն): Ուրարտական շրջանին է պատկանում նաև տաճարի առջև, դեպի հյուսիս ընդարձակվող լայն հրապարակի համար հարթ տարածքի ստեղծումը: Հայտնաբերված նյութերը թվագրվում են VII դ. կես – հաջորդ տասնամյակներն ընդգրկող ժամանակահատվածով (VII դ. վերջ), իսկ տաճարի առջևի հարթակի ստորոտի I-IIa փուլերը՝ հետադարձական (VII դ. վերջ – VI դ. սկիզբ) շրջանով⁹:

Ի՞նչը կարող էր նման փոփոխությունների պատճառ լինել: Խալդիի տաճարի գործունեության դադարեցումն առանց արտաքին ուժի վկայում է ուրարտական վարչախմբի ղեկավար դերի ավարտի մասին: պատճառը այդ կազմի՝ Թեյշեբաինի տեղափոխվելը կարող էր լինել, ուր և գնացել են՝ տանելով ծիսական ու կարևոր, արժեքավոր համարվող նյութերը, իսկ շար-

⁸ D. Stronach, H. Thrane, C. Groff and A. Farahani with a contribution by Yervand Grekian, *Erebuni 2008-2010* (Aramazd, vol. V, № 2, E., 2010, pp. 99-128).

⁹ F.F. de Clairfontaine, S. Deschamps, *Erebuni, La ceramique ourartéenne et post-ourartéenne du secteur du temple de Haldi (milieu VII e-début VI e siècle avant J.-C)* (Aramazd, vol. VII, 2012, № 1, E., pp. 105-125, 150-151).

քայինների մի մասը երևի մնացել է պարիսպներին կպած իրենց կացարաններում, որոնք հետո ավերվել են:

Ուվքե՛ր են եղել այդ փոփոխությունների հեղինակները: Այս կարևոր հարցի պատասխանը ստանալուն օգնում են ուրարտական հարթակի վրա կառուցված մեծ սյունասարահի, տաճարի մուտքից արևելք ու հարթակի ստորոտում բացված կառույցից (E և F բաժիններ) հայտնաբերված նյութերը (I-II a փուլեր), որոնք բնորոշ են հետուրարտական դարաշրջանին (VII դ. վերջ–VI դ. սկիզբ): Դրանք նման են նախորդներին, բայց գերիշխողը հասարակ, մուգ գույնի (հիմնականը՝ գորշ) խամրած մակերեսով խեցեղենն է՝ խազած ու կտրված զարդագուտիներով. կան և ծալքավորված իրանով քրեղաններ (խեցեղենի № 1, 4 խմբեր), որոնք սովորական են տեղի մշակույթի համաժամանակյա համալիրներում: Ինչ վերաբերում է ուրարտական ձևերին, ապա դրանք ավելի անփույթ են պատրաստված և առանձնանում են մակերեսի բաց գույնով, երբեմն՝ կարմիր ներկած: Սյունասարահի կառուցումը այս ժամանակին է առնչվում. այն ընդգրկում է հետուրարտական և աքեմենյան դարաշրջանների միջև ընկած հատվածը, որը մարականին է կապվում ու տեղավորվում VII դ. վերջ–VI դ. սկիզբ շրջանում. C14 անալիզների արդյունքները 550 թ. այս կողմ չեն անցնում: Այս կարևոր տվյալները զգալիորեն հարստացնում են մեր գիտելիքները առաջադրված խնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, դրանք որոշ հարցեր են առաջացնում, որոնց պատասխանը դեռևս թեական տարրեր է պարունակում: Առաջին հերթին, IIIb փուլում կարմիր անգորբապատ (այսպես կոչված՝ «պալատական») խեցեղենի կտրուկ աճը (նույնը և հետախուզական տեղամասի IIIa ենթաշերտը) ենթադրել է տալիս, որ ուրարտական տարր է վերաբնակեցվել, որով տերության վերջին արքաները, թվում է, թե փորձել են բարձրացնել էրեբունիի պաշտպանունակությունը: Այդուհանդերձ, ուրարտական վերնախավը սկսում է լքել միջնաբերդը (սկսած IIIa փուլից և ապա հետագայում, աստիճանահարթակի ստորոտի I-IIa փուլեր C,D,E բաժիններում), որի մասին են վկայում ուրարտական մուգ կարմիր անգորբապատ խեցեղենի նվազումը և անորակությունը, բաց մակերես ունեցող խեցեղենի աննախադեպ աճը, կտրած զարդագծերով խեցանոթների բնորոշ դառնալը, ինչը ցույց է տալիս տեղական՝ խայտաբղետ կազմ ունեցող բնակչության գերիշխող դառնալը և դրա, մարական փոքր տարրի առկայությամբ, ուրարտական վարչակազմին

դուրս մղող ուժ լինելը¹⁰:

Արգիշտիխինիլի–776 թ. Արգիշտի I-ի կողմից հիմնադրված այս խոշոր քաղաքը, որը Էրեբունիից մոտավորապես 60 կմ արևմուտք է, օղակել է Արմավիր և Նոր-Արմավիր գյուղերի ծայրամասերում գտնվող՝ 52 մ և 76 մ բարձրությամբ բլուրների վրա կառուցված միջնաբերդերը, որոնցում սկզբնապես կառուցվել են պալատական, տնտեսական և տաճարական համալիրները, Սարգուր II-ի և հաջորդ արքաների օրոք շրջափակվել են աստիճանահարթակների վրա կառուցված, II և III շարքով ձգվող պարիսպներով¹¹: Դրանց միջև գտնվող տարածքներում, տեղական թուլացման ժամանակ, կացարաններ են կառուցվել, որոնք երկու փուլի են վերագրվում: Վաղ շրջանին են պատկանում I աստիճանահարթակի վրա, I և II պարսպապատերի միջև առավել խնամքով և նախագծումով պատրաստվածները. ենթադրվում է, որ դրանք հանդես են եկել Թեյշեբախինի կառուցումից հետո, երբ Արգիշտիխինիլի վերնախավը նորակառույց քաղաքն է տեղափոխվել: Ժամանակաշրջանով այս կառույցների հետ են կապվում նաև պալատական համալիրի կենտրոնական բակի հյուսիսակողմյան պատի երկարությամբ կառուցված, իրարից միջնապատերով անջատված սենյակները, որոնց դռները դեպի փոքրացված բակն բացվել են: Հավանական է, որ գույքով աղքատ այդ սենյակներում զինվորներ են բնակվել: Հավանաբար, այս ժամանակ է Ռուսա III-ի կողմից պատրաստվել 1432 կապի տարողությամբ (այն 5 անգամ պակաս տարողություն է ունեցել քան Էրեբունիին) շտեմարանը, որը պետք է ապահովեր բնակչության և զինուժի կարիքները:

¹⁰ Առկա փաստերն, ըստ իս, բավարար չեն տարածքի նվաճումը մարերին վերագրելու համար. Խալդիի տաճարի «փակումը», սյունասրահի սրբեղծումը և «Հրո» մեծ ու փոքր տաճարների երևան գալը կարող էին պայմանավորված լինել բնակչության՝ օտար վարչակազմի և նրա աստծո հանդեպ տաճած անբարյացակամությամբ: Դա համահունչ է միասնական և ամուր տերություն ստեղծելու նպատակ ունեցող Կիաքսարի գործունեությանը, որն ամեն կերպ կխրախուսեր նման վերաբերմունքի դրսևորումները՝ ազատություն տալով զրադաշտությունը տարածող մոգերի գործունեությանը. «Հրո» մեծ և փոքր տաճարների երևան գալը, կրկին կենտրոնի դեր ստանձնած Էրեբունիում (սյունասրահի առկայությունը տաճարներին զուգահեռ). կարող է այդ վկայել: Այս մանրամասները կարող են խոսել և մարերի ունեցած գերակա դերի և հայերի հետ դաշնակցային հարաբերությունների մասին: Հմմտ. **Пиотровский Б.Б.** *Искусство Урарту*, Л., 1962, с. 20-23.

¹¹ Մանրամասները տե՛ս **Мартirosян А.А.** *Архитектурные памятники Урарту*, Е., 1974; **Аракелян Б.Н.** *О некоторых результатах археологического изучения древнего Армавира* (ՊԲՀ, 1969, № 4, էջ 157-173).

Այս փուլի վերջում է հանդես եկել նաև ամրոցի արևելակողմի շքամուտքի անմիջապես առջևում կառուցված մետաղագործի արհեստանոցը, որի համար օգտագործվել են նույնիսկ լքված պալատական համալիրի որոշ շինություններ, ինչը դյուրացրել է հակառակորդի՝ ամրոց մուտք գործելու հնարավորությունը: Այս ձևափոխությունները խոսում են ամրոցում տիրող ամենաթողության, բարձիթողի վիճակի մասին: Այդ ժամանակ է, որ երկրորդ աստիճանահարթակի վրա՝ II և III պարսպապատերի միջև երևան են գալիս մանր ու միջին քարերից և աղյուսներից, անփույթ կառուցված հյուղակներ, որոնց գույքը ավելի քան աղքատիկ է: Ներկայացված պատկերը (բացառությամբ ուրարտականի հետ կապ չունեցող հրդեհված շերտի. այդ մասին տեղեկացրել է Ի. Կարապետյանը, որի համար շնորհակալություն եմ հայտնում) կրկնվում է և արևելյան միջնաբերդում, որտեղ հետագա կառույցները բավական խճողված շերտեր են ստեղծել: Միջնաբերդերի գոյության ժամանակ կյանքը շարունակվել է միջնաբերդերի միջև ու անմիջապես դրանց շուրջ կառուցված, առանձնատներից կազմված ներքին քաղաքում. այդ առանձնատներից մի քանիսը փոխել են իրենց տերերին, բայց բոլորի ճակատագիրը գրեթե նույնն է եղել. ավերածություններ ու տարբեր սենյակներում դիտվող հրդեհի հետքեր: Այն ոչնչացրել է նաև շտեմարանում մնացած հացահատիկի պաշարը և ճարակել աստիճանահարթակների վրա կառուցված բնակարաններն ու մետաղագործի արհեստանոցը, սակավաթիվ զինվորների կացարանները և այլ կառույցներ: Դատելով հյուսիսային մուտքի մերձակա տարածքում, ինչպես և մառանի հետ հաղորդակցվող № 19 սենյակից հայտնաբերված երկու կանանց կմախքներից, որոնցից մեկը սպանվել է «սկյութական» կոչված նետասլաքով, կարելի է ասել, որ հարձակվողների շարքերում եղել են նման նետասլաքներ գործածողներ: Այս սենյակի մերձակա տարածքում, կոտրված կարասի բեկորների միջև, հայտնաբերվել է 10-12 տարեկան աղջնակի կմախք, իսկ 2-3 տարեկան երեխայի կմախք գտնվել է մետաղագործի արհեստանոցում, փված պատի քարերի և աղյուսների տակ: Ասել, սակայն, թե Արգիշտիխինիլին կործանող հիմնական ուժերը սկյութներն են եղել, ճիշտ չէ: Քաղաքի անկման պատկերը հստակեցնելու տեսանկյունից կարևորվում են F բլրի վրա կատարված աշխատանքները: Արևելյան միջնաբերդից մոտ 1 կմ հարավ-արևմուտք գտնվող այս տարածքում բացված շերտագրական խրամատից հայտնաբերվել են անմիջապես հետուրարտական շրջանի նյութեր, այդպիսիք պարունակող դամ-

բարաններ: Դրանցից մեկում (№ 2) գտնվել են ուրարտական արտադրանքի ձևերը կրկնող, բայց՝ նարնջագույն կամ մուգ անգորով, ինչպես և սև, բոսոր ու վարդագույն երանգներով խեցանոթներ, որոնք կրկնում են շերտագրական խրամատից հայտնաբերվածներին: Դրանց հետ գտնվել են կարմիր, սև, շագանակագույն ու բոսոր գոտիներով զարդարվածներ, ինչպես և փոյուզիականներին մերձ, սև ու կարմիր գույներով ստացված գունազարդ նմուշներ: Կարևոր է այն հանգամանքը, որ դրանք նման են և արևմտաիրանական (Հասանլու, Զիվիյե և այլն) նյութերին. Հասանլու III B եռանկյունաձև գունազարդերով խեցանոթները, թվագրվելով 637 ± 28 թթ., մի կողմից, կապվում են Սիակ B-ի ($600-579$ թթ.) և Զիվիյեի (611 ± 56 թթ. և 610 ± 45 թթ.) նյութերին, իսկ Զիվիյեն կապվում է Սակկըզի գանձին, որը թվագրվում է $625-600$ թթ.: Այս փաստերը, ինչպես մատնանշել է Հ. Մարտիրոսյանը, ցույց են տալիս, որ Արգիշտիխինիլիում ևս ուրարտական իշխանությունը դադարել է VII դ. վերջ–VI դ. սկիզբն ընկած ժամանակահատվածում, ինչը համահունչ է Էրեբունիի տվյալներին: Այս տեսակետից կարևորվում են նաև արևմտյան միջնաբերդին արևմուտքից հարող դամբարանադաշտում պեղված կարասային թաղումները, որոնցում եղած կմախքները կծկված ու կողքի պառկած դիրքով են, ինչը օտար է աճյունասափորում կատարվող, ուրարտականին բնորոշ դիակիզմանը: Ենթադրվում է, որ Ազա երկրում կարասային թաղումները կապված են Խաթե և Ծուպանի երկրների վերաբնակիչների հետ¹²: Թաղումներից հայտնաբերված խեցանոթները ձևով պատճենում են ուշ ուրարտականներին, բայց կարասում կատարված թաղումը խոսում է թաղվածների՝ **երկար ժամանակ** ուրարտացիների հետ **համատեղ** ապրելու և խառը բնույթ ունեցող մշակույթ ստեղծելու մասին:

Հայ ժողովրդի ուրարտական շրջանի պատմության վերջին էջը, դատելով հայտնաբերված նյութերի առանձնահատկություններից, փակել է հիմնականում միասեռ էթնիկական կազմով ներկայացող հայ բնակչությունը, որի գերակշիռ մեծամասնությունը տեղական արմատներ ուներ: Դրա ապացույցը ոչ միայն հետուրարտական խեցեղենի, այլև այլ տեսակների ակնհայտ կապն է ուրարտական ու տեղական մշակույթի նյութերի հետ. այդ կապերը լուսա-

¹² **Мартиросян А.А.**, նշվ. աշխ., էջ 53; **Tiratsyan N.G.** *Two Pithos Burials From Argistihinili, Aramazd*, vol. VIII, № 1-2, E., 2013-2014, pp. 143-158.

բանված են մասնագիտական գրականության էջերում¹³:

Թեյշեբահինի–Ռուսա II-ի հիմնադրած միջնաբերդի հարավակողմում և արևմտակողմում տարածվող, 35–40 հա տարածք զբաղեցնող քաղաքային թաղամասերի հեռավորությունը Էրեբունիից ուղիղ գծով մոտավորապես 5–6 կմ է: Նման տարածությունը մատնանշում է Էրեբունիում ուրարտացիների իշխանության անկայուն վիճակը. հավանական է, որ Էրեբունիում վերաբնակեցված ուրարտացիների ուժերը բավարար չեն եղել դիրքերի ամրապնդման համար, ինչը և հաշվի առնելով՝ Ռուսա II-ը հարկ է համարել Թեյշեբահինին կառուցել տեղական բնակչության բնակավայրը վերացնելով ու դրա տեղում նորակառույց քաղաք հիմնադրելով: Վերջինս պետք է հսկեր և հարկ եղած դեպքում օգներ Էրեբունիին, զսպեր Ազա երկրի անհնազանդ բնակչությանը և ամրացներ տարածքը: Բնական է, որ քաղաքային կառույցներում ուրարտական նյութերի հետ շատ են գտնվել սև ու գորշ մակերեսներով տեղական խեցանոթներ:

Չծանրանալով 4 մ-ից ավելի հզորություն ունեցող՝ տեղական բնակչության բնակավայրի շերտագրական պատկերի վրա¹⁴, հակիրճ անդրադառնանք անմիջապես ուրարտական կառույցների տակ գտնվող շերտին, որը կապված է Ռուսա II-ի գործունեության հետ: Այդ շերտի բնակչության կացարանները հարթեցվել են բերված հողով՝ հարթ մակերես ստանալու համար: Շերտից հայտնաբերված խեցանոթների 40%-ը սև, կոկած մակերեսով քրեղաններ ու թասեր են: Սովորական են ելունդագոտիները, ծալքերը, օղակաձև նստուկները, եռանկյունաձև դրոշմազարդերով երկայնական ճկվածք ունեցող կանթերը, կետերով լցված եռանկյունաձև պատկերները: Նմանները հանդիպում են նաև քաղաքային թաղամասերի կացարաններում ու միջնաբերդում¹⁵, ինչը պայմանավորված էր բնիկներին իբրև բանվորական ուժ օգտագործելով: Այդ խեցանոթների մեծ մասը հաստ պատերով, վարդագույն, կլորացող, անզարդ շուրթերով, իսկ իրանը՝ երբեմնակի կամթոցներով զարդարված կճուճներ են, կանթերի ընդերկայնական ճեղքերին եռանկյունաձև դրոշմազարդերով սափորներ, որոնց շարքում կան և իրանին անփոյթ կոկմամբ արված գծերով լցված կամարաձև պատկերներ: Նմանները,

¹³ Тирация Г.А. *Культура древней Армении VI в. до н.э.–III в. н.э.*, Е., 1988, с. 21-71; Կարապետյան Ի.Ա., *Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ.*, Ե., 2003:

¹⁴ Մանրամասները տես՝ Մարտիրոսյան Ա.Ա. *Город Тейшебаини*, Е., 1961.

¹⁵ Сорокин В.С. *Следы древнейшего поселения у Кармир-Блур* (СА, № 2, 1958, с. 150-163).

բայց շատ ավելի նուրբ կատարմամբ, տարածված են Շիրակ-Սևան գծից հյուսիս, հատկապես Լոռի-Գուգարքի երկաթեղարյան հուշարձաններում: Թեյշեբաինիում նման նյութեր պարունակող դամբարաններում զենքեր չեն հայտնաբերվել, ինչը ցույց է տալիս դրանց՝ հպատակներին պատկանելը¹⁶:

Քաղաքը, 4 հա տարածք զբաղեցնող միջնաբերդով հանդերձ, շրջափակվել է պարսպով, որն արևմտյան մասում անավարտ է մնացել: Ծայրամասերում կառուցված հյուղակները անմիջապես գետնի վրա են կառուցված և զուրկ են հիմքից, իսկ կենտրոնի խոշոր շինություններն ունեն ավտոռ, գյուղատնտեսական մթերքների ամբարման համար օժանդակ կառույցներ ու դրանց կապած հյուղակներ: Այդ խոշոր կառույցները հետո լքվել են տերերի կողմից, որոնք միջնաբերդ են տեղափոխվել՝ իրենց հետ տանելով ունեցվածքը, սննդամթերքը: Թեյշեբաինիի անկումից հետո կյանքը քաղաքային թաղամասերում, որոնք կենտրոնում ձևավորում էին ուղիղ փողոցներ կազմող ընդարձակ համալիրներ¹⁷, կանգ է առել և V-IV դդ. փոխարկվել է դամբարանադաշտի:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում մոտավորապես 16000 մ² զբաղեցնող և շատ լավ պաշտպանված, 120 սենյակից բաղկացած միջնաբերդը, որը մեկ ամբողջական հսկա կառույցի տեսք ունի. ժամանակի ընթացքում այն շինարարական որոշակի փոփոխությունների է ենթարկվել, որի հետևանքով պահեստարանները կացարանների են փոխարկվել: Ամենայն հավանականությամբ, այդ աշխատանքները պաշարման ժամանակ են կատարվել: Դրա հետևանքն են հապճեպ կառուցված կացարանները, հյուղակներն ու պարզապես ծածկեր հանդիսացող պատսպարանները, որոնք եղել են բակի արտաքին կողմում, հյուսիս-արևմտյան դարպասի մոտ, պալատի աշտարակի եռանկյունաձև հարթության վրա և այլ հատ-

¹⁶ **Мартиросян А.А.** *Раскопки в Головино, Е., 1954, с. 62-66.*

¹⁷ Արտաքին պարսպից բացի, քաղաքն ունեցել է տարբեր կողմեր ընթացող քառաշար պարեր, որոնք նախատեսվել են ազատ շարժումը արգելակելու համար: Դա ցույց է տալիս, որ քաղաքը կարելի էր գրավել մաս առ մաս: Նման կառուցվածքը միջնաբերդը կարող էր պաշտպանել քաղաքի բնակիչներից: Հեյրաբար, ամբողջական պլանով, մեկ շինարարական փուլում կառուցված քաղաքում առկա են սոցիալական տարբեր խմբերի համար նախատեսված, տարբեր սկզբունքներով կառուցվածքներ: **Оганесян К.Л.** *Архитектура Тейшебаини; Кармир-Блур, т. IV, Е., 1955, с. 12-16.*

վաճներում, ինչը ցույց է տալիս միջնաբերդի գերբնակեցված լինելը¹⁸: Ուշագրավ է այն հանգամանքը, որ բոլոր տարողություններում պահվել է հացահատիկ, որ այրվել է կառույցները ճարակած հրդեհից: Ամեն ինչ խոսում է այն մասին, որ միջնաբերդի ամրություններին ապավինած բնակչությունը, զգալով սպառնացող վտանգը, նախապես լքել է քաղաքի հարմարավետ կացարանները՝ իր հետ տանելով սննդամթերքն ու արժեքավոր գույքը, և պատրաստվել երկարատև պաշարման: Շատ կարևոր է և այլ քաղաքներից (Մենուախինիլի, Էրեբունի) Թեյշեբաինի բերված տարատեսակ իրերի (բրոնզե վահաններ, սաղավարտներ և այլն) հայտնաբերումը. դա խոսում է տերության միջուկի՝ հարավային տարածքների կորստի մասին, որի վերաբերյալ կխոսենք ստորև: Այստեղ թերևս նշենք, որ միջնաբերդից հայտնաբերված նյութերի գերակշռող մեծամասնությունը ուրարտական մշակույթն է ներկայացնում (զենքեր, գործիքներ, ասպագեն, պաշտամունքային իրեր, զարդեր, խեցանոթներ և այլն): Այլ մշակույթների պատկանող տարատեսակ իրեր, որոնք տարբեր ժամանակներում (հիմնականում տերության հզորության շրջանում) են հայտնվել երկրի սահմաններում տարաբնույթ հանգամանքների շնորհիվ, անհամեմատ քիչ են: Նման նյութերի շարքում են ասորեստանյան տեսակի գլխիկավոր մեխերը («գիկուտտի»), թաս-փիալան, կնիքները, եգիպտական կոյաբզեզները, «սկյութական» բրոնզաձուլ նետասլաքները, ակինակները, ձիասարքի իրերը, արևելամիջերկրականից բերված հատիկազարդ ականջօղերը և այլն¹⁹:

Միջնաբերդի գտածոների շարքում կարևորվում են ևս մի քանի նյութեր: Դրանցից մեկը կարմիր անգործով, միառոտ սկահակ է, որի հատակին դրոշմված է սեպաձև վարդյակ: Հետազոտողի՝ Վ. Սորոկինի կարծիքով, հնարավոր է, որ այս օրինակը Թեյշեբաինի բերված լինի Տուշպայում բնակված և Թեյշեբաինիում վերաբնակված բրուտի կողմից²⁰: Նյութերի հաջորդ

¹⁸ **Пиотровский Б.Б.** *Кармир-Блур*, т. I, Е., 1950, с. 20-24; **Сорокин В.С.** *Раскопки древнего поселения* (տե՛ս **Пиотровский Б.Б.** *Кармир-Блур*, т. II, Е., 1952, с. 85).

¹⁹ **Пиотровский Б.Б.** Скифы и Урарту (*Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիում*, Ե., 1978, էջ 1-10), **նույնի՝** *Кармир-Блур*, т. III, с. 9: «Սկյութական» կոչված նեոասլաքների էթնիկ պարկանելության հարցերին հարկ է որոշակի վերապահությամբ և զգուշությամբ մոտենալ, որովհետև այդպիսիք գործածվել են Հին Արևելքի երկրներում: Օրինակ կարող է հանդիսանալ Մոսկվից գտնված բրոնզե կաղապարը. նման նեոասլաքներ կան նաև Թեյշեբաինի միջնաբերդի պահեստներում (նույն տեղում, էջ 38-41):

²⁰ **Ст'у Пиотровский Б.Б.** *Кармир-Блур*, т. II, с. 84-85, рис. 45.

խումբը № 39 կացարանից հայտնաբերված, տեղական մշակույթին պատկանող սև խեցանոթների բեկորներն են (ընդամենը՝ երեքը), ինչը ցույց է տալիս, որ պաշարման ժամանակ բնիկները միջնաբերդում չեն պատսպարվել: Նշված կացարանում հայտնաբերվել են «սկյութական» նետասլաք, այրված մարդու կմախք: Նույն պատկերը դիտվել է նաև № 40 կացարանում²¹: Նյութերի նման հարաբերակցությունը ցույց է տալիս, որ բնիկները չեն վախեցել հարձակվողներից և չեն փորձել միջնաբերդում պատսպարվել, որտեղ նրանք տեղ չունեին: Այս ենթադրության օգտին են խոսում նաև ներկայացված քաղաքների մերձակայքում գտնվող «փոքր-ամրոցները», որոնց վերաբերյալ կխոսենք հակիրճ²²: Այսպես, Օշականից 2,5 կմ հարավ-արևմուտք գտնվող երկշարք պարիսպներով օղակված Ձորակի ամրոցում (շերտի հզորությունը՝ 0,5-0,7 մ) հայտնաբերվել են ուրարտական և տեղական խեցեղենի բեկորներ, իսկ Թեյշեբաինիի պես երկհարկ, անկյուններում 4 բրգաձև աշտարակներ ունեցող Արագածի ամրոցում, թափված աղյուսների ու հրդեհից գոյացած շերտում գտնվել են մեծ քանակությամբ ուրարտական խեցանոթների բեկորներ. տեղականը քիչ է: Նույն պատկերն է դիտվում և 2 միջնաբերդից կազմված Արամուսի ամրոցի վերին՝ երրորդ շերտում (VII-VI դդ. ստորին՝ առաջին շերտը՝ VIII-VII դ. սկիզբ), իսկ երկրորդը, որը կառուցվել է առաջինի մոխրաշերտի վրա, թվագրվում է VII դ. կեսով: Ուրարտական խեցանոթների բազմաթիվ բեկորներ և այլ նյութեր են հայտնաբերվել նաև Օշականի ամրոցից, որտեղ բացվել են հրդեհից ավերված բազմասենյակ պալատական համալիր, կրակի տաճարի փոխարկված սյունազարդ դահլիճ և այլն: Գտնված խեցանոթները, կնիքները, սկյութական նետասլաքը ցույց են տալիս, որ այս հրդեհված ամրոցը ևս թվագրվում է VI դ. առաջին տասնամյակով:

Ինչը՝ կարող էր արքային հարկադրել լքել տերության կենտրոնում գտնվող և մեծ ու փոքր ամրություններով (վերին և ներքին Անգաֆներ, Դեյի Չայ, Բոստանկայա, Չլդրան և այլն)²³ պաշտպանված, Տուշպայի և Ռուսա-

²¹ **Пиотровский Б.Б.** *Кармир-Блур, т. III, Е., 1955, с. 10, 21-22.*

²² *Մանրամասները տե՛ս Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., Արարադյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Ե., 2006; Есаян С.А. Работы в Ошакане [Археологические открытия (այսուհետև՝ АО), 1986, с. 471]; Есаян С.А., Калантарян А.А. Ошакан I, Е., 1988, с. 7-81.*

²³ **C.A. Burney, G.R.J. Lawson,** *Measured Plans of Urartian Fortresses [Anatolian Studies (այսուհետև՝ AS), X, 1960, pp. 177-196].*

խինիլիի նման հզոր ամրոցները և պաշտպանություն փնտրել թշնամական Ագա երկրում: Թվում է, որ այս իրողության պատճառը կարող էր լինել նրա՝ այլևս Տուշպայի տերը չլինելը: Եվ այս տեսակետից գայթակղիչ է ենթադրել, որ Թեյշեբաինի շտեմարանը բացելու համար նախատեսված՝ Ռուսա IV-ի կնիքի «Տուշպայի կառավարիչ» մակագրության բացակայությունը, հնարավոր է, դրանով է պայմանավորված: Համոզիչ է թվում Ն. Հարությունյանի այն կարծիքը, որ այս դեպքում արդեն նա ոչ թե արքայազն էր, ինչպիսին ներկայացնում է նրան քաղաքի պաշարումից քիչ առաջ շտեմարանը փակելու համար նախատեսված կնիքը, այլ՝ միանգամայն ինքնուրույն թագավոր²⁴: Նման ենթադրությունը առանձին հետաքրքրություն է առաջացնում նրա հոր՝ Ռուսա III-ի՝ Արին-Բերդից և Արմավիրից (արևել. միջնաբերդ) գտնված № 443 և № 444 արձանագրությունների հանդեպ, որոնք վկայվելով արքայի կողմից, մի դեպքում, շտեմարան կառուցելու (Արմավիր), իսկ մյուսում՝ այն լցնելու (Արին-Բերդ) մասին, մակագրված են սոսկ «Ռուսա Էրիմենաորդի» բառերով. այն պարագայում, երբ նա մյուս արձանագրություններում, իր նախորդների պես, պարտադիր մատնանշում է «Տուշպայի կառավարիչ» լինելը²⁵: Հայտնի չեն Էրիմենայի հայրանունը, նրա «իշխելու» թվականը, և դեռևս միասնական կարծիք չկա նրա՝ թագավոր լինելու մասին. Էրիմենային պատկանող միակ արձանագրությունում նշվում է. «թագավորը ասում է...»: Այդուհանդերձ, կարելի է ենթադրել, որ Ռուսա III Էրիմենաորդին իր թագավորության վերջում ստիպված է եղել Թեյշեբաինի տեղափոխվել՝ տանելով մասունք համարվող իրերը (օրինակ, Կարմիր-Բլուրից գտնված, բայց Մենուայի անունը կրող թասերը, սանձերն ու ձիու ճակատակալը և այլ նյութեր): Նման ենթադրության դեպքում, բնական է, որ Թեյշեբաինիում պաշտոնավարող նրա որդի, թագաժառանգ Ռուսան հրաման է արձակում այդ կարգավիճակով (բառացի՝ «թագուհու որդի»), որը թագավոր է ձեռնադրվում հորը կորցնելուց հետո:

²⁴ **Арутюнян Н.В.** *Некоторые вопросы последнего периода истории Урарту (Древний Восток, Е., 1976, № 2, с. 98-114).*

²⁵ **Арутюнян Н.В.** *Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, с. 370-377. Որոշ դժվարություն է առաջացնում Սարդուր III Ռուսաորդու՝ Կարմիր-Բլուրից հայրնաբերված գրությունը Շանիցու ցեղի գինեգործին Կուլունիլի քաղաքի հողերը երկու սփրուկի հետ միասին ոմն Կուլուրիլի վերադարձնելու մասին. այդ հրամանն արձակող արքան բաց է թողել «Տուշպայի կառավարիչ» բառերը (նույն տեղում, էջ 360):*

Կարծես դեպքերի զարգացման նման ընթացքի օգտին են խոսում նաև «Գեդդի տարեգրության» տվյալները²⁶, որոնք, ներկայացնելով Ասորեստանի անկումը, արժեքավոր տեղեկություններ են հաղորդում խնդրո առարկա հարցերի վերաբերյալ: Այսպես, 612 թ. ծավալված իրադարձությունների վերաբերյալ ասվում է, որ Ումման-Մանդայի թագավոր Կիաքսարը և Նաբուպալասարը գրավում են Նինվեն, որից հետո վերջինս դեպի Նիցիբին է շարժվում, իսկ 611 թ. գրավում է Շուպրիան: Հաջորդ տարին օգնության եկած Ումման-Մանդայի հետ գրավվում է Խառանը, իսկ 609 թ. բաբելացու զորքը ճակատում է Իծալլայում, ավերում մի շարք լեռնային երկրներ ու վերադառնում: Նույն տարում, ինչպես վկայում է դեռևս արքայազն Նաբուգոդոնոսորը, Ումման-Մանդայի արշավը դեպի Ուրարտու հանգեցնում է վերջինիս ինքնուրույնության կորստին և Մարաստանին ենթարկվելուն: Կարևոր նշանակություն ունեցող այս վկայությունից պարզ չի դառնում՝ խոսքը վերաբերում է Ուրարտուի կենտրոնական մասին, թե՞ ողջ տերությանը, քանի որ տարեգրության մեջ ասվում է, թե հարձակվողները հասել են մինչև Ուրարտուի քաղաքի շրջանը: Ի. Դյակոնովի կարծիքով, պարտադիր չէ ենթադրել, որ հակառակորդները հասել են մինչև Տուշպայի շրջանը, ինչից ելնելով էլ նա Մարաստանին ենթարկվելու ժամանակը տեղադրում է 609-605 թթ. միջև՝ ընդունելով, որ 605-590 թթ. **Ուրարտուն** գործում էր Մարաստանի հրամանով, իբրև նրանից կախյալ թագավորություն: Ասվածին չեն հակասում նաև տարեգրության մեջ 608 թ. տեղի ունեցած իրադարձությունները, համաձայն որոնց, բաբելական զորքը Տիգրիսով բարձրանում է Բիտ-Խանունի լեռները՝ Ուրարտուի շրջանները, իսկ 607 թ. դեռևս արքայազն Նաբուգոդոնոսորը Եփրատի ափին գտնվող Կիմուխ քաղաքն է արշավում, որը եգիպտական զորքը գրավում է 606 թ.: Հարավային և արևմտյան տարածքներում բաբելական ուժերի կողմից իրականացվող այս գործողությունները մոտ են թողնում Թեյշեբահինի անկման ժամանակը, որը Դյակոնովի կարծիքով՝ 593-590 թթ.-ն է, և Կիաքսարի ընդհանուր ղեկավարությամբ գործող Ումման-Մանդայի գործունեությունը²⁷:

²⁶ Մանրամասները տե՛ս **Дьяконов И.М.** Последние годы Урартского государства по ассииро-вавилонским источникам, с. 29-38, **նույնի՝** История Мидии, с. 33-34), **նույնի՝** Малая Азия и Армения около 600 г. и северные походы вавилонских царей (ВДИ, 1981, № 2, с. 37-60).

²⁷ Մութ մնացած այս ժամանակի՝ ինչ-որ չափով հստակեցմանը թերևս կարող են օգնել Ումման-Մանդային վերաբերող տվյալները, որոնք առավել են կարևորվում, եթե

Ասվածից հետևում է, որ Կիաքսարի ընդհանուր ղեկավարությամբ գործող, բայց իրականում անկախ և դաշնակից երկրի մեծաքանակ զորքը՝ Ումման-Մանդան, որտեղ գերակշիռը դաշնակից հայ էթնոսն էր կազմում (առանց նման դաշնության Կիաքսարը հազիվ թե կարողանար գրավել ուրարտական ամրոցները), 609-605 թթ. նվաճելով Ուրարտուի կենտրոնական տարածքները, հյուսիս է մղել Ռուսա III-ին հավատարիմ մնացած ուրարտական սակավ ուժերը²⁸, որոնք, ինչպես ցույց են տալիս հնագիտա-

նկարի ունենանք հիմնականում մարա-սկյութական ուժերի կողմից Ուրարտուի **կործանման** վերաբերյալ արմատացած տեսակետը: Ի. Դյակոնովի կարծիքով, նշված անվանումը պետք է մեկնաբանվի տարբեր ժամանակներում տեղ գտած դեպքերի տեսանկյունից: Հետազոտողը իր տեսակետի հիմնավորման համար մատնանշում է Նարամսինի լեգենդը (այդպեղ Ումման-Մանդան կապվում է Հայկական Միջագետք-Սուբարտու-Շուպրիա տարածքին. տե՛ս **Gurney O.R.** *The Sultantepe Tablets (The Cuthaeen Legend of Naram-Sin)*, AS, V, pp. 93-109)՝ նշելով որ այդպեղ այն արտահայտում է ինչ-որ հյուսիսային ժողովրդի իմաստը, խեթական օրենքներում՝ Հայկական լեռնաշխարհի ինչ-որ ժողովուրդ, Ասարխադոնի անվանումը և Աշուրբանիպալի աղոթքներում կապվում է կիմմերների հետ: Ն. Ադոնցի կարծիքով, այն «հեռավոր երկրների հորդաններ» կարող է նշանակել [տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Ե., 1971, էջ 291, 294, **Дьяконов И.М.** *Последние годы...* (ВДИ, 1951, № 2, с. 30-39), **նույնի՝** *Малая Азия...* (ВДИ, 1981, № 2, с. 38, 40-41)]: Ասվածը ենթադրել է տալիս, որ սկզբնապես **Ումման-Մանդա** անվանումը, կապվելով Հայկական լեռնաշխարհի տարածքին, հնարավոր է՝ հավաքական կամ ընդհանրացնող իմաստ է ունեցել՝ «լեռնաբնակներ» կամ «բարձունքների բնակիչներ» նախնական նշանակությամբ, բայց ոչ ամենևին՝ մարեր, որոնք, ինչպես և կիմմերները կամ սկյութները, III հազ. գործ չունեին Հայկական լեռնաշխարհում: Ումման-Մանդա-Մարաստան նույնացումը, որը Ն. Ադոնցը հակված է բացատրել տարբեր աղբյուրներից օգտվելու հնարավորությամբ և Կիաքսարի ու Աստիազի՝ Ումման-Մանդայի թագավոր (նույնը և՛ Ի. Դյակոնովը) կոչվելու հանգամանքով, չի հակասում պատմիչների տեղեկություններին. նրանք վկայում են՝ հանուն խոստացված անկախության և ազատության, հայերի ցուցաբերած օգնության մասին (դրա կարիքը Կիաքսարն ու Աստիազը շար էին զգում) տեղեկությունները համահունչ են «Կյուրոպեդիայի» հաղորդումներին:

²⁸ Անդրադառնալով Սարգուր III, Սարգուր IV և հաջորդ թագավորների վերաբերյալ Ի. Դյակոնովի կարծիքին և առաջարկելով նրանց գահակալության հաջորդականության իր տեսակետը (Ռուսա II Արգիշտիի, Սարգուր III Ռուսայի, Սարգուր IV Սարգուրի, Էրիմենա (Սարգուրի ?), Ռուսա III Էրիմենայի և Ռուսա IV Ռուսայի)՝ Ն. Հարությունյանը չի անտեսում և հետազոտողի այն դիտողությունը, թե Հին Արևելքում որդուն հոր անունն էին տալիս հոր մահից հետո. հակառակը կենանակեր նրա մահը ցանկանալ (տե՛ս **Арутюнян Н.В.** *Некоторые вопросы...*, с. 102-104): Անշուշտ, նոր բացահայտումները կհստակեցնեն մութ մնացած կետերը, բայց առկա տվյալներն իսկ չեն հակասում Ռուսա III-ի՝ 610/609 թթ. Թեյշեբաինի տեղափոխվելու և այնտեղ Ռուսա IV-ի ծնված լինելու ենթադրությանը, քանի որ հոր մահվան տարում ծնված (պայմանականորեն՝ 609 թ.) Ռուսա IV-ը 590 թ. կլինեի մոտավորապես 19-20 տարեկան,

կան տվյալները, պաշտպանություն են փնտրել լավ ամրացված ամրոցներում:

Հարց է առաջանում. այս դեպքում ո՞վ կարող է անմիջականորեն դեկավարած լինել Ումման-Մանդան: Հիմք ընդունելով նյութերի քննությունից բխած հետևությունները, ինչպես և Տոսպ գավառում Երվանդի բանակելու ու նրա կողմից տեղը՝ Երվանդական, իսկ քաղաքը՝ Երվանդաան (որը Վանն է) վերանվանելու մասին եղած վկայությունը²⁹, կարելի է ասել, որ Կիաքսարի դաշնակից այդ հրամանատարը, ամենայն հավանականությամբ, հորը փոխարինած Երվանդն է եղել («Սակավակյաց» անվանումը, ըստ երևույթին, նրա կարճ գահակալության ժամանակին է վերաբերում): Նման ենթադրությանը չեն հակասում կողմնակի տվյալները. նկատի ունենք Կյուրոսի ծննդյան թվականը, որը մոտ 598-ն է համարվում³⁰, որը կարելի է ընդունել նրան տարեկից Տիգրանի համար: Վերջինս, չնայած հոր կենդանությանը (ըստ «Կյուրոպեդիայի»), երկիրը ինքն է գրեթե միանձնյա ղեկավարել: Այդ ժամանակ Երվանդը պետք է որ առաջացած տարիք ունենար. «Նաբոնահիդի ժամանակագրության» այն վկայությունը, համաձայն որի, 547 թ. Կյուրոսը, Ուրարտու արշավելով (Ուրաշտու երկրանունը, վնասված լինելով, նախկինում Լիդիա էր ընթերցվում, բայց Յո. Օյսլների և Ռ. Ռոլլինգերի հետազոտությունները ճշտեցին այն), պարտության է մատնում երկրի արքային և մեծ ավար վերցնում, չի հակասում ասվածին: Ուրաշտու անվանումը չպետք է շփոթությունների տեղիք տա. համոզիչ է Դ. Ստրոնախի այն կարծիքը, որ «Ուրաշտու» երկրանունը Նաբոնահիդի կողմից օգտագործվել է նորաստեղծ հայկական պետությունը (Հայաստան, Արմենիա) նշելու համար, բայց ոչ ամենևին նկատի ունենալ իբրև աշխարհագրական տարածք³¹:

ինչը բավարար է թագավոր օծվելու: Այլ իրավիճակի (հայկական և թեկուզ ձևական ուրարտական առանձին թագավորությունների առկայություն) և տարեթվերի ընդունումը կհակասի պարմական աղբյուրների այն վկայությանը, թե հայերը, որոնց ենթակա էին ուրարտական ուժերը (տե՛ս նաև **Թ. Արծրունի և Անանուն**, Պարմություն Արծրունյաց տան, Ե., 1978, էջ 57-60), դաշնակցելով Կյուրոսի հետ, նրան օգնեցին ջախջախելու (553-550 թթ.) Ասորիագ-Աժդահակի մեծաթիվ բանակը:

²⁹ Հայ ժողովրդի պարմություն, հ. I, Ե., 1971, էջ 437, ծնթ. 64, 65:

³⁰ **Max Mallowan**, *Cyrus the Great (558-519 B.C.), Iran*, vol. X, London-Tehran, 1972, pp. 1-13.

³¹ **Stronach D.** *The Campaign of Cyrus the Great in 547 B.C. a Hitherto Unrecognized Source for the Early History of Armenia?* (Aramazd, vol. II, 2007, Y., pp. 165-170, 235-236). Նյութի քննության արդյունքները, մերժելով արտաքին ուժերին վերագրվող վճռական դերը, կարծես ավելի շուրջ խոսում են տեղական մեծ ու փոքր թագավորու-

ПАДЕНИЕ ВАНСКОГО ЦАРСТВА ПО РЕЗУЛЬТАТАМ РАСКОПОК ПАМЯТНИКОВ АРАРАТСКОЙ ДОЛИНЫ

ХНКИКЯН О.С.

Резюме

Результаты раскопок археологических памятников Араратской долины (крепости Дзорака, Арагаца, Арамуса, Ошакана), а также данные письменных источников приводят к заключению, что Руса III в конце своего царствования (ок. 610-609 гг. до н.э) не мог противостоять мидийским и армянским войскам и вынужден был покинуть столицу – город Тушпу и обосноваться в Тейшебаини. Родившийся, вероятно, в Тейшебаини Руса IV стал очевидцем падения своего города ок. 590 г. до н.э. под ударами местных сил под командованием Ерванда – союзника Киаксара.

յուններին միավորած և Կիաքսարի՝ ավելի շուտ բարոյական աջակցությունը վայելող Երվանդյանների ղեկավարությամբ գործող հզոր ուժի մասին: Ըստ իս, դժվար է մատնանշել որևէ փաստ, որը կարողանար, թեկուզ հեռավոր կերպով պատկերել Ասորեստանի կործանմանը մերձեցող իրավիճակ. դա բացառում է «Ուրարտուի կործանման» դրույթը: Այդ հզոր տերությունը, թվում է, աստիճանաբար զիջելով դիրքերը, գրեթե կամովին, առանց մեծ արյունահեղությունների, հեռացել է պարսմության թափերաբեմից՝ տեղը զիջելով Երվանդյաններին, ինչը և կրկին ցույց տալով հայ ժողովրդի տեղական արմատները, հրապարակ է դարձնում տեղական և դասական ուրարտական մշակույթի հիմք հանդիսացող նյութերի քննությունը: Այս դեպքում առաջնային նշանակություն են ձեռք բերում հնագիտական նյութերի (հատկապես Արևմտյան Հայաստանի) տեղայնացման արդյունքները, որոնք կարող են հստակեցնել «մշակույթ-էթնոս» կապերի շուրջ եղած պատկերացումները: Այդ բարդ հարցերը առանձին հետազոտության նյութ լինելով՝ կարող են լավագույնս լրացնել պարսկական աղբյուրների տվյալները. դրանք, ինչպես երևաց շարադրանքից, համադրվելով հնագիտական նյութի հետ, բավական հիմնավորված պատկեր են բացահայտում:

THE COLLAPSE OF THE VAN KINGDOM, ACCORDING TO THE RESULTS OF THE EXCAVATIONS IN THE ARARAT VALLEY SITES

O. KHNKIYAN

Abstract

Based on the results obtained during the excavations in Erebuni, Argishtikhinili, Teishebaini, Dzorak, Aragats, Oshakan and written sources we attempt to interpret the reasons of the fall of Urartu. The syntheses of the data assume that Rusa III wasn't able to confront against the army of Ervand and in 610/609 move to Teishebaini, where probably Rusa IV was born, who witnessed the fall of the city approximately in 590 BC.

ՇՎՈՏԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Հ.Հ.

Հայ ժողովրդական սնահավատական գրույցներում առավել հաճախ հանդես եկող կերպարներից է **շվոտը**: Տարբեր գավառներում ստացել է **շվոտ** (Արարատ, Շիրակ, Խոյ, Պոլիս, Սեբաստիա, Կարին, Խարբերդ, Դերսիմ, Հաճն, Մուշ, Վան, Բագրևանդ), **շիվոտ**, **շուվեդ** (Մալաթիա), **շիոդ** (Նոր Բայազետ), **շուէտ** (Բալու)¹, **սվեդի** (Շիրակ), **շիֆոտ**, **ֆշոտ**² (Սեբաստիա), **ժվետ**, **ժվոտ**, **ժիվոտ** (Նոր Նախիջևան), **իշվոտ** (Մուսա լեռ) անունները:

Շվոտը հայտնի է նաև պարսիկներին՝ Տիֆտ ձևով՝ «ճիվադ. է ազգ մի դիաց, որք լինին յանշէն տեղիս և ի դաշտավայրս. որք մտեալ ի զանազան կերպարանս, և զմարդն ի ճանապարհէ խոտորեցուցեալ սպանանեն»³:

Աճառյանը գրում է, որ «շուտոտը» փետրվար ամիսն է, փոխառված է պարսկերեն *šubāt* բառից, որը ասորերեն *šabāt* բառից է և «ասորաբաբելական տոմարի 11-րդ ամիսը: Ըստ նախապաշարմանց՝ փետրվարը սատանաների ազատութեան ամիս է: Արդի բարբառներում «շուտոտ» նշանակում է մի տեսակ դև, որ փետրվարին է գործում»⁴: Լեզվաբանները «շուտոտ» բառը կապում են «փետրվարի» ասորական և եբրայական անվանումների հետ: Ս. Հայկունու վկայությամբ, «Փետրուար ամսուան Շուտոտ կասեն Բագրեւանդայ հայեր, իսկ թուրքեր՝ Շուպաթ»⁵:

Ըստ միջնադարյան տոմարագետների՝ ասորիների «Շաւատ ամիսը և եբրայական Շբաթը համապատասխանում են հռոմեական փետրվարին և հայկական Մարգացին»⁶: Ա. Օդաբաշյանի դիտարկմամբ, «որպես ամսանուն այն մինչև XIX դ. վերջը և XX դ. սկիզբը հիշվում էր Մոկսում, միշտ զուգակշիռ մնալով հռոմեական փետրվար ամսին: Մոկսից բացի՝ պատմա-

¹ Սարգսյան Ա., *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Դ, Ե., 2007, էջ 283:

² Ֆշալեն վազող վիշապ օձ, շրվոդ հրեշը մրացածին, հրեշաբարոյ (Գաբիկեան Կ., Բաղդիրք սեբաստիայ գաւառայեզոյի, Երուսաղէմ, 1952, էջ 588):

³ Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*, հ. Գ, Ե., 1977, էջ 538:

⁴ Նույն տեղում, էջ 537-538:

⁵ Հայկունի Ս., *Շուտոյ եւ դովաթ. ժողովրդական հաւատալիք* (Արարատ, 1895, N 6, էջ 210):

⁶ Սիմոնյան-Մելիքյան Լ., *Տոմարային ծիսաշար*, հ. 2, Ե., 2007, էջ 67:

կան Հայաստանի մնացած բոլոր գավառներում այդ բառը կորցրել է ամսանուն լինելու իմաստը և ձեռք բերել նոր նշանակություն: Ազգագրական որոշ շրջաններում ժողովուրդը շվոտ անվանում է այն ոգիներին, որոնք, նրա կարծիքով, գարնան գալուց առաջ իր տնտեսության մեջ ինչ-որ բացասական դեր են կատարում»⁷:

Ղ. Ալիշանը կարծում է, որ «շվոտ»-ը «շահապետ»⁸ և «շվազ» ոգիների անվանումների փոփոխության արդյունք է: Վերջիններս համարվում էին վարուցանքի ու բերքի խնամողներ, որոնք մարդկանց հայտնվում էին տարին մեկ անգամ՝ գարնանը⁹: Աղ. Մխիթարյանցի վկայությամբ՝ «շվոտ» նշանակում է «սատանա». «Իբր թե այդ սատանան իւր որդկերանց հետ կամենում են տան բոլոր ուտելիքներն ու իրեղէնները սեփականել իրանց. ուստի ծեծելով տանից վրնտում են»¹⁰ շվոտին: Ելնելով այդ ոգու բնույթից ու գործառույթներից՝ ազգագրագետ Զ. Խառատյանը չի բացառում, որ հայերեն «շվայտ» (զեխ, ցոփ) բառը նույնպես կապվում է «շվոտ»-ի հետ¹¹:

Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ շվոտներն անտեսանելի ոգիներ են, որոնք սերում են Նոյ նահապետի Քամ որդուց: Ս. Հայկունին Բագրևանդից գրառել է բազմաթիվ գրույցներ և հավատալիքներ շվոտի մասին, նաև վերջինիս առաջացման ավանդությունը. «...Քամ անհաւատարիմ գտնուելով Աստուծոյ կարգադրութեանը, տապանի սրբութիւնը չյարգելով մերձեցաւ իր կնոջ, որմե ունեցաւ մի որդի: Անցաւ մի տարի, Աստուծոյ հրեշտակն երբ տապանի դուռն բացաւ, ութ հոգին համարելով՝ դուրս հանեց, հարցուց Քամին.

- Ուրիշ մարդ կա՞յ ներսը:
- Չկա, պատասխանեց ամօթահար Քամ:
- Եթե կայ, չիք դառնայ, - ասաց հրեշտակն:

⁷ **Օդաբաշյան Ա.**, *Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում* (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 9, Ե., 1978, էջ 34):

⁸ «...Էին Շահապետը վայրաց. իբրև պահապանը կամ բնակողը երկրի այլ և այլ դրից, անտառաց, ձորոց, լեռանց և անապատ տեղեաց, այլ և գերեզմանաց. ...շապ հեղ օձակերպ համարուին, և դժոխոց տիրողքն այլ Շահապետ կոչուին» (**Ալիշան Ղ.**, *Հին հաւաքը կամ հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ, 1910, էջ 199-200*):

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ **Մխիթարեանց Ա.**, *Փշրանք Շիրակի ամբարներից* (Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 191):

¹¹ **Харатян З.** *Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян* (Армянская этнография и фольклор, т. 17, Е., 1989, с. 47).

Նորածին մանուկը աներևոյթ ոգիի մը փոխուեցաւ, օր ըստ օրէ զօրացաւ, մարդկային սերունդին հետ ամուսնացաւ, ունեցաւ զաւակներ, որք ևս աներևոյթ ոգիներ են: Շուտօտն շատ աճեցան, նոքա ծնունդ ունին, իսկ մահ չունին, վասն որոյ աշխարհի ամեն կողմ բռնած են: ...Շուտօտ մեղաց պտուղ ա, սուրբ ամուսնութենէ ծնած չեն, որոյ համար ամեն չարութիւն ի գործ կը դնեն»¹²:

Շվոտը նախ և առաջ տոմարային ոգի է և կապված է ծմեռ-գարուն անցման հետ: Լ. Սիմոնյան-Մելիքյանի համոզմամբ, «շվոտներին պետք է անդրադառնալ Տըրընդեզը դիտարկելիս, քանի որ Շուտօտ է կոչվել ոչ միայն փետրվար ամիսն առհասարակ, այլև Տեառնընդառաջ տոնը»¹³: Այս մասին է վկայում նաև Վարդի Քեշիշյանը. «Հաճընցիք այս տօնը՝ Տեառնընդառաջը, նաեւ «Շըվէտ» կը կոչէին: Կը խորհրդանշէ Տեառնընդառաջը, որ Փետրուար ամսուան մէջ կու գայ (շուտօտ, շվոտ–Փետրուար պարսկ. šubāt)»¹⁴:

Տեառնընդառաջի գիշերը որոշ բարբառներում կոչվում է «շվոդի գիշեր», իսկ փետրվարը՝ «շվոտամիս»¹⁵: Շվոտները ծմեռները մարդկանց բնա-կարաններում են անցկացնում: Ա. Ահարոնյանը գրում է. «Կարծիք կա, որ շվոտները սեռական կյանքի հետ առնչություն ունեն: «Գարնանը, մարտ ամսին, երբ սկսվում է կատուների սեռական կյանքը, և նրանք մլավում են կտուրներին, սովորաբար ասում են «շվոտի ամիս»¹⁶, իսկ սիրահար աղջիկն ու տղան փոխաբերական մտքով կոչվում են «շվոտի կատու»¹⁷: Նոր-Բայազետում կարծում էին, որ շվոտները «շատանում են մարդկանց խաբելով և մանավանդ հրապուրելով: Ձմեռը բնակվում են մարդկանց բնակարաններում, իսկ գարնանը գնում են հանդերը: Փետրվարը նրանց ամիսն է կոչվում, որովհետև այդ ամսին նրանց արյունը տաքանում է, և նրանք էրոտիկ երազներով հրապուրում են մարդկանց: Նրանց՝ այդ ամսին շարունակ դուրս ու ներս անելը ստիպում է կատուներին մլավել, որովհետև տեսնում

¹² Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 210:

¹³ Սիմոնյան-Մելիքյան Լ., նշվ. աշխ., էջ 66:

¹⁴ Քեշիշեան Վ., Հաճըն-Տօներ, Յուշամարտան, 2014 <http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/adanavilayet/hadjin/religion/festivals.html>

¹⁵ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 4, Ե., 2007, էջ 283:

¹⁶ Շվոտ-փետրվար ամսվա երազներին Բուլանըխում չէին հավատում, կարծում էին, որ շվոտները քնի մեջ խաբում են մարդկանց սուր երազներով [Կրե՛ս Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ (Ազգագրական հանդէս, գիրք 2, Թիֆլիս, 1900, էջ 10, 54)]:

¹⁷ Ահարոնեան Ա., Հայկական հին հաւատալիքները (Հայրենիք, Պոսթըն, 1939, N 2, էջ 88):

են սրանց»¹⁸: Ժողովուրդը կարծում է, որ շվոտները Տըրընդեզի երեկոյան մտնում են կատուների փորը, սկսում են իրար հետ կռվել¹⁹: Ըստ այս պատկերացումների, ինչպես երևում է, շվոտը կապվում է բեղմնավորության, վերածննդի, սերնդի շարունակության հետ: Այսպիսով՝ շվոտի գործառույթներից են մարդկանց սեռական բնույթի երազներով ներշնչելը և կատուների հետ սերտ կապը՝ ձմեռ-գարուն անցման ժամանակահատվածում, հիմնականում Տեառնընդառաջ տոնի ընթացքում:

Ի տարբերություն մյուս գավառների՝ Մաղնիսայում (Զմյուռնիա) շվոտը ամանորի գիշերվա ոգի էր համարվում: Ըստ հավատալիքի՝ «Շուտը փոխանակ ընծայ բաժնելու տղոց, Կաղանդի գիշերը սակառով մը կը պտտի Մարիամ անուն անձ ունեցող ամէն տունները, որոնցմէ նուէրներ կը հաւաքէ»²⁰: Շվոտը, մյուս չար ոգիների նման, նախ և առաջ ընկալվում էր որպես խաբեբա ոգի: Կաղանդի գիշերը հայտնվում է առանց աղոթքի պառկած տղաներին՝ ծանոթների կամ հարազատների կերպարանքով, միգել տալիս անկողնու մեջ: Ըստ մի ունևոր տան տիկնոջ պատմածի, շվոտը կաղանդի գիշերը հայտնվել է իր «լվացարարին» իր իսկ կերպարանքով և կանչել աշխատանքի: Գիշերը երկար թափառելուց հետո կինը հասկացել է, որ մոլորվել է, և իր ուղեկցորդը բոլորովին ծանոթ չէ իրեն: Հանկարծ նկատում է, որ ուղեկցուիին, հետզհետե փոքրանալով, ծուլվել է մթությանն ու անհետացել: Հիսուս Քրիստոսի անունը մրմնջալով՝ կինը վերջապես գտել է ճանապարհը և հասել տուն²¹: Մեկ այլ գրույցի համաձայն՝ շվոտը, չկարողանալով խաբել, իր ծուղակի մեջ է գցել մարդուն, «Բարկութեամբ կը լարէ հինգ մատուղներն ու «յիսը գիսը աչքդ մտնէ» ըսելով կը խօթէ ենթակային աչքն ու կաներետութանայ»²²:

Ժողովուրդը փետրվար ամիսն ընկալում էր որպես ծմռան կես (Տերընտէզ՝ ձմեռն ի կես): Մտահոգությունը մեծ էր. սնունդն ու անասնակերը կբավականացնի՝ արդյոք մինչև գարուն²³, մինչև առաջին բանջարի դուրս գալը:

¹⁸ **Լալայեան Ե.**, *Նոր-Բայազէտի գաւառ (Ազգագրական հանդէս, հ. XVII, Թիֆլիս, 1908, էջ 107-108)*:

¹⁹ **Տէր-Ներսեսեան Ն.Ս.**, *Սիմրիհիսարցի կինը (Բիւրակն, 1900, N 4, էջ 52)*:

²⁰ *Նմոյշներ Մաղնիսայի գաւառաբարբառէն (Բիւրակն, 1899, N 19, էջ 293)*:

²¹ **Տէս Զըրընդեան Յ.**, *Շուտը (Բիւրակն, 1898, N 4-35, էջ 618-619)*:

²² *Նույն տեղում, էջ 619*:

²³ Շիրակի Վահրամաբերդ գյուղի բնակիչներից մեկը Տըրընդեզի օրերին իրենց պուն է կանչում գյուղում հայտնի սրախոս Հայկան Ապորը: Ցույց է տալիս գոմի անասուններին և խոտի դեզից մնացած մի կույտ և հարցնում.- Հայկան Ապեր, ըսկան խոտը անասունին կհերիքե՞ մինչև գարուն: Հայկան Ապերը նայում է՝ մի գոմ տավար,

Մարդիկ սկսում էին ստուգել մառանները, ամբարները, մարագները և բարիքների սակավությունը վերագրում էին շվոտներին ու սատանաներին: Այս իրողության մասին են վկայում Տըրընդեզին նվիրված երգային բանահյուսության հետևյալ նմուշները.

Տերընդեզ, դարմանը՝ կես,
Առ հաց ու կես՝ էլիր գեղէս,
Տերընդեզ, մխի դին տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես (Չիրիկ, Բասեն)²⁴:
Տերընդեզ, դարման ու կես,
Առնիմ մանգաղ՝ էլնիմ խոտի դեզ,
Տերընդեզ՝ ուշխուր վառէ,
Օր ազատվես օձէ, չարէ (Բաշգյուղ, Բասեն)²⁵:

Ուսումնասիրելով շվոտի մասին սնահավատական գրույցները, բանահյուսական ու ազգագրական նյութերը՝ տեսնում ենք, որ չարի և բարու մշտական հակամարտության յուրօրինակ դրսևորում է շվոտ-դովլաթ պայքարը՝ ժողովրդական հավատալիքների մակարդակում: Շվոտները չար են, ուստի և շատ են, անթիվ, անհամար, սրանք «մի օր աշխարհ կըլեցնեն, այլ ևս մարդկանց բնակութեան վայր մի չպիտի մնա»²⁶: Իրենց բնույթով ուսող-սպառող այս չարքերը սիրում են ապրել խմբերով, մարդկանց տաքուկ տներում, գոմերում և ջրհորների մեջ՝ ոչնչացնելով մարդու ծնունդն ապաշարը, որը վերջինս դովլաթի օգնությամբ ամբարել էր ողջ տարվա ընթացքում: Փետրվարի 14-20-ին²⁷ սաստիկ պայքար է սկսվում ողջ ձմեռ տան բարիքները վայելած ու հզորացած շվոտների և դատարկ մառաններն ու ամբարները լցնող, հոգնած ու լքված դովլաթի միջև²⁸: Դովլաթին օգնության էին գալիս շվոտահանները, որոնք հիմնականում կանայք էին:

մի թիքա խոտ և ասում է տանտիրոջը.– Ախպեր ջան, օր հեջ չտաս, բանըմ էլ գավելնա» (Գալստյան Հ., Դաշպային բանահյուսական նյութեր, 2009, տեպր N 4, թ. 12):

²⁴ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Ե., 1974, էջ 233:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 210:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 211:

²⁸ Դովլաթին համարժեք է վանեցիների **շնողը** ոգին, որն ապրում է բոլոր տեսակի ուրելիքների ամանների մեջ: Երբ ուրելիք են վերցնում ամաններից, «Հիսուս Քրիստոս» են ասում, որպեսզի «շնողը մեջեն չէնի», արագ չվերջանա: Վերցրածից մի քիչ տեղն են լցնում, որ եթե շնողը գնացել է, հետո գա լալայեան Ե., Վասպու-

Շվոտի մյուս կարևորագույն գործառույթը տնային տնտեսությանը վնաս տալն է, մարդու ամբարած պաշարները սպառելը: Այս պատճառով՝ շվոտներին տանից դուրս էին հանում հատուկ գործողությամբ, որը կոչվում էր «շվոտահան»: Փետրվարի վերջին օրը, որոշ վայրերում նաև մարտի մեկին, տան տիկինները փայտով, տարբեր կտորներով, հորթի կաշվով, այծի, ոչխարի մորթիներով խփում էին տան պատերին, տան անկյուններին և ասում. «Շվոտը՝ դուրս, մարտը՝ ներս», այսինքն՝ չարը՝ դուրս, բարին՝ ներս: Բուլանըխում մի կին գիշերը տնից դուրս է գալիս և տեսնում, որ հարևան եղոյենց դռանը շվոտ է կանգնած և անիծում է, որ «ծուն ու ձմրոնոցով» իրենց դուրս են արել տնից, գանգատվել է, թե «ի՞նչ կեղներ իդա երկու պաղ ամիս լե թողէն զմրզի մընէնք տաք թաւի գլովս»²⁹:

Շվոտահանության ծեսի մասին Ա. Ղանալանյանը գրում է, որ «Շվոտը դուրս, մարտը՝ ներս» ասացվածքը հայ գյուղացին գործածել է փետրվար ամսի վերջերին՝ ձմեռը ճանապարհելու և գարունը դիմավորելու առթիվ: «Վերոհիշյալ ասացվածքը կապված է Շվոտ կոչվող չար ոգիների մասին ժողովրդի մեջ գոյություն ունեցող այն նախապաշարում-հավատալիքի հետ, ըստ որի, հիշյալ չար ոգիները գաղտնի մտնում են գյուղացու տունը՝ վնասում նրա պաշարեղենին և բանող ու կթան անասուններին: Ակներև է, որ ասացվածքն իր ծագումով կապված է երկրագործական-անասնապահական շրջանի անիմիզմի հետ, երբ նախնադարյան մարդը զանազան մոգական միջոցներով (բանաձևերով, ծեսերով ու արարողություններով) ենթադրում էր ներգործել բնության վրա և նրա երևույթներն ու ուժերը ծառայեցնել իրեն»³⁰:

Շվոտին ընկալելով որպես չար ոգի՝ մարդիկ համբերատարությամբ հանդուրժել են դրան որոշ ձմեռվա ընթացքում, և հենց գարնան գալու օրերին են որոշել դուրս հանել չարքերին իրենց տներից: Կարծում ենք՝ ժողովուրդը վերոնշյալ ծեսով ձմեռն է դուրս հանել՝ ի դեմս շվոտի, և արդեն չար ուժերից մաքրագերծված՝ փորձել է դիմավորել գարունը:

Բանահավաք Կ. Աբրահամյանը պատմում է, որ գարնանամուտին՝ մարտի իննի երեկոյան, իր մայրը ակիշը տալիս էր երեխաներին և պատվիրում, որ երդիկներին ու դռներին խաչ քաշեին: Մայրը հին փալասի

րական (Ազգագրական հանդես, գ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 205): Այսօր էլ, երբ քահանան տնօրինեք է անում, տանտիրուհուն հանձնարարում է մինչև հաջորդ տնօրինեք ամանները մինչև վերջ չդատարկել:

²⁹ Բենսէ, նշվ. աշխ., էջ 10:

³⁰ Ղանալանյան Ա., Առաձանի, Ե., 1960, էջ XXI–XXII:

կտորներ էր փաթաթում գլխին, մի ոչխարի մորթի էր վերցնում ձեռքը և սկսում էր պատերին հարվածել՝ ասելով. «Փոստ, փոստ, մարտն նիրս, շվոտն դուրս»: Բանահավաքի այն հարցին, թե ինչու է մայրն այդպես ասում, նա պատասխանել է. «Սատանաներին եմ դուրս անում տանից, գարնանամուտն ա»³¹: Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ գարնանամուտը մարտի 9-ին է, ուստի Ապարանում չարքերին տանից այդ օրն էին դուրս հանում: Մարտի 9-ին է վերադառնում նաև գարնան գալուստն ավետող թռչունը՝ արագիլը: Այս է վկայում «Մարտի իննին, լազլազը՝ բնին» առածը, որը «ոչ միայն գարնան գալստյան ճշգրիտ ժամկետի ցուցում է, այլև, ըստ ամենայնի, արդեն զարգացած, բայց հին մի տոմարի գրանցված նշանագրված կետի տեղական մեկնաբանություն»³²: Բասենում մեծերը գարնան և արագիլի մասին խոսելիս փորձում էին գուշակություններ անել և ասում էին.

Մարտի ըննին լազլազ բընին,
Թէ կտուցն հաց՝ առատություն.
Թէ չոփ ու ծղոն՝ գեշ չորություն,
Թէ շոր ու չուկ՝ մահ ու կսկիծ³³:

Հայաստանի մի շարք շրջաններում, նաև Երևանում մինչև 1990-ականները կենցաղավարում էր շվոտահանության ծեսը: Լ. Մկրտումյանի հաղորդմամբ, իր երևանաբնակ տատը, որը արմատներով շատախցի էր, սրբիչով դուրս էր հանում շվոտներին իր տնից՝ ասելով. «Շվատը՝ դուրս, ծիլ ու ծաղիկը՝ ներս»: Իսկ պարագետ Ն. Շամամյանի հաղորդմամբ՝ Իրինդում շվոտահանության ժամանակ ասում էին. «Շվոտը դուրս, ադարը ներս»³⁴: Նիպուրյան ամսանունների տեղայնացված տարբերակներում «ադարը» համընկնում է մարտ ամսվա հետ³⁵:

³¹ Աբրահամյան Կ., Ապարանի շրջանի Վարդենուր գյուղի ազգագրական նյութեր, 1965 թ. (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական և բանահյուսական արխիվ, թղթ. 1, մաս 2-րդ, թ. 46-47):

³² Սիմոնյան Լ., Հավքն իր թևով, օձն իր պորպով, Ե., 2011, էջ 14:

³³ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Ե., 1974, էջ 271:

³⁴ Նյութերը պրամադրելու համար շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրպսեր գիտաշխատողներ Լ. Մկրտումյանին և Ն. Շամամյանին:

³⁵ Սիմոնյան Լ., Տոմարային ծիսաշար, հ. 1, Ե., 2006, էջ 23-24:

Շվոտահանության ծեսը Շիրակում կատարվում էր ջրի օգնությամբ: Փետրվարի վերջին օրը՝ երեկոյան, ամանով լիքը ջուր էին դնում դռան շեմին, և տան անդամները սկսում էին շվոտներին «դուրս անել» տնից: Եթե ջուրը թափվում էր, ուրեմն շվոտը գնացել էր: Դուռը խաչակնքում էին և ամուր փակում: Հաջորդ օրը շատերը ականատեսի նման վստահ պատմում էին, թե ինչպես են շվոտները, մի տեղ հավաքված, արտասովորով գանգատվում. «Մենք ձեզ ի՞նչ էինք անում կամ ի՞նչ վնաս տալիս, որ մեզ այս ձևովը դուրս արիք»³⁶:

Ըստ մի գրույցի (Գեղարքունիք), «Օր էդ մարտը գուքա չէ՞, կառնին գոգնոցներ, հիրկուն սներուն տփին ու կսին. «Շվոտն ի դուս, մարտ նես»: Կլարեն դուս: Ինչ որ իմ կիսուրն էր, չթողեց, ըսեց. - Շվոտ մի տփեք, դուս մի հանեք, - կսեր, - խացի փշուր լցեք խեցկի վրա, մեկ էլ աղ, տարեք դրեք մեր թավլի պատի տակ, ըսեք. - Ա՛ռ, դու, քու ձագերով կճուրի էտեղ: Մի՛ տփեք հանեք դուս»³⁷:

Ընդունված էր շվոտներին տնից, ախոռից, մառանից վնդեղուց հետո դռան առաջ գիծ քաշել՝ այսպիսով կանխելով շվոտների վերադարձը դեպի ներս: Շվոտներն այդ գիծն ընկալում են որպես մի ահագին, անանցանելի անդունդ կամ բարձր, անհասանելի պարիսպ: Տան անդամներին, հատկապես երեխաներին խստորեն պատվիրվում էր դուրս չգալ տնից, որպեսզի պատահականորեն չտրորեին այդ գիծը և մարդու ու չարի միջև պատնեշը չվերացնեին: «Եթե մէկն դուրս ելլայ, կասեն, եթե գծին վերայ կոխեց, շուտներու առջև կանգնած պարիսպը կամ պեղուած անդունդը կանյայտանայ, ներս կխուժեն, իսկ եթե չկոխեց գծի վերայ, շուտներու խումբը զինք կը յափշտակեն, գերի կը վարեն, սարը կտանեն, կսպանեն կամ որոյ հետ կամուսնանան. վերջապէս իրենց վրէժն կը լուծեն, քարէ կամ ժայռէ կը ձգեն, կամ հորերու մեջ կիջեցնեն, կամ քանի օրէ յետոյ կարծակեն որ և գալով տեսածներն կը պատմէ»³⁸:

Շվոտահանության ծեսը Տրապիզոնի գյուղերում հունվարի առաջին գիշերն էին կատարում: Լաշի³⁹ թփի ճյուղերով հարվածում էին պատերին,

³⁶ Մխիթարեանց Ա., Փշրանք Շիրակի ամբարներից (Էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 191):

³⁷ Գրիգորյան Ռ., Գեղարքունիք (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 14, Ե., 1983):

³⁸ Հայկունի Ա., նշվ. աշխ., էջ 212:

³⁹ Լաշին Սև ծովի ափամերձ շրջաններում տարածված հավամրգազգիների ընտանիքին պատկանող ծաղկաբույս է, կոչվում է նաև մրտավարդ, վարդածառ, ալպիական վարդ, եղրի (լատ.՝ rhododendron) (Գուլյան Ա., Բալայան Կ., Բուսանուն-

սյուներին, անասուններին: Լավ եզներից մեկին տուն էին բերում՝ ուշադրություն դարձնելով, թե ո՞ր ոտն է առաջինը ներս դնում. աջը բարեբախտություն էր: Անասուններին ջրով պատրաստած կեր և մանրած դրում էին տալիս, եղջյուրների վրա վառած մոմեր դնում: Մոմերի վառվելու ձևից գուշակություններ էին անում⁴⁰:

Սեբաստահայերի պատկերացմամբ՝ Տըրընդեզի գիշերը շվոտները գալիս են և միզում կրակ վառած տեղը, ուստի տղաները խարույկի հետքը վերացնում էին: Հենց նույն գիշերը դռները ծեծելով, շվոտները երեխաներին խաբեությամբ դուրս էին կանչում՝ ասելով. «Գոհար, Շուհար, շարե շարմաղը բեր», և տանում են նրանց հոշոտելու⁴¹:

Փետրվար ամսվա բոլոր օրերին Մուշում թոնրի խաչերկաթը դնում էին տան դռան հետևում, որ շվոտները ներս չմտնեն: Հավատում էին, որ գիշերները, տները մտնելով, սրանք խաբում էին մարդկանց՝ նրանց ազգականը կամ ծանոթը ձևանալով, ու տանում լեռ⁴²: Դերսիմի Արտաբերդ գյուղի մոտ գտնվում է «Շվոտի քար» կոչվող մի ժայռ՝ մոտ 50 մետր բարձրությամբ: Իբր թե «շվոտ» անունով չարքը երեխաներին գողանում և այդ ժայռի կատարից ցած էր գցում, ապա արյունը ծծում էր և մարմինը թաղում, մինչև որ թարմությունը կորցներ, նոր ուտում էր⁴³: Նույն անունով մի ժայռ կա նաև Խարբերդի Նարվեր գյուղի մոտ՝ Հայեկ լեռան ստորոտին: Ըստ գյուղացիների՝ Տըրընդեզին շվոտները գյուղ էին գալիս, երեխաներին տանում, բարձրացնում շվոտի քարի վրա և կրկնել տալիս. «Օգնէ Աստուած, չօգնէ Աստուած, ու այս երեք անգամ կրկնել կուտան, եթե կրկնողը շուարելով «չօգնէ Աստուած»-ը առաջ ըսէ, Շուտոտի ծայրեն ուղղակի Եփրատ կը նետեն եղեր»⁴⁴:

ների հայերեն, լադիներեն, ռուսերեն բառարան, Ե., 2013, էջ 46-47, **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1976, էջ 1035): Ղ. Ալիշանի հաղորդմամբ՝ լաշին արմար է, որի տերևներն ունեն թթենու տերևի նմանություն (տե՛ս **Ալիշան Ղ.**, Հայքուսակ կամ հայկական բուսաբառություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 211): Կարծում ենք, որ Տրապիզոնի գյուղերի բնակիչները լաշի բույսին վերագրել են չարխափան, չարահալած նշանակություն:

⁴⁰ **Հայկունի Ս.**, նշվ. աշխ., էջ 211:

⁴¹ Տե՛ս **Գաբիկեան Կ.**, Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952, էջ 493:

⁴² **Գ. Ա.**, Մշեցի կինը (Բիւրակն, 1898, էջ 58):

⁴³ **Հալաջյան Գ.**, Դերսիմի հայերի ազգագրությունը (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 5, Ե., 1973, էջ 43):

⁴⁴ Նարվերն ու իր Ինճեն (Անահիտ, Փարիզ, 1931, N 1-2, էջ 20):

Հարք-Խնուսում տարածված հետևյալ բանաստեղծական պատառիկները, որոնք նաև երգվել են, նկարագրում են շվոտի վերոնշյալ գործողությունները և առավելագույնս բնութագրում վերջինիս.

Շվոտ խաբեց քաշեց ճամբուն,
Տարաւ զարկեց զնար⁴⁵ քարուն,
Չոքաւ խմեց զկարմիր արուն⁴⁶:

Կամ՝

Շվատ՝ օր քան զօր վատ,
Տէրնտես՝ դարմանն է կէս,
Մարտ ինին՝ լակլակ վըր բնին:
Շվատ խաբեց հանեց ճամբուն,
Տարաւ զարկեց զնար քարուն,
Չոքաւ խմեց զկարմիր արուն⁴⁷:

Ինչպես տեսնում ենք, շվոտի մյուս կարևորագույն գործառույթներն են մարդկանց ու երեխաներին մոլորեցնելը, խաբելը, մարդուն կենսական վնաս հասցնելը և կերպարանափոխման տարբեր դրսևորումներով հանդես գալը: Այս է վկայում նաև հետևյալ գրույցը. Բագրևանդցի մի կին քնած ժամանակ դրսից լսում է ամուսնու ծայնը: Վեր է կենում, կուժը վերցնում է և ամուսնու հետևից գնում: Աղբյուրից ջուր վերցնելիս «Հիսուս Քրիստոս» է մրմնջում: Տեսնում է, որ իր կարծեցյալ ամուսինը փոքրանալով մի սև կծիկ է դառնում՝ ասելով. «Ա՛յ Հիսուս Քրիստոսը աչքդ մտնի» և անհետանում է: Կինը, հասկանալով, որ շվոտից խաբվել է, վերադառնում է տուն և ամուսնուն պատմում եղելությունը⁴⁸:

Ի հակադրություն վերոնշյալների՝ նորբայազետցիների հավատալիքներում շվոտները «սատանաներից շատ բաներով են տարբերվում. նախ, նրանց պես անմահ չեն, նրանց պես Աստծուն հակառակ չեն, այլ պաշտում են նրան: Նրանց պես չար չեն: Եվ քանի որ գոմերի շվոտներն ավելի աներես են, տկճորի մեջ (մարդիկ-Գ.Հ.) մանր քարեր են լցնում և նրանով խփում տավարին ու գոմի պատերին»⁴⁹, շվոտահանության ծեսի ժամանակ:

⁴⁵ Ապառաժ, ժայռ, արտասովոր խոշոր ու սեպ քար (տե՛ս Մելիքեան Ե., Հարք Խնուս, Անթիլիաս-Լիբանան, 1964, էջ 486):

⁴⁶ Նույն տեղում, էջ 404:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 408:

⁴⁸ Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 213:

⁴⁹ Լալայեան Ե., Նոր-Բայազէտի գաւառ, էջ 108:

Եզդիների հավատալիքներում սբաթ (փետրվար) ոգին հենց նույն շվոտն է, որը չարության, ցուտի, սառնամանիքի մարմնացում է համարվում: Ըստ նրանց՝ սբաթն իր ծագերով, փետրվար ամսվա ընթացքում պտտվում էր գյուղերում, ցուրտ, սառնամանիք, հիվանդություններ ու մահ տարածում: Երբ, Մալաքետաուսին⁵⁰ դիմելուց հետո, սբաթը հեռանում էր գյուղից, անմիջապես դադարում էին բուքն ու բորանը, ցուրտն ու սառնամանիքը, սկսվում էր զարնան զարթոնքը⁵¹:

Մնահավատական գրույցներից ակնհայտ է դառնում, որ շվոտի կերպարի և արտաքինի մասին ժողովրդի մեջ տարածված են ամենատարբեր պատկերացումներ ու ընկալումներ: Շիրակում կատարած մեր դաշտային բանահավաքչական աշխատանքների ընթացքում մի նյութ ենք գրառել «սվեդի» կոչվող ոգու մասին: Կարծում ենք, որ սա նույն շվոտն է, քանի որ ունի արտաքինի նույն նկարագրությունը և շատ այլ ընդհանրություններ. բանասացը պատմում է. «Ես Ղարսա եմ, ըստից չեմ: Հերըս ըսըմ է՝ մե օրըմ քաղքեն (Գյումրի) եմ էրթըմ (Ղարս), ըսավ, աշեմ եղևես բոյով-բոյով մէ... ողները գեդինն է, գլուխը՝ երգինքը, ըսման, ողը քըցըմ է, օր հասնի ձիուս: Ձիուս գլուխը բաց թողեցի, էման եմ քըշըմ օր: Ըդուր է հերանքըս սվեդի»⁵² էին ըսըմ: Առաջ էղել է սվեդի, բոյով...»⁵³: Սեբաստիայում նույնպես շվոտին պատկերացնում էին «յոյժ բարձրահասակ, երբ ծովը մտնէ ջուրը հագի ծունկերը կ'ելլէ, ձուկ բռնելով ձեռքովը հրեղեն երկնիցը մեջ կ'եփէ կուտէ»⁵⁴: Նոր-Բայազետում շվոտները պատկերացվում են որպես «բարձր և բարակ ոգիներ, սպիտակ շապիկ հագած»⁵⁵: Խարբերդի Բարջանճ գյուղից գեղջ-կուռի Մախո Պաճին պատմել է հետևյալ գրույցը. «Բրոտ»⁵⁶ ըլլելես սողը նէ ակիշ կը դնէի, նէ ալ խաչ հանէի - խաչ հանելը կռապաշտութիւն է, կ'ըսեին:

⁵⁰ Մալաքետաուս-եզդիների հեթանոսական աստված (Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Ե., 2006, էջ 184):

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 47:

⁵² Սվեդին իր արտաքինի նկարագրությամբ շատ նման է եզդիների «ռաշեշավե» կոչվող ոգուն: Դրանք այնքան բարձրահասակ են, որ գլուխները անհնար է տեսնել: Գիշերները, երկար ման գալուց և հոգնելուց հետո, սրանք մտնում են քարանձավները, կույզ գալիս ու քնում (տե՛ս նույն տեղում, էջ 48-49):

⁵³ Բանասաց՝ Վարդանյան Արաքսի Պեյրոսի, ծնվ. 1915 թ. Ղարսի Ուղուզլու գյուղում: 1932-ից ապրում էր Շիրակի Մարմաշեն գյուղում:

⁵⁴ Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 493:

⁵⁵ Լալայեան Ե., Նոր-Բայազէտի գաւառ, էջ 108:

⁵⁶ «Բրոտ» նշանակում է «բողոքական» [Երիցյան Ա., Բողոքականությունը տաճարական Հայաստանում (Փորձ, Տիփլիս, 1879, N 2, էջ 110)]: Ազգագրագետ Ս. Մկրտչյանի բանավոր հաղորդմամբ, «բրոտ»-ը առաջացել է ռուսերեն «протестант» բառից:

Ալք-մալք չտեսայ, ամմա կվախէի: Մարիամն օր ծնայ, էրկորոդ գիշերը, կէս քուն-կէս արթուն, տեսայ որ ինչ տեսնըմ, գժուտ, էրկան մագերով, սեւընոտ ժանիքով, երկան՝ ցից առղաներով, չանկըլված ըղունկներով, խրջլոտ ջութով, կեղտոտ եւ այլանդակ շըւտ մը կայներ է եաթաղիս ոտնակողմը, ձեռքերը օրանին կողմը էրկընցուցած: Վախուս ճնջեցի... «Աման, մարդ, շապիկ թոյրին ակիժը բե» պոռացի: Պապդ ակիշը դրաւ կողմըս, իրեք անգամ խաչ հանեցի, շըւտը իզկորուստ եղաւ, հրամանը Տիրուն»⁵⁷:

Մուսալեռցիների հավատալիքներում «շվոտը՝ իշվոտը, իրական մարդ էր: Նա մի պառավ էր, որը մի ժամանակ եղել է թիկնեղ, ուժեղ, անվախ, աշխատասեր ու քաջասիրտ: Նա ջորին բարձել է մեն-մենակ: Նա 90 աստիճանի կորացած մի արարած էր, և չար երեխաներս խաղում էինք նրա հոգու հետ՝ նրան պարտադրելով, մեզ հայիոյել»⁵⁸: Նորնախիջևանցիների պատկերացմամբ էլ շվոտ-ժիվոտը, անվի ձև ընդունելով և շատ արագ գլորվելով, ընկնում է մարդկանց հետևից, մարդկանց վրա նստելով ճնշում է իր ծանրության տակ, ամբողջ գիշեր չարչարում է ու ման տալիս նրանց: Վերոնշյալ գործառույթով շվոդն աղերսվում է խիպիլի և գաբուս (նաև ալք) ոգիներին: Այսինքն՝ շվոտ-ժիվոտին կարելի է դասել նաև տարփոգիների⁵⁹ շարքը: Նախիջևանի գյուղացիները կարծում էին, որ Տըրընդեզի ծխով ու կրակով կարող են այրել ու վերացնել ժիվոտներին, որոնք ի հայտ են գալիս Նոր տարվա օրերին: Նախիջևանի Թոփտի գյուղի հարակից ժայռերից մեկը կոչվում էր Բշդոտ-Ղայա, որը մասնավորապես ծառայում էր որպես ժիվոտ այրելու տեղ: Քաղաքի բնակիչները Տըրընդեզի կրակի մեջ ժիվոտների փոխարեն այրում էին «խոնջուլոզ» կոչվող ոգիներին, որոնք նույնպես Նոր տարուն էին երևում⁶⁰:

Շվոտին համապատասխանում է նաև փուռդիք⁶¹ կամ պուպուշիկ ոգին: Արճակում վերջիններս պատկերացվում էին իբրև «թխամորթ, խիստ-գանգ-

⁵⁷ Ծերոն Մ.Պ., Բարջանճ գիւղ (Համայնապատում, Պոստոն, 1938, էջ 126):

⁵⁸ Գյոզալյան Գ., Մուսա լեռան ազգագրությունը, Ե., 2001, էջ 231:

⁵⁹ Մ. Աբեղյանը իր «Հայ ժողովրդական հավաքքը» աշխատության մեջ տարփոգիներ է համարում քնած մարդկանց մարմինը վնասող չարքերին (խալիլի, ալք) (տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. է, Ե., 1975, էջ 35):

⁶⁰ Տե՛ս Շահագիզ Ե., Նոր-Նախիջևանը եւ Նոր-Նախիջևանցիք (Ազգագրական հանդէս, գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 18, 57):

⁶¹ Բասենում, Արարատում, Մուշում, Վանում, Շիրակում, Բուվանդխում և այլուր փուռդիք-փուռնիթ, նաև փուռնուջ (Վաղարշապատ, Օշական, Աշտարակ, Փարպի) է կոչվում թոնրի մեջ ընկած (Շիրակում՝ «կուր գնացած» հացը), կիսախմոր վիճակում գտնվող հացը, որը հրեշտակների բաժինն էր համարվում: Այսպես էր կոչվում նաև

րահեր, հաստապոռշ, ճրագի նման փայլուն աչքերով, զգգգված հանդերձներով մանուկներ: Տարվա մեջ մի օր՝ Ավետման տոնի երեկոյան, տանտիկինները ձեռքներն առած թոնիր խառնելու հսկա փայտե ձողը, վառ ճրագը տալով փոքրահասակ աղջիկներին, թոնրատան, մառանների, մթերանոցների, ախոռների ու այլ տեղերի չորս անկյուններում թոնրան անթրոցի ածխացան ծայրով խաչ էին քաշում, անընդհատ կրկնելով՝ «պուպուշի՛կ, տյու՛ս, պուպուշի՛կ, տյու՛ս: Պուպուշիկները «փախչում էին» և խմբերով «գնում-մտնում» Գյազնան՝ մեծ սատանաների մոտ»⁶²: Վասպուրականում «տանուտերը, գլուխը այծի մորթի փաթաթած, վերցնում է մի ձեռը մի ուրիշ մորթի, միւսը՝ մի մանգաղ՝ պտտում է տան բոլոր սենեակները և մանգաղով խփում պատերին՝ ասելով. «Փուռդիք, դուրս, Փուռդիք, դուրս», և այսպես, երբ հասնում է փողոցի դուռը, անելացնում է. «Փուռդիք, գնա զոզան»⁶³, պաղ աղբիւրներ, կանաչ դաշտեր, քիւրդի տներ», և անմիջապես դուռը փակում, բայց որպէսզի փուռդիքը տան հերթիկից նորից ներս չմտնէ՝ նախապես փայտի երկու ձողեր խաչաձև դնում է հերթիկի վրայ, որպէսզի փուռդիքը խաչի զօրութիւնից հալածուի»⁶⁴: Չարքերին տներից վռնելով՝ մարդիկ նրանց «ուղարկում» էին որևէ չսիրված մարդու կամ այլադավանի տուն, նաև հեռու երկիր:

Շվիտը հայտնի էր նաև որպես կենդանիներին վնասող ոգի: Ասում են, որ փետրվարին ծնված ուլերը չէին ապրում, քանի որ շվիտները տկարացնում էին նրանց կամ փոխում: Այդ պատճառով տերերը մետաղյա բոժոժներ էին կախում ուլերի պարանոցից⁶⁵: Բագրևանդյանների կարծիքով, շվիտները նիհար ու հիվանդոտ անասուններին շրջապատում ու սպանում էին, իսկ չար ու աքացի տվողներից՝ զգուշանում: Գոմերը մտնելով՝ հիվանդացնում էին ոչխարներին⁶⁶: Բորչալուում շվիտի փոխարեն հանդես էր գալիս կենդա-

եզրերը հասար, ձվածև, ռափաթայով թխած հացը, որոշ տեղերում էլ կծուճի վրա՝ թոնրի մեջ թխած հացը (Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 660): Վանում հայտնի է փուռնիկ ձևով (տե՛ս Սրվանձույանց Գ., Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 40, 350):

⁶² Ավագյան Ս., Արճակ (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Ե., 1978, էջ 89-90):

⁶³ Զոզան (քրդ.) – արուրավայր, կանաչ դաշտ, նաև ամառանոց:

⁶⁴ Լալայեան Ե., Վասպուրական (Ազգագրական հանդէս, գիրք XXV, էջ 58):

⁶⁵ Բենսէ, նշվ. աշխ., էջ 10:

⁶⁶ Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 210:

նիներին վնասող, հիվանդություն հարուցող «ազար»⁶⁷ ոգին, որին նույն շվոտահանության ծեսով հանում էին գոմերից: Օծնումն պատմում էին, որ «Գ.-ի անասունները վարակիչ հիվանդությամբ բռնուելով սկսում են կոտորուիլ: Գ. մի կով է մատղում, գոմում մոմ վառում, խունկ ծխում, որպեսզի «ազար ման ածող հրեշտակների» աչքը քաղցրանայ իւր վրայ ու թողնեն գնան: Սակայն բոլորը զուր է անցնում և կոտորածն անելի ևս սաստկանում է: Այս ժամանակ Գ. սաստիկ կատաղում է, վերցնում է մի ահագին մահակ և անասելի հայհոյանքներ ուղղելով այդ հրեշտակներին, սկսում է ուժգին հարվածներ տալ պատերին, առաստաղին և անկիւններին: Հետևյալ օրը կոտորածը դադարում է: Միևնոյն ժամանակ հարևան պառաւը գալիս ասում է, թէ ինքը նոյն գիշերն երազում տեսել է, որ տաճկական հանդերձներով չորս հոգի, ձեռներին տէգեր բռնած, դուրս են եկել դրանց գոմից: Պառաւը հարցրել է դրանց, թէ ովքե՞ր են և ու՞ր են գնում, նրանք էլ պատասխանել են, թէ իրենք «ազարի հրեշտակներ» են, և զգվելով Գ.-ից, գնում են Բ. քահանայի տուն: Նոյն իսկ նրանցից մինը ցոյց է տուել պառաւին Գ.-ի հարուածներից վիրաւորած գլուխը: Մի քանի օրից Բ. քահանայի անասուններն էլ են սկսում կոտորուել, և սա լսելով պառաւից նրա տեսած երազը, անելի զօրեղ միջոցի է դիմում այդ անկոչ հրեշտակներին իւր գոմից հեռացնելու: Մի մեծ կրակ է վառում գոմի մէջտեղը, եօթը շամփուր փոփոխակի տաքացնում և կոխում պատերի, առաստաղի ծակերն ու անկիւնները: Հետևյալ օրը նոյն պառաւը պատմում է, թէ կրկին տեսել էր հրեշտակներին մի ուրիշ գոմ փոխադրուելիս, և թէ դրանցից երկուսը կուրացել էին հնարագէտ քահանայի տաք շամփուրից»⁶⁸:

Որոշ հավատալիքների համաձայն, շվոտները գոմում ապրող կենդանիներից սիրում էին կովարար ցուլերին, անծին ու վնասակար մատակներին և ապրում էին նրանց շուրջը, ականջների և մինչև անգամ մազերի մեջ: Ձիերի կծելը, աքացի տալը վերագրվում էր շվոտների ներկայությանն ու միջամտությանը: Շվոտները մտնում էին ախոռ, հեծնում ձիերին, վազեցնում, քրտնեցնում, հյուսում նրանց բաշի և պոչի մազերը: Սնահավատական գրույցներում շատ տարածված է չարքերի կողմից ձիու մազերը հյուսելու մոտիվը: Մարդիկ ձիու վրա կուպր քսելով բռնում էին շվոտ, սատանա և ասեղի կամ քորոցի միջոցով նրանց գրկում աներևույթ լինելու կարողությունից:

⁶⁷«Ազար» բառը Արարապում, Թբիլիսիում, Ղարաբաղում, Շամախիում, Մեղրիում նշանակում է «ցավ, հիվանդություն» (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 7):

⁶⁸ **Լալայեան Ե.**, *Բորչալուի գաւառ (Ազգագրական հանդէս, գիրք X, էջ 214-215)*:

Շվոտ-Պուպուշիկ-Փուռդիք ոգին շվոտահանության ծեսով տնից ու գոմից դուրս հանելով՝ ժողովուրդը ցանկացել է պաշտպանել տան՝ փետրվարմարտ ամիսներին պակասող հացի պաշարները, գարունը դիմավորելու ժամանակ կանխել չար ուժի բացասական ներգործության հնարավորությունը: Ա. Օդաբաշյանի բնութագրմամբ, «շվոտը դուրս անելու ծիսական սովորության մեջ պահպանված է մնացել ժողովրդական պատկերացումներով գարնան գալուստն ավետող, այդ գարունը օգտակար-պտղաբեր դարձնող, նոր սկսվող տնտեսական տարին հմայական ծիսակատարություններով ապահովող մի ծես, որը հենց իր այդ բովանդակությամբ ու նշանակությամբ անմիջականորեն առնչվում է Բարեկենդանի տոնին: Այդ ծիսական սովորության խնդիրն էր ոչ միայն պահպանել նախորդ տարուց դեռևս մնացած սնունդ-պաշարեղենը, զերծ պահելով այն վնասակար ոգիների ազդեցությունից, այլև պատշաճորեն դիմավորել մարտ ամսի, գարնան հետ սկսվող նոր տնտեսական տարին, և այն նույնպես հեռացնել նույն վնասակար ոգիների ներգործությունից»⁶⁹:

Համեմատելով շվոտի մասին տարբեր գավառներում առկա գրույցներն ու հավատալիքները՝ տեսնում ենք, որ այդ ոգին հանդես է գալիս տարբեր ընկալումներով ու դրսևորումներով: Ելնելով դրա գործառույթներից՝ «շվոտ» անվան տակ կարելի է խմբավորել ժողովրդական գրույցներից մեզ հայտնի մոտ յոթ տասնյակի հասնող չար ոգիներից հետևյալները՝ **շահապետ, շվագ, ժիվոտ, իշվոտ, սվեդի, ազար, փուռդիք, պուպուշիկ**, որոնք գրեթե նույնացվում են վերոնշյալ ոգու հետ: Դժվար է հստակ սահմանել շվոտի՝ որպես չար ոգու գործառույթները, քանի որ այն չունի իր զուգահեռները այլ ժողովուրդների ոգեպաշտական պատկերացումներում և ծիսակարգում⁷⁰: Այսինքն, շվոտի հավատալիքը բնորոշ է միայն հայ ժողովրդի հավատալիքային համակարգին և հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում առկա սնահավատական գրույցներում:

Ամփոփելով շվոտի մասին մեր ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ Շվոտը տոմարային ոգի է և քննվում է հիմնականում Տեառնընդառաջ և մասամբ Ամանոր տոների համատեքստում: Որպես Ամանորի ոգի՝ հանդիպում ենք միայն Տրապիզոնում և Մաղնիսայում: Իրենց բնույթով շվոտներն ուտող-սպառող ոգիներ են և ապրում են տներում, մառաններում,

⁶⁹ Օդաբաշյան Ա., նշվ. աշխ., էջ 36:

⁷⁰ Այս կարծիքն առաջին անգամ հայտնել է ազգագրագետ Զ. Խառապյանը (լրե՛ս Харатьян З., նշվ. աշխ., էջ 48):

գոմերում և ջրհորների մեջ: **Շվոտ-ազարը** հանդես է գալիս որպես կենդանիներին հիվանդություն հարուցող, վնասող, տկարացնող ոգի: Զրույցներում շվոտը նույնացվում է սատանայի հետ և վերջինիս նման վնասազերծվում է ասեղի օգնությամբ⁷¹: Շվոտը վնասում է ծննդկանին և նորածնին: Նորածնին փոխելու կարողությամբ նույնանում է այլ հետ: Շվոտին կարելի է համարել նաև տարփոգի՝ հաշվի առնելով սեռական կյանքի նկատմամբ դրա հակվածությունը: Բազմաթիվ զուգահեռներ ունի խիպիլիկ, գաբուս ոգիների հետ: Շվոտին առավել բնորոշ են խաբելու, մոլորեցնելու, կերպարանափոխվելու հատկանիշները, և այն հանդես է գալիս արտաքին տեսքի ամենատարբեր նկարագրություններով ու ընկալումներով: Նրան առավել բնորոշ է չափազանց նիհար և բարձրահասակ լինելը (Շիրակ, Սեբաստիա, Նոր Բայազետ): Զրույցներում շվոտը հանդես է գալիս նաև անիվի (Նոր-Նախիջևան) և իրական մարդու՝ պառավի կերպարանքով (Մուսա լեռ):

ШВОТ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СУЕВЕРНЫХ РАССКАЗАХ

ГАЛСТЯН А.Г.

Резюме

В армянских народных суеверных рассказах наиболее часто встречающимся духом является швот. Это календарный дух, главным образом рассматриваемый в контексте праздника Трндез и, в частности, Нового года. Согласно народным представлениям, швоты—незримые духи, в зимние месяцы поселяющиеся в домах. В начале весны они изгонялись из дома посредством ритуала изгнания (выведения) швота. Вера в швота характерна лишь для системы верований армянского народа и встречается в суеверных рассказах почти всех районов Армении.

⁷¹ Տե՛ս Գ. Ա., *Մշեցի կինը*, էջ 58:

SHVOT IN THE ARMENIAN FOLK SUPERSTITIOUS STORIES

H. GALSTYAN

Abstract

In the Armenian superstitious stories, the spirit called shvot is common and often mentioned. It is a calendar spirit that is mainly discussed in the context of the Trndez feast, and, in particular, in the context of the New Year. According to the folk notions, shvot spirits spend the winter in peoples' houses, and in the beginning of spring, the people chase them out from their houses thanks to the special activity – ritual of driving shvot. The shvot belief is inherent to the system of beliefs of the Armenian folk and can be met in superstitious stories of almost all ethnographic regions of Armenia.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՋԱՆԻԿՅԱՆ Ս.Ռ., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ն.Զ.

Այսօր արտադրական և տնտեսական գործընթացների անկառավարելի զարգացումը, ձևավորված տեղեկատվական միջավայրը, էկոլոգիական անբարենպաստ պայմանները, հասարակության համար մեծագույն չարիք ներկայացնող թմրամոլությունը, ակոհոլի չարաշահումը, համացանցային կախվածությունը անդառնալի հետք են թողնում երիտասարդների առողջության բժշկական ցուցանիշների վրա: XXI դ. հասարակության առողջության պահպանումը և ամրապնդումը գերակա հիմնախնդիր է, որի լուծման արդյունավետ մեխանիզմների որոշակիացումը կարող է ապահովել մարդկության հետագա առաջընթացը:

Ելնելով առկա մարտահրավերներից՝ կրթական բարեփոխումների արդի փուլում սովորողների առողջության պահպանումը և ամրապնդումը ռազմավարական նշանակություն ունեն, որոնց նպատակը ազատ, կենսախիռն, ստեղծագործ, բարոյական բարձր որակներով օժտված անձի ձևավորումն է: ՀՀ հանրակրթության մասին օրենքում (հոդվ. 22) ամրագրված է. «Ուսումնական հաստատությունն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի»¹:

2008 թ. ընդունված՝ հանրակրթական դպրոցում «առողջ ապրելակերպի» կրթության հայեցակարգով առաջնային է դիտվում սովորողների ֆիզիկական, մտավոր, բարոյական, հուզական զարգացումը, ինչպես նաև

¹ Հայաստանի Հանրապետության օրենքը հանրակրթության մասին /2009/: <http://edu.am/index.php?id=3566&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>

արժեքների համակարգում կարևորվում են առողջությունը, ընտանիքը, առողջ ընտանեկան հարաբերությունները, կայունությունը, սեռերի միջև փոխհարաբերություններում՝ հարգանքը, սերը և հոգածությունը²: Այսինքն՝ աճող սերնդի առողջության պահպանման առաջնահերթությունը կրթական հիմնախնդիր է, որը պահանջում է ոչ միայն տեսական՝ մեթոդաբանական հիմնավորում, այլև գործնական՝ ընթացակարգային պարտադիր բաղադրիչի առկայություն: Ուստի նորօրյա դպրոցի գերակա խնդիրներից մեկը պետք է լինի սովորողների առողջության արժևորումը, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը՝ որպես համամարդկային արժեք:

Ներկայումս շատ է խոսվում կրթության բովանդակության արդիականացման մասին, և վերանայվում են կրթական պահանջները, չափորոշիչները, բովանդակային բաղադրիչները, այդուամենայնիվ, էական փոփոխություններ դեռևս չեն արձանագրվել: Այն փաստը, որ ուսուցիչը ավելի մտահոգված է կրթական չափորոշիչներով նախատեսված պարտադիր նվազագույնի կատարմամբ, քան կենսականորեն անհրաժեշտ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմամբ, խոսում է այն մասին, որ առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը հետին պլանում է: Այս պարագայում առկա է հակասություն կրթության պարտադիր ծավալի յուրացման և սովորողների առողջության պահպանման խնդիրների միջև: Հակասության մեջ է նաև մարդը իր բնության հետ. մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է լինել առողջ, որոշ չափով գիտե, թե ինչ է պետք դրա համար, սակայն, երբ հերթը հասնում է գործելուն, ոչինչ չի անում:

Աճող սերնդի առողջ ապրելակերպի մշակույթի դաստիարակման հիմքում առկա է ևս մեկ հակասություն, որը դրսևորվում է ժամանակակից բժշկության տեխնիկական և տեխնոլոգիական աննախադեպ զարգացման և հասարակության առողջության բժշկական ցուցանիշների կտրուկ անկման միջև: Այսպես, ենթադրենք՝ գտնվում է որևէ չարաբաստիկ հիվանդության դարմանը, սակայն այդ հիվանդությանը փոխարինելու է գալիս ավելի դաժանը:

Մի շարք տեսաբանների հայեցակարգային դրույթներում (Ռ. Բանսկի, Վ. Կազանչեև, Ի. Սիգերիստ, Յու. Լիսիցին, Ա. Շեդրինա, Ռ. Այզման և այլք) «մարդու առողջությունը» դիտարկվում է որպես նրա հոգեկան, ֆիզիկական, կենսաբանական հնարավորությունների, աշխատանքային կարո-

² Հանրակրթական դպրոցում «առողջ ապրելակերպի» կրթության հայեցակարգ
www.edu.am

ղությունների, սոցիալական ակտիվության պահպանման և զարգացման գործընթաց, իսկ հիվանդությունների բացակայությունը առողջության ցուցանիշ է:

Մարդու առողջության բնութագրիչներն են ֆիզիկական և հոգեկան առողջությունը, սոցիալ-հոգեբանական նպաստավոր հարմարումը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշման համաձայն, **առողջությունը ոչ միայն հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայությունն է, այլև ֆիզիկական, հոգևոր, կենսաբանական և սոցիալական լիարժեք բարեկեցությունը**³: Տ. Օրելսոլան, ամփոփելով մասնագետների տեսակետները, նշում է, որ մարդու առողջությունը պայմանավորված է չորս գործոնով՝ ժառանգականությամբ, բնական և սոցիալական միջավայրով, մարդու կենսակերպով (նաև մարդու կրթվածությամբ, մշակույթով), առողջապահության, բժշկության զարգացման մակարդակով⁴:

Մանկավարժության տեսանկյունից առողջությունը դիտարկվում է որպես անհատի հոգեֆիզիկական որակ, նրա սոցիալական հարմարման աստիճան. մարդը կամ պահպանում է առողջությունը, կամ էլ վնասում:

Ապրելակերպը կամ կենսակերպը մարդու գործունեության ձևերի ամբողջությունն է, վարքագիծը, կենցաղը, աշխատանքը, սոցիալ-քաղաքական կյանքը: Մարդն իր ապրելակերպով նպաստում է առողջության պահպանմանը կամ հակառակը, ուստի այն դառնում է հասարակության զարգացածության ցուցանիշը:

Առողջ ապրելակերպը որոշում է անձի ուղղվածությունը սեփական և հասարակության առողջության պահպանմանը, ամրապնդմանը: Այդ հասկացությունը հենքային է վալեոլոգիայում: Առողջ ապրելակերպը պայմանավորում է մարդու գործունեության բոլոր ոլորտները: Յու. Լիսիցինի կարծիքով, առողջ ապրելակերպը մարդու կենսագործունեության եղանակ է, որն ուղղված է առողջության պահպանմանը և ամրապնդմանը⁵: Այն միտված է փոխելու, վերանայելու, արժևորելու մարդու և ընդհանարապես հասարակության վերաբերմունքը առողջության նկատմամբ՝ որպես բարձրագույն արժեքի: «Առողջ ապրելակերպ» հասկացությունը ներառում է

³ http://www.koob.ru/kaznacheev_v_p/chelovek_v_mirozdanii/

⁴ **Орехова Т.Ф.** *Теоретические основы формирования здорового образа жизни субъектов педагогического процесса в системе современного общего образования*, М., 2011, с. 4.

⁵ **Лисицин Ю.П.** *Общественное здоровье и здравоохранение. Учеб.*, М., 2002.

վնասակար սովորությունների բացակայություն, առողջության պահպանում, առողջ սննդակարգ, ֆիզիկական ճիշտ ծանրաբեռնվածություն, բժշկական հետազոտություններ և այլն:

Առողջապահական կրթությունն առաջադրում է մի շարք խնդիրներ՝ առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների մասին դպրոցականներին տալ գիտելիքներ, որոնք նրանք կկարողանան կիրառել կյանքում, սեփական իրավունքների և պարտականությունների իմացություն, ինքնուրույն մտածողություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն, փոխօգնություն, ընտանեկան կյանքի պատրաստություն, ինքնավստահություն⁶:

Առողջապահական կրթության ռազմավարական նպատակը առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումն է: Դա մարդու ընդհանուր մշակույթի մասն է, որի բովանդակային բաղադրիչներն են ինտեգրված գիտելիքները, անձի արժեքային կողմնորոշումները, պահանջմունքները, աշխարհայացքը: Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման համար անհրաժեշտ են առողջապահական և առողջարարական մանկավարժական տեխնոլոգիաների մշակումը և դրանց ներդրումը կրթադաստիարակչական գործընթացում:

Առողջ ապրելակերպի մշակույթի կառուցվածքում գիտնականները (Յու. Լիսիցինը, Տ. Օրեխովան, Ի. Սիգերիստը, Ն. Մալարչուկը, Ա. Շեդրինան, և այլք) դիտարկել են հետևյալ բաղադրիչները՝

- **անձի ֆիզիկական կուլտուրան**՝ ֆիզիկական զարգացածության և պատրաստվածության մակարդակը, անձի գործողությունների ակտիվությունը

- **սնվելու մշակույթը**՝ սննդակարգը, սննդի քանակը, կալորիակա-նությունը

- **հանգստի մշակույթը**՝ ակտիվ և պասիվ հանգիստը

- **վարքագծի մշակույթը**՝ ժամանակի ճիշտ կառավարումը, վարքի նորմերը, վնասակար սովորությունները, օրվա ռեժիմը:

Համաձայնելով ներկայացված տեսակետի հետ՝ առաջարկում ենք որպես կառուցվածքային տարրեր դիտարկել նաև՝

⁶ Геворкян М.М. Опыт организации работы в области ВИЧ-профилактики в Армении (деятельность Министерства образования и науки РА) http://hiv.cipv.ru/-static.php?mode=articles_07

- **Էկո-առողջարարական մշակույթը**, որ ներառում է էկոլոգիապես մաքուր օդի, ջրի, հողի, սննդի, էկոլոգիապես առողջ միջավայրում ապրելու իրավունքը, էկոլոգիապես անվտանգ վարքագիծը,

- **առողջ ապրելակերպի բարոյագիտությունը**՝ առողջության պահպանման պահանջմունքի ձևավորումը, տարիքային փուլին համապատասխան հոգեկան գործընթացների կայուն և հավասարաչափ զարգացումը, աճող սերնդի սոցիալական հարմարումը, բարոյական զարգացումը,

- **մեդիագրագիտությունը**՝ մեդիա իրականությունում կողմնորոշվելու կարողությունները, որոնք կօգնեն պահպանել հոգեկան հավասարակշռությունը, դիմակայել սոցիալական ագրեսիային՝ միաժամանակ տիրապետելով անհրաժեշտ տեղեկատվության, և քայլել ժամանակին համընթաց:

Առողջ ապրելակերպի մշակույթը ենթադրում է բնագիտական, էկոլոգիական, ֆիզիոլոգիական և սոցիալական կայուն հիմքեր, «բնություն-մարդ-հասարակություն» անընդհատ զարգացող համակարգի, առողջության պահպանման վերաբերյալ համակարգային, միջառարկայական, ինտեգրատիվ կայուն գիտելիքներ, բնական, էկոլոգիական աղետների ռիսկերի գնահատման կարողություններ, անձի կրթվածության որոշակի մակարդակ և կանխորոշում է երկրի և յուրաքանչյուր քաղաքացու կայուն ու ներդաշնակ գոյատևման հնարավորությունները:

Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը պայմանավորված է մի շարք գործոններով՝

- **սոցիալ-տնտեսական**. կրթական բարեփոխումները, կյանքի որակի անկումը, տնտեսական, սոցիալական ճգնաժամերը, տեղեկատվական միջավայրը, հասարակության անտարբերությունը շրջակա միջավայրի, սեփական առողջության նկատմամբ,

- **էկոլոգիական**. բիոտիկ, աբիոտիկ, մարդածին գործոնները, հողի, ջրի, օդի, սննդի էկոլոգիական աղտոտվածությունը,

- **մանկավարժական**. սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, կրթական առողջ միջավայրի ապահովումը, դպրոցներում հիգիենայի տարրական կանոնների բացակայությունը, ուսուցչի էկո-առողջարարական մշակույթի ձևավորվածության ցածր մակարդակը, առողջ ապրելակերպի վերաբերյալ ծնողների անբավարար գրագիտությունը,

- **հոգեբանական**. դասարանում հոգեբանական տեսանկյունից բարենպաստ, համագործակցային մթնոլորտի ապահովումը, միջանձնային

հաղորդակցության մշակույթի ձևավորումը, սովորողների զգայական ոլորտի զարգացումը (ռեֆլեքսիա, ապրումակցում, էմպատիա),

• **դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները.** առաջին հայացքից թվում է, թե այդ պայմանների ապահովումը չափից ավելի ծախսատար է, սակայն իրականում հնարավոր է ապահովել առողջ միկրոկլիմա, ինչը ենթադրում է կանոնավոր օդափոխություն, ջեռուցման ճիշտ կազմակերպում, անհրաժեշտ խոնավության, լուսավորության ապահովում: Այս առումով կարևորվում է նաև դպրոցի կահավորանքը. այն պիտի լինի ոչ միայն հարմարավետ, համապատասխանեցված տարիքային զարգացման առանձնահատկություններին, այլև՝ էկոլոգիապես անվտանգ:

Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման գործում կարևորվում է մարդու կենսագործունեության միջավայրը. աղմուկը, ոչ անառողջ սնունդը, օդի, ջրի, հողի աղտոտվածությունը, ճառագայթումը, սոցիալական, քաղաքական փոփոխությունները, ինչպես նաև ընտանեկան, աշխատանքային հարաբերությունները, գործազրկությունը պայմանավորում են մարդու կյանքի որակը:

Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման կարևոր պայմաններից է կրթադաստիարակչական գործընթացի նպատակաուղղվածությունը, որը պիտի նպաստի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը: Տեղեկատվական-կրթական ընդհանուր միջավայրի ստեղծումը, ՀԼՄ-ների ներգործության մեխանիզմների կառավարումը, սովորողների առողջության վրա դրանց բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելն էական նշանակություն ունի այս հարցում: Անհերքելի է, որ առանց մեդիամիջոցների մեր կյանքը դառնում է խիստ սահմանափակ և մեկուսացված: Չնայած որ համացանցը տեղեկատվության փոխանցման յուրահատուկ և կարևոր տեխնոլոգիա է, այնուամենայնիվ, կրթական համակարգում ընդամենը ուսուցման միջոց է և ոչ երբեք նպատակ: Անհրաժեշտ է այն խելամտորեն կիրառել՝ ելնելով կրթական նպատակներից և կարիքներից:

Էական նշանակություն ունի նաև սովորողների առողջ ապրելակերպի պահանջմունքի ձևավորումը, որը ենթադրում է սեփական անձի և հասարակության առողջության պահպանման պատասխանատվություն: Առողջ ապրելակերպի դրդապատճառների ձևավորումը անհրաժեշտ է սկսել վաղ տարիքից: Առաջնային է առողջ ապրելակերպի պահանջմունքի զարգացումը, այսինքն, եթե սովորողը չի պատկերացնում ակոհոլի, թմրամիջոցների, ծխախոտի, նստակյաց կենսակերպի վնասակար հետևանքները, չի

հետևում առողջ սննդակարգի, ապա անօգուտ է նրա նկատմամբ որևէ գործողություն կիրառելը: Սակայն հաճախ, իր արարքը գիտակցելով հանդերձ, մարդը դժվարանում է դրա դեմ որոշակի քայլեր ձեռնարկել: Առողջ ապրելակերպի մշակույթը, գիտելիքների յուրացման հետ մեկտեղ, պահանջում է իրական նպատակի առկայություն, պատրաստակամություն, ձևավորում է կամային որակներ, կյանքի, առողջության արժևորում, ինքնահարգանք և ինքնիրացման ձգտում:

Աճող սերնդի առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման գործում նշանակալի է ուսուցչի դերը: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցի, որ մասնագիտական-կրթական գործունեությունը ոչ միայն առարկայական գիտելիքների, այլև առողջության, միջավայրի կենսածին և ոչ կենսածին գործոնների փոխազդեցության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման գործընթաց է, որը ներառում է նաև առողջ ապրելակերպի քարոզչությունը, սովորողների առողջության պահպանման և ամրապնդման պատասխանատվությունը⁷: Ուսուցման գործընթացում սովորողների առողջության պահպանումը մեծ մասամբ կախված է ուսուցչից, այսինքն, որքանով է նա ուշադրություն դարձնում նրանց ճիշտ կեցվածքի ձևավորմանը, հիգիենայի կանոններին և այլն: Եթե ուսուցիչը իրոք կարևորում է առողջությունը, ապա նրան մտահոգում է նախ այն հանգամանքը, թե ինչ դժվարությունների են հանդիպում իր սաները ուսումնական նյութի յուրացման ընթացքում, ինչպես են արձագանքում նկատողություններին, ցածր գնահատականներին, ինչպիսին է դասարանի հուզականության, սթրեսայնության մակարդակը:

Այսպիսով, սովորողների առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման հարցում էական դեր ունի մանկավարժը, որի հոգեկան, ֆիզիկական առողջությունը, ինչպես նաև սոցիալական բարվոք վիճակը ժամանակակից հասարակության կայուն զարգացման երաշխիք են:

⁷ **Карапетян Н.З.** Проблема эколого-валеологической культуры учителя в контексте модернизации образования Республики Армения. Психопедагогические аспекты формирования ценности здоровья, культуры здорового и безопасного образа жизни в системе образования. Сборник научно-методических материалов /выпуск II/, М., 2014, с. 73-76.

КУЛЬТУРА ЗДОРОВОГО ОБРАЗА ЖИЗНИ КАК СОЦИАЛЬНО-ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ПРОБЛЕМА

ДЖАНИКЯН С.Р., КАРАПЕТАН Н.З.

Резюме

В результате неконтролируемого развития производства и определенных экономических процессов крайне ухудшились экологические условия, снизились медицинские показатели здоровья членов социума. Серьезной угрозой для общества являются алкоголизм, наркомания, СПИД. Поэтому задача сохранения и укрепления здоровья подрастающего поколения – одна из наиболее важных и сложных задач современного образования.

Здоровье как общечеловеческая ценность включает в себя не только физические, духовные, социальные стороны жизни, но и процесс развития человека и биосферы. В силу сказанного необходимо формировать ценностные ориентации, потребность сохранения здоровья и экологически безопасное поведение еще в школе.

Содержательными компонентами культуры здорового образа жизни являются знания, а также эколого-валеологическая культура, этика здорового образа жизни, медиаграмотность личности.

THE CULTURE OF HEALTHY LIFESTYLE AS A SOCIAL AND EDUCATIONAL ISSUE

S. JANIKEYAN, N. KARAPETYAN

Abstract

Modern environment of information, ecological adverse conditions, drug addiction, abuse of alcohol, HIV, AIDS, overconsumption of internet leave their marks on the health indicators of the youth. For that reason, the maintenance of growing generation's health is an educational issue which requires a healthy lifestyle culture recognition.

The strategic goal of health education is to form a healthy lifestyle culture. For the formation of such a culture treatment of healthy and wholesome pedagogical techniques, as well as their implementation in the educational process are required.

In the structure of healthy lifestyle culture the physical culture of the person, the culture of nutrition, rest, behavior, as well as eco-health culture, ethics of healthy lifestyle, media literacy are considered.

The formation of healthy lifestyle culture is due to socio-economic, pedagogical, ecological and psychological factors, as well as the sanitary and hygienic conditions of the school.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ

ԶԱՐԳԱՐՅԱՆ Տ.Կ., ՂԱԶԱՐՅԱՆ Հ.Կ.

Անդրադարձ կատարելով լրագրության ծագման պատմությանը՝ Գարեգին Լևոնյանը գրում է. «Յուլիոս Կեսարն առաջին հրատարակիչն է հանդիսանում, որովհետեւ 49-թուին (Ք.Յ.) հրամայեց այսպես կոչուած Acta Romana diurna եւ Acta senatus կանոնաւորապէս խմբագրել եւ հրատարակել»¹: Ապա շարունակում է թվարկել, թե որ ազգերն են հռոմեացիներից հետո զարկ տվել լրագրությանը՝ նշելով չինացիներին (366 թ.), իտալացիներին (1563 թ.), ֆրանսիացիների (1605թ.), շվեյցարացիներին (1609 թ.), ավստրիացիներին (1610 թ.), գերմանացիներին (1612 թ.), անգլիացիներին (1622 թ.), իսպանացիներին (1626 թ.), շվեդներին (1644 թ.), ռուսներին (1703 թ.), և ապա նշում է. «Տասներկուերորդ տեղը գրաւում են Հայերը: Հնդկաստանի Մադրաս քաղաքում հիմնուեց առաջին հայ օրագիրը «Ազդարար» անունով»: Այսպիսով, հայ պարբերական մամուլի պատմությունը սկսվում է 1794 թվականից, երբ Մադրասում Հայր Հարություն Շմավոնյանի ջանքերով հրատարակվում է «Ազդարարը»:

Հայ լրագրության պատմության վերաբերյալ առանձին նյութերի ենք հանդիպում սկսած XIX դարի 40-ական թթ., երբ հրապարակում գտնվող հայ պարբերականների թիվը չէր անցնում մի քանի տասնյակից: Դրանք առավելապես նկարագրական բնույթի նյութեր էին, պարունակում էին տեղեկություններ առանձին լրագրերի կամ լրագրերի փոքր խմբերի մասին, որոնք հիմք էին դնում հետզհետեւ ավելացող պարբերականների

¹ Լեւոնեանց Գ., Հայոց պարբերական մամուլը: Պատմական տեսութիւն սկզբից մինչեւ մեր օրերը (1794-1894), Ալեքսանդրապոլ, 1895, էջ Ա-Դ:

գրանցման և ցուցակագրման գործին²: Դրանք սովորական պարզ ցուցակներ էին, որոնք տպագրվում էին ժամանակին լույս տեսնող պարբերականների՝ «Բազմավեպ» հանդեսի, «Եւրոպա» շաբաթաթերթի, «Փարիզ» թերթի էջերում: XIX դարի վերջին, պարբերականների աճին զուգահեռ, դրանց ուսումնասիրությունը զարգացման նոր փուլ մտավ: Սկսեցին հրատարակվել ոչ միայն պարբերականների լրիվ ցուցակներ, այլև առանձին պարբերականների կամ առանձին աշխարհագրական վայրում հրատարակված պարբերականներին վերաբերող ուսումնասիրություններ, օրինակ, Յարոյի «Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ»³, Գ. Գալեմբեարեանի «Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը»⁴, Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»¹ և այլն:

Հայ պարբերականների մատենագիտության պատմությունը որակական նոր փուլ է մտել, երբ 1946 թվականից Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում, իսկ այնուհետև նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում ձեռնամուխ են եղել հայ գրքի, իսկ այնուհետև նաև հայ մամուլի ամբողջական մատենագիտական ցանկերը կազմելու աշխատանքներին⁵:

Հարկ է նշել, որ հայ մամուլի երկու խոշորագույն պահոցներ հանդիսացող թե՛ հանրային գրադարանում և թե՛ պետական գրապալատում պատրաստված հայ պարբերական մամուլի մատենագիտության համահավաք ցանկերը զերծ չեն եղել թերություններից, կոպիտ սխալներից և մասնագետների կողմից արժանացել են քննադատության^{6,7}:

Մատենագիտությունը երբեմն դարձել է նաև քաղաքական զենք: Խորհրդահայ մատենագետները զերծ չէին արտերկրում հրատարակված

² Բաբլոյան Մ.Ա., Հայ լրագրության առաջին պարմաբանները (Պարմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1981, թ. 2, էջ 119-133):

³ Յարոյ Ն., Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ, Թիֆլիս, 1878, 135 էջ:

⁴ Գալեմբեարեան Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, Վիեննա, 1893, 226 էջ:

⁵ Թիրաբյան Ա., Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանը (ՊԲՀ, 1961, թ. 2, էջ 257-263):

⁶ Գասապյան Ն., «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)» (համահավաք ցանկ), կազմեց՝ Ա. Կիրակոսյան, խմբագրություն և առաջաբան՝ Հ. Կոստիկյանի և Հ. Սիվանյանի, Ե., 1970, 624 էջ (ՊԲՀ, 1974, թ. 4, էջ 220-225):

⁷ Գասապյան Ն., Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, 3 հատորով, կազմեց Հովհ. Պետրոսյան, Հայկական ՍՍՌ պետգրապալատ, Ե., հ. I, 1954, հ. II, 1956, հ. III, 1957 (ՊԲՀ, 1961, թ. 3-4, էջ 307-330):

մատենագիտությունները քաղաքական պրիզմայի միջով անցկացնելու հնարավորությունից: Այսպես, վաստակաշատ մատենագետ Մ. Բաբլոյանն իր «**Հայ մամուլի պատմությունը միտումնավոր լուսաբանությամբ**» գրախոսությունում⁸ հիմնովին ջախջախում է Պետրոս Ֆրունճյանի «Հայ մամուլի ծագումն ու զարգացումը և նրա ազդեցությունը հայ նոր գրական լեզվի ու քաղաքական մտքի կազմավորման վրա» խորագրով գիրքը⁹, որը գերմաներեն առաջին ծավալուն աշխատությունն է հայ պարբերական մամուլի մասին, և ներկայացվել է որպես ատենախոսություն Արևմտյան Բեռլինի Ազատ համալսարանին՝ փիլիսոփայության դոկտորի աստիճան հայցելու համար: Բաբլոյանն իր գրախոսությունն ավարտում է այսպես. «Պ. Ֆրունճյանի այս աշխատությունը ըստ էության ծառայում է երկու նպատակի՝ օտար ընթերցողներին ինչ-որ չափով ծանոթացնել հայ մամուլի, լեզվի, հասարակական մտքի պատմությանը և, այդ հենքի վրա, պրոպագանդել այն քաղաքական միտումները, որոնց հիմնական նպատակը սովետահայ մամուլի հասարակական մեծ դերի նսեմացումն է, ծուռ հայելու մեջ ցուցադրելը: Երկու դեպքում էլ Պ. Ֆրունճյանը չի հասել իր նպատակին. միակ բանը, որին նա հասել է, հայ մամուլի պատմության և նրա դերի ոչ գիտական, աղավաղված լուսաբանումն է: Գրախոսվող գրքի երևան գալը մի ավելորդ անգամ շեշտում է հայ դարավոր մամուլի պատմության ամբողջական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Սովետահայ գիտնականների առաջնահերթ խնդիրն է ստեղծել հայ պարբերական մամուլի թեկուզ համառոտ մարքսիստական պատմությունը և ներկայացնել ընթերցողների լայն շրջաններին, այն հրատարակելով նաև օտար (եվրոպական) լեզուներով»⁸: Բնական է, որ գրախոսությունն ամբողջովին քաղաքականացված է, կրում է իր ժամանակաշրջանի կնիքը, փորձ է արվում հիմնովին նսեմացնել հայկական սփյուռքի քաղաքական մամուլի ունեցած դերը և նշանակությունը հայության միավորման և լեզվամտաճողության պահպանման գործում ու չի կարող համարվել անկողմնակալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ազգն ունեցել և այսօր էլ ունի մեծ սփյուռք, և որ ազգային ինքնությունը և լեզուն պահպանելու

⁸ **Բաբլոյան Մ.Ա.**, *Հայ մամուլի պատմությունը միտումնավոր լուսաբանությամբ* (Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1972, թ. 6, էջ 95-100):

⁹ **Frundjian B.** *Entstehung und Entwicklung der armenischen Presse und ihr Einfluss auf die neuarmenische Schriftsprache und die politische Meinungsbildung*, Berlin, 1961, S. 227.

լավագույն միջոցներից մեկը եղել են պարբերականները, զարմանալի չէ, որ գործնականում հայկական բոլոր համայնքներում տպագրվել են բազմաթիվ լրագրեր, շաբաթաթերթեր, հանդեսներ: Կապված հրատարակական բարդությունների և ֆինանսների սղության հետ՝ այդ պարբերականների մեջ զգալի թիվ են կազմում ձեռագիր և խմորատիպ հրատարակությունները: Որոշ հայկական համայնքներում տպագրվել են հայատառ օտարալեզու պարբերականներ: Նման պարբերականների թիվը մեծ է եղել Թուրքիայում: Բացատրելով սրա պատճառները՝ Ալբերտ Խառատյանը նշում է. «Հայատառ թուրքերեն մամուլի հանդես գալը XIX դ. 40-ական թվականներին պայմանավորված էր Օսմանյան Թուրքիայում թուրքախոս հայ հատվածների առկայությամբ: Լեզվական պատնեշով կտրված լինելով հայ իրականությունից, Արևմտահայաստանի թուրքախոս հայ բազմությունները, այսուհանդերձ, պահպանում էին իրենց ազգային ինքնությունը, իրենց ազգային տարածքի վրա ապրելու և հայ լինելու պատմականորեն ձևավորված գիտակցությունը: Ազգային լեզվի կորուստը այս պարագայում պատմական ճակատագրի անմիջական կնիքն էր. մի դեպքում դավանական համոզմունքների հարկադրված փոփոխությունը (թուրքախոս դարձած հայ կաթոլիկներ), մյուս դեպքում օսմանյան ավանդական միջավայրի լեզվական ու կրոնական ճնշումները էական դեր էին ունեցել նշված հատվածների մեջ մայրենի լեզուն ամբողջովին կամ մասամբ մոռացության տալու գործում»¹⁰:

Ուստի զարմանալի չէ, որ նման լայն աշխարհագրական բաշխվածության պարագայում հայ մամուլի մատենագիտության ցանկացած համահավաք ցանկի կազմումը մանրակրկիտ և տքնաջան աշխատանքի, ուսումնասիրությունների արդյունք է աշխարհի տարբեր գրադարաններում, արխիվներում ու մասնավոր հավաքածուներում: Սա է պատճառը, որ համահավաք մատենագիտական ցանկերը միշտ էլ լի են բացթողումներով ու սխալներով և դառնում են քննադատության թիրախ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի զարգացման ներկա փուլը նոր լուծումներ է առաջադրում մատենագիտական ցանկեր կազմելու հարցում: Թղթային հրատարակություններն իրենց տեղը զիջում են մատենագիտական շտեմարաններին: Մատենագիտական ցանկերին բնորոշ ցուցիչներ կազմելու ծավալուն և բարդ աշ-

¹⁰ Խառատյան Ա., *Հայատառ թուրքերեն մամուլը (1840-1890-ական թթ.)* (ԼՀԳ, 1995, թ. 2, էջ 72-85):

խատանքը դառնում է ավտոմատացված, և խմբագիրների, հրատարակիչների, տպարանների, քաղաքների ու երկրների այբբենական ցանկերն ստեղծվում են համակարգչի միջոցով: Հեշտանում է սխալների վերահսկման և շտկման ողջ շղթան: Հնարավորություն է ստեղծվում հիմնական մատենագիտական գրառումից անցումներ կատարելու խմբագիրների, տպարանների, տպագրավայրերի ցանկերին: Ավելին, հնարավոր է դառնում հիմնական մատենագիտական գրառմանը կցելու պարբերականի ամբողջական լրակազմերը՝ դրանց թվային պատճենների տեսքով: Շատ արդյունավետ է նաև մատենագիտական գրառմանը հավելել տվյալ պարբերականի վերաբերյալ հրապարակված արժեքավոր մենագրությունները, գիտական հոդվածները:

Էլեկտրոնային մատենագիտական ցանկերը, իրենց թղթային համարժեքների համեմատ, ունեն մի շարք առավելություններ.

- Հնարավոր է գրառումներում առկա սխալները և վրիպակները շտկել, ինչ-ինչ պատճառներով բաց թողնված պարբերականները ներառել շտեմարանում, մամուլի նոր վերնագրերի ի հայտ գալու պարագայում դրանք շատ հեշտ ավելացնել շտեմարանում: Այսինքն, նման շտեմարանը **միշտ արդիական է:**

- Հարկ է նշել, որ նման շտեմարանները նաև **վիճակագրական տվյալների հավաքման և տրամադրման** եզակի աղբյուրներ են:

- **Տեխնոլոգիական տեսանկյունից** էլեկտրոնային մատենագիտական ցանկերը համացանցի առկայության պարագայում հասանելի են աշխարհի ցանկացած կետից, օրվա բոլոր ժամերին, տարվա բոլոր օրերին: Թվային պատճեններում բացակա, պատռված կամ վնասված էջեր չեն լինում:

- Լրակազմերի թվային պատճենների առկայությունը լուծում է պարբերական մամուլի **երկարաժամկետ պահպանության խնդիրը**, քանի որ բնօրինակի փոխարեն հնարավոր է դառնում կազմակերպելու ընթերցողների սպասարկումը թվային պատճենների օգնությամբ, ինչպես նաև իրականացնելու մամուլի վնասված էջերի արտատպումը բարձր որակի թվային պատճենից:

- **Հեռաուսուցման** միջոցով համալսարանների հումանիտար հոսքերում դասընթացներ պատրաստելիս շտեմարանը կարող է ծառայել որպես կրթական պաշարների եզակի գրադարան:

Նկատի առնելով այս հանգամանքները, ինչպես նաև կարևորելով նախորդ սերունդների մատենագետների կազմած համահավաք ցանկերը մեկտեղելու, լրամշակելու և հանրությանը նորովի տրամադրելու խնդրի կարևորությունը՝ Հայաստանի ազգային և ԳԱԱ հիմնարար գի-

տական գրադարանները 2014 թվականից ձեռնամուխ եղան հայ պարբերականների համահավաք գրացուցակի ձևավորման աշխատանքներին: Համահավաք գրացուցակը ներառում է 1794 թվականից մինչև մեր օրերն աշխարհի տարբեր ծագերում հրատարակված հայատառ պարբերականները և շարունակական հրատարակությունները: Գրացուցակում գրավված են նաև այլալեզու մամուլի այն անվանումները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է: Մասնագիտական քննարկումներից հետո որոշվեց, որ շտեմարանում, բացի թերթերից և ամսագրերից, հարկ է գրանցել նաև տարեգրքերը, տարեցույցները, տեղեկագրերը: Այդ իսկ պատճառով նախագիծը ստացավ «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ» անվանումը: Շարունակական հրատարակությունները, ըստ հրատարակության բնույթի, բաժանված են՝ թերթ, ամսագիր, տարեգիր, տեղեկագիր, էլ. թերթ և էլ. ամսագիր: Հայատառ օտարալեզու մամուլը, ինչպես նաև խմորատիպ (հեկտոգրաֆիկ), ապակետիպ, ձեռագիր չբազմացված, միօրյա հրատարակությունները ևս ներառված են շտեմարանում: Առանձին քննարկումներ ծավալվեցին, թե մատենագիտական գրառումներին կցված պարբերականների թվային պատճենները ինչ կարգավիճակով պետք է հասանելի լինեն հանրությանը: Ուսումնասիրվեց եվրոպական ազգային գրադարանների, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ընթացող համանման նախագծերի փորձը: Լայնորեն կիրառվող երկու մոդելներից՝ «մատենագիտական գրառումները անարգել հասանելի են բոլորին, սակայն թվայնացված բովանդակությունը հասանելի է միայն բաժանորդագրությամբ» ու «թե՛ մատենագիտական գրառումները և թե՛ թվայնացված բովանդակությունն անարգել հասանելի են բոլորին համացանցին միացված ցանկացած համակարգչից կամ ձեռքի ընթերցիչներից», ընտրվեց երկրորդը: Հիմնական պատճառներից մեկն այն էր, որ եթե հասանելիությունը շտեմարանի ամենաարժեքավոր բաղկացուցիչն՝ թվայնացված բովանդակությանը, դարձվի վճարովի, ապա այն գործնականում անհասանելի կդառնա ուսանողությանը, հայագետների մի ստվար բանակի, ինչպես նաև հանրության լայն խավերին՝ մարդկանց, որոնք հսկայական ներդրում և մասնակցություն են ունեցել այդ պարբերականներից շատերի ստեղծմանը և կայացմանը:

Որպես հեղինակային իրավունքի մոդել՝ ընտրվեց «Ստեղծագործական համայնքներ. CC BY-NC 3.0» արտոնագիրը¹¹: «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակի» ձևավորման աշխատանքների համար հիմք ընդունվեց 2011 թվականից ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի կողմից գիտական հրատարակությունների բնագավառում փորձարկված և ակադեմիական ամսագրերի հրատարակման նպատակով լայնորեն կիրառված «Բաց մատչելիության» սկզբունքը: 2011-2014 թթ. ընթացքում ՀՀ ԳԱԱ բոլոր պարբերականները, սկսած 1940 թվականին հրատարակած «ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալ. Տեղեկագիր» առաջին ամսագրից, արդեն թվայնացված և «Բաց մատչելիության» սկզբունքով տեղադրված էին «Հայկական գիտատեղեկատվական հանգույցում»¹²:

«Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակի» ձևավորման ծրագրային միջավայրի ընտրության հարցում նախագծողները կրկին հենվեցին ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում փորձարկված «Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի» վրա¹³: Սա ծրագրային ապահովման թողարկման նորարարական ուղղություն է և, ի հակակշիռ առևտրային ծրագրային փաթեթների, առաջարկում է հենց օգտատերերի ջանքերով նախագծված և փորձարկված ծրագրային լուծումներ, որոնք անվճար տրամադրվում են հանրությանը¹⁴:

Նորահայտ պարբերականներ. Ինչպես նշվեց հոդվածի սկզբում, պարբերականների համահավաք մատենագիտական ցանկերն ունեն մի մեծ թերություն, այն է՝ հնարավոր չէ երբեք ներառել բոլոր անվանումները, քանի որ միշտ էլ լինում են բացթողումներ: «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակի» ձևավորման ընթացքում ուսումնասիրվել են մեզ հայտնի բոլոր ցանկերը, նկատի են առնվել առանձին հոդվածներում նշված նորահայտ պարբերականները: Սակայն աշխատանքի ընթացքում մեզ հաջողվեց գտնել մատենագիտական համահավաք գրացուցակներում չարձանագրված պարբերականներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

¹¹ <https://creativecommons.org/licenses/by-nc/3.0/>

¹² Հանգույցի համացանցային հասցեն է <http://www.flib.sci.am/arm/node/2>

¹³ <https://opensource.com/resources/what-open-source>

¹⁴ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը, սկսած 2008 թ., ակտիվորեն ընդգրկված է միջազգային տարբեր նախագծերում, որոնց նպատակն է գրադարաններին տրամադրել կիրառական ուղղվածության «Բաց/ազատ կոդերով ծրագրաշարեր»:

«**Մանուկ**», Սպահան, 1931 (աշակերտական ձեռագիր պարբերական)

«**Նոր Բաստիլ**», Հալեպ, 1927 (քաղաքական բանտարկյալների խմորատիպ պարբերական)

«**Բաբելոն**», Բոստոն, 1919-1921 (սկզբում խմորատիպ, հետո՝ տպագիր), հայատառ ասորերեն ամսագիր:

«**Նիհուլ**», Բոստոն, 1927-1928, հայատառ ասորերեն ամսագիր:

Վստահ ենք, որ ժամանակի ընթացքում նորանոր անվանումներ կհաջողվի հայտնաբերել և գրանցել շտեմարանում: Հետևողական աշխատանք է կատարվում մատենագիտական համահավաք գրացուցակներում աստղանիշով նշված¹⁵ պարբերականների թղթային կամ թվային օրինակների ձեռքբերման ուղղությամբ: Այսպես, Աստրախանում 1816 թ. հրատարակված «Արեւելեան ծանուցմունք»=Восточныя известія պարբերականի վերջին՝ 27-րդ համարը ձեռք ենք բերել Աստրախանի երկրագիտական հավաքածուի առցանց գրադարանի կայքից: Ամբողջական լրակազմը գտնվում է Կազանի համալսարանի գրադարանում, որի հետ կնքված երկկողմ պայմանագրի արդյունքում շուտով այդ պարբերականի 1816 թ. լրակազմի թվային պատճենները կտրամադրվեն Հայաստանի ազգային գրադարանին: Ի դեպ, այս պարբերականը արևելահայ առաջին լրագիրն է¹⁶: Հայկազյան համալսարանի Հայկական սիյուռքի ուսումնասիրման կենտրոնը մեզ է տրամադրել 1929 թ. Բեյրութում հրատարակված «Վիլակ» պարբերականի նմանահան (ֆաքսիմիլե) օրինակը, որի թվային պատճենը նույնպես տեղադրված է շտեմարանում:

Վիճակագրական տվյալներ. «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակը» առ 01.02.2017 թ. պարունակում է 5772 մատենագիտական գրառում, որից թերթ՝ 2514, ամսագիր՝ 3108, տարեգիր՝ 117, էլ. թերթ՝ 6, էլ. ամսագիր՝ 11, տեղեկագիր՝ 16: Մատենագիտական գրառումների ընդհանուր քանակը պետք է, որ շատ մոտ լինի իրականությանը, և չենք կարծում, որ այս քանակը կենթարկվի շատ մեծ փոփոխությունների:

¹⁵ Կազմողը չի տեսել, այլ գրառել է որևէ աղբյուրի տեղեկատվության հիման վրա:

¹⁶ Մխիթարյան Մ.Հ., Արևելահայ առաջին պարբերաթերթը («Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթի հրատարակության 170-ամյակի առթիվ) (ՊԲՀ, 1986, թ. 4, էջ 63-72):

Շտեմարանը թույլ է տալիս ունենալ հրատարակված մամուլի քանակների բաշխումը՝ ըստ երկրների, քաղաքների, մամուլի տեսակների, խորագրերի և այլն:

Խնդիրներ. Քանի որ հայ մամուլի մատենագիտական ցանկերը պատրաստվում են շուրջ 100 տարի, ապա հարկ է փաստել, որ մամուլի անվանումների հիմնական մասն արդեն արձանագրված և նկարագրված է: Կան առանձին հրատարակություններ, որոնք նվիրված են հայատառ թուրքերեն մամուլին¹⁷: Պատրաստված են նաև հայ մամուլի մատենագիտական ցանկերը՝ ըստ առանձին երկրների, ըստ թեմատիկ ուղղությունների և այլն: XXI դարի առաջին քառորդի հիմնական մարտահրավերներից մեկը, որը ծառացած է հայ գրադարանավարների առջև, մեր կարծիքով, հետևյալն է. պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ իրականացնել աշխարհասփյուռ հայ մամուլի լրակազմերի թվայնացումը և դրանք հասանելի դարձնելը համացանցում: Հայ մամուլի խոշորագույն պահոցները աշխարհում համարվում են Հայաստանի ազգային գրադարանը և Վիեննայի Մխիթարյան միաբանությունը: Սակայն մամուլի եզակի նմուշներ են պահվում նաև Պոլսո Պատրիարքության Օրմանեան մատենադարանում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարանում, Երուսաղեմի Կյուլպենկյան մատենադարանում, Զմմառի վանքի մատենադարանում, մասնավոր հավաքածուներում: Համատեղ թվայնացման աշխատանքներում Հայաստանի ազգային գրադարանը սերտորեն համագործակցում է բոլոր այս կառույցների հետ՝ ստանալով թվայնացված մամուլի այն նմուշները, որոնք բացակայում են Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներից: Համատեղ ջանքերով արդեն թվայնացված է մամուլի 2 միլիոն էջ, և աշխատանքները շարունակվում են՝ ընդգրկելով նորանոր գործընկերների:

Հաջորդ կարևոր խնդիրը հրատարակությունների վերնագրերի և խմբագիրների ազգանունների գրառումն է այն ուղղագրությամբ, ինչպես որ նշված է իրենց իսկ հրատարակած պարբերականում: Խորհրդային

¹⁷ Հայապառ թուրքերէն գրքերի եւ հայապառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968) = *Ermeni harfli Türkçe kitaplar ve Süreli yayınlar bibliyografyası (1727-1968) = Bibliographie des livres et de la presse Armeno-Turque (1727-1968) / Ermeni harfli Türkçe kitaplar ve Süreli yayınlar bibliyografyası (1727-1968) Bibliographie des livres et de la presse Armeno-Turque (1727-1968)* Յասմիկ Ա. Սյրեփանեան: Մասնագետ խմբագիրներ՝ Գ. Սյրեփանեան, Ռ. Կոնդակչեան, Ա. Տեր-Սյրեփանեան; Ֆրանսերեն թարգմանությունները՝ Ա. Չարըխչեանի, Լ. Տեր-Սյրեփանեանի. - Istanbul: Turkuaz yayinlari, 2005-651 : լուսանկար; 23 սմ.

շրջանում հրատարակված մատենագիտական ցանկերը, դժբախտաբար, զերծ չեն թերություններից՝ համատարած բնույթ են կրում վերնագրերի և խմբագիրների ձևախեղված գրառումները: Մեկ այլ խնդիր է խմբագիրների անունների հեղինակավոր գրառումների ստեղծումը: Հայ մամուլում առկա են խմբագիրներ, որոնք պարբերականներ են հրատարակել մինչև 1920 թ. և դրանից հետո՝ արդեն Խորհրդային Հայաստանում: Օրինակ, 1906 թ. Թիֆլիսում հրատարակվող «Կայծ» օրաթերթի գլխավոր խմբագիրը նշվել է Երզնկեան Արամայիս, իսկ Երևանում լույս տեսած «Գյուղատնտեսական կյանք» (1922-1929 թթ.) և «Կարմիր մոծակ» (1926-1927 թթ.) պարբերականներում, ըստ 1922 թ. ուղղագրական ռեֆորմի, նույն անձը գրվել է Յերզնկյան Արամայիս: Նման օրինակներ էլի կարելի է բերել: Հարկավոր է այս խմբագիրների անունների տարընթերցումները հավաքել մեկ մուտքի կետի ներքո:

Այլ դեպք է, երբ նույն անձը, հանդես գալով որպես տարբեր պարբերականների խմբագիր և հրապարակելով հոդվածներ, իրեն նշել է տարբեր ձևերով, ինչպես նաև ունեցել է անվան օտարալեզու տարբերակներ: Սրա լավագույն օրինակն է Հակոբ Սիրունին, որ իր խմբագրությամբ հրատարակած պարբերականներում կամ հրապարակված հոդվածներում նշվել է ամենատարբեր ձևերով՝ Հ. Ճ. (Հակոբ Ճոլոլյան), Հակոբ, Հակոբ Սիրունի (Ճոլոլյան), Ճոլոլեան, Ճոլոլյան, Յ.Ճ. (Ճոլոլեան), Յակոբ, Յակոբ Սիրունի, Յակոբ Սիրունի (Ճոլոլեան), Սիրունի, Սիրունի Հ.Ճ., Сируни Акоп Аракелович, Hagop Djololian Siruni, Hakob Sirouni Jololian, Hakob Siruni Jololian, Jololyan Hakob Siruni, Siruni Hakop Arakeli:

Խմբագիրներից ոմանք ունեցել են նաև ծածկանուններ: Օրինակ՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, որ հանդես է եկել նաև Մարտունի կեղծանունով: Այսպիսի անձնանունները պետք է ներառված լինեն մեկ մուտքի կետի ներքո: Դրանով կկարգավորվի անձի անվան տարբերակներից որևէ մեկով փնտրման դեպքում հասանելիության ապահովումը:

Ապագայի պլաններ. «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակը» արդեն կայացած փաստ է¹⁸, և մենք հասկանում ենք, որ դրա կենսունակության ապահովումը պահանջում է հայ մատենագետների ամենօրյա աշխատանք: Հաջորդ խոշորածավալ նախագիծը, որի իրականացման ուղղությամբ Հայաստանի ազգային գրադարանում արդեն սկսվել են նախապատրաստական աշխատանք-

¹⁸ Շտեմարանը հասանելի է համացանցի <http://tert.nla.am/> հասցեից:

ները, «Հայկական պարբերականների հոդվածների վերլուծական նկարագրություններ» շտեմարանի ստեղծումն է: Առանձին պարբերականների համար հոդվածների վերլուծական նկարագրությունների ցանկեր կան հրատարակված: Ավելին, ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում իրականացվել է ԳԱԱ հրատարակված և հրատարակվող բոլոր հանդեսների հոդվածների վերլուծական նկարագրությունների շտեմարանների ձևավորումը: Բոլոր նկարագրություններին կցված են հոդվածների թվային պատճենները: Հայաստանի ազգային գրադարանում ընթացքում են Վահան Թեքեյանի՝ 1915 թ. եգիպտոսում հիմնադրած «Արեւ» օրաթերթի հոդվածների շտեմարանի ստեղծման աշխատանքները: Ինչպես ԳԱԱ ամսագրերի պարագայում, այս օրաթերթի համար ևս հոդվածների մատենագիտական նկարագրություններին կցվում են դրանց թվային պատճենները:

Հուսով ենք, որ հանրապետության երկու առաջատար գրադարաններում կուտակված փորձը և առկա մասնագիտական ներուժը թույլ կտան սկսելու նման աշխատատար և խիստ պահանջված նախագիծ:

СВОДНЫЙ КАТАЛОГ АРМЯНСКИХ ПЕРИОДИЧЕСКИХ ИЗДАНИЙ

ЗАРГАРЯН Т.К., КАЗАРЯН А.К.

Резюме

История армянской периодики восходит к 1794 г., когда св. отцом Арутюном Шмавоняном в Мадрасе был издан журнал “Аздарар”. На протяжении последних 100 лет в разных странах мира составлялись библиографические списки армянской периодики.

Однако в силу наличия ошибок и неточностей эти списки были подвергнуты строгой критике со стороны библиографов.

Причина проста – армянская периодика издавалась в разных странах мира, экземпляры этих изданий разбросаны по разным библиотекам, арменоведческим центрам и частным коллекциям. В настоящее время создается электронный каталог армянской периодики, обладающий бесспорными преимуществами. В электронном каталоге исправление библиографических ошибок и добавление новых записей производится легко, к

библиографической записи прикрепляются оцифрованные копии подшивок, автоматически создаются вспомогательные индексы редакторов, типографий, городов и стран. Электронный сводный каталог предоставляет в открытом доступе библиографическое описание более 5700 периодических изданий и 2 млн отсканированных страниц. Для ознакомления с библиографическими записями и полными текстами открытого доступа необходимо зайти на интернет портал по адресу <http://tert.nla.am>.

UNION CATALOG OF ARMENIAN CONTINUING RESOURCES

T. ZARGARYAN, H. GHAZARYAN

Abstract

The history of Armenian periodicals is dating back to 1794, when Father Shmavonyan in Madras printed first Armenian magazine 'Azdarar' (the Heralds). Bibliographic lists of Armenian periodicals have been created in various countries, by different authors during last 100 years. All these lists, after their publication have been criticized by bibliographers, because a lot of errata and incomplete descriptions and titles. The reason is simple – Armenian periodicals were published in many countries, and are preserved in different libraries, armenological centers and private collections. And because of this, it's impossible to indicate all titles in one publication, many periodicals are described without seeing them. In the National Library of Armenia the database of Armenian periodicals is in process of creation, which has a lot of advantages in comparison with paper based publication. Correction of errors and typos in this database is very easy, digital surrogates of the periodical are attached to the relevant bibliographic record. Computer is generating indexes of the editors, cities and countries, and printing houses. More than 5700 bibliographic records and 2 million digitized pages are in Open Access domain, and are freely available to the end users. The database is available from the URL <http://tert.nla.am/>.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՕԼԻՆ Փ. ԼԻԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի հրադադարից հետո Կիլիկիան անցավ ֆրանսիացիների տիրապետության տակ: Կիլիկիայի հայությունը այս իրողությունը ընկալեց որպես փրկության հույս: Ավելի քան 150 հազար հայեր վերադարձան իրենց լքված բնակավայրերը¹: Ավաճ, նրանց հույսերը շատ շուտով ի դերև ելան:

1920 թ. մայիսի 30-ին ֆրանսիացիների և քեմալականների միջև կնքված զինադադարը վերջնականապես բացահայտեց, որ ֆրանսիացիները իրականում պատրաստվում էին թուրքերին հանձնել ողջ Կիլիկիան: Իսկ 1920 թ. Մարաշի և Հաճընի կոտորածները ապացուցեցին, որ ֆրանսիացիները իրենց նպատակներին հասնելու համար ամենևին չէին խորշում զոհաբերել հայերի գոյության իրավունքը: Այս իրավիճակում Ադանայում դեռևս գոյատևող բազմահազարանոց հայությանը այլ բան չէր մնում, քան սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինել:

1920 թ. օգոստոսի 4-ին, 275 հազար քրիստոնյաների անունից ընդունվում է Կիլիկիայի ինքնավարության հռչակագիրը²: Փաստաթուղթը ստորագրում են հայ ազգային բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, հայ առաքելական, կաթոլիկ ու բողոքական, քաղղեական³ ու սիրիական կաթոլիկ եկեղեցիների առաջնորդները, հունական և ասորական համայնքների պատվիրակները: Ձևավորվում է կառավարություն՝ Միհրան Տամատյանի վարչապետությամբ:

¹ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Ե., 2010, էջ 220:

² World Alliance of YMCAs' Archives, Geneva, Switzerland: Dossier – Correspondence, Box–Turkey, File – The Declaration of Autonomy of Cilicia, Document – The English translation of The Declaration of the Autonomy of Cilicia, typed, page 1.

³ Քաղղեական – կաթոլիկ ասորիների եկեղեցին: Եկեղեցու հեղկորդները շուրջ կես միլիոն են, նրանք ոչ մի կապ չունեն Ք.ա. 1-ին հազարամյակի Միջագետքի քաղղեացիների հետ:

Հռչակագրի ընդունումը ոչ մի կերպ չէր հակադրվում ֆրանսիական մանդատին: Այդուհանդերձ, ֆրանսիացիներն այն ընդունեցին սվիննե-րով: 1920 թ. սեպտեմբերի վերջին նրանք ձերբակալեցին Մ. Տամատյանի կառավարության անդամներին, լուծարեցին հայկական միլիցիան, զինաթափեցին պաշարված Հաճընին օգնության մեկնող արշավախումբը, կազմացրեցին Հայկական լեգեոնը: Սրանով վերջնականապես հարթվեց քեմալականների կողմից Կիլիկիան զավթելու ճանապարհը:

Ստորև ներկայացնում ենք ամերիկյան Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության⁴ (ԵԲԸ)՝ Ադանայում պաշտոնավարող աշխատակից Օլին Փ. Լիի (Olin P. Lee) հաշվետվությունը Կիլիկիայի անկախ քրիստոնեական հանրապետության հռչակման մասին: Այն պատրաստվել է Կ. Պոլսում տեղակայված ամերիկյան ԵԲԸ-ի վերադաս աշխատակիցներին, ինչպես նաև Կ. Պոլսում ԱՄՆ-ի գերագույն հանձնակատար, ծովակալ Բրիսթոլին ներկայացնելու համար: Ամբողջական փաստաթղթի բնօրինակները պահպանվում են ԵԲԸ համաշխարհային ալյանսի՝ Ժնևում գտնվող արխիվում⁵: Այն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ:

Կատարվել են ուղղագրական կամ կետադրական մասնակի շտկումներ: Մեր միջամտությունները արված են ուղղագիծ փակագծերով, իսկ ծանոթագրությունները տրվել են տողատակում:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ.Վ.

⁴ Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցությունը հիմնադրվել է 1844 թ. հունիսի 6-ին Լոնդոնում: Արդեն 1855 թ., արագ տարածման շնորհիվ, դարձել է համաշխարհային շարժում (տե՛ս Shedd, Clarence Prouty and others: 'History of the World's Alliance of Young Men's Christian Associations', London, 1955): Լինելով քրիստոնեական արժեքները հիմնովին ընդունող մի կազմակերպություն ու սկիզբ առնելով Բրիտանական կայսրությունում՝ ԵԲԸ-ն ի սկզբանե ունեցել է բողոքական հենք: Սակայն, ժամանակի ընթացքում տարածվելով աշխարհով մեկ, դարձել է համաեկեղեցական շարժում: Այսօր այն գործում է աշխարհի 119 երկրներում և ունի շուրջ 58 միլիոն անդամ: Համարվում է աշխարհում ամենահաջողակ, ամենաերկարակյաց ու ամենատարածված հասարակական նախաձեռնություններից մեկը:

⁵ World Alliance of YMCAs' Archives, Geneva, Switzerland: Dossier – Correspondence, Box-Turkey, File-The Declaration of Autonomy of Cilicia, Document-Olin P. Lee Special Report on Cilicia as of August 14, 1920, typed, 5 pages:

Adana, Cilicia, August 14, 1920

Mr. F. D. Steger⁶:
American Y.M.C.A.⁷
Constantinople.

Dear Mr. Steger:

I am enclosing some copies on the situation in Adana which I am sure will be of interest to you. Our report for July covers the situation up to the first August. On the forth of August representatives of various Christian communities of Adana formed a Christian inter-national or inter-community council and issued a declaration on the autonomy of Cilicia under French mandate, a translation of which I enclose. This translation was not made from the original French[,], which is the official version of the declaration but from an Armenian translation which appeared in one of the local papers. The Armenian translation does not always do justice to the literary merit and force of the original but gives with reasonable accuracy the meaning and intent[,], which it was desired to convey. I have a copy of the French original, but as yet it has been impossible to have it copied, as I have no typist with [a] knowledge of French. The original has gone on to Paris anyway.

On the forth of August this declaration was handed to Col. Bremond⁸ by the representatives who had signed it. I have talked with some of those present at the meeting. Col. Bremond received the document with expression of sympathy, according to their version, and promised to convey it at once to Paris saying that it was not his province to decide the matter. Leading Armenians claim that Col. Bremond (Civil Administrator for Cilicia) in talking with two of the prominent Armenians that evening said that he was convinced that the Armenians were the best writers in Cilicia, that only they could have written the above document, but that they were not men of action and did not know how to put a thing

⁶ Կ. Պոլսում ամերիկյան ԵԲԸ ավագ քարտուղար:

⁷ Young Men's Christian Association–Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցություն:

⁸ Էդուար Բրեմոն (Édouard Brémond, 1868-1948) – ֆրանսիական ռազմական գործիչ, գնդապետ, 1919-1920 թթ. Կիլիկիայի ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավարը:

into practical operation. This statement does not necessarily carry with it any implication other than that he believed that the Armenians were incapable of carrying into effect the plan implied in the declaration. The Armenian leaders, however, seized this as a pretext for further action the following day.

As Adana is far the most part an Armenian city at the present time, the Armenians were the principle force in the movement. They had formed a council including representatives from the various religious and political organisations. This council is more inclusive than the Askhaiene Meoutoon⁹[,] which in the past has handled most of the political business for the Armenians. In this body it was decided call a meeting of the Christian Inter-national Council of Cilicia on August 5th and plan for an immediate seizing of the Turkish administrative machinery at the Konak¹⁰. It seems that the Secretary failed to notify the representatives of the other communities. Later, however, when the commission was discovered, they were hurriedly notified to be present at a meeting in the afternoon. Even some of the Armenian leaders such as the heads of the religious communities were only notified at the last moment. The Greek representatives expressed their sympathy to Mr. Damadian¹¹ but said they would not take part in the contemplated movement. I believe only one or two non-Armenian member was present, but of that I am not sure. In the meantime the plans had all been laid as though the meeting would agree to the step and since it was felt that delay was fatal to the movement it was decided to go ahead and carry it through. At the meeting in the afternoon of August the 5th there was very little time for discussion. It was more of a notification as to what would be done. A cabinet had been formed with Mr. Damadian as Prime Minister. They provided for nine members in all, five Armenian, one Greek, one Assyrian, one Turkish, one Arabic. The Armenian and Assyrian members agreed to take part in the movement that afternoon and six members went to the Konak.

The plans had been carefully laid. The Turkish Vali¹², the Turkish Chief of Police and one or two Turkish officials had been advised to confine themselves to their houses. All the Turkish gendarmes about the Konak and many Turkish employees had been sent away. Through an Armenian

⁹ *Բառացի է՝ Հայոց ազգային միություն:*

¹⁰ *Բառացի է՝ կառավարական շենք:*

¹¹ *Միհրան Տամադյան (1863-1945) – հայ ազատագրական-քաղաքական գործիչ, 1920 թ. Կիլիկիայի Հայոց ազգային միության ղեկավարը:*

¹² *Նահանգապետ:*

telephone operator telephones communications had been out. When the six men entered the building none but Armenian gendarmes were around. They took their place in the Vali's office and notified Col. Bremond that they were ready to arrange with him the formation of the new government. Col. Bremond at once sent word by his aide that they must leave the building immediately. They answered that they were there by the direction of their communities and that they could not leave except at their command, that the movement was in no way directed against the French authority as they wished to work loyally under French mandate, but that the Turkish authority in Cilicia was at an end. Col. Bremond sent in another official who advised them in a friendly wa[y] to leave the building, which advise was not accepted. He then sent in a French officer, a commandant, who brought a peremptory order to vacate the building at once. Finally Col. Bremond came in person and ordered Mr. Damadian and the other men to leave the building. On their remonstrance he called in two gendarmes who led Mr. Damadian out of the building. The gendarmes came in with fixed bayonets. Mr. Damadian yielded to force and the other men left with him.

I have talked with two of the men who were present that afternoon. [They] admit that the French had not encouraged them but rather had discouraged them against taking any action. Having issued, however, a declaration of autonomy, they felt that they were under the necessity of actually putting it into effect. They felt that this was different from a petition without effect. The expressions of sympathy toward the declaration on the part of Col. Bremond, the cabled sympathy from Beirut of General Gourand¹³ and the above mentioned remark of Col. Bremond on the evening of August 4th were all given as reasons for believing that unofficially the French authorities would not be opposed to their step. They felt that officially Col. Bremond could only take the step he did in removing them from the Konak. This they expected. Their purpose, however, was to continue the government from another location and they believed, or at least hoped, that this the French authorities would not prevent. They believed that it was absolutely necessary to start it from the Konak in order to give concrete evidence of the fact that the Turkish government was at an end. At

¹³ Անրի Գուրո (Henri Joseph Eugén Gouraud; 1867-1946) – ֆրանսիական ռազմական գործիչ, գեներալ: 1919 թ. Ֆրանսիայի գերագույն կոմիսար Սիրիայում և Կիլիկիայում:

the instance of General Dufieux¹⁴ on the evening of the 5th Col. Bremond sent a letter to Mr. Damadian notifying him that the French authorities would no longer have communications with him – that all the relations between them had been severed. That same evening the heads of the Armenian religious communities were called together. Gen. Dufieux notified them that the city was under martial law and that all gatherings of more than three people were strictly forbidden and that the provision would be rigorously enforced. At the same time he issued a proclamation a copy of which I enclose. When an attempt was made to continue the new government elsewhere the Armenian leaders were given instructions by the French authorities absolutely to discontinue it. For the present all the steps in this direction have seemingly been stopped, but that does not mean that the idea has been given up, and the Armenians say that in name the new government continues. I am also enclosing the official notice issued by the Christian Inter-national Council of Cilicia on the issuing of the declaration.

The Armenian leaders absolutely disclaim any hostility to the French authorities or that their movement is in anyway directed against French occupation or a French mandate. On the other hand they expressly request the military occupation of the French and the control of the government under a French mandate. They do, however, declare undying hostility to the Turk and that they will never agree again to the setting up of any Turkish government in Cilicia. They say that the partition of Cilicia into two parts as contemplated by the Peace Treaty¹⁵ cannot be defended upon any grounds.

I am enclosing a translation of a proclamation of Gen. Dufieux relative to the return of the villagers and inhabitants of Adana to their homes. Very few have returned. Tomorrow the time limit expire and we are waiting to see what action will be taken. The military situation here is indeed peculiar. The French Column has gone to Mersine¹⁶ and returned. They fought a battle at Yenedji¹⁷,

¹⁴ Ժուլիեն Դուֆյո (Julien Dufieux, 1873-1959) – ֆրանսիական ռազմական գործիչ, գեներալ: 1919-1921 թթ. Կիլիկիայում ֆրանսիական օկուպացիոն ուժերի հրամանատար:

¹⁵ 1920 թ. մայիսի 30-ին ֆրանսիացիների և քեմալականների միջև կնքված զինադադարը:

¹⁶ Մերսին – քաղաք-նավահանգիստ Կիլիկիայում՝ Միջերկրականի ափին, Ադանայից 67 կմ արևմուտք:

¹⁷ Յենեջի կամ Յենիչայ – գյուղ Կիլիկիայում՝ Ադանայից 48 կմ արևմուտք, Տարսուսից 9 կմ հարավ:

relieved Tarsus¹⁸ and entered Mersine. I was given to understand by one of the French officers that another battle waited them at Yenedji on their return. The understanding now, however, is that they passed Yenedji to the S. E.¹⁹ avoiding the chettas²⁰ who again seemed to occupy that point. It is hard to see at the present time very many permanent results from sending of the column to Mersine of the relief of Tarsus. Seventeen Armenians were sent ahead as the column left here and blew up a bridge to the west of Yenidji which cut off quite a quantity of supplies. This move enable the French to take quite a bit additional booty – ammunition, rifles, and military supplies in general – also many prisoners. The Armenian military leader here claims that the flanks of the column were protected by the Armenians. Just [before] the column started the French authorities asked hurriedly, so it is said, for 1500 Armenian volunteers into the district to the south of the city between the Sihoun²¹ and the Djihoun²² rivers. Eight or nine hundred were sent in all. They protected that side of the column from attack and in five days cleaned up most of the territory between the rivers. In the meantime the column had reached Mersine following the railway line. Of course, nearly all of the Turks were driven out of the territory between the rivers. [This] covered perhaps 2/3 or 3/4 of the distance to the sea when they were met by a small detachment of French which had come up from Karatash²³. This made possible a regular stream of grain and provisions into the city from the south. The men who cleaned out the territory in many cases confiscated large quantities of grain and supplies from the [v]ineyards and farms vacated by the Turks.

It looked for a few days as though the French were going to land large forces at Karatash. It was thought that the settling of the trouble in Syria would release troops for Cilicia. This is very doubtful now. Only a few troops, not over

¹⁸ Տարսոն – քաղաք Կիլիկիայում, Ադանայից 41 կմ արևմուտք:

¹⁹ Հարավ-արևելք:

²⁰ Չեթե (սերբ.՝ četnici՝ վաշտ) – այդպես էին անվանում օսմանյան տիրապետության դեմ պայքարող ապստամբներին և աշխարհազորայիններին: Օսմանյան Թուրքիայում չեթեները մահմեդական բնակչությունից կազմված անկանոն ռազմականացված սպորաբաժանումներն էին, որոնք հիմնականում օգտագործվում էին խաղաղ բնակչության դեմ իրականացվող պատժիչ գործողություններում:

²¹ Սիհուն – գետ Կիլիկիայում:

²² Ջիհան – գետ Կիլիկիայում:

²³ Քարատաշ (Սև քար) – գյուղ Կիլիկիայում՝ Միջերկրականի ափին, Ադանայից 49 կմ հարավ:

three or four hundred, seem to have been landed at Karatash. In spite of that fact in keeping the proclamation of Gen. Dufieux calling on former villagers and inhabitants to return to Adana, they have ordered the disarming of all Armenians between the rivers and have forbidden armed men to leave the city. In the absence of French forces to protect the district the Armenians are naturally alarmed. They fear to remain in the territory without their arms. Some have already been disarmed. Others fearing the return of the Turks have seemingly left with their arms for the country to the north in the direction of Sis and Hadjin. Numbers seem also to have filtered out of the city with their arms. In fact the Armenian leaders have been encouraging them to do so. They feel that to the north vacated by the French is now a fair field of operation for them. They feel that abandoning it the French have given up claim to it. They intend to send eight hundred to a thousand men in a very few days to retake Sis and Hadjin, - not only to rescue the inhabitants but also to establish their control over the country. The move is both humanitarian, military and political. If successful, they will try to place the territory under French mandate but it will also be under the new government claimed by the declaration of autonomy. The French authorities are not aiding this expedition but are permitting it. They look upon it, however, in a different way than do the Armenian authorities as their motives are different. Most of the troops[,] which go are already outside of the city and outside of French control.

As the column went to Mersine the chettas occupied the territory behind it again. The same thing has happened on the return of the column from all we can tell. All during the time the French were in Mersine and since their return there has been the usual nightly exchange of fire between the chettas and the troops within the city. For several days the city was mostly defended by the Armenians. It is hard to see how at the present time conditions have much improved. Yesterday the chettas threw over seven or eight shells into the north section of the city. The French authorities claim that only two exploded but one of them killed one of our workers at boys' camp. I am enclosing a separate report on this matter. This morning a number of shells fell into that side of town. I have been unable to learn as yet whether any damage was done. Col. Bremond this morning assured me that these canons would be stopped in three or four days at least but he could not say the precise time. He said that they were continuously extending their occupied zone three or four hundred metres out each day and

soon there would be no fear from either rifle or artillery fire. I pass this hope on without coment.

Communication has now been opened up with Karatash by motor transportation. All mail and supplies must come in by this way for the present. The French authorities promise to keep it open and it promises to furnish much better mail communication then we have had in the past. The cost of the freight, however, is tremendous – forty pounds a ton. It is hard to see how the Near East²⁴ will be able to get supplies from Mersine in any appropriate quantities. It will be some weeks before the railway with Mersine is open.

One hates tremendously to have any suspicion of any of the allied authorities, but one has been compelled at times to wonder if the French authorities at the time the column went to Mersine would not have been willing to see the Turkish forces take over the city if it could have been done peacefully, but the four thousand or more arms in the possession of the Armenians within the city present a very knotty problem. One also is compelled to wonder if it is really the desire of the French authorities to relieve the food situation within the city or whether they are not exploiting it for their own ends. Certainly the policy both from the political and economic standpoint has been disastrous in the extreme. It has left every one perplexed as to the future and perplexed as to all points of the French policy. The distrust that it has inspired has been unanimous. On any supposition as to intention it is hard to see how another course would not have brought the results sought much more quickly and easily. If the purpose was to drive the Armenian out of Cilicia, it is on a fair way to realisation. They are confined almost entirely to a few large centres. The last to be removed was Hassan Beyli and for no apparent reason. Afterwards the French authorities admitted it was a mistake. If the purpose was to drive out the Turk that has been accomplished only in a few districts outside of the large cities. If the purpose was to hopefully divide the Turk and the Armenian, no better policy can be found. They now hate each other as they never did before the armistice. Then by wise settlement they might gradually have grown to appreciate each other more and have come to the point where they could live and work together. Today one question if in fifty years the events of the last

²⁴ Մերձավոր Արևելքի օգնության կոմիտե (Near East Relief, American Committee for Relief in the Near East, ACRNE) – ամերիկյան բարեգործական ընկերություն:


few months can be effected. Whatever the motives there is no question of the tragedy of the outcome, for Armenian and Turk alike. Let us hope that this is only darkness before the dawn and that a better day that can hardly be seen now is ahead us.

I hope that this statement will help to show something of our situation. Of course it is confidential. I am enclosing extra copies[,] which I wish you would send the safest way possible to addresses on the enclosed clips. Also show to Admiral Bristol²⁵ if you think best. Best regards to all.

Cordially yours,

²⁵ Մարկ Լեմբերտ Բրիստոլ (Mark Lambert Bristol, 1868-1939) – ամերիկյան ռազմական գործիչ, ծովակալ: 1919 թ. նշանակվել է Միջերկրական ծովի արևելյան տարածաշրջանում ամերիկյան ռազմածովային ուժերի հրամանատար և Կ. Պոլսում ԱՄՆ-ի գերագույն հանձնակատար: Փաստորեն, զուգահեռաբար համակարգել է ԱՄՆ-ի ռազմական և դիվանագիտական գործառնությունները Օսմանյան կայսրությունում: Թուրքիայի Հանրապետության ճանաչումից հետո՝ մինչև 1927 թ., եղել է ԱՄՆ-ի դեսպան: Վարել է հիմնականում թուրքամետ քաղաքականություն:

АРМАН КИРАКОСЯН. Очерки дипломатической истории и историографии Армянского вопроса, М., изд.-во «Российский писатель», 2016, 432 с.



Արտերկրում իրականացված հայագիտական բնույթի յուրաքանչյուր հրապարակում խիստ կարևորվում է թե՛ տվյալ թեմայի՝ օտարներին հասու դարձնելու տեսանկյունից, թե՛ հետազոտողի համար: Իսկ եթե հրապարակումը նվիրված է Հայկական հարցի պատմությանը, ապա այն կարևորվում է շատ ավելի, քանի որ խնդիրը շարունակում է այժմեական մնալ: Արման Կիրակոսյանի հեղինակությամբ Մոսկվայում լույս տեսած ժողովածուն ներառում է Հայկական հարցի տարբեր խնդիրների շուրջ հեղինակի վերջին երեքուկես տասնամյակում լույս տեսած ռուսերենով երեք տասնյակ գիտական աշխատությունների ընտրանին:

Հետազոտություններից մի քանիսը շարադրված են համահեղինակների՝ Ռուբեն Սաֆրաստյանի, Լևոն Էյրամջանցի, Ռուբեն Սահակյանի և Զոն Կիրակոսյանի հետ: Կարելի է ասել, որ ժողովածուն ռուսերենով առաջին ակադեմիական համապարփակ աշխատանքն է (բացառյալ «Армянский вопрос» (Ե., 1991) հանրագիտարանը), որտեղ ի մի են բերված Հայկական հարցի տարբեր խնդիրները՝ դրա ձևավորումից մինչև մեր օրերը:

Ժողովածուն կազմելիս հեղինակն առաջնորդվել է ժամանակագրական-թեմատիկ սկզբունքով, համենայն դեպս հոդվածները ներկայացվում են այնպես, որ ընթերցողի մեջ լիարժեք պատկերացում է ստեղծվում միջազգային դիվանագիտության վերջին մեկուկես դարի բարդ խնդիրներից մեկի մասին: Գիրքը միաժամանակ առնվազն երկու խնդիր է լուծում՝ անցյալի մասնագիտական վերլուծության միջոցով ընթերցողին առաջարկում է դասեր քաղել ապագայում ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ: Սրանում է հենց ժողովածուի այժմեականությունը, երբ Հայաստանը մեր օրերում կանգնած է միանգամից մի քանի մարտահրավերների առաջ, որոնք կանխորոշելու են երկրի

արտաքին (ու դրա հետ սերտորեն առնչվող՝ ներքին) քաղաքականության հիմնական ուղղությունները: Ցանկալի կլիներ, որ հեղինակը կիսվեր սեփական մտորումներով Հայկական հարցի պատմության հրամցած դասերի մասին:

Բազմափորձ գիտնական-դիվանագետի¹ ժողովածուի հոդվածները ցույց են տալիս նաև անհատ դիվանագետների դերը Հայկական հարցի ելևէջումները ուղղորդելիս և կամ ինչ-ինչ ազդեցություններ գործելու փորձեր ձեռնարկելիս: Աշխատության էջերում հեղինակը տարանջատել է Հայկական հարցի մեջ ներգրավված պետությունների, դրանց ղեկավարների, քաղաքական գործիչների ու դիվանագետների ձեռնարկումները այդ երկրների մամուլում տեղ գտած տեղեկատվական և հրապարակախոսական հոդվածներից, լույս տեսնող գիտական հետազոտություններից: Այս կերպ հեղինակը ընթերցողին է թողնում լուծելու այն դիլեման, թե որքանով են երկրի քաղաքական ուղենիշը որոշողներն ազդվում հասարակական կարծիքից: Սա նույնպես կարող է ուսանելի լինել մեր օրերում:

Աշխատանքը բաղկացած է երկու բաժնից՝ «Հայկական հարցի պատմությունից» և «Հայկական հարցի պատմագրության և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցեր»: Նախաբանի փոխարեն ներկայացված է հեղինակի 2015 թ. լույս տեսած «Հայկական հարցի» և Հայոց ցեղասպանության համառոտ պատմություն» աշխատանքը: (Միանգամից նշենք, որ յուրաքանչյուր հրապարակում ունի սպառիչ մատենագիտական տվյալներ, իսկ ընթերցողի գործը հեշտացնելու նպատակով հոդվածներում հիշատակվող գրեթե յուրաքանչյուր գործչի կամ հեղինակի մասին տողատակի ծանոթագրություններում ներկայացված են համառոտ, սակայն բովանդակալից տեղեկություններ):

Ժողովածուի առաջին բաժինն սկսվում է Օսմանյան կայսրության ներքին քաղաքական կյանքի գաղափարախոսական հիմքերից օսմանիզմին նվիրված աշխատանքով (որը Ռ. Սաֆրաստյանի՝ համապատասխան վերնագրով գրքի գրախոսականն է), որը թույլ է տալիս հասկանալ, թե ինչով էին պայմանավորված կայսրության քաղաքական զարգացումները հետագա գրեթե մեկ դարի ընթացքում: Սրան հաջորդում է մանրակրկիտ անդրադարձը օսմանիզմի քաղաքականության դրսևորումներից մեկին՝ Աբդուլ Համիդի հակահայկական գործունեությանը 1890-ական թթ.:

¹ Արման Կիրակոսյանը եղել է ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հունաստանում, ԱՄՆ-ում, ՀՀ ԱԳՆ փոխնախարար: Ներկայումս ՀՀ դեսպանն է Ավստրիայում և Հունգարիայում, ինչպես նաև ԵԱՀԿ-ում ՀՀ առաքելության ղեկավար, Վիեննայում ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպություններում՝ ՀՀ մշտական ներկայացուցիչ:

Հաջորդող մի շարք հոդվածները այս կամ այն մանրամասնությամբ նվիրված են Մեծ տերությունների վերաբերմունքին Հայկական հարցին: Այս շարքում առաջինը վերաբերում է Հայկական հարցի շուրջ ռուս-անգլիական հարաբերություններին 1890-ական թթ. կեսերին, մի ժամանակաշրջան, որը հեղինակը բնութագրում է որպես ժամանակի Մեծ տերությունների իմպերիալիստական քաղաքականության գագաթնակետ: Դեռևս 1979 թ. լույս տեսած այս հոդվածում, ինչպես նաև հաջորդիվ այլ համապատասխան հրապարակումներում, քննադատելով հանդերձ արևմտյան տերությունների գաղութատիրական վարքագիծը (այդ թվում և Մեծ Բրիտանիայի հայտարարությունները Հայկական հարցի շուրջ), հեղինակը (հղելով նաև այլ հետազոտողների) իրավամբ նշում է, որ «Ռուսաստանը ամուր ձևով կանգնած էր Թուրքիայի ստատուս-քվոն պաշտպանելու դիրքում և կասկածանքով էր վերաբերվում բրիտանական կառավարության «բարյացակամ» ժեստերին» (էջ 58), «Ռուսաստանը ամեն կերպ հրաժարվում էր Արևմտյան Հայաստանը զավթելու ընձեռված հնարավորությունից, միևնույն ժամանակ «հասկացնելով սուլթանին, որ ինքը նրա նկատմամբ հարկադիր միջոցների չի դիմի և անգամ թույլ չի տա, որ դա անեն ուրիշները, և որ ինքը բավարարվում է այն ձեռնարկումներով, որոնք սուլթանը ինքը կարող է իրագործել» (էջ 59), «ցարական դիվանագիտությունը (և անձամբ Նիկոլայ 2-րդը) հանուն Օսմանյան կայսրության անկման ձգձգման՝ բավականին անտարբեր էր վերաբերվում սուլթանական իշխանությունների և տեղական ֆանատիկոսների գազանային դատաստաններին Թուրքիայի հայ բնակչության նկատմամբ» (էջ 59) և այլն:

Նույն տարիների մեծբրիտանական «Spectacor» շաբաթաթերթի շուրջ 30 հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս այդ երկրի իշխանությունների իրական՝ խոստումներով կերակրելու և «սովորական խաբեություն» (էջ 69) բնութագրվող վերաբերմունքը հայոց նկատմամբ, մինչդեռ մամուլը կոչ էր անում կառավարությանը անհապաղ միջամտելու Օսմանյան կայսրության գործերին և վերահսկողության վերցնելու Արևմտյան Հայաստանը՝ հայ ժողովրդի շահերի պաշտպանության նպատակով (էջ 71): Մամուլը աներկբայորեն քննադատում էր «մեծ հայասերներ» Գլադստոնի, Սոլսբերիի և այլոց երկդիմի պահվածքը հայկական խնդիրների նկատմամբ, ուղղակիորեն նշում, որ Հայկական հարցի շուրջ բարձրացրած աղմուկի ներքո Անգլիան փորձում էր Թուրքիային կրկին իր ազդեցությանը ենթարկել: Այդ նույն քաղաքականությունը դիտարկվում է Ա. Կիրակոսյանի անգլոթուրքական հարաբերություններին, ապա և Օսմանյան կայսրության բաժանման շուրջ անգլո-գերմանական բանակցություններին նվիրված հոդվածներում: Հանգամանալից վերլուծվում է Մեծ տերությունների պահվածքի

տնտեսական և քաղաքական բաղադրիչը 1896 թ. օգոստոսին Կ. Պոլսում «Բանկ Օտոմանի» գրավումից հետո տեղ գտած հայկական ջարդերի ժամանակ: Սրան հաջորդում է Հայկական հարցում Ֆրանսիայի և Ռուսաստանի քաղաքականության վերլուծությունը, պարզաբանվում է այն իրողությունը, թե ինչու ֆրանսիական իշխանությունները այնպես էլ հանդես չեկան Օսմանյան կայսրության հայ բնակչության պաշտպանությամբ: Բերվում է նաև Ռուսաստանի արտգործնախարար Լոբանով-Ռոստոցկի 1895 թ. հունիսի հայտարարության դրվագն այն մասին, որ իր երկիրը «խոչընդոտելու է Ասիայում այնպիսի տարածքի ստեղծմանը, որտեղ հայերը կարող էին օգտվել բացառիկ իրավունքներից» (էջ 107): Հաջորդ հրապարակման մեջ Ա. Կիրակոսյանն անդրադառնում է ամերիկյան քաղաքականությանը Մերձավոր Արևելքում 1890-ական թթ. երկրորդ կեսին: Նշվում են այդ քաղաքականության բնութագրական գծերից մի քանիսը՝ միսիոներների, ուսուցիչների, բժիշկների գործուղում կայսրության քրիստոնյա բնակչությամբ տարածքներ, դրանցում ամերիկյան ուսումնական հաստատությունների ստեղծում: Այսինքն, տեղի էին ունենում հոգևոր ոլորտի ամերիկանացման փորձեր: Սրա անուղղակի հետևանքների դրսևորումներից էր հայության արտագաղթի սկիզբը ԱՄՆ: Միևնույն ժամանակ հեղինակը բերում է փաստեր ամերիկյան հասարակության՝ արևմտահայերի աջակցությանն ուղղված գործունեությունից, որի դրսևորումներից էին ամերիկյան Կարմիր խաչի և դրա նախագահ Կլարա Բարտոնի ձեռնարկումները 1896 թ.: Սրան հաջորդում է Մերի Քոչարի հայ-թուրքական հասարակական-քաղաքական հարաբերություններին նվիրված մենագրության գրախոսությունը, որն ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացում ունենալու ժամանակի հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշման մասին Հայկական հարցի շուրջ:

«Առաջին համաշխարհային պատերազմը և Հայաստանը» համառոտ հոդվածին հաջորդում են այդ՝ արդեն արմատապես փոխված ժամանակահատվածում Հայկական հարցի նկատմամբ Մեծ Բրիտանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի (Վուդրո Վիլսոնի) և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումների մասին հրապարակումները: Այսպես, պատերազմի ընթացքում, չնայած բրիտանական քաղաքական գործիչների տարաբնույթ հայտարարություններին, դիվանագիտական քննարկումներում Հայաստանին անկախություն կամ ինքնուրույնություն տրամադրելու մասին խոսք անգամ չէր լինում: Դա դրսևորվեց 1916 թ. Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրում, ապա և Մուդրոսի 1918 թ. զինադադարի կետերում: Բրիտանական միջամտության հետևանքով Ղարաբաղ մտած Անդրանիկի զորաջոկատը հեռացավ երկրամասից, հայաբնակ Ախալքալաքը միացվեց Վրաս-

տանին, իսկ Լոռին հայտարարվեց չեզոք գոտի և բրիտանական զինվորների վերահսկողության ներքո էր, վերջապես, բրիտանական զինվորական հրամանատարության չհամաձայնեցված և ոչ վճռական գործողությունների հետևանքով թուրքական զորքերի դուրսբերումը Կարսից ձգձգվեց մինչև 1919 թ. ապրիլը: Իսկ Սևրի պայմանագրի ստորագրումից հետո Լլոյդ Ջորջի կառավարությունն ամբողջությամբ «ազատվեց» Հայաստանի մասով դրա իրականացման վերահսկողությունից՝ հանձնելով այն ԱՄՆ-ին: Առաջին համաշխարհայինի տարիներին Ավստրո-Հունգարիան մեծ անտարբերությամբ էր վերաբերվում հայերի զանգվածային ջարդերի մասին լուրերին, երկրի կառավարությունը ոչ մի անգամ հանդես չեկավ երիտթուրքական իշխանությունների քաղաքականության դեմ: Նմանատիպ վարքագիծ էր դրսևորում Իտալիայի կառավարությունը: Հաջորդիվ Ա. Կիրակոսյանը հանգամանորեն անդրադառնում է Վուդրո Վիլսոնի քաղաքականությանը Հայկական հարցում և մատնանշում, որ ԱՄՆ նախագահի արբիտրաժային որոշումն այնպես էլ չիրագործվեց՝ Թուրքիային Խորհրդային Ռուսաստանի տրամադրած ռազմաքաղաքական օժանդակության պատճառով: Ծավալուն աշխատանք է նվիրված խորհրդա-թուրքական հարաբերություններին՝ Հայկական հարցի զարգացումների տեսանկյունից: Հանգամանորեն վերլուծելով այդ հարաբերությունների ելևէջները՝ հեղինակն իր եզրակացություններում մասնավորապես նշում է, որ «խորհրդային-թուրքական համագործակցության, որի նպատակն էր իբր թե «Արևելքի ճնշված ժողովուրդների ազատագրումը», զոհը դարձավ առաջին հերթին հայ ժողովուրդը, որի մղած ազատագրական պայքարն ընկալվում և ներկայացվում էր որպես Թուրքիայի սուլթերեության նկատմամբ իմպերիալիստական նկրտումների դրսևորում» (էջ 214):

Ժողովածուի երկրորդ բաժինը գրեթե ամբողջությամբ պատմագրական բնույթի է. առաջին և երկրորդ հրապարակման մեջ մասնավորապես անդրադարձներ են XIX դարավերջի անգլիական պատմագրության ու գրականության մեջ Հայկական հարցի քննարկումներին: Մեկ այլ աշխատանքի շուրջ հինգ տասնյակ էջերում Ա. Կիրակոսյանը ներկայացրել է ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, թուրքական պատմագրության և գրականության մեջ Հայոց ցեղասպանության հիմնախնդրի շուրջ հրապարակումների կարևորագույն դրույթները՝ մեկ առ մեկ անդրադառնալով և արժանին մատուցելով տարբեր հեղինակների աշխատանքներին: Ներկայացվել է նաև ցեղասպանության խնդրի քննարկումը Ժողովուրդների մշտական տրիբունալում (1984 թ.): Հայոց ցեղասպանության որոշ տեսանկյունների քննարկումը Արևմուտքում ընդհանրացնող բնույթի հոդվածը շարադրված է Ռ. Սաֆրաստյանի հետ: Այս հեղինակները նաև առաջինն էին, որ խորհրդահայ


գիտական պարբերականում հոդված հրապարակեցին Հայոց ցեղասպանության շուրջ Եվրախորհրդարանի 1987 թ. որոշման, ինչպես նաև օսմանյան արխիվների «բացման» խնդրի մասին: Հայր և որդի Կիրակոսյանների համատեղ աշխատանքում վեր է հանված տասնամյակներ շարունակ հանիրավի մոռացության մատնված հայ ականավոր պատմաբան, գրական և մշակութային գործիչ Ալեքսեյ Զիվելեգովի գործունեությունը՝ շեշտադրում անելով նրա՝ մինչխորհրդային և խորհրդային շրջանում Հայկական հարցի շուրջ ծավալած ձեռնարկումներին: Ժողովածուն եզրափակվում է Ժամանակակից ամերիկյան հանրագիտարաններում ցեղասպանության հայեցակարգի և, մասնավորապես, Հայոց ցեղասպանության հարցի հանգամանալիքները: Որպես հավելված՝ ներկայացված է Հայկական հարցի շուրջ ռուսերեն հրապարակումների մատենագիտությունը: Չնայած այս նյութի մեծ մասը շարադրված է 1985 թ., սակայն հետագա տասնամյակներին հեղինակը պարբերաբար լրացրել է այն և դարձրել համեմատաբար ամբողջական: Ժողովածուում հիշատակվող անունների և տեղանունների ցանկն էապես դյուրացնում է գրքից օգտվողների գործը:

Արման Կիրակոսյանի «Հայկական հարցի դիվանագիտական պատմության և պատմագրության ակնարկներ» ստվարածավալ ժողովածուն փաստառատ շարադրանք ունեցող ուշագրավ և խիստ այժմեական աշխատություն է, այն ռուսալեզու ընթերցողին, ընդհանրապես հարցով հետաքրքրվող յուրաքանչյուր անձի փոխանցում է առաջին հերթին գիտելիք և անհրաժեշտ տեղեկատվություն թեմայի մասին: Աշխատությունը կարևոր և արժեքավոր ներդրում է Հայկական հարցի ուսումնասիրության բնագավառում:

ՄԱՐԻԹՅԱՆ Հ.Տ.

Պատմական գիտությունների դոկտոր

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին, Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 472+12 էջ ներդիր:



Հայ հերոսուհի կանանց կյանքի ու գործունեության վերհանման մի արժեքավոր ձեռքբերում է պրոֆեսոր Էդիկ Գարեգինի Մինասյանի և Տաթևիկ Էդիկի Մինասյանի համահեղինակությամբ լույս ընծայված «Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին» մենագրությունը: Հեղինակները կատարել են շնորհակալ ու մեծ գնահատանքի արժանի գործ: Հետևողական պրպտումների շնորհիվ նրանք կարողացել են հանրագումարի բերել հերոսուհի կանանց կյանքն ու գործունեությունը: Պատմաբանի տաղանդավոր գրիչը, պատմական իրադարձությունների խորքը թափանցելու և ուշագրավ ընդհանրացումներ կատարելու ձիրքը, վիճելի գիտական հիմնախնդիրները նորովի լուսաբանելու ունակությունը հեղինակներին հնարավորություն էին ընձեռել գիտական պատշաճ մակարդակով հանրագումարի բերելու կին հայդուկի նկարագիրն ու հերոսությունը: Մենագրության մեջ պատմաքննական վերլուծության են ենթարկված հերոսուհի կանանց կյանքին զուգորդված բոլոր կարևոր իրադարձություններն ու դեպքերը: Արժեքավոր են հետազոտության տարբեր էջերում հեղինակների դատողությունները հայրենիքի, ընտանիքի, բարոյականության, հայ ժողովրդի ազգային ավանդույթների մասին: Դրանք խիստ ուսանելի են նաև այսօր, երբ օտար կեղծ արժեքներն անարգել խուժում են մեր կյանք՝ խաթարելով դարերով ստեղծված հոգևոր աշխարհը:

Հայոց բազմադարյա պատմության մեջ հայ կինը ազգի համար դժվարին ու ճակատագրական պահերին անմասն չի մնացել գոյապայքարից: Դա վկայում է հայուհու խիզախության, քաջության, հերոսության և դրական այլ հատկանիշների մասին: Հայ կինը, որպես հայ ընտանիքի սրբություն, որպես առաքինի ու ազնիվ անձնավորություն, որպես պաշտամունքի արժանի անզուգական էակ, հայոց պատմության մեջ միշտ էլ իր ուրույն տեղն է ունեցել: Պատմությունը վկայում է, որ շատ կին հերոսներ ենք ունեցել, որոնք հայ մարտիկի հետ կողք կողքի դուրս են եկել թշնամու դեմ, արհավիրքի ժամին

դարձել քաջ զինվոր՝ կյանքի գնով պաշտպանելով սեփական բույնն ու ընտանիքը: Միանգամայն իրավացի էր Գարեգին Նժդեհը, երբ շեշտում էր. «Կնոջ հայրենասիրությունը, որպես աստվածային կրակ, բոց ու ջերմություն, կարթնացնի քնած առյուծն իր ժողովրդի մեջ»: Այս առումով բացառություն չէր նաև XIX դարավերջը, երբ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Բաֆֆու, Մ. Մամուրյանի և մյուսների ըմբոստ գրականությունը և հայրենասիրական գաղափարներն իրենց ոգեկոչող ազդեցությունն էին թողել նաև հայուհիների վրա: Ազատ ապրելու կամ պատվով մեռնելու սերմերը երկար դարերի ընդմիջումից հետո ծլարձակեցին նաև այդ շրջանում: Դարերի խորքից եկած ավանդույթի ուժով հայ կնոջ սխրանքներ արձանագրվեցին նաև Զեյթունի 1895-1896 թթ. հերոսամարտի ժամանակ:

Հայոց ազատամարտում մի քանի հայդուկային խմբերում աչքի ընկան նաև կին հայդուկներ, որոնք իրենց հերոսությամբ չէին զիջում քաջ տղամարդկանց: Եթե անգամ կովի դաշտում հայ կնոջ մասնակցությունը համեմատաբար սահմանափակ է եղել, ապա թիկունքում նա պաշտպանել ու հսկել է հայդուկի թաքստոցը, համապատասխան ու արժեքավոր տեղեկություններ մատուցել, վիրավոր հայդուկի վերքերը բուժել և գաղտնի նամակներ տեղ հասցրել: Իրականում հայ կնոջ մասնակցությունը մշտապես բարձր է գնահատվել, սակայն հայ տղամարդը վեհանձն էր և երբեք թույլատրելի չէր համարում վտանգել իր օջախի պահապանին: Ստեղծված ավանդույթն ու չգրված, սակայն սրբորեն պահպանվող կանոնները չխախտելու նպատակով հայ կանայք կոիվներին մասնակցում էին ծախված՝ տղամարդու հագուստով:

Հայ հայդուկային պայքարի հզորագույն դեմքերից է եղել Աննա Մայրիկը՝ Խուլբի շրջանի Ահարոնք գյուղի հեղափոխական ոգին: Նա Սասնո լեռնաշխարհի այն կանանցից էր, որն իր ամբողջ կյանքի ընթացքում զբաղվեց հանրային ու հեղափոխական գործերով: Աննա Մայրիկը, ազդեցություն ունենալով ամբողջ լեռնաշխարհի բնակչության վրա, դարձավ այնպիսի ղեկավար ուժ, որին հաշվի էին առնում ոչ միայն հայ իշխաններն ու քուրդ աշիրեթապետերը, այլև շրջանի թուրք կառավարիչները: Նա իր զորավոր նկարագրով, համարձակ խոսքով և խելքով գրավել էր բոլորի ուշադրությունը:

Գրիգոր Տեր-Մկրտչյանի հայդուկային խմբում կռվել է Մարիամ Մակարյանը, որը հայտնի էր Մարո անունով:

Մարզվանում հայտնի կին հայդուկ էր Մարինոսը, որը գործել է Շմավունի հետ: Վասպուրականում է գործել Զարուհին՝ Վազգեն Տերոյանի քույրը և Պետոյի նշանածը: Հաճընում ակտիվ գործունեություն է ծավալել Մուրադի՝ Համբարձում Պոյաջյանի քույրը՝ Հայկանուշը: Գևորգ Զաուշի խմբում կռվել է

Խարս գյուղից Զարուհին (Զըրե): Կին հայդուկներից էր նաև Ավառին՝ գյուղից Խանիկը:

Հայդուկային պայքարի ականառու դեմքերից է եղել Ագապին, որը քաջ հայդուկ Տուրբախի կինն էր: Կին հայդուկներից էր անգուգական Սոսեն՝ Սոսե Մայրիկը (Աղբյուր Սերոբի կինը՝ Սոսե 1868/9–1953): Նա իր կերպարով և սերունդներին կտակած պատգամներով մեր ազգային ինքնության և հպարտության աղբյուր դարձավ: Ապրած կյանքով և նվիրվածությամբ Սոսեն արդեն լիովին պատրաստ էր ֆիդայական կյանքին, երբ 1895 թ. Սերոբը վերադարձավ պանդխտությունից և պայքարի դրոշը պարզեց ողջ շրջակա տարածքներում: Սերոբի խմբում որպես շարքային մարտիկ ընդգրկվեց նաև Սոսեն՝ պատրաստ կրելու բոլոր դժվարությունները, ինչպես յուրաքանչյուր հայդուկ: Հայդուկային խմբում կնոջ առկայությունը բացառող չգրված, սակայն սրբորեն պահպանվող կարգը շրջանցվեց նաև այն պատճառով, որ Սերոբին ու նրա ընտանիքին անընդհատ հետապնդում էին թուրքերը. այլ ելք չկար, ուստի հայդուկապետը ստիպված էր Սոսեին իր հետ տեղափոխել Սասունի լեռները: Ամուսնու, հրամանատարի և անվեհեր հայդուկապետի կողքին ազատասեր հայուհին կարողացավ դիմակայել բոլոր դժվարություններին և փառքի արժանի էջեր գրել հայ ֆիդայական շարժման պատմության հուշամատյանում:

Հերոսաբար է կռվել Շենիկի գյուղապետ Գրգոյի հարսը՝ Շաքեն: Աչքի ընկնող կին հերոսուհիներից է եղել Մոկունք գյուղից Եսթերը, որը քարոզում էր ուտքի կանգնել թուրքի ու քրդի դեմ և խոսքից գործի անցնել:

Անվեհեր հայդուկ էր Յրոնք գյուղից Շուշանիկը (Յրոնքի Շուշան), որը կռվել է Քեռի Բարսեղի խմբում: Բիթլիսի հարուստ ընտանիքի զավակ էր Շողերը, սակայն նրա առաքելությունն ազգի ու հայրենիքի ազատագրության սուրբ գործն էր:

Գևորգ Չավուշի զինակիցներից է եղել կին հայդուկ Եղսոն: Հայտնի են եղել նաև Սաթենիկ Մատինյանը (Ծաղիկ), Սաթո Օհանջանյանը, Սատան Սիմեյանը, Աղավնի Վարպետյանը, Սրբոն, Սևոն, Իսմոն, Մարթան, Ռպեն և շատ ու շատ հայտնի ու ոչ այնքան ճանաչում ունեցող անուններ, որոնց գործունեության մասին, ցավոք, մինչ այժմ չկար մեկ ամբողջական՝ ընդհանրացնող աշխատություն:

Այս խոնարհ հերոսուհիները, որոնք թե՛ մարտի դաշտում, թե՛ թիկունքում պայքարել են մեր ժողովրդի ազատագրության և հոգևոր ու մտավոր զարգացման համար, հաճախ շեղվել են հայ հասարակության մեջ ընդունված նորմերից ու խոր արմատներ ձգած սովորույթներից, զատվել հայ կնոջ ավանդական և նահապետական կոչումից, սակայն դա արել են ի շահ հայ-


րենիքի ու սեփական ժողովրդի, նրա լուսավոր ապագայի՝ եթե ոչ հստակ գիտակցությամբ, ապա հավատով, որ այդ ապագան մերն է լինելու:

Աշխատությունը մեծանուն պատմաբան Էդիկ Մինասյանի՝ հայ ժողովրդի հերոսական անցյալի, ազատագրության համար մղվող դարավոր պայքարի նկատմամբ ունեցած մեծ գնահատանքի ու սիրո վկայագիրն է, որն էլ ուժ է հաղորդել հեղինակին տարիներ շարունակ պրպտել արխիվային ֆոնդերը, հայտնաբերել անհայտ վկայություններ հերոսուհի կանանց մասին: Նրանց հայրենասիրությունն ու հանդուգն խիզախությունը, ժողովրդի ճակատագրի նկատմամբ առլեցուն պատասխանատվությունը ճշմարիտ չափանիշներ են նաև մեր օրերում:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Կ.Ա.

Պատմական գիտությունների թեկնածու

**ՄԻՐԶԱ ԱԴԻԳԵՈՉԱԼ-ՔԷԿ, Ղարաբաղ-նամէ, աշխատասիրությամբ
Արտակ Մաղալյանի, Ե., «Զանգակ» հրատ., 2016, 164 էջ:**



Արտակ Մաղալյանի աշխատասիրությամբ ընթերցողի սեղանին է դրվել XIX դ. առաջին կեսի մահմեդական պատմագիր Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» ուսումնասիրությունը: Երեսուներկու էջ կազմող առաջաբանում նա մանրամասն ներկայացնում է Մ. Ադիգյոզալ-բեկի կողմից սույն գիրքը ձեռնարկելու շարժառիթները, դրա կառուցվածքը, արժեքներն ու հեղինակի կենսագրությունը, խոսում ժամանակաշրջանի հիմնախնդիրների մասին: Միրզա Ադիգյոզալ-բեկը ծնվել է XVIII դ. 80-ական թթ. Ղարաբաղում: 1795 թ. ամռանը, երբ Իրանի տիրակալ Աղա Մուհամմադ խանի զորքերը արշավում են Ղարաբաղ, ապագա պատ-

միջը ծնողների հետ փախչում է Թիֆլիս: Որոշ ժամանակ անց Ադիգյոզալ-բեկի ընտանիքը միանում է Գյուլիստանի Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանի հպատակներին և նրա հովանավորությամբ բնակություն հաստատում Բոլնիսում: 1799 թ. վերջերին Ադիգյոզալ-բեկը ծառայության է անցնում վրացական արքունիքում՝ որպես գրագիր-թարգմանիչ: Մասնակցում է 1804-1813 և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներին և մեծապես շահում է ռուսական զինվորական իշխանությունների վստահությունը: 1830 թ. սկզբին թողնելով շուրջ 30-ամյա զինվորական ծառայությունը՝ աշխատանքի է անցնում Ղարաբաղի գավառական դատարանում, ինչն էլ նրան հնարավորություն է տալիս առավել մոտիկից ու խորքից ծանոթանալ այդ երկրամասի պատմությանն ու առօրյային: Հավաքում է անհրաժեշտ նյութեր, որոնք օգտագործում է «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը շարադրելու ընթացքում: Այն գրել է 1845 թ. 65 տարեկան հասակում:

Մանրամասն ներկայացնելով օտարազգի պատմիչի կյանքն ու գործունեությունը՝ Ա. Մաղալյանը քննում է աշխատությանն առնչվող պատմագիտական վարկածներն ու տեսակետները: Մանրակրկիտ դիտարկում է նաև այն հաղորդումները, որոնց հիման վրա հայ պատմագիտությունը կարող է հիմնովին ջախջախել աղբրեջանական «պատմաշինարարների» սարքած

«տեսակետները» Ղարաբաղի պատկանելության, նրա էթնիկ բնակչության կազմի և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

Ժամանակագրական առումով «Ղարաբաղ-նամեն» սկսվում է 1736 թ. Մուղանի դաշտում գումարված «կուռույթայի» (ավագանու ժողովի) նկարագրությամբ, որի հետևանքով Նադիր նվաճողը տիրացավ Իրանի գահին: Իր գահակալությանը դեմ արտահայտված Գանձակի խանի իշխանությունը թուլացնելու նպատակով նա Խամսայի մելիքներին հանում է Գանձակի խանության ենթակայությունից և դնում իր անմիջական ենթակայության ներքո: Ա. Մաղալյանը, ուշադրությամբ քննելով սույն հաղորդումը, շեշտում է, որ, փաստորեն, ոչ այլ ոք, եթե ոչ հենց ինքը՝ մահմեդական պատմագիրն է վկայում Նադիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին: Հայ պատմաբանը սույն տեղեկության իսկությունը հաստատելու համար վկայակոչում է Խամսայի մելիքությունների գահերեց Դիզակի Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիճակի արձանագրությունը. «Ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Ձրաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա ինձ որպես խան և բեկլարբեկ կարգեց, շնորհ արեց»: Ահա սույն երկու կարևորագույն և արժանահավատ փաստերը լավագույնս հակադարձում են ժամանակակից ադրբեջանցի պատմաբան-կեղծարարների շինծու տեսակետներին Արցախի պատկանելության վերաբերյալ:

Մ. Ադիգյոզալ-բեկի աշխատության երկրորդ գլխում, որտեղ տրվում են տխրահռչակ Փանահ խանի ազգաբանությունը և նրա հաստատումը Արցախում, խոսվում է նաև այն մասին, որ Նադիր շահի կողմից գլխատման դատապարտված Փանահը կարողացավ ոչ միայն խուսափել մահապատժից, այլև բարձրանալ մինչև խանի աստիճանի: Այս կապակցությամբ Ա. Մաղալյանը գրում է. «Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ղարաբաղի խանության հիմնադիր հորջորջվող Փանահը խանի տիտղոս ստանալու պահին դեռևս Խամսայում չէր գտնվում, այնտեղ ոչ մի իշխանություն չունեց: Այդ պահին Փանահ խանի տիտղոսը ձև էր առանց բովանդակության» (էջ 9): Սա անչափ դիպուկ և պատմական իրողություններից բխող միանգամայն ճշմարտացի դիտարկում է:

Իր նորահաստատ իշխանությունը ամրապնդելու նպատակով, Փանահը որոշում է նստակյաց կյանք վարել և 1748 թ. Քյաբիրլուի մոտակայքում կառուցում է Բայաթ բերդը: Այս առնչությամբ շատ տեղին և համոզիչ է անվանի հայ պատմաբան Լեոյից արված հետևյալ վկայակոչումը. «Քյաբիրլուն մեծ աջակցություն էր ցույց տալիս նրան, և նա արագ կերպով ավագակապետի

դիրքից անցնում է տիրապետողի դիրքին, իրեն հպատակեցնելով Ղարաբաղի տափարակներում թափառող ցեղերը: Ինքն էլ մի թափառական՝ իշխանություն ձեռք բերելուց հետո նա հասկանում է նստակեցության անհրաժեշտությունը» (էջ 9): Ա. Մաղալյանը այս ամենին ավելացնում է նաև իր դիտարկումը, թե՛ նստակյաց կյանքի անցնելու անհրաժեշտության գիտակցումը հեղաբեկում էր քոչվորական աշխարհընկալման մեջ: Ահա այստեղ ակնհայտ է դառնում այն ճշմարտությունը, թե ինչպես քոչվորապետ Փանահին հաջողվեց բնավորվել Արցախ աշխարհի սրտում, որի մասին նա անգամ երազել էր կարող: Անշուշտ, մեր թշնամիները չէին կարող տիրել հայոց պատմական հողերին, եթե դեր չխաղային դավաճանները: Մի երևույթ, որը միշտ էլ կենսունակ է եղել մեր պատմության բոլոր ժամանակներում:

Ա.Մաղալյանը փաստառատ տվյալներով և հիրավի արդար վրդովմունքով դատապարտում է XVIII դարակեսի դավաճաններին և նրանց ազգակործան ընթացքը կամա թե ակամա արդարացնողներին: Այդ դավաճանների շարքում Մելիք-Շահնազարի բացասական կերպարն է անեծքի պես մնացել անցնող-գնացող ժամանակների հոլովոյթում: Այս ամենի մասին պատմաբանը առարկայական խստությամբ բանաձևում է այսպես. «Մելիք-Շահնազարի հայրենադավ գործունեությունը չափազանց ծանր ազդեցություն ունեցավ Արցախի հայկական իշխանությունների վրա: Նրա գործունեությունը գնահատելիս միշտ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը: Այս խորապատկերում, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Մելիք-Շահնազարի բացասական կերպարի հեղինակը ոչ թե Ադիգյոզալ-բեկն է, Բաֆին կամ մեկ այլ ուսումնասիրող, այլ հենց ինքը Մելիք-Շահնազարը՝ իր ազդեցությամբ գործերով» (էջ 12):

Ադիգյոզալ-բեկի, ինչպես նաև հեղինակների տեղեկությունների հիման վրա Ա. Մաղալյանը ևս մեկ անգամ վերահաստատում է այն ճշմարտությունը, որ քոչվորապետ Փանահի՝ Շուշիում հաստատվելը (ինչը տեղի ունեցավ հայ մելիքական ուժերի պառակտման պատճառով) ավերիչ հետևանքներ ունեցավ Արցախի էթնիկական, ազգային, քաղաքական, բարոյական նկարագիրը աղարտելու առումով: Եվ հենց Արցախի սրտում՝ Շուշիում, հաստատվելն էր, որ կենսունակություն հաղորդեց տափարակներում անխուսափելի կործանման դատապարտված խանությանը՝ ձևը վերածելով բովանդակության (էջ 14), նշում է Ա. Մաղալյանը:

Հենց այդ ժամանակներից էլ սկսվում է այլացել և այլակրոն էթնիկ տարրերի ներթափանցումը Արցախ: Դրանց մեջ էին թուրք-թաթարական և քրդական քոչվոր ու կիսավայրենի այնպիսի ցեղախմբեր, ինչպիսիք էին ջևանշիրցիները, սարըջալլուները, օթուզիքիները, քյաբիրլուները, քուանիները, իգիրմիդորթները, որոնց բնակեցումը Արցախում իսկական չարիք

դարձավ արցախահայության համար: Այդ մասին բավական խոսուն փաստեր է ներկայացնում պատմիչ Ադիգյոզալ-բեկը:

Եվ Արցախ աշխարհի բնիկ տերերի՝ հայերի և, մյուս կողմից, եկվոր, խաշնարած էթնիկ տարրերի միջև XVIII դ. կեսերից ծայր է առնում դաժան հակամարտությունը, որը շարունակվում է մինչ այսօր: Ահա սա է պատմական ճշմարտությունը, որը սույն աշխատությամբ ընթերցողներին է ներկայացնում պատմաբան Արտակ Մաղալյանը:

Հավելենք նաև, որ այս գիրքը իր հաստատուն տեղն ունի հայագիտական արժեքավոր գործերի շարքում, ուստի խիստ անհրաժեշտ է դրա թարգմանությունը օտար լեզուներով:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա.Հ.

Պատմական գիտությունների թեկնածու

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒՍԿՅԱՆ. ԱՐԴԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐԸ



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուսկյանը ծնվել է 1937-ի նոյեմբերի 7-ին Երևանում, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Աշոտ Ռուսկյանի ընտանիքում:

1957-ին ավարտելով Պ. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցի դաշնամուրային դասարանը՝ Մ. Ռուսկյանն ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, որն ավարտում է 1962-ին՝ ՀԽՍՀ և ՌԽՖՍՀ արվեստի

վաստակավոր գործիչ Գեորգի Տիգրանովի ղեկավարությամբ պաշտպանելով «Էդվարդ Բաղդասարյանի դաշնամուրային պրեյլուդները» խորագրով դիպլոմային աշխատանքը:

1963-1965 թթ. Հայաստանի հեռուստառադիոպետկոմի երաժշտական խմբագրությունում աշխատելով որպես խմբագիր՝ երիտասարդ երաժշտագետը մեծ նվիրումով ու եռանդով էր կատարում իր գործը՝ հեղինակելով օպերային թատրոնի, համերգասրահների դահլիճներից ուղիղ հեռարձակմամբ և երաժշտական լավագույն ուժերի մասնակցությամբ մի շարք հետաքրքիր երաժշտական ծրագրեր, որոնց ղեկավարներն էին Ալբերտ Մկրտչյանը, Տոլիկ Մոկացյանը, Մարատ Վարժապետյանը և այլք:

1965-ին Մ. Ռուսկյանն ընդունվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան՝ ուսումնառությունն անց-

կացնելով Մոսկվայի արվեստագիտության համամիութենական ինստիտուտում՝ արվեստագիտության դոկտոր Վ. Վասինա-Գրոսմանի ղեկավարությամբ:

Ավարտելով ասպիրանտուրան՝ Մ. Ռուխկյանը 1969-ին վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում՝ որպես երաժշտության բաժնի կրտսեր գիտաշխատող, և այդ օրվանից բացառապես Արվեստի ինստիտուտի հետ է կապվում երաժշտագետի գիտաստեղծագործական կյանքի շուրջ հինգ տասնամյակը:

1971-ին Մ. Ռուխկյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Հայկական սիմֆոնիայի կայացման և զարգացման որոշ հարցեր» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1986-ին արդեն Մ. Ռուխկյանը ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող էր: 2005-ին Մ. Ռուխկյանը Արվեստի ինստիտուտում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Հայկական սիմֆոնիայի զարգացման արդի փուլը (Ավետ Տերտերյանի ստեղծագործության օրինակով)» թեմայով և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 2007-ից նա Արվեստի ինստիտուտի Երաժշտության, 2009-2016-ին՝ Սփյուռքահայ արվեստի (ներկայումս՝ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի), իսկ 2016-ից՝ Երաժշտության բաժինների առաջատար գիտաշխատող է, 2007-ից՝ Արվեստի ինստիտուտի գիտխորհրդի և արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման Օ16 մասնագիտական խորհրդի անդամ է: Մ. Ռուխկյանը ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ է (1972-ից), 2013-ից մինչ օրս՝ ՀԿՄ վարչության անդամ: Հայկական երաժշտական համաժողովի անդամ է կազմակերպության հիմնադրման օրվանից (1994-ից): Նշանակվել է «Հանրապետության նախագահի մրցանակների շնորհման»՝ արվեստի հանձնախմբի անդամ: Նա նաև ԺԷ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտության որակավորման մասնագիտական քննական հանձնաժողովի անդամ է:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակի առթիվ 2008 թ. Մ. Ռուխկյանը պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ բարձրագույն պարգևով՝ «Ոսկե հուշամեդալով»: 2011-ին, ՀՀ անկախության 20-ամյակի կապակցությամբ, արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Ծանրակշիռ է արվեստագետի վաստակը արդի հայ երաժշտության ուսումնասիրության գործում: 1980-ին լույս է տեսնում Մ. Ռուխկյանի անդրանիկ գիրքը՝ «Հայկական սիմֆոնիա: Հետազոտական ակնարկներ» (ռուսերեն), որտեղ նա բացահայտել է հայ սիմֆոնիկ երաժշտության զարգաց-

ման ուղին, բուռն վերելքն ապահովող ակունքներն ու արմատները: Առանձին ակնարկներով ներկայացված են Ա. Խաչատրյանի Առաջին սիմֆոնիան՝ հայկական սիմֆոնիզմի հիմնաքարը, Գ. Եղիազարյանի, Զ. Տեր-Թադևոսյանի, Է. Հովհաննիսյանի, Կ. Օրբելյանի, Է. Միրզոյանի սիմֆոնիաները, ուսումնասիրվում են հայկական սիմֆոնիզմի նոր միտումները, դիտարկվում՝ Է. Արիստակեսյանի, Գ. Հախինյանի, Ա. Աճեմյանի, Լ. Աստվածատրյանի սիմֆոնիաները՝ կենտրոնական տեղ հատկացնելով արդեն 5 սիմֆոնիայի հեղինակ Ավետ Տերտերյանի սիմֆոնիաներին: «Հայկական սիմֆոնիա: Հետազոտական ակնարկներ» գրքի համար 1983-ին Մ. Ռուֆսկյանն արժանանում է Բ. Ասաֆևի անվան համամիութենական երաժշտագիտական մրցույթի դափնեկրի կոչման:

Գիտնականը պահպանում է նաև իր հետաքրքրությունը հետադարձության և վավերագրական կինոյի հանդեպ. ստեղծում է մի քանի վավերագրական ֆիլմեր՝ «Գորանի», «Արմեն Տիգրանյանի «Անուշի» առաջին բեմադրությունը», «Հայաստանի արվեստը». այս գործում համահեղինակ էր նրա ամուսինը՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կինոգետ Կարեն Քալանթարը: Հիրավի, մեծ էր Կ. Քալանթարի դերը Մ. Ռուֆսկյանի գիտաստեղծագործական կյանքում. այդ նշանավոր անհատականությունը մեծապես պայմանավորեց երաժշտագետի հետաքրքրությունների ոլորտը: Եվ պատահական չէ, որ վերջինս երկար տարիներ զբաղվել է հայկական կինոերաժշտության ուսումնասիրությամբ:

«Ես միշտ անհրաժեշտ եմ համարել գրել այն մասին, ինչն ինձ հուզում է: Այսպես, մասնագիտական պարտքի և սրտի թելադրանքով գրվեցին բազմաթիվ գիտական և թերթային հոդվածներ,- մի առթիվ խոստովանել է Մ. Ռուֆսկյանը,- Ես, ինչպես և իմ գործընկերները, պարբերական մամուլում հաճախ ենք հանդես եկել մեր մշակույթի սուր հարցերը բարձրացնող, երաժշտական կյանքի պրոբլեմներն արտացոլող հոդվածներով»: Եվ իսկապես. պրոֆեսիոնալ հրապարակախոսությունը 1970-80-ականներին խթանում էր մշակույթի զարգացումը. հնչող քննադատությունը բարերար ազդեցություն էր թողնում հանրապետության երաժշտական կյանքի զարգացման վրա:

Մ. Ռուֆսկյանի գիտական հետաքրքրությունները կենտրոնանում են ազգային սիմֆոնիզմի, ի մասնավորի՝ Ավետ Տերտերյանի ստեղծագործության վրա: Մի կողմից՝ աստիճանաբար հավաքվում է հարուստ նյութ. բացահայտվում է Տերտերյանի ստեղծագործական պոտենցիալը՝ ապշեցնելով իր եզակիությամբ և հզորությամբ, մյուս կողմից՝ դեռևս 1986-ին Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ելենա Դոլինսկայան Մ. Ռուֆսկյանին առաջարկել էր Ա. Տերտերյանի

ստեղծագործության վերաբերյալ գիրք գրել: Մ. Ռուսկյանը ձեռնամուխ է լինում այդ պատվաբեր գործին, սակայն հայ ժողովրդի կյանքում տեղ գտած խոր ցնցումները ի չիք են դարձնում բոլոր պլանները: Ստեղծված իրավիճակում անհնար է դառնում արդեն պատրաստի գրքի հրատարակումը, իսկ կյանքի նոր պայմանները երաժշտագետի առջև նոր խնդիրներ են դնում: Հայտնվելով Հայաստանի մշակութային իրադարձությունների հորձանուտում՝ Մ. Ռուսկյանը կանգնում է նրանց կողքին, ովքեր այդ բարդ ժամանակաշրջանում ձգտում էին պահպանել հայկական երաժշտական մշակույթը:

Գիտական աշխատանքին զուգահեռ՝ Մ. Ռուսկյանը 1990-ականներին աշխատում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում՝ որպես խորհրդատու, գրում մի շարք հոդվածներ ու գրախոսականներ Տիգրան Լևոնյանի ինքնատիպ բեմադրությունների և նոր ներկայացումների մասին:

1998-ին արվեստագետը վերսկսում է Ա. Տերտերյանի ստեղծագործության ընդհատված ուսումնասիրությունը: 1999-ին նա մասնակցում է Նիժնի Նովգորոդում կայացած՝ Ա. Տերտերյանին նվիրված միջազգային կոնֆերանսին, որտեղ ակնհայտ է դառնում կոմպոզիտորի երաժշտության հանդեպ առկա ապշեցուցիչ հետաքրքրությունը:

2002 թ. լույս է տեսնում Մ. Ռուսկյանի «Ավետ Տերտերյան: Ստեղծագործությունը և կյանքը» (ռուսերեն) գիրքը՝ լայն արձագանք գտնելով նաև Հայաստանի սահմաններից դուրս: Արվեստագետ Լիդիա Պտուշկոյի կարծիքով՝ «Գիրքը գերում է և ընթերցվում չնվազող հետաքրքրությամբ՝ Ավետ Տերտերյանի երաժշտության պես, որը... լինելով ականջի համար գրավիչ, տալիս է փիլիսոփայական հարցեր, որը միաժամանակ հանդուգն է ու սրտաշարժ, անօգնական ու բանաստեղծական»¹: Իսկ երաժշտագետ Գուլբատ Թորաձեն գրեց. «Անշուշտ, քիչ հոդվածներ ու ակնարկներ չեն գրվել Տերտերյանի մասին, սակայն, անկասկած, նրա մասին առավել լիարժեք ու վառ պատկերացում է տալիս հենց Մ. Ռուսկյանի գիրքը: Սա է դրա առաջնային արժանիքն ու նշանակությունը: Գրքի հեղինակը հաջողությամբ լուծում է ուսումնասիրության կենտրոնական խնդիրը, այսինքն՝ հետևում «Տերտերյանի ֆենոմենի» ձևավորմանը և բացահայտում նրա՝ խորապես անհատական գծերը, ինչը տրվում է կոմպոզիտորի ստեղծա-

¹ Птушко Л. Отражение сверхчувственного мира (Музыкальная академия, 2004, N 2, с. 203).

գործական «ծեռագրի» գլխավոր առանձնահատկությունների երևակման հետ ուղղակի կապի մեջ»²:

2003-ին, Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Մ. Ռուսկյանը (Ալինա Փահլևանյանի և Գոհար Հարությունյանի հետ համատեղ) հրատարակում է Ա. Խաչատրյանի նամակների երրորդ գիրքը, որը լույս է տեսնում հայերեն և ռուսերեն լեզուներով:

«Դիմանկարներ»-ում (2009, ռուսերեն) առանձին ակնարկներով ներկայացված են արդի հայ երաժշտության հինգ առաջատար կոմպոզիտորների՝ Լևոն Չաուշյանի, Վահրամ Բաբայանի, Երվանդ Երկանյանի, Ռուբեն Սարգսյանի և Դավիթ Սաքոյանի ստեղծագործական դիմանկարները:

2015-ին լույս է տեսնում երաժշտագետի «Վարդան Աճեմյանի հնչյունի թատրոնը» մենագրությունը (ռուսերեն)³:

Մ. Ռուսկյանը հեղինակ է Հայաստանում և արտասահմանում տպագրված բազմաթիվ գիտական հոդվածների, որոնցում անդրադարձել է ինչպես արդի հայ կոմպոզիտորական դպրոցի առանձին ներկայացուցիչների՝ Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Էդվարդ Միրզոյանի, Ղազարոս Սարյանի, Ադամ Խուդոյանի, Էդգար Հովհաննիսյանի, Էդուարդ Խաղագործյանի, Զիվան Տեր-Թադևոսյանի, Լևոն Աստվածատրյանի, Ալեքսեյ Հեքիմյանի, Գեղունի Չթյանի, Մարտին Վարդազարյանի, Կոնստանտին Պետրոսյանի և այլոց ստեղծագործություններին, այնպես էլ երաժիշտ-կատարողների՝ դիրիժորներ Հովհաննես Չեքիջյանի, Արամ Ղարաբեկյանի, Վահան Մարտիրոսյանի, դաշնակահարներ Սվետլանա Նավասարդյանի, Արթուր Փափազյանի, Վարդան Մամիկոնյանի, Վահագն Պապյանի, երգիչներ Գոհար Գասպարյանի, Ժակ Դուվալյանի, ջութակահար Անահիտ Տիցիկյանի, թավջութակահարներ Ալեքսանդր Չաուշյանի, Մեդեա Աբրահամյանի, Արամ Թալալյանի, խմբավար Սարինա Ավթանդիլյանի, ինչպես նաև դիրիժորներ Մուրադ Աննամամեդովի և Վալերի Գերգիևի կատարողական գործունեությանը:

Իր հոդվածներով և տարբեր համերգների ու օպերային ներկայացումների մասին բազմաթիվ գրախոսականներով Մ. Ռուսկյանը դարձել է իր ապրած ժամանակաշրջանի երաժշտական տարեգիրը:

² Торадзе Г. Я прочел кингу... О книге Маргариты Рухкян "Авет Тертерян" (Свободная Грузия, 14.VIII.2003).

³ Տե՛ս Ասատրյան Ա., *Маргарита Рухкян. Театр звука Вардана Аджемяна* (ՀՀ ԳԱԱ Հրաբեր հասարակական գիտությունների, 2016, N 2, էջ 325–327):

Խորհրդանշական է, որ վաստակաշատ երաժշտագետը իր գիտական գործունեության կեսդարյա հոբելյանին հաղթող ճանաչվեց ՀՀ կոմպոզիտորների միության կազմակերպած «Տարվա լավագույն ստեղծագործություն-2016» մրցանակաբաշխության (15.IV.2017) «Երաժշտագիտություն» անվանակարգում՝ Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում լույս հրատարակած հոդվածների համար:

Այսօր Մ. Ռուսկյանը ավարտել է կոմպոզիտորներ Կոնստանտին Պետրոյանի և Էդուարդ Հայրապետյանի մասին մենագրությունները, ի մի է բերում տարբեր տարիներին լույս տեսած իր գիտական հոդվածները «Հնչող երաժշտություն. իր ժամանակի տարեգիրը» խոսուն վերնագրով ժողովածուի մեջ:

Բազմավաստակ արվեստագետին շնորհավորելով հոբելյանի կապակցությամբ՝ նրան մաղթում ենք արևշատություն և գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Գ.

Արվեստագիտության դոկտոր

К 60-ЛЕТИЮ САРКИСА СУРЕНОВИЧА КАЗАРОВА



С.С. Казаров прошел трудный путь от учителя истории в школе до профессора кафедры археологии и истории Древнего мира Южного Федерального университета. Начальный период его научной деятельности был полностью посвящен изучению истории Эпирского царства (на территории Балканского полуострова), о котором было известно очень мало или почти ничего. Кандидатская диссертация молодого ученого на тему *“Социально-политическое развитие Эпира в V-IV вв. до н.э.”* (1992 г., научный руководитель – профессор СПбУ, доктор исторических наук Э.Д. Фролов) стала важнейшей вехой и поворотной точкой в изучении истории этого маленького государства, играющего немаловажную роль в международных отношениях средиземноморского региона в IV-III вв. до н.э. Однако этим важнейшим исследованием тернистый путь изучения С.С. Казаровым истории Эпира не закончился. Плодами логического продолжения научных трудов ученого стала докторская диссертация на тему *“Царь Пирр и Эпирское государство в межгосударственных отношениях в эпоху эллинизма”*, защищенная в 2005 г. в г. Саратове.

В 2009 году в издательстве СПбУ вышла его монография *“История царя Пирра Эпирского”* (в серии *res Militaris*), в которой автор обобщил многолетний исследовательский опыт изучения Эпира. И если раньше в историографии изучение истории Пирра и его государства носило спонтанный характер, то сейчас научный мир получил

капитальную монографию (521 стр.), охватывающую как проблемы изучения источников Пирра и Эпирского государства в целом, так и вопросы идеологии и дипломатии в Эпирском царстве. Данный труд еще раз доказывает, что российская школа изучения античности занимает главенствующее место в научном мире, ярким и талантливым представителем которого является и наш юбиляр Саркис Суренович Казаров.

Параллельно с исследованием проблем античной истории С.С. Казаров с начала 90-х годов прошлого столетия стал изучать *вопросы армянской колонии* Новой Нахичевани. Ученым был рассмотрен широкий круг вопросов. Его многочисленные статьи, а их у него около сорока, относятся к различным проблемам Новой Нахичевани и охватывают сферы политического, социально-экономического и культурного развития истории не только армянских колоний, но и донских армян в целом.

Интерес к истории донских армян был вполне естественным. В детстве маленький Саркис часто слышал от бабушки по материнской линии, коренной нахичеванки Тамары Карповны рассказы о прадеде, нахичеванском купце Карпе Емельяновиче Авакове, о богатой и сытой дореволюционной жизни. То и дело возникали различные вопросы, на которые, увы, не было ответов: по истории г. Ростова-на-Дону есть огромный массив литературы, но по истории соседней Нахичевани – ничего! И тогда появилось острое желание исследовать и написать.

Первая монография «История Армянской Апостольской церкви на Дону», написанная в 2001 г. в соавторстве с В.Г. Вартаняном, вышла мизерным тиражом (100 экз.) и сразу же исчезла с полок магазинов. Вторым тиражом она вышла в 2009 г. и тоже вызвала большой интерес. Многие нахичеванцы нашли в ней своих близких и далеких предков. Работа основывалась на обширной источниковой базе. Каждый факт, каждое событие были подтверждены соответствующими ссылками. Чтобы рассказать о судьбах нахичеванских священников, репрессированных в конце 1930-х годов, авторам пришлось совершить практически невозможное: получить доступ к материалам архива ФСБ по Ростовской области.

Вторая монография «Нахичеванское купечество» (Ростов-на-Дону, 2012 г.) – дань памяти прадеду Карпу Емельяновичу и всему нахи-

чеванскому купечеству, которое автор называет «двигателем прогресса». В центре внимания автора находятся люди, которые своим неустанным трудом способствовали процветанию родного города. И вновь проработаны материалы различных архивов, опрошены дети, внуки и правнуки нахичеванских купцов. Практически все использованные в работах документы введены С.С. Казаровым в научный оборот впервые. Его многочисленные статьи по арменоведению посвящены людям, которые были связаны с родной Нахичеванью. Это представители совершенно разных профессий – ученые, педагоги, врачи, юристы: А.К. Дживелегов, Б.Г. Трапезонцев, М.И. Берберов, Г.И. Чубаров, Е. Шахазиз, М.И. Балабанов и многие другие.

Труды ученого, посвященные проблемам формирования армянской интеллигенции (автором исследована деятельность *Г. Патканова*, *А.К. Дживелегова*), самоуправления армян, армянского этноса, экономическим вопросам, издавались во многих научных журналах Российской Федерации (Ростов-на-Дону, Шахты, Таганрог, Армавир, Москва т. д.), а также в Армении (Ереван) и Украине (Одесса). Новая Нахичевань является родиной многих наших известных соотечественников (*М. Налбандян, Г. Чалхушьян, А. Мясникян, С. Срапионян, С. Врацян, М. Сарьян, М. Шагинян и другие*). Все они играли важнейшую роль в укреплении дружбы между двумя братскими народами – русским и армянским, способствовали формированию в Армении Первой республики (1918-1920 гг.), развитию экономической и культурной жизни нашей страны как в вышеуказанный, так и советский периоды.

Как истинный патриот, С.С. Казаров не мог обойти вниманием деятельность известных нахичеванских соотечественников. Патриотизм ученый унаследовал, видимо, от своего прадеда – зимвора Калуста, борца за освобождение Армении от турецко-османского ига в конце XIX в. В настоящее время ученый продолжает активно и плодотворно работать, занимаясь исследованием как истории Эпира, так и истории донских армян.

В свои 60 лет С.С. Казаров полон творческих планов и замыслов.

АРУТЮНЯН А. Ж.

Доктор исторических наук

ԱՆՎԱՆԻ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Société des Études Samaritaines-ի (Փարիզ) համահիմնադիր և նախագահության անդամ Հարություն Սիգեֆրիի ժամկոչյանը ծնվել է 1934 թ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս): 1948 թ. նա հայրենադարձվել է պատմական հայրենիք: Սովորել և ավարտել է Լեւինգրադի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը (1967 թ.), այնուհետև աշխատանքի է անցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում:

Հարություն ժամկոչյանը հեղինակ է 10 մենագրությունների և ավելի քան 60 գիտական հոդվածների: Մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների: Հետազոտական հետաքրքրությունները վերաբերում էին արևելագիտության խնդիրներին: Նա հեղինակել է Մաշհադի ձեռագիրը, Իբն ալ-Ֆակիհի «Ախբար ալ-Բուլդանե» սամարական ձեռագրերը Ֆիրկովիչի հավաքածուից, սամարական աղբյուրների բառարանը, Գրիգոր Լուսավորչի կենսագրությունը Ագաթանգեղոսի՝ Սինայի արաբական ձեռագրերի հիման վրա:

Հարություն ժամկոչյանը Արևելագիտության ինստիտուտում աշխատեց սկսած ինստիտուտի հիմնադրումից մինչև իր մահը (2017թ.):

Նա անձնուրաց ծառայում էր գիտությանը, հավատարիմ էր ընտրած գործին, գաղափարներին ու համոզմունքներին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պետրոսյանց Տ.Մ. – Վաչուտյանների ծագումը	12
Բրուտյան Մ.Ա. – Զմյուռնիայի հայկական և հունական եկեղեցիները	24
Նավասարդյան Ա.Գ. – Քաղաքական կամքի էության և գործառույթների հիմնախնդիրը	36
Դավթյան Է.Վ. – Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագոր- ծակցությունը առևտրի և ներդրումների ոլորտում (1991-2016 թթ.).....	47
Մարտիրոսյան Ն.Մ. – Կիլիկիահայերի կոտորածի հարցը Օսմանյան խորհրդարանում.....	63
Արշակյան Գ.Մ. – Թուրք-ռուսական հարաբերությունները հետխորհրդային առաջին տասնամյակում և Հարավային Կովկասը...	80
Միրզաբեկյան Գ.Ա. – Փամբակ գավառը 1728 թ. օսմանյան հարկացուցակում	99
Հովսեփյան Ն.Ա. – Բազմակուսակցական համակարգի սկզբնավորումը Հայաստանում.....	107
Ազիզյան Խ.Ռ. – Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի դրդապատճառները և հետևանքները.....	123

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ավետյան Ա.Ս. – ՀՀ համայնքներում ֆինանսական կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրները.....	135
Սարգսյան Հ.Ա. – Հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի իրականացման մեխանիզմները համայնքներում.....	150
Խաչատուրյան Ա.Վ. – Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման գերակա ուղղությունները և միջոցառումները.....	160

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ապրեսյան Ա.Գ. – Գրիգոր Նարեկացու «Մատենանը» Վազգեն Գևորգյանի թարգմանությամբ	169
Մխիթարյան Ա.Մ. – Հոդակապը բառի կառուցվածքում.....	182
Խոստիկյան Ռ.Վ. – Իմաստաբանական և գործաբանական հնարավորությունները անգլերենի լեզվաբանության մեջ.....	190

Բաղդասարյան Հ.Գ., Ազիզբեկյան Զ.Ռ. – Համընդհանուրի և ազգայինի դրսևորումները իսպանական հրաշապատում հեքիաթներում.....	199
Հովհաննիսյան Ա.Գ. – Ե. Չարենցի կերպարը Կոստան Զարյանի «Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպում.....	212

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խաչմանյան Ս.Հ. – Կաթողիկոսական հանդերձանքի հիմնական տարբերակիչ տարրերն ու դրանց խորհրդաբանությունը.....	217
Մանուչարյան Ս.Ա. – Դիմանկարը Լ. Բաժբեուկ-Մելիքյանի գեղանկարչության մեջ.....	232

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խնկիկյան Օ.Ս. – Վանի թագավորության անկումը՝ ըստ Արարատյան դաշտի հուշարձանների պեղումների արդյունքների.....	243
Գալստյան Հ.Հ. – Շվիտը հայ ժողովրդական սնահավատական գրույցներում.....	263

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ջանիկյան Ս.Ռ., Կարապետյան Ն.Զ. – Առողջ ապրելակերպի մշակույթը՝ սոցիալ-կրթական հիմնախնդիր.....	280
---	-----

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զարգարյան Տ.Կ., Ղազարյան Հ.Կ. – Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակը.....	289
--	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Համբարձումյան Վ.Վ. – Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության աշխատակից Օլին Փ. Լիի հաշվետվությունը Կիլիկիայի ինքնավարության հռչակման մասին.....	301
--	-----

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Մարության Հ.Տ. – <i>Արման Կիրակոսյան</i> , Ակնարկներ Հայկական հարցի դիվանագիտական պատմության և պատմագրության.....	311
--	-----

Եղիազարյան Կ.Ա. – <i>Էդիկ Մինասյան, Տաթևիկ Մինասյան, Հայ</i> <i>կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի</i> <i>տարիներին</i>	317
Կարապետյան Ա.Հ. – <i>Միրզա Ադիգեոզալ-Բէկ, Ղարաբաղ-նամէ</i>	321

ՄԵՐ ՀՈՔԵԼՅԱՐՆԵՐԸ

Ասատրյան Ա.Գ. – Մարգարիտա Ռուխկյան. արդի երաժշտության տարեգիրը.....	325
Հարությունյան Հ.Ժ. – Սարգիս Սուրենի Կազարովի 60-ամյակին.....	331

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Անվանի արևելագետի հիշատակին.....	334
----------------------------------	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Петросянц Т.М. – Происхождение Вачутянов.....	12
Брутян М.А. – Армянские и греческие церкви Смирны.....	24
Навасардян А.Г. – Проблема сущности и функций политической воли.....	36
Давтян Э.В. – Трехстороннее сотрудничество между Турцией, Грузией и Азербайджаном в сфере торговли и инвестиций (1991-2016 гг.).....	47
Мартиросян Н.М. – Вопрос резни киликийских армян в османском парламенте.....	63
Аршакиян Г.М. – Российско-турецкие отношения в первое постсоветское десятилетие и Южный Кавказ.....	80
Мирзабекян Г.А. – Провинция Памбак в османском налоговом реестре 1728 г.	99
Овсепян Н.А. – Формирование многопартийной системы в Армении.....	107
Азизян Х.Р. – Мотивация и последствия египетской экспедиции Наполеона Бонапарта.....	123

ЭКОНОМИКА

Аветян А.С. – Методологические вопросы финансового менеджмента в общинах РА.....	135
Саргсян А.А. – Механизмы реализации проектов общественно-частного партнерства в муниципальных структурах.....	150
Хачатурян А.В. – Приоритетные направления и мероприятия общественного управления Республики Армения.....	160

ФИЛОЛОГИЯ

Апресян А.Г. – "Книга скорбных песнопений" Григора Нарекаци в переводе Вазгена Геворкяна.....	169
Мхитарян А.М. – Соединительная гласная в структуре слова.....	182

Хостибян Р.В. – Семантические и прагматические возможности в лингвистике английского языка.....	190
Багдасарян А.Г., Азизбекян З.Р. – Отражение всеобщего и национального в испанских волшебных сказках.....	199
Оганесян А.Г. – Образ Е. Чаренца в романе Костана Заряна "Рабкооп и кости мамонта".....	212

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Хачманян С.Г. – Основные отличительные элементы одеяния католикоса и их символика.....	217
Манучарян С.А. – Портретная живопись Лавинии Бажбеук–Меликян.....	232

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Хннкиян О.С. – Падение Ванского царства по результатам раскопок памятников Араратской долины.....	243
Галстян А.Г. – Швот в армянских народных суеверных рассказах.....	263

ПЕДАГОГИКА

Джаникян С.Р., Карапетян Н.З. – Культура здорового образа жизни как социально-образовательная проблема.....	280
---	-----

БИБЛИОГРАФИЯ

Заргарян Т.К., Казарян А.К. – Сводный каталог армянских периодических изданий.....	289
--	-----

ПУБЛИКАЦИИ

Амбарцумян В.В. – Отчет сотрудника Ассоциации молодых христиан Олин П. Ли о провозглашении автономии в Киликии.....	301
---	-----

РЕЦЕНЗИИ

Марутян А.Т. – <i>Арман Киракосян. Очерки дипломатической истории и историографии Армянского вопроса</i>	311
---	-----

Егиазарян К.А. – <i>Эдик Минасян, Татевик Минасян, Армянские женщины в годы героической борьбы конца 19-ого–начала 20-ого веков</i>	317
Карапетян А.А. – <i>Мирза Адигёзаль-бек, Карабаг-наме</i>	321

НАШИ ЮБИЛЯРЫ

Асатрян А.Г. – <i>Маргарита Рухкян: летописец современной армянской музыки</i>	325
Арутюнян А.Ж. – <i>К 60-летию Саркиса Суреновича Казарова</i>	331

СЛОВО ПАМЯТИ

Памяти видного востоковеда	334
---	-----

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

T. Petrosyanc – The Origin of Vachoutyans.....	12
M. Brutyan – Armenian and Greek Churches of Smyrna.....	24
A. Navasardyan – The Problem of Essence and Functions of Political Will.....	36
E. Davtyan – Trilateral Trade and Investment Cooperation between Turkey, Georgia and Azerbaijan (1991-2016).....	47
N. Martirosyan – The Problem of the Massacres of the Armenians of Cilicia in the Ottoman Parliament.....	63
G. Arshakyan – Turkish-Russian Relations in the Post-Soviet first Decade and the South Caucasus.....	80
G. Mirzabekyan – The Pambak Province in the 1728 Ottoman Tax Register.....	99
N. Hovsepyan – The Formation of Multi-Party System in Armenia.....	107
Kh. Azizyan – The Motivation and Consequences of the Egyptian Expedition of Napoleon Bonaparte.....	123

ECONOMICS

A. Avetyan – Methodological Issues of Financial Management in Communities of RA.....	135
H. Sargsyan – Mechanisms of Implementation of Public-Private Partnership Projects in Municipal Structures.....	150
A. Khachaturyan – Priority Directions and Events of Social Management of the Republic of Armenia.....	160

PHILOLOGY

A. Apresyan – Vazgen Gevorgyan's Translation of Grigor Narekatsi's "The Book of Lamentations".....	169
A. Mkhitaryan – Connecting Vowel in the Structure of Word.....	182
R. Khostikyan – Semantic and Pragmatic Competences in English Linguistics.....	190
H. Baghdasaryan, Z. Azizbekyan – The Expressions of the Universal and the National in Spanish Fairy Tales.....	199

A. Hovhannisyan – The Image of E.Charents in Kostan Zaryan's Novel "Bancoop and the Bones of the Mammoth".....	212
---	-----

CULTURE AND ART HISTORY

S. Khachmanyán – Major and Specific Elements of the Catholicos's Vestments and their Symbology.....	217
S. Manucharyan – Portraits in Lavinia Bazhbeuk-Melikyan's Art.....	232

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

O. Khnkikyan – The Collapse of the Van Kingdom, according to the Results of the Excavations in the Ararat Valley Sites.....	243
H. Galstyan – Shvot in the Armenian Folk Superstitious Stories.....	263

PEDAGOGY

S. Janikyan, N. Karapetyan – The Culture of Healthy Lifestyle as a Social and Educational Issue.....	280
---	-----

BIBLIOGRAPHY

T. Zargaryan, H. Ghazaryan – Union Catalog of Armenian Continuing Resources.....	289
---	-----

PUBLICATIONS

Hambardzumyan V.V. – Report of Olin P. Lee, Collaborator of Young Men's Christian Association, Concerning the Declaration of Authonomy in Cilicia.....	301
---	-----

LITERARY REVIEWS

H. Marutyan – <i>Arman Kirakosyan</i> , Essays on the Diplomatic History and Historiography of the Armenian Question.....	311
K. Yeghyazaryan – <i>Edik Minasyan, Tatevik Minasyan</i> , Armenian Women in the Years of Heroic Struggle in the End of the 19th and Beginning of the 20th Centuries.....	317
A. Karapetyan – <i>Mirza Adigozal Beg</i> , Karabagh-name.....	321

OUR JUBILEES

A. Asatryan – Margarita Rukhkyan: the Chronicler of the Modern Armenian Music.....	325
H. Harutyunyan – In Commemoration of the 60 th Anniversary of Sarkis Kazarov.....	331

WORD OF MEMORY

In Memory of the Famous Orientalist.....	334
--	-----

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА**

**Գլխավոր խմբագիր՝ ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խմբագրի տեղակալ՝ ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱԶԵ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ,
ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦРУՆ ԱՅԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԴԱՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐԱՏՅԱՆ,
ԳԱՄԼԵՏ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԴԻԿ ԿԱՏԻՆՅԱՆ,
ՐԱՅԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՇԵ
ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԴԱՆԵՏՅԱՆ, ԴԵՎՐԻԿ ՍՈՂՅԱՆ, ՐԱՅԵՆ
ՏԱՓՐԱՏՅԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян

Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**

Հրատ. պատվեր N 829
Ստորագրված է տպագրության 20.XII.2017 թ.:
Տպագրական 21 մամուլ: Տպաքանակը՝ 180:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 10.XII.2017 г.
21 печатных листов. Тираж – 180. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://lraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Официальный сайт журнала: <http://lraber.sci.am>
Электронная почта журнала: lraber@sci.am